ՎԱՉԳԵՆ Ա

ԳԱՌՆԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐԿԵՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ Ա

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

ՎԱՉԳԵՆ Ա

ԵՐԿԵՐԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2(47·92)
Վ-Ն
4088
538

ՎԱՉԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՐԿԵՐԻ
ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ Ա
(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Ա - 519

ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ա - 519 ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ: Հատոր Ա, Ուսումնասիրություններ. - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, 384 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ
ԱՐՄԵՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՄԱՐԳՍՅԱՆՆԵՐԻ

ISBN 978-99930-75-92-9 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայ Եկեղեցու մեծագույն հայրապետներից երանաշնորհ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի երկերը տասնամյակներ շարունակ կրթել և դաստիարակել են մեր ժողովրդի և մեր եկեղեցու զավակներին թե՛ քրիստոնեական և թե՛ համամարդկային ու հայրենասիրական սկզբունքների հիման վրա:

Նկատի ունենալով, որ այս տարի լրանում է Վազգեն Վեհափառի ծննդյան 100 ամյակը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական բաժինը ձեռնամուխ է լինում երջանկահիշատակ հայրապետի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությանը: Սույն Ա հատորը ընդգրկում է նրա ուսումնասիրությունները: Այն նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:

ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ*

(Մտածումներ)

«L' homme est né libre» (մարդը ազատ ծնած է): Այս խոսքով կը սկսի Ժ.Ժ. Ռուսոյի «Du contrat social»–ը, որուն մէջ, ինչպես հայտնի է, հեղինակը կը պաշտպանե մարդուն անհատական ազատութեան բնականությունը՝ *ընկերային ու քաղաքական իմաստով: Ռուսոյի համար ընկերությունը, հետևաբար և ազգերը, մարդոց ազատ կամքով ու որոշումով կազմված իրականություններ են: Մարդկային ընկերությունը, հավաքական կյանքը անհատներու միջև կնքված տեսակ մը պայմանագրության արդյունքներ են: Նախ անհատներ գոյություն ունեցած են, որոնք, իրարու հանդիպելով, մղված զանազան պահանջներե,* որոշած *են միասին ապրիլ. հիմնած են, ուրեմն, ընկերությունը՝ իրենց մեջ աշխատանքի բաժանում և պաշտոններու բաշխում կատարելով ժամանակի ընթացքին:*

Ռուսոյի գաղափարը հաղթանակեց ֆրանսիական հեղափոխությամբ:

«Les hommes naissent et demeurent libres»† *խոսքով մը կը սկսի մեծ հեղափոխության հռչակած «Մարդու իրա-*

---

* Գրված է 1938 թ. հոկտեմբերին, Պուքրեշում: Տպագրվել է Մ. Պոտուրյանի խմբագրած «Գաղութահայ տարեգրքում» (Ա. տարի, 1939, էջ 33-50), Կ. Պալճյան ստորագրությամբ:
Երկրորդ անգամ վերահրատարակվել է Սուրբ Էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 15-31, որից և արված է սույն հրատարակությունը:

† Մարդիկ ծնվում և մնում են ազատ (ֆրանս.):

վունքներու հայտարարությունը» («Déclaration des droits de l'homme», 1789): Այդ օրվնե սկսյալ՝ կը տարածվի ամեն կողմ ու կը խորանա անհատապաշտության գաղափարը ընկերային–քաղաքական կյանքին մեջ, որպես տեսակ մը գիտական ու նաև բարոյական ճշմարտություն:

ԺԹ դարուն համար մարդը անհատ մըն էր: Ֆրանսիական հեղափոխությունը հռչակած ու նվիրագործած էր այդ անհատ մարդու իրավունքները:

Այդ անհատը, սակայն, իրապես գոյություն չուներ. ան վերացական մարդն էր, ընհանուր գաղափարը, զոր տրամաբանությամբ կառուցեր էին քանի մը երազապաշտ մտածողներ: Ամեն մարդ անհատ մըն էր, ո՛չ ավելի, ո՛չ ալ պակաս: ԺԹ դարու մարդ–անհատը ավելի մտքի պահանջք մըն էր, քան իրականության: Անշուշտ, պահանջք մը նաև ընկերային արդարության զգացումի, որ խորապես վիրավորված ԺԸ դարուն տիրող կարգերուն և մթնոլորտին մեջ՝ գաղափարական հիմնավորումներ կը փնտռեր կազմակերպված ձևով պոռթկալու համար: Ու անշուշտ որ, պատմականորեն կարելի չէ անտեսել այդ անհատականության գաղափարին դերը ընկերային–տնտեսական կյանքի զարգացման ու դեպի ավելի արդար հարաբերությանց ստեղծման տեսակետեն: Թեև խորքին մեջ այս վերացական անհատին ազատության սկզբունքը օժանդակը եղավ տնտեսական ազատական դրության (Libéralisme économique) ստեղծման, որ համապատասխանեց արդեն գլուխ բարձրացուցած ու տիրապետելու ձգտող դասակարգին՝ քաղքենիության: Որովհետև, ինչպես ռումեն ընկերաբան Շթ. Զելեթին դիտել կու տա. «Քաղքենիությունը բույս մըն է, որուն արմատները կը մեկնին փոխանակության հարաբերություններե, և որուն ճյուղերը կը զարգանան ընկերային ազատ մթնոլորտի մը մեջ» (St. Zeletin, «Nașterea burgheziei române», 1925):

Տակավ, սակայն, կյանքի նոր պայմաններու և նոր երևույթներու ճնշման տակ, իրականությունը ինքզինքը պարտադրեց: Նոր մտածողությունը և նոր գիտությունը սկսան պեղել իրական մարդը ու գտնել զայն իր կենսաբանական, հոգեբանական ու ընկերային պայմաններուն մեջ, որոնց մեջ կ՚ապրի ան դրապես:

Հիրավի, մարդը միաժամանակ կենսաբանական, հոգեբանական և ընկերային էակ մըն է:

Կենսաբանական, որովհետև իր մարմնով ու խոր բնազդներով կապված է անքակտելի կերպով անասնական կյանքին:

Հոգեբանական, որովհետև մարդուն մեջ անասնականը գերազանցված է նոր իրականությամբ մը, ղղային դրության հեղաշրջումի մը հետևանքով, որով մարդուն բոլոր բնազդներն ու automatisme–ները, վերածվելով գիտակցական երևույթներու, գիտակցական ապրումներու, կազմած են իր մեջ միավոր մը ու տված են անոր ինքնության զգացումը՝ «եսի» զգացումը: Մեկ ամբողջական, ինքնուրույն, զգացող, գիտակցող ու գործող էակ մը ըլլալու զգացումը, ուրեմն, հիմունքն է մարդու հոգեկան կյանքին, ու ժամանակի ընթացքին ստացած բարդություններով ու զարգացումներով կը ներկայացնե մարդուն հոգին իր խորության, իր տարածության և իր՝ դեպի զանազանություն (différenciation) ձգտող հարատև վազքին մեջ:

Վերջապես՝ մարդը նաև ընկերային էակ մըն է, ընկերային իրականություն մը, որովհետև ան, ի բնե, կ՚ապրի հավաքականության մեջ: Ի հառաջագունե մարդը ընկերային է:

Իրապես, մարդը իր անհատական «եսի» զգացումը շատ ուշ գտած է. իր վայրենի վիճակեն իսկ ան պատկանած է ընկերություն մը՝ գլանի, ու երկար դարեր ապրած է իր գլանի հավաքականության գիտակցությունը՝ նախքան իր անհատականության գիտակցությունը ունենալը: Հավաքական «եսը» միակ իրականությունը, միակ հոգեկան մթնոլորտն է եղած, որուն մեջ ապրած են նախապատմական մարդիկ ու, այսօր ալ, դեռ շատ մը վայրենի ցեղեր: Այսօր ալ դեռ այդ ցեղերը, ինչպես կը վկայեն զանոնք ուսումնասիրող ընկերաբանները, զուրկ են իրենց սեփական, անհատական «եսի» զգացումեն ու չեն գիտեր իրենք զիրենք զանազանել շրջապատեն*:

* Այս խնդիրներու շուրջ ժամանակակից գիտուններեն՝ ֆրանսացի Lévy

Այդ զանազանելու գործը կատարված է շատ դանդաղ կերպով, մինչև որ մարդը գտած է ինքզինքը, իր անհատականության զգացումը: Ատոր համար է, որ նոր ընկերաբանները կ'ըսեն, թե նախ՝ ընկերությունը գոյություն ունեցած է, և հետո՝ անհատը:

Այսինքն՝ Ռուսոյի տեսության ճիշտ հակառակը:

Իրապես, սակայն, մարդը գտած չէ դեռ ինքզինքը, գտած չէ դեռ իր ճշգրիտ տեղը այս կյանքին մեջ: Կարելի պիտի ըլլար նույնիսկ քաղաքակիրթ ազգերու պատմությունը գրել՝ մարդկային իրականությունը և անոր կյանքի բոլոր երևույթները դիտելով այս ինքնաճանաչումի աստիճանավոր զարգացման տեսակետեն:

Մարդը կը շարունակե դեռ ինքզինքը փնտռել, ինքզինքը գտնել ու ճանչնալ:

***

Շատ մը ժամանակակից մտածողներու համար անհատական «ես»ի զգացումի ու գիտակցության կատարելագործված վիճակը այն է, ինչ որ իրենք անձնավորություն կը կոչեն: Անձնավորությունը պետք է նկատել, կ'ըսեն, բնության իրականություններեն մին և ամենաբարձր նպատակը բնության բոլոր մյուս իրականություններուն:

Անձնավորությունը, որուն հասած է մարդկային ցեղը (espéce), հանձին տիպար մարդ անհատներու՝ կը բխի նաև նյութական և օրկանական պայմաններու զուգորդումեն ու բարդացումեն, որոնց մեջեն անցած է օրկանական կյանքը ընդհանրապես և մարդկային հոգեկան–բարոյական կյանքը մասնավորապես:

Brühl–ը հռչակավոր դարձած է իր «Les fonctions mentales dans les sociétés inférieures» (1920), «La mentalite primitive» (1923) և «L'âme primitive» (1927) գիրքերով:

Այսպիսով, անձնավորությունը կը դառնա, կարծես, տիեզերական ուժին գերագույն նպատակը ու գոյության բարձրագույն գագաթը:

Այս գիտական տեսակետը առաջնորդած է շատ մը մտածողներ փիլիսոփայական նոր տեսություններու և կառուցումներու, որոնց մեջ տեղ պետք է տալ ռումեն փիլիսոփա Գ. Ռըտուլեսքու–Մոդռուին, որ իր տեսությունը կը կոչե իսկ «էներժեթիկ անձնավորականության փիլիսոփայություն» (Filosofia personalismului energetic).

Արևմտյան մտածողներեն կարելի է հիշել Renouvier («Le personnalisme», 1903), W. Stern («Persönlichkeit als Wissenschaft», 1930), W. Ehrlich («Stufen der Persönlichkeit», 1930) և ուրիշներ: Կարելի է հոս ավելցնել նաև նորագույն մեծ ընկերաբաններեն շատերը, որոնք իրենց մտածողությամբ մոտ են անձնավորության գաղափարին՝ հակառուսոյական իմաստով: Այսպես են ֆրանսացի ընկերաբան Emile Durkheim, ավստրիացի O. Spann և գերմանացի W. Sombart: Այս վերջինը մանավանդ, իր վերջին գործով՝ «Le socialisme allemand» (1938).

Բոլոր այս մտածողները իրենց մտքերու դրությանց մեջ թեև կը տարբերին իրարմե ու տարբեր ձևով կ'ըմբռնեն անձնավորության գաղափարը, և սակայն, խորքին մեջ բոլորը կ'ուզեն գերազանցել ռուսոյական, քաղքենիական անհատականության գաղափարը ու հասնիլ ավելի խոր կերպով, ավելի օրկանական, ավելի ֆունգցիոնալ կերպով ըմբռնված մարդ–անհատի տիպարին:

Այսպիսի ուսումնասիրություն մը հետաքրքրական կ'ըլլա մանավանդ անոր համար, որ կարգ մը գիտություններ մեկնելով տարբեր կետերե, ուսումնասիրելով կյանքի տարբեր բնագավառներ, տարբեր երևույթներ ու մարդկային կյանքին տարբեր երեսները՝ կը հասնին, գրեթե, նույն տեղը կամ, ավելի ճիշտ, իրենց եզրակացությունները իրարու կը համաձայնին, իրար կը լրացնեն ու կը տանին մեզ միևնույն գաղափարին մարդկային էության մասին, մարդը և տիեզերքի մեջ անոր տեղը գտնելու ու հասկնալու

միևնույն ձևին: Այս գիտություններեն են, մանավանդ, նորագույն կենսաբանությունը, հոգեբանությունը և ընկերաբանությունը, և նույնիսկ՝ բնագիտությունը:

Այս հոդվածին մեջ մենք պիտի բավականանանք քանի մը գծեր ու մտածումներ տալով միայն՝ առանց լրիվ բան մը ներկայացուցած ըլլալու հավակնության:

Գոհ պիտի ըլլանք սակայն, եթե մեր այս քանի մը էջերով հաջողինք ինքնամփոփման ու խորհրդածության մղել հայ ընթերցողը, որ, դժբախտաբար, այնքա՜ն կլանված է անցողակի և հոգևոր կյանքի համար ո՛չ նշանակալից հոգերով:

***

Նոր ձևով ըմբռնված անձնավորության գաղափարը, ուրեմն, պետք չէ կարծել, որ կը նույնանա անցյալ դարու անհատականության գաղափարին հետ: Այդ անհատականության գաղափարը կրնանք նկատել պատմականորեն կազմավորվող անձնավորության գաղափարին զարգացման աստիճաններեն մին, սակայն ո՛չ նույն բանը:

Անհատականության գաղափարը այնպես, ինչպես բնորոշեցին ֆրանսիական հեղափոխության գաղափարաբանները ու կարծեցին ատով գտած ըլլալ մարդուն «եսին» կատարելագույն ու բարձրագույն վիճակը, չէր համապատասխաներ իրականության, չէր համապատասխաներ մարդու կենսաբանական, հոգեբանական ներքին պայմաններուն և ոչ ալ, մանավանդ, ընկերային կյանքի պայմաններուն ու ձգտումներուն:

Կարելի չէ վերացական բնորոշումներով կամ զգացական ցանկություններով մարդկային «եսը» կառուցանել: Պետք էր նախ հաշվի առնել անոր բնության պայմանները, անոնցմե մեկնիլ ու անոնց հիման վրա հասնիլ նոր իրականության մը, որ «կառուցված» չըլլար, այլ ըլլա՛ր բնական արդյունքը, ծաղկումը և պտղավորումը խորքեն և հեռուներեն եկող ուժերուն:

Մեր ժամանակները այսպես ահա սկսած են ըմբռնել մարդու հոգիին ու անոր «եսին» կատարելագործված վիճակը, զոր կը կոչեն անձնավորություն:

Անցյալ դարը հավատաց, որ մարդու ինքնաճանաչման ու ինքնակատարելագործման ուղին անհատական ազատության ուղին է, և, հետևաբար, անհատի անկաշկանդ ազատությունը՝ մեծագույն իտեալը կյանքին: Ազատ անհատը՝ տնտեսական-քաղաքական իմաստով, կը դառնար, այսպեսով, բարձրագույն նպատակը ամբողջ գոյության: Կար, անշուշտ, նաև այն հավատքը, որ տնտեսական-ընկերային ազատությունը բնականորեն կ՚ենթադրե բարոյական-հոգևոր ազատության ծնունդը ու զարգացումը:

Մեր դարը, սակայն, իր գիտությամբ ու մտածողությամբ, որոնց արմատները, անշուշտ որ, անցյալեն ալ կուգան, համոզված է, որ մարդ-անհատը, ինքն իր անհատի սահմաններուն մեջ, ի վիճակի չէ բարձրանալու ստեղծագործ գծի մը վրա ու, հետևաբար, ի վիճակի չէ մարդկային իրական ազատության հասնելու:

Անհատը ինքնիրեն ու ինքն իր մեջ ձգված՝ կ՚այլասերի: Մ. Վանտեն Պրուք իրավամբ կը նկատե, թե անհատապաշտությունը ընկերությունը կը վերածե փոշիի կույտի մը, որ առաջին փոթորիկին կը վերածվի ցեխի:

Այն, ինչ որ կը պատահի բույսի մը, երբ արմատախիլ ընես, կամ կենդանիի մը, երբ իր միջավայրը փոխես, նույն բանը կը պատահի մարդ-անհատին, երբ սխալ հասկացված ազատության մը գաղափարը արմատախիլ կ՚ընե զայն իր միջավայրեն, իր բնական հավաքականութենեն, իր օրկանական-հոգեկան աշխարհեն:

Ամեն իրական ազատություն տրված է հավաքականության մը սահմաններեն ներս: Անկե դուրս ազատությունը անկում է, այլասերում է ու անասնացում: Ընկերաբանները առիթ չեն փախցներ ապացուցանելու համար, թե «Ազատությունը ընկերային իրականություն մըն է», իսկ Կյոթե դեռ անցյալ դարուն կ՚ըսեր. «Միայն օրենքը կրնա մեզի ազատություն տալ» *(«Nur das Gesetz kan uns Freiheit geben»).*

Այդ «օրենքը» կը բխի մարդու կենսաբանական, հոգեբանական ու ընկերա-բարոյական բնույթեն:

Կարելի չէ ազատիլ ժառանգաբար մարդուն փոխանցված կենսաբանական-հոգեբանական պայմաններեն. կարելի չէ այդ կյանքի ձև դարձած իրականություններեն խուսափիլ: Այս ճշմարտությունները լավ ծանոթ են արդեն մանկավարժության, որ իր բոլոր գործելակերպերուն մեջ կը հիմնվի այդ իրողությանց վրա՝ ձերբազատված ըլլալով տղուն հոգին «շինելու» ու գլուխը «լեցնելու» հին պատրանքներեն:

Վերջապես, կարելի չէ նաև ազատիլ հավաքականության մը կյանքի ձևերեն, որոնք արդյունք են ընկերության մը բնավայրի, ցեղային ու հոգեկան պայմաններուն ու անոնց դրսևորման, այսինքն՝ պատմության և մշակույթին, որոնք տվյալ ընկերության մը առարկայացած արժեք-իրականություններն են:

Բնակավայր, ցեղ, ոգի և պատմություն ու մշակույթ՝ այս բոլորը ահա՛ օրկանապես կը կազմեն մարդ-անհատին կյանքի աշխարհը *(Lebensraum)*:

Պ. Ռուստ՝ ժամանակակից մտածող մը, կը գրե. «Մարդը ազատ սավառնող իրականություն մը չէ, այլ ան ներգործող էակ մըն է, որ իր ամբողջության մեջ և, հետևաբար, նաև իր մասնավոր գործունեության մեջ, ի սկզբանե կապված է իր աշխարհին հետ և անով բնորոշված: Ամեն մարդ նույն իրականության մեջ չ՚ապրիր. մեր իմացականությունը կը սիրե դրոշմը այն իրականության, որուն մեջ մենք կ՚ապրինք: Մարդուն կապը իր իրականության ամբողջության, իր արյան և պատմության, իր համայնքին հետ պատահական չէ, այլ այդ մեր ճակատագիրն է, որուն առջև պետք է ինքզինքնիս զգանք խոնարհ ու հպարտ միաժամանակ» *(B. Rust, «Nationalismus und Wissenschaft»)*.

Այս բոլոր բնական պայմանները խորտակելու ամեն փորձ կա՛մ զուտ ցնորք կը մնա վերացական ու երևակայական գոյության մը մեջ, ու կյանքը իր գիտցածին պես, իրեն հատուկ տրամաբանությամբ կ՚ընթանա, և կա՛մ, եթե

ուզես անպայման կտրել այդ կապերը ու «փորձդ» տանիլ մինչև «իրականացում», կը պատահի անխուսափելին, այսինքն՝ այլասերում: Դուն, որ կ՚ուզեիր կյանքի կատարին հասնիլ ու թևեր առած՝ դեպի բացարձակ ազատություն մեծ ոստումը իրականացնելու կը պատրաստվեիր, հանկարծ կ՚իյնաս շղթաներուն մեջ քու իսկ սանձարձակած ուժերուդ, քու բնազդներուդ ու կիրքերուդ, որոնք այժմ անպատակ դարձած՝ իրենց վրեժը կը լուծեն՝ քեզ տանելով դեպի կազմալուծում ու անինքնություն:

Կը վերադառնաս այն վիճակին, ուրկե մենք բոլորս ծնած ենք, կ՚ըսե քրիստոնյա ամենամեծ փիլիսոփան՝ սուրբ Ավկուստինոս իր հռչակավոր համարձակ խոսքով. «*Intra feces et urinam nascimur*»:

Որովհետև կյանքին նպատակը օրենքը միայն կու տա, անհատական սանձարձակ ազատության մեջ նպատակ չկա:

Իսկ առանց նպատակի՝ մարդկային կյանքը, մշակութային ստեղծագործ կյանքը հնարավոր չէ:

Մարդը ինքնին իր մեջը բավարար ու կատարյալ էակ մը չէ: Մարդը միակ կենդանին է, որ իր անկատարելության խոր զգացումը ունի ու այդ պատճառավ կը ձգտի դեպի կատարելություն, դեպի գեթ հարաբերական ինքնաբավարարում: Ահա ատոր համար է, որ մարդը միշտ անկայուն է ինքն իր մեջ: Ան իրմե դուրս սկզբունք մը կը փնտռե, որուն կառչի ու ինքզինքը ամբողջացնե, ինքզինքը անկատար զգալու գիտակցութենեն ազատի ու այսպեսով փրկվի:

Իսկ այդ սկզբունքը, որ մարդուն գիտակցության մեծ փրկությունը կը բերե, կազմված է այն բոլոր բարձր նպատակներեն, զոր ընկերային-հավաքական կյանքը կու տա:

***

Նույն այլասերումին կ՚ենթարկվին նաև անոնք, որոնք թեև նախ իրենց կամքեն անկախ արմատախիլ կ՚ըլլան իրենց բնավայրեն, իրենց պատմական–հոգեկան միջավայրեն, սակայն նոր միջավայրի մը ու մթնոլորտի մը մեջ, փոխանակ իրենց հոգիին մեջ պահելու հայրենի, ցեղային մթնոլորտը, որ բնական ու հարազատ է իրենց, և ապրելու անոնց մեջ, կ՚ուզեն օտար կյանքը և օտար հոգին ընդօրինակել ու փոխադրվիլ այդ «նոր» իրականությանց մեջ: Շատ մը օտարացող հայ անհատներու պարագան ճիշտ այս է, գոնե առաջին սերունդին համար: Բոլոր անոնք, որ կ՚ուզեն դուրս ելլել հայու ցեղային մթնոլորտեն ու ազգային արժեքներու աշխարհեն, կ՚իյնան աննպատակ կյանքի մը մեջ, ուր չկա հոգեկան «օրենքը»: Շատ–շատերը այսպիսիներեն՝ ազնիվները, շուտով կը զգան, թե ինչքան միանակ են, ինչքան օտա՜ր իրենց «նոր» կյանքին մեջ ու իրենց սեփական հոգիի մթնոլորտին մեջ իսկ: Այդտեղ կը սկսի անբուժելի ու անհատակ ողբերգությունը այդ մարդոց:

Ուրիշներ, սակայն, այդ ողբերգութենեն, կրավորականներքին ողբերգութենեն դուրս կ՚ելլեն: Ասոնց համար կը սկսի ավելի «ծանր» ողբերգություն մը՝ «հաճույքներու», հարստություններու ու զանազան անխոստովանելի «զբաղումներու» ձևին տակ: Եվրոպային և ամբողջ աշխարհին մեջ քիչ չէ թիվը միջազգային excroc–ներու, զեղծարարներու, մաքսանենգներու, հաշիշի «գործ» ընողներու և լրտեսներու, որոնց մասին հաճախ կը լսենք, որ ծագումով հայ են: Այսպիսի «հայ ծագումով» այլասերածներու անուններ հասած են նույնիսկ եվրոպական գրականության մեջ:

Այլասերումը կրնա, սակայն, երբեմն ալ բարձր ձևեր ստանալ: Երևի, այդ կախում ունի անհատի հոգեկան–բարոյական աշխարհի ուժերեն: Բացառիկ անհատականության պարագային, այս ներքին ողբերգությունը կրնա

տանիլ հոգիի ուժերու բարձր դրսևորումներու՝ կյանքի բարձր արժեքներու իրականացման բլանի մը վրա:

Հավանաբար, շատ մը «հայ ծագում» ունեցող մեծ մարդոց պարագան այս է, այսինքն՝ իրենց մեծությունը ծնած է այդ մեր հիշած ողբերգութենեն կամ, առնվազն, իրենց այդ ողբերգությունը ազդած է իրենց «մեծության» բովանդակության, խորքի կամ ձևի վրա:

Խիստ հետաքրքրական պիտի ըլլար, հատկապես, ուսումնասիրել այդպիսի ծագումով հայ «մեծ» մարդոց կյանքը ու, Ֆրոյտն ալ օգնության կանչելով, երևան հանել մեր մատնանշած ողբերգության (գիտակցական կամ անգիտակցական) ստացած ձևերը (որպես ազդեցություն) անոնց կյանքին և մանավանդ գործին մեջ:

***

Պատմականորեն ստույգ է, որ մարդը աստիճանաբար ազատագրում մը ապրած է իր միջավայրեն ու հավաքականութենեն: Տեսանք, թե ինչպես այսօր ալ վայրենի ցեղերու մոտ անհատը զուրկ է իր զգացումեն, իր սեփական «ես» գիտակցութենեն:

Պարզ է, ուրեմն, որ անհատականության գիտակցության հասնիլը ու այդ գիտակցության աստիճանավոր զարգացումը անհրաժեշտորեն պետք է նկատել մարդկային կյանքի հառաջադիմության քայլերը:

Արդ, այդ մարդը, որ հազիվ դարերու ճիգեն հետո կրցավ ինքզինքը գտնել, իր «ես»ը կազմել ու ազատագրել իր գիտակցությունը, իր զգացումները ու կամքը հավաքականության տիրապետության շղթաներեն, այսօր կրկին պետք է, ուրեմն, վերադառնա՞ իր նախնական վիճակին: Կրկին պետք է ինքզինքը տարրալուծե՞ ու կորսվի՞ հավաքականության մշուշին մեջ:

Անշուշտ, ո՛չ: Խնդիրը այսպես պետք չէ հասկնալ: Եվ արդեն այդ վերադարձը անկարելի պիտի ըլլար: Մարդկային

բնությունը դարերու ընթացքին իր անցած ճամբան, աստիճանական զարգացման հանգրվաններու հետքերը կը պահե իր մեջ, սակայն այդ ճամբուն վրա ետ չի կրնար երթալ:

Ճշմարտությունը այն է, որ անհատի ազատագրում, «ես»ի ազատագրում ըսելով՝ պետք է հասկնալ գիտակցականացումը և բանականացումը այն հարաբերությանց, որ կան անհատի ու ընկերության միջև և բնա՛վ երբեք խզումը այդ կենսաբանական, հոգեբանական ու ընկերա-բարոյական կապերուն:

Հին մտայնությունը կ՚ըսեր անհատին. «Եղի՛ր ա՛յն, ինչ որ պետք է ըլլաս», ու այդ «պետք է»-ն կը կապեր վերացական գաղափարներու կամ զգայապաշտ ցանկություններու՝ առանց նախօրոք ծանոթ եղած ըլլալու մարդկային կյանքի խոր արմատներուն և անոր բնության պայմաններուն:

Նոր մտայնությունը՝ հիմնված գիտության նորագույն արդյունքներուն վրա, որ երկար ատենե ի վեր կը պեղե, կը քննե ու լույս կը սփռե մարդուն կյանքին զարդ թագուն այդ իրականության վրա, նախ կ՚ըսե.

«Եղիր ա՛յն, ինչ որ ես»: Հետո կ՚ըսե. «Եղիր ա՛յն, ինչ որ կրնաս ըլլալ:» Եվ ատկե վերջ միայն կարելի կ՚ըլլա ըսել. «Եղիր այ՛ն, ինչ որ պետք է ըլլաս»:

Եթե գործնականին մեջ այս պատվերները կիրառել ուզենք, պետք է նկատենք, որ առաջին պատվերին կը համապատասխանե ինքնաճանաչումի հոգեկան գործողությունը, երկրորդ պատվերին՝ ինքնաքննդատության գործողությունը, իսկ երրորդին՝ ինքնակերտումի գործողությունը:

Առաջին գործողությունը կ՚ենթադրե բացարձակ անկեղծություն մը, հերոսական անկեղծությունը ինքզինքդ ճանչնալու այնպես, ինչպես որ իրապես ես, և ո՛չ այնպես, ինչպես կը սիրես կարծել, որ ես: Որպեսզի կարենաս երկրորդ և երրորդ գործողությանց հասնիլ, այսինքն՝ ինքնաքննադատության ու հետո ինքնակերտման, անհրաժեշտ է, ուրեմն, նախ այդ անկեղծ ինքնաճանաչումը: Առանց անկեղծության՝ ամեն բան կը ձախողի: Ու չկարծվի, թե այնքան դյուրին բան է ինքզինքը ճանչնալու այդ անկեղ-

ծությունը ունենալը: Այդ հնարավորությունը, պիտի ըսեմ, այդ հոգեկան ուժը կախում ունի մեծ չափով մարդու ստացած դաստիարակութենեն: Մակերեսային դաստիարակություն մը, արտաքին փայլ ունեցող դաստիարակություն մը կը տանի դեպի ինքնակեղծում ու կը ցամքեցնե ինքզինքդ ճիշտ ճանչնալու անկեղծության աղբյուրները: Հաճախ այդ աղբյուրները այնքան կ՚անհետին, որ այդպես սխալ դաստիարակված անհատը ինքն ալ չի զգար ինքզինքին կեղծումը, ինքն ալ անկեղծորեն կը հավատա իր կեղծ վիճակին իրականության: Իրական դաստիարակություն մը պետք չէ ծածկե բնությունը և անոր իրական կողմերն ու թագուն ծալքերը: Ավելին, պետք է զանոնք փնտռե ու դուրս, լույս աշխարհ բերե: Այսպես միայն, բացարձակ անկեղծությամբ միայն կարելի է իրականացնել ինքնաճանաչումը:

Երկրորդ գործողությունը՝ ինքնաքննադատություն, կ՚ենթադրե հոգեկան ուժ, քաջություն և սուր հստակատեսություն՝ ինքզինքդ քննելու ու դատելու, ներսիդ լավն ու վատը իրարմե զատելու:

Իսկ երրորդ գործողությունը, որուն քիչերը միայն կրնան հասնիլ, կ՚ենթադրե հոգեկան մեծ ուժեր՝ կառուցանելու համար բնության իրականություններեն ամենեն հոյակապը ու ամենեն գեղեցիկը՝ բարոյական կերտումը ինքզինքիդ, մշակութային արժեքներու ուղիով, հավաքականությա՛ն ծառայելու գիտակցությամբ:

Ինքնակերտումը իսկական Վահագնյան վերածնունդ մըն է:

Ինքզինքը այսպես կերտած մարդը, իր կյանքի վերջավորության, հավանաբար, կ՚ապրի Ֆաուստյան այն վսեմ պահը, երբ բավարարված իր ստեղծած գործեն՝ կրնա գոչել ինքն ալ.

«Կանգ առ, վայրկյան, քանզի դուն շա՜տ գեղեցիկ ես»*:

Գրականության մեջ կը հանդիպինք երեք տիպարներու, երեք հանճարեղորեն ստեղծագործված հոգեկան աշխարհներու, որոնք, մեր կարծիքով, կրնան ներկայացնել ու

* Ֆաուստին խոսքերը. «Verweile doch, du bist so schön»:

մարմնացնել վերև հիշված երեք հոգեկան վիճակները, գիտակցության պայքարի այդ երեք հանգրվանները՝ ինքնակերտումին հասնելու ի խնդիր:

Առաջինը Էտիբն է, որուն գիտակցությունը կ'երթա մինչև ինքնաճանաչում՝ առանց ինքզինքը այդ «ճակատագրեն» ազատել փորձելու: Էտիբը մարդն է, որ չարը կ'ընե առանց գիտնալու, հետո, սակայն, իր մեջ ծնելով մեղքին գիտակցությունը՝ ինքնաճանաչում, կը սկսի իր հոգեկան կյանքին անդարմանելի ողբերգությունը, զոր դատապարտված է ապրիլ, որպես ճակատագիր, մինչև մահ:

Երկրորդը Գարամազովներն են (բացի Ալյոշայեն), որոնք սկիզբեն իսկ գիտակցությունը ունին իրենց մեղքերուն, որոնք ամեն վայրկյան ինքզինքնին պեղելու, քննելու ու դատելու մարմաջը ունին, որոնք ինքզինքնին դատապարտելու և տանջելու իսկ հաճույքը կ'ուզեն ապրիլ ի խնդիր իրենց հոգիի փրկության ու «նոր կյանքի» մը արշալույսին: Եվ, սակայն, չեն հաջողիր ինքզինքնին տիրապետելու: Գարամազովները անդադար գիտակցությունը ունին իրենց հոգիի այն երկու անդունդներուն, որոնցմե մին դեպի վեր կը բարձրանա, մյուսը դեպի ցածը կ'իջնե:

Երրորդը Ֆաուստն է, որ կը հաջողի հասնիլ ինքնակերտումին՝ պայքարի ու իր ստեղծագործած «գործի» շնորհիվ: Ֆաուստը չ'ենթարկվիր ճակատագրին և ոչ ալ գոհացում կը ստանա իր հոգիին սահմաններուն մեջ՝ տառապանքի միջոցավ փրկություն փնտռելով:

Ֆաուստը մարդն է, որ կը պայքարի ճակատագրին ու ինքզինքին դեմ: Ֆաուստը մարդկային գիտակցության և կամքի ուժերու միջամտության հաղթանակն է: Ան ինքզինքեն դուրս կ'ելլե ու հասարակաց բարիքին մեջ, ընկերության երջանկության մեջ կը գտնե փրկությունը:

Էտիբ կը հպատակի ճակատագրին:

Գարամազովները կը փնտռեն փրկությունը:

Ֆաուստը կը գտնե ու կ'իրականացնե զայն:

***

Իտեալ անձնավորությունը այն անհատն է, որ առանց իր բնական կապերը խզել ուզելու, ընդհակառակը, հերոսական անկեղծությունը կ'ունենա լավ ճանչնալու ինքզինքը, իր իրական բնությունը, իր հոգիին ծալքերը, իր ձգտումները, մեկ խոսքով՝ իր բովանդակ «եսը», և կը զարգացնե, կը մշակե իր այդ «եսի» ուժերը՝ դեպի բարոյական–մշակութային ու իր հավաքականության բարիքին տանող գործածություն մը տալով անոնց: Որովհետև չմոռցվի, որ ամեն բնական հակում բարոյական գծի մը վրա կարելի է բերել ու դարձնել զայն իրական ուժ:

Ինչ կը վերաբերի իր ընկերային բնությանը, անձնավորությունը հնարավոր կ'ըլլա միայն իր հարազատ հավաքականության մեջ. ան կը նույնանա հավաքականության հետ. ան կը նույնանա հավաքականության ապրումներուն հետ ու իր «եսը» գիտակցորեն կը ցոլացնե, կը մարմնացնե բյուրեղացած ու համադրական ձևով, ամբողջ այդ հավաքականության գիտակցությունը, հույզերն ու կամեցողությունը:

Մինչդեռ, անքաղաքակիրթ մարդու ու նախապատմական ցեղերու պարագային, «եսի» գիտակցությունը հավաքական գիտակցությունն իսկ է, ու անհատը կը մասնակցի հավաքական կյանքին՝ առանց իր «եսի» գիտակցության, անձնավորության պարագային անհատը հավաքական կյանքին կը մասնակցի գիտակցորեն, իր ազատ կամքով՝ հավաքականը եսականացնելով:

Առաջին պարագային «եսը» գոյություն չունի, անհատը հավաքականության գերին է, ու իր դերը՝ կրավորական. երկրորդ պարագային «եսը» իր հզորագույն աստիճանին հասած, ընդգրկած է հավաքականության բովանդակ հոգին ու յուրացուցած անոր հույզերը, մտածումներն ու կամեցողությունը՝ դառնալով այդ հավաքականության տիպար ներկայացուցիչը, անոր ֆունգցիոնալ համադրական մեկ միավորը ու անոր մղիչ, ստեղծագործ ուժն իսկ: Հետևաբար, անձ-

նավորությունը գերազանցապես ներգործող ու ստեղծագործ է:

Ցառուստյան անձնավորության իտեալն է հոգեկան ուժերու խոյանքը դեպի ինքնաճանաչում մինչև խորը հոգիին, դեպի ինքնաիրականացում ու ինքնավերակերտում:

Նորագույն մարդու այդ խոյանքը զմայլելի կերպով տված է Ֆր. Շիլլեր իր հետևյալ տողերուն մեջ.

Անհոգնաբեկ դեպի հառա՛ջ պետք է վազես
Ու կանգ չառնես պիտի երբեք դուն պարտասուն,
Եթե երբեք կատարյա՛լը տեսնել կ'ուզես,
Պետք է, որ միշտ դուն տարածվիս դեպի հեռուն...
Մինչև աշխարհն հոգիիդ մեջ ամբողջանա,
Պետք է իջնես դեպի խորունկը իրերուն,
Որ գաղտ իմաստը էության քեզ երևա: –
Հարատևե՛լ, – նպատակին ա՛ն կը տանի,
Լրությունն է, որ կը հանգի պայծառության,
Ու խորն է, որ ճշմարտությունը կը նստի*...

(«Կոնֆուցիուսի ասույթներից»):

***

Այսպես հասկցված անձնավորությունը մեր օրերու մեծագույն իտեալն է:

---

* «Rastlos Vorwärts mußt du streben,
Nie ermüdet stille stehen
Willst du die Vollendung sehen,
Mußt ins Weite dich entfalten...
Soll Sich dir die Welt gestalten.

In die Tiefe mußt du steigen,
Soll sich dir das Wesen zeigen.-
Nur Beharrung führt zum Ziel,
Nur die fülle führt zur Klarheit ,
Und im Abgrund wohnt die Wahrheit»
(«Spruch des Konfuzius»)

Անձնավորության այս գաղափարը, որ արդյունքն է, մանավանդ, ժամանակակից հոգեբանության ու մանկավարժության, սկսած է արդեն իր այս գիտության սահմանները անցնիլ ու առաջնորդ գաղափար դառնալ նաև ուրիշ գետիններու վրա, ինչպես են ընկերային, քաղաքական և, նույնիսկ, տնտեսական կյանքը:

Նորագույն ազգային–հավաքապաշտ շարժումները և, մեր կարծիքով, նաև տնտեսական–հավաքապաշտ շարժումները (սովիեթիզմ), անկասակած որ, իրենց սերմերը ստացած են անձնավորության շուրջ նորագույն գաղափարներեն: Որովհետև ակներև է, որ մարդ–անհատի անձնավորությունը պայմանավորող օրկանական հավաքականությունը ազգային համայնքն է: *Իսկ ազգային համայնքը ինքն ալ տեսակ մը հավաքական անձնավորություն է:*

Սակայն ոչ միայն այսպես կոչված «totalitaire» պետությունները, այլ դեմոքրատիկ պետություններն ալ հեռու չեն անձնավորության գաղափարեն, և շեշտը անհատին վրա դնելով՝ անոնք ալ իրապես կը ձգտին ստեղծել ու բնորոշել իրենց սեփական ազգային–հավաքական անձնավորության տիպարը:

Ազգային կարգապահություն ըսվածը ուրիշ բան չէ, եթե ոչ այդ հավաքական անձնավորության գիտակցությունը:

Այս իմաստով բոլոր այսօրվան կյանքում ժողովուրդները կ'ընթանան դեպի բնական ազգայնականություն մը՝ *մեջն ըլլալով, գուցե, նաև Խորհրդային Միության ժողովուրդները (ո՛չ սակայն «խորհրդային ազգը», որ գոյություն չունի):*

Ռըտուլեսքու–Մոդոռու տեղ մը կը գրե.

«Ազգայնականությունը, քաղաքական բլանի վրա, կը նշանակե պետության կազմակերպումը համաձայն ազգի անձնավորության:

Պետական ձևը ազգին հոգիին հետ առնչություն չունեցող մեքենա մը չէ, որ կարելի ըլլա ամեն տեղ կիրառել: Ամեն ազգ իր *պետական ձևը ունի և միայն այդ մեկը իրեն հարմար է»:*

Հավաքականության մը մշակույթն ալ արդեն պայմանավորված է այս ներքին կարգապահութեններն:

Ամեն մշակույթ արդյունք է հասարակության մը կյանքի ուժերու ներքին ներդաշնակության ու հավասարակշռության:

Հավաքական կյանքին մեջ ալ, ինչպես արվեստին մեջ, անհրաժեշտ է «միավորություն զանազանության մեջ, և զանազանություն միավորության մեջ» սկզբունքին իրականացումը:

Մեր ժամանակները, կը թվի, թե կ'ընթանան դեպի ընկերային-քաղաքական նոր հավասարակշռություն մը, որ սակայն գտնված չէ դեռ ոչ մեկ տեղ:

Թե ո՞ր ժողովուրդը պիտի հաջողի առաջինը ըլլալ այս «նոր հավասարակշռությունը» գտնելու պայքարին մեջ, թե ե՞րբ և ինչպե՞ս պիտի իրականանա այդ նոր կյանքը, հարցումներ են, որոնց վերջնական պատասխանը, անշուշտ որ, միայն ժամանակը պիտի տա:

Ակներև է, սակայն, որ կյանքը կ'երթա դեպի դրություն մը, որ պիտի ըլլա հավաքապաշտ-ընկերվարական և ոգեպաշտ:

***

Կը թվի, թե անհատ անձնավորության և հավաքական ազգ անձնավորության միջև կա այն հարաբերությունը, ինչ որ կա բնության մեջ միքրոքոզմի և մաքրոքոզմի միջև, կամ, ավելի պարզ՝ բույսի մը հունտին ու իր ամբողջության միջև:

Հավաքականը գոյություն ունի, ի հառաջագունե, անհատին մեջ ճիշտ այնպես, ինչպես հունտին մեջ որպես կարելիություն գոյություն ունի ամբողջ ապագա բույսը:

Այս տեսակետները իրենց խորքին մեջ, անշուշտ, նոր չեն. տարբեր ձևերով կը գտնվին նաև անցնող դարերու մտածողներու գործերուն մեջ:

Այսպես՝ հնագույն փիլիսոփայության մեջ կը հանդիպինք Արիստոտելին, որ նույն միտքերը կը հայտնե իր «Քաղաքականություն» գրքին մեջ: Ահա՛ այդ նշանավոր դարձած հատվածը.

«Պարզ է ուրեմն, որ իր բնությամբ պետությունը նախագոյ է, քան ընտանիքը, քան մեզմե ամեն մեկը, որովհետև մարմինը պետք է գոյություն ունենա նախքան իր մասերը, և ոչնչացնելով մարմինը՝ իրենց գոյությունը պիտի չպահեն ո՛չ ոտքը, ո՛չ ձեռքը, այլ պիտի մնան անունով միայն, ինչպես որ ձեռք կարելի չէ անվանել քարե ձեռք մը. ամեն բան կը հատկանշվի իր կոչումով և իր այդ կոչումը իրագործող ուժով. այնպես որ, եթե անոնք նույնը չեն մնացած, կարելի չէ ըսել, որ այդ բաները նույն բնությունը ունին, այլ կարելի է ըսել, որ միայն անունը ունին: Հետևաբար պարզ է, թե պետությունը գոյություն ունի անհատեն առաջ, որովհետև տրված ըլլալով, թե անհատն ինքն իրեն բավարար չէ, ան հանդեպ պետության նման է մարմնի մը մասնիկին, իսկ մյուս կողմե, եթե չի կրնար կամ պետք չունի մասնակից ըլլալու ընկերության իր ինքնաբավության պատճառավ, այն ատեն ան անդամը չէ պետության, այլ կամ անասուն մըն է և կամ աստված մը»:

Խորքով, նույն հիմնական տեսակետին վրա կանգնած են մեր օրերու գրեթե բոլոր մեծ ընկերությունները նաև դեմոքրաթիկ երկիրներուն մեջ: Բնական է, խոշոր տարբերություններ ալ կան մեկեն մյուսը:

Ահա՛ քանի մը նախադասություններ ժամանակակից ֆրանսացի մեծագույն ընկերաբան Էմիլ Տյուրքեյմեն, որ դեռ պատերազմեն առաջ նույն տեսակետները կը զարգացներ՝ իր երկրին մեջ առաջ բերած ըլլալով արդեն ամբողջ հոսանք մը, որ կը կոչվի «Ecole sociologique française»:

«Ըսողներ պիտի ըլլան, թե քանի որ ընկերությունը կազմող միակ տարրերը անհատներն են, ուրեմն ընկերային երևույթներու ծնունդի պատճառները միայն հոգեբանական կրնան ըլլալ:

Այսպես դատելով՝ նույնպես շատ դյուրավ կարելի է պնդել, որ կենդանի բջիջին մեջ նյութական մոլեքյուլներե դուրս ուրիշ բան չկա: Միայն թե անոնք ընկերակցած են, և այդ ընկերակցությունը պատճառն է այն նոր երևույթներուն, որոնք կը հատկանշեն կյանքը և որոնց սերմը անկարելի է գտնել ընկերակցած տարրերեն որևէ մեկուն մեջ: Այսինքն՝ ամբողջությունը նման չէ իր բաղկացուցիչ մասերու գումարին. ան տարբեր բան է, ու անոր հատկությունները կը տարբերին զինքը բաղկացնող տարրերուն հատկություններեն»:

«Ընկերությունն ալ անհատներու պարզ գումար մը չէ, այլ ընկերակցությամբ անոնց կազմած դրությունը ուրույն (spècifique) իրականություն մը կը ներկայացնե, որ իր մասնավոր հատկությունները ունի»:

Անհատական հոգիները հավաքվելով, իրար թափանցելով, ձուլվելով՝ ծնունդ կու տան գոյության մը, հոգեկան, եթե կ՚ուզեք, որ, սակայն, նոր տեսակի հոգեկան անհատականություն մը կը ներկայացնե: Ուրեմն, այս հավաքական անհատականությա՛ն մեջ և ո՛չ թե անոր բաղկացուցիչ միավորներու մեջ պետք է փնտռենք անմիջական և պայմանավորող պատճառները այն երևույթներուն, որ հառաջ կու գան այդ հավաքականության մեջ: Հավաքականությունը կը մտածե, կը զգա, կը գործե բոլորովին այլ կերպ, քան իր անդամները առանձին-առանձին առնված: Ուրեմն, եթե այս վերջիններեն մեկնինք, ոչինչ պիտի հասկնանք հավաքականության մեջ պատահածներեն: Ուրիշ խոսքով՝ հոգեբանության և ընկերաբանության միջև կա այն նույն խրամատը, որ կա կենսաբանության և բնագիտության ու տարրաբանության միջև:

Հետևաբար, քանի անգամ որ ընկերային երևույթ մը բացատրված է ուղղակի հոգեբանական երևույթով մը, կրնանք առաջուց վստահ ըլլալ, որ բացատրությունը սխալ է:

«Ուրեմն, հակառակ այս մտածողներուն*, մենք կ՚ըսենք, թե ընկերային կյանքը բնական է, ոչ որովհետև անոր աղբյուրը կը գտնենք անհատին բնության մեջ, այլ որովհետև ան կը բղխի ուղղակի հավաքականության էութենեն, որ ինքն իր մեջ suigeneris բնություն մըն է. որովհետև ան կը բղխի այն մասնավոր գործողութենեն, որուն կ՚ենթարկվին մասնավոր գիտակցությունները՝ իրարու ընկերակցելով, և որմե հառաջ կու գա նոր տեսակի գոյություն մը»:

***

Անհատը, ուրեմն, երբ գիտակցական ձևով իր մեջ կը գտնե այդ օրինական կարելիությունները, կը մշակե ու կը զարգացնե զանոնք և այսպեսով կը դառնա իր հավաքականության ֆունկցիոնալ մեկ իրականությունը, ահա այդ ատեն ան հասած կ՚ըլլա «անձնավորություն» մը կոչվելու վիճակին:

Ահա՛ գաղտնիքը նաև այն իրողության, որ մեծ արվեստագետներու գործին մեջ կենդանի կերպով ներկա են այն հավաքականությունները, որոնց ծոցեն ծնած են իրենք: Եվ ասիկա՝ անկախ արվեստագետին կամքեն և, հաճախ նույնիսկ, իր կամքին հակառակ:

Ահա՛ թե ինչու կ՚ըսվի, թե արվեստի բոլոր գլուխգործոցները անհրաժեշտորեն «ազգային» են... Մեծ արվեստագետները եղած են միաժամանակ անձնավորություններ, արվեստագետ-անձնավորություններ: Որովհետև անձնավորություն կարելի է ըլլալ կյանքի ամեն ասպարեզին մեջ, գործունեության ամեն գետնի վրա:

Պետք չէ, սակայն, կարծել, որ անձնավորությունը տաղանդի կամ հանճարի հետ կապված է: Եթե մեծ արվեստագետը, մեծ գիտնականը, մեծ կրոնական դեմքը կամ մեծ փիլիսոփան ու մեծ քաղաքագետը անձնավորություններ կը դառնան իրենց հանճարի ու ստեղծագործ intuition-ի ուղիով, շնորհիվ, բայց, մանավանդ, գիտակցութենեն անդին գտնվող ուժերու մղումով, ինչ-որ բացառիկ պարագաներ են ու մարդկային բացառիկ տիպարներ՝ կազմված հոգեկան բարձր համադրություններու բլանի մը վրա, որոնց

* Խոսքը Ժ. Ժ. Ռուսոյի, Հոբսի, Սպենսերի մասին է:

գաղտնիքը, գուցե, մարդկությունը երբեք պիտի չկարենա գտնել, մարդկանց ստվար մեծամասնությունը, սակայն, անձնավորություններ կրնան դառնալ իրենց նկարագրով, իրենց ինքնակերտումի բարոյական ճիգով:

Նկարագիրը իր լրիվ ու ճշմարիտ իմաստին մեջ ուրիշ բան չէ, եթե ոչ այն արահետը, որ կը տանի մարդը դեպի անձնավորություն:

Ահա՛ այն հատկանիշները, զոր կ՚ենթադրե իսկական բարոյական նկարագիր մը.

«Բարոյական նկարագրի մը գլխավոր հատկանիշներն են՝ կամքի ուժ, դատողության հստակություն, զգացումի նրբություն և ոգևորվելու կրակ: *Կամքի ուժ ըսելով՝ չի հասկացվիր բնազդի կույր մղումը, այլ այն ուժը, որ ի գործ կը դրվի հարկ եղած պահուն: Կամքի ուժ չունին ո՛չ համառները և ո՛չ ալ հախուռները (impulsiv), այլ անվախ ու հարատև գործողները: Դատողության հստակությամբ՝ նկարագիրը կը ստանա տեսականության և նախատեսության հատկությունները: Զգացումի նրբությունը վառ կը պահե մարդկանց հանդեպ սերը և կ՚ազատե մարդը ռուդինե: Ոգևորություն կրակը, վերջապես, կը փոթորկե հոգին և կու տա զոհաբերության ուժը»: (C. Rădulescn–Motru, «Psihologie», 1929):*

Հասուն ու կազմված մարդուն մեջ, տեղ մը, նկարագրի ու «անձնավորության» հատկանիշները կրնան նույնանալ իրարու հետ:

Ավելորդ է ըսել, թե ի՛նչ մեծ կարևորություն ունի ժողովուրդի մը կյանքին համար նկարագրի կազմությունը, այն բարոյական, անհատական ու հավաքական առաքինությունների մշակումը, որ ազգին կու տա ոչ թե «անհատներ», այլ «անձնավորություններ»:

Որովհետև թե՛ արվեստի գետնին վրա, թե՛ գիտության ու տնտեսության մեջ, ինչպես պատերազմի դաշտին վրա, հաղթանակները նկարագրով *կը շահվին:*

Պուքրեշ, հոկտ. 1938

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՅԵՐԸ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ ՎԵՊԻՆ ՄԵՋ*

(Վերլուծական փորձ)

Ա.

Համաշխարհային համբավ ունեցող վիեննացի գրագետ Ֆրանց Վերֆել 1933–ին հրատարակեց իր վեպերու գլուխգործոցը՝ «Մուսա լերան քառասուն օրը»:

Հեղինակի մասին մենք՝ հայերս, շատ բան չենք գիտեր: Գիտենք, սակայն, թե ան մեծ, անզուգական ծառայություն մը մատույց հայ ժողովուրդին: Ծառայություն մը, որուն համար հայ ժողովուրդը երբեք պիտի չկրնա հավա-

* Գրվել և առանձին գրքով հրատարակվել է 1940 թվականին, Պուքրեշում (62 էջ), Կ. Պալճյան ստորագրությամբ: Վերանայվել է 1986-ի վերջերին, ըստ որում, բնագրի մեջ կատարվել են սրբագրություններ և աննշան կրճատումներ: Վերջինիս հիման վրա պատրաստվել է նաև աշխատության ամսագրային տարբերակը, որը ռուսերեն թարգմանությամբ և խմբագրական առաջաբանով տպագրվել է «Дружба народов» («Ժողովուրդների բարեկամություն») ամսագրում, Մոսկվայում (1987, N 8, էջ 227-234): Վեհափառ Հայրապետի այս երկասիրությունը թարգմանվել է նաև ֆրանսերեն և առանձին գրքույկով ու փոքրիկ առաջաբանով լույս տեսել Փարիզում, 1987-ին (հրատ. Սարգիս Պետոյանի), հետևյալ տիտղոսաթերթով. *Garabed Baldjian*, (Catholicos Vasken ler). Les Arméniens du Moussa-Ler, Paris, (էջ 43):

Ֆ. Վերֆելի «Մուսա լերան քառասուն օրերը» վեպից կատարված բառացի քաղվածքները առնված են այդ երկի առաջին հայերեն թարգմանությունից, որ կատարել է սփյուռքահայ մտավորական Եր. Անդրեասյանը (լույս է տեսել 1935-ին, երկու գրքով, Սոֆիայում):

Երկրորդ անգամ վերահրատարակվել է Սուրբ Էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 35-73, որից և արված է սույն հրատարակությունը:

սար չափով մը իր երախտագիտությունը հայտնել այս մեծ մարդուն՝ Ֆրանց Վերֆելին:

Մեծ եղեռնի մասին ոչինչ չունինք նույնքան արժեքավոր, ինչքան այս վեպը: Զարմանալի է և, սակայն, իրական, թե մեր գրագետները և բանաստեղծները, որոնցմե ոմանք նույնիսկ ապրած են այդ տարագրության սև օրերը, ցարդ չեն կրցած տալ պատկերը այն ողբերգության, զոր ապրեցավ մեր ժողովուրդը:

Ճիշտ է, մեր հետպատերազմյան գրականությունը լեցուն է հիշողություններով, նկարագրություններով, և, սակայն, անկեղծ ըլլալու համար պետք է խոստովանինք, թե անոնք ոչ մեկ մնայուն արժեք կը ներկայացնեն:

Որովհետև միայն արվեստը կրնա դեպք մը անմահացնել:

Որովհետև միայն ավեստը հավիտենական կենդանության գաղտնիքը գիտե:

Որովհետև միայն արվեստը կրնա տալ ճշմարիտը և իրականը ավելի իրական, քան թե ինքը իրականությունը:

Ըսված է, թե եթե պատահի, որ ֆրանսական ժէ դարու մասին բոլոր պաշտոնական տեղեկությունները, բոլոր պատմական արձանագրությունները, վերջապես բոլոր հետքերը անհետանան, միայն Մոլիերի գործը բավական պիտի ըլլար վերակենդանացնելու այդ դարը իր ճշմարիտ և իսկական դիմագծով:

Մենք, այո՛, Մեծ եղեռնի մասին ունինք բազմաթիվ հիշողություններ, պաշտոնական փաստաթուղթեր, օտար վկայություններ, և, սակայն, այդ բոլորը կը տժգունին այն կենդանի գործին առաջ, որպիսին է Ֆրանց Վերֆելի ստեղծագործությունը:

Ֆրանց Վերֆելի հայերը հավետ պիտի ապրին աշխարհի գիտակցության մեջ անկախ հետ այսու պատահելիքներեն: Եվ թո՛ղ շատ զարմանալի չթվի, եթե ըսենք, որ դուցե օր մըն ալ գա, երբ հայն ու թուրքը հավասար հափշտակությամբ կարդան այս վեպը՝ ողբալով իրենց նախահայրերու ճակատագիրը, որ թեև նույն հողեն շինված մարդեր, չեն ճանչցեր զիրար, ու փոխանակ իրար սիրելու և Աստուծո՝ իրենց պարգևած կյանքը իմաստուն և գեղեցիկ կերպով

ապրելու՝ անոնք ատեր են իրար, ու մեկը փորձեր է մյուսին հոգիին լույսը մարել և անոր արյունն ալ քամել:

Մեծ է արվեստի ուժը: Օ՜, եթե մարդկության և պետությանց ղեկավարները դաստիարակված ըլլային արվեստի բարձր հասկացողությամբ, դուցե մեր ճակատագիրն ալ տարբեր ըլլար:

Եվ, սակայն, այդ օրը պիտի գա: Մարդկայնորեն դատելով՝ ան պետք է, որ գա, քանի որ մարդկային անհրաժեշտություն մըն է:

Մոլորությունը չունենանք՝ խորհելու, թե Ֆրանց Վերֆելի վեպը գրված է թուրքին դեմ, որ հակաթուրք բրոբագանտին ծառայող գործ մըն է: Ո՛չ: Զեմ կարծեր, որ Ֆրանց Վերֆել թուրքին թշնամի է, և չեմ կարծեր, որ ան իր մեծ վեպը գրած է այդ գիտակցությամբ:

Խորհիլ այդպես, պիտի նշանակեր վեպին արժեքը չհասկնալ և հեղինակը վիրավորել:

Ֆրանց Վերֆել շատ մեծ արվեստագետ մըն է՝ իր ստեղծագործության մեջ չառաջնորդվելու համար «բրոբագանտի» նպատակներով:

Հայ ժողովուրդի ողբերգության մեկ պահը Ֆ. Վերֆելի համար մարդկային բարձր արժեք ներկայացնող տարերային երևույթ մըն է, զոր ան իր հանճարով անմահացուցած է: Իրեն համար, արվեստի տեսակետեն, նույնքան արժեք կը ներկայացնե թուրքը, ինչքան հայը: Այսպես, ինչպես Շեյքսբիրի տրամներուն մեջ, օրինակ, Յակոն նույնքան մարդկային է, ինչքան Օթելլոն, և ինչպես որ Օթելլոն Օթելլո չէ և չի կրնար ըլլալ առանց Յակոյին, նույնպես և Հայը Հայ է, որովհետև ճակատագիրը անոր դեմ հաներ է թուրքը՝ մին ընելով նահատակ, մյուսը՝ նահատակող, և, սակայն, երկուքն ալ հավասարապես խաղալիքներ իրենց ճակատագրին ձեռքը: Երկուքն ալ հավասարապես մարդեր են, որոնք իրենց վիճակված ձևով կը տառապին:

Վեպին աշխարհը դժոխք մըն է, ուր մարդիկ կը տանջվին: Հայը կը փրկվի, սակայն, մեռնելով, իսկ թուրքը մեռնիլ ալ չի կրնար:

Վեպին մեջ հայն ու թուրքը մարդկային հոգիներու երկու բևեռներ են: Հեղինակը կրցած է հասնիլ այդ բևեռներուն, թափանցած է անոնց էութեան ու տված անոնց հոգիները իրենց իսկ իսկութեամբ:

Ֆ. Վերֆել ինքը բնավ չի փորձեր բան մը փոխել մեկուն կամ մյուսին հոգիեն, բնավ չի փորձեր դատել մեկուն կամ մյուսին վարմունքը: Ֆ. Վերֆել միայն կը դիտե այդ հայ–թուրք աշխարհը, կ՚ապրի զայն խորապես ու մարդկութեան ընծա կու տա հոյակապ ողբերգութեան մը կենդանի պատմութիւնը:

Վերֆելի վեպը, ինչպես ամեն մեծ գործ, կրնա իր պակասները կամ նույնիսկ թերի կողմերը ունենալ՝ գեղարվեստական զանազան տեսակետներե դիտված. սակայն ինչ որ վեպ մը մեծ կ՚ընե, անոր իրական կյանքը տալու ուժն է: Եվ իրոք, Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» ամբողջ աշխարհ մըն է, կյանքի հոյակապ կառուցվածք մը: Ամուր, իրական, ճշմարիտ ու կենդանի աշխարհ մը՝ բարձունքներով ու խորխորատներով, խավարով ու արևով, թանձր ամպերով ու վարդագույն հորիզոններով:

Աշխարհ մը, որուն մեջեն անցնելով՝ կը զգաս, թե, կարծես, կյանք մը ևս ապրեցար ու դարձար ավելի՛ մարդ և, մանավանդ, ավելի՛ Հայ:

Բ.

Հայաստան, 1915–ին ...
Հայ աշխարհին մեջ՝ գաղթ, սով, մահ:
Հայը զոհն է, թուրքը՝ դահիճը:
Քաղաքակիրթ աշխարհը՝ հանդիսատես:
Պատմությունը՝ դատավոր:
Իսկ Աստված, ո՞վ գիտե՝ ի՞նչ կը խորհի:
Հայ ժողովուրդը պետք է մեռնի: Այս է պատգամը ուժովին:

Ու ան, ջլատված, անդամալուծված ու առանց ուժի, գլուխը կը խոնարհե ճակատագրին առաջ ու ճամբա կ՚ելլե դեպի մահ:

Պետք է մեռնիլ: Սակայն ինչպե՞ս մեռնիլ: Ահա՛ հարցում մը, որ կը բռնկի հոս, հոն ու ամեն տեղ:

Շապին–Գարահիսարի, Ուրֆայի, Վանի և Մուսա լեռան յոթը գյուղերուն մեջ կը թնդա այս հարցումը ու կը փոթորկե բոլոր հոգիները, արևելքցիի համբերատար ու ճակատագրապաշտ հոգիները:

Մուսա լեռան ստորոտը գտնվող յոթը գյուղերու ավելի քան հինգ հազար հայերը հավաքված են Յողոնոլուքի մեջ՝ Գաբրիել Բագրատյանի ամարանոցին առաջ, ու իրենք իրենց հարց կու տան՝ ինչպե՞ս մեռնիլ:

«- Ինչպե՞ս մեռնի՛լ... - գոչեց պատվելի Արամ Թովմասյան, - ես գիտեմ, թե ինչպես պիտի մեռնիմ: Ո՛չ իբրև անպաշտպան ոչխար մը, ո՛չ թե Տեր Զորի ճամբաներուն վրա, ո՛չ թե տարագրության կայանի աղբյուրներուն մեջ, ո՛չ թե անոթի, ծարավ կամ ժանտաբույր աղբերու մեջ, ո՛չ, ես պիտի մեռնիմ տանս սեմին վրա, զեն ի ձեռին, և ինձի Քրիստոս պիտի օգնե, որուն խոսքը ես կը քարոզեմ: Եվ ինձի հետ պիտի մեռնի կինս և անձինն ալ անոր մեջ...»:

Հայ մարդուն կ՚երկրորդե հայ ըմբոստ կնոջ ձայնը. Մայրիկ Անթառամ ծերունի բժիշկ Ալթունիի կինն է, որ ահա՛ տիրական ոգիով մը կը գոչե.

«Ես կին մըն եմ և հոս կը խոսիմ հանուն բոլոր կիներուն: Շատ իսկ վշտակրած եմ ես: Քանի-քանի՜ անգամներ մեռած է սիրտս: Երկար ժամանակե ի վեր մահը ինձի համար կարևորություն չունի: Երբեք պիտի չսարսիմ, երբ գա: Բայց պիտի չսուզվիմ վհատության մեջ, ճամբուն վրա պիտի չսատկիմ, պիտի չփտիմ, ո՛չ, ո՛չ: Զեմ ուզեր ողջ մնալ տարագրության ոևէ կայանի մեջ, անպատիվ մարդասպաններու և նույնքան անպատիվ անդիմադիր զոհերու մեջտեղ, ո՛չ, ո՛չ: Մենք՝ կիներս, չենք ուզեր այսպես, ո՛չ, մենք ո՛չ: Ու եթե այրերը այնքան վատ են, մենք՝ կիներս, միս միևնակ պիտի պաշտպանենք մեզ և պիտի քաշվինք Մուսա լեռ... Գաբրիել Բագրատյանի հետ»:

Արամ Թովմասյանի և Մայրիկ Անթառամի պատասխանը պատասխանն է բոլորին: Հետևաբար՝ ինքնապաշտպանություն մինչև վերջին մարդը, մինչև արյան վերջին կաթիլը:

Մեռնիլ, սակայն պատվով մեռնիլ:

Հինգ հազար հայեր, կազմակերպված ու քիչ թե շատ զինված, կը բարձրանան Մուսա լեռ, ուր կը կարողանան ինքզինքնին պաշտպանել քառասուն օր՝ ցույց տալով հերոսական դիմադրություն շատ ավելի ուժեղ և լավ զինված թշնամիին դեմ:

Հայերը գիտեն, որ ի վերջո, պետք է պարտվին. գիտեն, որ իրենց փորձածը անկարելին է, կը կռվին, սակայն, մոլեգնորեն, առանց իսկ տրամաբանելու, այն թաքուն հավատքով, որ պետք է արդարությունը գա ու զիրենք փրկե. այն կամքով, որ պետք է հաջողին անկարելին իրականացնել:

Ու ահա՛ անգամ մը ևս կ՚ապացուցվի, որ արյամբ կարելի է հնարավորին սահմանեն անդին անցնիլ, դեպի գերագույն կարելիություններու աշխարհը և ատով ալ՝ դեպի հավիտենականություն, դեպի անմահություն:

Հիրավի, քառասուն օր անհավասար կռիվ վերջ ժողովուրդը կը փրկվի՝ մոտ հինգ հարյուր զոհ տալե վերջ:

Արյան գնով կը կատարվի անիմանալին, կու գա փրկությունը, իսկ հերոսներու գործը կ՚արձանագրվի պատմության մեջ:

Գ.

Վերֆելի վեպը, անշուշտ որ, իրապաշտ վեպ մըն է և, մանավանդ, հոգեբանական մեծ վեպ մը: Վեպը կենդանի գործ մըն է ո՛չ թե նկարագրություններով ու պատկերներով, ո՛չ ալ տիպարներու արտաքինով, այլ տիպարներու հոգիով, ավելի ճիշտ՝ անոնց կյանքով ու գործքով:

Վեպը ապրող ու գործող հոգիներու աշխարհ մըն է:

Վերֆել իրապես մեծ է ճշմարիտ հոգիներ ստեղծելու մեջ: Կասկած պետք չէ ունենալ, թե ան գրական տաղանդին կողքին բացառիկ հնարավորությունը ունի՝ հոգիներ ճանչնալու և հասկնալու: Ֆրանց Վերֆել մեծ հոգեբան մըն է ու իր վեպը կառուցած է կենդանի հոգիներով:

«Մուսա լերան քառասուն օրերը» կ՚ապրի և պիտի ապրի հեղինակին ստեղծած տիպարներով, որոնք հարազատ մարդեր են, հարազատ հայ մարդեր:

Հիրավի, անհավատալի կը թվի, թե օտար գրագետ մը այսքան խոր ու կատարյալ ձևով ճանչցած ու հասկցած է հայուն հոգին, մինչև հետին մանրամասնություններն ու նրբությունները:

Համաշխարհային գրականության մեջ մեծ գրագետներեն քիչերը միայն կրցած են ժողովուրդի մը հոգին ապրեցնել իր բոլոր խորություններով, բարդություններով ու հակասություններով, ինչպես Ֆրանց Վերֆելը հայ ժողովուրդի զանազան տիպարները կ՚ապրեցնե իր վեպին մեջ:

Տոսթոյևսքիին մասին, որ հոգեբանական վեպին մեծագույն վարպետն է, Շտեֆան Ցվայկ կ՚ըսե, թե եթե զայն կարդաս, ինքզինքդ ավելի լավ կը ճանչնաս որպես մարդ: Առանց չափազանցնելու կարելի է ըսել, թե Ֆ. Վերֆելի «Մուսա լերան քառասուն օրերը» կարդալով՝ ինքզինքնիս ավելի լավ կը ճանչնանք իբրև Հայ:

Այս տեսակետեն մեզի՝ գաղութահայ երիտասարդության համար, որ այնքան կը տառապինք հոգեկան անբովանդակությենե՝ հայկական իմաստով, ու այնքան անծանոթ ենք հայուն հոգիին հարազատ գույներուն, Վերֆելի գործը հայտնություն մըն է, որ մեր հոգին կը լեցնե ու ստուգություն մը կու տա անոր: Մեզի համար վեպին մթնոլորտը նաև գյուտն է կորսված ու վերագտնված աշխարհի մը, որ հիմա ահա՛ այնքան մտերիմ, այնքան տաք և կենդանի է մեզի համար:

Դ.

Բայց ովքե՞ր են Ֆրանց Վերֆելի հայերը:

Վեպին տիպարները սովորական մարդեր են, սովորական հայեր: Գրեթե անոնցմե ոչ ոք հերոսի խառնվածք ու-

նի: Գուցե, բացի Զավուշ Նուրհանեն և Սարգիս Կիլիկյանեն: Վեպին մեջ ապրողները նորմալ մարդիկ են, սովորական հայեր, նույնիսկ միջակ մարդիկ, որոնք բնականոն պայմաններու մեջ ազգային կյանքին մեջեն աննշմար պիտի անցնեին: Խաղաղ ժամանակներու մեջ «անուշ ջուրի» ազգային գործիչները, հավանաբար, պիտի կասկածեին իսկ անոնց հայրենասիրության և զոհաբերության ոգիին վրա: Եվ, սակայն, այս հանդարտ, բարեպաշտ, պահպանողական ու համբերատար մարդիկ՝ արտաքնապես զուրկ բացառիկ հոգեկան կարողություններե, ճակատագրի մեկ ծանր պահուն գիտեն և կրնան ուժգնորեն ցեղին ոգին մարմնավորել և արժեցնել զայն առավելագույն չափով:

Անշուշտ, Ֆ. Վերֆել լավ ըրած է, որ վեպին հերոսները զատած է սովորական հայերե. ատով վեպն է, որ ավելի կը շահի:

Շատ ավելի դժվար է գրագետի մը համար սովորական մարդուն մեծ գործեր ընել տալ, քան թե սկիզբեն բացառիկ և արտասովոր անհատականություններ զատել ու անոնց հանձնել մեծ դերեր: Առաջին ձևը շատ ավելի տաղանդ և հոգեբանի հանճար կ՚ենթադրե, իսկ վեպը կը դառնա ավելի կենդանի, ավելի իրական կյանքի գույներով և ատով ալ՝ ավելի արժեքավոր:

Բայց նույն պատճառավ վեպին ազգային արժեքն ալ կը բարձրանա ընթերցողին աչքին, քանի որ այդ մեծ գործերը կատարող հայերը ոչ թե բացառիկ հայեր են, որոնց մեջ կ՚ապրին ցեղին տևական արժեքները ու ի հայտ կուգան հավաքական վտանգի պահուն:

Կը նշանակե, թե օտար Վերֆելը այդպես է ճանչցեր Հայը:

Այս պարագան մեծապես մխիթարական ու հուսադրիչ է մեզի՝ նոր սերունդիս համար, որ երբեմն առիթներ ունինք կասկածելու հայուն բարոյական ուժերուն վրա: Վերֆել շատ լավ է ճանչցեր հայ մարդը: Այո՛, գրեթե միշտ, Հայը կրցած է ընել անհավատալին և անսպասելին:

Հայու մասին ունեցած առաջին տպավորությունը միշտ սխալ է: Միայն, երբ գիտես անոր հոգիին խոր ծալքերը ճանչնալ, այն ատեն կը համոզվես, որ ան ընդունակ է բացառիկ բարոյական թռիչքներու: Արդարև, այս չէ՞, արդյոք, գաղտնիքը հայ ազգի գոյատևման: Դարեր շարունակ կեղեքված, հալածված, կազմալուծված, ստրկացած, կոտորված, ցրված, և սակայն, հակառակ այս բոլորին, ան կ՚ապրի. և կ՚ապրի լրիվ կյանք մը, իմացյալ կյանք մը՝ մտքի, զգացումի, կամեցողության անսպառ ու միշտ նորոգվող ուժերով:

Այո՛, բոլոր հայերը թաքուն կերպով իրենց մեջ կը կրեն իրենց ազգային հավաքականության մեծ արժանիքները, ու Ֆ. Վերֆել իր վեպին մեջ այն է, որ կ՚ապացուցանե աշխարհին:

Ե.

Հետաքրքրական է, թե Վերֆել ինչպե՛ս կը տեսնե Թուրքը:

Անմիջապես պետք է ըսենք, թե վեպին մեջ Թուրքը ներկայացված չէ միայն բացասական ձևով: Եվ ատիկա կարելի ալ չէր և ոչ ալ ուղիղ: Վերֆել Թուրքը չի ներկայացներ պարզապես որպես ոճրագործներու ժողովուրդ, այլ կը տեսնե անոր մեջ նաև գիտակցություն, խիղճ և մարդկայնություն:

Վերֆելի վեպին մեջ ջարդերը կազմակերպողը Թուրք ժողովուրդը չէ, այլ իթթիհատը, այսինքն՝ «եվրոպականացած» Թուրքը, այն Թուրքը, որ Արևմուտքեն սորված է անզիջողություն և անհանդուրժողություն, այն Թուրքը, որ սնած է Եվրոպայի «գիտական» սառն ոգիով, այն Թուրքը, որ կ՚ուզե սիստեմատիկ և մեթոդով գործ տեսնել ու մեկ անգամ ընդ միշտ «մաքրել» հին հաշիվ մը... «ռասիոնել» կերպով: Մեկ խոսքով՝ այն Թուրքն է, որ լքած իր արևելյան հայեցողությունը, լքած իր հավատացյալի խիղճը՝ կը դառնա Արևմուտքի մարդը, շահի ու հաշվի քաղքենի

մարդը՝ առանց, անշուշտ, եվրոպացիի դարավոր մշակույթի գիտակցութենեն և քրիստոնեական խիղճեն բան մը կարենալ առնելու:

Իթթիհատը թուրքն է, որ կ'ուզե եվրոպականացած ազգ դառնալ: Արևմտյան ազգային քաղքենիական գաղափարն է, որ մուտք կը գործե թուրքին գիտակցության մեջ՝ քանդելով այնտեղ ամեն բան, որ հին թուրքը ուներ որպես հավատք ու խիղճ՝ առանց տեղը նոր բան դնել կարենալու:

Իթթիհատական թուրքը այլևս խիղճ չունի, այլ՝ ծրագիր, ազգային-պետական «բարձր շահեր», քաղաքական-բանթուրանական ծրագիրներ, զոր պետք է իրականացնե:

Ու իթթիհատը կը ծրագրե ու կը հրահանգե հայ ժողովուրդի մահը տեսակ մը գերագույն գիտակցությամբ, որ ազգային մեծ իտեալի մը կը ծառայե: Իսկ ջարդերու հեղինակները կը հավատան պատմության մեջ իրենց անմահանալուն:

Զ.

Վեպին գլխավոր հերոսը Գաբրիել Բագրատյանն է: Երիտասարդ հայ մտավորական մը, 35 տարեկան, որ իր կյանքը անցուցած է Ֆրանսա, ամուսնացած է Ֆրանսուհի Ժյուլիեթի հետ և որմե ունի 13-14 տարեկան զավակ մը՝ Ստեփան:

Գաբրիել մեծցած է, ուրեմն, Բարիզի մեջ. հոն ուսում առած է (Sorbonne) և հոն ալ ապրած՝ նվիրվելով հնագիտության և գեղարվեստի պատմության:

Մինչ իր եղբայրը՝ Ավետիս, իրմե 15 տարի ավելի մեծ, կը մնա հայրենիք ու կը զբաղի առևտուրով՝ շարունակելով իրեն ժառանգ մնացած գործը՝ առանց մոռանալու իր եվրոպաբնակ եղբորը՝ Գաբրիելին, ղրկելու իր բաժինը:

Ավետիս տարօրինակ մարդ մըն է. թեև ինքն ալ Եվրոպա տեսած և ուսած, սակայն «բնավ աչք չունի Եվրոպայի: Մինակությունը փնտռող մըն է»: «Իր միակ նախասիրությունը որսն է, և

Ցողոնոլուքեն ճամբա կելլե որսալու մինչև Տավրոսի լեռնաշղթան և Հորան»:

Գաբրիել, սակայն, կը մնա Եվրոպա ու տակավ կը դառնա եվրոպացի, մանավանդ, ֆրանսուհիին հետ ամուսնանալեն վերջ: «Այս ամուսնությունը իրեն հետ կը բերե ա'լ ավելի խորունկ փոփոխություն մը: Ֆրանսուհին միշտ իր կողմը կը տաշե: Հիմա Գաբրիել ֆրանսացի է ավելի քան երբեք: Վերացական իմաստով միայն հայ, եթե կարելի է այսպես ըսել: Սակայն ինքզինքը բոլորովին չի մոռնար և իր գիտական հոդվածներեն մին կամ մյուսը հայ թերթերու կամ հանդեսներու մեջ կը հրատարակե: Իր տասը տարեկան զավակը՝ Ստեփան ևս, հայ ուսանող մը կ'ունենա իբրև ուսուցիչ, որպեսզի իր հայրերուն լեզվին մեջ ալ կրթվի: Սկիզբները Ժյուլիեթ շատ ավելորդ կը նկատե ասիկա, նույնիսկ վտանգավոր: Բայց, որովհետև երիտասարդ Սամուել Ավագյանի անձեն կ'ախորժի, կը դադրեցնե իր ընդդիմությունը»:

Պալքանյան պատերազմին Գ. Բագրատյան՝ որպես թուրք քաղաքացի, կը մասնակցի պատերազմին իբրև կամավոր: «Պոլսո պահեստի սպաներու վարժարանին մեջ աճապարանքով ուսում առնելե վերջ գնաց Պուլայիրի ճակատամարտին մասնակցելու, իբրև սպա»:

Այս բաժանումը իրեններեն մոտ մեկ տարի տևեց: Հետո անմիջապես վերադարձավ Բարիզ: «Բարիզ վերադառնալով ու այլևս ամեն բաներ քաշվելով՝ ինքզինքը իր ներքին ընտանեկան կյանքին տվավ: Խորհող մըն է, վերացական մարդ մը: Իրե՞ն ինչ թուրքերը: Իրե՞ն ինչ հայերը: Ան կը խորհի միայն, թե ինչպե՛ս ընե ֆրանսական քաղաքացիություն ձեռք բերելու համար»:

Ուրեմն՝ Գ. Բագրատյանի համար սկսեր էր անվրդով կյանք մը քաղաքակրթության մեծ կեդրոնին՝ լույսի քաղաքին մեջ: Իսկ Ժյուլիեթ ամեն ճիգ կը թափե, որ մոռցվի ամեն ինչ, որ հայկական է: «Ժյուլիեթ ամեն բանի մեջ իր արյունը պարտավորիչ կ'ըներ: Իր զավկին աչքերը միայն չէր կրնար փոխել»:

Գաբրիել անտարբեր էր միայն այս բոլորին հանդեպ ու հաշտված էր իր «ֆրանսական» կյանքին, և չուներ դիմադրելու ո՛չ մեկ զգացում, ո՛չ իսկ բնազդական:

Սակայն «Ավետիս Բագրատյանի ստիպողական մեկ նամակը ճակատագիրը հեղաշրջեց»:

Երեց եղբայրը, ծանր հիվանդանալով, կը պահանջե, որ Գաբրիել շուտով Պոլիս գա ու ստանձնե գործին ղեկավարությունը և իրենց հարստության հսկողությունը:

Գաբրիել ճամբա կ'ելլե անմիջապես, մանավանդ որ Ժյուլիեթն ալ նվազ նախանձախնդիր չէր իր շահերուն:

Ուրեմն՝ ճամբա կ'ելլեն նաև Ժյուլիեթ, Ստեփան և ուսանող Ավագյան:

Գաբրիել իր եղբայրը Պոլիս չի գտներ: Կ'երթա ետևեն Պեյրութ՝ առանց զայն հոն ալ գտնելու: Ավետիս Բագրատյան մեկներ էր Յողոնոլուք՝ իրենց պապերու տան մեջ մեռնելու:

Երբ Բագրատյան ընտանիքը կը հասնի Պեյրութ, կը պայթի մեծ պատերազմը, որ ստիպե զիրենք մնալ Թուրքիա:

Գ. Բագրատյան, ի վերջո, կը մեկնի Յողոնոլուք՝ իր հայրենիքը՝ այդ խաղաղ ու գեղեցիկ գյուղին մեջ ապրելու համար մինչև պատերազմին վերջանալը:

Է.

Գաբրիել Բագրատյան Յոլոնոլուքի մեջ: Մուսա՛ լերան ստորոտը: Իր ծննդավայրը: Իր մանկության օրրանը: Իր կյանքի առաջին պատկե՛րը:

Օրերը կ'անցնին: Կու գա 1915-ը: Հայկական 1915-ը: Շշուկներ, նախազգացումներ, խորհրդավոր տարաձայնություններ:

Եվ ահա՛ հայկական աշխարհը կը մթագնի, ու մահվան ուրվականը կը ցցվի ամեն հայ շինականի պապենական տան շեմին:

Կը սկսի տեղահանությունը՝ կառավարության ծրագրի համաձայն: Տեղահանություն, որուն հրահանգված նպատակն է ժողովուրդի բնաջնջումը, երեխաներն ալ մեջը ըլլալով:

Թուրք կառավարությունը կը խորհի այս առիթով և այս ձևով արմատական կերպով լուծել Հայկական հարցը:

Գույժը կը հասնի Յողոնոլուք: Գ. Բագրատյան անհանգիստ կը դիմե գյուղին վարդապետ Տեր Հայկազունին: Կը խորհրդակցին ու կ'որոշեն անտեղյակ ժողովուրդին պարզել իրականությունը և ձեռք առնել անհրաժեշտ միջոցները վտանգին դեմ:

Հանդուգն Բագրատյանի միտքը կը սկսի արդեն ծրագրել:

Ինչպե՞ս մեռնիլ: Ինչպե՞ս դիմավորել մահը, որ արագ ու ստույգ քայլերով կը դիմե ահա իրենց գյուղերը:

Արդեն շաբաթներե ի վեր Գաբրիել կը զգա, որ մթնոլորտը ավելի ու ավելի կը թունավորի, կը զգա, որ բան մը կը պատրաստվի այս անպաշտպան ժողովուրդին դեմ:

Կը խորհի ինքնապաշտպանության մասին: Հաճախ կը բարձրանա Մուսա լերան վրա:

Մուսա լե՛ռը: Օ՛, ինչե՛ր կը զարթնուն իր մեջ ամեն մեկ քայլափոխին:

Ի՞նչ կը փնտռե ինք այդտեղ: Ի՞նչ բան: Չի գիտեր:

Ու օր մը, սակայն, երբ այսպես աննպատակ կը թափառեր՝ առանց որևէ մտածումի, իրեն համար տեսակ մը անծանոթ վերացումի մը մեջ, հանկարծ զգացում մը կը զարթնու իր մեջ: Զգացումը, թե իր մեջ նոր մարդ մը սկսած է ծնիլ: Այդ զգացումը ակնթարթի մը մեջ կը լայնա, , կը տարածվի հոգիին մեջ ու կը համակե իր ամբողջ էությունը: Ու կը կազմվի միտքը, թե հիմա է, որ կը հասկնա , թե ո՛վ է ինք:

«Մարդ չի գիտեր, թե ո՛վ է, մինչև որ փորձվի»:

Այս նախադասությունը ահա վեպին ծանրության կեդրոնը կը կազմե: Հոս է, որ Գ. Բագրատյանի մեջ տեղի կ'ունենա հոգեկան մեծ հեղաշրջում մը, որուն վրա կը բարձրանա վերածնած Գ. Բագրատյանը, որ իր նոր հոգիի ուժով կը հաղթե ճակատագիրը:

Ահա, ուրեմն, բարիզաբնակ Գաբրիել Բագրատյան վերջապես կը գտնե, ինչ որ կը փնտռեր Մուսա լերան վրա. կը

գտնե ինքզինքը, կը սկսի ճանչնալ իր մեջ Ավետիս Բագրատյանի թոռը:

Հոգիի խորունկ ընդերքներուն մեջ թաքնված ուժ մը, որ զարդ կը գտնվեր գիտակցության լուսավոր շրջանակեն անդին, ահա կը բարձրանա Բագրատյանի գիտակցության մակերեսը. կը տիրե մյուս բոլոր մտքերուն ու զգացումներուն ու կը դառնա մղիչ ուժը անոր ամբողջ կամքին ու բոլոր ձգտումներուն:

Այս վայրկյանեն սկսյալ՝ Բագրատյան այլևս, ավելի քան երբեք, գիտե իր ընելիքը: Իր մեջի նոր մարդը կ'ուզե անզուսպ կերպով ապրիլ սկսիլ իր այս կյանքը: Կ'ուզե նվիրվիլ իր հայրենակիցներու ճակատագրին ու անոնց հետ բաժնել տառապանքն ու մարտիրոսությունը:

Ոչ մեկ ուժ չի կրնար զինքը քակել իր այս մղումեն: Իր ամբողջ էությունը, իր մարմնի ու հոգիի ամեն մեկ բջիջը կը մղե զինքը դեպի իր նոր ճակատագիրը:

Գ. Բագրատյան այլևս նոր մարդ մըն է: Իսկական հրաշք մըն է, որ կը կատարվի անոր էության մեջ: Հեղաշրջում, որպիսին կը հանդիպինք առասպելներու մեջ:

Կը հիշե՞ք «Թրիսթան և Իզոլտի» հյուսիսային առասպելը, զոր անմահացուցած է Վակները իր հռչակավոր երաժշտական տրամով:

Ասպետ Թրիսթան մեծցած է Իզոլտի հետ միասին, նույն պալատին մեջ:

Իրարմե բաժնվելեն տարիներ հետո, Թրիսթան կու գա՝ զայն հարս տանելու Մարք թագավորին:

Թրիսթան և Իզոլտ իրարու հանդեպ ոչ մեկ համակրական զգացում չունին: Ավելին, ճանապարհին առագաստանավին մեջ իրարու կը թշնամանան այնքան, որ Իզոլտ կը հրամայե իր սպասարկող հավատարիմ կնոջ թույն տալ Թրիսթանին ու իրեն, որպեսզի երկուքն ալ մեռնին: Այդ կինը, սակայն, Պրանկենան, փոխանակ թույնի՛ սրվակին կու տա սիրո՛ սրվակը, ու Թրիսթան ու Իզոլտ կը սիրահարին իրարու հանկարծական, ուժեղ բռնկումով մը: Երկուքին մեջ ալ կը զարթնու անծանոթ ու անիմադրելի ուժ մը,

որ կը մղե դեպի մյուսը: Իզոլտը թեև կ'ամուսնանա թագավորին հետ, սակայն իր սերը դեպի Թրիսթան կը տանի զիրենք դեպի անկում և, ի վերջո, դեպի մահ: Այդ կախարդական հեղուկը, ուրեմն, հանկարծակի կերպով կը փոխե երկուքին ալ ճակատագիրը, կը դարձնե զանոնք նոր մարդեր, որոնք բոցավառ բռնկումի մը մեջ կը սպառեն իրենց ամբողջ հոգին ու կյանքը:

Այս առասպելին պատմածը հաճախ տեղի կ'ունենա նաև իրականության մեջ՝ փոխելով երբեմն ժողովուրդներու կամ պետություններու ճակատագիրը, երբեմն ալ մեծ անհատականություններունը:

Իրական օրինակ մըն ալ հիշեցնելու համար մտաբերենք Մարիա Ստյուարտի ողբերգությունը: Սկոտիացի թագուհին իր ամուսնութենեն (սիրային ամուսնություն մը) հազիվ մեկ տարի հետո կը սիրահարի իր սպարապետին՝ Պոթուելին: Այս անդիմադրելի ուժը զինք կը մղե դեպի սպանությունը իր ամուսնույն: Հետո նույն պատճառավ Մարիա Ստյուարտ կը ստիպվի լքել գահը և իր զավակը: Ան կը կորսցնե ամեն բան ու, ի վերջո, պարտված իր գլուխը կու տա Էլիզաբեթ թագուհիի դահիճին:

Այս երկու մարդկային ողբերգությունները մեզի կը ցուցնեն ուժը հոգեկան զարթնումներու, որոնք բացառիկ պայմաններու մեջ ի հայտ կու գան՝ ծնունդ տալով հոգեկան «հրաշքներու»:

Նույնանման «հրաշք» մըն է նաև Գ. Բագրատյանի հոգեկան հեղաշրջումը, որ անվանեցինք ինքնաճանաչում, ինքնահայտնաբերում:

Թեև տարբեր բովանդակությամբ, սակայն հոգեկան նույն երևույթն է, որ կը կրկնվի Գ. Բագրատյանի մեջ:

Բայց ի՞նչ է այս «հրաշքը» Գաբրիելի պարագային: Ի՞նչն է, որ իր մեջ զարթներ ու հիմնովին փոխեր էր ամբողջ էությունը: Հիմա, կարծես, տարբեր մարդ ըլլար ան:

Ինք, որ ցարդ երբեք չէր կրցած համակրություն մը դրսևորել իր մեջ «արևելքցի» եղբորը հանդեպ, կը տեսներ, թե ինչքան սխալներ էր ու այժմ սկսեր էր զայն հասկնալ ու սիրել:

Գաբրիել փոխվել էր նաև հանդեպ Ժյուլիեթին: Թեև երբեք չէր դադրած կինը սիրելե ու կը հարգեր զայն, թեև Ժյուլիեթի մարմնի ամեն մեկ մասը իրեն ծանոթ էր ու մտերիմ, և, սակայն, հիմա զայն կը զգար իբրև իրմե դուրս, իրմե օտար, անհաղորդ մարմին մը:

Բայց Գաբրիել իր մեջ նոր մարդը տեսավ օր մը, մանավանդ, երբ իր զավկին՝ Ստեփանին, հանդիպեցավ Մուսա լերան վրա:

Այստեղ՝ իր նախահայրերուն հողին վրա, Գաբրիել, կարծես, ավելի ճանչցավ, ավելի լավ հասկցավ զայն:

«Հայր և որդի Արևելքի մե՛ջ: Ասի չի բաղդատվիր եվրոպացի ծնողքին ու իրենց զավակներուն միջև հարևանցի հարաբերության հետ: Հայրը տեսնողը հոս Աստվածը տեսած կ՚ըլլա: Որովհետև հայրը վերջին անդամն է այն անընդհատ նախահայրական շղթային, որ մարդիկը Ադամին հետ և ասով արարչագործության ծագումին հետ կը կապե: Նույնպես զավակը տեսնողը Աստվածը տեսած կ՚ըլլա: Որովհետև զավակը ամենեն վերջին անդամն է, որ մարդիկը կը կապե վերջին դատաստանին, բոլոր իրերու վախճանին և փրկագործության հետ»:

Ահա՛ քանի մը խոր զգացումներ, հիմնական հեղաշրջումներ, որոնք կը դրսևորեն այն «հրաշքը», որ տեղի կ՚ունենա Գաբրիելին ներաշխարհին մեջ:

Ինչպե՞ս եղավ այս հրաշքը: Ուրկե՞ կու գա: Ի՞նչ իմաստ ունի ան:

Արյան ձա՞յնն է, որ կը խոսի այժմ Գաբրիելի մեջ, հողի՞ն ձայնը, խղճի զարթնո՞ւմը, աստվածային հայտնությո՞ւն, ճագատագի՞ր:

Ինչ բառ ալ գործածենք, սակայն, ու ինչպես ալ փորձենք մեկնել, այս «հրաշքին» հոգեբանական հիմքը կը մնա նույնը, և գիտական իմաստով՝ ճշմարիտ, իրական երևույթ մըն է, որ կը բացատրվի ենթագիտակցության տեսությամբ:

Այսօր գիտությունը մեզի կը սորվեցնե, թե մարդ էակը չի ծնիր առանց հոգեկան ժառանգության, այնպես, ինչպես կը կարծեին 19–րդ դարու associationniste հոգեբանները: Այլ ամեն մեկ նորածինին մեջ կան սերմերը բոլոր այն

բնազդներուն, մտածելակերպերուն, գործելակերպերուն, ձգտումներուն ու, նույնիսկ, չիրականացած իղձերուն, զորս անոր նախնիքները սերունդեսերունդ իրենց հոգիներուն մեջ կրեր ու սնուցեր են:

Այս բոլոր՝ ցեղեն ժառանգված հոգեկան տարրերը բարդ ու խորունկ արմատներ կը տարածեն մարդուն հոգիին անծանոթ աշխարհին մեջ, ենթագիտակցության մեջ, ուր և թաքնված կը մնան, առանց որ ենթական իսկ զգա անոնց գոյությունը իրեն մեջ: Անոնք անհատին օրկանական, անգիտակից հիշողությունը կը կազմեն՝ թաղված հոգիին մութ խավերուն մեջ:

Հաճախ, սակայն, այդ թաղված ու թաքուն ուժերը ի հայտ կու գան ուղղակի կամ անուղղակի կերպով: Ամբողջ կյանք մը քեզի հետ կ՚ապրին անոնք մեջդ, ու ոչինչ չես գիտեր անոնց գոյության մասին. հանկարծ, սակայն, պահը կու գա, երբ անոնք կը զարթնուն ու մուտք կը գործեն գիտակցությանդ մեջ: Կը պատահի հրաշքը: Մեջդ ամեն բան գլխիվայր կը շրջի, և անսանձելի ուժ մը քեզ կը տանի դեպի նոր ու ավելի ճշմարիտ իրականացումը ինքզինքիդ:

Այդ ուժը այնքան անսանձելի կ՚ըլլա, ինչքան այդ տարրերը ավելի հին սերունդներեն կու գան: Այնքան ավելի զորավոր պոռթկում մը կ՚ունենան, ինչքան ավելի խոր թաղված կը գտնվեին մեջդ: Ու այնքան ավելի տարերային ու փոթորկող կ՚ըլլան, ինչքան անոնցմե փախչիլ փորձեր էիր կյանքիդ ընթացքին:

Գաբրիել Բագրատյան ինքն ալ իր մեջ կը կրեր այդ ժառանգությունը: Իր աներևույթ նախնիքները իրենց մտածումներով ու զգացումներով, իրենց իղձերով ու մղումներով անձայն կ՚ապրեին իր ենթագիտակցության մեջ: Ան իր ամբողջ կյանքի տևողության 25 տարիներ Ֆրանսայի մեջ հեռացեր էր այդ բոլորեն ու զրկեր էր ինքզինքը այդ թաքուն ուժերուն ասպարեզ տալու հնարավորութենեն: Ավելի ու ավելի խոր թաղեր էր զանոնք՝ պահ մը կարծելով, որ ինք այլևս պատրաստ է կատարյալ, ի ծնե ֆրանսացիի մը պես ըլլալու:

Եվ սակայն, ճակատագրի մեկ անսպասելի դարձվածքով ան կ'իյնա Մուսա լեռան ստորոտը՝ իր նախնիքներուն հայրենիքը, ուր պետք է ենթարկվի իր արենակիցներու բախտին, հայ ժողովուրդի «Ժանիքավոր ճակատագրին առաջ՝ ճակատ առ ճակատ», ինչպես պիտի ըսեր Ավ. Ահարոնյան:

Ու ահա այս զորավոր և անսպասելի ցնցումը մոգական հարվածի մը պես իր մեջ կը զարթեցնե իր նախնիքները:

Գ. Բագրատյանի մեջ կ'արթննան իր նախահայրերը ու կը գործեն իր միջոցավ:

«Թրիսթան և Իզոլտի» առասպելին մեջ հոգեկան զարթնում պատճառողը դյուրթական ըմպելին է, Գաբրիել Բագրատյանի մեջ այդ մոգական ուժը հայրենի աշխարհի բնությունն է և, մանավանդ, ազգային-հավաքական վտանգի գերագույն մեկ պահը: Կը զարթնու Բագրատյան ընտանիքի վերջին շառավիղը: Գաբրիելի մեջ կը ժայթքին բոլոր նախնիքներուն կուտակած ուժերը՝ լափող ու այրող բոցի մը նման:

Ը.

Նոր Գաբրիել Բագրատյանը այլևս համակ ծրագիր է, համակ կամք է ու անտեղիտալի ուժ:

Տեր Հայկազունին հետ կը կազմակերպեն ամեն բան: Կը գտնե նաև անհրաժեշտ մարդիկը, որոնք մեծապես օգտակար կ'ըլլան բոլոր աշխատանքներուն և կռիվներուն: Մուսա լեռան ստորոտի յոթը գյուղերու ժողովուրդը՝ շուրջ հինգ հազար հայեր, կ'որոշեն ու կբարձրանան լեռ՝ թուրքին չհանձնվելու, այլ դիմադրավելու անխախտ կամքով:

Տեր Հայկազունը՝ այս գյուղացի վարդապետը, բարձրագույն հեղինակություն է, բարոյական ու դրական ղեկավարը բոլորին, իսկ Գաբրիել Բագրատյան՝ զինվորական ուժերու ընդհանուր պետը, որ պիտի կազմակերպե ու ղեկավարե ինքնապաշտպանությունը:

Մեր ժողովուրդի հոգեբանության տեսակետեն հետաքրքրական է այն պարագան, որ թեև Գաբրիել Բագրատյանի ձեռքն է ամբողջ ուժը, և ան է ընդհանուր հրամանատարը, սակայն ժողովուրդին պետը կը մնա Տեր Հայկազունն: Իսկ Բագրատյան ենթակա է ոչ միայն Տեր Հայկազունին, այլ նաև ժողովուրդի և կռվողներու ներկայացուցիչներե կազմված խորհուրդին, ուր կ'առնվին բոլոր կարևոր որոշումները:

Ուրեմն, նույնիսկ այսպիսի բացառիկ պահու մը, երբ, ավելի քան երբեք, խոսքի ատենը չէ ու, ավելի քան երբեք, մեկ կամքի առաջնորդության անհրաժեշտությունը կա, հայ ժողովուրդը կը մերժե ինքզինքը վստահիլ մեկ մարդու և կ'ուզե մաս առնել այն բոլոր որոշումներուն, որոնցմով պիտի առաջնորդվի իր կյանքը: Այստեղ ալ ահա կը հանդիպինք հայուն անհատապաշտության: Ու Բագրատյան ավելի լավ կը հաջողի այս ձևով, քան պիտի հաջողեր այլ կերպ: Որովհետև մենատիրություն չհաստատելով՝ ավելի կը շահի ժողովուրդի վստահությունը. ազատորեն, կամովին ավելի հլու, հպատակ կը դառնա Հայը: Ամեն ատեն, երբ Մուսա լեռան վրա դժգոհություն մը ծայր կու տա՝ նախանձողներու և էնթրիկաններու կողմե հրահրված, և մարդիկ կը սկսին անվստահություն ցույց տալ և դժգոհիլ այս «ֆրենկեն», Գաբրիել Բագրատյան և Տեր Հայկազուն կը հիշեցնեն այդ մարդոց, որ իրենք ազատ են՝ իրենց ուզած ճամբան բռնելու ու հեռանալու իրենցմե:

Եվ այս ձևի վերաբերմունքի զարնվելով՝ այդ դժգոհները կը դառնան կրկին հնազանդ և կարգապահ, կը հպատակին պետերուն և օրենքներուն իրենց ազատ կամքով:

Տեր Հայկազուն հայ գյուղացի հոգևորականի զարմանալի տիպար մըն է: Մտավոր բացառիկ կարողություններ չունի ան, արտաքուստ՝ սովորական հավատացող մը: Խիստ արտաքինով, եռանդուն, սակայն հանդարտ ու քիչ մըն ալ ճակատագրապաշտ: Առաջին ակնարկին բնավ կարելի չէ հավատալ, որ այս խոնարհ ու օրինապահ հովիվը կրնա դառնալ այն ըմբոստը, որ ժողովուրդին գլուխը ան-

ցած՝ կը կռվի պետության դեմ: Տեր Հայկազուն իր բոլոր իսկական զգացումները ու մտքերը պահելով հանդերձ՝ արևելքցիի հատուկ խորամանկությունը ունի ինքզինքը ծածկելու հարկ եղած ատենը: Եվ սակայն այս մարդը, որ գիտե լռել, հանդուրժել ամեն ինչի, որ համբերության մեջ կը տեսնե գերագույն իմաստությունը, այժմ, երբ բաժակը լեցված ու սկսած է հորդիլ, կը փոխե իր կերպարանքը՝ կը դառնա վճռական ու հանդուգն: Ան, ավելի քան որևէ մեկը, գիտե իր ընելիքը, անսահման փորձառությունը ունի հայկական գործերուն, կը ճանչնա իր շրջապատը, ամբողջ էությամբ նվիրված է իր ժողովուրդին ու նույնացած անոր ճակատագրին հետ:

Ցրանց Վերֆելի վեպին ամենեն լրիվ և կատարյալ հայը Տեր Հայկազունն է:

Ոչ միայն որպես հայ, այլ որպես մարդ ալ, ան ամենեն կատարյալ, ամենեն ինքն իր մեջ ներդաշնակ տիպարն է: Իր մեջ ոչինչ կա անբնական, արտասովոր կամ հերոսական:

Իր պայծառատեսությամբ, իր զգաստությամբ, իր չափավոր ոգևորությամբ և իր կամքի գործերով ան կը հանդիսանա մեզի որպես հավասարակշիռ մարդու մը տիպարը:

Թեև արտաքուստ պարզ, սակայն իրականին մեջ Տեր Հայկազուն վեպին ամենեն բարդ տիպարն է: Ամենեն բարդ հոգին ունի և սակայն, միաժամանակ, ամենեն միակտուրն է ու ամենեն ներդաշնակը: Իր բարդության մեջ ամենեն ավելի միավորությունը ունի: Դժվար է Տեր Հայկազունին հոգին վերլուծելը:

Ան հարազատ հայկական տիպար մըն է, որուն նմանը կարելի չէ գտնել ուրիշ ժողովուրդի մը մեջ: Տեր Հայկազուն արդյունքն է հայ ժողովուրդի դարավոր փորձառության, դարավոր զրկանքներուն ու հալածանքներուն, դարավոր խուլ ինքնապաշտպանության պայքարներուն: Ան միաժամանակ հոգևոր հավատացյալ հովիվ է, ժողովուրդի նրբամիտ ու խորամանկ ղեկավար և անվախ հայդուկ:

Տեր Հայկազուն կը ճանչնա իր ժողովուրդին թերությունները և հատկությունները մինչև վերջին մանրամասնությունները և գիտե պարսավել, նույնիսկ խիստ պատժել առաջինները ու հրահրել և քաջալերել հատկությունները:

Մուսա լերան վրա տեղավորման առիթով վեպին հեղինակը ի հայտ կը բերե նաև հայուն ավանդապաշտությունը: Ավանդապաշտ է, մանավանդ, Տեր Հայկազունը: Միասին վեր կը բերե եկեղեցվո բոլոր սուրբ գիրքերը և առարկաները՝ վերը եկեղեցի շինելու համար: Միասին կ'առնե ափ մը հող գերեզմանեն, որպեսզի վերը մեռնողները նույն հողին մեջ թաղվին: Նույնպես, որպեսզի ժողովուրդին բնականոն կյանքի զգացումը ներշնչե, կը կարգադրե, որ առաջին իսկ օրն ամեն ընտանիք հերիսա պատրաստե:

Ահա՛ թե ինչպես կը նկարագրե Վերֆել հերիսայի պատրաստությունը:

«Հերիսա կը կոչվի Հայոց մեկ ազգային կերակուրը՝ անհիշատակ ժամանակներե ի վեր: Սերունդներու հիշողութենե ծլած-ծաղկած ամեն հին բանի պես՝ այս կերակուրը և իր պատրաստությունն ալ կրոնական և հանդիսական շունչով մը պարուրված է: Այս իսկ էր պատճառը, որ հերիսատոնի մը պարզ հիշատակությունը անգամ վստահություն տարածեց հուսահատ ժողովուրդին մեջ: Արդ, այս կերակուրը, մարդկային խոհանոցին բոլոր մյուս փոփոխություններուն նման, զանազան պարզ մասերե կը բաղկանա՝ գառնուկի մսի կտորներ, ճարպ, հոշված կոճիկներ և կորկոտ, ամենքը իրար խառնված: Բայց կարևորը նյութը չէր, այլ այն, թե հերիսան տոնական կերակուրը մըն էր, որ կը պատրաստվեր կալի հունձքի շաբաթներուն, սեպտեմբերեն մինչև Վարդավառ... Հերիսային հաճույքը ո՛չ միայն ուտելուն մեջ էր, այլ և ավելի, երկար տևող պատրաստության արարողության մեջ: Ամբողջ գիշեր թոնիրին մեջ, չափավոր կրակի մը վրա պիտի բռնվեր և եփ պիտի գար կամաց-կամաց: Առավոտուն ջուրը արդեն շոգիացած էր պտուկին մեջ, և կը մնար միայն ամուր մը իրար եկած զանգված մը: Երիտասարդության հաճույքը, սակայն, հիմա կը սկսեր: Տունին տղաքը և աղջնակները սովորական ժամեն շատ առաջ կ'արթննան, կ'ելլեն՝ հերիսա զարնելու թնդոցով, որ տարին տասներկու ամիս հոն, անկյունը պահված է. զանգվածը պետք է շատ աղվոր ծեծվի, ինչպես ուրիշ երկիրներու մեջ կ'ըլլա

չորցված ձողաձուկին համար: Այս ամենը փոքր և տմոյն մասն էր միայն ավանդական և համբավյալ զվարճություններուն, որոնք կապ ունին հերիսայի տոնին հետ»:

Տեր Հայկազուն, որ «գործնական մարդ և միանգամայն հոգեբան» մըն էր, հերիսայի միջոցավ ժողովուրդին տվավ այն զգացումը, թե «մեր տունն ենք»:

Երբ խնդիր դրվեցավ, թե ինչպե՞ս պիտի բնակի ժողովուրդը լեռան վրա, Գ. Բագրատյան, որ ավելի վերացական մարդ էր, կ՚ուզեր ժողովուրդը զանազան մասերու բաժնել ու ըստ այնմ տեղավորել զանոնք, որպեսզի կյանքը դառնա ավելի «սիստեմաթիք»: Տեր Հայկազուն, սակայն, կը հակառակի և կ՚որոշե, որ ամեն ընտանիք տեղավորվի այնպես, ինչպես վարն էր՝ առանց իրարմե բաժնվելու, հարգելով ամեն մեկու նախասիրությունները: Տեր Հայկազուն գիտե, որ հայը անհատապաշտ է, ու պետք է հարգել զայն: Թեև ծայրահեղություններ ալ տեղի կ՚ունենան, որոնք կը ցուցնեն ոչ միայն հայուն անհատապաշտությունը, այլ նաև եսասիրությունը ու հավաքական շահերուն համար անհատական զոհողություն ընելու անընդունակությունը: Մուխթար Քիպուսյանը, օրինակ, որ ամենեն հարուստն է և ամենաշատ ոչխարներ ունեցողը, մինչև վերջ կը հակառակի և դժգոհ կը մնա հավաքական տնտեսության դեմ, որ, անշուշտ, միակ հարմար և հնարավոր ձևն էր տվյալ պայմաններուն մեջ:

Կյանքը կը սկսի Մուսա լեռան վրա ու կը տևե քառասուն օր: Այդ տաժանելի օրերու ընթացքին հայ մարտիկները քանի մը անգամ կռիվներ կը մղեն, որոնց ընթացքին ի հայտ կու գան հերոսական բազմաթիվ գործեր: Կարելի է ըսել, թե ամեն մեկը կ՚ընե անսպասելին և անիմանալին:

Զմայլելի հոգիի և ամուր անհատականության տեր հայ երիտասարդներ են Ավագյան և Թովմասյան: Ժիր, խելացի ու ժողովուրդին նվիրված՝ միշտ պատրաստ առանց գանգատի և հպարտությամբ որևէ ծանր ու վտանգավոր գործ ստանձնելու:

Հայ աղջկա բացառիկ և, միաժամանակ, այնքան հայկական, ադամանդյա տիպար մըն է Զեյթունցի Իսկուհին:

Բայց կարելի էր չհիանալ ծերունի բժիշկ Պետրոս Ալթունեի վրա, որ իր ծանր պարտականության վրա է մինչև վերջին պահը իր կնոջ՝ Մայրիկ Անթառամի հետ:

Անշուշտ, սակայն, ամենեն քաջը ու հերոսի խառնվածքովը Զավուշ Նուրհանն է, որ բոլոր կռիվներուն մեջ առաջին կռվողն է, և որուն երբեք թշնամին գնդակը չի դպչիր: Ան միշտ ուրախ է, երբեք հոգնած ու պատրաստ՝ առյուծի մը պես նետվելու թշնամիին դեմ: Այդ պատճառավ Մուսա լեռան խորհուրդը պաշտոնապես «Էլլեոն» տիտղոսը կու տա իրեն, այսինքն՝ «առյուծը»:

Պակաս չեն, սակայն, բացասական տիպարները: Սխալ պիտի ըլլար, եթե Վերգել միայն հայուն լավ կողմերը տար: Մեծ արվեստագետ մը երբեք չի կրնար մարդկային բնության մեջ միայն հրեշտակներ տեսնել:

Հայուն կամ հայոց մեջ, անշուշտ որ, բացասական գիծեր կան. բնավորության հիվանդագին մղումներ, որոնք չէին կրնար ի հայտ չգալ Վերգելի վեպին մեջ, քանի որ հեղինակին նպատակն է հայ ժողովուրդը ներկայացնել այնպես, ինչպես ան կա իրականության մեջ:

Թերությունները պահելով, ծածկելով երբեք չեն կորսվիր: Այնպես որ, նաև բարոյական տեսակետեն ավելի դաստիարակչական է զանոնք լույս աշխարհ բերել ու մերկացնել արևուն դեմ: Այսպեսով ավելի շուտ կրնանք ազատիլ անոնցմե: Կամ, ավելի ճիշտ և անկեղծ խոսելու համար ըսենք, թե լավ ճանչնալով մեր թերությունները, կրնանք անոնց դրական գործածություն մը տալ: Որովհետև դժվար թե կարելի ըլլա արմատացած թերությենե մը ազատիլ: Անոր ուղղությունը և գործածությունը, սակայն, կարելի է փոխել: Բազմաթիվ բնավորության և բնազդային բացասական ըսված գծեր կամ մղումներ կան, որոնց կարելի է դրական գործածություն տալ:

Ահա թե ինչո՞ւ բնավ պետք չէ վախնանք, որ Վերգել այսքան փայլուն հատկություններու և մեծ քաջագործու-

թյուններու մթնոլորտին մեջ մուծած է այնքան աղտոտ և զզվելի արարքներ ու այնքան հոգեկան անկումներ:

Վեպին բացասական տիպարներեն ամենեն հետաքրքրականները, մանավանդ, վարժապետ Հրանդ Ոսկանյանն է և Սարգիս Կիլիկյանը: Հրանդ Ոսկանյան մեծխոսիկ, պոռոտախոս և ինքզինքին հիացումը ունեցող կիսամտավորական մըն է: Միաժամանակ նախանձող ու վախկոտ հոգի մը, որուն զենքերն են բամբասանքը և էնթրիկը: Չի կրնար հանդուրժել, որ ուրիշներ գործի առաջին գծին վրա ըլլան, ու ինք մնա աննշմար: Մանավանդ, սրտին կը դնե, երբ Ֆրանսուհի Ժյուլիեթի համար ալ կը մնա աննշմար: Թեև դրական գործ կատարելու անընդունակ, սակայն ժողովներու մեջ գիտե քննադատել, մտքերը պղտորել և ամբոխավարական և նենգ ձևերով փորձել ցեխ նետել ուրիշներուն վրա: Ամեն մեկ դժվարություն կամ դժբախտություն, որոնք այդ պայմաններուն մեջ, անշուշտ, անխուսափելի են, Ոսկանյան կը փորձե գործածել օրվան ղեկավարներուն դեմ՝ զանոնք հանցավոր հանելու միտումով:

Ոսկանյան այն հայն է, որ կ'ուզե եղածը քանդել՝ առանց տեղը բան մը շինել գիտնալու:

Ու զարհուրելին այն է, որ այն նենգ Ոսկանյանը կը դավե Գ. Բագրատյանի և Տեր Հայկազունի դեմ, որոնք ամբողջ հոգիով ու մարմնով նվիրված են ժողովուրդի կյանքին կազմակերպության և պաշտպանության:

Օրինակ, երբ երեսուներորդ օրը մուխտարներու անփութության պատճառավ մնացած ոչխարները թուրքերուն ձեռքը կ'իյնան, ու ժողովուրդը կը մնա առանց մսի, տեր Հայկազուն ժողովի կը հրավիրե խորհուրդը՝ պարսավելով մուխտարներու արարքը, անոնց անհոգությունը և անփութությունը. առիթը օգտագործելով՝ Ոսկանյան վիճաբանության այնպիսի ընթացք մը կը պարտադրե, որ խորհուրդին մեջ կը սկսի դժգոհություն մը ծայր տալ Բագրատյանի հանդեպ:

Ձայներ կը լսվին, թե անոթի պիտի մեռնին այժմ, ու ատոր պատճառը Բագրատյանն է, որ ինքնապաշտպանությունը ծրագրեց: Հարուստ մուխտարներեն ոմանք կը սկսին զղջալ, որ թուրքին հետ լեզու չգտան, ու այսպեսով կառավարության վրեժը հրավիրեցին իրենց վրա:

Չեն պակսիր նաև այնպիսիններ, որոնք, դրդված Ոսկանյանե, դիտել կու տան բացառիկ դյուրությունները, որոնց մեջ կ'ապրի Ֆրանսուհին՝ Բագրատյանի կինը: Ոսկանյան և բամբասող կիներ կը տարածեն շշուկը, որ, իբր թե, Ժյուլիեթի բնակած տաղավարին մեջ մեծ քանակությամբ ընտիր ուտեստեղեններ կան և այլն:

Ժողովին մեջ, բացի Ոսկանյանի զզվելի կեցվածքեն, ի հայտ կու գա նաև հայուն դյուրահավատությունը և հակումը՝ գռեհիկ կասկածներ սնուցանելու իր մեջ:

Տեր Հայկազունն է սակայն, որ դրությունը փրկել գիտե. ան առյուծի պես կը նետվի այդ վիճաբանության մեջ և կտրուկ ու խիստ քանի մը խոսքե հետո կը վերահաստատե կարգապահությունը՝ խորհուրդեն ընդմիշտ վտարելով էնթրիկան վարժապետը՝ Հրանդ Ոսկանյանը:

Այս վտարումեն հետո Ոսկանյան այլևս վճռական թշնամին է և՛ Տեր Հայկազունին, և՛ Բագրատյանին: Այս նպատակով կը մոտենա մյուս անկարգապահին՝ Սարգիս Կիլիկյանին, որուն հետ կը կազմակերպե այն խայտառակ և տմարդի ելույթը, որուն, կարծես, մարդ դժվար թե կրնա հավատալ:

Սարգիս Կիլիկյան շատ ավելի բարդ և հետաքրքրական տիպար մըն է, ու կ'արժե անոր վրա քիչ մը ավելի կանգ առնել: Եվ այնքան հետաքրքրական է, ինչքան անոր բացասական կողմերը ավելի հայկական ձև ունին, քան Ոսկանյանի պարագային, որ ավելի մարդկային բացասական տիպ մըն է:

Ս. Կիլիկյան իր անցյալով որբ մըն է, որուն աչքերուն առջև հոշոտված են իր ծնողքը, և ինքը թուրքին յաթաղանեն ազատված է շնորհիվ այն բանին, որ սպանված մայրը իր վրա ինկած է, ու վախեն անոր փեշերուն տակ պահված մնացած է մինչև վտանգին հեռանալը:

Դուրս գալով մորը դիակին տակեն՝ փախած է գյուղեն և երկար թափառելով՝ անցած է Կովկաս, ուր ապրած է իր պատանեկությունը ու երիտասարդությունը՝ առանց իրեն համար դիրք մը շինելու: Միշտ մնացած է անընկերային ու անհրապույր մարդ մը, միշտ դժգոհ, թափառաշրջիկի հոգեբանությամբ: Կովկասի մեջ առիթներ ունեցած է բանտն ալ պառկելու:

Պատերազմը սկսելով՝ զինք տարած են զինվոր, սակայն ինք փախած ու եկած է հոս՝ «Մուսա լեռ» թաքնվելու:

Ահա այս դասալիք Սարգիս Կիլիկյանն է, որ ուրիշ դասալիքներու հետ միասին կը մտնե Մուսա լերան համայնքին մեջ՝ կռվելու համար Թուրքին դեմ: Նշանակալից է, որ Կիլիկյան առաջին օրեն աչքի կը զարնե կարգ մը քաջագործություններով: Նույնիսկ թրքական մեծ հարձակումի մը ընթացքին իր հնարամտությամբ ու քաջությամբ կռվի ճակատներեն մեկը կը փրկե՝ աննախընթաց կորուստ պատճառելով թշնամիին: Ասոր վրա Բագրատյան զինքը հրամանատար կը կարգե ու իրեն կը հանձնե ճակատներեն մին:

Կիլիկյանի հոգին, սակայն, մութ և անհասկանալի կողմեր ունի՝ ընդունակ ըլլալով անակնկալ վարվելակերպերու: Ե՛վ դրական, և՛ բացասական իմաստով: Ամեն կողմե վեր, սակայն, Կիլիկյան անկարգապահ մըն է, այսինքն՝ իր գործերուն մեջ քմահաճույքով առաջնորդվող մը: Որովհետև ահա այս առաջին քաջագործության կը հաջորդե անակնկալ մը. հայտնապես, դիտումնավոր կերպով չի պաշտպաներ իրեն հանձնված ճակատը՝ արգիլելով զինվորները կռվելե: Թեև այս արարքը ճակատագրական չ՚ըլլար ընդհանուր պաշտպանության համար, որովհետև երկրորդ գիծը կը կռվի ու կը փրկե դրությունը, սակայն բազմաթիվ հայ կռվողներու կյանքը կ՚արժե:

Սարգիս Կիլիկյան ինչո՞ւ կ՚ընե այս բանը: Հայտնի չէ և ոչ ալ բացատրելի: Ինքն ալ չի գիտեր:

Գ. Բագրատյան, սակայն, չի կրնար անպատիժ թողուլ զայն: Պատիժը մեղմ է՝ քանի մը օրվան շղթայակապ բանտարկություն:

Այս բանտարկությենեն ազատելեն հետո, սակայն, այլևս կրնաք երևակայել Կիլիկյանի ոխը հանդեպ Բագրատյանին և բոլորին: Փոխանակ ընդունելու իր սխալը ու իր մեղքը բանտարկությունով քաված ըլլալու գիտակցությունը ունենալու, և կամ Թուրքին դեմ կռվելով ու զոհվելով՝ ապացուցաներ իր հայրենասիրությունը, Կիլիկյան, ընդհակառակը, այժմ դարձած է անիշխանական մը, որ պատրաստ է ամեն բան ընելու՝ առանց որևէ խղճի խայթի:

Ս. Կիլիկյան անկարգապահ և անկազմակերպ հոգի ունեցող հայու տիպարն է, որ կրնա հավասարապես ըլլալ և՛ հերոս, և՛ դավաճան:

Խառնվածքով կարող էր հերոս դառնալ, սակայն, իր կյանքի պայմաններու բերումով, հոգիին մեջ արմատ նետած ու տարածված են թունավոր բույսերը հուսալքության, դառնության, նախանձի, մարդատեցության և անիշխանության:

Ս. Կիլիկյան անճակատագիր հայն է, որ, հակառակ իր բնածին ընդունակություններուն և ցեղային բարի ուժերուն, չի գիտեր զանոնք իր կյանքին մեջ բարձր նպատակի մը համար կազմակերպել ու անոր ծառայեցնել:

Ս. Կիլիկյան ուրեմն, որ պահ մը հերոս էր, այժմ ահա, Մուսա լերան վրա կը դառնա հավաքական կյանքեն վտարված մը:

Ու այստեղ Հրանդ Ոսկանյան իր դավադիր ձեռքը կուտա Ս. Կիլիկյանին. անոնք այլևս միայն չարիք կրնան հասցնել այս հուսահատ ու մահվան մոտեցող ժողովուրդին:

Դեպք մը ևս կու գա զենք դառնալու չարագործությունների ձեռքը:

Մուսա լերան վրա, սկիզբեն ի վեր, կը գտնվեր հույն մը՝ Մարիս, որ բարեկամացած էր Բագրատյան ընտանիքին և, մանավանդ, Ժյուլիեթին:

Այդ տաժանելի և հուսահատ օրերուն, երբ Գաբրիել այնքան զբաղված էր ու հաճախ, օրերով չէր կրնար գալ իր կինը տեսնելու, Ժյուլիեթ իր ժամանակը կ՚անցներ Մարի-

սի հետ: Ժյուլիեթ, անշուշտ, իսկական Ֆրանսուհի մըն էր, և բնական է, որ այս օտարին հանդեպ իր վարվելակերպով ու վերաբերումով բնավ չէր հասկցվեր իր շուրջիններեն: Թեև Ժյուլիեթ երբեք անհավատարիմ կին մը չէր եղած ու իր ամուսինը կը սիրեր անկեղծ ու խոր սերով մը: Եվ այդ էր պատճառը, որ ինք եկավ Մուսա լեռ՝ իր ամուսնույն կողքին մեռնելու, հակառակ որ, իբրև Ֆրանսուհի, հնարավորություն ուներ փրկվելու:

Ժողովուրդը, սակայն, այս բոլորը կ՚անտեսե. խորհրդավոր, կասկածոտ ու խորամանկ աչքեր կը հետևին Ժյուլիեթին ու Մարիսին: Ծայր կու տա բամբասանքը: Հայ կիներն ու պառավները, ի տես այս «ֆրանսուհիին» կյանքին, կը գայթակղին, ու դժգոհության ալիքը ավելի ու ավելի կը տարածվի: Կը սկսին խոսիլ «Բագրատյան ընտանիքի խայտառակության» մասին: Շատեր ոտք չեն դներ այլևս անոնց տաղավարներուն կողմը՝ զայն նկատելով պիղծ վայր: Երբ Ժյուլիեթ կ՚անցնի, ամեն մարդ խույս կու տա ու չի նայիր անոր: Եվ հայերը չեն հասկնար, թե ինչպե՛ս Գաբրիել կը հանդուրժե այս բոլորը ու չի սպաններ իր կինը:

Նույնիսկ Տեր Հայկազուն խորքին մեջ այսպես կը զգա:

Այս ժողովուրդը, ուրեմն, որ գրեթե անոթի է և հուսահատ, որուն կյանքին օրերը մատներու վրա կարելի է համրել, դեռ սիրտ ունի և հոգեկան կորով՝ պարսավելու ու ցեխ նետելու ընտանիքի մը հասցեին, որմե միայն բարեգործություն տեսած է և այժմ ալ անոր շնորհիվ է, որ դեռ ազատ կ՚ապրի իր պատվով:

Բայց այս երևույթը իր մյուս երեսն ալ ունի: Կը ցուցնե մեզի հայ ժողովուրդի նամուսի և ընտանեկան սրբության ամուր զգացումը, որ իր հետ կը ծնի ու կը դիմանա մինչև մահվան վերջին վայրկյանը:

Ուրեմն թշվառության ու հուսահատության ամենեն ծանր պահուն իսկ հայը չի գիտեր հանդուրժել ու զիջիլ, երբ խնդիրը կը վերաբերի ընտանեկան պատվի զգացումին:

Ու երբ վեպը կը կարդաս ու այսպե՛ս կը ճանչնաս հայ ժողովուրդը, չես գիտեր, թե արդահատի՞ս այս գավառացի,

թշվառ ժողովուրդի նեղմիտ ու մոլեռանդ մտայնության, թե՞, ընդհակառակը, զմայլիս անոր բարոյական, կրանիթյա ընբռնումներուն վրա, որոնք դիմացեր են դարեր շարունակ՝ անաղարտ պահելով հայուն «պատվի» համբավը:

Ոսկանյան ու Կիլիկյան, ուրեմն, այս գենքն ալ կը գործածեն՝ շահագործելով բարեմիտ ժողովուրդին զգացումները: Ու կը սկսին դավել: Ոսկանյան անհայտ դավադիրն է՝ միշտ ծածուկ և աներևույթ, մինչ Կիլիկյան՝ հայտնի դավադիրը, որ իր շուրջ հավաքած է քանի մը արկածախնդիրներ ևս: Առաջին արարքնին է հարձակիլ Ժյուլիեթի վրանին վրա՝ ուտելիք գտնելու համար: Իսկ երկրորդ արարքը, որ զարհուրելի է հղացումով ու գործադրությունով, տեղի կ՚ունենա նույն օրը: Քառասուներորդ օրն է, այսինքն՝ բացարձակ սովի երրորդ օրը: Հիրավի, այլևս ժողովուրդը ուտելիք չունի, և թշնամին պաշարած է լեռը, թեև չի համարձակիր կրկին հարձակում գործել: Հուսահատությունը հասած է գագաթնակետին: Կը մնա մեռնիլ՝ կա՛մ անձնատուր ըլլալով թշնամիին, կա՛մ անոթութենե: Ոմանք կը մտածեն անձնասպանություն գործել՝ նետվելով ժայռեն վար: Կյանքը այլևս կը սկսի տեղի տալ, ու ամենքը արդեն կը զգան, թե ինչպես աներևույթ մահը կոկորդին ավելի ու ավելի կը սեղմե: Ահա այդ օրն է, որ Տեր Հայկազուն կ՚որոշե հանդիսավոր պատարագ մատուցանել: Վերջի՛ն պատարագը:

Երբ արարողությունը դեռ չէ ավարտված, հանկարծ Կիլիկյան ու իր խումբը կը հարձակին խորանի վրա ու կրակի կու տան: Կը բռնեն Տեր Հայկազունը, կը կապեն սյունին՝ խայտառակ հայհոյանքներ տեղալով անոր երեսին: Ժողովուրդը սարսափահար կը ցրվի շվարած: Տակնուվրայություն մըն է կը սկսի, ժխոր մը, ուր ամենքը կը ճչան, կ՚ոռնան, ու ոչ ոք չի հասկնար, թե ինչ կը պատահի:

Ժողովուրդը, արդեն անոթութենե անասնացած և մահվան սարսափեն հոգեպես կազմալուծված, ի տես այդ անակնկալ հարվածին, կարծես, կը խելագարի՝ կորսնցնելով իր հավասարակշռությունը ու ըրածին գիտակցությունը:

Կը հասնի Գ. Բագրատյան, ատրճանակը ձեռքին տեղ կը բանա ժխորին մեջեն ու կը վազե դեպի խորան: Կը սկսի կռիվ: Մինչ այդ, սակայն, լուրը կ'երթա կռվողներուն, ու Ավագյան զինյալ ուժերով կը հասնի եկեղեցվո հրապարակը, կը փրկե Բագրատյանը ու շղթայակապ կ'ընե հանցավորները՝ մեջը ըլլալով անոնց ղեկավարը՝ Ս. Կիլիկյան:

Ու այս անճակատագիր հայը՝ Սարգիս Կիլիկյան, իր կյանքը կը վերջացնե դավաճանի մը մահով: Բագրատյան կը գնդակահարե զայն:

Թ.

Վեպին մեջ իրենց առանձին կյանքը ունին քանի մը պատանիներ ալ, որոնք կը մարմնացնեն հայ պատանիին հոգեկան թռիչքները և անզուգական կորովն ու քաջությունը:

Եթե ժողովուրդներ կան, որոնց մեջ ցեղին առավելագույն դրական կողմերը ի հայտ կու գան հասուն մարդոց կամ ծերերու սերունդին մեջ, կարծեք, հայոց մեջ այդ առավելագույն դրական գիծերը առատորեն կը գտնենք հայ պատանիին մոտ: Հայ պատանին արդյոք ավելի՞ անաղարտ ու խտացած կերպով կը ներկայացնե հայուն դրական կողմերը:

Վերֆելի ստեղծած հայ պատանիներն են, մանավանդ, Հայկն ու Ստեփանը:

Ստեփանը՝ որդին Գաբրիելին և Ժյուլիեթին, 14 տարեկան, հայու աչքերով պատանի մըն է: Թեև, գրեթե, ֆրանսացած էր, և սակայն, երբ ընտանյոք Յողոնոլուք հաստատվեցան, ան սկսավ նմանիլ ուզել գյուղի իր հասակակից պատանիներուն: Նախ՝ նետեց իր եվրոպական զգեստները ու հագավ հայ գյուղացիի հագուստը և սկսավ ապրիլ անոնց կյանքը՝ հակառակ մորը բացարձակ դժգոհության:

Ստեփան ևս իր հորը նման կը փոխվի, մանավանդ որ իր տարիքը ճիշտ այն շրջանն է, երբ տղուն հոգիին բոլոր

ակերը կը սկսին հոսիլ ու տարածվիլ դեպի ընկերային միջավայրը:

Այդ շրջանին տղան իր սահմաններեն դուրս կ'ելլե՝ ընդգրկելու համար իր շրջապատը ու ճշտելու համար նաև ինքզինքին իրական սահմանները:

Ստեփան բուռն կերպով կ'ուզե նույնանալ իր շրջապատին հետ ու նմանվիլ իր հասակակիցներուն և, մանավանդ, իրմե քիչ մը մեծերուն:

Այս նմանվելու զգացումը իր մեջ այնքան կը զորանա, ինչքան գյուղին չարքաշ տղաքը վրան կասկածով կը նային ու զինքը կը նկատեն փափուկ եվրոպացի մը:

Ստեփան ամեն գինով կ'ուզե փոխել այս մտայնությունը, կ'ուզե ցուցնել, թե ինք ալ կրնա ընել այն ամենը, ինչ որ կ'ընեն անոնք, և նույնիսկ ավելին. ան կամքը ունի զանոնք գերազանցելու:

Գյուղին ամենեն ուժեղ ու չարքաշ պատանին Հայկն է՝ կովկասուհի Շուշիկի որդին, որ Ստեփանին կենդանի իտեալը կը դառնա:

Այս Հայկը առասպելական Սասունցի Դավիթին հարազատ մեկ հաջորդն է:

Ահա՛ թե ինչ գեղեցիկ կերպով կը ներկայացնե Վերֆել այս զմայլելի հայ պատանին.

«Հայկ ըստ ինքյան տիպար մըն էր: Իր տասնչորս տարեկանին արդեն իսկ չափահաս Հայ լեռնականի մոայլ էությունը կը մարմնացներ: Իր ջղուտ նիհարությամբ, դանդաղ և քիչ մը առաջ ծռած քալվածքովը, իր վար կախած ծանր ու խոշոր ձեռքերովը տիրական հպարտությունը կը հանդիսանար ինքն իրեն մեջ ամրապինդ հաստատված նախացեղի մը: Հայտնապես կը տարբերեր պատանի հրոսախումբին անդամներուն մեծագույն մասեն իր արևելքցիի մարմնական աշխուժությամբ ու կայտառությամբ: Հայը իր ցրված քաղաքներուն մեջ կրնա խորամանկ Ոդիսևսին նմանիլ, - առանց պատճառի չէ, որ Ոդիսականը իր հերոսին նկարագիրը ձուլած է խորամանկութենեն ու հայրենազրկութենեն, - կորիզ հայը՝ բարձրավանդակներու հայը չհնազանդող է, անհամբեր է և բարձրամիտ: Իր այս գրգռիչ հատկություններուն, ինչպես նաև աշխա-

տության ու գործունեության իր մեծ բաղձանքին դիմացը կա՛ թուրքին հայեցողական, ծույլ լրջությունը»:

Ի տես Հայկին հպարտության ու արհամարհանքին՝ Ստեփան ուղղակի կը տառապեր:

«Հպարտ մարդիկ հաճախ կը նվազեցնեն մյուսներուն անձնասիրության զգացումը: Հայկ ևս կը նվազեցներ Ստեփանին անձնասիրության զգացումը»:

Ինքն էր հանցավորը, որ պատանի Բագրատյան ինքզինքը հազար կտոր կ՚ըներ, միշտ «հարազատ» ըլլալու համար: Մռայլ ու սկեպտիկ Հայկին՝ իր մասին գաղափար կազմելու համար, Ստեփանին տենչն էր քաջագործություններով հիացնել զայն: «Մտածումեն ուղեղը կը հոգնեցներ. Աստվա՛ծ, ի՞նչ ընեմ, որ Հայկին ցուցնեմ»:

Տակավ, սակայն, Ստեփան կը հաջողի դառնալ Հայկին նման: Նույնքան և գուցե ավելի հանդուգն, կորովի ու քաջ, միշտ պատրաստ ամենավտանգավոր գործը կատարելու՝ իր կյանքն իսկ վտանգի տակ դնելով: Եվ ահա ան մեկ քանի անգամներ կ՚անցնի թշնամիին սահմանը: Առաջին անգամ Հայկին հետ, բայց իր ծրագրով, կ՚երթան ու ահագին քանակությամբ միրգ կը հավաքեն լերան ստորոտեն: Երկրորդ անգամ մը մինակ կ՚իջնե վար, կ՚երթա իրենց տունը ու վեր կը բերե Իսկուհիին Ս. Գիրքը՝ մահվան ստույգ վտանգներե ազատվելով: Իսկ այս պատանիներուն երրորդ քաջագործությունը երկրորդ մեծ կռիվեն հետո, գիշերով վար իջնելնին է, որուն արդյունքը ա՛յն կ՚ըլլա, որ հայերը կը գրավեն թրքական թնդանոթ մը, որ մեծապես օգտակար կը դառնա իրենց ինքնապաշտպանության:

Այս քաջագործություններով Ստեփան այլևս կը դառնա «հարազատ» *հայ գյուղացի պատանի, Հայկի նման:*

«Տղուն նուրբ ճակատին վրա Մուսա լերան մեկ բիրտ աստվածը իր մութ կնիքը կոխած էր»:

Ստեփանին վերջին քաջագործությունն է իր փախուստը Հայկին ետևեն՝ անոր ընկերանալու համար դեպի Հալեպ: Մուսա լերան կառավարման խորհուրդը Հայկը սուրհանդակ նշանակած էր Հալեպեն օգնություն խնդրելու համար:

կես ճամբան, սակայն, Ստեփան կը հիվանդանա ու կը ստիպվի մենակ վերադառնալ: Թուրքերը զայն կը բռնեն ու տանելով Յողոնոլուք՝ իրենց իսկ տունին առաջը կը սպաննեն: Մեկ քանի պառավներ կ՚առնեն Ստեփանին դիակը ու կը տանին լերան վրա, ուր կը թաղվի պատշաճ արարողությամբ:

Ժողովուրդը մինչ այդ Գ. Բագրատյանին կը նայեր դեռ որպես օտարականի՝ հակառակ անոր անսահման անձնազոհության և գերմարդկային գործերուն: Այժմ «Ստեփանին մահը վերջնականապես մոտեցուց ժողովուրդը «օտարական» Գաբրիելին»:

Հայ գյուղացին, ուրեմն, դեռ թերահավատ էր ու կասկածոտ Բագրատյանի հանդեպ, և սակայն անոր որդվույն նահատակությունը ժողովուրդին համար շոշափելի ապացույցը եղավ, որ ա՛ն ալ հայուն ճակատագիրը կը բաժնե:

Ժ.

Քառասուներորդ օրը կը պատահի անսպասելին ու անհավատալին: Ֆրանսիական Կիշեն մարտանավը պատահաբար կը նշմարե կրակը, որ տարածվեր էր Մուսա լերան վրա, և ուրիշ քանի մը նավերով կու գա ու կը փրկե ամբողջ ժողովուրդը:

Հայերը կը լքեն Մուսա լեռը՝ հոն ձգելով 430 մեռյալ ու միասին ունենալով 17 նոր ծնյալներ այդ քառասուն օրերու ընթացքին:

Ամեն մարդ կը փրկվի առաջնորդությամբ Տեր Հայկազունին, որ մինչև վերջին պահը միշտ իր ժողովուրդին կորովի ղեկավարն է: Հիմա՛ ալ ան կ՚երթա ժողովուրդին հետ՝ միշտ անոր ծառայելու համար:

Կը փրկվին բոլորը, բացի մեկեն: Գաբրիել Բագրատյան կը մնա լերան վրա: Օգտվելով շփոթության պահե մը՝ խույս կու տա ու աննկատ կերպով կը փախի վեր՝ լերան վրա:

Բագրատյան ապրեր էր իր ամբողջ կյանքը այդ քառասուն օրերու ընթացքին: Ապրեր էր, այո՛, ամբողջ կյանքը մը: Իր մեջ ծներ ու մեռեր էր ամբողջ աշխարհ մը՝ հայ աշխարհը, որ պահ մը զարթներ էր իր մեջ:

Իր իսկ հոգիին մեջ զարթնած նոր ուժերը սպառած ու քամած էին իր էությունը: Այդ տարերային բռնկումը, որ հանկարծ տիրացեր էր իր մտքին, կամքին ու բոլոր զգացումներուն, այրեր էր ողջ էությունը ու հանգեր:

Նախնիքները, որ զարթներ էին իր մեջ, այլևս իրենց գործը կատարեր էին, ու Գաբրիելի գոյությունը այստեղ, ա՛յս կյանքին մեջ աննպատակ կը մնար:

Վերադառնալ Ժյուլիեթի՞ն, կյանքի՞ն: Բայց ատոնցմե ինք շատոնց հեռացած է: Շատոնց այդ Բագրատյանը մեռած էր իր մեջ վերջնականապես: Ներքին անորոշ բնազդ մը զինքը կը մղեր դեպի վեր՝ լերան վրա և միայն հոն: Հո՛ն, որովհետև իրեն համար միայն հոն հնարավորությունը կար ազատ ըլլալու:

«Ընդհանուր ազատության առաջին վայրկյանը զինքը տոգորած էր սա՛ գաղափարը, թե իրեն համար չէ կյանքի այդ վերադարձը, ա՛յն պատճառով, որ բուն Գ. Բագրատյանը, ինչպես որ այս քառասուն օրերուն ընթացքին մեջտեղ ելած էր, պետք էր իրապես ազատվեր»: «Նախասահմանության բարձունքեն ստրկության մե՞ջ իյնալ՝ նոր շնորհի սպասելու համար»: «Իր արյունին ճակատագրին, իր ազգին ճակատագրին մասնակցեցավ»: «Իր հայրենի ժողովուրդին կոիվը մղեց»: «Կանուխեն ինքզինքը անիրավորեն զգացած էր իբրև «վերացական մարդ», իբրև « մարդ ըստ ինքյան»: « Բայց բուն մարդը ըլլալու համար հարկ էր, որ ինքը համայնքին փարախեն անցներ: Ասոր համար է, որ ինքզինքը ազատ կը զգա հանչափս: Տարերային, բնազդային մեկուսացում»: «Միայն երկուքն են հոն՝ Աստված և Գաբրիել Բագրատյան: Եվ Գաբրիել Բագրատյան, շնորհիվ Աստուծո, ավելի իրական է, քան բոլոր մարդիկը և բոլոր ժողովուրդները»:

Բագրատյան կը թափառի լերան վրա՝ առանց որևէ մտածումի, առանց որևէ ճշգրիտ զգացումի:

Բնազդորեն, իր քայլերը զինքը կը տանին դեպի Ստեփանին գերեզմանը: Հոն իրիկունը թուրքական գնդակ մը կը ջախջախե իր գանկը: Գաբրիել Բագրատյան «կառչելով փայտին՝ փրցուց զայն հետը ինկած ատենը: Եվ զավակին խաչը պառկեցավ իր սիրտին վրա»:

Գաբրիել Բագրատյան կը մեռնի, մինչ ժողովուրդը փրկված կը դիմե դեպի նոր կյանք:

Գաբրիել Բագրատյան հրեղեն ասուպ մը կը դառնա, որ ճեղքելով հայոց 1915-ի մթագնած երկինքը՝ պահ մը զայն լուսավորելե հետո կ՚իյնա թանձր խավարին մեջ, հայ ժողովուրդի վրիժառու աստվածներու անծանոթ աշխարհին մեջ:

ԺԱ.

Ինչ որ պետք չէ վրիպի մեր մասնավոր ուշադրությենեն, ա՛յն է, թե Ֆրանց Վերֆելի վեպին մեջ գլխավոր դերակատար Գաբրիել Բագրատյանը գաղութահայ մըն է: Գաղութահայ են նաև Ստեփանը և ուսանող Ավագյանը:

Ֆ. Վերֆել ստեղծած է իտեալ գաղութահայը: Ոչ այն գաղութահայը, որ մեծխոսիկ ու լայն շարժուձևերով՝ ազգասիրության ու հայրենասիրության վրա առտու-իրիկուն կ՚երդնու... խոսքով կամ ... գաղափարով, այլ գաղութահայու տիպար մը, որ լուռ ու մունջ ապրելով գաղութի մը մեջ՝ երբեք չի պարծենար մեծ-մեծ խոսքերով, բայց երբ դերագույն պահը կու գա, ներկա է այնտեղ՝ հայրենի հողին վրա՝ պաշտպանելու և մեռնելու համար իր ազգին ու հայրենիքին պատվին ու ազատությանն ի խնդիր:

Ըսված է, թե Բաֆֆի հայ ազատագրության հերոսները ու հեղափոխական տիպարները կանխած է իր վեպերուն մեջ, տիպարներ, որոնք հետո կյանքեն ծնան:

Արդյոք պիտի կարենա՞նք ըսել, թե Ֆրանց Վերֆելն ալ իրականությունը կը կանխե իր վեպին մեջ՝ ստեղծելով այն գաղութահայերը, որոնք իրապես պիտի ծլին մեր գաղութներուն մեջ ու պիտի ծաղկին և պտուղ տան հայրենի հո-

ղին վրա: Պիտի ծնի՞ն արդյոք իրական Գաբրիել Բագրատյաններ, Ավագյաններ ու Ստեփաններ, որոնք անոնց ձևով կամ այլ ձևերով կարենան ստեղծել իրենց նախահայրերու աշխարհին մեջ կյանքի և արժեքներու նոր կոթողներ, ի փառս հայ հոգիին և իր կյանքի ուժին:

Մանավանդ որ, գաղութահայ Գ. Բագրատյանը, հայրենիք դառնալով, Արևմուտքեն հետը կը բերե կարգ մը հատկություններ, որոնցմե համեմատաբար զուրկ է հայ գյուղացին:

Հատկություններ, զորս Գաբրիել ձեռք բերած է Եվրոպայեն ու կը կիրառե զանոնք իր երկրին մեջ, հօգուտ իր ժողովուրդին: Այդ դրական կողմերն են՝ ավելի գործնական և աքթիվ ոգի, իրապաշտ հայեցողություն, հավատք սեփական նախաձեռնության վրա, հավատք ու լավատեսություն մարդկային բարի ուժերուն վրա, արհամարհանք արևելյան ճակատագրապաշտ մտայնության հանդեպ: Վերջապես՝ կազմակերպիչ և կարգապահ ոգի:

Ահա՛ կարգ մը հատկություններ, զորս Բագրատյան իր մեջ կը կրե առավելագույն չափով ու ատով զգալի կերպով կը տարբերի իր շրջապատեն՝ մեջն ըլլալով, նույնիսկ, Տեր Հայկազունը:

Գաբրիել Բագրատյան, զինված Եվրոպայեն ստացած կամ Եվրոպայի մեջ զարգացուցած այս դրական հատկություններով, գիտական մեթոտիք ոգիով ու նաև եվրոպական թեքնիքով, առավելագույն չափով կրնա ծառայել իր ժողովուրդին. առավելագույն ձևով կրնա իրագործել ձգտումները ու կամքը իր մեջ զարթնած ու իր մեջ գործող նախահայրերուն. առավելագույն հաջողությամբ կրնա ճակատիլ վտանգին դեմ ու փոխել իրերու ընթացքը՝ արտաքին ուժերը հպատակեցնելով իր գործող կամքին:

Մենք հաճախ թյուր հասկացողություն ունինք Եվրոպայի հանդեպ: Մեր մեջ կան երկու ծայրահեղություններ: Կան ոմանք, որոնք բացարձակ կ՚արհամարհեն ամեն ինչ, որ արևմտյան քաղաքակրթության և մշակույթի արդյունքն է, ու կը համառին փակված մնալ իրենց պատյանին մեջ:

Կան ուրիշներ ալ, որոնք հանկարծական ոստումով մը երես կը դարձնեն այն ամենուն, ինչ որ հայկական է, ու կը սկսին ապրիլ մակերեսային, թեթև կյանք մը, որ իր սնունդը կ՚առնե Եվրոպայի քաղաքակրթության թափթփուքներեն:

Մանավանդ մեր նոր սերունդին մեկ ստվար մասին մեջ է, որ տարածված է այս տգետ և հիվանդագին ըմբռնումը:

Ասոնք «եվրոպականանալ» ըսելով՝ կը հասկնան ճաշն ու պարը, ժան վեպերը, թեթև հաճույքները, confort moderne–ը, սխալ հասկցված սքոռը, իրենց ազգային բարքերը արհամարհելը, հայ լեզուն չգործածելը և այլն, մեկ խոսքով, իրենց հայկական համայնքի ծոցեն ու կյանքեն մեկուսացումը:

Ու այս երկու ծայրահեղ վերաբերմունքները, հակառակ արտաքին երևույթներուն, ավելի իրարու մոտ են, քան թե իրարմե հեռու: Որովհետև իրականության մեջ այն մարդը ու մանավանդ այն հայը, որ ինքն իր պատյանին մեջ քաշված կ՚ապրի՝ արհամարհելով մշակութային շրջապատը, շատ հաճախ մեկ ծայրահեղութենեն կ՚իյնա մյուսը: Եթե այդ բանը իրեն չպատահի, անպայման կը պատահի իր զավակին:

Նկատելի է, որ այն հայ մարդը, որ այդ արհամարհական և անհաղորդ կեցվածքը ունի հանդեպ արևմտյան մշակույթի բարիքներուն և կ՚ուզե իր զավակն ալ նույն վիճակին մեջ պահել, հանկարծ որոշ տարիքի մը իր երիտասարդ տղան կամ աղջիկը ձեռքեն կը փախի ու կը դառնա այնքան օտար հայության հանդեպ, ինչքան իր հայրը օտար մնացեր էր Եվրոպայի հանդեպ:

Շրջապատեն բացարձակ մեկուսացումը, կյանքի արտաքին աղբյուրներե կամովին զրկվիլը անխուսափելիորեն կը տանի դեպի այլասերում:

Առողջ ճամբան, ուրեմն, մեկուսացումին մեջ չէ, այլ, ընդհակառակը, Եվրոպայի մշակույթին, իսկական մշակույթին հաղորդակից ըլլալուն մեջ:

Եվրոպայի մշակույթ ըսելով, սակայն, չենք հասկնար այն մակերեսային մտայնությունները կամ թեքնիք բա-

րիքները, զոր Եվրոպան կու տա մեզի, այլ այն տևական և կենդանի արժեքները, որոնք Արևմուտքի հիմունքները կը կազմեն ու փառքը միաժամանակ:

Ձենք ըսեր՝ բնական է, որ հայ երիտասարդը մասնակից չըլլա իր շրջապատի հաճույքներուն և քաղաքակրթության թեքնիք բարիքներուն, բայց մենք կը պնդենք, թե պետք չէ ատով միայն գոհանալ, պետք չէ տեսնել եվրոպականությունը լոկ այդ կարգի բարիքներու մեջ: Մանավանդ որ անոնք են, որ հայը կ՚օտարացնեն ու ազգային հարազատ, բնական հոգին կը տժգունացնեն, կ՚այլսերեն, և ոչ թե արևմտյան իսկական մշակույթը:

Ճշմարիտ մշակույթը չ՚օտարացներ, այլ, ընդհակառակը, կը զորացնե քու մշակույթդ: Ան կը մոտեցնե մեզ մեր ազգային, սեփական, մնայուն արժեքներուն: Եթե հայը, իր ազգային արժեքներով զինված, ծանոթանա Արևմուտքի մշակույթի հրաշալիքներուն ու գնահատել գիտնա զանոնք, չի կրնար չսիրել ու չհպարտանալ հայ մշակույթի հրաշալիքներով:

Եթե հայ երիտասարդը ճանչնալ ու հասկնալ սորվի եվրոպական երաժշտությունը, գրականությունը, պատմական–քաղաքական դեպքերը և այլն, այն ատեն ավելի լավ գնահատել պիտի գիտնա իր սեփական ազգին երաժշտությունը, գրականությունը, պատմությունը և այլն:

Անշուշտ, կ՚ենթադրենք, որ հայ երիտասարդը նախ իր ազգային արժեքներու մասին հստակ գաղափար մը պիտի ունենա:

Բայց, մանավանդ, կ՚ենթադրենք այն խոր զգացումը, որ անհատը կը կապե իր ցեղային համայնքին, առանց որու ոչ մեկ իրական արժեք կրնա ներկայացնել այդ անհատը ո՛չ իր ազգին և ո՛չ ալ օտար ազգի մը համար:

Մեր երիտասարդությունը, մանավանդ երիտասարդ մտավորականությունը, պետք է լավ ըմբռնե սա իրողությունը, թե մշակութային անհատը, բարոյական մարդը անհրաժեշտորեն կապված պետք է մնա օրկանական ամբողջության մը, այսինքն՝ իր ժողովուրդի համայնքին, և

թե այդ իր բնական ու մտերիմ շրջանակեն դուրս կը սկսի այլասերումը ոչ միայն ազգային, այլ նաև մարդկային տեսակետեն, որովհետև եթե քու սեփական ազգեդ հեռանաս, ուրիշ ազգի մեջ երբեք իրապես չես կրնար մուտք գործել:

Մարդը ինքն իր մեջ բավարար ու կատարյալ էակ մը չէ: Մարդը միակ կենդանին է, որ իր անկատարելության խոր զգացումը ունի ու այդ պատճառավ կը ձգտի դեպի կատարելություն, դեպի գեթ հարաբերական ինքնաբավարարում: Ահա ատոր համար է, որ ան միշտ անկայուն է ինքն իր մեջ: Ան իրմե դուրս սկզբունք մը կը փնտռե, որուն կառչի ու ինքզինքը ամբողջացնե, ինքզինքը անկատար զգալու գիտակցութենեն ազատե ու այսպեսով փրկվի: Այդ սկզբունքը, որ մարդուն գիտակցության մեծ փրկությունը կու տա, իր բնական համայնքն է, իր ազգային հավաքականությունն է իր նախնիքներու բնակավայրին մեջ, ազգային հայրենիքին մեջ:

Անհատը ազատ չէ իր համայնքը ու իր ազգը ընտրելու: Ատիկա կը ժառանգվի: Ատիկա դրոշմված է արյունին ու ջղային դրության մեջ: Ատիկա ճակատագիր է:

Ազգեն խույս տալու ամեն փորձ կը տանի դեպի այլասերում: Բոլոր անոնք, որոնք փոխանակ իրենց հոգիով իրենց հայրենի, ցեղային մթնոլորտին մեջ մնալու, փոխանակ ազգային արժեքներու աշխարհին մեջ ապրելու, կ՚ուզեն ոստումով մը օտար կյանքը ու օտար հոգին կապկել, անհրաժեշտորեն աննպատակ ու բռնազբոսիկ կյանքի մը մեջ կ՚իյնան, ուր չկա հոգեկան ոչ մեկ «օրենք»: Ու անոնք շուտով կը զգան, թե ինչքա՜ն միանակ են, ինչքան օտա՜ր են իրենց այդ «նոր» կյանքին մեջ ու իրենց սեփական հոգիի մթնոլորտին իսկ մեջ:

Այստեղ կը սկսի անբուժելի ու անհատակ ողբերգությունը այդ մարդոց:

Այդպիսի անազգ մարդոց դասակարգեն հաճախ դուրս կու գան անհատներ, որոնք կը դառնան միջազգային տիպեր՝ պատրաստ ամեն անխոստովանելի գործեր կատարելու:

Բուն արևմտյան մշակույթը հոս չէ, որ կը տանի մեզ:

Արևմտյան իսկական մշակույթի բարիքներ ըսելով կը հասկնանք գիտությունները, լուրջ գրականությունը, թատրոնը, երաժշտությունը, մարմնակրթանքը և այլն: Նաև՝ բարոյական, ընկերային, քաղաքական ըմբռնումները, հղացումները և այլն:

Անշուշտ, հայն ալ իր բարոյական մեծ առավելությունները ունի, բայց այդ չի նշանակեր, թե ան պետք չէ ինքզինքը կատարելագործե՝ օրինակ առնելով Արևմուտքի մարդեն ալ:

Ռումեն հոգեբան Ռըտուլեսքու-Մոդռու այսպես կը հատկանշե Արևմուտքի մարդուն բարոյական դիմագիծը.«Բարոյական նկարագրի եվրոպական տիպարին հատկանիշներն են՝ կամքի ուժ, դատողության հստակություն, զգացումի նրբություն և ոգևորվելու կրակ: Կամքի ուժ ըսելով չի հասկցվիր բնազդի կույր մղումը, այլ այն ուժը, որ ի գործ կը դրվի հարկ եղած պահուն: Կամքի ուժ չունին ո՛չ համառները և ո՛չ ալ հախուռները (impulsiv), այլ անվախ ու հարատև գործողները: Դատողության հստակությամբ նկարագիրը կը ստանա տեսականության և նախատեսության հատկությունները:

Զգացումի նրբությունը վառ կը պահե մարդկանց հանդեպ սերը և կ՚ազատե մարդը ռութինե: Ոգևորության կրակը վերջապես կը փոթորկե հոգին և կու տա զոհաբերության ուժ» (C. Rădulescu– Motru. "Curs de Psihologie", 1929):

Ամբողջ արևմտյան մշակույթը կը նպաստե այս տիպի բարոյական նկարագրի կազմության:

Գ. Բագրատյան Ֆրանց Վերֆելի վեպին մեջ այսպիսի նկարագիր մըն է:

Հիրավի, ան իր կամքի ուժով, դատողության հստակությամբ, զգացումի նրբությամբ և ոգևորվելու ներքին կրակով կը գերազանցե իր շրջապատը:

Բագրատյան իտեալ տիպարն է այն հայուն, որ Եվրոպայի բուն մշակույթի ակեն հագենալով, Եվրոպայի քաղաքակրթության բարիքներով ու գիտելիքներով զինվելով, նաև իր հոգեկան, ցեղային ներքին ուժերը արևմտյան

մարդուն հատուկ հավասարակշռված ու ներդաշնակ կերպով կազմակերպելով՝ կու գա իր ազգային հավաքականության մեջ արդյունավորելու այդ բոլորը:

Իր նոր միջավայրին մեջ Բագրատյան կը դառնա իր ժողովուրդին արժանավոր ներկայացուցիչը:

Նույնանալով այդ ժողովուրդին կյանքին հետ՝ պահ մը կու գա, երբ ինքը կը մարմնացնե այդ ժողովուրդը կատարելագույն չափով:

Ու եթե, ինչպես հոգեբանները կ՚ըսեն, անձնավորությունը պատասխան մըն է աստիճան առ աստիճան կառուցված այն հարցերուն, զոր ճակատագիրը մարդուն առաջ կը դնե ընկերային դեպքերու ու երևույթներու միջոցով, այդ պարագային պետք է եզրակացնենք, թե Գաբրիել Բագրատյան այնպես, ինչպես կա Վերֆելի վեպին մեջ, տիպար անձնավորություն մըն է, մարդկային բարոյական լուսավոր կատար մը:

Ֆաուստյան բարոյականի հայ տիպար մըն է ան: Ինքզինքը նվիրած հավաքականության մը՝ իր կյանքի իմաստը կը գտնե ա՛յդ հավաքականության ծառայելուն մեջ՝ իր սեփական «եսը»–ը լուծած հավաքական «ես»–ին մեջ, իր գերագույն երջանկությունը կը գտնե ա՛յդ հավաքականության երջանկության մեջ. վերացած ու այլևս այս երկրային կյանքեն բաժնված՝ իր հոգիի փրկությունը կը գտնե այդ ամբոխին կյանք պարգևելուն մեջ:

Եվ Ֆաուստին պես իր նպատակին հասնելու համար Բագրատյանն ալ չի հպատակիր ճակատագրին, այլ կը պայքարի անոր դեմ ու կը փոխե իրերու «բնականոն» ընթացքը: Կը կերտե ուրիշ ճակատագիր մը:

Բագրատյան գերդաստանի վերջին շառավիղը՝ Գաբրիել, կու գա՛ իր ժողովուրդին ծոցին մեջ ու հանուն ա՛յդ ժողովուրդին, հանուն ի՛ր նախնիքներուն, դասական, զմայլելի պատասխան մը կու տա ճակատագրին՝ 1915–ի հայուն ահավոր ճակատագրին:

Պատասխան մը, որ կ՚արձանագրվի հայոց պատմության մեջ:

Պատասխան մը, որով հայ ժողովուրդը անգամ մը ևս մուտք կը գործե հավիտենականության մեջ:

ԺԲ.

Այս քանի մը խորհրդածություններուն նպատակը չէր Վերֆելի գործը քննել արվեստի տեսակետեն, այլ մեր նպատակն էր ճանչնալ հայերն այնպես, ինչպես ապրեցան Մուսա լերան վրա:

Մենք՝ հայերս, մեր նախնիքներով հպարտ ըլլալու բազմաթիվ զորավոր պատճառներ ունինք՝ սկսյալ նախաքրիստոնեական շրջանեն մինչև մեր օրերը: Ու, առանց վարանումի, մեր հպարտության կոթողներեն մին պետք է նկատենք նաև Մուսա լերան հայերու, ինչպես նաև շապին-գարահիսարցիներու, ուրֆացիներու, վանեցիներու պայքարները:

Ազգ մը չ՚ապրիր միայն իր նյութական բարիքներով, չ՚ապրիր միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես են արվեստներն ու գրականությունը, չ՚ապրիր միայն հանճարեղ անհատներու գործերով, այլ կ՚ապրի նաև իր պատվի և արժանապատվության զգացումներով, իր «մենք»-ի գիտակցությամբ և զոհաբերության ոգիով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մեկ խոսքով՝ իր բարոյական նկարագրով:

Վերֆելի հայերը այդպիսի հայեր են:

Ահա թե ինչո՛ւ կ՚արժե, որ մենք ծանոթանանք անոնց, մանավանդ որ այդ հայերը կը ներկայացնեն ոչ թե պատահական անհատականություններ, այլ հարազատ հայեր, որոնք իրենց մեջ կը կրեն հայ ժողովուրդի, դարերուն դիմացած հայ ժողովուրդի բարոյական դիմագիծը՝ տոկուն, առողջ, վեհ և գեղեցիկ ձևերու մեջ:

Եթե գաղութահայը, մանավանդ երիտասարդ գաղութահայը, որուն հայկական դիմագիծը ավելի ու ավելի կ՚աղոտի, լավ ճանչնա բուն հայը, հարազատ հայը, մենք վստահ ենք, թե իրեն համար հայտնություն մը պիտի ըլլա ատիկա ու միաժամանակ նոր իտեալ մը:

Եվ, գուցե, ի տես այդ կենդանի նոր պատկերին, իր մեջն ալ բան մը պիտի շարժի ու զարթնու, նոր ճառագայթ մը պիտի իջնե հոգիին մեջ:

Ամեն գաղութահայու մեջ Գաբրիել Բագրատյան մը կա:

Այդ բանը Ֆրանց Վերֆելն է, որ մեզի կ՚ըսե, որուն համար մենք հավետ երախտապարտ պիտի ըլլանք անոր:

Մեր օրերու՝ վտանգի ու երկունքի ճակատագրական այս օրերուն, երբ ժողովուրդները իրենք իրենց մեջ կը փակվին և կը խորանան, ինքզինքնին կը փնտռեն՝ իրենց խորունկ արմատները գտնելու և այնտեղեն թարմ ու անմեռ ուժեր ստանալու համար, Վերֆել ահա մեզի կ՚ընծայե վեպ մը, ուր մենք այդ բոլորը կը գտնենք գրեթե պատրաստ: Կը մնա, որ գիտնանք զանոնք ճանչնալ ու արժեցնել:

Ինչ որ ալ ըսվի, ինչ որ ալ պատահի, հայ ժողովուրդը, հայ հայրենիքը, այս երկուքն ալ հաղթականորեն պիտ դիմագրավեն, ու ինչպես միշտ, այս անգամ ալ պիտի իրականանա «ան անիմանալին ի մեզ և վեր քան զմեզ»:

Որովհետև, եթե դժբախտությունը և մարտիրոսությունը հայ ժողովուրդի ճակատագիրն է, պետք է լավ գիտնանք, որ տոկալն ու հաղթահարելն ալ, ապրիլն ալ անոր ճակատագիրն է:

Այլևս ակներև է, որ հայ ժողովուրդը դատապարտված է ամեն գնով ապրելու: Մեր այս փոքրիկ ուսումնասիրության եզրակացությո՞ւնը.

— Հավատա՛նք հայ մարդու բարոյական ուժերուն: Հավատա՛նք հայ հայրենիքի ապագային: Եվ հպարտություն՝ հայ ըլլալնուս համար:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ*

Նվեր ծնողքիս

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Այսօր, երբ մարդկությունը խելահեղորեն նետված է զարհուրելի պատերազմի մը մեջ, երբ մահն ու ավերը հորիզոնե հորիզոն կ՚արշավեն, երբ քաղաքականության և մշակույթի հազարամյա սկզբունքներն ու արժեքները, կարծես գահավեժ, դեպի անդունդ կը գլորին, մարդ կանգնած այս քաոսին մեջ՝ հենարան մը կը փնտռե, ապահով կետ մը, ստուգություն մը մտածման ու զգացումի, որուն բեղմնավորումով ծնունդ առներ նոր մարդ մը՝ ավելի բարի, ավելի արդար, ավելի ազատ:

---

* Գրված է 1942-1943 թթ. ընթացքում: Առաջին անգամ առանձին գրքով լույս է տեսել 1943-ին, Պուքրեշում (158 էջ), Կ. Պալճյան ստորագրությամբ:

Հիշյալ հրատարակությունն ունի նաև ռումիներեն անվանաթերթ ու բովանդակության ցանկ, իսկ խորագրից հետո բերված է նաև ենթավերնագիր՝ «Ուսումնասիրություն XIX դարու հայոց գերագույն պատրիարքի ու կաթողիկոսի հասարակական-մանկավարժական հայացքների», որ հայերեն բնագրում բացակայում է:

Երկրորդ անգամ, անփոփոխ, տպագրվել է 1987-ին, Նյու-Յորքում, «Ս. Վարդան» մատենաշարով:

Երրորդ անգամ վերահրատարակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 1988 թ. «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 77-188, որից և արված է սույն հրատարակությունը:

Մարդը դարձնել ավելի ազատ, ավելի արդար ու ավելի բարի,– ահա՛ մեծագույն հեղափոխությունը, զոր կարելի է երևակայել:

Ահա՛ մեծագույն հեղափոխությունը, որուն համար մարդիկ դարեր բազմաթիվ, ուս–ուսի տված՝ կը մաքառին, միշտ դեպի առաջ կը քալեն, նոր ու նոր ճամբաներ կ՚որոնեն:

Ահա՛, վերջապես, մեծագույն հեղափոխությունը, որուն համար մարդկային հսկա ուժեր ու արժեքներ, մտածման ու տքնության տիտաններ սերունդե–սերունդ կը տառապին, կը պայքարին, կը զոհվին՝ միշտ հավատալով մարդկության գալիք երջանկության:

Ու լավ պետք է գիտնանք, որ եթե զինվորական պատերազմներեն ոմանք ևս կը ձգտին այդ նույն երջանկության ի խնդիր նոր ուղիներ բանալ ու նոր գետին պատրաստել, և սակայն, այդ մեծագույն հեղափոխության ձգտող պայքարը հարատև է, և ամեն բանե առաջ աշխատանքի ուժը, մտածումի գյուտը և զգացումին ազնվությունն են, որ դրական նպաստներ կը բերեն ու տակավ կը հասունցնեն մարդկային կյանքի հեղաշրջումը:

Այս հսկա աշխատանքին մեջ, առաջին գծին վրա, կանգնած է դաստիարակության գործը:

Դաստիարակության գործին նվիրվող բոլոր մեծ դեմքերը նպաստ մը կը ներկայացնեն այն մեծ հեղափոխության տեսակետեն, որուն այնքան ծարավի է մարդկությունը մանավանդ այսօր:

Օ՜, ինչ երջանիկ պիտի ըլլար մարդկությունը, եթե միայն դաստիարակչական գործով իրականանար երկնային դրախտը: Եթե մանկավարժությունը ամենազոր եղած ըլլար, անշուշտ, մարդկությունը շատոնց փրկված պիտի ըլլար այն ցավերեն, որ այսօր ալ կ՚այրին: Պետք չէ միամիտ ըլլանք: Այս մեծ հեղաշրջման հարցը չափազանց բարդ է ու իր մեջ կը պարփակե բազմաթիվ խնդիրներ, որոնք կապված են բոլոր այն երևույթներուն հետ, որ աղերս մը ունին մարդուն անհատական ու հավաքական կյանքին բնույթին հետ:

Եվ սակայն, դաստիարակչական գործը, այնուամենայնիվ, այն զենքերեն մին է, որ զետեղված կռվի ճակատի առաջին գծին վրա՝ համառ հետևողականությամբ մը կը պայքարի հպարտորեն ու տակավ, ճիշտ է՝ շատ դանդաղ, և ո՛չ միշտ ու ամեն տեղ նույն չափերով կը հասնի շոշափելի, դրական արդյունքներու:

Մանկավարժը մարդ մըն է, որ գիտակցությունը ունի մարդուն ու անոր կյանքին անկատարության, բայց, միաժամանակ, կը հավատա անոնց բարելավման և զինված գիտությամբ ու անսահման սիրով ու նվիրումով՝ կանցնի գործի:

Մանկավարժը միայն դպրոցի մեջ երեխա կրթողը չէ: Մանկավարժը կրթողն է, դաստիարակողն է առհասարակ: Որովհետև միայն երեխան չէ, որ պետք է դաստիարակել: Դաստիարակին գործը երեխայով կը սկսի, բայց կանգ չ՚առներ երեխայության շրջանի վերջավորությանը: Դաստիարակչական գործը միայն երեխաներու համար չէ: Ավելին, դաստիարակչական գործին բուն նպատակը երեխայության շրջանեն անդին կը գտնվի. անոր նպատակն է հասուն մարդոց ընկերությունը բարեփոխել:

Գիտենք, շատ շատերու համար դաստիարակությունը երեխայական շրջանի համար «հնարված» միջանկյալ աշխատանք մըն է, որուն նպատակն է՝ երեխան հեռու պահել կարգ մը հոռի ունակություններե ու անոր տալ վարվելակերպի և բարեկրթության որոշ սկզբունքներ ու սովորություններ: Այդ միջանկյալ շրջանի երեխան պետք է ըլլա քաղաքավար, պետք է ըլլա բարի, պետք է ըլլա ճշմարտախոս, արդարամիտ և այլն, և այլն: Այս բոլորը, սակայն, մինչև որ տղան «հասուն» դառնա ու «ճանչնա իրականությունը»: Ատկե հետո մեր նախկին երեխան, այժմ հասուն մարդ դարձած, կը սկսի նոր շրջան մը ապրիլ, երբ մինչ այդ իր սորված դաստիարակչական սկզբունքները կը ծալլե ու կը նետե մեկդի, որպես այլևս անպետք գործիքներ, ու կը նետվի կյանքի մեջ. և հաճախ կը սկսի խոսիլ, մտածել ու գործել երեխայական շրջանին իր խոսածին, մտածածին ու գործածին ճիշտ հակառակը:

Դաստիարակության այս քաղքենի, «տաքուկ» ըմբռնումը գրեթե այսօր ալ տակավին տիրող ընդհանուր կարծիքն է: Նույնիսկ կրթական գործին ծառայողներեն շատերը գործնականին մեջ նույն ըմբռնումը ունին: Ու մեքենան կը գործե այսպես... ի հեճուկս մանկավարժական նվիրագործված սկզբունքներու և ճշմարտություններու:

Ինչ խոսք, որ այսպես ըմբռնված դաստիարակությունը կեղծ դաստիարակություն մըն է: Դաստիարակությունը կը դառնա երեխաներ վախեցնելու տեսակ մը, կազմակերպված սուտ կամ, եթե կ՚ուզեք, տեսակ մը առասպել՝ երեխան որոշ շրջան մը խաբելու համար կյանքի իրականության առջև: Դաստիարակությունը կը դադրի անկեղծ, լուրջ և հիմնական աշխատանք մը ըլլալե ու կը կորսնցնե իր բուն իմաստն իսկ և բնական դերը:

Այս կեղծ դաստիարակության նկատմամբ է, որ կարելի է արդարացի նկատել Պեռնար Շոուի խոսքը, թե «Դաստիարակությունը հասուն մարդոց կազմակերպած պաշտպանողականն է երեխաներու ընդդեմ»:

Ճշմարիտ դաստիարակությունը, սակայն, ինչպես ըսինք արդեն, նպատակ ունի հասուն մարդը բարեփոխել և, առհասարակ, ընկերությունը հեղաշրջել:

Կարելի է ըսել, թե դաստիարակությունը երեխայության շրջանին կը սկսի ցանել, պատանեկության շրջանին կը մշակե՝ հասուն մարդոց կյանքեն քաղելու համար:

Հասուն մարդոց ընկերությունն ու դպրոցական գրասեղաններուն վրա նստած երեխաներն ու պատանիները մեկ ամբողջություն մըն են՝ իրարմե անբաժանելի: Նույն օրկանական կյանքն է, որուն մեջ ո՛չ բաժանում կա և ո՛չ ալ ընդհատում, ուր դաստիարակությունը պետք ունենար կանգ առնելու:

Մանկավարժը կ՚աշխատի այդ ամբողջության համար, կը մտածե, կ՚որոնե ու կը պայքարի մարդուն ու ընկերության համար:

Ահա այս պատճառավ, մանկավարժությունը «դպրոցական գիտելիք» մը չէ միայն, այլ ընկերային գիտություն մը, մարդկային ընկերությունը բարենորոգելու և կատարելագործելու աշխատանքին նվիրված առաքելություն մը, որուն կ՚աշխատակցին հոգեբանն ու բարոյագետը, ընկերաբանն ու պետական մարդը:

Մանկավարժներ են ոչ միայն անոնք, որ զուտ դպրոցական, մանկավարժական խնդիրներով զբաղված են, այլ մանկավարժներ են, օրինակ, նաև Մոնդեյն, Կյոթե, Թոլսթոյ, Ռապինտրանաթ Թակոր, Սբիրու Հարեթ և այլն:

Անմիջապես ըսենք, որ արդեն բոլոր մեծ մանկավարժները, որոնք զբաղված են մանուկներու դաստիարակության և ուսուցման հարցերով, միաժամանակ եղած են նաև ընկերային մանկավարժներ, այսինքն՝ իրենց վերջնական իտեալը եղած է մարդկային ընկերությունը բարենորոգել ու հեղաշրջել:

Այսպես եղած են մեծն Բեստալոցցին, Ժ. Ժ. Ռուսոն, Սբենսերը և բոլոր ԺԹ. դարու և մեր ժամանակներու մեծ մանկավարժները:

***

Ամեն տեղ, ուր ընկերությունը վերանորոգելու, հեղաշրջելու անհրաժեշտությունը կա, այդտեղ պահանջը կը ստեղծվի գերազանցապես մանկավարժական աշխատանքի մը. իսկ այդ գործը մտածողներն ու կատարողները պետք է կոչենք ընկերային մանկավարժներ կամ ժողովուրդի դաստիարակներ:

Պատկերացնենք պահ մը մեր աչքերուն առաջ այն ընկերային, տնտեսական, մշակութային տխուր վիճակը, որուն մեջ կորսված էր հայ ժողովուրդը Հայաստանի գավառներուն մեջ, հին Թուրքիո հետադեմ, խավար ու ճնշող մթնոլորտին մեջ:

Հայ գյուղացին կորսնցուցած էր իր մարմնական ու հոգեկան առողջ կորովը ու դարձած էր անփույթ արևելքցի մը, հետադեմ՝ անընդունակ հառաջադիմության նոր հորիզոն մը տեսնելու:

Դարերու դաժան լուծը, բռնությունը, կեղեքումները, հալածանքները, կոտորածները և նվաստացումները հայ շինականը դարձուցեր էին հուսաբեկ ու ճակատագրապաշտ:

Բայց այդ նույն գյուղացիին մեջ չէին կրնար բոլորովին կորսված ըլլալ հայ ժողովուրդի ցեղային ու հոգեկան, բարոյական ու մշակութային ընդունակություններն ու կարելիությունները:

Հուսահատ, շվարած, հետադեմ, ինքզինքը կորսնցուցած, ստուգութենե մը զուրկ հայ գավառացի ժողովուրդը պետք ուներ առաքյալի մը շունչին ու խոսքին, հեղափոխականի մը շարժումին ու կենդանի գործին, որպեսզի իր մեջ զարթնեին իր ազնիվ արյան առողջ ուժերը, ու նոր թռիչք առնեին իր ոսկի հոգիին թևերը:

Սխալած պիտի չըլլանք, թե այդ մեծագույն հեղափոխականը մեր մեջ Խրիմյան Հայրիկը կը հանդիսանա թե՛ իր գրականությամբ, թե՛ իր կենդանի խոսքով, թե՛ իր գործով:

Խրիմյան վստահ է, թե հայ գյուղացին ունի թե՛ մարմնական, թե՛ հոգեկան բոլոր հնարավորությունները՝ զարգանալու համար նախ ինք, ապա զարգացնելու համար իր տնտեսությունը, իր արտադրությունը և այսպիսով բարձրացնելու համար իր նյութական ու բարոյական կյանքի մակարդակը: Պետք է միայն զայն արթնցնող մը գտնվի, զայն լուսավորող մը, առաջնորդող մը, որպեսզի ան զարթնու իր դարավոր քունեն, թմրութենեն ու հավատա ինքզինքին և իր սեփական ուժերուն:

Ահա՛ թե ի՞նչ կը խորհի Խրիմյան հայ գյուղացիի մասին և ի՞նչ կ՚առաջարկե.

«Դու գիտե՞ս ու կը ճանաչե՞ս մեր արևելյան ժողովուրդը, որ առանց գիտության բնապես ճարպիկ է, և այնչափ գոեհիկ չէ, որ չգիտնա յուր ազատության և հառաջադիմության պայման: Այո՛, կան կարծիք և մարդիկ, որք տիրապետական ոգին փայփայելով՝ միշտ կը խոսին և կը համոզեն այսպես, թե դեռ մանուկ է մեր աշխարհ, դեռ չգիտե կարդալ և գրել, դեռ ընտրություն չունի, ո՞րպես կարե որոշել յուր հայրենյաց շահն, բարին ու չար, անպետն ու պիտանին, ոսկին ու պղինձ, արծաթն ու կապար:

Այսպես, երբ զքեզ իբրև անուս և անընդունակ մանուկ մը կը դատեն, ժողովո՛ւրդ, ո՞վ է մեղավոր, դո՞ւ, թե քո սնանիչ դայակներ, որք, իբրև օտարամայր, կաթ և ուրիշ զօրացուցիչ կերակուր խնայեցին քեզ. ցամաք հացով և կորյակով ապրեցար, սրտիդ ու լերդիդ արյուն ցամաքելով՝ ողջ կյանքդ ծյուրեցավ: Տակավին պաշտե՞ս քու հին կարծիքն և ասես, որ «Մեր աշխարհ նոր օրենք չի սիրեր, մենք հնության մեջ ծնանք, պետք է հնության մեջ մեռնինք, զի հնությունն մեր խանձարուրն է, պետք է նաև մեր պատանք լինի»: Մի՛ հավատար, ժողովուրդ. այդ վարդապետությունը տիրապետաց ոգին ստեղծեր է: Հանե՛ք այդ հնոտի հանդերձներ, ո՛վ հնասեր ժողովուրդ, հանե՛ք ձեր անձեն ու փոխեցեք, ինչպես կը փոխե օձն յուր շապիկ» («Ժ. Խ.»)*:

Ահա այս քանի մը տողին մեջ իսկ Խրիմյան ի հայտ կու գա որպես հեղափոխական բարենորոգիչ հայ ժողովուրդի:

Մեր կարծիքը այն է, որ մենք բավարար չափով մը չենք ճանչնար Վասպուրականի Արծիվը:

Շատ–շատերու համար Խրիմյանը պատմական դեմք մըն է միայ, որ «իր ժամանակին» դեր մը կատարած է ու կարդ մը «խրատական» գիրքեր գրած գավառական ժողովուրդին համար:

Ոմանք, ճիշտ է, կը գնահատեն զինքը նաև որպես բանաստեղծ, որ տեղ մը ունի հայ գրականության մեջ: Իսկ ընդհանուր կարծիքը այն է, որ Խրիմյան գերազանցապես հեղափոխական գործիչ մը եղած է՝ քաղաքական իմաստով: Ու մեր ժողովուրդի հիշողության մեջ կ՚ապրի «երկաթե շերեփի» պատմությունով:

Անժխտելի է, անշուշտ, թե Խրիմյան, որպես բարձրաստիճան եկեղեցական ու հայ ժողովուրդի ղեկավար, պատմական դեմք մըն է ու որոշ դեր կատարած է պարագաներու թելադրանքի տակ, քաղաքական կյանքի մեջ՝ ազգային և միջազգային գետնի վրա:

---

* Այստեղ և հետագա էջերում, Խրիմյան Հայրիկի երկերից քաղված հատվածների աղբյուրները նշված են հետևյալ համառոտագրություններով.
«Դ. Ը.»-«Դրախտի ընտանիք»:
«Ժ. Խ.»«Ժամանակ և խորհուրդ յուր»:
«Պ. Թ»-«Պապիկ և թոռնիկ»:
«Ս. Ս.»-«Սիրաք և Սամվել» *(Խմբ.)*:

Մենք կը կարծենք, սակայն, թե Խրիմյան ոչ թե սովորական քաղաքական–վարչական գործիչ մը եղած է, այլ հեղափոխական մը՝ իր ավելի լրիվ իմաստով, իր ամբողջական իմաստով:

Խրիմյան երազած ու մտածած է, ձեռնարկած ու աշխատած է հայ ժողովուրդը վերականգնել, վերանորոգել՝ հեղաշրջելով, բարելավելով անոր տնտեսական, ընկերային, քաղաքական ու բարոյական, մշակութային կյանքը գիտության ու սիրո ուժով, իսկական մեծ դաստիարակի մը ոգիով:

Ուրիշ խոսքով՝ Խրիմյան մեզի համար գերազանցապես ընկերային մանկավարժ մըն է իր ժամանակին համար ու շատ մը տեսակետներե, նաև մեր ժամանակներու համար:

Այն քաղաքական գործունեությունը, զոր ունեցած է ան, ուրիշ բան չէ, եթե ոչ մեկ մասնիկը իր ավելի մեծ շրջանակ ունեցող մտահոգություններուն: Եթե հայ ժողովուրդը այդ շրջանին ունենար ուրիշ դիվանագետ կղերականներ ու քաղաքական գործերը վարող անձնավորություններ, Խրիմյան, գուցե, այդ դետնի վրա գործելու անհրաժեշտությունը երբեք չզգար ու նվիրվեր հայ ժողովուրդի ներքին կյանքի բարենորոգման գործերին:

Համենայն դեպս, ուրիշ եկեղեցականներու նկատմամբ, ինքը՝ Խրիմյանը, նույն դիտողությունը կ՚ընե հետևյալ գանգատական խոսքերուն մեջ.

«Ավա՜ղ, թոռնիկ, մեր արդի առաջնորդներ, գիտես, թե մի քաղաքական պաշտոնյա դարձած են: Բուն եկեղեցվո պաշտոնեություն, դպրոց, կրթություն, ուսումն և այլն բարձիթողի եղած են» («Պ. Թ.»):

Ձենք գիտեր, գուցե ինքը՝ Խրիմյանը, բոլորովին համաձայն չըլլար մեր տեսակետին, ինչ կը վերաբերի իր անձին, ու տարված իր հախուռն նկարագրի ձգտումներեն՝ չզիջաններ հրաժարիլ քաղաքական կյանքի ընծայած անցողական փառքերեն. հրաժարում մը, որ, գուցե, թե՛ իր և թե՛ իր ազգին օգտին ըլլար:

Սակայն, փակելով սույն հարցը, որ, անշուշտ, վիճելի խնդիր մը կը մնա, մենք բավարարվինք հաստատելով այն պատմական իրականությունը, որ Խրիմյան ստիպված էր քաղաքական իմաստով ալ գործելու, որովհետև վերջ ի վերջո հայ ժողովուրդի կյանքի բարելավման պայմաններեն մին ալ անոր քաղաքական–վարչական կյանքի բարենորոգումն էր այնպիսի պահու մը, երբ սուր կերպով կը դրվեր հայ գյուղացիին գեթ կյանքի ու ինչքի ապահովության հարցը:

Խրիմյան վարչագետ մը չէ, ոչ ալ դիվանագետ մը: Ան բուռն հեղափոխականի խառնվածք ունի և, ի տես հայ գյուղերու թշվառության և հետադիմության, իր ձայնը կը բարձրացնե առանց վարանելու ու կ՚աղաղակե, կը պահանջե, որ Պոլսո մեջ նստած մարդոց սիրտը շարժի, ու ազգի ղեկավարները աշխատին գավառներու կյանքը բարենորոգել: Խրիմյան կը պահանջե լույս և գիտություն տանիլ հայ գյուղացիին խրճիթեն ներս, հայ գյուղացիին արտին վրա:

Ահա թե ինչո՛ւ, 1870–ին, երբ ինք Պոլսո պատրիարք է, հետևյալ կարծիքը կը հայտնե Ազգային ժողովին մեջ, սահմանադրության մասին.

«Մեր ազգային օրենքը խմբագրվեր է մայրաքաղաքին մեջ և այնպիսի անձերու հեղինակությամբ, որոնք ավելի Եվրոպան կը ճանչնան, քան Հայաստանի աշխարհացույցը, և այսպես՝ մեր Սահմանադրությունը Եվրոպիո գաղափարաց վրա ձուլվեր է ավելի, քան թե Հայաստանի: Օրենսդիրը պարտավոր էր քննել ա՛յն ժողովրդական վիճակը, պիտույքն ու բարքը, որու օրենք սահմանելու միայն կոչված էր, և այդ ժողովուրդը միայն Վոսփորի մեջ չէր բնակեր, այլ այս անձուկ շրջանակեն անդին՝ Հայաստանի հեռավոր գավառներուն մեջ, երբ տակավին այս կերպով խմբագրված Սահմանադրություն մը մայրաքաղաքիս մեջ անգամ գործադրված ատեն դժվարություններ կը ծագին, մտածելու է, թե գավառներու մեջ ի՞նչ հիմ կը բռնե և ի՞նչ արդյունք կ՚ունենա»:

Բայց զինք հասկացող չկա. Պոլիսը իր հորիզոնեն անդին չի կրնար տեսնել. ու ահա երեք տարի չլրացած՝ Խրիմյան կը հրաժարի պատրիարքութենե (1873–ին)՝ իր 3 օգոստոս թվակիր հրաժարականը սկսելով սա հատկանշական խոսքերով.

«Իմ հրաժարելուս առաջին պատճառ ձանձրույթյուն և հուսահատություն է. գործելու համար եկա և բան մը չգործեցի»:

Ահա՛ հեղափոխականը, ահա՛ ընկերային բարենորոգիչը, ահա՛ ժողովրդի դաստիարակը Խրիմյանի մեջ:

Ամեն բանե առաջ, ամեն բանե վեր՝ Խրիմյան հայ ժողովուրդի մեծ դաստիարակն է:

Հասկանալու համար Խրիմյանի՝ մեծ դաստիարակի մոգական ուժը ու այն խոշոր ազդեցությունը, զոր ունեցած է, հարկ է հիշել իր մեկ ուրիշ հիմնական հատկանիշը, հատկանիշ, որ Խրիմյանին կու տա առաքյալի շունչ, մարդոց հոգիներեն ներս թափանցելու ու փոթորկելու անսահման կարողություն: Այդ իր բանաստեղծի զգայնությունն է, որ քիչ մանկավարժներու տրված է:

Խրիմյան մանկավարժության մեջ չէ, որ բանաստեղծ է, որովհետև երբեք իր դատողությունն ու մտածումը չեն շեղիր իրենց բնական ուղիեն, և բանաստեղծական թռիչքը երբեք չ՚այլափոխեր իր մտքին ճշգրտությունը ու հստակությունը:

Խրիմյան, սակայն, մեծ դաստիարակ մըն է, որ իր ձեռքին մեջ ունի բացառիկ միջոց մը ևս, մոգական գործիք մը ևս՝ դաստիարակչական խոսքը ավելի ջերմ, ավելի թափանցող, ավելի մատչելի ու հրահանգիչ դարձնելու համար:

Արվեստագետի թռիչքն ու առաքյալի շունչն են, որ իր խոսքը կը դարձնեն տաք ու գունավոր, իր խրատը՝ համոզիչ, իր պատվերը՝ հրահանգիչ, իր սաստը՝ ազդու:

Թո՛ղ բնավ տարօրինակ չթվի, եթե ըսենք, թե ապագային դեռ շատ պիտի խոսվի ու գրվի Խրիմյանի մասին ո՛չ որպես «պատմական դեմք», այլ որպես դաստիարակը հայ ժողովուրդին: Պիտի խոսվի, մանավանդ, անոր այժմեության մասին:

Եվ, գուցե, պիտի մնա ընդմիշտ «այժմեական», որպես Հայրը հայ մանկավարժության:

***

Սույն աշխատությունը, զոր կը հրատարակենք, զուտ գիտական գործ մը չէ բնականաբար: Մեր նպատակն է երևան հանել ու համադրական ձևով մը ներկայացնել Խրիմյանի դաստիարակչական մտքերը՝ տալով անոնց այն «այժմեականության» արժեքը, որուն իրապես արժանի են անոնք:

Խրիմյանի մանկավարժական գրականությունը մեզ հմայեց առաջին էջերեն իսկ, ու հափշտակությամբ կարդացինք անոր ամբողջական գործը: Դաստիարակչական երկեր կը նկատենք մանավանդ հետևյալ գործերը, զոր մեր ձեռքին տակ ունեցանք. «Պապիկ և թոռնիկը», «Դրախտի ընտանիքը», «Սիրաք և Սամվելը» ու իր շրջաբերականներն ու կոնդակները:

Դժբախտաբար, մեր ձեռքին տակ չկրցինք ունենալ իր բոլոր շրջաբերականներն ու կոնդակները և ոչ ալ իր հոդվածները, զոր զետեղած է իր ժամանակի մամուլի էջերուն մեջ: Այս բոլորը, բնական է, պետք է անբաժան մասերը նկատել իր դաստիարակչական գրականության, և հետևաբար մեր ներկա աշխատությունը կը տուժե այն չափով, ինչ չափով որ այդ գրությունները ևս անհրաժեշտ էին մեր Մեծ Դաստիարակին ամբողջական պատկերը մեր աչքերուն առաջ ունենալու համար:

Կարդալով Խրիմյանի դաստիարակչական գրականությունը՝ մեզ տարօրինակ թվաց, թե ինչպե՞ս է, որ ցարդ, իր մասին գրված գիրքերուն մեջ, համեմատաբար շատ քիչ կը խոսվի և կամ բնավ չի խոսվիր դաստիարակչական տեսակետեն:

Ինչքա՜ն շատ հեռացուցեր ենք մեր աչքերուն առջևեն այն զմայլելի հայելին, որ Խրիմյանի գործն է:

Խրիմյան նախազգալով այդ՝ հետևյալը կ՚ըսե մեր ժողովուրդին.

«Ժողովուրդ հայոց, քեզ համար նկարեցի Դրախտի ընտանիքը. կ՚աղաչեմ, որ իբրև հայելի, դնես աչքիդ հանդեպ, հայիս ու տեսնաս հիվանդ ու հյուծյալ կերպարանքդ» *(«Դ. Ը.»)*:

Ու արդյոք երբ և իցե մեր ժողովուրդը ուշի-ուշով և լրջորեն նայա՞ծ է այդ աստվածային հայելիին մեջ:

Մենք կը տարակուսինք:

Այս փաստը և ուրիշ նմաններ մեզ այն համոզման կը բերեն, թե մենք՝ այսօրվաններս, չենք ճանչնար մեր մեծ արժեքները կամ սխալ ու կիսկատար կերպով կը գնահատենք զանոնք:

Ո՞վ գիտե, դեռ ի՛նչ մտածումի ու զգացումի գոհարներ կան մեր հազարամեայ մատենագրության մեջ, որոնք թաքնված կը մնան մոռացության փոշիին ներքև:

Մեր նոր սերունդներու սեպուհ պարտականությունն է, ամեն բանե առաջ, այդ անցյալը պրպտել: Նախ մեր արժեքները պետք է գտնել, անոնցմով հաղորդվիլ, անոնցմով բեղմնավորել մեր հոգին, անոնցմով կառուցանել մեր գիտակցությունը, ու այնպես ծնիլ մշակույթի աշխարհին մեջ:

Որովհետև, հիրավի, կը բավե, որ ուշադրությամբ և համբերությամբ մոտենաս այդ արժեքներուն, ու ինչպես մոգական գավազանով մը առասպելական ժայռին զարկած ըլլայիր, հանկարծ կը բացվի ոսկիի ակը, ուրկե կենաց ջուրը կը ժայթքի հորդառատ:

Այսպես է Խրիմյանի դաստիարակչական գործը: Ահա թե ինչո՛ւ այս աշխատության հեղինակը կ՚ուզե մեր բոլորիս գիտակցության մեջ արթնացնել սեր և հետաքրքրություն դեպի այդ գանձը, որպեսզի երբե՛ք, երբե՛ք չմոռանանք այն ոսկի խոսքերը, այն ոսկի մտքերը, որ մեզի՝ հայ ժողովուրդին համար գրված են մեծ մարդու մը և մեծ հայու մը կողմե, որուն նմանը շատ քիչ կ՚ունենա որևէ քաղաքակիրթ ժողովուրդ:

Գիտենանք մեր մեծ արժեքները ճանչնալ ու հպատակիլ անոնց, որպեսզի մեր ամբողջական ինքնությունը պահենք: Խրիմյան ինք ալ մեզ կը թելադրե.

«Հայրական ու կրթական դասերս խնամքով պահե հուշդ, միշտ հիշե, թե ես քանի՞ խնամով ու սիրով խոսեցա քեզ. ես քու սերմնացան մշակն եմ, որդյակ, այս իմ սև-սև գրեր, իբրև մի-մի ցորենահատիկ, սրտիդ և պարարտ երկրին վրա ցանեցի այժմիկ. երկինք յուր սրտով և անձրևով բուսուցանե, և Աստված աճեցուցանե» *(«Ս. Ս»)*:

***

Խրիմյան սովորական մարդ մը չէ և ոչ ալ սովորական մանկավարժ մը: Առանց վարանումի կրնանք ըսել, թե ան մեծագույն դաստիարակներեն մին է ոչ միայն հայկական չափերով, այլ անոր գործը կրնա փառավոր տեղ մը գրավել աշխարհի մեծ մանկավարժներու շարքին, որպես ինքնատիպ ստեղծագործ:

Դաստիարակ Խրիմյանը համեմատելով կարդ մը համբավ ունեցող մանկավարժներու հետ, չես կրնար չտեսնել ու չհաստատել, թե անոնք ինչքան փոքր կը թվին հայ դաստիարակին առողջ մտքերուն ու հզոր շունչին քով:

Մենք վստահ ենք, թե մեր այս համեստ աշխատությունը առաջին փորձերեն մին պիտի ըլլա միայն, ու հետագային ուրիշներ պիտի գան, պիտի տքնին դեռ վարպետին գործին վրա՝ վերջին խոսքը ըսելու համար Խրիմյանի մասին, որպես հայ ժողովուրդի դաստիարակ:

Խրիմյանը ուսումնասիրել ու զայն սիսթեմաթիք վերլուծման մը ենթարկել դյուրին գործ չէ:

Դժվար է Խրիմյանի մտածումը «սիսթեմի» մը վերածել, նախ, որովհետև ինքը՝ գործը, ձևականորեն սիսթեմատիք չէ, «դրություն» մը չէ: Խրիմյան տեսակետներ, սկզբունքներ չունի, անոր համար անջատ հարցեր, խնդիրներ գոյություն չունին: Մտածումը երկրաչափական չէ, ձևական օրենքներ չի ճանչնար, ոչ ալ չոր տրամաբանական դասավորումներ:

Խրիմյան կը մտածե միաժամանակ մտքով ու սրտով ու կը խոսի բանաստեղծի զգայնությամբ՝ պատկերներով ու գույներով և առաքյալի շունչով:

Անոր գաղափարները հատանված չեն (fragmentat), այլ ամբողջական. ամեն մեկ մասնիկ-գաղափարի մեջ իր ամբողջական մտայնությունը կը ցոլա:

Խրիմյանի մտածելակերպը վերլուծական (analitic) չէ, անոր միտքը կը գործե ոչ թե տարրալուծելով, այլ համադրելով:

Զինքը առաջնորդողը վերացական գաղափարները չեն, այլ կոնկրետ իրականությունները՝ այնպես, ինչպես անոնք կան իր զգայարանքներուն, իր սրտին ու դատողության առաջ:

Վերև ըսինք, թե Խրիմյան կը մտածե ոչ միայն մտքով, այլ նաև սրտով. պետք է ավելցնենք՝ ան կը մտածե նաև իր զգայություններով: Խրիմյան խիստ առողջ մարդ մը եղած է՝ սուր ու կենդանի զգայարանքներով, որոնցմով ճանչցած է իր շրջապատը, բնությունը, մարդիկ և դեպքերը: Մտածողներ կան, որոնք իրենք իրենց մեջ փակված՝ կը խոկան ու կը ստեղծագործեն: Խրիմյան այդ դասակարգին չի պատկանիր. անոր ամբողջ ղղային դրությունը մեկ–մեկ բաց դուռներ են, ուրկե իր ներսը կը թափանցե ամեն ինչ: Արտաքին աշխարհեն ներս խուժած այդ տվյալները, սակայն, իրարմե անջատ տարրեր չեն մնար, այլ Խրիմյանի հոգիին մեջ այդ բոլոր զգայական ու գաղափարական տվյալները իրար կը շաղախվին ինքնուրույն ձևով, ու անոր գիտակցության մեջ կը ստեղծվին համադրական իրականություններ՝ ներդաշնակ, գունավոր, իրական ու կենդանի:

Ահա թե ինչո՛ւ համարձակ փորձ մըն է այս հանճարեղ մարդուն գործը տարրալուծել, անոր մտքերը դասավորել ու սխեմատիք ձևով զանոնք ներկայացնել:

Այդ պատճառով իսկ մենք չփորձեցինք զուտ սխեմատիք, վերացական դասավորումներու ենթարկել Խրիմյանի դաստիարակչական մտքերը, այլ որոշ չափով հետևեցանք հեղինակին համադրական մտածումին՝ առանց շատ միջամուխ ըլլալու անոր ընթացքին:

Այս ձևով, կը կարծենք, թե ավելի կենդանի ու հարազատ ձևով կրցինք ներկայացնել Խրիմյանի միտքն ու ոգին, իսկ մյուս կողմե՝ ավելի մատչելի դարձուցինք զանոնք մեր ընթերցող հասարակության:

1942, սեպտեմբեր,
Պուքրեշ

Ա.
ԽՐԻՄՅԱՆ ՈՐՊԵՍ ՄՏԱԾՈՂ

Ժողովուրդի դաստիարակի նպատակն է հեղաշրջում առաջ բերել այդ ժողովուրդի կյանքին մեջ դաստիարակչական աշխատանքով, կրթական միջոցներով՝ բարձրացնելու համար ժողովուրդը դեպի ավելի լուսավոր ու ազատ գիտակցության մը, դեպի ավելի բարոյական ըմբռնումներու հորիզոնի մը, դեպի մշակութային ավելի բարձր արժեքներու հասկացողության և նաև՝ դեպի տնտեսական ավելի բարգավաճ ու ընկերային ավելի արդար վիճակի մը:

Խրիմյան իր դաստիարակչական գրականության մեջ ոչ մեկ տեղ չ՚առաջադրեր իրեն այս նպատակը պարզ ու լրիվ կերպով մը, որովհետև ինչպես ըսինք արդեն, անոր մտածումը վերացական տվյալներով չի գործեր: Մենք, սակայն, շատ զորավոր կը զգանք իր՝ հայ կյանքը հեղաշրջելու բուռն տենչը, իր գրածներուն առաջին էջեն մինչև վերջինը: Միշտ, ամեն տեղ, Խրիմյան կը մտածե, կը գրե, կը խոսի ու կը գործե դաստիարակի մը հարազատ միտումովն ու տենդովը:

Ժողովուրդի դաստիարակի մը մտքերը, ծրագիրներն ու մտավոր և հեռավոր նպատակները, բնական է, սերտ կապ ունին տվյալ ժողովուրդին պատմական, ընկերային, մշակութային զարգացման աստիճանին հետ: Կարելի է ըսել, թե ամեն ընկերություն իր դաստիարակը ունի՝ համաձայն իր պահանջներուն ու հեղաշրջման ձգտումներուն ու հնարավորություններուն:

Հետևաբար, որևէ մեծ դաստիարակի մտքերը քննելու ու գնահատելու առթիվ, երբեք պետք չէ մոռացության տանք

տվյալ ժողովուրդի ընկերային, տնտեսական ու մշակութային մակարդակը:

Մտքերը, գաղափարները, բարենորոգման ծրագիրները բացարձակ արժեքներ չեն, այլ զանոնք պետք է դատել պատմական զարգացման տվյալ պայմաններու առնչությամբ:

Խրիմյանի դաստիարակչական մտքերեն ոմանք, գուցե, մեզի հետադիմական թվին, սակայն իր ժամանակին համար և, մանավանդ, հայ գավառական իրականության համար անոնք ոչ միայն հառաջդիմական են, այլ ուղղակի հեղափոխական:

Խրիմյանի շրջանին, այսինքն՝ ԺԹ դարու երկրորդ կեսին, հայ ժողովուրդը բաժանված էր երկու մասերու, երկու դասակարգերու: Հայ գյուղացի, գավառացի ժողովուրդը, որ ստվար մեծամասնությունն կը կազմեր, և հայ քաղաքացին, հայ քաղքենի դասակարգը, որ համախմբված էր մանավանդ մեծ քաղաքներու մեջ ու կը զբաղեր վաճառականությամբ ու արհեստներով:

Ուրիշ դասակարգություն չուներ: Ո՛չ ազնվականություն՝ եվրոպական իմաստով, և ո՛չ ալ կղերը առանձին դասակարգ մը կը կազմեր:

Կղերը ավելի գյուղացի էր:

Խրիմյան, սակայն, այս ընկերային շերտավորման մասնավոր ուշադրություն չի դարձներ և ոչ ալ ընկերային դասակարգային զարգացման:

Նախ՝ որովհետև ինքը՝ Խրիմյան, գյուղացի մըն է ու իր դասակարգի մտային աշխարհեն դուրս չ՚ելլեր կամ չ՚ուզեր ելլել:

Եվ երկրորդ՝ որովհետև հայ կյանքը այդ հին Թուրքիո հետադեմ մթնոլորտի մեջ քարացած վիճակ մը ունի՝ վերջին դարերու ընթացքին անփոփոխ և անհաղորդ՝ քաղաքակիրթ աշխարհի առաջադեմ շարժումներուն ու ընկերային շերտավորումներուն:

Հայ գյուղացին կ՚ապրի գրեթե միջնադարյան դրության մը մեջ, իսկ քաղքենի առևտրական դասը՝ նույնպես:

ԺԹ դարու երկրորդ կեսին է, որ հայ կյանքն ալ կը սկսի շարժիլ, հույլ մը լուսավորյալ երիտասարդ մտավորականներու նոր գաղափարներու ազդեցության տակ:

Արևմտահայ վերածնունդն է:

Ու այդ վերածնունդի մեծ դեմքերեն ու մտքերեն մին կը հանդիսանա Խրիմյանը, որպես ժողովուրդի դաստիարակ:

Ըսինք, թե Խրիմյան գյուղացի է ու գյուղացի ժողովուրդեն զատ ուրիշ դասակարգ չուզեր տեսնել: Քաղքենի դասը իրեն համար բուն հայ հողեն տրված դաս մըն է՝ անհարազատ ու մոլորած: Ճիշդ է, հոս–հոն խրատներ ու պատվերներ կու տա նաև հայ քաղաքացի դասակարգին և կ՚ընդունի անոր գոյության իրավունքը, բայց, կարծես, այդ կ՚ընե բռնազբոսիկ կերպով, տեսակ մը հարկադրանքի տակ: Իր ամբողջ մտահոգության առանցքը հայ գավառացին է, և եթե ուժ ունենար, բոլոր մեծ քաղաքներուն հայ քաղքենի դասակարգը բռնի պիտի քշել տար գյուղ՝ հող մշակել սորվեցնելու համար:

Խրիմյան չ՚ուզեր տեսնել և հասկանալ, թե ընկերային շերտավորման ընթացքը անիվ մըն է, որ կարելի չէ ետ դարձնել:

Ժողովուրդի մը դաստիարակը, որպեսզի իր նպատակին հասնի, անհրաժեշտորեն պետք է հստակ ու որոշ ըմբռնում մը ունենա նախ մարդու մասին՝ առհասարակ, երկրորդ՝ մարդկային ընկերության մասին, և երրորդ՝ կրթական ու գիտական միջոցներու ուժին ու արժեքին մասին:

ա. Ըմբռնում մարդու մասին

Խրիմյան շատ իրապաշտ կերպով կ՚ըմբռնե մարդը իր բնությամբ ու էությամբ:

Հակառակ որ կրոնական մըն է, հակառակ որ ռոմանթիք շրջանի մը կը պատկանի ու զգայապաշտ մթնոլորտի մը մեջ կը շնչե ան, մարդկային բնության իրականությունը կը տեսնե իրապաշտի մը պես, ու հաճախ՝ գիտնականի մը պես: Երբ Խրիմյան կ՚ըսե՝ «Մարդվույն սիրտ իբրև երկծորակ մի աղբյուր է. մերթ չարություն կը բխի և մերթ՝ բարություն», ան գիտա-

կան ճշմարտություն մը կը պարզե բանաստեղծական պատկերով մը:

Խրիմյան միամիտ լավատես մը չէ ուրեմն, ինչպես ուրիշ մանկավարժներ:

Եթե անոր ըմբռնումը համեմատենք, օրինակ, Բեստալոցցիի մը կամ Ռուսոյի մը ըմբռնումներուն հետ, պիտի հաստատենք, թե շատ ավելի արդիական ու գիտական հիմունք ունի Խրիմյանինը:

Խրիմյան չի հավատար, ինչպես Ռուսոն կը կարծե, թե մարդ ի բնե բարի է, և ընկերային կյանքն է, որ զայն խաթարած ու այլասերած է:

Ավելին, ան կը խորհի արդի գիտունի մը պես: Առանց գիտական հետազոտությանց, ան բնազդով ու խորը թափանցելու իր կարողությամբ, մարդուն մեջ կը տեսնե բոլոր անոր հոռի կողմերը, որ ժառանգաբար եկած ու նստած են անոր մեջ, անհիշատակ ժամանակներե ի վեր: Եվ իսկական դաստիարակի մը ցավով կը հաստատե թե՝

«Մարդ ի բնե չարին հակամետ է: Կը ճանաչե զբարին, բայց ինքն դեպի չարն կը հակամիտի»:

Ասիկա նախադասություն մըն է, որուն նմանը քիչ կարելի է գտնել միջազգային գրականության մեջ իսկ:

Խրիմյանի իրատեսությունը ավելի առաջ կ'երթա և ո՛չ միայն մարդուն բնության մասին: Այն իրապաշտ է նաև դաստիարակչական գործին առջև կանգնած դժվարության նկատմամբ: Ան գիտե, թե մարդը կարելի չէ դյուրավ հեղաշրջել, ան գիտե, թե առհավական արմատները, զոր մարդ կը ժառանգե իր նախնիքներեն, չե՛ն անհետիր, չե՛ն կերպարանափոխվիր մեկ օրեն մյուսը: Ան գիտե, թե պետք կա երկար, երկա՛ր մշակումի, սերունդե–սերունդ հետապնդված մշակումի, որպեսզի մարդ բարձրանա իր «երկրաքարշ» վիճակեն:

Այդ գործի դժվարության ակնարկելով է ահա, որ Խրիմյան կը գրե.

«Որչա՜փ դժվարին և անհնարին է կապարի նման երկրի վերա ծանրացած, երկրաքարշ մարդ այնչափ գերագույն բարության վերածել և կարծել, թե նա կարող է բարի լինել, ինչպես է Աստված և հրեշտակ»:

Մարդու մասին այս իրապաշտ ըմբռնումն է ահա, որ կը կազմե իր մտածման հիմունքը:

բ. Ըմբռնում ընկերային կյանքի մասին

Այստեղ ալ Խրիմյան նույն իրատես մտածողն է:

Մարդկային հավաքական կյանքը ևս իրեն համար և՛ լավ է, և՛ չար: Ընկերությունը բնական կերպով ստեղծված իրականություն մըն է, զոր ոչ ոք չէ շինած լավ կամ վատ, արդար կամ անարդար, ազատ կամ ստրկական: Ինչպես մարդ անհատը, ընկերությունը ևս, ընկերային կյանքը ևս «մի խառնուրդ է. չարն ու բարին միասին կ'ապրին, ինչպես ցորենն ու որոմն ի միասին կը բուսնին և կ'աճին» *(«Պ. Թ.»):*

Ուշադրություն դարձնենք. չարը ոչ միայն «կ'ապրի», *այլ նաև՝* «կ'աճի»: *Ահա մեր հավաքական կյանքի ողբերգությունը, զոր Խրիմյան հստակորեն կը տեսնե ու կը խոստովանի հանդարտությամբ:*

Հանդարտությամբ, որովհետև ան չ'ողբար, չի գանգատիր այդ ճակատագրեն, չի հուսահատիր այդ վիճակեն, այլ կը նմանի այն մշակին, որ նախ՝ կ'ուզե իրապես ճանչնալ իր մշակելիք հողը այնպես, ինչպես բնությունն է զայն ձգեր իր բոլոր թերություններով, առավելություններով ու հնարավորություններով: Եվ ստուգել հետո այդ բոլորը, ան՝ գիտությամբ զինված ու աշխատանքի սիրով տոգորված կը սկսի մշակել ու ազնվացնել այդ հողը, զատել սերմը, սերմանել ու հետո խնամել այն, ինչ որ կը բուսնի՝ լավագույնը հնձելու համար:

Խրիմյանի ընկերային այլ և այլ խնդիրներու մասին ունեցած հայացքները ավելի լավ հասկանալու համար, պետք է միշտ նկատի ունենանք անոր մտածելու ու իր միտքը արտահայտելու հստակ ձևը, որուն մասին խոսեցանք մեր հառաջաբանին մեջ:

Խրիմյան վերացականորեն չի մտածեր, իրեն համար խնդիրները տիեզերական ձևով չեն դրվիր, այլ ան իր շրջապատի, իր միջավայրի մարդն է՝ կանգնած հայ աշխարհի իրականության առաջ, ու կը զգա, թե իր կոչումը այդ աշխարհի մեջ գործելն է, կյանքը հեղաշրջելն է:

Խրիմյանի աշխարհայացքը ևս, ուրեմն, հայ ժողովրդի կյանքի պայմաններեն անդին չ՚անցնիր:

Անոր տևական, զորավոր մտահոգության առարկան միայն և միայն հայ ժողովուրդն է:

Ամեն բանե առաջ, ան իր ժողովուրդին կը ցանկա ազատություն:

Կը զգա, որ առանց այդ պայմանին այլևս անհնար է, որ հայ չինականը իր կյանքը շարունակե իր հայրենիքին մեջ:

Խոսքը քաղաքական լայն ազատության մասին չէ դեռ: Ան կը պահանջե, որ նախ՝ կյանքի ապահովություն ստեղծվի, ապա՝ աշխատանքի արդյունքը ազատորեն վայելելու հնարավորություն, և, մանավանդ՝ կրթելու, քաղաքակրթության բարիքներեն օգտվելու ազատություն:

Իր «Ժամանակ և խորհուրդ յուր» գործին մեջ ահա թե ի՛նչ կը խորհի Խրիմյան այս խնդրին մասին:

«Քո մահն ու վախճան մոտ էր. անագան, ուրեմն, զգացին խորհրդական բժիշկներդ, աճապարեցին դեղ և դարման տանիլ քեզ համար, որպեսզի հնացյալ ծերությունդ երիտասարդանա, և դու նոր կյանքով վերածնիս:

Քո դեղն ու դարման ի՛նչ է, գիտե՞ս, ո՛վ ստրկացած, մահամերձ ժողովուրդ. ազատություն և քաղաքկրթություն է, և այն է միակ, որ պիտի բառնա գլխեդ կոփահարիչ հարվածներ, որ քո ազատ ուղեղը ճնշելով ցնդեց. ո՛հ, չթողուց երբեք, որ դու ազատ խորհիս, ազատ խոսիս, ազատաբար ճանչնաս քո պարտքն և քու իրավունք, զոր կը սահմանադրե անբռնադատ օրենք»:

Խրիմյանի հայ աշխարհը գավառն է, հայ գյուղացիին աշխարհը: Անոր համար գյուղն ու գյուղացին ոչ թե հայ ժողովուրդին մեկ մասն են, այլ բուն ինքը ժողովուրդը իր ամբողջության մեջ, իր հարազատության ու լրիվ արժեքին մեջ: Նույնիսկ, կարելի է հստակորեն նկատել Խրիմյանի արհամարհանքը քաղաքի ու քաղքենի դասին նկատմամբ:

Խրիմյանի համար կա մեկ հարստություն՝ աշխատանքը, և մեկ ազնվականության ապացույց՝ բարի քրտինքը չինականին արդար ճակտին վրա:

Խրիմյան կը գրե.

«Չի մարդն այս աշխարհիս վերա գործավոր մշակ մի է, քանի որ կյանք ունի, աշխատություն՝ իր բնական ու բարոյական պարտքն է»:

Իսկ ուրիշ տեղ մը՝ «Գիտցիր դու, որ Աստված զմարդիկ հավասար ազնվական ստեղծեր է և նույնիսկ կը համարի. ոչինչ զանազանություն չկա ազնվականին և ժողովուրդին միջև («Ս. Ս.»):

Եվ նաև՝

«Բոլոր երկրագնդիս երեսը բնակող մարդկային ընկերության ամենամեծ մասն միշտ ժողովուրդ է. և նա է ծներ ամեն կարգի ազնվականաց և իշխանավորաց դասն. կայսր, թագավոր, իշխան, պայազատ՝ ամենքն ևս ժողովուրդի զավակներն են, զի ժողովուրդն է բուն արմատ և մայր ամեն կարգի և վիճակի մարդոց:

Աշխարհիս մեծագույն, շինարար մասն ժողովուրդն է, դաշտային գյուղերու բնակիչ աշխատավոր և հաց վաստակող, մշակ ժողովուրդն է. նմանապես, քաղաքներու բնակիչներն մեծ մասամբ ժողովուրդն է: Խիստ փոքրագույն մասն կը կազմեն ազնվական կարգն, որք, ընդհանրապես, մայրաքաղաքաց և քաղաքներու մեջ կը բնակին:

Ժողովուրդ մարդկային ընկերության մեջ բուն մարդոց կյանք և պիտույք կազմող և պատրաստող ամենախոր և պիտանի, օգտակար մասն է»:

Եվ սակայն՝

«Ժողովուրդի մեծագույն մասն երկրիս վրա միշտ կարոտ ու չարչարված կյանք կը վարե: Նա ոչ միայն արևելքին մեջ, այլև արևմտյան քաղաքակրթության աշխարհին մեջ, ուր լույս տարածված է, տակավին ժողովուրդին մեծ մասն ծանր աշխատության և կարոտության մեջ կը մաշի: Ես լսեր եմ և գիտեմ, թե Եվրոպիո գործավոր մշակներու կյանքը շատ դառն է, որոց ապրուստ միայն օրական պարեն ու հացն է, գործավորին համար գանձ ու ապագա չկա, գործավոր կը մնա, և գործարանապետ անհուն հարստության տեր կը լինի:

Այս աշխարհիս դատաստանն է՝ ո՛վ որ ոսկեգանձ ունի, ո՛վ կալվածատեր է, ո՛վ որ իշխան է և կը տիրե, նա աշխարհիս աչքին դատաստանով ազնվական կը համարի:

Իսկ արդար վաստակով և ուղիղ աշխատությամբ հարստացած ազնվականներ շատ հազվագյուտ են աշխարհիս վերա: Եթե որոնենք այսպիսիներ, կը գտնենք առավել վաճառական, արհեստավոր և երկրագործ կարգերուն մեջ. իրոք, մեծահարուստ ազնվական լինելու համար պետք չէ անգլիացի լորտերուն չափ անհուն ոսկի և հող ունենալ. վասնզի ճշմարիտ ազնվականության հատկանիշ միայն հողն ու ոսկին չեն, որ սոսկ նյութական հարստություն կը կազմե, այլ առավել մեծ է հոգվույն և բարուց ազնվականություն, որ բարոյական առաքինության օրենքներ կը պահե, որ ժողովրդասեր է և ամբարհավաճ լինելով՝ չի՛ մեծամտիր, որ ագահելով, ժլատելով՝ ձեռք չի՛ կծկեր, այլ յուր հարստության ոսկին հասարակաց բարվույն համար առատ կը սփռե. որ առանց փառասեր ոգվոց կը մեծագործե ուղիղ և բարի նպատակով ժողովուրդի հառաջադիմության համար, որ լուսո տուներ ու դպրոցներ կը կանգնե, գրատուններ կը հաստատե, հեղինակ-մատենագիրներ կը քաջալերե, գործարաններ կը բանա, ազգին աղքատ և պարապ որդիներուն համար գործ կը գտնե և այլն:

Իսկ անիրավությամբ և զրկանոք հարստացած ազնվականաց գործն ի՞նչ է:

Այդպիսի սուտանուն ազնվականաց ճանապարհ շատ բազմադիմի է աշխարհիս վերա: Ոմանք հարստահարելով, հափշտակելով կը հարստանան, ոմանք դիպվածով կը հարստանան, զոր բախտ կը համարեն, և հանկարծ, մի ավուր մեջ մեծնալով՝ ազնվական կը դառնան. միայն թե այն հարստության գանձեր, զոր մարդ առանց աշխատության, դյուրությամբ կը գտնե, շատ բնական է, որ զայն դյուրությամբ կը կորուսանե:

Մի՛ կարծեր, թե ընդարձակ հողն ու ոսկին և անուն զմարդն ազնվական կ'անեն, եթե նորա ոգին ընչաքաղցությամբ ստրկացած է և զուրկ մեծանձնական առաքինութենեն: Կան մարդիկ, որք թեպետ մեծահարուստ չեն, այլ իրենց չափավորության մեջ առավել կը մեծագործեն, քան համբավյալ ազնվականն:

Իսկ դու, անանուն որդյակ իմ, որ ազնվական չես ծներ, այլ շինական ժողովուրդին մի հասարակ զավակն ես, ջանացիր փոքրկությանդ մեջ փոքրիկ ազնվական լինել. ո՛չ գանձ ունես և ո՛չ մեծ կալվածատեր ես, որ ոսկվով և հարստությամբ մեծագործես. բայց դու գրով, ուսումով և կրթությամբ մեծագործե» («Ս. Ս.»):

Զարգացնելով նույն մտածումը՝ Խրիմյան կը հասնի ավելի բուռն եզրակացություններու:

«Արդար է այն մարդ, որ միայն յուր քրտանց հացով կ'ապրի. անիրավ է այն մարդ, որ, առանց աշխատության, ուրիշի քրտանց հաց կ'ուտե լի զրկանքներով. և ո՞վ կարող է չափել այն բազմադիմի զրկանքներ, որ կը լինին արևուն տակ, աշխարհիս վերա, և զրկյալներուն դասը ամենամեծ մասն կը կազմե» *(«Պ. Թ.»):*

Մեր ընթերցողին ներկայացուցինք այս երկար հատվածը՝ տալու համար Խրիմյանի դատելու կերպը և, մանավանդ, այդ դատումի խստությունը՝ մարդը մարդուն կողմեն շահագործվելու դրության դեմ:

Կարդանք նաև հետևյալ տողերը, ուր Խրիմյան ի հայտ կու գա որպես ծայրահեղ ու արմատական հեղափոխական՝ քրիստոնեական հանդարտ խրատի մը ձևին տակ:

«Եթե մարդն ինքնին ազատ իրավունք ունի յուր տնկած և դարմանած պարտեզին ծառերն հատանել, քանի՞ առավել աշխարհիս դրախտ տնկագործող Արարիչը տիրապես իրավունք ունի հատանել այն ապարդյուն մարդատունկեր, որք ոչ միայն հակառակ կը վարին տիրական վճռույն դեմ, այլ և տիեզերքի բնական օրինաց դեմ շատ մեղապարտ կը լինի մարդ, երբ կը դիտե ու կը տեսնա, որ երկինք ու երկիր կը շարժին և կը գործեն անդադար՝ միշտ արդյունավորելով այս մեծաշահ դաստակերտ թե՛ ի պետս մարդույն և թե՛ ի փառս բարեխնամ Արարչապետին» *(«Ս. Ս.»):*

Ընկերային կյանքի շերտավորման մասին Խրիմյանի ըմբռնումը նույնպես իրապաշտ է կամ, եթե կ'ուզեք՝ բնապաշտ. կ'ընդունի, թե գոյություն ունեցող դասակարգային շերտավորումները բնական են, ու բնության օրենքն իսկ կը հարկադրե այդ դրությանը:

«Մարդոց կյանքն անհավասար է. որն հարուստ է, որն աղքատ է, որն իշխան է, որն հասարակ ժողովուրդ է, որն տեր է, որն ծառա է, որն տանուտեր է և որն մշակ է: Ահա այս անհավասարությունն է, որ մարդիկ իրարու հետ կը կապե և մի ընկերություն կը կազմե. ժողովուրդ իշ-

խանին հետ կը կապե, ծառայն՝ տիրոջ հետ, աղքատն՝ հարուստին հետ» *(«Պ. Թ.»)*:

Սակայն, անշուշտ որ, այս ընկերային, բնական դրութեան մեջ Հայրիկի ամբողջ սիրտը աղքատին, չինականին, «հասարակ ժողովուրդի» կողքին է անվերապահորեն:

Այս պատճառավ է, որ Թերզիպաշյան իր «Արծիվը իր բույնին մեջ» գրքին մեջ կը նկատե.

«Հայրիկ առհասարակ չէր սիրեր հարուստները: Հարուստին հետ ան իր կաշիին մեջ չէր: Ոչ մեկ հարուստին հետ ան մտերմության կապ ունեցած էր: Ընկերվարական մըն էր ան Քրիստոսի տեսակեն: Հարուստը անոր համար մեղավոր մըն էր»:

Բայց առավել ևս հատկանշական են հետևյալ տողերը, զոր Խրիմյան ինքը կը գրե և որոնք այնքան հստակորեն կը ցուցնեն անոր մտածումին խորքը. «Լիկուրգոս Սպարտացի՝ մեծ օրենսդիր, ուզեց այդ բնական օրենքին դեմ կովիլ ու ջնջել զայն. օրենքով ոսկին և արծաթ հալածեց յուր աշխարհեն, որպեսզի ագահության ընչաքաղցությունը բառնա հարուստներու սրտեն, և հասարակաց սեղան հաստատելով օրինադրեց, որ աղքատ և հարուստ միևնույն սակավապետ սեղանին վրա հավասար ընկերությամբ ուտեն զիրաց: Օրենք դրավ, որ հարուստները հայրենի կալվածները երկրի ընդհանուր ժողովուրդի վերա, իբրև հավասար ժառանգություն, բաժին լինին. և այսպես, բոլոր սպարտացի ժողովուրդ, իբրև մի ընտանիք և գերդաստան կազմելով՝ կը հավատար այդ բանավոր օրենսդիր, թե կարող եղև անհավասարության օրենքը իսպառ եղծել յուր աշխարհեն: Ուստի մտաբերեց երթալ ի Դերբիս, պատգամ ընդունիլ, թե արդյոք յուր օրենքներ դիցն առաջ հաճոյ ելեր ե՞ն . ու երբ իմացավ թե խիստ հաճելի թվեր են դիցն անդ, կամակար մեռավ, որպեսզի յուր օրենքը նվիրագործելով՝ կենդանի պահի աշխարհի մեջ:

Երանի՜ թե Լիկուրգոսի նման, Անգղիո մայրերը նոր օրենսդիր մը ծնեին, որ ելներ, լորտերուն աշխարհագրավ կալվածներ հավասար բաժներ մշակ ժողովուրդին վրա, ինչպես Լիկուրգոս, որ օր մը, հնձոց ժամանակ, տեսնելով արտերուն մեջ հավասարաբաժին ցորենի խուրձեր, ասաց. «Ահավասիկ եղբարցս՝ հավասար ժառանգություն»: Թերևս, կ'ակնարկեր հանճարեղ օրենսդիր, թե այլևս կռվելու, զրկելու, բաժանելու պատճառ չէ մնացեր» *(«Ս. Ս.»)*:

Նկատի ունենալով Խրիմյանի բարձրաստիճան կղերական հանգամանքը, այդ օրերուն հայ ժողովուրդի տնտեսական–ընկերային հետադեմ վիճակը ու Թուրքիո քաղաքական մթնոլորտը, բնականաբար, կարելի չէր ավելին սպասել, ինչ կը վերաբերի ընկերային հարցերուն:

Կրկնենք սակայն, որ Խրիմյանի համար գյուղն ու գյուղացին են հայ աշխարհի կեդրոնը: Հոն, գյուղի մեջ է դրախտը, ինչպես և բուն դրախտն ալ, իրեն համար, կրկին, տեսակ մը գյուղ է, արտ է:

«Պապիկ և թոռնիկի» մեջ, երբ պապիկը կը մեռնի, անոր վերջին աղոթքը հետևյալն է.

«Ուրեմն, կ'աղաչեմ, բարի հրեշտակ, ինձ համար բարեխոս եղեք. ես տուն, օթևան չեմ ուզեր, ես դաշտի հողագործ մարդ եմ, աշխատության սորված. երկնից արքայության դաշտեն միայն փոքրիկ արտիկ մը կ'ուզեմ, վարուցան անեմ» *(«Պ. Թ.»)*:

Երկնքի արքայությունը՝ այդ գյուղ է, հող է, արտ է, վարուցան է:

Գյուղական դրախտային աշխարհին մեջ կյանքն ու մահը իրար խառնված են, ու մահը տխուր չէ: Մահկանացուն երբ իր հոգին կ'ավանդե, այդ կը նմանի բնության մեջ պատահող մեկ որևէ բարի երևույթին:

«Ահա՛ հոգիս առ, բարի հրեշտակ: Այնչափ զվարթ և դյուրությամբ տվավ պապիկ յուր հոգին, ինչպես խնձոր մը ծոցեն հանելով, ութսուն երկու տարի կյանքի ծառեն կախվելով՝ բոլորովին կարմրած, հասունացած էր: Խնձոր ծառեն կաթուկ արած՝ հրեշտակ հասավ վերեն, առեց, թռավ» *(«Պ. Թ.»)*:

Մահը կորնչում մը չէ, այլ բարի երևույթ մըն է: Մեռնիլ ըսել՝ չէ անհետանալ, ընդհակառակը, կը նշանակե վերջնական միացումը հողին հետ, գյուղին հետ, ուր կը հանգչին բոլոր պապերը: Մահը անհրաժեշտ ու բնական ճամբորդություն մըն է դեպի ուրիշ աշխարհ մը, դեպի պապերու աշխարհը: Գերեզմանատունը այդ անմահ աշխարհին խորհուրդն է, ուր ամեն չինական, ի վերջո, պետք է հանգչի ուրախ և գոհ:

Այդ կ՚երևա հետևյալ տողերեն, որ գրված են գերեզմանաքարի մը վրա:

«Առճակու Ծեն գյուղի գգիր Կազոն եմ ես, օ՞խ, ի՞նչպես հանգիստ պառկած եմ հողին տակ, ականջներս տնջացեր են» *և այլն* (*«Պ. Թ»*):

Եզրափակելով ըսենք, որ ընկերային աշխարհայացքի տեսակետեն՝ Խրիմյանը գյուղացիի աշխարհայացք ունի. աշխարհն ու բուն կյանքը կը տարածվին հորիզոնին վրա մինչև հոն, ուր որ մշակելի հող կա: Հողն է բուն հարստությունը: Առողջ կյանքը միայն այն է, որ հողեն կը բուսնի: Միակ ազնվականությունը աշխատանքի ազնվականությունն է, և անկախ, թե մարդ ընկերության մեջ ի՞նչ դեր կըկատարե, – մշակ, արհեստավոր, վաճառական թե իշխան,– անոնք հավասարապես ազնվական են:

Թեև կ՚ընդունի ընկերային կյանքին մեջ գոյություն ունեցող անհավասարության բնակությունը, սակայն կ՚ընդվզի, երբ այդ անհավասարությունը ծնունդ կու տա անարդարության ու ստրկության:

Խրիմյանը կը փափագի, որ մարդիկ թե՛ իրենց անհատական կյանքի մեջ, թե՛ իրենց հավաքական կյանքի մեջ, ինչպես նաև ազգերը՝ իրենց պատմական կյանքի ընթացքին, ճանչնան իրենց չափն ու սահմանը: Ան կը հիշե բնությունը, որ իր օրենքներով, իր կարգուկանոնով ու տևական հավասարակշռությամբ կրնա օրինակ ծառայել մարդոց ու պետությանց համար:

Ահա՛ հատված մը իր դաստիարակչական զմայլելի էջերեն, ուր օրինակ կը բերե բնությունը. տողեր են, ուր Խրիմյան և՛ գիտնական է, և՛ բանաստեղծ, և՛ սրամիտ քննադատ:

«Սրատես ես, որդյակ իմ Սամվել, աչքդ բաց, նայե տիեզերքին վերա. դարձիր դու, խորապես մտաքնին եղիր, զի տեր Աստված յուր պետական աթոռը երկնից մեջ դնելով՝ բոլոր տիեզերքը բնական և հավիտենական օրենքով կը կառավարե. յուր օրենքներն անշարժ և անփոփոխ են, և ոչ ոք կարող է զայն շրջել կամ խախտել. ինչպես աշխարհիս դրական և քաղաքային անհաստատ օրենքներ, զորս միույն մարդ կը գրե և մյուսն կ՚եղծանե:

Բնական օրենքով կը դառնա արևը, կը ծագի առավոտ, լույս կու տա տիեզերաց, հերեկոյն ի մայր կը մտնե: Արևը մեր կյանքին և ժամանակին չափն ու կշիռն է: Կ՚որոշե մեր օրեր, տարին ու դարեր: Թո՛ղ այս՝ յուր լույսով և ջերմությամբ կը կենդանացնե մեր աշխարհ, մարդիկ նորա լուսույն տակ կը գործեն. եթե անլույս մնան, կը դադարին:

Բնական օրենքով՝ գիշերավար լուսին մերթ կը նվազի և մերթ կը լրանա, կը մեռնի և դարձյալ կը ծնի, յուր շրջանն երեսուն օր է. և այս թվով կը չափե ամիսը, և տասներկու ամիսով մի տարին կը բոլորե: Երկնակամարին այս երկու մեծ լուսավորներ մեզ նման բանավոր մարդ չեն, բայց բնական օրենքով գիտեն կատարել Աստծո կամք:

Աստղագետ չեմ, որ երկնից բովանդակ համաստեղությանց վերա ճառեմ և ծանոթություն տամ քեզ, թե որպե՞ս տիեզերքի անհուն տարածության մեջ կը շարժին, կը դառնան, մերթ կ՚երևին, մերթ կ՚անհետանան, և այս ամեն անսայթաք ընթացքը բնական օրենքով կը կատարեն և երբե՛ք զիրար չեն դիմահարեր:

Դու կը տեսնա՞ս, մարդիկ աշխարհիս վերա կը շրջին, շատ անգամ իրենց գլուխը իրարու զարնելով կը պատռեն: Երանի՜ թե մարդոց գլուխներն ևս ճանչնային յուրաքանչյուր իրենց սահմանն ու շրջան» (*«Ս. Ս.»*):

Բայց Խրիմյան շատ լավատես չէ այս ուղղությամբ: Ան օրինակներ բերելով պատմութենեն՝ կը նկատե, թե մարդիկ դեռ հեռու են այդ չափի, սահմանի ու հավասարակշռության գիտակցութենեն:

Ու կը գրե.

«Կարդա՛ հնախոս պատմություններ և կը տեսնաս, որ մեծամեծ աշխարհակալներ եկան այս աշխարհ, խռովության մեջ թողին, իրենք գերեզմանին մեջ խաղաղություն գտան: Նոքա իրենց զորությամբ ու սրով բնավ չկարեցին խաղաղություն տալ երկրին, այլ, մանավանդ, երկրին երեսը արյունով լվացին և սոսկալի բռնության տակ ջախջախեցին մարդուն ազատության կյանքը:

Եկան վերջին դարեր և, մանավանդ, իննևտասաներորդ դարը, զոր քաղաքակրթության դար կը կոչեն և հորում ես և դու ծնանք ու կ՚ապրինք. կ՚ասեն, թե մարդուն հառաջադիմության քայլեր քիչ մնաց, որ մինչև կատար հասնին: Քաղաքային և աշխարհի կառավարության համար դիվանագետներ ժողովեցան, մեծամեծ, ստվար օրինագիրքեր

շինեցին և երկրի խաղաղություն մշտնջենապես պահելու համար դաշնակցություններ կոեցին: Եվ ի՞նչ էր նոցա բոլորի նպատակը, մարդկային ընկերական կյանքը հավասար բարվոքելո՞ւ, թե մեն մի գահեր իրենց երկրի շահը առավել հոգալու: Այդ իրավունք է, գիտենք, բայց առանց ընկերին և ազգերու իրավունքը խլելու:

Այժմյան աշխարհիս վերատիրող մեծ աշխարհակալ՝ շահն է:

Ո՜հ, որչա՞փ հեռու են իրարմե դիվանագիտություն և Ավետարան, խաչն ու Կրուպի թնդանոթ:

Քաղաքակրթություն դեռ մահ կը բերե, դեռ մարդոց համար սպանության գործիքներ կը հնարե, քուն և հանգիստ չունին աշխարհիս տիրապետներ ու դիվանագետներ: Վիշապի նման տուտի վերա կեցած՝ կը ֆշշան, կը սպառնան և ի՞նչ կը խնդրեն. պատերազմ. անշուշտ, զիրար կլանելու համար» *(«Ս. Ս»):*

Այս բոլորի պատճառը, սակայն, ըստ Խրիմյանի, արտաքին չէ, այլ բուն մարդկային բնության մեջ կը գտնվի. մարդուն էութենեն կը բխի, անոր անկատար էութենեն է, որ ծնունդ կրնար առնել մութ, անհավասարակշիռ ու վայրագ մղումներ, զորս առողջ բանականությունն ու բարոյական սկզբունքները միասին, չեն կրնար կասեցնել կամ չեզոքացնել: Որովհետև «դեռ մարդն անհալ և անկատար հանք մի է»:

Ու Խրիմյան չի՛ հավատար հրաշքներու, չի՛ խորհիր, որ այդ «անհալ ու անկատար հանքը» իր կերպարանքը կրնա դյուրավ փոխել:

«Ավա՜ղ մարդկային թշվառաբախտ ընկերության. ո՞վ գիտե, դեռ քանի՞ ժամանակ, քանի՞ դարեր աշխարհ յուր ազգերով, ժողովուրդով պիտի հեծեն աղիողորմ, երկրիս մեծամեծ պետական ծովեր պիտի խռովեն. այդ ալիքներ կոհակներ պիտի հանեն. այդ ինքնահոնար հրաբուխներ, ինչպես գրեցի, միշտ պիտի բորբոքին, շարժեն երկրագունտ, աշխարհ սասանեն, ջրով ու մոխրով ծածկեն ժողովուրդոց կյանքը» *(«Ս. Ս»):*

Եվ սակայն, Խրիմյան կը հավատա, որ պիտի գա այն օրը, երբ մշակվելով, մշակվելով՝ մարդը պիտի ազատի իր անսանձ և կույր բնազդներեն ու մղումներեն, և հստակ գիտակցությամբ մը կարգ–կանոն պիտի դնե իր կյանքին մեջ:

«Աշխարհիս պատահար քուրային մեջ, այսինքն՝ կրակի և յուր արյան մեջ, նա դեռ պիտի հալի ու մաքրվի, մինչև որոշվին ընտրյալներ, մինչև գա ճշմարիտ քաղաքակրթության ոսկեդար, հորում աշխարհիս վարիչներ անկեղծ սրտով և անխաբ մտքով ընդունին ընկերության և խաղաղության ոգին: Մեռնին, երթան աշխարհիս երեսեն խռովարար և անարդար տիրապետող ոգիներ: Այն օրն միայն հավատանք, որդյա՛կ, որ Դավթի գուշակությունը կը լրանա. «Եղիցի խաղաղութիւն ընդ ամենայն երկիր եւ ի վերայ գլխոց լերանց» *(«Ս. Ս»):*

Խրիմյան չի բավականանար վերացական այս քանի մը մտքերով, այլ գործնապես ալ առաջարկներ կ՚ընե ճշտելու համար մարդուն և իր փոխհարաբերությունները, որոնք պետք է ապահովեն մարդու ազատությունը և ժողովուրդի և պետության առողջությունը:

Այդ օրերեն մինչև մեր օրերը, բնականաբար, շատ բան փոխված է, և սակայն մենք հետաքրքրական կը նկատենք ստորև ներկայացնել այդ տողերը, որոնց մեջ հստակորեն կը զգաս այն ոգին, զոր Խրիմյան կ՚ուզե ստեղծված տեսնել գործնական կյանքին մեջ, ինչ որ ալ ըլլա պետության վարչաձևը ու ժողովուրդները ղեկավարելու եղանակը:

Ինչքան ալ աշխարհը նորոգվի, միշտ գոյություն պիտի ունենան մեկ կողմեն անհատը՝ իր իրավունքներով ու ձգտումներով, և մյուս կողմեն ընկերությունը, պետական իշխանությունը՝ իր պահանջանքներով ու նպատակներով: Եվ, հետևաբար, միշտ ալ գոյություն պիտի ունենա անհատի և հավաքականության, մարդու և իշխանության փոխհարաբերության հարցը, որ պետք է ըլլա, անշուշտ, ազատ և արդար փոխհարաբերությանց դրություն մը:

Զմոռանանք, որ եթե անհատը ներքին հակումը ունի երբեմն ծայրահեղության երթալու ու որևէ իշխանություն ժխտելու, պետությունն ալ, իշխանությունն ալ, շատ հաճախ, ներքին ձգտումը ունի, անհատը շղթայելու և իր ուժը չարաչար գործածելու անզոր անհատի դեմ:

Եթե անհատին ծայրահեղությանց տարված իրավունքները կը տկարացնեն պետության մը և ազգի մը ներքին միավորությունը և միակամությունը, չմոռանանք նաև, որ

«ամեն բան պետութեան համար», «անհատը միջոց, ու հայրենիքը՝ նպատակ» և այլ կարգախոսները հաճախ տիրապետողներու ոգին ու շահն են, որ կը ստեղծեն, ու այսպեսով՝ մարդկային հավաքական կյանքը կդառնա տեսակ մը բանտ, ու մարդիկ՝ ապերջանիկ էակներ, անվերջ շահագործված և անիրավված:

Ահա այս հարցին առջև կանգ կ'առնե Խրիմյան Ես ու իր հասկցած ձևով՝ համառոտ պատկեր մը կու տա մեզի անհատի և ընկերութեան իրավունքներու և պարտականութեանց մասին, զոր մենք ալ կը ներկայացնենք այստեղ, գրեթե, ամբողջութեամբ՝ գաղափար մը տալու համար, թե ինչպես կը հասկնա ան լուծել սուրբ խնդիրը:

«Իշխանությունն յուր հաշիվն ու համար միայն Աստուծո չի տար, այլ և ժողովուրդին, երբ ինքն սահմանադրապես ընտրված է: Իշխանության մեծ ու նվիրական պարտքն է արդարությունն սիրել և օրինաց իրավացի վճիռը արդարությամբ ի գործ դնել, առ այս կը հաղորդե Սողոմոն, որ դատավոր և թագավոր էր Աստուծո ժողովուրդին. «Սիրեցէ՛ք զարդարութիւն, որ դատէք զերկիր»: Իշխանության պարտքն է երկրին խաղաղության համար հսկել. հանապազ հոգալ ժողովուրդի բարօրության, բարգավաճման ու հառաջադիմության համար՝ ուղղապես խորհելով, որ իշխանության աթոռը ժողովուրդի պատվանդանին վրա հաստատված է, և երբ ժողովուրդ կործանի, անշուշտ, իշխանությունն ևս կանգուն չի մնար: Իշխանության իրավունքն է չափով և արդարությամբ ժողովուրդեն հարկեր պահանջել, բայց երբեք դատաստան և իրավունք չէ, որ ծանր բեռներով ժողովուրդին թիկունք մինչև ի գետին կորացուցանե: Եթե այսպես ջլատե ժողովուրդին ուժն և ոգին, ինքն ևս իր զորութենեն կը թափի, զի ով չի գիտեր, թե ժողովուրդն իբրև գործող անդամ կը համարվի կառավարության. երբ անդամներ ուժաթափին, գլուխն ևս նորա հետ կ'ուժաթափվի. այնուհետև կը կորուսանե յուր խորհուրդ, կը հիվանդանա առաջնորդող գլխույն առողջ ուղեղն, և հայնժամ ժողովուրդին և իշխանության զորություն միապես կը սպառվին, և երկրի վերա կը հասնի և կը տիրե աղետաբեր վիճակ:

Իշխանություն՝ երկրին և ժողովուրդին երաշխավորող, հավատարիմ ավանդապահն է. այնպես պետք է պահել այդ սուրբ ավանդը, որպես թե յուր կյանքն է, յուր փառքն են, յուր կենդանատու հոգին և զորությունն: Իշխանության զորություն և հաստատություն արդար և հավասար օրենքն է»: Ուստի յուր ամենամեծ պարտքն է, որ երկրին օրենք անաչառ ճշտությամբ, հավասարապես գործադրե տկարին և զորավորին վերա, իշխանին և ժողովուրդին վերա, չի թողուլ, որ զորավորներ հետտեն օրենքին դեմը, և նոքա, որ կարգյալ են օրենք պաշտպանելու, նոքա զեղծանեն օրինաց մեջ և առ ոչինչ համարեն զայն:

Իշխանություն, իբրև օրինաց վրեժխնդիր ու նախանձավոր, յուր պարտքն է երկրին, ժողովուրդին և առավել վարիչ պաշտոնյաներու մեջեն օրինաց զեղծումներեն առհասարակ բառնալ. ապա թե ոչ՝ զեղծումներ հաճախելով, ի վերջո, իշխանությունը կը բառնան և կը մատնեն զայն օտարին ձեռք. վասնզի ներքին զեղծումներն զհայրենիք ավելի կը դավաճանեն, քան թե օտար թշնամիք:

Իշխանություն պետք է առաքինության պաշտպան հանդիսանա և մոլություն սանձահարե, յուր մեծ, նվիրական պարտիքն է չը թողուլ երբեք, որ ժողովուրդին կյանք և բարք ապականող զեղծումներ տարածին երկրի մեջ, իբրև տարափոխիկ հիվանդություն, որ, ի վերջո, մահ և կորուստ կը սպառնան ընդհանուր իշխանության երկրին: Միայն կրոնի պաշտոնեից քարոզն ու խրատ բավական չէ հետտող ժողովուրդին կամք նվաճել, այլ պետք է նաև իշխանության սաստն ու սուր, որ ձեռնհաս կը լինի զեղծումներ քաղաքային օրենքով բառնալ:

Իշխանության պարտիքն մեծ է իմաստությամբ տնտեսել երկիրը, չի թողուլ, որ յուր հարստության գետերը երթան, թափին օտար ծովերու մեջ, ի վերջո, երկրին ջուրը ցամքի, դառնա ծարավ մի անապատ. երկրին հարստության գետեր երկրին մեջ պահելու համար պետք է զայն շրջապատել օրենքով և այն միջոցներով, զոր քաղաքային տնտեսություն կ'ուսուցանե:

Եթե իշխանության զորություն կը հավելու երկրին հարստությունք և բարգավաճանք, ուրեմն յուր ձեռնհասության պարտիքն է ժողովուրդին առաջ հորդել հառաջադիմության ճանապարհ, բառնալ ամեն խոչ և խութեր, հորմե ժողովուրդ խուսափելով՝ կանգ կ'առնու շահավաճառության առաջ, նավարկություն բանալ, լեռներ և ձորեր հարթել, արվեստ և արվեստագետներ քաջալերել, երկրագործ ժողովուրդին ազատություն և ապահովություն տալ, որ երկիրը մշակելով արդյունավորե: Քանի որ շահավաճառության մեջ յուր երկրի բերքն ուրիշ երկիրներե ընդունված բերքերուն հետ հավասարակշռություն չունի, պետք է օրեն-

քով հաստատել և զսպել ժողովուրդին վայելչասիրության ցանկությունը, որ յուր երկրի բերքով շատանա, սակավապետ կյանքի մեջ վարժելով զայն. թեև ընդհանուր վաճառականության օրենք ազատ է, բայց յուրաքանչյուր իշխանության ազատ իրավունքն է յուր երկրին շահը առավել պաշտպանել:

Իշխանության սրբազան պարտիքն է միշտ խաղաղություն սիրել, խաղաղությամբ կառավարել և ամեն հնարավոր միջոցներ ի գործ դնելով՝ պատերազմ չի հարուցանել ո՛չ ուրիշ իշխանության դեմ և ո՛չ պատճառ տալով ուրիշ իշխանության մը՝ յուր դեմը: Բայց երբ դաշնակցությունը կ'եղծվի, ուրիշ իշխանություն մը կը բռնանա յուր վերա, և երկրին շահը կը վտանգի. հայնժամ յուր պարտիք և իրավունքն է պատերազմ հրատարակել, որ թշնամին չ'ոտնահարե երկրին ազատություն և իրավունք: Միայն թե պատերազմող իշխանությունն աստ պետք է հիշե Քրիստոսի առակը, որ նախատեսություն կ'ուսուցանե. նախ պետք է յուր ծախսեր և յուր զորություն թշնամիին զորության հետ կշիռ դնելով՝ հասու լինի, թե կարո՞ղ է տասնհազարով պատերազմ տալ նորա դեմը, որ քսան հազարով կու գա յուր վերա: Ապա թե ոչ մեծ խոհեմություն է հրեշտակություն առաքել և հաշտություն խոսիլ: Վասնզի շատ բարի է և երկրին շահ թե՛ մեծ և թե՛ փոքր զոհողությամբ խաղաղություն հաստատել, քան թե պատերազմով երկրավոր լինել. թո՛ղ այն, որ երկրին գանձ կը սպառի, այլ և արյունով և մահով ժողովուրդին կայտառ որդիք զոհ կ'երթան և կը սպառին պատերազմին դաշտին մեջ, որով ինքն պարտական և պատասխանատու կը մնա. «Զի թագաւորն ոչ միայն զիւրն տացէ պարտիս, այլեւ որոց եղեւ պատճառ մահուան»:

Իշխանության առաջին և վերջին մեծ պարտիքն է՝ լույս, գիտություն և կրթություն տարածել ընդհանուր երկրին մեջ, իշխանության աթոռեն սկսյալ մինչև խոնարհ ժողովուրդին խրճիթը հավասարապես լույս ծավալել՝ հավատալով, որ երկրին բարգավաճանք ժողովուրդին լուսավոր կրթութենեն կը ծնի, ինչպես որ թշվառությունն՝ նորա տգիտութենեն:

Շատ մեծ սխալ և անիրավ քաղաքականություն է, եթե ասե իշխանություն, թե ժողովուրդը տգիտության և անզգա թմրության մեջ պահեմ, որպեսզի նա կույր մնա, չ'անսասանե իշխանության դեմ, և ես անկասկած և դյուրությամբ իշխեմ: Որչափ հոռի և հետադեմ է այս դրություն քաղաքակիրթ աշխարհին լուսամիտ գաղափարին առաջ, որ միշտ կը ջանա ժողովուրդին մտավորական զարգացումն հառաջ տանելով լուսավորել զայն, հավատի լինելով, որ երկրին հառաջադիմություն և բարգավաճ կյանքը ժողովուրդին լուսավորութենեն է, ինչպես թշվառություն՝ տգիտութենեն. մի՞թե ինքնին երջանիկ կը լինի իշխանություն, երբ ժողովուրդ թշվառանա, և ի՞նչ փառք և պարծանք է թշվառին վերա իշխել:

Թշվառ ժողովուրդին կյանք, անշուշտ, վախճան մի ունի. նա կը մեռնի թե՛ անագան, և երբ մեռնի, իշխանություն այլևս ո՞ւմ վերա կ'իշխե, անշեն և անապատ երկրի՞ն վերա: Նույն ժողովուրդին թաղված գերեզմանին մեջ թաղել և բռնության ծանր կափարիչով փակել նորա բերանը»:

Խրիմյան կը շարունակե և հետևյալ խորհրդածությունները ևս կ'ընե իշխանության մասին.

«Իշխանություն կ'եղծանի իր վարչության մեջ, երբ ան անընտրող կը լինի, արժանավորին և անարժանին հարգ մի կշռով կը չափե. մերթ ևս պատիվ և բարձ կ'ընծայե նմա, որ երկրին շինության հիման վրա մի քար չէ դրեր. կը թողու լավն ու կարողն և ժողովուրդին կառավար կը դնե այնպիսիներ, որոնց միտք թափվեր է կառավարության ուսմունքեն և օրենքեն, որք առավել կարոտ են և կառավարվելու, քան թե կառավարելու:

Իշխանություն անիրավությամբ կը զեղծանի, եթե դատաստանի առաջ նվիրական չհամարի օրինաց հավասարություն, աչառելով խաբե տեառն և ծառային դատաստան, զորավորին և տկարին դատաստան, և թողու, որ դատավորաց կամք դատարանին մեջ իբրև օրինագիրք վճռե:

Իշխանություն զորապես կը զեղծանի, եթե երկրին չարերը չպատժե պարզապես, այլ թողու, որ չարեր աճելով՝ բազմանան ու հեղձուցանեն բարիքները, նույնգունակ մեծապես կը զեղծանի, երբ բարիքները կը թողու անվարձ, անպսակ, նոքա, որ երկրին հառաջադիմության անձնվեր կը լինեն, որ հավատարմության ուխտն անդրժելի կը պահեն:

Իշխանության զեղծումներ շատ և բազմադիմի են. դժվարին և երկար բանից կարոտ է նորա նկարագիրը հանել. բայց դու, թե հետաքրքիր լինես, հետազոտես երկրին իշխանության և ժողովուրդին կյանքը, զեղծումներու երևույթ պատկերը կը տեսնաս»:

Իշխանության պարտականությունները ու գործելակերպը ճշտելե հետո, Խրիմյան կ՚անցնի այն պարտականություններուն, զոր ժողովուրդը և անհատը պետք է գիտակցին ու իրենց կարգին ուղիղ և գործունյա կեցվածքով զորացնեն իշխանությունը:

Ստորև կու տանք Խրիմյանի տողեր սույն խնդրո մասին.

«Ինչ որ իշխանության պարտիքն էր, այն է, ահավասիկ, ժողովուրդին իրավունք, և ինչ որ իշխանության համար իրավունք է, այն, իրապես, ժողովուրդին պարտիք:

Ժողովուրդին առաջին պարտիքն է ճանչնալ և հավատալ, թե իշխանության գավազանը երկինքեն դեպի երկիր ձգվեր է. նորա վերին ծայրը տիեզերքը վարող պետական աթոռին կցված է, և մյուս, վարի ծայրը աշխարհիս վերա հաստատված է:

Ժողովուրդին պարտիքն է ճանչնալ նաև երկրին ընդհանուր օրենքները՝ քաղաքային օրենքներ, դատաստանի օրենքներ, տրոց և հարկի օրենքներ, կալվածական օրենքներ և այլն: Վասնզի յուր պարտիք և իրավունք այս օրենքներեն կ՚որոշվին, և օրենքն է, որ կը չափե և կը կշռե ժողովուրդին իշխանության իրավունք և պարտիք: Ուստի ժողովուրդ ամենայն խնամքով պետք է սորվի երկրին օրենքներ, որպեսզի օրինավարներ ժողովուրդի անգիտության և ապշության համար չհամարձակին նույնիսկ օրենքով հարստահարել, որոց օրինակ բազում տեղ կը տեսնանք աշխարհի մեջ:

Ժողովուրդ երբ յուր հպատակության պարտիքներ սրտի մտոք և անթերի կը կատարե, նա իրավունք ունի իշխանութենեն պահանջել այն ամեն պարտիքներ, զոր գրեցի ի վեր»:

Բ.
ԼՈՒՅՍ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պարզելե հետո Խրիմյանի ըմբռնումը մարդու և ընկերության մասին, այժմ անցնինք ուրիշ հարցի մը, որ որևէ դաստիարակի համար կարևոր խնդիրներեն մին է:

Տեսնենք, թե ինչ միջոցներ կ՚առաջադրե Խրիմյան ժողովուրդի կյանքին մակարդակը բարձրացնելու համար: Ինչպես իր նպատակներուն ու իտեալներուն մեջ, միջոցներու մեջ ալ Խրիմյան մեզի կը ներկայանա որպես տիպար և մեծ դաստիարակ մը:

Խրիմյան, ի տես այն հետադեմ վիճակին, որուն մեջ թաղված է հայ գավառացի, մշակ ժողովուրդը, ամեն բանե առաջ անհրաժեշտ կը նկատե ուսումն ու գիտությունը, այսինքն՝ մտքի հարստացումը և զարգացումը օգտակար գիտելիքներով ու ծանոթություններով, որոնցմով գյուղացին հեղաշրջե իր աշխատանքի ձևը, արտադրության միջոցները, գործիքներու գործածությունը և այլն, մեկ խոսքով՝ իր ամբողջ տնտեսությունը:

Եվ ըստ իր համադրական մտածման ձևին, Խրիմյան այս բոլոր միջոցները կը խտացնե «Լույս» բացատրության մեջ: Իր պատրիարքական առաջին շրջաբերականին մեջ ան որպես պատգամ կ՚ըսե.

«Պետք է լուսով խավար հալածենք, և սիրո միությամբ երկպառակություն վանենք»:

Եվ ուրիշ տեղ մը նույն գաղափարն է, որ կը հայտնե.

«Գիտություն լույս է, իսկ տգիտություն՝ խավար. տգետ մարդ կը զրկվի կատարյալ կյանքեն, ինչպես կույր մարդը՝ արևու ճառագայթեն» *(«Պ. Թ.»):*

Հետաքրքրական է, թե ինչպես Եվրոպա չտեսած և բարձր ուսում չստացած կղերական մը այնքան ոգևորությամբ և բացարձակ հավատքով կը խոսի գիտության ամենազորության մասին: Հազար ու մեկ ձևով կը շեշտե գիտության լույսի անհրաժեշտությունը.

«Մարդ պետք է ժամանակին հետ քալե: Պետք է գիտնանք, որ աշխարհիս վրա ավելի տգետներն են, որ խեղճ ու թշվառ կյանք ունին»:

Գիտության սիրո հետ կապված է, բնականաբար, գրքի և ընթերցանության սերը, որուն մասին կը գրե.

«Գիտե՞ս, թոռնիկ, ամեն գիրք մի-մի վարժապետ են կարդացողի համար. գրողներ մեռեր, գացեր են, գիրն կենդանի մնացեր. կան այնպիսի գրքեր, որոնք անմահ են» *(«Պ. Թ.»):*

Իր՝ Պոլսո պատրիարքության առաջին շրջաբերականին մեջ, որ դաստիարակչական գլուխգործոց մըն է, Խրիմյան անգամ մըն ալ ղեկավար և հարուստ դասակարգի ուշադրությունը կը հրավիրե հայ գյուղացիի խավար և հետամնաց վիճակին վրա ու կը գրե.

«Շուրջդ նայե, ազգերն ամեն առողջացած՝ անդամալույծ վիճակեն դեպի նոր կյանք կը վազեն. դու միայն մնացեր ես պրոպատիկե ավազանին քով, անշարժ նստած»:

Ուրեմն, կ՚եզրափակե.

«Դուք, լծակից եղբայրք իմ, շարժեցե՛ք Եփրատա հորդ ավազան, թո՛ղ կրկին մկրտվի ժողովուրդ ուսման և դաստիարակության ջրով. շարժեցե՛ք ուսուցանելով, սփռեցե՛ք, տարածեցե՛ք ազատարար լույս՝ եկեղեցվո որդվոց վրա, որ զրկյալ են, որ հարստահարյալ են, ոգևորեցե՛ք այդ լքյալ ժողովրդոց սիրտ, որ լի է դառնությամբ»:

Խրիմյան, սակայն, խորապես լուրջ դաստիարակ մըն է, չի բավականանար արտաքին, մակերեսային արդյունքներով: Անոր իտեալն է ամբողջական ու օրկանական հեղաշրջումը և՛ հայ անհատին, և՛ հայ հավաքական կյանքին: Բուռն կերպով կը ցանկա իրականացած տեսնել այդ նպատակը և, սակայն, չ՚աճապարեր: Ջ՚աճապարեր, որովհետև գիտե, թե այդ հեղաշրջումը շուտ չ՚իրականանար: Գիտե, թե ինչպես ամեն օրկանական երևույթ, այս հեղաշրջումը ևս պետք է բնականորեն, իր արմատներեն զարգանա, ոչ թե արտաքնապես, որպես զարդ: Գիտությունը, կրթությունը, դաստիարակությունը զարդեր չեն մարդու ընկերային կյանքին վրա, որ կը զետեղվին ի ցույց մարդկանց, այլ որոշ վիճակներ, որոնք արդյունք են սերունդներու աշխատության, տքնության ու հարատև բարոյական մշակումներու:

Այդ գիտակցությունը ունենալով է, որ Խրիմյան կը գրե.

«Մեր աշխարհի մեջ առաջադիմություն դեռ նոր ծնած մի երեխա է, տակավին շատ և շատ ժամանակ պետք է, որ նա դպրոցի լուսավորության ավազանի մեջ մկրտվի, օր ըստ օրե զարգանա և մարդ լինի: Ձկարծես, թոռնիկ, որ կրթության երեխան այնպես շուտ կը մեծնա, ինչպես մայրերու ծնած զավակ. բնական ծնունդի զարգացման համար եթե միայն քսան տարի բավական է, իսկ առաջադիմության և կրթության զարգացումն երկար դարերու կը կարոտի: Եվ գիտես դու, թե քանի՞ դարերե առաջ Եվրոպան սկսեց և այսօր հազիվ հասավ այս աստիճանին» *(«Պ. Թ.»)*:

Հայ ժողովուրդին օրինակ կու տա Եվրոպան, սակայն, ինչպես պիտի տեսնե ընթերցողը, Խրիմյան այդ ուղղությամբ ալ միամիտ չէ:

Չի բավեր ընդօրինակել Եվրոպայի գիտությունը: Պետք է Եվրոպայի գիտութենեն ու փորձառութենեն օգտվիլ, այո՛, պետք է հոնկե լույսի պատվաստ բերել հայոց աշխարհի մեջ, սակայն այդ լույսի կրակը բերելեն հետո պետք է զայն տանիլ ամեն տեղ, մինչև ամենահետին խրճիթը, ու այդ կրակով բռնկցնել բոլոր հայ շինականներուն հոգիները:

Հայոց ջահերը վառելեն հետո, պետք է այդ կրակը վառ պահել հայուն ճիգովը, հայոց աշխատությամբ ու հայոց հոգիի ուժովը:

Ահա՛ իր խոսքերն իսկ.

«Եվրոպան տաժանելի աշխատությամբ, մեծամեծ զոհողությամբ այդ հառաջադիմության ճամբան հարթեց ու բացավ, բովանդակ ուսման և գիտության տարերք պատրաստեց, ինչպես սեղան մի, դրավ մեր առաջ:

Ասիկա մեր ժամանակի սերունդին համար մեծ բախտ է:

Բայց չասես, թոռնիկ, այլևս ի՞նչ պետք է մեզ աշխատություն, վաստակ, նստինք այդ պատրաստված սեղանին վրա և ճաշակենք: Այդ շատ սխալ դատողություն է. դու կարծեցիր, որ մեր տանտիկնոջ եփած թանապուրն և ճա՞շն է այդ սեղան, որ գդալն առնելով նստինք, ուտենք: Ո՛չ. բազում ջանք, բազում վաստակ, բազում տքնություն և ճգնություն պետք է, որ մենք կարենանք Եվրոպային պատրաստած սեղանին հացն ուտել» *(«Պ. Թ.»)*:

Ասիկա ճշմարիտ հստակատեսություն մըն է, որ միայն մեծ դաստիարակներուն հատուկ է:

Եվ ինչքա՜ն այժմեական տողեր կան այս հատվածին մեջ: Ո՛րքան կան մեր մեջ այնպիսիներ, որոնք Եվրոպայի գիտությունը, գաղափարներն ու տեսությունները «մեր տանտիկնոջ եփած թանապուր կը կարծեն» և կապկորեն

մտածելով կը կարծեն, թէ կարող են «Եվրոպային պատրաստած սեղանին հացն ուտել»:

Բայց Խրիմյան իր մեկ ուրիշ գրքին մեջ անգամ մը ևս կ՚անդրադառնա հայուն մակերեսայնության վրա, երբ կը տեսնե, թե ան Եվրոպային նմանելու ձգտումին մեջ սխալ ու վտանգավոր ճամբու մը կը հետևի՝ կարծելով լուսավորյալ ու զարգացած մարդ ըլլալ, եթե արտաքնապես իր կյանքն ու միտքը զարդարած է Եվրոպայի սեղանին թափթփուքներովը:

«Ո՜վ հայոց ընտանիք, ճանչցեք ձեր չափն ու վիճակ. դուք շատ աղքատ եք ոսկվով ու մտքով, աղքատ եք դաստիարակությամբ և ազատությամբ, աղքատ եք գործունյա աշխատասիրությամբ, աղքատ եք արվեստական հանճարով, աղքատ եք իմաստուն տնտեսագիտությամբ: Առանց մտավոր և նյութական հարստության դու, միթե, արժանի կը համարե՞ս զքեզ նույն եվրոպական ժողովրդոց ճոխ կյանքը վայելել: Ծանի՛ր այդ կյանքը, ա՛յդ հառաջդիմությունը ճակատի անխոց քրտինքով, բազմակերպ արյան զոհերով. հարյուրավոր տարիներու մեջ հազիվհազ կազմված է, և դու դեռ երեկ սկսեցիր նոր երեխայի պես քերական կարդալ. կը կարծես ու կը հավատա՞ս, թե ուսյալ և քաղաքակիրթ Եվրոպացի դարձար:

Ես կը գովեմ քու եռանդը, որ կը ձգտիս դեպի հառաջդիմություն և քաղաքակրթություն, միայն թե սխալ ըմբռնած ես, որպես թե զեղխություն, զեղծումն, նորասիրության բուռն տենչանքը ճշմարիտ քաղաքակրթության նմանողություն է: Այդ նույնիսկ քաղաքակիրթ ժողովրդոց մեջ սինլքոր մասին կարծիքն է և վարք: Դու ազնիվ եղիր ու ազնիվ ժողովրդոց բարի և պարկեշտ օրինակին հետևի՛ր, որոց ամենայն ինչ կշռով ու չափով է, որոց ընտանեկան կյանքին լույս և առաջնորդ՝ ***ուսումն, դաստիարակություն և տնտեսություն է:*** Քաղաքակիրթ ժողովուրդ այս երեք բառերով կը վարե յուր ընտանեկան կյանք, այս երեք բառերն են, որով նոքա բարեբաստիկ և երջանիկ կ՚ապրին աշխարհիս վրա, վասնզի ուսման լույսով հաց կը գտնեն, դաստիարակությամբ հոգին և սիրտ կրթելով՝ բարի ընտանիք կը կազմեն, իսկ տնտեսությամբ հացին սեղան և այլ կյանքի պիտույքները չափով ու կշռով կը մատակարարեն միշտ՝ հոգալով ապագայի անստույգ օրերն» *(«Դ. Ը.»):*

Ուսում, դաստիարակություն և տնտեսություն, *այսինքն՝* մտավոր, բարոյական և տնտեսական *կրթություն. ահա՛ այն դաստիարակչական գլխավոր միջոցները, որոնք իրապես ժողովուրդի կյանքի հեղաշրջման խարիսխներն են՝ դաստիարակության տեսակետեն:*

Հատկանշական է Խրիմյանի համար, և նորույթ է շատ մը մեծ մանկավարժներու համար ևս, տնտեսական տվյալը: *Այդ տնտեսական տվյալին այնքան կարևորություն կու տա, որ կարելի է ըսել, թե Խրիմյան իր այդ ըմբռնումով ուղղակի արդի մանկավարժ մըն է:*

Այդ գաղափարը Խրիմյանի մոտ վերացական մտայնութենե մը չի բխիր: Խրիմյանի համար կյանքը ամբողջություն մըն է, որուն կեդրոնը աշխատանքն է, առօրյա տնտեսությունը: Հետևաբար, այդ կյանքը հեղաշրջելու համար պետք է առաջին հերթին այդ տնտեսական աշխատանքի ձևերը հեղաշրջել, պետք է արդյունաբերության միջոցները զարգացնել ու մարդոց մտայնությունները լուսավորել գիտությամբ ու տնտեսագիտությամբ:

Խրիմյան, իրավամբ, կը գանգատի հայ գյուղացիի մտայնութենեն, որ վարակված է, մահացու կերպով, արևելյան ճակատագրապաշտությամբ ու անփութությամբ. կը գանգատի, որ ան որևէ հառաջադիմության անընդունակ դարձած է, ու այնքան հաշտված է իր այդ խավարամտության, ճակատագրապաշտության ու աղքատության, որ այլևս ի վիճակի չէ ընդվզելու և նոր ճամբա մը փնտռելու:

Հայ շինականին համար այդ դժոխքեն ազատելու միակ փրկարար միջոցը պանդխտությունն է դարձած, դարիպությունը. այսինքն՝ ձգել հայրենի հողը, ձգել ընտանիքը ու երթալ հեռու աշխարհ՝ դրամ վաստակելու համար:

Այս իրականության առջև Խրիմյանի սիրտը կ՚արյունի, ու ան հազարումեկ ձևերով կը հորդորե իր շինական ժողովուրդը, որ չհեռանա իր հողերեն, չձգե այդ գանձը, զոր Աստված պարգև տվեր է իրեն, չլքե այդ արտը, զոր իր պապերը ժառանգ թողեր են իրեն:

Որովհետև այդ հողը աշխատելուն մեջ է և՛ կյանքին իմաստը, և՛ գեղեցկությունը:

Որովհետև պապերու արցունքով ու արյունով, քրտինքով ու ծիծաղով, կյանքով ու մահով շաղախված այդ դարավոր հողը հայ ժողովուրդի տևականության ու հավիտենականության երաշխիքն է, գերագույն երաշխիքը:

Որովհետև հայ ժողովուրդի անմահության գաղտնիքը այդ հողին ու միայն այդ հողին մեջ է:

«Իմ ժառանգությունս, որ կը թողում քեզ, ոսկի չէ, այլ ոսկիեն շատ ավելի թանկագին ու շահաբեր է: Ի՞նչ է ոսկին, որ տեղ մի չի կենար, այլ ժիվալի պես կը ցրվի, կ'երթա ու կը չքանա, այս անգամ էլ ճարպիկ գողեր ական բանալով՝ կը գողանան ահագին դիզած գանձերն:

Ես կը թողում քեզ մեր հայրենի ժառանգություն՝ դաշտեր ու հողեր, որ միշտ իր տեղն անփոփոխ է, հաստատուն է, կը թողում քեզ գութան՝ երկու փոխ տավարով, կը թողում կթան կովեր ու հարյուրավոր ոչխարներ» *(«Պ. Թ.»)*:

Խրիմյան դաստիարակ մըն է, որ, ինչպես տեսանք, իր դաստիարակչական գործին մեջ լայն տեղ կու տա գյուղական տնտեսության:

Հազար ու մեկ ձևով կը պնդե, որ շինական ժողովուրդը հասկնա իր հողին արժեքը ու զայն լավագույն ձևով մշակե՝ լավագույն արդյունքներ ձեռք բերելու համար:

«Սիրաք և Սամվելին» մեջ ևս կը գտնենք այդ միտքը, ուր կը կրկնե նույն պատգամը:

«Ուխտիվ զքեզ պարտական կը կացուցանեմ, որդյակ, որ հորդ օրինակին հետևիս. բոլոր կյանքովդ ջանացիր գյուղական տնտեսության մեջ հառաջդիմել: Ես քու միտք այս դասերովս մշակեցի, որպեսզի դու ևս քու հողերդ ու դաշտերդ բարվոք մշակես: Տե՛ս դու հայնժամ այն մեր արգավանդ հողերն ո՞րչափ առատ հող ու ցորյան տան մեզ» *(«Ս. Ս»)*:

Խրիմյանի հաստատ կարծիքը այն է, թե հայ շինականը կը հեռանա իր հողեն գերազանցապես տգիտության հետևանքով, հողի արժեքը չըմբռնելով. չգիտնալով ու չկարենալով հողեն ստանալ այն, ինչ որ կարելի է, հայ գյուղացին կը մնա աղքատ ու զրկված կյանքի տարրական բարիքներեն, և հուսահատ այդ վիճակեն՝ ձեռք կ'առնե պանդխտության ցուպը:

«Երջանիկ ես և թշվառ կ'ապրիս, բազմահարուստ գանձի տեր ես, և գրպանդ փող մի չկա, երկրիս մեծ կալվածատերն ես, բայց միշտ կարոտ ու պարտապան: Երկրի ընդհանուր քաղաքացի ժողովուրդին ամեն կենսական բարիքներ դու կը մատակարարես, թագավորեն սկսյալ մինչև հետին քաղաքացվո սեղանին հաց կու տաս, յուղ կու տաս, միս կու տաս, հագուստներու նյութ կը մշակես, բուրդ կու տաս, բամբակ կու տաս, քթան կու տաս, շերամ կու տաս, և այլ շատ բաներ, զորոնք ես այստեղ չեմ ուզեր թվել: Բայց ի՞նչ է պատճառ, գիտե՞ս արդյոք, որ դու քու տված այնչափ բարիքներեն միշտ զրկված կը մնաս. դու կարդա՛ «Պապիկ և թոռնիկ», քաջ կ'իմանաս, թե դորա միակ պատճառ տգիտությունն է, գռեհկություն, կարդալ, գրել, հաշվել, տնտեսել չգիտնալն է» *(«Պ. Թ.»)*:

Ահա թե ի՛նչ հեռանկարներ կը պարզեր Խրիմյան հայ գյուղացիին աչքերուն առաջ, որպեսզի զայն համոզե, հոգեփոխե և ուղիղ ճանապարհին վրա բերե:

Ու կ'ավելցնե.

«Դուք ձեր հողերով, ձեր դաշտերով, ձեր լեռներով, ձեր ջրերով, ձեր կանաչազարդ մարգերով, ձեր լծկաններով, ձեր կաթնատու կովերով ու ոչխարներով և այլ պիտանի անասուններով՝ շատ ու շատ հարուստ եք քաղաքացիներեն: Իբրև գեղացի, փորձառու պապիկ, խրատ կու տամ ձեզ. չը լինի՛, չը լինի՛, որ գեղ թողուք, հող թողուք և երթաք, քաղաք բնակիք, գիտցեք, որ թշվառ կը լինիք. երբ ձեր հողն կորսնցնեք, ձեր կյանքն ալ հողին հետ կը կորսվի» *(«Պ. Թ.»)*:

Ինչպես տեսանք վերև տրված հատվածեն, Խրիմյան տնտեսության ամբողջ ծրագիր մըն է, զոր հայ շինականին առաջ կը դնե՝ վերանորոգելու համար անոր հետամնաց ու աղքատ կյանքը:

Եվ պետք է իր ամբողջական երկերը կարդալ՝ տեսնելու համար, թե Խրիմյան ինչպես զարմանալիորեն գյուղական տնտեսության հետին մանրամասնություններով իսկ կը զբաղի, գիտական ու դաստիարակչական ուղեցույց մը դնելու համար հայ գյուղական ժողովուրդին ձեռքը:

Ինչպես, օրինակ՝ հետևյալ տողերուն մեջ.

«Այո՛, քո ձեռքն է քեզ օգնական, երբ գործես, արվեստահնար լինիս: Քո աչքն է քեզ օգնական, երբ նայելով շուրջդ՝ հեռատես լինիս, ներկայեդ քո ապագան չափես ու տեսնաս: Քո միտքն է քեզ օգնական, եթե զայն լուսավորես և թողուս տգիտության մտավոր ու կամավոր կուրությունը: Քո դպրոցներն են քեզ օգնական, եթե մանուկներդ կրթես գիտությամբ: Քո հայրենի հողն է քեզ օգնական, եթե խաշնադարման լինես և հիշես դու այգետունկ որթերդ ի պարտիզի, ծառերն են քեզ օգնական, եթե քաջ մշակելով՝ գինով ու պտուղով լնուս վաճառանոց» *(«Ս. Ս.»)*:

Խրիմյան կարգավ ու մանրամասնություններով կը խոսի սերմի ընտրության և ցանքի մասին, արտերու բաժանման, արտորեից ոռոգման, տկար և զորավոր հողերու որոշման, հունձքի և կալի գործածության մասին, պտղատու ծառերու մասին, անասնապահության մասին, նույնիսկ հոտի պահապան շուներու կերակուրի մասին: Գոմեշի մասին (մաքրություն և այլն): Ձիու հատկություններու մասին: Ոչխարներու խնամքի և դարմանի մասին: Հողը պարարտացնելու համար աղբը արտերը փոխադրելու մասին:

Կը խոսի նաև հողագործության գործիքներու մասին, մշակման եղանակներու, հողի պարարտացման, ցորենը լավ պահելու մասին և այլն, և այլն, առանց մոռանալու որևէ աշխատանք ու գիտելիք ու ծանոթություն, որ օգտակար կրնա ըլլալ գյուղացիին տնտեսության համար:

Խորհուրդ կու տա նաև, որ հայ շինականը, բացի իր ցարդ մշակածներեն, փորձե ու զարգացնե բամբակի, շերամի, կտավատի մշակումը: Խորհուրդ կու տա ու կը սորվեցնե սերմերեն ձեթ պատրաստել, կտավատի ցողունեն՝ կտավներ, փայտի տաշեղներեն՝ թուղթ, անտառի ծառերեն՝ շինության փայտեր և այլն:

Այս բոլորը հողամշակության կողքին կրնա հավելյալ հարստություն մը բերել հայ գյուղացիին ու զգալի կերպով բարելավել անոր տնտեսական վիճակը:

Խրիմյան այսպես ահա խրատելով, հորդորելով, սորվեցնելով, եվրոպացի գյուղացիին օրինակ տալով՝ կ՚ուզե արթնցնել հայ գյուղացին ու դարձնել զայն հառաջադեմ,

լուսամիտ, կորովի, գիտակից ու տնտեսապես բավարարված շինական մը:

Խրիմյանի գործը այս տեսակետեն և, մանավանդ, իր «Պապիկ և թոռնիկը» նաև տնտեսական դաստիարակության թանկագին երկ մըն է. ժողովրդական ոճով ու, միաժամանակ, գիտական ու գեղեցիկ, ներշնչումով գրված իսկական գյուղական տնտեսության դասագիրք մը:

Գործ մը, ինչպիսին է այս նշանավոր «Պապիկ և թոռնիկը», կը կարծեք, թե եզակի է իր տեսակին մեջ տիեզերական գրականության մեջ իսկ:

Այս գործը ճշմարիտ գլուխգործոց մըն է, կատարյալ ու միաձույլ, և, կարելի է ըսել, թե ան հավասարապես և՛ տնտեսագիտություն է, և՛ փիլիսոփայություն, և՛ բարոյագիտություն, և՛ բանաստեղծություն:

Իսկ «Պապիկ և թոռնիկի» խտացումը եղող այն հռչակավոր գլուխը, որ ծանոթ է «Պապկե պսակ ի դաշտ» *անունով, բացառիկ ներշնչումով մը ստեղծագործված՝ մտածման ու զգացումի անզուգական կոթող մըն է, որով հպարտ պիտի ըլլար որևէ քաղաքակիրթ ժողովուրդ:*

Դժբախտաբար, Խրիմյանի մտքերը բավարար չափով չեն հասկցված իր ժամանակին: Մեր հին մտավորականներեն ոչ ոք չէ երկրորդած Խրիմյանի աշխատանքը, ու ազգային մարմիններն ու կազմակերպությունները քիչ չափով ըմբռնած են Հայրիկի մտքերու գործադրության պահանջը:

Միքայել Նալպանտյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը և, գուցե, նման մեկ քանի գործեր ևս, որոնք անծանոթ են մեզի, բացառություններ պետք է համարել, որոնք, բնականաբար, նույնպես աննկատ անցած են իրենց ժամանակին:

Ու իրավամբ, Խրիմյան շատ կը գանգատի իր ժամանակվան մտավորականութենեն և, մանավանդ, երիտասարդներեն, որոնք կ՚ըսե, «հառաջդիմության մի մասն միայն սորված են»:

Մտավորականը, ինչքան ալ գիտնական ըլլա, եթե գործնապես օգտակար չ՚ըլլար իր բուն ժողովուրդի մեծ զանգվածին, այսինքն՝ գավառին, անիկա կորսված ուժ մըն է:

Ահա՛ թե ինչպիսի դառնությամբ կը գանգատի ան.

«Քաղաքացիք իմաստասեր մատենագիր դարձան, բայց չեն զիջանիր քեզ համար գրքեր գրել, թեև խմբագիրք և գյուղատնտեսներ քեզ համար շատ հոդվածներ նվիրում են. դու մի՛ գանգատիր, նույնիսկ գյուղականի մը զավակ, որ մի բարերարի շնորհիվ կ'երթա Եվրոպա, կ'ավարտե յուր ուսումն և համալսարանեն կը վերադառնա, ասացե՛ք դուք, շիտակ ո՞ւր կ'երթա. դեպի քաղաք՝ առանց յուր հայրենի շինական տան ու ծնողաց առաջին ողջույն և այցելություն տալու. եթե ասես՝ պարո՛ն, ինչո՞ւ մոռանում ես քո գեղ, որ քո ծննդավայր և խանձարուրն է: Տե՛ս դու, ի՞նչ կը պատասխանե. ես քաղաքակիրթ, աշխարհակիրթ աշխարհեն կու գամ, կյանքս և ճաշակս բոլորովին փոխված է, ես լույս և գիտություն ունեմ, մի՞թե կարելի է, որ գյուղական խավար և անկիրթ ժողովուրդին մեջ ապրեմ, որ երբեք չգիտեն գնահատել իմ արժեքը, ո՜հ, ես հիշում եմ մեր տուն ու խրճիթ և այն չարաճճի, անզգամ լուեր, որ զիս կը խաշեին և կը տանջեին» *(«Պ. Թ.»):*

Եվ հետո կ'ավելցնե նաև.

«Հապա ի՞նչ ասենք այն պարոններուն, որ առանց Եվրոպիո աշխարհ տեսնելու, նույնիսկ մեր աշխարհին մեջ, կիսակրթության փոքրինչ զարգացումն ստանալեն հետո, իրենց միտք և իրենց սրտի թագուն տենչանք դեպի քաղաքն է» *(«Պ. Թ.»):*

Ահա՛ այն ատենվան դժբախտություններեն մին. ոչ միայն շինականներեն ոմանք կը թողեին իրենց հողը և կու գային քաղաք, այլ նաև ուսում առած մարդիկ, մտավորականներ չէին ուզեր իրենց գյուղին մասին խոսիլ իսկ և իրենց գիտությունն ու ուսումը անիմաստ ու անօգտակար կերպով կը պտցնեին Պոլսո կամ Թիֆլիսի պողոտաներուն վրա, կամ այլուր:

Խրիմյան կ'երազե ուրիշ տեսակ հայ ժողովուրդ մը, ան կ'երազե շինական մը, որ իր հողեն չբաժնվի, մտավորական մը, որ իր ուսումը առնելե հետո վերադառնա իր գյուղը ու օրինակ դառնա տգետ ժողովուրդին, հողամշակության մեջ, անասնապահության, շերամաբուծության մեջ, գյուղի մշակութային, բարոյական կյանքին մեջ:

Կ'երազե հայ գյուղ մը, ուր գյուղացին կ'աշխատի՝ առաջնորդված գիտությամբ, ուր մարդ բարեկեցիկ կ'ապրի

ու կը վայելե իր աշխատության արդյունքը, ուր կյանքը հառաջդիմության ճամբուն մեջ է և ատոր համար ալ ավելի հաճելի ու երջանիկ:

Ահա թե ի՛նչ կը խոսի իր որդվույն, որուն ուսում և կրթություն տալեն հետո կը ղրկե հայրենիք, գյուղ՝ հոն ուսյալ և ստեղծագործ շինական մը ըլլալու համար:

«Եթե ողջ մնամ ու հետ քեզ դեպի հայրենիք դառնամ, վա՜շ, որքան պիտի հրճվի հոգիս, երբ տեսնամ քո հառաջդիմություն գյուղական տնտեսության մեջ, որով դու բարի օրինակ պիտի լինես այն խեղճ գյուղացվոց, որ հողագործության արհեստին մեջ դեռ մանուկ մնացեր են: Միթե իրավո՞ւնք ունինք մեղադրել զիրենք, երբ ուսումն չունին: Իմ և քո սեպուհ պարտիքն է գյուղացի մանուկները զարգացնել և կարևոր կրթություն տալ: Փորձով կը տեսնաս դու, թե ինչպես մանկակիցներդ շուտով կը հառաջադիմեն: Չգիտե՞ս դու, թե գյուղական դաշտի ազատ մանուկներ ինչքան աշխույժ և կորովամիտ են» *(«Ս. Ս.»):*

Ուրեմն, Խրիմյան վստահությունը ունի, թե գիտությամբ, ուսումով և կատարելագործված տնտեսությամբ, հայ գյուղի կյանքը պիտի հեղաշրջվի և պիտի հասնի, նույնիսկ, աշխատանքի մեքենայացման: Կը խոսի, որպես հրաշքի մը մասին, կալի մեքենայի մասին ու կը մարգարեանա հետևյալ տողերուն մեջ.

«Ո՛վ գիտե, անշուշտ, կու գա ժամանակ, և մի օր այդ մեքենան կու գա մեր աշխարհ. ես կը մեռնիմ, և դու կը տեսնաս ու կը հիշես պապկիդ գուշակություն» *(«Պ. Թ.»):*

Գ.
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄ

Մենք դպրոց ըսելով, առհասարակ, այն հիմնարկությունը կը հասկնանք, ուր երեխաներ կը հաճախեն 6–7 տարեկանեն մինչև որոշ տարիք՝ գիտելիքներ սորվելու, մտավո-

բապես ու բարոյապես կազմվելու և դաստիարակվելու համար:

Մարդոց մեծամասնության համար դպրոցն է, որ երեխաներ կը կրթե, կը դաստիարակե ու զանոնք «մարդ» կ'ընե:

Խրիմյան շատ հեռու է այս ըմբռնումեն: Անոր համար դպրոցը որոշ հաստատություն մը չէ, ուսումն ու կրթությունը որոշ տարիքե չ'սկսիր և ոչ ալ որոշ տարիքի մը կը վերջանա:

Կրթությունը կյանքի, մարդկային, անհատական ու հասարակական կյանքի մեկ տևական երևույթն է, մեկ անհրաժեշտ պայմանը:

Ուսումը և դաստիարակությունը վերացական անհրաժեշտություններ չեն, այլ ինքը՝ դրական կյանքն է, որ իր տնտեսական, բարոյական ու մշակութային վիճակը բարվոքելու ու հեղաշրջելու համար, անհրաժեշտորեն, պետք ունի մտքերու լուսավորության, թեքնիք ծանոթություններու ու աշխատության և տնտեսության գիտական մեթոտներու. պետք ունի անհատական ու հավաքական բարոյական–հոգեկան բարձր հատկություններու և այլն:

Արդի ըմբռնումներով՝ մենք պիտի ըսենք, թե Խրիմյան կը դավանի գործնապաշտ դպրոցը (*şcoala activa*):

Ան գործնապաշտ է իր ամբողջ դաստիարակչական ոգիով ու գիտակցությամբ:

Իրեն համար ուսումը ինք իր մեջ արժեք ունեցող բարիք մը չէ, այլ անոր նպատակը պետք է ըլլա ժողովուրդի կյանքին ծառայել, գործնական կյանքը հեղաշրջել՝ տնտեսապես ու բարոյապես, մտավորապես ու մշակութապես:

Դպրոցը, ուսումը՝ առօրյա կյանքի մեկ անբաժան մասն է, որ բուն դպրոցական շրջանեն հետո ալ կը շարունակվի: Ու երբեք ուսում չկա առանց աշխատության, ինչպես և աշխատանք չկա առանց գիտության և բարոյականի:

Հետևաբար, ամբողջ այն ուսուցումը ու դաստիարակությունը, զոր պետք է տրվի տղոց ու մարդոց, պետք է իբր նպատակ ունենա՝ գոհացում տալ կյանքի գործնական ու բարոյական կարիքներուն ու պահանջներուն:

Ու տրված ըլլալով, որ այդ կարիքներն ու պահանջները որոշ սահման մը չունին, որովհետև հառաջդիմությունը՝ նյութական, մշակութային թե բարոյական իմաստով, հարատև զարգացման մեջ գտնվող երևույթ մըն է, ուրեմն նաև ուսումն ու կրթությունը, մտքի ու հոգիի մշակումը ևս սահման չունին, և մարդ ինչքան որ ապրի, պետք է ինքզինքը հեղաշրջե՝ միշտ դեպի ավելի կատարյալ վիճակի մը ձգտելով իր տնտեսության մեջ, ինչպես նաև իր հոգեկան, բարոյական աշխարհին մեջ:

Խրիմյանի համար գիտության ու կրթության հաստատություններ են ընտանիքը, վարժարանը, բնությունը, մանավանդ դաշտը՝ շինականին աշխատավայրը, ու նաև գերեզմանները:

Քննենք ամեն մեկը առանձին ու տեսնենք, թե ի՛նչ կարևորություն կու տա Խրիմյան անոնցմե ամեն մեկուն:

ա. Ընտանիք

Կը կարծենք, թե չկա մտածող էակ մը, հեղինակ մը, որ այնքան ջերմությամբ, այնքան համոզումով ու հեղինակությամբ հիմնավորե ու սրբացնե ընտանիքի հաստատությունը:

Ընտանիքը մարդկային իրականության ամենեն կենդանի, ամենեն բնական ուժերեն մին է: Ան մարդկային համայնքներու առաջին և ամենազորավոր ազդակն է. ան է, որ ծնունդ կու տա թե՛ անհատին և թե՛ համայնքին, ան է, որ իրենց հոգեկան հավասարակշռության մեջ կը պահե անհատն ու ընկերությունը, ան է, որ կ'ապահովե համայնքի ու ազգի տևականացումը:

Ինչպես որ համայնքները ժողովուրդի մը կենդանի միավորներն են, այնպես ալ ընտանիքը կը կազմե համայնքին խարիսխը, համայնքին կենաց աղբյուրը, ոչ միայն կենսաբանական իմաստով, այլև տնտեսական ու բարոյական մշակութային իմաստով:

Ընտանիքը ոչ միայն նոր սերունդներու ծնունդ տալով է, որ համայնքին ու ժողովուրդին տևականությունը կ'ա-

պահովե, այլ այդ ընտանիքը կը պահե ու կը հավիտենականացնե բոլոր նախնիքներու բարոյական ըմբռնումները, հոգեկան գանձերը ու հավաքական, պատմական ձգտումները, ինչպես նաև տնտեսական, նյութական ուժերը:

Նույնիսկ, եթե միայն ա՛յս ընտանիքի ըմբռնումը ըլլար ու ընտանիքի մասին իր գրածները, Խրիմյանը պիտի կարենայինք դասել մեծ դաստիարակներու շարքին:

Բայց մոտենանք ու ծանոթանանք անոր մտքերուն ու խորհուրդներուն, ինչ կը վերաբերի ընտանիքին էության, ընտանիքին դերին ու, մանավանդ, ընտանիքին դաստիարակչական պաշտոնին ու ուժին:

Խրիմյան, ինչպես ըսինք, գիտե տալ անհատին, ինչ որ անհատինն է: Ու հոն, ուր անհատին ուսերուն վրա խոշոր պարտականություններ կը ծանրանան, այդ ընտանեկան կյանքն է:

«Տուն և ընտանիք, – *կ՚ըսե Խրիմյան,* – մի փոքրիկ թագավորություն, երկիր ու սահման է, որո նահապետական աթոռին վրա կընստին ծնողք. հայր՝ իբրև թագավոր, և մայր՝ իբրև թագուհի, և կը կառավարեն հպատակ ընտանիքը: Սույն ընտանեկան պալատին ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ ամենուն տեղ հայրական սեր և մայրական գորովն է»:

Ահա մինչև ո՛ւր կը տանի Խրիմյան անհատին գերիշխանությունը ընտանիքեն ներս, և ի՛նչ ինքնագիտակցության ուժ, և ի՛նչ ինքնավստահություն կ՚ուզե ներշնչել ընտանիքի պետերուն:

Խրիմյանի ըմբռնումով՝ ընտանիքը խոշոր դաստիարակչական, կրթական դեր ունի կատարելիք վարժարանեն առաջ ալ, վերջն ալ:

Նույնիսկ, կարելի է ըսել, թե Խրիմյանի համար ընտանիքը դաստիարակչական տեսակետեն ավելի կարևոր դեր կը կատարե ու պետք է կատարե, քան վարժարանը:

Ու ահա ան կը գրե.

«Մարդիկ Էնպես կը կարծեն, որ միայն վարժապետեն կամ վարդապետեն պետք է սորվին մանուկներ: Այդպէս չէ:

Տան, ընտանեկան դպրոցին առաջին բնական և մեծ ուսուցիչ ու կրթիչ ծնող մայրն է. չենք սխալիր, թե որ ասենք՝ առաջին վարժապետ, վարդապետ, աստվածաբան դաստիարակ մայրն է և, մանավանդ, բարեպաշտ մայրն, որ միայն լեզվով չ՚ուսուցաներ, այլ մայրենի բարի օրինակով կը կրթե զավակներն» *(«Պ. Թ.»):*

Եվ ուրիշ տեղ մը կ՚ավելցնե.

«Զավակաց ապագա կյանքը ծնողաց դաստիարակութենեն կախում ունի»:

Խրիմյան կը դատապարտե այն ծնողները, որոնք անտարբեր են իրենց ծնած երեխաներու կրթության հանդեպ, ու կ՚ուզե մեզ համոզել, թե ինչ որ կարելի է տղուն փոքր հասակին իրականացնել, կարելի չէ այլևս կատարել, երբ որ ան մեծնա:

Ահա՛ իր խոսքերը.

«Բայց գիտցիր, որ բազմածին զավակներն այնչափ պարծանք չեն իրենց ծնողաց, եթե անկիրթ մնան, անառակ լինեն: Գիտե՛ս, այդպիսի զավակներ որչա՞փ նախատինք կը լինեն իրենց ծնողաց: Աշխատի՛ր մանուկ հասակի մեջ լավ կրթություն տալ զավակներուդ, երբ նոքա դեռ դալար ճղիկ են և մոմի պես կակուղ. եթե թողուս, որ հաստանան ու պնդանան, այլևս կը դժվարի կրթություն, վասնզի ամեն բան իրեն համար ժամանակ ունի, նայե, որ չթողուս անցնի ժամանակի պատեհություն» *(«Պ. Թ.»):*

Այս խոսքերով՝ Խրիմյան ի հայտ կու գա որպես արդիական մանկավարժ մը, որ դաստիարակությունը, կրթությունը չ՚ըմբռներ լոկ որպես մտային աշխատանք, այլ առավելապես որպես վարժության խնդիր:

Խրատը, պատվերը, համոզելը, սպառնալիքն ու պատիժը ոչինչի չեն ծառայեր, եթե դեռ կանուխեն, ընտանիքին ծոցին մեջ, առօրյա վարժությամբ մը երեխան ձեռք բերած չէ որոշ կենցաղ, որոշ շարժուձևեր ու վարվելու կերպ, որոշ զգալու ու մտածելու կերպեր, մեկ խոսքով՝ եթե ձեռք բերած չէ որոշ ունակություններ ու սովորություններ:

Խրիմյան մեծ կարևորություն կու տա տղայոց՝ մանավանդ բարոյական կրթության, առաքինության, այսինքն՝ նկարագրի կազմության:

«Մեծապես կը սխալին ծնողք, – *կ՚ըսե ան,* – եթե այնպես հավատան, որ նյութական բարիքները առանց հոգեկան և բարի դաստիարակության մնայուն և ճշմարիտ բարիքն են որդվոց համար»:

Կրթության մեջ Խրիմյան հակառակ է բռնի միջոցներուն. ան կ՚ուզե դիմել «սիրո» ու «գորովի» ուժին և սակայն, միաժամանակ, համաձայն չէ, որ տղան ձգվի իր բնական ընթացքին. որովհետև կ՚ընդունի, թե բնությունը պետք ունի բարոյական մարդուն միջամտության: Ատոր համար է, որ ան կը նկատե, թե ծնողաց պարտականությունն է «Խլել մանուկներու սրտեն անպիտան և խոպան բարքը, սերմանել ու տնկել նոցա տեղը ճշմարիտ բարին և օգտակարը» *(«Դ. Ը.»):*

Իսկ ուրիշ տեղ մը սապես կը բնորոշե ծնողքին դերը երեխաներու կրթության մեջ.

«Եվ ի՞նչ է ծնողական դաստիարակությունը. ուրիշ ոչինչ, այլ միայն կույր ծնված զավակներուն աչքը դեպի բարին բանալ, սիրտն ու ոգին առաքինությամբ կրթել, որպեսզի աշխարհը տեսնան, լույս ու խավարն որոշեն, բարին ու չարը ճանչնան»:

Խրիմյան վախնալով, որ իր՝ սիրո վրա հիմնված դաստիարակությունը սխալ հասկցվի, կ՚անդրադառնա այդ «սիրո» գաղափարին ու կու տա անոր ճշմարիտ, մանկավարժական ըմբռնումը, որ նույնպես խիստ արդիական կարելի է համարել:

Եվրոպական մանկավարժության մեջ, դեռ անցյալ դարեն, երկար տարիներե ի վեր, կը ծեծվի, «ազա՞տ դաստիարակության», թե՞ «կարգապահության ենթարկված դաստիարակության» հարցը, և կամ «ազատության» և «կարգապահության» խնդիրը՝ մանկավարժական տեսակետեն:

Այսօրվան ըմբռնումներուն մեջ այս երկու ծայրահեղությունները ալ տեղի տված են, ու արդի մանկավարժներեն շատերը կը հանգին միջին ճամբու մը՝ ընդունելով, որ իսկական դաստիարակությունը պետք է իրականացնե ազատությունը կարգապահ վիճակի մը մեջ կամ, ուրիշ խոսքով՝ երեխան պետք է տվյալ կարգապահության հպատակի իր համոզումով, իր ազատ կամքով և ո՛չ թե կուրորեն ու առանց ներքին, անկեղծ համոզումի և մղումի:

Սույն խնդրույն տեսակետեն խիստ կարևոր տեղ մը կը գրավեն, օրինակ, Վ. Ֆեորստեր և Ճոն Տրուեյ ժամանակակից մանկավարժության մեջ:

Իսկ Խրիմյան, դեռ անցյալ դարուն, իր գիտակցության մեջ կը հաջողի գտնել այդ հավասարակշռությունը ու, գրեթե, արդիական եզրակացության մը կը հասնի իր հետևյալ տողերուն մեջ.

«Ծնողական դասերուն մեջ ճարտարախոսություն, փիլիսոփայություն բնավ պետք չունի, հապա զիջանելով մանկական հասակին համեմատ հարկ է պարզ, ընտանի և սիրալիր խոսքերով ավանդել կրթությունը: Գիտնալով, որ տղայոց դաստիարակության մեծ պայմանն ծնողական գորովն և բնական սերն է. միայն թե այդ սիրույն մեջ չի զեղծանին ծնողք կամ չափազանցությամբ և կամ խիստ և անհոգ սառնությամբ: Այս երկու կերպ վարմունքն ևս միօրինակ վնասակար են դաստիարակության եղանակին մեջ: Վասնզի չափազանց սերը չափազանց ազատություն և համարձակություն առաջ կը բերե տղայոց դյուրազգաց և անհաստատ բնավորության մեջ, այլևայլ հոռի կիրքերով հանդերձ, որով կը լինին նոքա կամակոր, ինքնահավան, զայրացկոտ և սաստիկ պահանջող:

Իսկ չափազանց խստությունը կը ճնշե և կը սաստե տղայոց բնավորյալ և՛ աշխույժ, և՛ զվարթ ոգին, որով կը բթանա միտքը, սիրտը կը թանձրանա, և որդիական գորովն թմրիլ կը սկսի» *(«Դ. Ը.»):*

Տղայոց դաստիարակության մեջ Խրիմյան մեծ կարևորություն կու տա օրինակին:

Հոս ալ անոր մտածումը կը հանդիպի մանկավարժական ամենաարդիական եզրակացությանց:

Մանկավարժությունը շատոնց հեռացած է «մտավորապաշտ» (intelectualist) հին ըմբռնումեն, երբ կը կարծեին, թե կը բավե տղուն միտքը «լուսավորել», անոր գիտակցության մեջ ստեղծել բարիի ու չարի գաղափարը, որպեսզի այդ տղան գիտնա ճիշտ ճամբան գտնել ու բարիին ու ճշմարիտին հետևիլ: Այս ըմբռնումը, որուն գլխավոր հեղինակներեն մին է մեծանուն գերմանացի մանկավարժը՝ Հեպարտ, ըմբռնում, որ ծանոթ է «մտավորապաշտ» հո-

սանք անվան տակ, այսօր միամիտ տեսություն մը կը համարվի՝ զուրկ իրական հոգեբանական հիմունքե:

Սխալ է կարծել, որ մարդ բարին կ՚ընե, եթե կարենա չարը բարիեն զանազանել, եթե գիտնա ըմբռնել, ճանչնալ ու, նույնիսկ, գնահատել բարիի, արդարի, ճշմարիտի գաղափարները, որպես այդպիսին:

Ամեն մեկս մեր գործնական կյանքեն գիտենք ու այնքան օրինակներ կրնանք հիշել, երբ մարդիկ չարը կը գործեն՝ գիտնալով հանդերձ, որ ըրածնին չար բան մըն է, հակաբարոյական է, անարդար կամ վնասակար:

Բնական է, մտքի լուսավորումը, գիտակցության մշակումը անհրաժեշտ են, սակայն բնավ երբեք բավական չեն բարոյական մարդը ստեղծելու համար:

Այսպեսով է, որ դպրոցի դաստիարակության ուժը կը նվազի զգալի չափով մը, քանի որ դպրոցին գենքերը առհասարակ մտավորական գենքեր են:

Լավ դպրոց մըն է այն դպրոցը, որ կրթության ու դաստիարակչական իր դերը չը ձգտի կատարել ո՛չ միայն մտավորական միջոցներով, այլ կը հիմնվի նաև ուրիշ տվյալներու վրա, որոնցմե գլխավորը դաստիարակի կենդանի օրինակն է:

Բայց այն միջավայրը, ուր օրինակը իր գերագույն դերը կը կատարե, ընտանիքն է: Կարելի է ըսել, որ ամեն երեխա իր ընտանիքի միջավայրին, իր ծնողքի օրինակին արդյունքն է:

Եվ ահա թե ի՛նչ ոսկի խոսքեր կ՚ըսե Խրիմյան այս մասին:

«Ծնողք միայն մարմնով չեն ծնիր իրենց զավակները, բնավորությամբ ևս կը ծնին, որով ընտանեկան կյանքին մեջ զավակները, բնապես, սովորած են իրենց ծնողաց բնավորութենեն և օրինակեն փոխառնել:

Ուստի ծնողաց ամենամեծ և սեպուհ պարտքն է, որ բնախոս ու մտավոր դաստիարակութենեն առավել, բարի գործոց օրինակով դաստիարակեն իրենց զավակները: Թո՛ղ համոզվին ամեն ծնողք, որ մի

բարի օրինակ առավել ազդու և տպավորիչ է, քան հազար խրատ» *(«Դ. Ը.»):*

Խրիմյան գիտական իմաստով հոգեբան մը չէ, և սակայն, ան կը զգա, կը թափանցե մարդկային հոգեկան իրականության խորքը ու կը տեսնե, թե ի՛նչ բարդ կառուցվածք մըն է ան, թե ինչքա՛ն մութ ու գիտակցութենեն անդին գտնվող ուժեր վճռական դեր կը կատարեն, կը տկարացնեն գիտակցության ուժը, մտքին տրամաբանությունը ու շատ անգամ, նույնիսկ, բոլորովին կը չեզոքացնեն զանոնք:

Ուրեմն, ի՞նչ օգուտ միայն երեխային մտքի մշակումեն, անոր մեջ միայն մտավոր, միայն բանական ըմբռնումներ ստեղծելեն:

Պետք է ամենափոքր հասակեն իսկ վարժեցնել երեխան՝ բարին գործել, *ճշմարիտը* խոսիլ, *արդար* դատել, *որպես կենցաղի* բնական կերպեր: *Իսկ այդ կերպը, այդ բարին ընելու հնարավորությունը պետք է ստեղծել տղուն մեջ ո՛չ թե միայն խրատով, «խոսքի» քարոզով, մտավորական միջոցներով, այլ, ամեն բանե վեր, կենդանի, գործնական օրինակով:*

Անձնական օրինակի ուժով դաստիարակել, այդ կը նշանակե կյանքը կյանքով բարեփոխել, այդ կը նշանակե կենդանի իրականություն մը ուրիշ կենդանի իրականության մը ազդեցությամբ առաջնորդել ու ձևավորել:

Օրինակը հոգեբանական բարդ ամբողջություն մըն է (complex), որ բնական կերպով հաղորդիչ ըլլալու, վարակիչ ըլլալու հատկությունը ունի, մանավանդ երբ ան կու գա կազմված՝ տարեց անձի մը կողմե, որուն վրա երեխան բացարձակ վստահություն ունի, անձի մը կողմե, զոր երեխան կը հարգե ու կը սիրե:

Օրինակը խոշոր ուժ և ազդեցություն ունի նույնիսկ հասուն մարդոց փոխհարաբերության մեջ, հապա ուրեմն, ինչքա՛ն ամենազոր կը դառնա ան երեխաներու համար, երբ ի նկատի ունենանք ուրիշ հոգեբանական երևույթ մը ևս, որ նույնքան հատուկ է և չեշտված երեխա տարիքին

մեջ: Երեխաներուն այդ՝ կապկելու, նմանելու, ուրիշը օրինակելու բնական ու բուռն ձգտումն է և՛ լավ, և՛ վատ բաներու համար: Եթե երեխան իր շուրջը մարդիկ չգտնե զանոնք օրինակելու համար, ան կենդանիները կը կապկե և, նույնիսկ, առարկաները, և այս կապկումները ոչ միայն արտաքին, մարմնական են, այլ, հավասարապես, նաև հոգեկան իմաստ ու արժեք ունին:

Օրինակի ազդեցության մասին խոսած ատեն պետք է նկատի առնենք երեխայի տարիքը: Ճիշտ է, օրինակը իր որոշ ազդեցությունը կը պահե որևէ տարիքի, նույնիսկ հասուն մարդոց փոխհարաբերության մեջ, սակայն տարիքը ևս մեծ դեր կը խաղա այս խնդրի մեջ:

Օրինակին ուժը, օրինակ տալու ձևը և օրինակին բովանդակությունը սերտ հարաբերություն ունին երեխայության տարիքի շրջաններուն հետ:

Ամեն տարիքի մեջ օրինակը երեխային վրա նույն ազդեցությունը չ՚ըներ, եթե չգիտնանք հարմարիլ տղուն տարիքի հոգեբանական շրջանին հատուկ ձգտումներուն և պահանջներուն:

Երեխայի մը աճման շրջանները կրնանք բաժանել հետևյալ ձևով.

Առաջին շրջան՝ մինչև 7 տարեկան, երբ օրինակը շատ մեծ ուժ ունի, մանավանդ, ինչ կը վերաբերի արտաքին շարժուձևերուն, վարվելակերպին, խոսելու և գործելու կերպին և այլն: Այս շրջանին է, որ երեխան առավելագույն չափով հակում և ներքին մղում մը ունի ուրիշին նմանելու, ուրիշին ըրածը ընելու: Այս բոլորը՝ ավելի մեքենական մղումով մը, որ, սակայն, տակավ իր բնության հետ կը նույնանան ու մարմնի և մտքի հիշողության մեջ դրոշմված կը մնան:

Այս շրջանը թեև երեխային դաստիարակման մեքենայական շրջանն է, երբ տղուն գիտակցությունը քննականորեն չի գործեր, այլ կը հպատակի իրմե մեծի հեղինակության, ավելի բնազդաբար, և սակայն, այս շրջանը խիստ

կարևոր է դաստիարակության հաջորդ շրջաններուն համար:

Այս պատճառավ է, որ մանկավարժ մը կ՚ըսե.

«Կամքի աստիճանը, որուն կրնա հասնիլ հասուն մարդ մը, համեմատական է, շատ հաճախ, այն ունակություններուն թիվին ու ճշմարտության հետ, զոր այդ մարդը սորված է, ընդունած է իր մեջ իր երախայության աճման առաջին շրջանին»:

Երկրորդ շրջանը կարելի է նկատել 7–11 տարեկան, երբ երեխան ի հայտ կու գա իր անհատականության տարրերով: Այս շրջանը «շարժումի» շրջանն է, և այդ շարժումներու արտակարգ շռայլության շնորհիվ տղան կը սկսի ինքզինքը իրականացնել, ինքզինքը գտնել:

Այս շրջանը ևս արտաքին օրինակին ենթակա է, թեև ավելի նվազ չափով: Սակայն, եթե օգտագործենք այս տարիքի տղոց շարժումի պահանջքը, այն ատեն կրնանք, գրեթե, նույն չափով ազդել անոր վրա մեր օրինակով:

Այս տարիքին կարելի չէ ըսել «այս բանը մի՛ ըներ», այլ պետք է միշտ առիթը գտնել «ա՛յս գործը ըրե», «այսպե՛ս ըրե» ըսելու:

Երրորդ շրջանը՝ 12–17–18 տարեկան, անշուշտ, հոգեբանական շրջանի ամենեն բարդ, ամենեն քրիթիք շրջանն է, երբ երեխան ինքն իր մեջ կը խորանա, ու իր մեջ ի հայտ կու գան նոր–նոր հակումներ, ընդունակություններ ու ոգևորություն դեպի բարձր նպատակներ, ազնիվ գաղափարներ ու զգացումներ, դեպի մեծ մարդիկ, մեծ գործեր և այլն:

Այս շրջանին ալ օրինակը իր խոշոր դերը կրնա ունենալ, երբ հաշվի առնենք պատանիին հոգեկան նոր վիճակը:

Բնականաբար, այլևս խոսք իսկ չի կրնար ըլլալ մեքենական դաստիարակության մը մասին. այս տարիքին, սկսյալ 11–12 տարեկանեն, տղան կարելի չէ պարզապես հպատակեցնել ու ստիպել, որ օրինակի մը հետևի: Սակայն, եթե տղան իր առջև գտնվող այդ օրինակին հանդեպ ներքին մղում մը զգա, այս անգամ՝ գիտակցական, միայն այն ատեն ան կը հետևի անոր:

Օրինակը այլևս կարելի չէ հարկադրել, բայց կարելի է օրինակով ոգևորել՝ համաձայն տղուն ներքին պահանջներուն ու ձգտումներուն:

Օգտվելով մեր ժամանակի մանկավարժական արդյունքներեն՝ այս շատ համառոտ մեջբերումը ըրինք, ընդգծելու համար օրինակի իրական, խորունկ դերը, որ Խրիմյանի ալ թանկագին միտքերեն մին է:

Այսպես է, որ օրինակը ամենագեղեցիկ գործոն ուժը կը հանդիսանա դաստիարակության մեջ, բնական է, ուրիշ գործոններուն կողքին, որոնք նույնպես իրենց տեղն ու դերը ունին:

Հայտնի է, որ երեխային համար ամենասիրելի անձերը հայրն ու մայրն են, որոնց վրա, միաժամանակ, մեծ վստահություն ունի:

Իզուր չէ ըսված, թե հայրը երեխային համար տեսակ մը Աստված է:

Ատոր համար է, որ հորն ու մորը օրինակը շատ մեծ ուժ ունին երեխային վրա. ուժ մը, որ կարելի է նկատել դաստիարակչական ամենազորեղ ազդակը, որ անփոխարինելի է:

Այո՛, ծնողքի կենդանի, բարի օրինակեն կը մեկնի ամեն դաստիարակություն. ավելին, Խրիմյանի համար նույնիսկ ժողովուրդի կյանքին բարոյական մակարդակը կախում ունի այդ ընտանեկան դաստիարակութենեն, այդ ծնողքի օրինակեն:

«Դաստիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է: Այս օրինակը այնչափ բարի ու տպավորիչ է, որ գիտես, թե լուսարվեստին պես թափանցիկ կերպով ծնողաց պատկերը, նույնատիպ, կը հանե յուր զավակաց վերա, և զավակները այդ սկզբնական տիպարն առնելով՝ կը մտնեն ժողովուրդի և ընկերության մեջ: Այնուհետև տարածել կը սկսի օրինակ առ օրինակ, և այսպես՝ ընտանեկան կենաց բարի և չար օրինակներեն ժողովուրդին կյանքը կը բարվոքի կամ կը զեղծանի, կը շինվի կամ գայթակղությամբ կը փլչի, կենդանի կը մնա աշխարհիս վրա կամ կենդանվույն կը մեռնի, և յուր հիշատակ կը բարձվի աշխարհեն» *(«Դ. Ը.»):*

Ուրեմն, եթե ընտանեկան կյանքի մեջ կատարյալ կրթությունը ծնողաց կենդանի կյանքն է և ոչ թե «դպրոցը», ասկե կը հետևի ծնողքի բարոյական ուղիղ և արդար կենցաղի անհրաժեշտությունը:

Խրիմյան կ՚ըսե.

«Այս խրատն ավանդենք ամեն ծնողաց, որ նախ իրենց կյանքն ուղղեն և ապա իրավունք ստանան իրենց զավակները խրատելու» *(«Դ. Ը.»):*

Իսկ «Պապիկ և Թոռնիկի» մեջ իր Թոռնիկին հետևյալ խրատը կու տա.

«Կյանքդ ու վարքդ ուղիղ պահե, թոռնիկ, շիտակ քալե, որ որդիքներդ էլ քեզ հետևին, չի լինի, որ խեչափառին պես միակողմանի քալելով՝ խրատ տաս ձագերուդ, թե ուղիղ քալեցեք: Գիտցիր, որ նոքա պատասխան պիտի տան քեզ. «Հա՛յրիկ, մենք կը տեսնանք, թե դու ինչպես կը քալես» *(«Պ. Թ.»):*

Խրիմյան մեծ կարևորություն կու տա ընտանիքին ո՛չ միայն անհատական դաստիարակության տեսակետեն, այլ նաև ամբողջ ազգի հավաքական կյանքի մտահոգությամբ:

Յուրահատուկ ձևով՝ ան գեղեցիկ ու իմաստալից կերպով մը կը ներկայացնե ընտանիքը և անոր դերն ու արժեքը՝ ժողովուրդի աճումին, տևելուն և հառաջդիմելուն տեսակետեն:

Ահա՛ անոր խոսքերը.

«Ինչպես որ երկու պսակավոր լծակիցներեն ամուսնական միություն մը կը կազմվի, այնպես նաև զուգակից միութենեն կը ծնի և կ՚աճի ամբողջ ընտանիքը, որո նախածնող անդամներն են հայր և մայր. իսկ ծնյալ անդամներն են արու և էգ զավակները, քույր, եղբայր, որք երբ ամուսնանան, փեսաներով, հարսներով և թոռներով կը հավելուն ընտանյաց թիվը:

Ուստի, ընտանեկան կյանքին և տան շինության հիմնաքարեր կը համարվին հայր և մայր: Որչա՜փ սքանչելի, զարմանալի են ամուսնական պարտեզին մեջ այս երկու մանանեխի փոքրիկ հատիկները, որ, ըստ Ավետարանի առակին, երթալով, աճելով՝ մեծ ծառ մը կը լինեն և իրենց բազմապատիկ ճյուղերը կը համատարածեն բոլոր աշխարհը: Վասնզի ամուսնական արմատեն ընտանիքը կը հաստատվի, ընտանի-

քեն՝ ժողովուրդ, ժողովուրդեն՝ այլ և այլ ազգերը, ազգերեն՝ իշխանական պետությունները, և պետություններեն՝ ընդհանուր մարդկային համաշխարհական ընկերություն: Հորմե դյուրավ կ'իմաստասիրեմք, թե մեր ընկերական աշխարհին բովանդակ շենքը ամուսնական և ընտանեկան պատվանդին վրա հաստատված է, ժողովրդոց ոտքը և պետությանց գահերը նորա վրա դրված են. եթե քանդվի այս պատվանդանը, ժողովուրդ և գահերը, ի միասին, կը տապալին, այնուհետև ո՛չ ևս կա՝ ո՛չ աշխարհ, ո՛չ ադամորդի, ո՛չ կյանք, և երկիրը կը դառնա նույն առաջին վիճակը:

«Երկիր աներեւոյթ եւ անպատրաստ»:

Տուն և ընտանիք մի փոքրիկ թագավորություն, երկիր ու սահման է, որո նահապետական աթոռին վրա կը նստին ծնողք. հայր իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի, և կը կառավարեն հպատակ ընտանիքը: Սույն ընտանեկան պալատին ու թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ ամենուն տեղ հայրական սեր և մայրական գորովն է, դաստիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է: Այս օրինակը այնչափ բարի ու տպավորիչ է, որ գիտես, թե լուսարվեստին պես թափանցիկ կերպով ծնողաց պատկերը նույնատիպ կը հանե յուր զավակաց վերա, և զավակները այդ սկզբնական տիպարն առնելով՝ կը մտնեն ժողովուրդին և ընկերության մեջ: Այնուհետև տարածել կը սկսի օրինակե առ օրինակ, և այսպես՝ ընտանեկան կենաց բարի և չար օրինակներեն ժողովուրդին կյանքը կը բարվոքի կամ կը զեղծանի, կը շինվի կամ կամ գայթակղությամբ կը փլչի, կենդանի կը մնա աշխարհիս վերա կամ կենդանվույն կը մեռնի, և յուր հիշատակ կը բարձվի աշխարհեն:

Ժողովուրդը և ազգերը միայն հացով չեն ապրիր, թագավորությամբ և ազատությամբ չեն բարձրանար, այլ առավել՝ բարոյական կյանքով, և այդ կենսական կյանք տվողը ընտանիքն է: Ուշադիր եղիր և ես նկարագրեմ քեզ: Ժողովուրդը, եթե կը հառաջադիմե, յուր առաջին քայլը ընտանյաց սրահեն կ'առնու. եթե կը լուսավորի, յուր լույսը ընտանեկան ճրագեն է. եթե կը միանա, յուր ոգին և կապը ընտանիքն է, եթե կը հարստանա, յուր գանձարան և գանձապետն ընտանիքն է, եթե յուր տուն և սեղան բարելից և առատ է, արդյունաբեր անդաստանը ընտանիքն է. եթե դրախտի գետերը կը վազեն յուր հրապարակը, աղբյուրը դրախտի ընտանիքն է. եթե յուր կարասները լի են գինվով, կը խմե,

կ'ուրախանա, խաղողաբեր այգին ընտանիքն է, եթե բարեծնունդ զավակներով օր ըստ օրե, բյուրապատիկ կ'աճի, յուր նախածնող խնամատար ընտանիքն է. եթե յուր զավակները բարեկիրթ քաղաքացի պատրաստել կ'ուզե, յուր բարեկրթության առաջին համալսարան ընտանիքն է. եթե աշխարհիս վերա երջանիկ ապրել կ'ուզե, թո՛ղ հավատա, որ երջանկության կյանք բխող աղբյուր ընտանիքն է. եթե երկրես հետո երկինք ևս ժառանգել կ'ուզե՝ պահելով յուր հայրենի կրոն, հավատ և եկեղեցին, այո՛, այդ սուրբ ավանդները անեղծ, անկորուստ պահելու խորանն ընտանիքն է» *(«Դ. Ը.»)*:

Եվ ուրիշ տեղ մը, նույն գաղափարներու շարքին, Խրիմյան կ'ավելցնե.

«Ժողովուրդ եթե կը զեղծանի, ներքին յուր զեղծման սկզբնավորությունը ընտանիքն է. եթե բարոյական կենդանի կյանք չունի, մեռելություն ընտանիքն է. եթե դեպի կորուստը կը դիմե, իր կորստյան ճամբա բացող ընտանիքն է. եթե ծունկեր կթոտ են, յուր քայլերը հառաջ չեն երթար, լքումն ու կաղություն ընտանիքն է. եթե երկու ձեռքով կը հարստահարվի, մեկ ձեռքն ընտանիքն է. եթե արտաքին թշնամիներեն պաշարվելով ապշած է, յուր ներքին մերձավոր ու բարեկամ թշնամի յուր տան ընտանիքն է. եթե աշխարհիս կյանքի ճանապարհին մեջ ուղղություն չունի, հոռություն ընտանիքն է. եթե Եվրոպիո կախարդիչ նորասիրությունք զինքը պիտի կողոպտեն անխնա, թո՛ղ զգաստ լինի և տեսնա, որ մեծ կողոպտիչ ձեռք իր ընտանիքն է. եթե իր զավակները օր ըստ օրե հացի կարոտ, թշվառ կը լինին, այդ քաջ հայտնի է, որ ընտանեկան մշակները անաշխատ, հեղգ և անհոգացող են. եթե առանց տնտեսության, առանց նախատեսության կը վատնե յուր վաստակ և գանձը, ո՞վ չի գիտեր, թե շռայլության տնտեսապետն ընտանիքն է. եթե յուր զավակները առույգ և ազնվածնունդ չեն, ուրեմն, ընտանեկան սերունդն հյուծելով՝ ստրկացած է. եթե յուր օրիորդք և երիտասարդք վարակած են մաշողական ախտով, ո՜հ, դոցա մահ և գերեզման փորող ընտանիքն է»:

«Առանց հայրական ու մայրական դաստիարակության անհնարին է բարեկեցիկ ազգ, ժողովուրդ կազմել: Վասնզի ինչ որ շինենք, ինչ որ կազմենք, պետք է գիտնանք, որ այդ կազմող առաջին տարերք ընտանիքն է»:

Կասկած չկա, Խրիմյանը, որ հայ կյանքը, հայ շինականի կյանքը հեղափոխել կ'ուզե լույսով, գիտությամբ ու աշխատությամբ, ջերմ պաշտպանն է դպրոցին, ուսումին ու կրթության:

Սակայն դպրոցը պետք չէ ըլլա վերացական գիտելիքներու, տեսական ուսմանց վարժարան մը, այլ Խրիմյանի դպրոցը, ամեն բանե առաջ, պետք է երեխային տա այն ծանոթություններն ու գիտելիքները, որոնց-ան կարիք ունի իր հողագործի կյանքին մեջ, իր գյուղական տնտեսության մեջ:

Խրիմյան հակառակ է «առհասարակ զարգացման», հակառակ է «ուսում ուսումի համար» սկզբունքին:

«Մանուկ դեռ յուր շրջապատի տեղեր չը գիտցած, տե՛ Ամերիկա և Ճենաստանի մայրաքաղաք կը հասնի»,– *կ'ըսե Խրիմյան վրդովմունքով: Եվ իրավունք ալ ունի:*

Երեխան պետք է սորվի նախ իր շրջապատը՝ աշխարհագրական, պատմական, տնտեսական ու մշակութային իմաստով, և հետո, շատ վերջը, կրնա նաև աշխարհը ճանչնալ:

Աս ալ հին ու նորագույն մանկավարժության սկզբունքներեն մին է: Այսօր կարգ մը եվրոպական երկիրներու մեջ, ժողովրդական դպրոցներու մեջ (նախակրթարան), գլխավոր առարկաներն են մայրենի լեզուն, հաշվագիտությունը *(ինչքան կարելի է գործնականացած ձևի մը տակ) և* հայրենագիտություն *կոչված առարկան, որուն մեջ կը մտնեն շրջապատի և, հետո, ամբողջ հայրենիքի աշխարհագրությունը, պատմությունը, առասպելները, ավանդությունները, սովորությունները ու նաև՝ այդ շրջանի հատուկ* տնտեսության *մասին ծանոթություններ:*

Այս առարկաներուն կողքին նաև՝ երգ, ձեռագործ, ձեռարվեստ, արհեստներ, բոլորն ալ կապված տեղական համայնքի ու աշխատության բնույթին հետ:

Այսպես է, որ դպրոցը կը դառնա ընտանեկան ու համայնքի կյանքին շարունակությունը՝ ավելի մտավորականացած ու գիտականացած ձևին տակ, ինչպես որ բուն կյանքը այդ դպրոցին շարունակությունը պիտի ըլլա ավելի գործնականացած, զարգացած ձևին տակ:

Խրիմյան անհրաժեշտ կը նկատե մասնավոր դպրոցներ ստեղծել նաև այն մարդոց համար, որոնք բախտ չեն ունեցած վարժարան մը հաճախելու:

Խրիմյան մահացու թշնամին է իր ժամանակի անգրագիտության և տգիտության:

Ամեն մարդ, նույնիսկ բեռնակիրները, պետք է սորվին, իրենց միտքը լուսավորեն, իրենց հոգին տաքցնեն:

Ահա թե ի՛նչ կ'առաջարկե Խրիմյան այս դասակարգի անգրագետ մարդոց համար.

«Զափահաս մարդիկ ևս կարող են կրթվիլ, կարող են սովորել, միայն թե անձնվեր ուսուցանող լինի, մանավանդ երբ ուսուցանե և միանգամայն գործե, և յուր անձն, իբրև օրինակ, ընծայե ժողովուրդին» *(«Պ. Թ.»):*

Ու մտքերու այս շարքին մեջ, ան օրինակը կու տա պոլսահայ կյանքեն, խղճամիտ ուսուցչի մը, որ նվիրված էր այս նպատակին:

«Կիրակնօրյա մի լսարան, պանդուխտ բեռնակիրներու կրթության համար, Պոլսո մեջ բացեր է Ղազարոսյանը: Նա մանկավարժ չէր, բայց այնպիսի դյուրին ոճով ու եղանակով կ'ուսուցաներ դասերը, որ այդ թանձրամիտ կարծված բեռնակիրներ ամենայն դյուրությամբ կըմբռնեին նորա ասածներն» *(«Պ. Թ.»):*

Բայց Խրիմյան ուրիշ հետաքրքրական առաջարկ մը ևս ունի: Ան բավարար չի նկատեր փոքրերու դպրոցները ու կը խորհի, թե ամեն գյուղական համայնքի մեջ որոշ ձևի դպրոցներ, դասընթացքներ պետք է ըլլան երիտասարդներու համար, որպեսզի հոն շարունակվի այն մտավոր, գիտական, մշակութային զարգացումը, որ սկսված է վարժարանին մեջ:

Խրիմյան կը գրե.

«Գյուղական դպրոցներ ո՛չ միայն մանուկներու, այլ նաև երիտասարդներու, այրական հասակով մարդոց համար և, նույնիսկ, հնացած ծերերը կրթելու համար» *(«Պ. Թ.»):*

Գ. Բնությունը և աշխատանքը որպես դպրոց

Ինչպես հիշեցինք արդեն, Խրիմյանի համար դպրոցը վերացական ըմբռնում մը չէ, ոչ ալ վերացական անհրաժեշտություն մը բխած հաստատություն մը: Դպրոցը գործնական կյանքի մեկ մասն է, անոր մեկ երեսը:

Բայց, ինչ որ խիստ ավելի հատկանշական է, Խրիմյանի «սորվելու» մեթոտն է. հոս ալ զարմանալիորեն գործնապաշտ է: Պետք է սորվիլ ո՛չ թե խոսքով, մտքով երևակայելով, ո՛չ թե տեսականորեն, այլ գործնապես: Հոս ալ պետք է նկատել, որ Խրիմյան նորագույն մանկավարժության գործնապաշտ կոչված ըմբռնումին լավագույն ներկայացուցիչներեն մին է:

Խրիմյան իր թոռնիկին դասերը սկսելու համար, կը բռնե անոր ձեռքեն, զայն դաշտ կը տանի ու հոն այսպես կը սկսի խոսիլ անոր.

«Խելացի և ուշիմ թոռնիկ, այժմ պիտի սկսե պապիկ յուր դասերն. ո՛չ վարժարան պետք է, ո՛չ գրասեղան, ո՛չ թուղթ, ո՛չ գրիչ, ո՛չ մելան. դու տե՛ս, թե ո՞ւր պիտի խոսիմ դասերս: Տան մեջ, ախոռին մեջ, դաշտին մեջ, լեռներու վերա, աղբյուրներու գլուխ, գութանին ժամանակ թե՛ մաճ կը բռնեմ, թե՛ դասերս կը խոսիմ. դու լծան վրայեն ականջ անելով՝ դասերուս լսե և ձայնովդ լծկաններդ խրախուսե:

Բացված ակոսներուն պես, ես էլ քո միտք պիտի հերկեմ ու բանամ:

Սերմնացանի ժամանակ, վա՜շ, ինչ սիրուն է. մի կողմեն ցորենի հատիկներ և մյուս կողմեն դասերս մտքիդ մեջ պիտի ցանեմ: Հունձքի ժամանակ, երբ սարակներ, դեպի հովի տակ նստած՝ մանգաղներ կը սրեն, ես էլ կը նստիմ, քո դաս կը խոսեմ և կը սրեմ քո գուլ միտքը:

Կալատեղն էլ ի՜նչ հարմար դասատուն է: Երբ դու կողմնասայլին վրա կը կենաս, ես քառեշտ ձեռքս, կը շրջեմ կալին բոլոր, մի կողմեն օրան կը դարձնեմ և օրանի հետ դասերս կը խառնեմ, և կալսելով՝ ցորեն հարդեն կը ջոկեմ. դու լի՛ց ու պահե զայն մտքիդ շտեմարանին մեջ» *(«Պ. Թ.»):*

Խրիմյանի այս միտքեն մեկնելով ու օգտվելով նորագույն մանկավարժության փորձառութենեն, որ զանազան եվրոպական ու ամերիկյան երկիրներու մեջ որոշ գործնական դրության և եզրակացության հանգած է, կարելի է հասնիլ գործնական մանկավարժության ըմբռնման մը, հայկական դպրոցի տիպարի մը, որուն հիմնադիրը եղած պիտի ըլլա մեր մեծ դաստիարակ Խրիմյանը:

Դ. Գերեզմանները

Խրիմյանի համար դաստիարակչական խոշոր դեր ունին նաև գերեզմանները:

Ինչպես Ռուսսոն իր Էմիլը կ՚առաջնորդե հիվանդանոցները՝ անոնց միջոցավ երեխաներուն հոգվույն մեջ մարդոց հանդեպ գութի զգացումը զարգացնելու համար, այնպես ալ Խրիմյանի պապիկը իր թոռնիկը կը տանի իրենց գյուղի գերեզմանատունը՝ հոն խոսեցնել տալու համար մեռելները: Եվ մեռելները կը խոսին: Անոնք քանի մը խոսքով, իրենց կյանքը կը պատմեն, ու թոռնիկը մտիկ ընելով այդ կենսագրությունները, անհուն փորձառություն և իմաստություն ձեռք կը բերե: Թոռնիկը, կանգնած այդ խորհրդավոր հողակույտերուն ու խաչքարերուն առաջ, կը տեսնե կյանքի իսկական օրինակները այն մարդոց, որոնք իրենց հերթին ապրեր ու անցեր են այս կյանքեն, զոր ինքը՝ թոռնիկը, հիմա է, որ կը սկսի:

Այդ «մեռած մարդոց» կյանքի օրինակները, իրապես, կենդանություն կը ստանան թոռնիկին գիտակցության մեջ, ու անոնց լավ կամ գեշ օրինակը, բարի կամ չար հիշատակը պիտի հետապնդեն զայն, իր կյանքի ամեն մեկ քայլափոխին: Գերեզմաննե՛րն այդ թոռնիկի քայլերը պիտի ուղղեն դեպի ճշմարիտ ու բարի ճանապարհը կյանքին:

Ուրեմն, տեսակ մը դպրոց ալ գերեզմաններն են, որոնց մասին Խրիմյան կը գրե.

«Գերեզմաններն ալ մեզ համար մի խոսուն դասարան են. խաչքարեր և մեռելոց հիշատակներ դեռ կը խոսին մեզ հետ. տեսնանք, թե հին և նոր ժամանակի մեջ ի՞նչ մարդիկ ծներ, եկեր են աշխարհ, ապրեր են, գործեր են թե՛ բարի, թե՛ չար և դարձյալ թողեր են այս աշխարհ, արևն ու կյանք, տուն և ընտանիք, մտեր ծածկվեր են մեռելոց այս մութ աշխարհին մեջ:

Գիտե՞ս, կան այնպիսի մեռելներ, որ մինչև ի կատարած աշխարհի կը խոսին մեզ: Գրքերով կը խոսին, անմահ հիշատակներով կը խոսին, գերեզմանի քարերով կը խոսին» *(«Պ. Թ.»)*:

Ահա՛ քանի մը դաստիարակչական, տնտեսագիտական արժեք ունեցող տապանաքարեր, զոր պապիկը կարդալ կու տա իր թոռնիկին:

«Այս է տապան Առճակցի տանուտեր Օհանճանին, որ ութսուն տարի ապրեցավ, ո՛չ գյուղեն, ո՛չ տնեն հեռացավ, երբեք չթողուց ձեռքեն գութանի մաճն մինչև օրն մահվան: Նա նորոգեց մեր գյուղի փլած եկեղեցին և մի արտ հիշատակ տվավ եկեղեցվույն:

Ասացե՛ք, Աստված ողորմի յուր հոգվույն» *(«Պ. Թ.»)*:

«Ես եմ հավպան Մարկոս. գեղեցի էի, բայց հող չունեի, մտածեցի, թե ի՛նչ անեմ, որ ապրեմ. մի գիշեր երազի մեջ շատ հավեր ու հավկիթներ տեսա, ասի՝ սա իմ բախտն է. առավոտ ելա, երազիս մեկնություն կատարեցի. առաջ մի փոքրիկ հավնոց շինեցի, տասն հատ հավ գնելով՝ թուխս դրի, մի քանի տարվան մեջ հավերուս թիվ հասավ մինչև երեք հարյուրի, միշտ հավ ու հավկիթ կը ծախեի գեղի հյուրերուն և քաղաքացվոց. ես և իմ ընտանիքս լավ ապրեցանք հավու մսով և ձվազեղով: Աղվեսներ և կուզեր, որ շատ թշնամի են հավերուն, ես անոնց համար որոգայթ շինեցի, ամեն տարի ձմերան աղվես և կուզ բռնելով՝ նոցա մորթերեն բավական շահ կ'անեի: Հավբանությանն շնորհիվ որսորդություն էլ սորվեցա. վերջ, մեռնելուս ժամանակ, կտակ արի զավակներուս, որ հավնոց ու հավեր երբեք ձեռքեն չը թողուն, որ միակ իրենց հացն ու ապրուստն է:

Ասացե՛ք, Աստված ողորմի հավպան Մարկոսի հոգվույն» *(«Պ. Թ.»)*:

«Ես եմ մեղվապահ մշակ Պետոն. փոքրիկ տնակես ի զատ ոչինչ բան չունեի. մտածեցի, գնացի պարտք արի, հինգ փեթակ առի, պզտիկ մեղվանոց մը շինելով՝ մեջ դրի. Աստված հաջողեց, մեղուներս բազմացան, մինչև հարյուր փեթակ եղան, որք շատ առատ մեղր ու մոմ կու տային. թե՛ քաղաք տանելով՝ դրամով կը վաճառեի, և թե՛ գեղի մեջ հացի ու եղի հետ կը փոխեի. ընտանիքս մեղրով ու կարագով կը պահեի. մեռնելուս օր խրատ տվի անդրանիկ որդվույս, որ չը հեռանա մեղ-

վանոցի տունեն և մեծ խնամքով պահպանե մեղուներ, որ մեր ժրաջան, անվարձ մշակներն են:

Ասացե՛ք, Աստված ողորմի մեղվապահ Պետոյի հոգվույն» *(«Պ. Թ.»)*:

«Ես եմ նաղարաճի Մարգոն: Այս խաչքարի տակ հանգիստ պառկեր եմ. բոլոր կյանքս ուրախությամբ անցուցի, ձմեռն հարսնիքներով և ամառ պահեգ դնելով: Ամեն գարնան կու գայի Առճակ գյուղ, պահեգ կը դնեի, առատ սեխ ու ձմերուկ կը հանեի, ցորենի, գարո, եղի, պանիրի, ժաժկի հետ կը փոխեի, տունս առատությամբ կը լցնեի, աշխատությամբ շատ երջանիկ ապրեցա. երբ տեսա, թե պիտի մեռնիմ, կտակ արի, որ զիս քաղաք չի թաղեն, այլ տանին, Առճակ գյուղ թաղեն. Աստված շեն պահե այդ գյուղ, որ շեն պահեց իմ տուն:

Ասացե՛ք, Աստված ողորմի նաղարաճի Մարգոյին հոգվույն» *(«Պ. Թ.»)*:

Դ.
ԱՆՀԱՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Անհատը Խրիմյանի համար ինքն իրմով ու ինքն իրեն համար ապրող գոյություն մը չէ, այլ հավաքական կյանքի մեկ մասը, համայնքի մը մեկ բաղկացուցիչ տարրը: Անհատը անոր համար, ինչպես նորագույն մտածող մը պիտի ըսեր, «ֆունգցիոնալ» իրականություն մըն է տվյալ համայնքի մը մեջ:

Անհատը «իր» համայնքեն, իր այս նյութական ու բարոյական աշխարհի մթնոլորտեն դուրս ելլելու ազատությունը չունի և պետք չէ ունենա:

Համայնքեն ներս, սակայն, Խրիմյանը անհատին շարժելու ազատությունը ոչնչով չի կաշկանդեր: Ավելին, ամեն անհատ տեսակ մը իշխան է իր տունին մեջ, իր հողին վրա, իր կյանքին մեջ:

Խրիմյան այս տեսակետեն անհատապաշտ է ու կը ձգտի կատարելագործել, ազնվացնել անհատին բոլոր կարողությունները, մարմնական, իմացական ու բարոյական բոլոր

ընդունակությունները՝ բնության օրենքներու գծով, ըստ աշխատանքի ու արդյունաբերության պահանջներուն ու պայմաններուն, կրոնական ու բարոյական տիեզերական արժեքներու կամարին տակ:

Խրիմյան թեև գիտակցությունը ունի մարդկային անհատի անհատականության, և սակայն կը հավատա անոր բարելավման ու կատարելագործման: Այս իմաստով՝ անհատական դաստիարակության նկատմամբ կարելի է զայն լավատես մը համարել: Խնդիրը ժամանակակից արևմտյան մտածողներու համար վեճի առարկա դարձած հարց մըն է: Հոս տեղը չէ, բնական է, լայն կերպով ծանրանալ սույն հարցի վրա: Եվ սակայն, հիշենք միայն այսքանը, թե այսօր կարելի է հստակորեն նկատել երկու հիմնապես իրարմե տարբեր ըմբռնումներ անհատի կատարելագործման մասին՝ մարդու անհատական արժեքի, անհատականի արժեքավորման նկատմամբ:

Լավատես ու հոռետես ըմբռնում մը: Առաջինը, այսինքն՝ լավատես ըմբռնումը, մշակված է ավելի ֆրանսական դպրոցին մեջ, իսկ հոռետես ըմբռնումը՝ գերմանական մտածողության մեջ:

Լավատես ըմբռնումը կը հենու ավելի ընկերային գիտության վրա, իսկ հոռետես ըմբռնումը՝ կենսաբանական գիտության վրա:

Եվ ինչպես ամեն խնդրո մեջ, այստեղ ալ երրորդ դասակարգի մտածողներ կան, որոնք կ՚աշխատին հաշտեցնել այս երկու ծայրահեղ ըմբռնումները:

Խրիմյան, որուն համար խնդիրները վերացականորեն չեն դրվիր, բնական է, դուրս կը մնա այս վիճաբանութենեն: Եվ սակայն, իր ըմբռնումը ճիշտ այդ պատճառով զերծ է ծայրահեղություններե և, հետևաբար, իր քննական լավատեսությամբ շատ մոտ է ճշմարիտ ուղիին:

Կը մնա, որ գիտական մարդիկ վերացական տվյալներով հիմնավորեն այդ ճշմարիտ ուղին:

Խրիմյանի համար անհատի կատարելագործման հիմնական տվյալը, ինչպես տեսանք, մտքի լուսավորումն է ու

աշխատանքի և արդյունաբերության միջոցներու գիտակցանացումը:

Բացի այդ, սակայն, Խրիմյան երբեք չ՚անտեսեր բարոյական տվյալը, որ կոչված է անհատի հոգիին ու խղճին վրա դնելու մարդկայնության դրոշմը: Հետևաբար, կարգ մը գործնական խորհուրդներ կու տա մարդու անհատական դաստիարակության նկատմամբ, զոր կ՚ուզենք այստեղ ընդգծել:

«Դրախտի ընտանիքի» մեջ խոսելով չափի զգացումին մասին, զոր մարդ պետք է ունենա իր անհատական ու ընտանեկան կյանքին մեջ, սոկրատյան սկզբունք մը կը դնե՝ ըսելով.

«Ընտանեկան սրահիդ սեմոց վրա այս առած գրե. «Ծանի՛ր զքեզ»: Այս իմաստուն առած մի՛ մոռնար, կարդա՛ միշտ, չափ ու սահման դիր տնտեսական կառավարությանդ, հացդ չափով կեր, ջուրդ չափով խմե, հանդերձդ չափով հագիր, թո՛ղ հայոց տիկնայք քառասուն կանգուն հազար թերթիկ շրջազգեստը տասն կանգունի փոխեն, որ բավ է և շատ այնչափ մարդոց հասակի վայելչության, զոր Արարիչը չափով ստեղծեր է»:

Խրիմյան, շատ խոր կերպով, ունի նաև կարգ–կանոնի, կարգապահության զգացումը, զոր կը պահանջե հայ անհատեն, հայ աշխատող հողագործեն: Ան տեսած է, բնականաբար, թե հայը անկարգ է իր կյանքին մեջ, անչափ ու, հաճախ, անհավասարակշիռ է իր մտածումներուն մեջ, անորոշ ու մակերեսային՝ իր գիտցածներուն մեջ:

Ահա, ի տես այս բոլորին, Խրիմյան զարմանալի հստակությամբ հետևյալը կը պահանջե հայ անհատեն՝ ըլլա ան գյուղացի կամ մտավորական.

«Փոքր ի շատե բարեկեցիկ կյանք ունենա, գիտնա յուր կյանքի տնտեսություն, տուն և ընտանիք կարգով-կանոնով կառավարել, գիտնա աշխարհի բաներ, մարդոց կենցաղավարության պայմաններ, գիտնա տիրապես լավն ու վատ, բարին ու չար, առաքինություն և մոլություն, արդարություն և անիրավություն, պատիվ և անարգանք» («Պ. Թ.»):

Վերջին խոսքերը, մանավանդ, ոսկի տառերով գրվելու արժանի են իրենց հավիտենական արժեքին համար:

«Գիտնալ ստուգապես, որոշել ճշմարտություն և մոլություն. արդարություն և անիրավություն, պատիվ և անարգանք»:

Այս քանի մը խոսքին մեջ խտացած է իմացական, բարոյական ու ազգային դաստիարակության իտեալ մը, զոր Խրիմյան հայ ժողովուրդին կը պարգևե որպես լուսավոր ճամբա, որպես սրբազան պատգամ:

Անհատի բարոյական մեծ հատկանիշներեն մին կը նկատե խիղճը: Անհատական խիղճը:

Իր պատրիարքության առաջին շրջաբերականին մեջ է, որ գեղեցիկ ու շատ ինքնատիպ պատկերով մը կը ներկայացնե անհատական խղճին դերը մարդու կյանքի մեջ:

Խրիմյան կը գրե.

«Խիղճը հաշվեպահանջ ոստիկան է, որ, իբրև դատավոր սրտի, աթոռին վրա բազմած՝ կը խայթահարե միշտ»:

Այս պատկերին մեջ ինչքա՜ն հոգեբանական ճշմարտություն կա:

Ուրիշ մեկ հատկանիշ, որ բարոյական մարդու հոգեկան զարդը կը հանդիսանա, այդ սերն է: Կարելի չէր, որ Խրիմյան առատ սեր չպահանջեր ամեն մեկ անհատե: Որովհետև ինքը համակ սեր է, ու ինչ որ կը գրե, ինչ որ կը մտածե ու կը զգա կամ կը գործե, սիրո ուժն է, որ զինք կը մղե ու կ'ոգևորե:

Ինչպես Դանիել Վարուժանի սերմնացանը, Խրիմյան ամեն տեղ սեր կը ցանե, նույնիսկ սահմանեն ալ անդին:

Նույն շրջաբերականին մեջ Խրիմյան կը գրե.

«Սիրեցե՛ք զմիմյանս, դուք եղբայր եք: Ո՛վ սքանչելի սիրո խորություն և բարձրություն, ո՞վ կարող է զքեզ չափել. երկնից հորիզոնին չափ առատ ես, շատ ես. եթե մարդիկ այս սիրո հոսանքեն մի կաթիլի չափ սիրեին զիրար, ամեն զրկանք և բռնություն պիտի խեղդվեր նորա մեջ:

Մարդիկ ազատ և երջանիկ պիտի ապրեին»:

Սիրո մեկ երեսն ալ ընկերասիրությունն է, որմե Խրիմյան կը հետևցնե նաև ուրիշ բարոյական հատկություններ, որոնք կը բխին այդ սիրո արմատեն:

«Հաշիվն, զոր անձինդ պարտական ես, որ, գրեթե, հիմն և սկիզբն է ընկերասիրական պարտուց, զի ազնիվ սիրո բողբոջ պետք է, որ մարդուն անձին արմատեն սկսի:

Զգաստություն՝ ողջախոհ վարուց մեջ, բարեխառն՝ ժուժկալության մեջ. սակավապետ՝ կենաց մեջ, արդար՝ տնտեսության մեջ»:

Անհատական բարոյական շարք մը պատվերներ կը թվե իր «Պապիկ և թոռնիկ» գրքին մեջ, զորս, որպես կտակ, կը ձգե իր մահեն վերջ, իր թոռնիկին ու հարսին:

Ահա՛ այդ կտակին գլխավոր պատվերները.

«1. – Այրի քո ծնող մայրիկիդ պետք է ամենայն ակնածությամբ պատվես, իբրև ծնող մայր:

2. – Իսկ դու, Շուշան, հարսնության մեծ պարտիք հնազանդությունն է: Գուցե լսած եք, թե կան այնպիսի կեսուրներ, որ կ'անարգեն ու կը տանջեն իրենց հարսներն. ո՞վ գիտե, թերևս իր հարսներն էլ շատ պակասություններ ունեն: Բայց դու, որ քանի տարվան հարս ես, մի օր լսեցիր ու տեսա՞ր, որ կեսուրդ մի տասն խոսք խոսեց կամ անարգ կերպով վարվեցավ քո հետ: Հիշե՛, Շուշան, որ դու էլ մի օր կեսուր կը լինիս. ինչ որ անես, ան ալ կը գտնես:

3. – Կ'ավանդեմ քեզ, թոռնիկ, մեր նահապետական տան պատկառանքն ու պարկեշտություն»:

Խրիմյան կը շարունակե իր այս պատվերները՝ պահանջելով, որ թոռնիկը՝

«4. – Պաշտպանը ըլլա Շուշանին մինչև օրն մահվան:

5. – Գուրգուրա իր երեխաներուն վրա ու զանոնք մեծցնե մեծ խնամքով, որպեսզի անոնք դառնան առողջ, ժիր, լուսամիտ ու առաքինի:

6. – Բարի համբավ ունենա, ժողովուրդին սեր ու համակրություն գրավել գիտնա դեպի զինք, որովհետև աշխարհի բովանդակ ոսկին դորա հետ չի հավասարիր:

7. – Բարոյական կյանքի մը միջոցներն են՝ սիրել, բարերարել, գթասիրտ լինել, քաղցածին ոչ միայն հաց տալ, այլ «թանապուրին մեջ ձեռքով հաց բրդել» և այլն:

8. – Անխախտ պահել հավատքը դեպի հայրենի եկեղեցին:

9. – Հեզ և բարեհամբույր բնավորություն ունենալ. ընկերը իր անձին պես հավասար սիրել. արդարությունը իր ընկերոջ հետ հավասար բաշխել. բարի խղճմտանք ունենալ ու սիրել զրկանք կրել, քան զրկել:

10. – Ժողովուրդին բարին ու շահն մտածել զվարթամիտ առատաձեռնությամբ:

11. — Մեծագործ ձեռնարկություններ կատարել, որ հասարակաց օգտին հարմար ըլլան, այսինքն՝ եկեղեցի, դպրոց, հիվանդանոց և այլն»:

Ինչպես կը տեսնենք, հոս ալ անհատական բարոյականի, ընկերային կենցաղի և ազգային գիտակցության ամբողջ ծրագիր մըն է, որ այսօր ալ կրնանք այժմեական նկատել մեր ժողովուրդին համար, մանավանդ գաղութներու մեջ:

Նույն կտակին մաս կազմող կարելի է նկատել նաև հետևյալ տողերը, զոր Խրիմյան իր հայ որդիներուն կը թողու որպես խրատ և գերագույն պատվեր:

«Այո՛, քո ձեռքն է քեզ օգնական, երբ արվեստահնար լինես: Քո աչքն է քեզ օգնական, երբ նայելով շուրջդ՝ հեռատես լինես, ներկայեդ քո ապագան չափես ու տեսնաս: Քո միտքն է քեզ օգնական, եթե զայն լուսավորես և թողուս տգիտության մտավոր ու կամավոր կուրությունը: Քո դպրոցներն են քեզ օգնական, եթե մանուկներդ կրթես գիտությամբ: Քո հայրենի հողն է քեզ օգնական, երբ դու զայն արհեստիվ մշակելով բեղմնավորես: Քո բազմախոտ լեռներ, հովասուն հովիտներն են քեզ օգնական, եթե խաշնադարման լինես և հիշես քո այգետունկ որթերդ: Պարտեզի ծառերն են քեզ օգնական, եթե քաջ մշակելով՝ գինվով և պտղով լնուս վաճառանոց: Քո տնտեսական ճարտարամտությունն է քեզ օգնական, որ դաշտի մեջ հող սիրես, և քաղաքին մեջ՝ արվեստ և վաճառականություն: Քո հայրենյաց միության սերն է քեզ օգնական, եթե իբրև մայր գիրկդ բանաս, պանդուխտ ու գաղթական որդիներդ անդրեն ժողովես և չթողուս, որ գրկեդ հեռանան:» *(«Ս. Ս.»):*

Անհատի կատարելագործման ապացույցներեն մին ալ այն սերն ու հարգանքն է, զոր որդիները պարտին տածել հանդեպ իրենց ծնողաց:

Ծնողական սերը նույնիսկ տեղ մը կու գա, որ կը նույնանա հայրենասիրության հետ:

Խրիմյան կը գրե.

«Ուրեմն, ո՛վ դուք, որ աշխարհիս վերա հայր ու մայր ունիք, ընտանեկան կենաց ու ծնողական գրկարանին մեջ կ'ապրիք, թե՛ մեծ և թե՛ փոքր, թե՛ անդրանիկ և թե՛ կրտսեր, թե՛ քույր և թե՛ եղբայր, առհասարակ ձեզ հորդոր խոսելով՝ համառոտեմ ճառիս միտքը և ձեր պարտիքները, ուշադիր եղեք: Գիտեք, ո՞վ են նոքա, որ ձեզ կյանք տվին, այս աշխարհ բերին. նոցա անուն հայր ու մայր կը կոչվի և ձեր ծնողքն են, դուք պարտավոր եք, նոցա կաթին ու հացին դեմ, Հակովբ նահապետին պատրաստած խորտիկը փոխարինել, որպեսզի արժանապես ժառանգեք Իսահակա հոր օրհնությունը: Դուք պարտավոր եք ամենայն ակնածությամբ խոնարհիլ ձեր ծնողաց առաջ, հնազանդությամբ լսել, մեծարանոք ընդունիլ այն ամեն հրամանները, որ ձեզ և ընտանեկան կենաց համար բարի և օգտակար են: Դուք պարտավոր եք ողջակեզին փայտ շալկել, անդիմադարձ երթալ մինչև Բեթելին լեռը և հոն թողուլ, որ ձեր թևեր կապվին, ինչպես Սահակ՝ Աբրահամ սուրբ նահապետին առաջ: Դուք պարտավոր եք, երբ կը ծերանան և կը զառամին ձեր ծնողքը, դուք նոցա որդի մխիթարության և ցուպ ծերության լինիք. ամենահոժար սիրով խնամել, դարմանել և երբեք չը տրտմեցուցանել զիրենք: Դարձուցեք նաև ձեր աչքը քամաժպիրհ և հայրածանակ օրինակին: Նոյի պարկեշտ և երկյուղած որդվոց պես ծածկեցեք ձեր ծնողաց առականքը, որ ընտանեկան տան պատիվն է. զգուշացե՛ք, հայր և մայր բամբասողները Աստուծո և մարդկանց առաջ շատ մեղապարտ են:

Դուք պարտավոր եք դարձյալ հայրենի տան փառք, ճրագ, տոհմական ազնվականությունը նույն ճոխության և փառավորության մեջ պահել և ջանալ միշտ չաղարտել երբեք ճշմարիտ ազնվականության պատիվը: Եթե աշխարհիս բախտը ձեր վիճակ այնպես հաներ է, որ դուք աղքատ ծնողաց զավակ լինիք, շատ է, թե նոցա բարոյական առաքինությունը ժառանգեք, որ ադամանդեն, ոսկիեն և կորստական հարստութենեն ավելի մեծ է: Գիտցեք նաև, որ այն ազնվականաց զավակները, որոնք հայրենի տան հարստությունը դյուրապես կը ժառանգեն, այնչափ մեծ և գովելի չեն. հապա այն իսկ է ավելի փառք և պարծանք, որ ձեր ազնվականությունը ձեզմե սկսի, որով դուք, իրավամբ, հայրենի տան հիմնադիր ազնվական կը լինիք: Եվ քանի՞ գորովանաց արժանի են այն վատ, հեղգ և անվաստակ զավակները, զորս կը հրավիրե Սողոմոն, որ երթան, մրջյունին գործունեություն տեսնեն: Նոքա թեպետ կը

պարծին, թե իրենք ազնվականաց զավակներ են, բայց վատթար ու վատնիչ տնտեսությամբ վարվելով՝ հայրենի տան ազնվականությունն իրենցմով կը վերջանա, կը շիջանի տան պայծառ ճրագը: Նոքա, որ երբեմն տեր էին, ծառա և ստրուկ կը դառնան: Մուրացկանաբար կը շրջին, և երբ ևս հանգանակություն կ'ընեն նոցա համար, Եկեղեցին՝ ծանուցանելով, թե ճոխ հարստութենե ինկած, արժանավոր թշվառ անձ մի է, կը խնդրե, որ եկեղեցվո մեջ ծածկեն յուր անունը, երբ ինքն հրապարակի վրա հայտնապես կը մուրա: Դուք մի՛ այնպես կարծեք, թե հարստութենե ինկած ամեն դժբախտներն երկնից կամ աշխարհիս պատահարներեն են. ո՛չ, դոցա մեծ մասի անկումն բուն իրենց վարած անչափավոր կյանքեն է» *(«Դ. Ը.»)*:

Եվ նույն մտքերը կը շարունակե հետևյալ տողերուն մեջ.

«Այո՛, զավակաց պարտիքն է ճանաչել զծնողս. և ծնողական ծայրագույն սեր չափել պետք է, թե չկա աշխարհիս վրա ուրիշ ոք՝ ո՛չ եղբայր, ո՛չ բարեկամ, ո՛չ ազգական և ո՛չ իսկ ամուսին, որ զինքն այնչափ գորովով սիրե ու խանդաղատի, անձն՝ անձին, և հոգին՝ հոգվույն փոխան տա, ինչպես ծնողք: Ուստի ծնողական սիրո այս մեծ իրավունքը նույն փոխադարձ սեր կը պահանջե զավակներեն, զոր սրտի մտոք պետք է հատուցանեն ու պարտական չի մնան:

Ճանաչել և հպատակիլ պետք է ընտանեկան կենաց, և առտնին փոքրիկ թագավորության մեջ քանի բարձր և փառավոր է ծնողաց իշխանության աթոռ, թեպետ և ստրուկ լինին նոքա, աղքատ լինին և, իբրև անքաղաքացի, շինական խրճիթին մեջ ապրին, դարձյալ միշտ մեծ են ծնողք, որ քաղցր և անբռնադատ սիրով կը հրամայեն, որոց կամակատար հնազանդություն մատուցանել արժանի է, ինչպես տիեզերք՝ Աստվածապետական աթոռին առաջ: Չկա բնավ օրենք և իրավունք մի, որ զավակներ ազատ և անհնազանդ կացուցանե ծնողաց բնական և պարտավորիչ իշխանութենեն:

Ճանաչել պետք է նաև, թե որդիքները ո՛րչափ երախտապարտ են առ ծնողս, որք ոչ միայն երկանց վիշտերով ծներ են զիրենք, այլև բազմադիմի չարչարանքներ և կարոտություններ կրելով՝ պահեր ու դարմաներ են, որոց տրիտուր և փոխարեն պետք է հատուցանեն որդիք, երբ ծերություն կը հասնի ծնողաց վերա կամ, մերթ ևս, տարաժամ հիվանդություն կը շրջապատեն զիրենք: Այս դառն տառապանաց մեջ

ո՞վ մխիթար պիտի լինի ծնողաց սրտին, եթե ոչ զավակները, որոց անհրաժեշտ պարտականությունն է ամենայն սիրով դարման տանել ծնողաց մինչև գերեզմանին դուռը և ձեռքով ի հող դնել նոցա խոնջյալ գլուխ և աշխատյալ անձն» *(«Դ. Ը.»)*:

Խրիմյանի համար, ուրեմն, անհատի կատարելագործումը և ինքնահեղաշրջումը և՛ անհրաժեշտ է հառաջադիմության տեսակետեն, և՛ հնարավոր է:

Այդ կատարելագործումը պետք է կատարվի երեք ուղղությամբ՝ բարոյական, մտավորական ու տնտեսական:

Անհատի բարոյական հատկանիշները պիտի ըլլան՝ խիղճը, սերը հանդեպ նմանին, ընտանիքին, հանդեպ ընկերոջ ու ժողովուրդին, ու նաև՝ հավատքը, գթասրտությունը, բարեգործությունը և այլն:

Մտավոր կատարելագործումը անհատը պետք է դարձնե ավելի լուսամիտ, հստակատես, իրատես, ավելի ինքնագիտակից ու, մանավանդ, կարող պետք է ըլլա ճշմարիտ ու ճշգրիտ կերպով ճանաչելու իր շրջապատը և ինքզինքը:

Բայց Խրիմյանի համար իսկական մարդը չի բնորոշվիր իր մտածումներովը, իր վերացական ըմբռնումներովը միայն կամ թե կյանքի հանդեպ այդ մարդուն ունեցած կեցվածքովն ու աշխարհայացքովը, այլ, մանավանդ, անոր գործովը:

Անհատը, Խրիմյանի համար, իր լրիվ իմաստը կը ստանա իր աշխատանքին, իր կատարած գործին ու ստանձնած դերին մեջ:

Ատոր համար է, որ ան առաջին գծի վրա կը դնե աշխատանքի ձևերու հեղաշրջումը և, ի մասնավորի, տնտեսական մարզի մեջ մարդ անհատի կատարելագործումը:

Իր կրթության ըմբռնումին հետ սերտ կապ ունեցող խնդիր մըն է այս, որ կոչված է խոր հեղաշրջում առաջ բերել ցարդ մեր ճանչցած դպրոցական կազմակերպության մեջ:

Այս «գործի» դավանանքը, զոր Խրիմյանին այնքան հարազատ է, կը տեսնենք մենք այսօր, թե արդեն սկսած է կիրարկվիլ հառաջադեմ ժողովուրդներու կրթական կյանքին մեջ՝ այսպիսով ստեղծելով դպրոցի նոր տիպար մը, որ խո-

բապես կը տարբերի մեր մինչև հիմա տեսած դպրոցեն, թե՛ ինչ կը վերաբերի ուսման առարկաներուն ու անոնց բովանդակության և թե՛ դասավանդման մեթոտներուն:

Բնական է, Խրիմյան մանրամասներու մեջ չի՛մտներ ու այսպիսի «գործի» դպրոցի մը ծրագիրը չի ներկայացներ մեզի, և սակայն, այդ սկզբունքն է, որ ան մեզի մատնանիշ կ՚ընե՝ կենդանի աշխատանքին մարդը կատարելագործելու ու կյանքի իրական ու գործնական կարիքներուն համար պատրաստված անհատը ստեղծելու իր առաջադրության մեջ:

Մենք Խրիմյանի այդ մատնանշումն է, որ ուզեցինք հոս ընդգծել, որպես անոր խարիսխ մտքերեն մին՝ անհատի կատարելագործման դժվարին աշխատանքին մեջ:

Ե.
ԿՆՈՋ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կինը և, մանավանդ, անոր դաստիարակությունը, անոր դերն ու արժեքը կյանքի մեջ և, մասնավորապես, ընտանեական կյանքի մեջ, մեծապես կը զբաղեցնեն Խրիմյանի մտածումը:

Կնոջ հարցը,- ահա՛ մեր դարու «խնդիրներեն» մին ևս:

Տարօրինակ է մեր ժամանակը: Մարդիկ կը սիրեն խնդիրներ հարուցանել, հարցեր ստեղծել ու վիճիլ, անվերջ վիճիլ, կարծես նպատակը վիճիլը ըլլար և ոչ թե լուծում մը գտնելը:

Ուրեմն, ծնունդ առած է «կնոջ հարցը» ևս. թեր ու դեմ կարծիքներով, տեսություններով: Ծայրահեղություններ, որոնք հաճախ մտքերու ու զգացումներու արտառոցության դիմեցին:

Պահ մը, նույնիսկ, կիները «ֆեմինիզմի» շարժում մը սկսած էին կազմակերպել՝ պատերազմ հռչակելով այս աշխարհին դեմ, զոր այր մարդիկ, իբր թե, իրենց ուզածին պես կառուցաներ են:

Կինը կ՚ուզեր «ազատագրվիլ» ամուսնույն, ընտանիքին և, նույնիսկ, իր զավակին «լուծեն» և կ՚ուզեր ապրիլ իր կյանքը «ազատորեն»: Կ՚ուզեր կյանքը ապրիլ՝ առաջնորդվելով «իր» իտեալներով և այլն:

Ֆեմինիստներու իտեալը ըլլար, կարծես, հետևիլ Հ. Իպսենի ծանոթ թատերգության հերոսուհի Նորայի օրինակին, որ օրին մեկը, նոր կոչում մը զգալով իր մեջ, կ՚անդրադառնա, որ ինք ազատ կին մըն է, ու հետևաբար՝ լքելով ընտանիք, ամուսին ու երեխաներ, կը հեռանա այդ «վանդակեն», այդ պուպրիկներու տունեն՝ ազատ կյանք մը դիմավորելու համար:

Ամեն չափազանցություն, սակայն, իր բնական վախճանը ունի՝ բնության օրենքներու հարկադրանքի տակ:

Եվ այսօր այս «կնոջ» հարցը տակավ կը գտնե իր բնական հունը ու իր լուծումը կը ստանա նույնքան բնականորեն:

Կինը պետք է վերադառնա իր բնական տեղը ու գրավե իր բնական դիրքն ու արժեքը:

Այս ճշմարիտ ու բնական ճամբան է, զոր ցույց կու տա կիներուն Խրիմյան ևս:

Պետք է չեշտենք հոս, սակայն, որ Խրիմյանի օրով երկու չափազանցություններն ալ կային: Գավառներու մեջ կինը ստրկական վիճակ մը ուներ, բոլորովին զուրկ տարրական իրավունքներեն, իսկ մեծ կեդրոններու մեջ, ինչպես օրինակ՝ Պոլսո մեջ, հարուստ դասակարգի կիները հասած ըլլալով... «խիստ քաղաքակրթյալ» վիճակի մը, կ՚անտեսեին իրենց ընտանեական պարտականությունները հանդեպ իրենց ամուսնույն և, մանավանդ, հանդեպ իրենց զավակներուն:

Խրիմյան կը ծառանա այս երկու ծայրահեղությանց դեմ և կ՚ուզե գավառի հայ գեղջուկ կինը փրկել այդ հետադեմ ու տգետ ըմբռնումներեն, իսկ մյուս կողմեն կը դիմե «զարգացյալ» տիկիններուն ու կը հորդորե զանոնք, որ վերադառնան դեպի իրենց ընտանիքն ու երեխաները:

Նախ՝ Խրիմյան կինը կը հռչակե սկզբունքով հավասար այր մարդուն.

«Ո՛չ ոք կը տարակուսի, թե կինն ևս այր մարդուն պես բանավոր ու մտավոր է: Եթե մշակվի նորա միտքը, նա կարող է հավասար հառաջադիմել»,- *կը գրե Խրիմյան և կ՚ավելացնե.*

«Պետք չէ բոլորովին տկար համարել զկին՝ կարծելով, թե նա մի հողակերտ և դյուրաբեկ անոթ է. երբեմն հրացյալ երկաթ կը դառնա ան, երբ ս. կրոնքն, ամուսնությն և զավակաց սեր զինքն կը բոցավառե ու կը մղե առ ամենայն վտանգ»:

Ուրիշ տեղ մը ան կը գրե.

«Ամուսնական միության մեջ այր և կինը մի մարմին է, այլ կինը գլուխ չէ. կը հավատանք հոգեխոս Առաքելույն, թե կնոջ գլուխ այրն է. սակայն ո՞վ կարող է մտաբերել, թե, ուրեմն, կինը նորա ոտքն է, պատվանդան է և այլն: Ո՛չ, կին այր մարդուն նվաստագույն մասն չէ, այլ նորա կողի բուն միջկետն է, նորա սրտին, հոգվույն մոտ, հորմե արարչապետին իմաստությունը խորհրդով մի ոսկր առավ և ամուսնական մարմինը լրացուց: Եթե համարիմք, դարձյալ այր մարդ, իբր տեր ամուսնական կյանքին մեջ, միթե իրավո՞ւնք ունի խստությամբ իշխել, տիրապետությամբ վարել կամ կարծել, թե կինը յուր ստացվածն է և կամ արծաթագին ծառա: Եթե զորություն ունի, բուռն են յուր բազուկները, նա միթե իրավո՞ւնք կը ստանա ջարդել, փշրել յուր կողին մի տկար ոսկորը, յուր կյանք բառնալ ու չիմանալ: Եթե կը համարի զինքն իբրև հանճարեղ, իմաստուն, խոհական, քաղաքագետ, աշխարհավար և այլն, յուր պարտիքն է, իբրև նախաթոռ, բազմելով ընտանեկան գերդաստանին գլուխն՝ կինն ևս յուր խորհրդակից առնելով, կառավարեն ի միասին ընտանեկան կյանքը: Իսկ եթե իրապես կը ճանաչե, որ կինը յուր կենակից ամուսին է, մինչև ցմահ դաշնակից ընկերն է, յուր աշխատության հավասար լծակիցն է, բախտին ու ապերջանկության մեջ անբաժանելի կարեկիցն է, յուր մահվան ու շիրիմին վերա լացող ողբերգուն է, յուր թողուցած որբ զավակներուն խնամատար մայրն է, յուր գերեզման օրհնող և հիշատակն անմահ պահող ջերմեռանդ այրին է, ուրեմն, պետք է գիտնա, երբ ամուսնասեր կինը այս պարտիքները կատարե, այլևս ի՞նչ պարտք կը մնա:

Երկու ամուսնացելոց փոխադարձական պարտիքները մինչև ի գերեզման տևելով՝ անդր ևս կ՚անցնին: Վերը պահանջեցինք այր մարդեն՝ սեր և անձնվիրություն. միանգամայն զեկուցինք , որ յուր ուժը և զորությունը չը չափե կնոջ տկարության հետը. պետք է իրապես պահանջենք, որ կինն ևս չափով և ուժով անձնանվեր լինի ու հավատարմապես հատուցանե յուր փոխադարձ պարտիքները. սեր՝ սիրույն փոխան, խնամք՝ խնամոց փոխան, սիրտ՝ սրտին փոխան, հավատարմություն՝ հավատարմության փոխան» *(«Դ. Ը.»):*

Խրիմյան այր և կնոջ փոխհարաբերությանց հարցը կը լուծե «լծակից» բացատրությամբ, հետևյալ տողերուն մեջ.

«Երբ կը տեսնամ հողագործի արտի մեջ, որ մի զույգ ամոլակից եզները լծվելով՝ գետին կը հերկեն, երբ կը տեսնամ, որ միակտուր լծնփայտ՝ եզներու վզից վերա հավասար դրված է, որպեսզի հավասար քալեն և հավասար ուժով արորը քաշելով՝ վարեն արտն, ճիշտ այս բնական օրինակեն բարոյական օրինակ հանելով՝ կարի պատշաճ է ընտանեկան կյանքին մեջ թե՛ առն և թե՛ կնոջ աշխատության պայմանները որոշել ու չափել: Ընտանեկան ագարակին մեջ երկու գլխավոր աշխատավորներ կան, որոնց համար լծակից բառին նշանակությունը շատ հարմար ու ճիշտ է, որ ցույց կու տա առն և կնոջ հավասար կյանքն և ընթացքը» *(«Դ. Ը.»):*

Եթե կինը մտավորապես հավասար է այր մարդուն, և ընտանեկան կյանքի մեջ անոր վիճակված է լծակցի դեր մը, ուրեմն, ասկե կը հետևի, որ կինը ևս պետք է հավասար կերպով դաստիարակվի և ուսում ստանա՝ իրեն վիճակված դերը լավագույն կերպով կատարելու համար:

Խրիմյան հարց կու տա, թե ինչո՛ւ միայն այր մարդիկ պետք է ուսում ու կրթություն ստանան, և կ՚ըսե.

«Նոր աշխարհ կ՚ուսուցանե, որ դորա միակ դարման է մարդոց կատարյալ կրթություն տալ, չէ թե միակողմանի կրթությունը, այսինքն՝ մարդվույն կեսը կրթել, կես մասին լույս տալ և նորա մյուս կես մասն թողուլ կույր, խեղճ, ստրուկ և ապուշ: Իմացնել կ՚ուզեմ մարդոց երկու սեռին, առանց խտրության կրթություն տալ՝ յուրաքանչյուրին յուր կոչման պատշաճ» *(«Դ. Ը.»):*

Եվ ահա ինչպե՛ս կը պատճառաբանե կնոջ հավասար կրթության անհրաժեշտությունը.

«Այդ ճանչնալով՝ մեր աշխարհ, մեր ժողովուրդ և մեր կյանքը, հարկ է խոստովանիմք, որ այր մարդիկ ևս պակաս և կարճամիտ չեն կնոջմեն. և նոցա այս կարճամտություն պիտ տևե, քանի որ մայրեր կարճամիտ են. ո՞վ չի գիտեր, թե կարճամիտեն կարճամիտ կը ծնանի: Լուսավոր և քա-

ղաքակիրթ աշխարհ սորա դարման միայն այս գտավ, որ նախ՝ մայրերու կարճամտություն կրթե ու բժշկե դաստիարակությամբ, որպեսզի նոքա կատարյալ և առողջամիտ զավակ ծնանին:

Երանի՜ թե երկու կարճամիտ ամուսիններ իրարու չպատահեին, որով ընտանեկան կյանքը կը դառնանա իսպառ: Եթե միայն կին կարճամիտ լինի, և այր մարդ՝ բանգետ և խոհեմ, յուր վերա կը մնա բարոյական մեծ պարտիքը, որ ամենայն խնամով ու երկայնամիտ համբերությամբ դարման տանի յուր կենակցին կարճմտությունը բժշկելու համար: Իսկ եթե այր մարդն է կարճամիտ, որ հոլով անգամ թե կը պատահի, հայտ է, հայնժամ այդ պարտքը իմաստուն և խոհեմ կնոջ բաժին կը մնա, որ քաղցր հոգատարությամբ դարմանե յուր ամուսնույն կարճմտությունը:

Բարի և ժրագլուխ կինը միայն արժանավոր ամուսնույն համար իր բարոյական պարտիքը չի կատարեր այլև, նույնիսկ, անարժանին համար. որ չէ թե միայն բնապես կարճամիտ է, այլև խստաբարո, դաժան և ստամբակ մարդ է, այսպիսո համար ևս իր վայելուչ պարտիքները նա չի մոռանար, այլ ի գործ կը դնե և կը ջանա միշտ յուր ընկերին խստությունը ողոքելու, որպեսզի չխռովի տան խաղաղություն, չբամբասվի ընտանեկան պատիվն» *(«Դ. Ը.»):*

Խրիմյան կը պաշտպանե կինը այն ամբաստանություններուն դեմ, որոնց ենթակա է ան հաճախ: Ան կը գրե.

«Կ'ըսեն, որ կինը անհոգ է, և այս անհոգության համար չարաչար կը դատին զինքն: Սակայն, ես խոսիմ, դու դատաստան արա, ուշիմ ընթերցող. կնոջ անհոգությունն ի բնութենե՞ է, թե՞ այր մարդիկ թողեր են, որ կինն անհոգ լինի ու չմտածե, թե ընտանեկան սրահեն դուրս ի՞նչ կա աշխարհիս մեջ և ի՞նչ կը գործեն այր մարդիկ: Ես այնպես կը կարծեմ, որ կնոջ անհոգության պատճառը, մեծ մասամբ, այր մարդիկ եղած են, որ կա՛մ այրական ինքնահավան հպարտությամբ կնոջ կարևորություն չտալով՝ նա սովորեր է անհոգ մնալ, կա՛մ մեծամտությամբ՝ ստրկություն ու նվաստություն կը համարեն կնոջ խորհուրդ տալ կամ առնուլ և կամ օրվան ձախորդ անցքեր պատմել և ցույց տալ յուր վիճակի կացություն: Ստույգ է, որ առն և կնոջ յուրաքանչյուրին աշխատությունները հատկացյալ են, զոր ի վեր անդր գրեցինք, այլ համական խորհրդակցության մեջ երկուքն ևս պարտական են իրենց հաշիվները տալ. մին՝ վաստակին համար, և մյուսն՝ տնտեսության»:

Խրիմյան ավելի առաջ կ'երթա և կ'ընդունի, որ կինը նաև իրավունք ունի տեղյակ ըլլալու ամուսնույն արտաքին գործերուն ու կ'արդարացնե այդ հետևյալ տողերուն մեջ.

«Եթե այր մարդոց իրավունքն է ընտանեկան ու առտնին գործոց վերա խելամուտ լինել, միթե կնոջ իրավունք չէ՞ արտաքին իրաց վերա տեղեկություն ստանալ ու գիտնալ, թե այր մարդիկ ի՞նչ կը գործեն աշխարհիս կառավարության ու շահավաճառության մեջ» *(«Դ. Ը.»):*

Այս բոլորեն հետո, սակայն, Խրիմյան կը ճշտե կնոջ դերը, անոր անփոխարինելի դերը ընտանիքին մեջ: Այդ դերը կարելի է ամփոփել հետևյալ ձևով, Խրիմյանի իսկ բառերով. տնտեսության առտնին կառավարություն, ընտանեկան կյանքի պահպանման և, մանավանդ, երեխաներու խնամք ու դաստիարակություն:

Խրիմյան կ'առաջարկե, որ կնոջ կրթությունը և ուսումը այնպես կատարվի, որ ան իր ապագա ընտանեկան դերը լավագույն կերպով կատարե:

Կը ծանրանա, մանավանդ, երեխաներու խնամքի և դաստիարակության գործին վրա:

Ինչպես հիշեցինք, Խրիմյան կը տեսնե Պոլսո և այլ կեդրոններու մեջ, թե ինչպես հասուն դասակարգի կիները բոլորովին կ'անտեսեն իրենց պարտականությունները՝ իրենց երեխաներու հանդեպ կատարյալ անհոգություն մը ցույց տալով:

Խրիմյանի զայրույթը սահման չունի այն մայրերուն հանդեպ, որոնք առանց լուրջ պատճառ մը ունենալու կը մերժեն կաթ տալ իրենց սեփական նորածին երեխաներուն իսկ և դայակ մը վարձելով՝ կը լուծեն հարցը ու իրենք «իրենց» գործին կը նային:

Ստորև կու տանք այն հատվածը «Դրախտի ընտանիքեն», ուր Խրիմյան կը հիմնավորե գեղեցիկ կերպով մոր մը իր զավակին կաթ տալու պարտքը:

«Եվ մոր բնական պարտքն է կաթ տալ: Վասնզի մեծագութ Արարչապետը միայն այդ պարտուց համար ամեն ծնող մոր կուրծքեն երկու ստինքներ կախեր է, և քանի՜ մեծ է Նախախնամողին հոգը, որ զկաթն մանկան հետ կը ստեղծե, և այն պահուն կը սկսին մոր ստինքներեն եր-

կու աղբերակները բղխել, երբ կաթնածարավ մանուկը յուր բերանը կաթի աղբերակներուն դեմ կը բանա»:

Ուստի Աստված և բնության անփոփոխ օրենքը պարտավոր կը կացուցանեն մայրը, որ յուր ծնած զավակ ինքն յուր իսկական կաթով սնուցանե: Մայր մի կարող չէ այս պարտիքը եղծել, զոր թե՛ բնության օրենք և թե՛ բնական սեր անեղծ գծեր են մոր սրտին և կուրծքին վրա:

Մայր մի, եթե մոռնա այս ծնողական պարտիքը, եթե եղծե այս օրենքը, այդպիսի մայր անգորով, զրկիչ և պարտազանց է. թո՛ղ թագուհի լինի, թո՛ղ իշխանուհի կամ քաղաքացի և շինական, աշխարհիս որ կարգեն լինի, նա կարող չէ արդարանալ երկնից նախախնամության դատավորին առաջ: Մի՞թե արժանի է մի կին մայր կոչվելու, երբ ստինքները լի են կաթով, նա մանուկն օտար կաթին և օտար գրկին հանձնե և կամ թողու, որ ցամքի ու կտրի բնատուր կաթը: Չգիտեմ, աշխարհիս մեծատանց ոսկիներուն այդ մի ազնվականության շնորհ ու նշա՞ն է, որ մայրական այդ մեծ ու առաջին պարտիքը նվաստություն կը համարին, որպես թե ամոթ լիներ այն իրենց տիկնության, և կամ թե այնպես կը դատեն, թե մանկան կաթ տալը աղախնական պաշտոն է, և այդ ծառայությունը՝ դիեցիկ դայակներու համար միայն:

Մարդկային ընկերության ընտանեկան կենաց մեջ եթե անօրինակ զեղծումն մի կա, այս է. եթե զրկանք մի կա, այս է, որով մայրերը բուն իրենց զավակները կը հարստահարեն. եթե բանավոր մարդ անբան անասնոց առաջ կը նվաստանա ու կ'ամաչե, այս է: Վասնզի բնության իմաստուն Արարիչ ինչպես մարդուն, նույնպես բոլոր կենդանյաց համար գութը հավասար բաշխեր է: Թո՛ղ տեսնան մայրերը, որ առյուծն անտառին մեջ յուր կորյուն կը դարմանե, կովն՝ յուր հորթիկ, մաքին՝ յուր գառնուկը, հավ՝ յուր ճիտերը, ճնճղուկ՝ յուր ձագերը, այնս իրավունք ունի՞ մայրն յուր կաթովը չի սնուցանել յուր զավակը, որ յուր հոգվո հատորիկն է. կամ թե չդարմանել այն հարազատ ծաղիկը, որ յուր ծոցեն բուսած է, յուր արմատին ծիլն է. ինչպե՞ս ձեռք է այն մոր ձեռք, որ կը քանդե այդ մատաղ ծիլն յուր բնաբույս արմատեն և զայն օտար արմատին հյութով սնուցանել կ'ուզե» *(«Դ. Ը.»)*:

Բայց այս խնդիրը ուրիշ երես ալ ունի: Այդ դայակին պարագան է, որ աղքատութենե մղված, ստիպված է իր սեփական երեխան կաթե զրկել՝ այդ կաթը «ազնվական» տիկնոջ ծախելու համար:

Եվ տեսե՛ք ի՜նչ բուռն զայրույթով է, որ Խրիմյան կը պոռթկա այդ «ազնվական» տիկնանց դեմ:

«Հապա ո՜վ դուք հայոց ազնվական տիկնայք, ես կը փափագիմ, որ ձեր բարեկեցիկ կյանքին մեջ ձեր մայրական պարտիքները դարձյալ չմոռանաք: Երբ ձեր այրերեն ոմանք զժողովուրդ կը հարստահարեն, դուք ևս աղքատ մայրերը կը հարստահարեք՝ նոցա զավկին կաթը հափշտակելով: Դուք ձեր խիղճը մի՛ խաբեք, թե կաթին գին կամ դայակին վարձքը կը վճարեք. գիտցե՛ք ստույգ, այդ վարձքը, թե բյուր անգամ ավելի վճարեք, կաթին փոխարեն չէ: Եվ միթե կը կարծե՞ք, թե աղքատ մոր կաթն այդչափ արժանի է, երբ դուք ձեր կաթն նույնիսկ ձեր զավկին կը խնայեք» *(«Դ. Ը.»)*:

Կնոջ գլխավոր պարտականություններեն մին զավակներուն դաստիարակության գործն է:

«Ընտանեկան կամ առտնին դաստիարակական վարժոցին մեջ ո՞ւր են այն բնախոս ու մեծ վարժապետները, որոց ի բնութենե հանձնված է իրենց զավակաց կրթության հոգատարությունը:

Արդ, աշխարհ գիտե, և բնությունը ինքնին կ'ուսուցանե, թե ընտանեկան դպրոցին մեջ օտար մանկավարժ չի կա, այլ միայն նոքա են հեղինակ ու դաստիարակը, որոց պատկառելի և քաղցր անունը հայր և մայր կը կոչվի» *(«Դ. Ը.»)*:

Մայրը պիտի դաստիարակե թե՛ մանչը, թե՛ աղջիկը, սակայն մանչոց դաստիարակությունը տարբեր ձևով պիտի ըլլա, աղջկանցը՝ տարբեր ձևով: Որովհետև, ինչպես տեսանք, աղջիկը պետք է դաստիարակել որպես ապագա տանտիկին, որպես տնտեսել գիտցող, որպես կին և, մանավանդ, որպես մայր:

Եվ Խրիմյան անգամ մըն ալ կը շեշտե աղջիկները այս ուղղությամբ դաստիարակելու անհրաժեշտությունը ու կ'ըսե բոլոր մայրերուն.

«Կրթեցե՛ք ձեր մատաղ մանուկներն, որ մեծնան, մարդ լինեն, թո՛ղ բացվի նոցա մտքին աչքը, իբրև կույր չը շրջին աշխարհի վերա. կրթեցե՛ք նաև ձեր աղջիկներն, որ խելացի, տնտես և բարի մայրեր լինեն. պետք է գիտնաք, որ տան շինություն, կարգավորյալ տնտեսություն միայն կիներուն ձեռքով կը լինի:

Միթե կիներ մարդ չե՞ն, հոգի և միտք չունի՞ն:

Տեր Աստված կին՝ իբրև ամուսին տվավ այր մարդուն, ոչ թե միայն զավակ ծնելու համար, հապա իբրև ընկեր և օգնական տվավ, որ աշխատության մեջ գործակից լինի. մարդ դաշտի մեջ աշխատի, կինն ալ տան մեջ» *(«Պ. Թ.»)*:

Զ.
ՀԱՄԱՅՆՔԻ ԸՄԲՌՆՈՒՄ

Եթե փորձենք Խրիմյանը դասել մտածումի այժմյան հոսանքներեն միույն մեջ, մեծ դժվարությանց կը հանդիպինք:

Խրիմյան, որպես դաստիարակ, ընկերային խնդիրներու նկատմամբ անհատապա՞շտ է, թե՞ հավաքապաշտ, իմացաբանական տեսակետե իրապա՞շտ է, թե՞ գաղափարապաշտ, բարոյական հարցերու մեջ բնապա՞շտ է, թե՞ բարոյապաշտ:

Այս հարցերը շատ սերտ կապ մը ունին մանկավարժության հետ. իսկական դաստիարակ մը չի կրնար լուրջ գործ մը սկսիլ, նախքան սույն խնդիրներուն հանդեպ կեցվածք մը ունենալը:

Ահա՛, ուրեմն, հարցումներ, որոնց պատասխանելով, պիտի կարենայինք նախ՝ ավելի ճշգրիտ ու հստակ կերպով բնորոշել Խրիմյանի ըմբռնումը, և մյուս կողմե՝ պիտի հաջողեինք անոր մտքերուն այժմեականությունը ճշտել դաստիարակչական տեսակետեն:

Սակայն, այս գործը շատ դժվար է և դուցե, անկարելի, հակառակ որ իր գրվածքներուն մեջ, ամեն տեղ, կը հանդիպինք մտածումի, ըմբռնումի և ոգիի բազմաթիվ տարբերու, որոնք ուղղակի և սերտ կապ ունին վերև հիշված գաղափարական հոսանքներուն հետ:

Եվ, այնուամենայնիվ, Խրիմյան չենք կրնար դասել այդ հոսանքներեն միույն մեջ:

Ինչպես ուրիշ ստեղծագործական ասպարեզներու մեջ, ինչպես, օրինակ, բանաստեղծության կամ նկարչության մեջ, միայն փոքրերն են, որ դպրոցի կամ որոշ ուղղության մը գերին կը դառնան և սովորական կաղապարեն չեն կրնար դուրս գալ:

Մեծերը սակայն, հանճարները, վերացական սահմաններ չեն ճանչնար:

Խրիմյան դաստիարակչական գետնի վրա հանճար մըն է: Կարելի՞ է ըսել, թե ան միաժամանակ և՛ իրապաշտ է, և՛ գաղափարապաշտ. և՛ բնապաշտ է, և՛ բարոյապաշտ. և՛ անհատապաշտ է, և՛ հավաքապաշտ:

Ո՛չ, որովհետև Խրիմյան ամենեն ալ բան մը առած ու զանոնք հաշտեցնելով՝ համադրություն մը ստեղծած է, ո՛չ: Այլ Խրիմյան պարզապես կը գլե կ՚անցնի բոլոր այդ կաղապարված տեսակետները:

Բոլոր այդ վերացական սահմանները կը տժգունին Խրիմյանի կենդանի, իրատես մտածումին առաջ, որովհետև այդ մտածումը կը ցոլացնե ու կը բյուրեղացնե իրական կյանքը այնպես, ինչպես որ ան կա դրապես, և այնպես, ինչպես այդ կյանքը կրնա ըլլալ իր օրինական զարգացման սահմաններուն և հնարավորություններուն մեջ:

Խրիմյանի մտքերը շոշափելի մարմին ունեցող, ապրող ու աճող ամբողջություն մը կը կազմեն. ամբողջություն մը, որ, ինչպես ինքը՝ կյանքը, ամեն բանե առաջ մեկ հիմնական հատկանիշ ունի՝ կենդանի է: Այնքան կենդանի, որ, երբեմն, անկազմակերպ է ու հակասական:

Միայն հանճարներուն է տրված այդ կենդանին ու իրականը համադրաբար վերստեղծելու ուժը իրենց ամբողջականության ու շարժման մեջ ավելցնելով նաև անոնց վրա բարոյական շունչ մը. կամ, ավելի ճիշտ՝ բարձրացնելով այդ իրականն ու կենդանին մինչև մարդկային բարոյական արժեքներու աշխարհը:

Եվ, սակայն, այնքան հետաքրքրական կը թվի մեզի այս հարցը, որ մենք, այնուամենայնիվ, պիտի փորձենք սահմանել ու բնորոշել Խրիմյանի մտածումը անհատապաշտու-

թյան և հավաքապաշտության հակամարտ ըմբռնումներու տեսակետեն:

Անշուշտ, այս խնդիրը շատ հին ու մինչև օրս ալ հարցական կը մնա մարդկային գիտակցության առաջ:

Շատերը, որ իրենց միտքը հոգնեցնել չեն սիրեր և կամ «կ՚աճապարեն», կը բավականանան միամիտ ու մակերեսային լուծումով մը:

Այսպես, ոմանք կ՚ըսեն. ես անհատապաշտ տեսակետը կը դավանիմ, որովհետև անհատի ազատությունը ամեն բանե վեր կը դասեմ. ընկերությունն է (կամ ազգը), որ պետք է ապահովե ու երաշխավորե անհատին իրավունքներն ու ազատությունները: Ուրեմն՝ հավաքական կյանքը միջոց, իսկ նպատակը՝ անհատին բարօրությունը, երջանկությունը:

Իսկ ուրիշներ, որոնք հավաքապաշտ տեսակետը կը կարծեն դավանիլ, կ՚ըսեն. ես հավաքապաշտ եմ, որովհետև ինծի համար նպատակը հավաքականությունն է, իսկ անհատը՝ գործիք մը, այդ ընկերության գերագույն ձգտումներուն իրականացման ծառայող:

Ահա՛, այս հակամարտ տեսակետները՝ դրված շատ պարզունակ կերպով: Շատ–շատեր այսպես կը տեսնեն անհատի և ընկերության փոխհարաբերության այս հարցը ու այսպես ալ կը լուծեն զայն... իրենց գլխուն մեջ:

Եվ, սակայն, խնդիրը ոչ թե մեր գլխուն մեջ, վերացականորեն լուծելուն մեջ կը կայանա, այլ իրական կյանքին մեջ: Ընկերային–հասարակական կյանքի խնդիրները զուտ վերացական ու տրամաբանորեն լուծելը սխալ է, որովհետև կյանքը ինքը իր հատուկ տրամաբանությունը ունի, և անոր բնական ընթացքը հասկնալու համար չի բավեր միայն տրամաբանել, այլ պետք է նաև գիտնականի մը պես դիտել գիտնալ, զգալ գիտնալ և, մանավանդ, իրականին ու անոր բնական հնարավորություններուն intuition–ը ունենալ:

Խրիմյան այդ intuition–ը ունի, և այդ պատճառավ է, որ անոր համար գոյություն չունի անհատի և ընկերության միջև հակամարտություն: Անոր տեսողության առջև մեկը

մյուսին զարգացման արգելք չէ, անոր մտածումին մեջ տեղ չի գտներ անհատի և հավաքականության հարցը:

Խրիմյանի ըմբռնումով՝ և՛ անհատը, և՛ հավաքական կյանքը մեկ ամբողջություն կը կազմեն, մեկը մյուսով հնարավոր, մեկը մյուսով արժեք ստացող:

Խրիմյան ինքը այս հարցը քննության իսկ չ՚առներ անշուշտ: Ան չի խորհիր անգամ գուցե, թե հայ գյուղի մեջ անհատի և ընկերության միջև հակամարտության հարց կրնա ծագիլ, սակայն, իր երկիրը ուսումնասիրած ատեն, մենք կը զգանք անոր ըմբռնումը ու կը կարծենք, թե կրնանք զայն բնորոշել առանց շատ սխալած ըլլալու:

Խրիմյան չի տեսներ անհատը որպես այդպիսին, ա՛յն վերացական անհատը, զոր քանի մը երևակայապաշտ ու մեքենապաշտ մտածողներ ԺԸ. և ԺԹ. դարուն ստեղծեցին: Պարզ կերպով կ՚երևա, որ Խրիմյանի համար ալ չկա անհատը ինքն իրեն, ինքն իրմով ու ինքն իրեն համար:

Անհատը կա ու կ՚ապրի մթնոլորտի մը մեջ, հավաքական կյանքի մը մեջ, ու ան այդ շրջանակին մեջ է, որ կ՚աճի, այդ կյանքին մեջ է, որ իմաստ ու արժեք կը ստանա:

Բայց ընկերությունն ալ, հավաքական կյանքն ալ Խրիմյանի համար վերացական իրականություն մը չէ:

Ազգն ու հայրենիքը ևս իրեն համար վերացական իրականություններ չեն, չկա հավաքականի օրենք, ընդհանուրի շահ, որ կեդրոնեն արձակված ու հրահանգված ըլլա՝ կարգախոսի մը ձևին տակ, որուն հպատակի անհատը: Ո՛չ: Այս իմաստով՝ Խրիմյան ո՛չ հավաքապաշտ է և ո՛չ ալ ազգայնական:

Խրիմյանի ըմբռնումը՝ անհատի և հավաքականության հարցի տեսակետեն, մենք պիտի բնորոշենք «աշխատանքի համայնք» բացատրությամբ:

Ու այս ըմբռնումով է, որ Խրիմյան կը ստանա այժմեական խոշոր արժեք:

Հիրավի, քաղաքակիրթ աշխարհին պատկանող արդի մտածողներ ու ընկերաբաններ հետզհետե կը հանգին այն եզրակացության, որ անհատ-հավաքականություն հարցը

վերացականորեն կարելի չէ լուծել. իրականության մեջ գոյություն չունին, ոչ մեկ տեղ ո՛չ վերացական անհատը՝ որպես այդպիսին, և ո՛չ ալ վերացական մարդկային ընկերություն մը՝ որպես այդպիսին: Այլ գոյություն ունին մարդկային համայնքներ, այսինքն՝ որոշ թիվով մարդկանց համախմբումներ որոշ հողամասի մը վրա, որոշ ծագումով ու անցյալով, որոշ կենցաղով, որոշ աշխատանքներով, որոշ բարոյական ու մշակութային հատկանիշներով և որոշ հեղաշրջման հնարավորություններով:

Նույնանման հատկանիշներով օժտված համայնքներու ամբողջությունը կը կազմե մեկ ժողովուրդ:

Հետևաբար, հավաքական կյանքի կեդրոնը ո՛չ անհատն է և ոչ ալ լայն իմաստով ընկերությունը, այլ համայնքը:

Այս եզրակացության և այս ըմբռնումին կը մոտենան այսօր շատ մը մտածողներ. ավելին, այդ ըմբռնումը կը սկսի որդեգրվիլ պետության կողմե ևս, որպես վարչական–ընկերային–տնտեսական կազմակերպության ձև:

Ժողովուրդե–ժողովուրդ, պետութենե–պետություն, սակայն, այս «համայնքի» ըմբռնումը որոշ փոփոխություններ կը կրե՝ գաղափարներու բովանդակության և կիրառման ձևի տեսակետներեն:

Այսօր կարելի է հատուկ կերպով խոսիլ գերմանական «համայնքի» ըմբռնման մը մասին, որ իբր հիմ կ՚ընդունի գերման ժողովուրդի արյան ու ցեղային միությունը ու կը ձգտի ամեն անհատի մեջ խորացնել այդ ձևով ըմբռնված համայնքի մը պատկանելու գիտակցությունը ընկերային–տնտեսական–մշակութային ասպարեզներու մեջ: Ու այդ ըմբռնումին վրա է, որ կը կառուցվի ընդհանուր ազգային քաղաքական խտեալը՝ ուժի, տիրապետության և ստեղծագործելու զգացումներու ու կամեցողության շաղախով:

Պետք է ըսել, որ գերման մտածողները նոր չէ, որ ստեղծած են համայնքի մը ըմբռնումը, այլ՝ դեռ անցյալ դարու վերջերեն: Այս մտածողներու շարքին հայտնի է Ֆիրքանտը իր «Ընկերություն և համայնք» գործով: Ան առաջին մտածողն է, որ ի հայտ կը բերե շատ հստակ կերպով «ընկերություն» և «համայնք» առումներու խոշոր տարբերությունը:

Բայց կա նաև «համայնքի» ֆրանսական ըմբռնումը, որ հետզհետե կը զարգանա ու որոշ ձև կը ստանա ֆրանսացի մտածողներու աշխատությանց մեջ:Վերջերս, ֆրանսացի մտածողներ ու գրագետներ խմբակցություն մը կազմած են՝ նպատակ ունենալով հավաքական աշխատակցությամբ մը «համայնքի ֆրանսական ըմբռնումը» կազմավորել: Ու այս ուղղությամբ՝ առաջին հրատարակությունները սկսած են արդեն լույս տեսնել: «Համայնքի» ֆրանսական ըմբռնումը կը տարբերի գերմանականեն անով, որ այստեղ չի շեշտվիր արյան ու ցեղային տվյալներու առաջնությունը, այլ շեշտը կը դրվի ավելի պատմական, հոգեբանական ու, մանավանդ, մշակութային գիտակցության վրա: Այսպեսով՝ ֆրանսական ըմբռնումը ավելի տիեզերական ձևեր և բովանդակություն կը ստանա:

Վերջապես, հիշենք նաև «համայնքի» ռուսական, խորհրդային ըմռնումը:

Հոն, խորհրդային վարչաձևի մեջ ալ, տակավ զարգացավ, անշուշտ բոլորովին տարբեր ուղիներով ու տարբեր անհրաժեշտությանց թելադրանքին տակ, տեսակ մը համայնքի ինքնուրույն ձև և ըմբռնում ոչ միայն մտածողներու աշխատությանց, այլ նաև գործնական կյանքին մեջ:

Ի՞նչ են կոլխոզներն ու սովխոզները, եթե ոչ տեսակ մը համայնքներ, որոնց հիման վրա կառուցված է ամբողջ պետությունը:

Համայնքի խորհրդային ըմբռնումը վերացական տեսություններե մեկնած է ու գործնականացած է որպես զուտ տնտեսական մեքենապաշտ ըմբռնում՝ ծնունդ տալով տնտեսական, ընկերային միավորներու, որոնք մասնիկ–մեքենաներն են այն հսկա գործարանին, այն հսկա թրըսթին, որ պետությունն է:

Ամեն բան կը ծրագրվի կեդրոնեն ու կը հղվի ի գործադրություն բոլոր աշխատանքի համայնքներուն, համաձայն նախատեսված հատակագծին: Կյանքը այս ըմբռնումին

մեջ տնտեսություն է. տնտեսությունը՝ ծրագրված աշխատանք. պետությունը՝ շարժման մեջ դրված վիթխարի մեքենա մը, որուն մեկ մասնիկը կը հանդիսանա համայնքը, իսկ այդ համայնքին մեկ տարրը՝ մարդը:

Ավելցնենք այստեղ, որ այս ծրագրային համայնքի ըմբռնումը որոշ չափով հատուկ է նաև գերմանական արդի մտայնության, ինչպես նաև Միացյալ Նահանգներու տնտեսական կյանքին: Այս խնդիրներու նկատմամբ,- ինչ կը վերաբերի, ուրեմն, համայնքներու տնտեսական կազմակերպման,- կը տարբերին տեսական հիմնավորումները, անունները, կարգախոսները, սակայն խորքին մեջ հիմնական կազմակերպչական ձևերը ու նպատակները իրարու կը նմանին:

Արդեն շատ բնական է, որ համայնքի ըմբռնումները տարբերին ժողովուրդե-ժողովուրդ, պետութենե-պետություն՝ համաձայն ժողովուրդներու հոգեբանության, աշխարհագրական-պատմական պայմաններուն, տնտեսական տվյալներուն և այլն:

Եթե օր մը կարելի պիտի ըլլա խոսիլ համայնքի հայկական ըմբռնման մասին, մեր կարծիքով՝ այդ պարագային անպայման պետք է նկատի առնել Խրիմյանի գրականությունը ևս:

Կարդալով այդ գրականությունը, իրոք, կարելի է ուրվագծել «համայնքի» որոշ ըմբռնում մը, որ կը տարբերի վերև հիշված ըմբռնումներեն և իր առավելությունները ունի:

Խրիմյանի համար ալ մեկ ամբողջական, անտարրալուծելի և բնական միավոր մը կա, որ գյուղն է: Գյուղական համայնքը այն իրականությունն է, որուն մեջ կը գտնենք հայ անհատը, իսկ գյուղական համայնքներուն ամբողջությունը հայ ժողովուրդն է:

Հայ գյուղացին կը ծնի այդ համայնքին մեջ, ինչպես ցորենը՝ իր արտին մեջ, կը մեծնա ան իր պապերուն շունչով, կը սիրե ու կ'երգե իր հողն ու ջուրը, իր արևն ու հորիզոնը, կ'աշխատի մինչև իր կյանքի վերջին օրը՝ Աստուծո իրեն տված հողին վրա, կը վայելե իր աշխատանքին

պտուղը, կ'ապրի ընտանեկան կյանք մը՝ տունը երեխաներով լեցուն, և օր մըն ալ, իր ապրած կյանքը օրհնելով, իր հոգին կ'ավանդե ու կ'երթա վերջնականապես միանալու իր գյուղի հողին, ուր կը հանգչին իր պապերը: Իսկ արտն ու տունը կը ձգե որդիներուն ու թոռնիկներուն, որ անոնք ալ իրենց հերթին պապենական հողը աշխատին ու իրենց հայկական ազգը բազմացնեն:

Խրիմյանի համայնքի ըմբռնումը պիտի կոչենք աշխատանքի համայնք մը, որովհետև այդ համայնքի կյանքին հիմը աշխատանքն է: Բարի աշխատանքն է այդ՝ կատարված բնության ծոցին մեջ, ուրկե ծնունդ կ'առնեն ոչ միայն նյութական, այլ նաև կյանքի բարոյական բարիքները: Կարդացե՛ք «Պապկե պսակի» հոյակապ պատկերը ու պիտի համոզվիք, թե աշխատանքը, հողը, սերը ու Աստված ինչքա՜ն մոտ են իրարու Խրիմյանի ըմբռնման մեջ:

Կարծես, երկրորդ Մարտին Լութեր մը ըլլար, որ կ'ըսե. «Աղոթելու լավագույն ձևը աշխատիլն է»:

Առհասարակ, Խրիմյանի ամբողջ գրականությունը սիրո և աշխատանքի սեմֆոնի մըն է՝ աստվածային ներդաշնավորումով կերտված, որ միաժամանակ կը համոզե, կ'ոգևորե ու կը հմայե:

Ահա՛ Խրիմյանի տողերը աշխատանքի ու աշխատասիրության մասին.

«Ինչպես գրեցի ի վեր, հիշե, որդյակ իմ, աստի հայտնի է, որ, երբ աշխատությունը չի միանար բնական հարստության հետ, հարստությունն, իբրև ծածկյալ գանձ, կը մնա հողին ծոցը, և մարդիկ անհաց, անգանձ, անգիտակցաբար կը շրջին ոտքի տակ թաղված գանձերու վերա, միշտ աղքատ և կարոտած:

Ուրեմն, մեր աղքատության աղբյուրի մի ակն մեր անաշխատ ձեռք և թմրած ոգվույն ծուլությունն է: Մի մարդ, մի ժողովուրդ, մի աշխարհ, որ զինքն աշխատության չի նվիրեր, նա միշտ հացի կարոտ կը մնա, վասնզի աշխարհիս վերա հացն ու գանձ միայն աշխատող ազգին ու ժողովուրդին բաժինն են. և սորա ճշմարիտ ապացույց Եվրոպիո ժողովուրդն է:

Բայց ի՞նչ պետք է և ի՞նչ զորավոր դարման, որ անաշխատության մեջ ապշած և թմրած ժողովուրդին միտքն ու հոգին մեռելութենե հանե ու մղե դեպի գործունեության կյանք:

Այն պետք է, ինչ որ պետք եղավ արևմտյան ազգերուն, այսինքն՝ լույս, գիտություն: Լույսն ու գիտությունն մեր գործող զգայարանքներ և աշխատության կյանքը կ'ուղղեն. և մեր հառաջադիմության քայլերուն ճամբա կը բանան և կ'ապահովեն մեր արդյունք և հարստություն: Եվ երբ արևելյան ժողովուրդներ զուրկ են այս առաջնորդող լույսեն և մղիչ զորութենեն, կը մնան, ուր որ են, միշտ կարոտ բեղմն-ավոր երկրի մեջ, վասնզի հեղգամիտ եղան, աշխատություն չսիրեցին, ուսումն ատեցին, հանճարն անպատվեցին. գրասեր անոթի մեռավ, արվեստավորն առանց քաջալերության մնաց. եթե կային մեծամեծ խոչընդոտներ, ելան. մեր ընկերական կյանք դարձավ մի անշարժ դիակ, տեսանք, հառաջադեմ աշխարհի և յուր անթիվ գործունեության օրինակներ մեր աչքին առաջ կեցած են, մեր միտքն ու հոգին տակավին չնորոգեցան. մնացինք այնպես, հնության ու հեղգության մեջ: Մենք մաքուր մարդ ծնանք, այլ մեր ոտքի տակ աշխատող չքոտի մրջյունին ժիր գործունեություն չտեսանք: Մեծն Սողոմոն յուր խրատով աշխարհի վատ ծույլերն կը հղե դեպի մրջյունին բույն:

«Եվ դու, որդյակ իմ, երբ մրջյունին բունեն կ'անցնիս, կաց պահ մի, զննե, տես ու զարմացիր, թե քանի՛ աշխույժ է այդ ճկուն կենդանին. յուր բունեն մինչև քառասուն քայլ ավելի ուղղագիծ ճամբա կը բանա, կարավան-կարավան անդադար կ'երթա, կու գա, միշտ մի հատիկ պարենով կը բեռնավորի, կը բերե, կ'ամբարե յուր բույնը. եթե պատահմամբ կոխես ու ճմլես զինք ի գետին, եթե սայլին անիվն յուր ճամբու վրայեն անցնի, հազարներով ջախջախվին, նա տակավին աշխատութենեն չի՛ կասիր և երբեք չի՛ թողուր յուր բացած արյունոտ ուղեգիծն. այլ դիակներու վերա կը կոխե ու կ'անցնի իբրև աշխատության անկուն շահատակ:

Մրջյուն մարդ չէ, բայց կը նախատեսե. համարան կը ժողովե, կ'ամբարե յուր պաշարը, և ի ձմերան կը վայելե՝ ազատ մնալով յուր սովեն: Մարդ մրջյուն չէ, նախատեսող միտք ունի. և երբ չի նախատեսեր, անգործ կյանք կը վարե՝ նրա ձմեռն, անշուշտ, սովամահն է:

Թողունք մրջյունի բույն, երթանք դեպի մեղուն. դիտե ու տես, թե ո՛րչափ գործասեր է. երամ-երամ կապելով՝ կ'երթան ծաղկավետ հովիտներ, կը շրջին, մեղրանյութ կը ժողովեն և կու գան, փեթակին մեջ

կը գործեն, որոնց արդյունք թագավորաց սեղան կը զարդարե, և մեղրամոմն Աստուծո սեղանին վրա կը վառվի:

Հապա տեսա՞նք մեր պատերու սարդի գործունեություն, որուն համար կ'ասեն, թե կտավագործության արվեստին հեղինակ լինելով՝ օրինակ տվեր է մարդուն. տե՛ս, ի՛նչպես անդուլ կը ճգնի յուր աշխատության մեջ, անդադար կը մանե, կը հյուսե՝ յուր նպատակը, գիտե՞ս. միայն ճանճիկ մը որսալ և յուր կյանք պահել:

Թո՛ղ մտածեն մտավոր մարդիկ և մեր աշխարհի ծույլեր. եթե սարդին համար ճանճիկ մը պետք է, ո՞վ չի գիտեր, թե իրենց համար ևս հաց պետք է: Զի մարդուն կյանքը պահպանող հացն է, մարդն առանց հացի կը չքանա: Մարդուն ընկերական կյանք աշխատության զբաղումով կ'ապրի և կը հարատևե:

«Եթե կա աշխարհիս, երկրագնդին վերա ծայրագույն և անտանելի բեռն մի, այդ ծույլերուն կյանքն է»,- հարցուցին իմաստասերի մի, և նա այսպես պատասխանեց:

Արդ, ինչպես տեսանք, սիրելիս իմ Սամվել, որ հարստության ծնող աշխատությունն է. ուղիղ կը հետևի, որ աղքատության ծնող ծուլությունն և անգործ կյանքն է. իսկ երկոցունց մեծ առաջնորդ՝ միայն գիտությունն և կուրությունն: Վասնզի մարդուն թշվառության բուն, աղիտաբեր արմատ մտավոր կուրութենեն կը սկսի և կ'աճի:

Կը հիշե՞ս դու, Եվրոպիո գիտնոց կաճառեն հառաջ մեր իմաստասեր Եղիշեն մարդոց կույր կյանքի նկարագիրը ճշտությամբ կը հանե. երբ հազար երեք հարյուր տարի առաջ կը տեսնա նա Հայոց աշխարհի թշվառությունն և անկատար կյանք, այսպես կու տա յուր վճիռը, թե «կույր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց»: Այո՛, կուրությունն կյանք չունի. նա պետք է միշտ խարխափի աշխարհիս հրապարակին վրա և մերթ ևս յուր գլուխը պատե ի պատ զարնելով ջախջախվի: Այլևս համառոտենք այս դասը, աշխատասեր և լուսասեր որդյակ իմ. եթե կը բաղձանք, որ աղքատությունն և կուրությունն մեր աշխարհեն բարձվին, թշվառության աղբյուրի ակներ խցվին, և հարստության և երջանկության ակներ բացվին, աշխատությունն սիրենք ու պատվենք, հեղգամտությունն և ծույլ կյանք ատենք և հալածենք մեր անձեն և մեր ընտանեկան սրահեն»:

«Իսկ դու, իմ ջանասեր որդյակ, որ մեր հայրենյաց մի պանդուխտ զավակն ես, երբ կը հաջողվի քեզ դառնալ քո հայրենի երկիրը, գործասիրությունն և աշխատությունն քարոզե, ժրագործ եղիր, կյանքդ բեղմնա-

վորե և բարի օրինակ հանդիսացիր պատանիներուն առաջ: Թո՛ղ ի բաց ոսկին ու գանձ, տար իմ այս աշխատասիրության դասեր. տար և ավանդե մեր հայրենյաց անուս, անդպրոց մանուկներուն. ասա նոցա, թե ձեր հայրեր պանդխտություն սիրեցին, օտարության մեջ մաշվեցան ու մեռան, դուք ձեր հայրենի քաղցր ծոցեն ու գրկեն, հողեն ու ջրեն բնավ մի՛ հեռանաք: Ասա, թո՛ղ աշխատին, գործասեր լինին, և իրենց դառն քրտինք հայրենի հողին վերա թափեն: Այն հողն ու ջուր, զոր օրհներ է Աստված, շատ հաց ու հարստություն կը տա իրենց: Հիշե դու և հուշ բեր նոցա՝ Սողոմոնի օգտակար խրատ, թե «Որ գործէ զերկիր, լցցի հացիւ, եւ որ երթայ զհետ դատարկութեան, լցցի աղքատութեամբ» *(«Ս. Ս.»)*:

Աշխատանքը, ահա՛ համայնքի ներքին ուժը, մարդկանց հավաքական կյանքը հնարավոր դարձնող ու այդ կյանքին իմաստ տվող տվյալը:

Աշխատանքը, ահա՛ նաև բարոյական ու կրոնական զգացումներուն հասնելու ճամբան:

Իր այս ըմբռնումով ալ, որուն մեջ այնքան գլխավոր դեր կը կատարեն աշխատությունը և տնտեսական տվյալը առհասարակ, Խրիմյան այժմեականություն կը ստանան:

Հիշենք, օրինակ, նորագույն և մեծագույն ընկերաբաններեն Ֆրանսացի է. Տյուրքեյմը, ըստ որուն գիտական տեսությանց՝ աշխատանքն ու աշխատանքի բաժանումն է, որ հնարավոր դարձուցած են մարդկային համախմբումները ու ծնունդ տված մարդկային ընկերություններուն, այսինքն՝ համայնքներուն:

Աշխատանքը, սակայն, Խրիմյանի համար զուտ տնտեսական երևույթ մը չէ, այլ շատ ավելի բարդ իրականություն մը, որ շատ ավելի խոր իմաստ մը ունի մարդկային անհատական ու հավաքական կյանքին համար:

Հիրավի, սխալ է կարծել, թե աշխատանքը զուտ տնտեսական երևույթ մըն է: Ո՛չ: Աշխատանքը, ինչպես նաև այն բոլոր երևույթները, որ մարդկային են, ամեն բանե առաջ հոգեկան երևույթներ են՝ մարդկային գիտակցության մը արտահայտություններն ու դրսևորումներն ըլլալով:

Տնտեսական կյանքը չէ, որ ծնունդ կու տա աշխատանքին, այլ մարդկային աշխատանքն է, որ ստեղծած է տնտեսականի երևույթը ու գաղափարը:

Անասուններն ալ նվազ տնտեսական կարիքներ չունին, քան կենսաբանական մարդը, և սակայն, անոնք տնտեսություն մը չունին, որովհետև աշխատիլ չեն կրնար, որովհետև աշխատելու հոգեկան հնարավորությունը չունին:

Պարզ է, ուրեմն, որ տնտեսականը արդյունքն է մարդկայինին. և միակ արդյունքը չէ ան: Աշխատանքը մարդկային տնտեսական գործունեությունը կը կազմակերպե ոչ միայն մարդուն կենսաբանական կարիքներուն գոհացում տալու համար, այլ, ավելի անդին անցնելով՝ ավելի բարձր մակարդակի մը վրա մարդուն գոյության իմաստը գտնելու համար:

Այդ իմաստը, Խրիմյանի համար, գերազանցապես բարոյական բնույթ մը ունի՝ իր մեջ պարփակելով, սակայն, մյուս բոլոր մարդկային արժեքները ևս: Ուրեմն՝ համայնքը, աշխատանքի համայնքը մարդ–անհատին բնական բույնն է, որմե պետք չէ բաժնվի ան: Ինչպես որ բույսը, ինչպես որ կենդանին իրենց բնավայրը ունին, այնպես ալ մարդը իր համայնքը ունի, որմե չի կրնար ազատիլ: Մարդը ևս այդ ազատությունը չունի. բարոյական մարդ–անհատը պետք չէ ունենա այդ ազատությունը:

Խրիմյանի համայնքը, սակայն, բնավ չի կաշկանդեր անհատի ստեղծագործության սահմանները:

Բնական վիճակը ներդաշնակությունն է: Խրիմյան նեղ իմաստով ազգայնական մը չէ. հակառակ ընդհանուր կարծիքին, մենք իր գործերը կարդալով հավաստեցինք, թե անոր մոտ կը բացակայի ազգային եսասիրության զգացումը. ան հայուն մեջ կը տեսնե մարդը կամ, ավելի ճիշտ, մարդկայնության մեկ ուրույն, ինքնատիպ կերպը:

Այս տեսակետեն, Խրիմյանը կարելի է համարել հումանիստ մը, որ մարդուն և մարդկային տիեզերական արժեքներու չափավոր ու հավասարակշիռ խոր զգացումը ունի:

Իր այս զգացումին ու ըմբռնումին մեջ Խրիմյանը կարելի է համեմատել Թոլսթոյի և կամ Ռապինտրանաթ Թակորի հետ:

Տրված ըլլալով սույն ըմբռնումը՝ ի մասին հայ գյուղացիի աշխատանքի համայնքին, մենք կ՚ըսեինք, թե Խրիմյան թե՛ անհատապաշտ է, թե՛ հավաքապաշտ, ու նաև՝ իրապաշտ և գաղափարապաշտ, բնապաշտ և բարոյապաշտ:

Որովհետև Խրիմյանի գիտակցության մեջ այս բոլոր գաղափարներ ի մի կը ձուլվին ու կը կազմեն մեկ ներդաշնակ ամբողջություն, որոնց մեջ չկա հակամարտություն:

Խրիմյանի՝ համայնքի ըմբռնումը, ինչպես և անոր ազգային ըմբռնումը այլամերժ չէ և ոչ ալ տիրապետության ձգտող:

Այս գիծը անոր մտածման հիմնական մեկ հատկանիշն է:

Թերիզպաշյան իր հուշերուն մեջ կը պատմե, թե ինչպես Վանի մեջ, սովի մը շրջանին, երբ Խրիմյան Առաջնորդ էր հոն, հայերու կողքին՝ ալյուր և հաց ստանալու համար Հայոց Առաջնորդարան կու գան նաև թուրքեր, որոնց կը մերժվի նպաստ տալ: Խրիմյան լսելով այդ՝ կը միջամտե ու կ՚ըսե.

«Եթե դուք այստեղ կը տեսնաք հայ սովյալ մը ու գութի զգացում կ՚ունենաք անոր մասին, և այնտեղ կը տեսնաք թուրք սովյալ մը, ու այդ գութի զգացումը կը պակսի ձեզի, ապա ուրեմն՝ սուտ է և կեղծ ձեր՝ հայու մասին ցույց տված գութի զգացումը: Անկարելի է, որ նման սիրտ մը ընդունակ եղած ըլլա գութի և սիրո զգացումներուն»:

Տեսանք, թե անհատը բնական հուն մը ունի՝ իր հողը, որուն վրա աշխատելով, բարեկամներ ստեղծելով և ընտանեկան հարկի տակ ապրելով ու բազմանալով՝ ան կը դառնա հիմք համայնքին: Բայց համայնքն ալ այն մայր ոստանն է անմահ, որուն ծոցին մեջ անհատները կու գան ու կ՚երթան՝ ամեն մեկը իր աշխատանքի մարդկային պարտքը կատարելով:

Խրիմյան իր բոլոր ըմբռնումներուն մեջ չափազանց իրապաշտ է ու բնապաշտ, բայց կարելի չէ ըսել, որ գաղափարապաշտ ու բարոյապաշտ ալ չէ: Անոր համար գաղափարապաշտությունը և բարոյապաշտությունը ևս վերացականորեն չեն լուծվիր:

Կյանքը, գյուղական համայնքը բնականորեն կը զարգանան ու կը զարդարվին մարդկայնության արժեքներով, բարոյական ու գաղափարական արժեքներով:

Աշխատանքը, որ Խրիմյանի ըմբռնումի կեդրոնական տարրն է, ինչպես վերև շեշտեցինք, մեքենական զբաղում մը չէ, այլ այդ աշխատանքին ծնունդ տվող տվյալները, բոլորն ալ բարոյական կամ գաղափարական և կրոնական զգացումներ ու ձգտումներ են: Այդ աշխատանքին գերագույն նպատակն ու իմաստը նյութական արդյունքները չեն, այլ առավելապես բարոյական իտեալները:

Երկիրը մարդկային դրախտ մըն է, իսկ աշխատանքը՝ օրհնություն մը, որով մարդը ձեռք կը բերե իր բարոյական ինքնակերտումը ու ինքնակատարելագործումը՝ իտեալական տիպարի մը ի խնդիր:

Համայնքի ընբռնումին հետ սերտ կապված է նաև Խրիմյանի ըմբռնումը ընտանիքի մասին: Ընտանիքը օրինական մեկ միավորն է, մեկ կենդանի բջիջը համայնքին: Առանց ընտանիքի համայնք չկա, ինչպես առանց համայնքի ժողովուրդ չկա, ու առանց ժողովուրդներու մարդկություն չկա:

Կարելի է ըսել, թե Խրիմյանի համար հիմնական ու իրական, շոշափելի դրությունները ընտանիքն ու համայնքն են. ասոնք են, որ երկու ուղղությամբ կը ստեղծեն. մեկ կողմեն՝ անհատը, և մյուս կողմեն՝ ժողովուրդը, ազգը:

Ընտանիքը ծնունդ կու տա անհատին, համայնքները կը ստեղծեն ժողովուրդը:

Ընտանիքին այս խոր ըմբռնումը անգամ մըն ալ կը հաստատենք Խրիմյանի հետևյալ տողերուն մեջ.

«Շատ ծանծաղամիտ ու կարճամիտ են նոքա, որ կը կարծեն, թե ամուսնությունը սոսկ մարմնո հաճույք է, կամ խաղ ու զբոսանք, ու աշխարհիս շահավաճառության մեկ հաճոյական ձևը , և կամ թե բնավ պետք չկա հայր և մայր անվան, աշխարհիս վրա սեփական տուն և ընտանիք կազմելու. ամեն բան անորոշ և անխտիր թող լինի: Զա-վակները ժողովուրդին համարվին, ժողովուրդը՝ մարդկության, և մարդկություն, առհասարակ, աշխարհիս վերա ապրի այնպես, ինչպես անտա-

ոին մեջ՝ անասունք, և երկնից մեջ՝ թռչունք, որոց ո՛չ տուն, ո՛չ ընտանիք, ո՛չ տոհմական սերունդ, ո՛չ սեփականություն կան և այլն» («Դ.Ը.»):

Ահա թե իչու ո՛չ ընտանիքը և ո՛չ ալ համայնքը պատահական, անցողակի երևույթներ չեն, այլ հիմնաքարերը մարդկային անհատական ու հավաքական գոյությանց: Անոնցմե դուրս չկա մարդկայնություն և ոչ բարոյականի մը օրենքը, այլ միայն կենսաբանական գոյություն մը, որ արժանի պիտի չըլլար մարդկային կոչվելու:

Որպես տեսակ մը եզրակացություն մեր շոշափած հարցերուն, ինչ կը վերաբերի համայնքի ըմբռնման՝ մենք այստեղ ի հայտ կ՚ուզենք բերել Խրիմյանի ամբողջ մտածումներուն ու ըմբռնումներուն խորքը արտահայտող հիմնական ոգին, զոր կը կարծենք հստակ ու շեշտված կերպով տեսած ըլլալ անոր գործերուն ու շունչին մեջ:

Հարց տանք մեզի, թե ո՞րն է այն հաստատուն խարիսխը, որուն վրա պետք է հենու ժողովուրդի մը հավաքական կյանքը ընդհանրապես:

Անցյալի մեջ մարդկային ընկերությունները ու պետությունները, իրենց ծագման ու զարգացման պատմության ընթացքին, զանազան ձևերով պատասխանած ու լուծած են այս հարցը և կամ, երբեմն ալ, գիտակցական կերպով նկատի չեն առած իսկ նման խնդիր:

Սակայն այսօր, երբ ամբոխները այլևս ստրուկներ չեն, և ժողովուրդները որոշ անհատականության զգացում ունին, հավաքական կյանքի ղեկավարները, բնականորեն, պետք է դնեն այս հարցումը:

Ճիշտ է, թե ֆրանսական մեծ հեղափոխությամբ սույն հարցը սկզբունքով լուծված է սապես. թե ընկերային–պետական կյանքի խարիսխը պիտի ըլլա ժողովուրդը (demos), իսկ ղեկավարությունը, իշխանությունը՝ այդ ժողովուրդին ձեռքը ու անոր համար: Այդ սկզբունքներուն վրա է, որ հիմնվեցավ ու կառուցվեցավ ընկերային–վարչական–պետական կյանքը, վերջին մեկուկես դարու ընթացքին, Եվրոպայի մեջ: Ճիշտ է, թե այս վարչաձևը իր բնական կյանքը ապրեցավ ու իր պտուղները տվավ մեկ քանի պետությանց ծոցին մեջ, ուր այդ սկզբունքները ու ղեկավարության ձևերը օրկանապես զարգացեր էին, սակայն Եվրոպայի մյուս պետություններուն մեջ, գրեթե ամեն տեղ, այդ ժողովրդապետական բառլամենդական դրությունը մուտք գործեց օրենսդրության ուղիով՝ առանց հաշվի առնելու ամեն մեկ ժողովուրդի առանձնահատուկ պայմանները ու զարգացման աստիճանը: Եվ այսպես է, որ շատ մը երկիրներու մեջ, փաստորեն, այդ սկզբունքները ձևական իրականություններ մնացին ու գործիքներ դարձան փոքրաթիվ ունևոր ու ղեկավար դասակարգի մը ձեռքը, իսկ ժողովուրդներու լայն զանգվածները մոռցված ու զրկված մնացին այդ նոր ռեժիմին «սկզբունքով» իրենց տված իրավունքներեն ու բարիքներեն: Ժողովրդապետությունը մնաց մեռյալ տառ և արտաքին ձև: Որովհետև կարելի չէր դուրսեն բերված ու վերեն հրահանգված քանի մը օրենքներով և քանի մը պետական հիմնարկություններով ժողովուրդին լայն զանգվածին կյանքը բարեփոխել: Ամեն մեկ վարչաձև ու ղեկավարություն պետք է հաշվի առնե տվյալ ժողովուրդին պատմական, հոգեկան–բարոյական, ընկերային–տնտեսական առանձնահատուկ պայմաններն ու հնարավորությունները, և հեղաշրջվի համաձայն այդ պայմաններուն ու հնարավորությունը՝ աստիճանաբար ու ներդաշնակաբար:

Ամեն իրական հեղափոխություն պետք է մեկնի պահպանողական խարիսխե մը: Այլապես հեղափոխությունը կու գա ու կ՚անցնի առանց արմատ ձգելու:

Պատմաբան մը կ՚ըսե. «Մեծ հեղափոխությունը այն չէ, զոր ֆրանսացի ժողովուրդը ըրավ 1789–ին, այլ անգլիացի ժողովուրդինն է, որ չըրավ զայն»:

Պատմաբանը մեծ չափով իրավունք ունի, որովհետև, հիրավի, այդ հեղափոխության սկզբունքները ավելի օրկանական արմատ բռնեցին Անգլիո մեջ, քան թե Ֆրանսայի

մեջ, հակառակ որ հեղափոխությունը իրապես Ֆրանսայի մեջ տեղի ունեցած էր:

Խրիմյան ինքն ալ հեղափոխական է, սակայն ընտանիքի, համայնքի ու հավաքական կյանքի մասին ունեցած իր ըմբռնումներով կը հանդիսանա պահպանողական հեղափոխական մը, որ հառաջադիմության կը դիմե՝ մեկնելով գոյություն ունեցողի իրականություններեն, պահելով այդ գոյություն ունեցող արժեքներն ու բնական ձևերը:

Խրիմյան հեղափոխական է կյանքը բարեփոխելու միջոցներու տեսակետեն, սակայն, ինչ կը վերաբերի կյանքին խորքին՝ ան պահպանողական մըն է:

Կենդանի, իրապաշտ և հառաջադեմ պահպանողական մը:

Հարցը, սակայն, այստեղ չի վերջանար:

Պետք է զայն ավելի խորացնել՝ հասնելու համար ավելի հիմնական եզրակացության մը:

Այն մտայնությունը, որ չ՚ուզեր նկատի առնել պատմական արժեքները ու պահպանել հինին խարիսխը, այլ տարված զուտ վերացական հեղափոխական ձգտումներով՝ կ՚ուզե նոր մարդկություն մը ստեղծել, սովորաբար այն մտայնությունն է, որուն համար մարդկային կյանքը, մարդկությունը մակերես մըն է, հորիզոնական գոյություն մը, որուն վրա շարված են բոլոր ժողովուրդները, որոնք կոչված են մեկ տիպարի վերածվելու, միևնույն կաղապար–կյանքը ապրելու և միևնույն ձևով ղեկավարվելու համար:

Այս մտայնությունը ուղի մըն է, որ կ՚ուզե մեզ դեպի մարդկություն մը տանիլ, ուր ջնջված է ամեն մեկ ժողովուրդի անհատականությունը, ազատորեն տեղ չի գտներ ամեն մեկի, – անհատ, թե ժողովուրդ, – նախաձեռնությունը, ամեն մեկի անկաշկանդ թռիչքը դեպի իտեալական իրականություններ:

Անմիջապես ըսենք, որ ասիկա չէ կյանքի բնական ուղին. ասիկա չէ իրական մարդկությունը:Անհնար է մարդկությունը վերածել մեկ զանգվածի: Անհնար է ջնջել ամեն մեկ ժողովուրդի ինքնատիպությունը, բարոյական ու մշակութային ինքնությունը: Բնությունն ինքը ատոր հակառակ է: Ու ինչ որ երբեք պետք չէ մոռնանք, այն է, թե մարդկային կյանքը մարդկային է ոչ թե իր միատեսակությամբ ու միօրինակությամբ, այլ իր զանազանությամբ ու այլազանությամբ:

Երկրորդ մտայնությունը, որ պահպանողական խարիսխ մը ունի, ավելի տքնություն կը պահանջե. ան կ՚ինչնե դեպի կյանքի խորքը. ան չի տեսներ հորիզոնական մարդկություն մը, այլ խորը ինջնելով՝ ի հայտ կը բերե ամեն մեկ ժողովուրդի հոգիին խորհուրդը, ամեն մեկի տառապանքն ու սերը, ապրելու կերպը, ամեն մեկի տքնության ու ստեղծագործելու եղանակը:

Այս ուղին ալ կը տանի դեպի մարդկություն մը, ավելի սուղ վճարված ու ավելի դժվար ձեռք բերված մարդկություն մը, որուն գործոն ուժերը ժողովուրդներն են, որոնցմե ամեն մեկը իր «կարելին» կ՚ընե ու իր տեղը կը գրավե արժեքներու աշխարհին մեջ: Ամեն ստուգապես մեծ արժեք միայն օրկանական հավաքականությանց ծոցին մեջ կրնա ծլիլ ու ծաղկիլ, իսկ այդպիսի հավաքականությունները ազգային համայնքներն են:

Մեր օրերուն գիտակից ու գիտնական մարդը կը հակի դեպի այս երկրորդ մտայնությունը: Այլևս հինցած ու անզոր մտայնություն պետք է նկատել կյանքի այն «ինժենեռական» ըմբռնումը, ըստ որուն կարելի է ժողովուրդները վերածել միօրինակ ու միատեսակ իրականության մը: Այդ մտայնության ծիծաղելի ու կոպիտ արտահայտություններեն մին եղավ միջազգային–համամարդկային լեզու մը ստեղծելու հիմար փորձը՝ Էսփերանդոն, որ, իբր թե, պիտի փոխարիներ ազգային լեզուները:

Սակայն, այդ դյուրին, պարզ ու բոլորին մատչելի լեզուն ինչո՞ւ արմատ չբռնեց: Պատասխանը ակներև է. որովհետև ժողովուրդի մը լեզուն մեքենական իրականություն մը չէ, այլ կենդանի իրականություն մը. այն շինված չէ, այլ բուսած ու զարգացած է դարերու ընթացքին, հոգեկան խորունկ արմատներե: Ան միայն մտածումի գործիք չէ, այլ նաև՝ խորհուրդ և դրսևորում հոգեկան բարդ վիճակներու:

Մարդուն պարտադրել արվեստական լեզու մը, պիտի նշանակեր անոր էութենեն խլել այն հիմնական արժեքներեն մին, որ մարդկայնության ստույգ ապացույցներեն մին է: Արվեստական լեզվով՝ մարդ պիտի դադրեր խոսելե և կամ պիտի փնտռեր նոր կենդանի լեզու մը:

Եվ ինչպես լեզվական գետնի վրա, նույնպես և մարդկային անհատական թե հավաքական կյանքի մյուս գետիններուն վրա, ինչպես, մանավանդ, արվեստի, գրականության, բարոյական, ընկերական և վարչական կյանքի մեջ, անհրաժեշտ է, որ ամեն մարդկային ուրույն հավաքականություն պահե իր բնական վիճակը, իր ինքնությունը: Այլապես, կյանքը կ՚այլասերի ու կը դառնա բռնազբոսիկ, կեղծ և անարժեք, իսկ մարդ անհատը՝ թիվ մը, մեքենական մասնիկ մը, որ կը կորսնցնե, տակավ, այն բարոյական ու մշակութային հատկանիշները, որոնք մարդկայինի հաղթանակը կը հանդիսանան բնության և տիեզերքին մեջ:

Խրիմյան իր ամբողջ էությամբ պահպանողական հեղափոխական մըն է և իր մտքերով ու աշխարհայացքով կը պատկանի ավելի մեր ժամանակներուն, նորագույն, իրապաշտ մտայնության, քան թե անցյալ ժամանակներու «մեքենապաշտ» կամ «երևակայապաշտ» մտայնությանց:

Խրիմյանի համար ամեն ժողովուրդ իր տեղը ու իր դերը ունի, իր համը ու իր հոտը ունի: Իսկ մարդկությունը ոչ թե միատեսակ ծաղիկներու հավաքածո մըն է, այլ, ինչպես ըսած է ինքը Ռուսիո ցարին, անոր հետ ունեցած տեսակցության պահուն, մարդկությունը ծաղկեփունջ մըն է՝ այլազան, գույնզգույն ծաղիկներով, ամեն մեկը իր անփոխարինելի բույրով ու գույնով:

Ուրիշ ուղիներով, հետազոտությանց ու պրպտումների ուրիշ միջոցներով՝ գիտական մարդիկ ևս այսօր նույն եզրակացության կը հասնին ու գիտականորեն կը հիմնավորեն մարդկային համայնքներու կյանքին այս օրկանական ըմբռնումը, ինչ որ Խրիմյանինն ալ կարելի է նկատել:

Ահա՛, մեր կարծիքով, անոր այժմեականության հիմնական գիծը:

Այս այլազանությունը, սակայն, որ ամեն մեկ ժողովուրդի բնական վեճերեն կը բխի, ընդգծե՛նք այդ, Խրիմյանի համար չի նշանակեր այլամերժություն, փոխադարձ անհանդուրժողություն ու ատելություն: Ո՛չ, Խրիմյան կը սոսկա այդպիսի մարդկութենե մը:

Ժողովուրդներու ամբողջութենեն առաջ եկած մարդկությունը, Խրիմյանի գիտակցության ու ըմբռնման մեջ քառս մը չէ, այլ իր այլազանության մեջ ներդաշնակ իրականություն մը: Մարդկություն մը, ուր ժողովուրդները հավասար կերպով ազնվական են ու հավասար կերպով իրավունք ունին ապրելու: Ոչ մեկը գերմարդ է, այլ բոլորը մարդիկ են, որ պետք է իրարու օգնեն և զիրար սիրեն:

Խրիմյանի մարդկությունը պեսպիսուն ծաղիկներու ճոխ փունջ մըն է, ուր ամեն մեկ ծաղիկ իր գույնը և իր բույրը կը պահե, ուր ծաղիկները իրար չեն ծածկեր, իրար չեն կոխեր, այլ իրար գրկած, իրենց գույները և բույրերը իրար խառնած՝ իրենց ներդաշնակ համերգությունը դեպի միևնույն արևը կը բարձրացնեն: Ծաղիկներ, որոնց ամեն մեկը հողեն առած իր ուժերը իր մարմնույն մեջ համադրելով՝ կ՚այլափոխե, կ՚իտեալացնե զանոնք ու այս երկիրը կը դարձնե մարդկայնության բարձր արժեքներուն բուրաստան մը տիեզերքին մեջ այս անսահման ու անվախճան:

Այստեղ Խրիմյան իր հոգիին թևերով հայ ժողովուրդի կյանքին սահմաններեն անդին կ՚անցնի ու կը դառնա նաև մարդկության առաքյալներեն մին, Կյոթեի մը, Թակորի մը և, մանավանդ, Թոլսթոյի մը կողքին:

Է.
ՀՈՂԻ ՍԵՐ

Հողը Խրիմյանի համար կենդանի իրականություն մըն է. մարմին և շունչ ունի. կը խոսի ու կը շարժի:

Հողը կ՚ապրի, ու կրնա և մեռնիլ:

Հողը կյանքի աղբյուր է, ուրկէ կը ծնին ցորեն ու պտուղ, ուրկէ կը հոսին մեղր ու կաթ:

Հողը մարդկային կյանքի ալ արգանդն է. հոն կը թաղվին մարդիկ՝ հոնկէ ալ ծնելու համար:

Հողն է, որ ընտանիքին ու համայնքին անմահութիւնը կ՚իրականացնե ու կը տևականացնե ժամանակին մէջ:

Հողը նյութական իրականութիւն մը չէ միայն. հողը նյութ մըն է, որուն ընդերքներեն աներևույթ ուժ մը կը բարձրանա դեպի վեր, դեպի արև: Այդ կենաց ուժը կը ստեղծե և՛ բուսականությունը, և՛ կենդանական աշխարհը, և՛ մարդկային իրականությունը:

Մարդը ուրիշ բան չէ, եթե ոչ այդ հողին արքայության օրկանական մեկ միավորը, մեկ մասնիկը, որ իր դիրքով կոչված է տեր դառնալու՝ հպատակելով, սակայն, հողին օրենքին:

Մարդը, ուրեմն, հողին վրա բացարձակ ազատ չէ. այլ հպատակն է հողին: Մարդը հողեն կը ծնի, հողով կ՚ապրի ու հողին կը վերադառնա: Հետևաբար, մարդուն և հողին միջև կենսաբանական անքակտելի կապ մը կա:

Մարդը հողին հպատակելով՝ միաժամանակ, սակայն, բարոյական օրենքը կը հետապնդե ու կ՚իրագործե զայն իր անհատական ու հավաքական կյանքին մեջ:

Բնության օրենքի և բարոյական օրենքի միջև սկզբունքային հակամարտություն մը գոյություն չունի: Այդ երկու օրենքներն ալ միևնույն իրականության երկու երեսներն են: Բնության օրենքն է, որ մարդկայնանալով՝ բարոյական կը դառնա:

Մենք տեսանք, թե ինչպես, Խրիմյանի համար, հողը կրնա արքայություն դառնալ՝ մարդու իմացական ու բարոյական ուժերու ներգործության ներքև, մարդու աշխատանքի ու կազմակերպված տնտեսության մը դրության մեջ:

Ու մենք տեսանք նաև, թե ինչպես արքայությունը, երկինքը ինքը հող է. այդ նույն հողն ու արտն է:

Ահա թե ինչո՛ւ Խրիմյանի համար, որ եվրոպական իմաստով փիլիսոփա մը չէ, այլ ավելի արևելքցի իմաստուն մը, երկրայինի և երկնայինի միջև չկա այն անանցանելի անջրպետը, ոչ ալ այն հակամարտությունը, որուն մասին կը խոսին Արևմուտքի շարք մը բարոյագետներ, փիլիսոփաներ կամ աստվածաբաններ:

Բայց երբ հող կ՚ըսենք, պետք չէ հասկնանք որևէ հող, այլ այն հայրենի հողը, այն բնավայրը, ուր ծնած է որոշ մարդ մը. այդ մարդու համար հողը «իր» գյուղին, «իր» համայնքին հողն է: Միայն և միայն այդ հողը, որ իր ծննդավայրն է՝ որոշ պատկերով, որոշ աշխարհագրական դիրքով, որոշ բուսականությամբ, որոշ ծաղիկներով ու կենդանիներով, որոշ հարստություններով, որոշ աշխատության ու արտադրության ձևերով, որոշ սովորություններով, երգերով, գավառաբարբառով, որոշ անցյալով, որոշ ուրախություններով ու ցավերով:

Հայրենիքը վերացական, տիեզերական գաղափար մը չէ. հայրենիքը որոշ այն հողն է, որուն կապված պետք է մնա հայ շինականը, որ պետք է սիրե զայն իր բոլոր զգացումներու ուժովը:

Հողին սերը Խրիմյանի ըմբռնումին մեջ գիտակցական զգացում մը չէ միայն, այլ, մանավանդ, հոգեկան բարդ երևույթ մը՝ ամենախոր ու անորոշ բնազդներու արմատներեն բխած:

Մարդը պահ մը կը նույնանա նույն իսկ այդ հողին հետ ու կը զգա իր մեջ, թե ինք մեկ անբաժան մասն է հողին: Արյունը, որ իր երակներուն մեջ շրջան կ՚ընե, հոնկե կը բխի: Ու սիրտը, որ կը բաբախե, կը հետևի ավելի մեծ, խորհրդավոր զարկի մը, որուն չափը ինքը՝ հողը կու տա:

Եվ Խրիմյան իր խոսքով ու գրչով կ՚ուզե հայուն զգացնել տալ հողին կենդանությունը, հողին զարկը, հողին արժեքը, հողին անմահությունը:

Պապիկի դասերուն և պատվերներուն առաջին ու վերջին խոսքը հողն է:

«Այսպես, թոռնիկ, հողն պետք է կենաց և մահու օր, սորա համար պապիկն զքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն, չթողուս, որ ուրիշներ ձեռքեդ հափշտակեն, դու անհող մնաս, ստրուկ լինես» *(«Պ. Թ.»)*:

Եվ նորեն թոռնիկին է, որ պապիկը կը խոսի.

«Թե մեռնիմ, երթամ գերեզման և այլևս չի կարեմ խոսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա՛ կը թողում ձեզ գիրս, իբրև մշտախոս կտակ և հիշատակ, որուն միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժանվի, զի յուր սեփական ժառանգությունն է դրախտի երկիր, զոր տեր Աստված մեր Ադամ պապուն և ժառանգորդներուն տվավ և ասաց՝ գործել զերկիր և պահել» *(«Պ. Թ.»)*:

Խրիմյան ամեն գնով ու բոլոր միջոցներով կը պայքարի այն հայկական դժբախտության դեմ, որ պանդխտություն կը կոչվի:

Տեսանք, ինչպես տգետ, խավարամիտ ու միամիտ հայ շինականը՝ հուսահատած իր աղքատութենեն ու կյանքի դժվարություններեն, պանդխտության ցուպը ձեռքը կ՚առնե՝ այլուր փնտռելու համար դրամ և հանգստություն: Եվ պանդխտությունը կը դառնա տեսակ մը հավաքական հիվանդագին հոգեբանություն, տեսակ մը վարակիչ համաճարակ՝ բոլոր հյուծված ու տկարացած հոգիներուն համար:

Հայ մարդուն և հողին միջև հազարամյա կապն է, որ կը սկսի թուլանալ: Ու հավաքական կյանքն է, որ տակավ կը սկսի կազմալուծվիլ:

Հողը կը սկսի մեռնիլ:

Այս տխուր վիճակին մեկ պատկերը տալու համար մեր ընթերցողներուն, այստեղ Մշո Գեղամի հիշողություններեն կարտատպենք երկու նամակ՝ փոխանակված ղարիպի մը և հայրենիք մնացած կնոջ միջև:

1899-ին է, որ Սարգիս աղբարը՝ Մշո դաշտի Մուրատ գետի երկայնքին շարված գյուղերեն միույն շինականներեն մին, աշնան առավոտ մը, առանց բառ մը իսկ ըսելու իր կնոջ ու երեխաներուն, կը ձգե ամեն ինչ և ճամբա կ՚ելլե դեպի Ստամպուլ:

Սարգիս ղուրպաթ *կ՚երթա:*

Վեց ամիս հետո գյուղին ժամկոչը հետևյալ ղարիպի փուսուլան *կը բերե Մայրամին՝* Ստամպոլա մյուրաքեպով *գրված.*

ՀԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅԻ ՄԿՐՈՅԻ ՍԱՐԳՍԻՑ ՇԱՏ ՍԻՐՈՎ ՈՒ ԿԱՐՈՏՈՎ ԲԱՐԵՎ ԻՐ ԿՈՂԱԿԻՑ ՄԱՅՐԱՄԻՆ:

ի Մշու դաշտ.

Ամենու առաջ կը պագնեմ մոր ճժերու՝ Կրպոյի և Հովոյի աչվին. շատ կարոտով բարև գյուղացոց մեծին ու պզտիկներուն: Եթե զիս հարցնեք, փառք և պատիվ Տիրոջ, մինչ ի թարիղիս սաղ-սալամաթ Ստամպոլ, Ղալաթիա կը բանիմ, մեր քեռի Կրպոյի մոտ. ու թե շիտակ կը հարցնես, երեք հարյուր ղրուշ էվելցեր է վրը պարտիքս. իմա՞լ էնինք, Աստծու կամքն է, հույս ունեմ, որ Աստված պըտ խնայե իմ մատաղ ճժերուն, պելքիմ քանի մը փարա դատինք, ի գանք, հասնինք: Մեղվա Հլոյի հետ սաքսան ղուրուշ ղրկեցի, եկա՞վ. ահա՛ իմանաս, երթաս առնիս, զձեր տարտեր հոգաս. մեկ ալ, էս փուսուլայի ճուղապը ալալ անալա գրես ղրկես, և ձըր ամեն եղելություն մըզի իմաց էնիս: Տերտերու ս. աջ կը պագնեմ, այսքան:

ՄԿՐՈՅԻ ՍԱՐԳԻՍ ԳՐԵՑԱՎ.

1890 թարիղին, ապրիլի 11-ին:

Կարդանք նաև ղարիպի կնոջ՝ Մայրամի զմայլելի պատասխանը.

ՄԿՐՈՅԻ ՀԱՐՍ ՄԱՅՐԱՄԻՑ ՍԻՐՈՎ ՈՒ ԿԱՐՈՏՈՎ ԲԱՐԵՎ ԻՐ ԿՈՂԱԿԻՑ ՍԱՐԳՍԻՆ, ԻՐ ՀԵՌԱՎՈՐԻՆ, ԻՐ ՍԵՎԱՎՈՐԻՆ

Սարգիս, քու սիրտ երկա՞թ էր, թե քար, կրակ չկե՞ր քու ներս, ձյան կտո՞ր դրեր էին հոն. և ո՞վ դրավ պաղը մեջ քու սրտին, որ օր-գիշերով թողուցիր, կորար սարերու ետև. դու գիտե՞ս, ինչ սև ու մուր քաշեցինք, չուր այն թուղթն եկավ: Հա կ՚ըսեն՝ խեղդեր է, հա կ՚ըսեն՝ մեռեր է, ես ի՞նչ գիտնամ, հազար տեսակ բաներ. տե գնա նստիր ու լաց. ո՞ բան հոգանք, զքեզի՞, թե տղեկներ, որ ամեն օր անօթի կու լանն եւ ումուտ ունինք, աշխարհ փախնեն, դու զմեզ պըտ չթողուր հեռուներ, քու թոնրի փոշին հազար հեղ աղեկ է, քըն հրլոի շաքարն. ահա խնդիրք կ՚էնեմ քենե, փունջ մը մազ ալ մեջ թղթին կը դնեմ, որ դու քո անանուն Աստվածն եղնես, չկենաս, ելնաս գաս. պետք չէ քու փարեն, պետք չէ քու դատում, ես ու քու ճժերն, որ անօթութենեն մեռնինք, էլ որո՞ւն կը դա-

տիս փարեն. մենե վերջ գաս, ի՞նչ համ ու հոտ պըտ առնես, չէ՞ որ դու լե կ'եղնիս տարտե վարամ ու մեռնիս:

Չէ՛, դիմավորուկ Ս. Հովհաննես կը կանչեմ, թափե՛ էդ խելքն, դարձի՛ր քու տուն, աշխարհ ամեն մարդ իր տնեն կ'ապրի, հա՛ գնա դուրս, ճանդ հանե, պարապ է: Դրսու փարեն բեռներով եղնի, մեզի չի մնար. փառք Աստծու, դու ալ գիտես. «սաքսան ղուրուշ ղրկեցի», - գրեր էիր, ո՞ւր է, ի՞նչ եղավ. ափսո՛ քու քրտինքին, ափսո՛ քու ցավին ու տարտին. սաքսան ղուրուշ որ չհասնի հոս, հապա հարյուր սաքսան կամ երեք-չորս հարյուր ղուրուշ իսկի կրնա՞ս հասուս: Չէ՛, աչկունքս, չէ՛, ադի, մի՛ էներ զէտ. արի վազ անցիր, դարձիր: Ո՞րն է գացի ղուրպաթ, հեղ մի հիշե. գեղացիք մեծ ու պզտիկ այստեղ կը կանչեն իրենց Աստվածն ու դատին, Աստված ալ կու տա իրենց հաց ու թանը, քու սիրտ չա՞յրի, չվա՞ռի, որ խեղճ ճժեր անոթի, ծարավ ասդին-անդին ոլորտին, ճարին, մուրան... քու պապու տուն օր հարյուր մարդ կ'ուտեր, քու ճժեր անհաց մնան, և թե որ քու սիրտ չկտրտի, ես ի՞նչ էնեմ: Աստված թո՛ղ տեսնա մեր դատաստանն ու քում, և գութ դնե քո քարե սրտին:

Սարգսի կողակից Մայրամից գրեցավ»:

Ահա՛ ողբերգական պատկերը պանդխտության, որ կը կրկնվի հազար-հազար ձևերով Հայաստանի բոլոր գավառներուն մեջ: Մայրամի պատասխանը կարդալով՝ չէս կրնար չզմայլիլ հայ գեղջուկ կնոջ կորովին ու գիտակցության վրա:

Եվ դեռ կ'ըսվի, թե կինը տկար սեռն է:

Ո՛չ այս պարագային գոնե, պարզ է, որ տկարը Սարգիսն է, և ուժեղը՝ Մայրամը: Անոր միտքեն անգամ չ'անցնիր իր ամուսնույն ետևեն երթալ՝ ազատելու համար անոթութենեն ու թշվառութենեն: Մայրամ պահպանողական, կրանիթյա գիտակցությունը ունի իր հողին, իր օճախին, իր պապենական տունին:

«Քու թոնրի փոշին հազար հեղ աղեկ է. քըն հըլղի շաքարն»,– կը գրե ան իր մոլորած ամուսնույն ու կ'ավելցնե. «Աշխարհ ամեն մարդ իր տնեն կ'ապրի»:

Տղամարդու անհավասարակշռության ու փոփոխականության դեմ–հանդիման կը գտնենք կնոջ կայունությունը ու պահելու բնազդը: Կինը, այսպեսով, հավաքական կյանքի շարունակության գլխավոր գործոնը կը դառնա:

Կարդալով մեր գեղջուկ Մայրամի նամակը՝ հիշեցինք ամերիկացի գրագիտուհի Փըրլ Պուքի «Արտը» չինական վեպին գյուղացի հերոսուհին, որ իր ամբողջ կյանքը կը պայքարի ճակատագրի ու, հաճախ ալ, իր ամուսնույն դեմ՝ պահելու համար արտը. ու կը հաջողի: Ու երբ ան կը մեռնի, ծերացած ամուսինը իր կնոջ անշնչացած մարմնույն առջև կը բացագանչե. «Կի՛ն, դուն արտն ես»:

Այդ նույն իրականությունը կը պարզվի նաև Մայրամի նամակեն, այն տարբերությամբ, որ հայ դարիպը՝ Սարգիսը, չունի այդ գիտակցությունը ու իր կնոջ կանչին չի պատասխաներ, ու կը մնա թափառական, իմաստե զուրկ կյանքի մը մեջ:

Իսկ ասդին, Մայրամ, երկաթյա ջիղերով կը պայքարի, կ'աշխատի, քարեն հաց կը հանե, կը մեծցնե իր Կրպոն ու Հովոն, և օր մը կու գա, երբ իր պատանի տղաներու շնորհիվ կը վերաշինե իր տնտեսությունը:

Եվ սակայն, ո՞վ գիտե, գուցե այդ Կրպոն ու Հովոն ալ, վարակվելով տիրող հիվանդագին մտայնութենեն՝ իրենց անծանոթ հոր օրինակին հետևին ու օր մըն ալ, իրենք իրենց կինն և ճժերը ձգելով, երթան հեռու՝ մեռնելու համար խանի մը անկյունը...

Խրիմյան իր կաթողիկոսության անդրանիկ կոնդակին մեջ (1893 թ.) ինչքա՜ն հուզումով է, որ նույն պատվերը կու տա հայ ժողովուրդին, որ ան չբաժանվի իր հողեն, չբաժանվի այդ կյանքի հավիտենական աղբյուրեն, որմե դուրս կյանք չկա, այլ անիմաստ թափառում, այլասերում և մահ:

Ահա՛ այդ խոսքերը, որով հայ մեծ Առաքյալը, կարծես, գերագույն պատգամը կ'արձակե հայ ժողովուրդին.

«Ողջո՛ւյն ձեզ, բնակիչք դաշտաց և լերանց, շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրեք զհողն և մաճ, զոչխարն և տավար. դուք աշխարհի բարի և անխարդախ վաստակին աշխատավոր մշակն եք, դուք հարազատ որդիք եք նախահոր մերում. գործեցե՛ք զերկիր և պահեցե՛ք՝ գիտելով, թե միայն երկիրն է ձեր կյանք և զորություն. միշտ ջանացեք անկորուստ պահել այդ հայրենատուր ժառանգություն»:

Բայց հողին սերը իր մեջ կը պարփակե նաև կյանքի այն բոլոր երևույթները, որ տեղի կ'ունենան այդ հողին մթնոլորտին մեջ, այդ աշխարհին մեջ: Որովհետև հողը գյուղական համայնքն է:

Գյուղական համայնքը ամբողջ աշխարհ մըն է, նյութական ու բարոյական աշխարհ մը, որ հողեն ծնած է ու երկինքին ջուրով ու լույսով օրհնված, որուն վրա կը սավառնի մարդկային հոգիին իտեալական տենչը՝ դեպի ճշմարիտը, դեպի գեղեցիկն ու բարին:

Ահա թե ինչո՛ւ Խրիմյանի հողի սերը տեսակ մը գյուղական կյանքի երգ–երգոց է:

Գյուղական բարի կյանքի անուշությունը, հողին կանչը այնպես, ինչպես Խրիմյան կ'ըմբռնե ու կը ներկայացնե, հայ ժողովուրդին, պետք է նկատել դաստիարակչական խոշոր տվյալ մը թե' գյուղատնտեսության, թե' հայրենասիրության, թե' բարոյական կրթության իմաստով:

Կ'ըսեինք, թե մարդը իր հայրենի հողին վրա «ազատ» չէ, այլ ենթակա է հողին օրենքին:

Այդ հողին օրենքը նախ՝ անքակտելի կապն է մարդուն և հողին միջև: Երկրորդ՝ մարդուն գոյության իմաստն է մշակել այդ հողը ու, այդպեսով, կյանք տալ անոր: Երրորդ՝ մարդը իր այդ կոչումը տևականորեն կատարել կարենալու համար կը կազմե ընտանիք ու համայնք, որպեսզի նոր սերունդներու կյանքին ծնունդ տալով՝ ասոնք ալ, իրենց կարգին, մշակեն ու կենդանի պահեն այդ հողը:

Ամեն շինական, ուրեմն, իր ամբողջ կյանքի տևողության համար, պետք է կապվի մեկ կողմեն հողին, արտին ու մյուս կողմեն՝ կնոջ մը:

Որովհետև կինը ևս տեսակ մը արտ է: Այդպես կ'ըմբռնի Խրիմյանն ալ:

Հարսանիքեն հետո պապիկը հետևյալ խոսքերը կ'ուղղե թոռնիկին.

«Ահա՛, թոռնիկ, հարսնևորներ ցրվեցան, մնացինք ես, դու, մամիկ և նորեկ Շուշան. մեր փոքրիկ ընտանեկան թվույն վրա մի հատիկ ավելցավ. Աստված այդ մի հատիկն իբրև ցորենհատ ցանեց մեր ընտանեկան անդաստանին մեջ. դու պիտի տեսնես, թոռնիկ, թե այդ մի հատիկ մայրենի սերմեն որչա՛փ մանկահատիկներ պիտի բուսնին. մի օր կը տեսնաս, որ տունն լցված է լաճերով, աղջիկներով, որոնք թռչնոց ձագերուն պես՝ ճիվ-ճիվ ձայն հանելով, բերան բացած, պիտի աղաղակեն. «Պապո՛, հա՛ց կ'ուզենք, հա՛ց»:

Բայց հետաքրքրական է, թե ամուսնությենե առաջ, իր թոռնիկին հարս մը գտնելու համար, ի՛նչպես կը խորհի ու կը գործե պապիկը:

Պապիկ շեշտելե հետո ամուսնության անհրաժեշտությունը՝ թոռնիկին կը պարզե իր որոշումը, թե պետք է այժմ ամուսնանա: Պապիկին համար ամուսնությունը բնական երևույթ մըն է, որ իր ժամանակին պետք է կատարվի առանց մտածելու, նույնիսկ, առանց որ, նախապես, տղան ու աղջիկը զիրար լավ ճանչնան: Կը բավե, որ աղջիկը նույն գյուղեն ըլլա ու պատվավոր մարդոց զավակ: Ինչպես որ գյուղին արտերը, բոլորն ալ, գրեթե, նույն վիճակը ու արտադրության ուժը ունին, այնպես ալ կը բավե, որ կինը կին ըլլա, առողջ ըլլա ու իր կոչումին հպատակի:

Ահա թե ի՛նչպես կը խոսի պապիկը իր թոռնիկին այս մասին ու ի՛նչպես գունավոր կը նկարագրե պսակի ու հարսանիքի արարողությունները:

«Իսկ նշանածիդ համար խոսիմ քեզ, որ սիրտդ հանդարտ լինի. մեր գյուղի տանուտեր Մուրատ Համբան կը ճանչնա՞ս, ահա այն պիտի լինի մեզ խնամի, որոց տուն նահապետական է, և ամբողջ ընտանիք բարի և անվնաս մարդիկ են: Տանուտեր Մուրատին մի աղջիկ կա չափահաս, Շուշան անուն, որ շատ պարկեշտ, տնարար և ժրագործ աղջիկ է, և դու, անշուշտ, շատ անգամ կը տեսնաս զինքը: Մեր գյուղական ընտանիք Ֆոանգստանեն առաջ ալաֆրանկա են, վասնզի գյուղական ժողովուրդի կյանք հին, նահապետական կյանքի մնացորդ մի պատկերն է: Ահա՛ իմացուցի քեզ ամեն բան. գուցե քո մտքեն չէր անցներ, զի դու պարզամիտ և ուղղախոհ մի զավակ ես, պապկի սուր աչք քու վրան միշտ կը հսկեր, դու այժմ ժրացիր, թոռնիկ, ինչ որ կասեմ՝ շուտով կատարե, միայն վեց օր է մնացեր, հառաջիկա երկուշաբթի առավոտ մեր գյուղի եկեղեցվո մեջ, սուրբ սեղանի առաջ, պատարագին դիմաց, ավետարանով ու խաչով քու պսակի խորհուրդ պիտի կատարվի: Դու

այժմեն լուր տուր նաղարաճի Մխոյին և զուրնաճի Մրտոյին. գիտես որ մեր գյուղական հարսնիք առանց այդ բաներուն համ չունի: Ա՛հ դու այժմ, թոռնիկ, մեր մեծ էշ և երկու տիկ. գնա շուտ Շահպաղի գյուղ, մեր ծանոթ-բարեկամեն տասներկու լիդր գինի առ և բեր, բայց նայե, որ ջուր չխառնեն գինվույն հետ. Շահպաղցիք մեզ պես միամիտ չեն, քաղքցվոց մոտ լինելով՝ խարդախել սովորած են, ի՞նչ անեն խեղճեր, երբ քաղքցին տոկոսն ավելի կը բարդե, էնոնք էլ ջուր կը խառնեն՝ երբ տոկոսին տեղ գինի տան:

Այսօր շաբաթ է, դու էլ գինին բերիր հասուցիր, ուրեմն ամեն պատրաստ է»:

Այս իրիկուն ազպանստում է, գեղի բոլոր նորահաս կտրիճներ պիտի ժողվին, նոր փեսան իրենց մեջ առնելով՝ պիտի խաղան, խնդան, ուրախություն անեն մինչև լույս: Առավոտ կիրակի է, գեղի բոլոր ժողովուրդ՝ մեծն ու փոքր, այր մարդիկ, կիներ, հարսներ, աղջիկներ, իրենց ճժերով մեր հարսնիքի տուն պիտի լեցվին: Գեղացվոց հարսնիք էսպես կը լինի, դուռ բացէ, քաղքցվոց հարսնիք չէ, որ դուռ փակին, հարսնիք անին՝ մկներ առիքը չիմանան:

Էս օր, իրիկվան մոտ, հարսի հետ պիտի երթանք ես և գեղի բոլոր մեծ-մեծ համբարներ: Հարս պիտի բերենք, իջացնենք տուն, քող գլխուն՝ թախտին վերա պիտի նստի, հարսքույր իր մոտ. էնպես, ինչպես պահապան հրեշտակ:

Ժամհար կոչնակ զարնելուն պես, լուսումութին, եկեղեցի պիտի գնանք բոլոր հարևաններով մեկտեղ. դու էնպես պետք է հավատաս, որ եկեղեցին քեզ համար մի Ադամա դրախտ է, ուր իջած է Աստված, Ձեր պսակ պիտի դնե և օրհնե քահանայի ձեռքով. դու էնպես համարի, թե մինչև ցարդ կյանքիդ մեջ քնած էիր, հանկարծ կը զարթիս, քնաթաթախ աչքը կը բանաս, որ մի նոր Եվա՝ Շուշան ծաղիկ, բուսած է կշտիդ. ձեռք-ձեռքի կու տա քահանան ու կ'ասե. «Առեալ զձեռն Եւայի տուեալ ի յաջն Ադամայ» և այլն, դու ևս մտքիդ մեջ խոսիր մեր մեծ պապիկին պես. «Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմոյ» և այլն: Կը սկսի քահանան ուրիշ խորհրդավոր աղոթքներ կարդալ ձեր վրա, ձեր ու հարսի բերանեն խոստումներ կ'առնե. բոլոր ժողովուրդ վկա կը լինի, դուք աստվածադիր մեր օրենքով էնպես պիտի կը կապվիք իրարու հետ, որ միայն մահ կը քակե. աշխարհի ձեռք կարող չէ քակել:

Պսակն ավարտելեն հետո կ'ելնենք եկեղեցիեն, էն ժամանակ կարգ կու գա ուրախության, կը սկսին զուռնան-նաղարան, մունետիկի պես

ձայն կու տան աշխարհին, թե թոռնիկ և Շուշան ամուսնացան, էս օր նոցա հարսանյաց տոն է. մեր կտրիճ երիտասարդներ կը սկսին փետխաղ. է՜, թոռնիկ, հին պողպատե վահանին տեղն, ամեն մեկ յուր ապան կամ կոռտիկ կը փաթթե մի ձեռքին վերա, երկու- երկու իրարու հետ կը խաղան մինչև ի տուն: Դռան առաջ ոչխար կը մորթեն. էդ մի մատաղ է փեսին ու հարսին արևշատության համար:

Այժմ ճաշու ժամ է, հարսանիքին հարիսայի ժամանակ հասավ, հարսնևորներ անոթի են, ձգեցեք թաղիսներ, թող նստին. երեխան մեծ ու պզտիկ, հարուստն ու աղքատ, վերի-վարի կարգ չկա, պապկե տուն է այս. մեծ տանտիկի՛ն, հրաման արա, հարիսան լեցնեն մեծ-մեծ մաթրաներով, բերեք, դրեք սեղան: Իմ սիրելի դրացի, բարեկամ, գյուղի բոլոր ժողովուրդ, մեծ պապիկ ձեզ ճառ կը կարդա, տվե՛ք ինձ մի բաժակ գինի. պապիկ պարտական է խմել նախ այս բաժակ մեր երկրին տեր թագավորին կենաց համար, որուն Աստված պարգևեր է իշխանություն և թագ, որ հոգա, կառավարե ու պահպանե յուր հավատարիմ հպատակ ժողովուրդ: Խմենք ապա մեր թոռնիկ թագավորին կենաց, որ այսօր թագավոր է եղեր և վաղը մաճկալ պիտի լինի: Զմոռանանք նաև մեր Շուշան հարսին կյանք, որ այժմ թագուհի է եղեր, վաղ պիտի լինի պապկե տան տնաշեն և ժրագլուխ հարս:

Մնաց ձեր կենաց բաժակ, սիրելի հարսնևոր գեղացիներս, շնորհակալ եմ, որ պատվեցիք պապկե տուն ու փառավորեցիք թոռնիկիս հարսնիք: Կ'աղոթեմ, որ ազպեն ձեր զավակներուն ու թոռներուն վերա լինի:

Այժմ հարսիս ճաշ լմնցավ: Հարսնիքն ալ կը լմննա. ելե՛ք բակ, բռնեցեք ձեր ալաճակեռնտ. տղաք, այդ մեր քարե մեծ սանդ լի գինի լեցուցեք, հողե մեծ կուռիք վրան դրեք, թո՛ղ սանդին շուրջ բոլորին, պար խաղան, երգին մեր գյուղի կտրիճներ.

Պապի՛կ, պապի՛կ, աչքդ լույս,
Թոռնիկ թագվոր է եղեր.
Մամիկ, մամիկ, աչքդ լույս,
Շուշան քեզ հարս է եղեր,
Ապրին Շուշան և թոռնիկ
Եվ ծերանան ի միասին.
Ծլին, ծաղկին ինչպես շուշան,
Զավակներով և թոռներով:

Պապկի տուն բարգավաճի,
Թոռնիկ լինի մեծ տանուտեր,
Եվ ումրշատ լինի պապիկ,
Տեսնա թոռան յուր ճետեր:
Նահապետաց չափ թող ապրի,
Ծաղկին պիք յուր ձյունի պես.
Հասնի մինչև խոր ծերություն,
Մեռնի, երթա արքայություն:
Ուտենք վերջին յուր հոգեճաշն,
Հիշե՛նք, օրհնե՛նք յուր հիշատակ:

Է՛, սիրելի հարսնևորներս, հարսնիք ավարտեցավ, ուտել ու խմելու բաներն էլ լմնցան. գինու տկեր պարպվեցան, տանտիկին լուր կու տա, թե տաշտին մեջ հաց չմնաց և ամանին մեջ՝ յուղ միայն հարիսի պղնձի մեջ տակուց մնացեր է, էն էլ աղքատներու բաժին է:

Այժմ ամենայն քաղաքավարությամբ եկեք, ծերունի պապկի ձեռք համբուրեցեք, թոռնիկիս ու Շուշանին արևշատություն մաղթեցեք և մնաս բարով ասելով՝ գնացեք ձեր տներ: Գիտեմ, անքուն մնացիք և շատ էլ խմեցիք, տեսեք, ահագին սանդի գինին պարպեցիք. հարսնիքեն գացող կասեն, թե մահմուտ կը լինի. այս գիշեր հանգիստ քուն եղիք, առավոտ մութ լուսանալուն պես դեպի դաշ՛տ, դեպի դա՛շտ»:

Բայց Թոռնիկը Շուշանին հետ միանալեն հետո պապիկը կը բռնե անոր ձեռքեն ու հարսանիքին հաջորդ առավոտն իսկ կը տանի զայն դաշտ ու հոն «կը պսակե» իր թոռնիկը հողին հետ ևս:

«Սիրելի թոռնիկ, եկեղեցվո և քահանայի պսակ միայն գյուղացի փեսային համար բավական չէ, ես այժմ կրկին պիտի պսակեմ զքեզ հողին ու մաճին, գութանին ու հողագործության հետ, պետք է ուխտես երկնից և երկրի առաջ, որ այս պսակն անքակտելի պահես, ահա՝ կը դնեմ քու գլուխ ցորենաբույսի ցողուններեն հյուսված այս գեղեցիկ պսակ, թո՛ղ վկա լինին մեր մշակներ, հոտաղներ և մեր լծկան գոմշուկներ և եզներ:

Գիտե՞ս թոռնիկ, Աստված մի՛ արասցե, եթե քո ամուսին Շուշան մեռնի, մի ուրիշ Շուշան կարող ես առնել, բայց երբ հող քեզ համար մեռնի, այսինքն՝ կամ ծախես, կամ ձեռեդ հանես և զրկվիս քո ժառանգած հողեն, էն ժամանակ դու էլ կը մեռնիս, Շուշանն էլ հետ քեզ կը մեռնի, և պապկե տուն և օճախ կը քանդվի:

Քահանան զքեզ պսակեց Շուշանին հետ. պապիկն այսօր զքեզ կը պսակե հողին, գութանին հետ, դաշտի մշակության հետ, և ինչպես Շուշանին հետ կապեց զքեզ քահանան, և դու տեր ես մինչև ի մահ, կարող չես զինքն թողուլ, այսպես ևս պապիկն զքեզ պսակելով՝ կը կապե մայրենի երկրին հետ, որ հավիտյան չպիտի թողուս, որ մեր հայրենի, պապենական սեփականությունն է: Ադամն ասաց, և մարդիկ կ'ասեն, թե կին մարդոց կյանքն է, մի՞թե հողն էլ մարդոց կյանք չէ» *(«Պ. Թ.»)*:

Մեր խոսքերը տկար են մեկնաբանելու համար այս պսակը: «Պապիկ և Թոռնիկի» մեջ Խրիմյան ամբողջ գլուխ մը կը հատկացնե այս խորհրդավոր պսակին, զոր մեր ընթերցողներուն կ'ուզենք ամբողջությամբ ներկայացնել:

Անոր արժեքն ու գեղեցկությունը հասկնալու համար պետք է զայն ամբողջությամբ կարդալ: Հոն դրած է Խրիմյան իր ամբողջ հոգին. հոն դրած է և՛ բանաստեղծություն, և՛ կյանքի փիլիսոփայություն, և՛ բարոյական ըմբռնում, և՛ գյուղատնտեսական առողջ գիտակցություն:

Ահա՛, ուրեմն, «Պապկե պսակ ի դաշտ» գլուխը.

«Սիրելի թոռնիկ, ես նորեն և կրկին զքեզ պիտի պսակեմ. դու մի՛ կարծեր, որ եկեղեցվո կամ քահանայի պսակ քեզ բավական է: Այո՛, հոգևորապես և Աստծու օրենքով բավական և շատ է: Բայց եթե պապիկ այդ պսակին վրա յուր պսակ չդնե, դու անոթի կը մեռնիս: Ահա՛, աղոթարան բացվեցավ. հրաման արա մշակներուն, թո՛ղ գութան սարքեն, տանին գետի մոտի խոզան ավազարտ. պետք է այժմեն վարենք, աղբենք այն արտն և գարուն բանջարեղինաց պարտեզ անենք:

Լծեցե՛ք գութան. դու տես հիմի, թոռնիկ, թե ի՛նչպես պիտի պսակեմ զքեզ: Գնա՛, նախ գոմշուկներուն և եզներուն ճակատներ համբուրե, ա՛ռի՛, գութանին մաճին քով խոնարհիր գետնին, մայրենի հող համբուրե, ձեռքս մաճին վերա դրած եմ, համբուրե պապկի ձեռք և մաճը. ահա՝ քառասուն տարվան մաճկալ պապիկ այսօր քեզ կը հանձնե մաճկալության վսեմագույն պաշտոն, զոր Տեր Աստված Ադամա մեր մեծ պապկին տվավ, որ գործե երկիր և պահե:

Ցորենաբուսե հյուսած մի սիրուն, գեղեցիկ, բոլորակ պսակ շինեմ իմ ձեռքովս քեզ համար. բեր գլուխդ, թոռնիկ, դնեմ այս իմ պսակ, և այս պսակն պապկիդ պսակն և հիշատակն է, երբեք չը վերցնես գլխեդ մինչև մահվանդ օր: Եվ երբ դու էլ կը ծերանաս պապկի պես, այդ պսակ քո անդրանիկ որդվո գլուխ դիր, և այդպես որդվոց-որդի թո՛ղ շարունակե.

այդ պսակին խորհուրդ բացատրեմ քեզ, որ լավ ըմբռնես և անեղծ պահես այս ավուր հիշատակ քո մտքին մեջ:

Ազնի՛վ թոռնիկ, իմ խորհրդավոր պսակիս նշանակությունն է. քահանան զքեզ պսակեց Շուշանին հետ, պապիկն այսօր քեզ կը պսակե հողին հետ, գութանին հետ, դաշտի մշակության հետ. և ինչպես Շուշանին հետ կապեց զքեզ քահանան, և դու տեր ես մինչև ի մահ, կարող չես զինքն թողուլ, այնպես ևս պապիկն զքեզ պսակելով՝ կը կապե մայրենի երկրին հետ, որ հավիտյան չպիտի թողուս, որ մեր հայրենի, պապենական սեպհականությունն է: Ադամն ասաց, և մարդիկ կ'ասեն, թե կին մարդոց կյանքն է. միթե հողն էլ մարդոց կյանք չէ՞, մարդիկ աշխարհիս վերա հացով կ'ապրին: Շուշան քեզ զավակներ պիտի բերե, հողն էլ ձեզ հաց պիտի տա. դաշտին մեջ արածող կովն ու ոչխար ձեզ առատ-առատ կաթ պիտի տան, կաթեն յուղ ու պանիր կը շինիք. այս ամեն բարիքներուն վայելք հողեն չէ՞:

Այժմ, թոռնիկ, ասա մշակներուն՝ առնեն գութան և տավարներ, դառնանք երթանք ի տուն, մայրիկիդ և Շուշանին պետք է հայտնեմ դաշտի պսակի խորհուրդ:

Մտիկ արե՛ք, որ խոսիմ ձեզ, բարի տանտիկին և Շուշան: Ես այսօր նոր փեսա թոռնիկ տարի դաշտ. գութան լծել տվի, մանը թոռնիկին ձեռք տվի, ձեռքս գլխուն վրա դնելով՝ նահապետական օրհնություն կարդացի և զինքն կրկին անգամ հողագործության հետ պսակեցի, հողին և գութանին հետ կապեցի, և գիտե՞ք դուք, պապկի պսակն անքակտելի պետք է լինի: Թոռնիկ այժմ երկու կին ունի, իմացե՛ք. մի կին Շուշանն է, որու հետ պսակվեցավ սուրբ ամուսնությամբ. մի կինն էլ հայրենատուր ժառանգության հողն, որու հետ ես կապեցի Հայր Աբրահամու օրհնութեամբ: Շուշանն զավակներ պիտի բերե Թոռնիկին համար, հողն էլ հաց պիտի տա բոլոր ընտանյաց համար: Կաղոթեմ, որ Աստված պահե Շուշանն եւ շա՜տ ապրի, բայց Շուշանն մահկանացու է, թե մեռնի, Թոռնիկ մի ուրիշ Շուշան էլ կը գտնե: Իսկ եթե հողն մեռնի, էն ժամանակ բոլոր Պապկի տանն ընտանիք ի միասին կը մեռնին: Եւ ինչպե՞ս կը մեռնի հողն, որ Ադամեն մինչև էսօր կա ու կը մնա անմահ: Խոսեմ ձեզ թե հողն ի՛նչպես կը մեռնի. այն անբախտ օրն, երբ թոռնիկին համար, հողն էլ հաց պիտի տա բոլոր ընտանյաց համար: Կ'աղոթեմ, որ Աստված պահե Շուշանն, և շա՜տ ապրի, բայց Շուշանն մահկանացու է, թե մեռնի, թոռնիկ մի ուրիշ Շուշան էլ կը գտնե: Իսկ եթե հողն մեռնի, էն ժամանակ բոլոր Պապկի տանն ընտանիք ի միասին կը

մեռնին: Եվ ի՞նչպես կը մեռնի հողն, որ Ադամեն մինչև էս օր կա ու կը մնա անմահ: Խոսեմ ձեզ, թե հողն ի՞նչպես կը մեռնի. այն անբախտ օրն, երբ թոռնիկ ձեռք մաճեն քաշելով՝ հողագործություն չի շարունակեր, կամ հարստանալով՝ կը բարձրամտի, այլևս ամոթ կը համարի գյուղին մեջ կամ գյուղական ընկերության հետ ապրել, կը թողու գյուղն ու հող, կ'երթա, քաղաքացի կը լինի: Եվ կամ դժբախտ օրեր կը հասնին յուր վերա, երբ հուսալով, թե շատ հողեր ունի, պարտք անելով իրարու վերա կը բարդե. պարտատեր հողեր կը գրավե, ո՜հ, թոռնիկն անհող կը մնա:

Ահա այն օր հողն թոռնիկին համար կը մեռնի, գրավողին համար կենդանի կը մնա: Այն օր, այո՛, պապկի տան ճրագ կը մարի, թոռնիկ տանուտեր՝ վարձվոր մշակ կը լինի: Ավա՜ղ, պապկի հարս՝ նազելի Շուշան, պիտի երթա, հացթուխ լինի գյուղին մեջ, իրիկվան մի քանի հաց գոգնոցին մեջ դնելով՝ բերե յուր ճժիկներուն: Թոռնիկին մայր, բարի տանտիկին, դու պապկի ետևեն մեռիր, որ չը տեսնաս այն օր:

Զասե՞ս, թոռնիկ, ա՜հ, պապիկ, ի՞նչ չար գուշակություն կ'անես թոռնիկիդ վերա, բերանդ բարի բաց: Ո՛չ, թոռնիկ, Աստված չ'ընե, որ գուշակությունն ձեր վերա կատարվի: Ես կ'աղոթեմ, որ դուք այն սև օր չը տեսնաք. սորա համար այն սև ավուր տխուր կյանքի պատկեր նկարեցի ձեր աչքի առաջ: Որպեսզի տեսնաս ու հիշես պապուդ հեռատես գուշակությունն, համենայն զորութենե աշխատել հողն ձեռքդ չհանել. ո՛չ միայն հողն քեզ պետք է, որ հաց կու տա քեզ, աշխարհիս վերա կ'ապրիս, այլ և նորա համար, Աստված շատ արև տա քեզ, երբ մեռնիս, գերեզմանիդ համար էլ երկու կանգուն հող պետք է. չգիտես դու, մարդիկ գերեզմանի հողին վերա էլ կը կռվին. վա՜յ անոր, որ կը մեռնի և թաղվելու տեղ չունի, զի գերեզմանի հողն ևս մարդույն համար մի սեպհական իրավունք է: Ասել կ'ուզեմ, թոռնիկ, մարդ յուր ծնած օրեն հողով կ'ապրի. և երբ մեռնի, դարձյալ հող պետք է, որ նորա տակ թաղվին:

Այսպես, թոռնիկ. հողն պետք է կենաց և մահու օր. սորա համար պապիկն զքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն. չթողուս, որ ուրիշներ ձեռքդ հափշտակեն, դու անհող մնաս, ստրուկ լինիս, երթաս ուրիշի դռներ, վարձկան մշակ դառնաս, և էն ժամանակ ձեր վերա կատարվի պապկի կախարդ գուշակությունն. և դու խելաբերելով հիշես. ավա՜ղ, ես տանուտեր էի, նահապետ պապկիս խրատներուն մտիկ չարի, այժմ, անառակ որդվույն պես, վարձկան մշակ եղա, թողլով իմ ոչ-

խարաց հոտ, ուրիշներու համար նախիր կ'արածեմ և շաբաթ մի անգամ դռնեդուռ շրջելով՝ նախրահաց կը ժողվեմ:

Այո՛, թոռնիկ, երբ գեղի տանուտիրոջ բախտին անիվ դառնա, այնչափ նվաստանա, որ նույն գեղին նախրորդ լինի, դու մի՛ կարծեր, թե այդ վիճակ կարի դառնագույն մի վիճակ է. շալակներով հաց կը տանի յուր տուն, կթան կով ունի, գոնե, մի քանի հատ ոչխար, այծ ունի, և յուր ընտանիք լիությամբ կ'ապրին:

Բայց երբ այդ անկյալ տանուտերին ձեռք նախրորդություն չիյնա, նա ինքնին յուր նախկին վիճակ հիշելով ասե. «Ես տանուտեր էի, ի՞նչպես կարող եմ վարձկան մշակ լինել գյուղին մեջ, լավ է, որ թողում գեղ, երթամ քաղաքներ և, իբրև անծանոթ մի չքավոր մարդ, խառնվիմ փողոցի աղքատներուն հետ՝ լինիմ մուրացկան: Իսկ եթե իբրև հարստութենե ինկած՝ *«տեռվլեթտեն տյուշկյուն»*, հաջողիմ վիճակի Առաջնորդեն մի վկայական առնել, այդ ինձ համար մի մեծ բախտ կը լինի, կ'երթամ աշխարհե-աշխարհ, եկեղեցիներուն, հարուստներուն կը դիմեմ և այսպես, ժողովք անելով՝ դառնամ, գամ, պարտքս տամ և պահեմ իմ ընտանիք»:

Ահա՛, թոռնիկ, դժնդակ և դառնագույն վիճակն այս է, երբ տանուտեր մուրացկանության կը դիմե՝ հավատալով, թե այդ անարգ և անպատիվ մուրողությամբ կարող կը լինի բավական գումար հայթայթել և վերստին կանգնել յուր կործանյալ տունն: Դու կը հավատա՞ս, որ հողագործին կործանյալ տուն մուրացկանությամբ կանգնի: Բովանդակ ծերությանս կյանքի մեջ ես այդպիսի բան չը տեսա: Վասնզի տանուտեր գեղացվույն տան հաստատուն հիմն հողագործությունն է. երբ տանուտերն հողն ու հողին վաստակ թողու, նա արդեն կործանված է հավիտյան, կանգնել չունի, նա չքավորությամբ պիտի ապրի մինչև մեռնի:

Է՜, սիրել թոռնիկ, բավական եղավ, ավարտենք դաշտի պսակ և դաշտի դասերս: Ես պետք է պատմեմ նաև գեղի երեցուն և գեղացվոց, թո՛ղ աշխարհ իմանա, թե Առճակու պապիկ էսպես մի տարօրինակ բան արած է. յուր թոռնիկ նոր փեսան տարեր դաշտ, հողին ու գութանին վերա պսակեր է. մարդ չի գիտեր, ի՞նչ պսակ է այդ, որ առանց քահանայի, առանց խաչի և Ավետարանի ու ժողովուրդի վկայության՝ դաշտի մեջ կատարվեր է:

Թո՛ղ մեր գյուղացիք այսպես դատաստան անեն, թոռնիկ, բավական է, որ դու լավ հասկցար այս պսակին խորհուրդն. ես կը մեռնիմ,

ողջ կը մնաս, կը տեսնաս, հետո գեղացին էլ կը հասկընա և ողորմիս կու տա պապկի հոգվույն»:

Ը.
ԽՐԻՄՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Խրիմյանի դաստիարակչական գործին մեջ որոշ տեղ կը գրավե նաև գաղութահայուն կյանքը, որպես մտահոգության առարկա:

Մտածողի մը համար, որ բնականոն կյանքը միայն հայրենի հողին վրա կ'ըմբռնե, բնական է, որ գաղութային կյանքը անբնականոն և անցողական երևույթ նկատե:

Ավելին, Խրիմյանի համար գաղութային կյանքը դժբախտություն մըն է թե՛ անհատական–բարոյական, թե՛ ազգային տեսակետներեն:

Ատոր համար է, որ Խրիմյան գաղութային կյանքը կ'անվանե պանդխտություն: Գաղութահայը, ըլլա Պոլսո բեռնակիր կամ Եվրոպայի մեջ հարուստ վաճառական, հավասար կերպով պանդուխտ է:

Պանդխտություն և օտարություն բառեր են, որոնք Խրիմյանի գիտակցության մեջ դառն և խոր արձագանքներ կը ստեղծեն:

Ան կ'ուզե հայուն այնպիսի դաստիարակություն մը տալ ու այդ դաստիարակությամբ այնպիսի գիտակցություն մը, որ ան ոչ մեկ պատճառով չբաժնվի իր հողեն, չդիմե պանդխտության, չփափաքի գաղութահայ դառնալ:

«Պապիկ շատ փորձառու է պանդխտության դառն կյանքին, ձեզմե շատերն ալ նույն փորձն առած են. աշխատեցե՛ք, աշխատեցե՛ք, որ այդ օտարության կյանքի դառնություններ չի ճաշակեք, ես էլ կ'աղոթեմ ձեզ համար, իմ հայրենակից գյուղացիք, որ պանդխտության երես չի տեսնաք, ձեր հացն մայրենի երկրին մեջ գտնեք» *(«Պ. Թ.»)*:

Գաղութահայ կյանքը դեպի այլասերում և մահ կը տանի՝ բառին և՛ կենսաբանական, և՛ բարոյական իմաստովը:

Հիրավի, Խրիմյան, որ այնքան օրականական ըմբռնումը ունի մարդկային անհատական ու հավաքական կյանքին, չէր կրնար տարբեր մտածել այս խնդրին մեջ:

Մարդ ինչպես որ ազատ չէ իր ծնողքը ընտրելու, այնպես ալ ծնելեն հետո ան, ինքնըստինքյան, անկախ գոյութիւն մը չէ. ազատ չէ իր հայրենիքը ընտրելու, իր ժողովուրդը փոխելու ու անոնց ճակատագրեն բաժնվելու:

Հայրենիքը, ազգային համայնքը չեն նմանիր անանուն ընկերութիւն մը, որուն կրնաս այսօր անդամագրվիլ ու վաղը հրաժարիլ՝ արձանագրվելու համար ուրիշ ընկերութիւն մը մեջ, որուն... բաժնեթուղթերու արժեքը հրապարակի վրա բարձրանալու ընթացքին մեջ է:

Ինչպես ծաղիկը իր թաղարը ունի, տավարը՝ իր արոտը, ու արծիվը՝ իր բարձունքը, այնպես ալ մարդը իր հողը ունի, իր ընտանիքը, իր համայնքը, իր ճակատագիրը:

Անհատը երբ արմատախիլ կ'ըլլա իր բնավայրեն ու կը նետվի օտարութիւն մեջ, կը նշանակե, թե ան կը զրկվի իր նյութական ու բարոյական կյանքի բնական աղբյուրներեն, ոտքի կոխան կ'ըլլա, ապրելու իմաստը կը կորսնցնե ու կը կորսվի՝ առանց կենդանի հետք մը ձգելու: Կ'անհետանա առանց հիշատակի:

Գաղութահայ կյանքը շատ մը տխուր երևույթներ կը ստեղծե հայուն անհատական ու հավաքական կյանքին մեջ, որոնք ազդանշաններն են այլասերման ու կորուստի, երևույթներ, զոր Խրիմյան արյունոտ սրտով մատնանիշ կ'ընե ու կը խարազանե:

Նախ՝ կը նկատե, թե գաղութներու մեջ հայոց թիվը ոչ միայն չ'աճիր, այլև կը նվազի: Ասիկա տեսակ մը կենսաբանական, նյութական ապացույցն է այն մտքին, թե, իսկապես, մարդը իր բնավայրին մեջ է, որ կ'աճի ու կը տևե. և իր ստեղծագործ աշխատութիւնամբ է, որ կյանքին իմաստը կը գտնե արևուն տակ ու կը դառնա արժեք:

Բայց բարոյական իմաստով ալ հայ կյանքը գաղութներու մեջ իր հունը կորսնցուցած է: Այդ կյանքը նոր կաղապարներ փնտռելով կ'այլափոխվի, ու չգտնելով իր օրկանական կերպը՝ կ'այլասերի. միշտ երջանկութիւն մը

փնտռելով՝ գաղութահայը ինքզինքը միշտ կը գտնե հոգեկան անհավասարակշռութիւնի մեջ, ինքզինքեն դժգոհ, ինքզինքին օտար ու անհարազատ:

Ինչպես այսօր ալ կը պատահի, Խրիմյան իր ատենին ալ նկատեր է, թե գաղութահայուն տունը քանդողը նախ՝ սխալ ու մակերեսայնորեն հասկցված նորութիւնց հետևելու մոլութիւնն է, ապա՝ դրամն է ու զեխութիւնը:

Բայց ահա՛ իր իսկ խոսքերը, որոնք այսօր ալ այնքան այժմեական են, ու կրնանք մեզմե շատ-շատերուն գլխուն իջեցնել ծանր լախտի մը պես՝ զոնոնք սթափեցնելու նպատակով:

«Նոր աշխարհը ուրիշ խափանարար առիթներ հանեց երևան: Եվ ի՞նչ է այս՝ պերճանք և զեխություն է, որ յուր անողոք արշավանքներով քանդեց և դեռ պիտի քանդե գաղթական Հայոց տուն և ընտանիք:

Միթե չե՞ս հավատար, ընթերցող, թե հայ ընտանիքներեն շատերը պերճ ու փառասեր զեխության մեջ պարանոցաթաղ եղած են: Եվ ի՞նչ է նոցա սրտի և սիրո հաճույք, գիտե՞ս. շքեղ տուն, թանկագին կահ-կարասիք, կառք ու սիգաճեմ ձիեր, անբավ զարդ, անհուն նորասիրության ձևեր, սնապարծ ցուցամոլություն, ունայնամիտ տենչանք և այլն:

Այս ամեն պերճանք՝ մի մեծ բանակ կազմելով, կը զինվին պարզ կյանքին դեմ և կը հաղթահարեն ամուսնական սերը, ինչպես մարախին բանակը ցորենի արտերը կ'սպառե» *(«Դ. Ը.»):*

Խրիմյան խորհուրդ կու տա նաև, որ չափազանց ազատասիրութենեն հեռու մնա հայ ընտանիքը. չհետևի եվրոպացիին, որովհետև ամեն ժողովուրդ իր բնական ըմբռնումներեն պետք չէ մեկ անգամեն հեռանա, պետք չէ ծայրահեղության դիմե: Իր ժամանակվան շատ մը ընտանիքներու օրինակը հիշելով՝ Խրիմյան կը գրե:

«Ո՛վ հայոց ազատասեր ընտանիք, այս միայն կ'ասեմ քեզ, որ ծայրահեղ ազատության չվանեն վար իջնաս, դու ինքնին գիտես, թե վստահ չես տակավին համարձակ խաղալու, դու տեսար և կը տեսնաս, թե քանի՛ ընտանիքներ այդ հրապուրիչ չվանեն վար ինկան, ջախջախվեցան. որոց կորստյան փորձը թո՛ղ քեզ խրատ լինի» *(«Դ. Ը.»):*

Պոլսո պատրիարքության շրջանին է, մանավանդ, որ Խրիմյան մոտեն կը դիտե գաղութներու ընտանեկան կյանքը և իր դժգոհությունը կը հայտնե հետևյալ տողերուն մեջ.

«Ժամն հասավ, խոստովանիմ քեզ, ո՛վ ազգ Հայոց. չորս տարվան պատրիարքությանս շրջանի մեջ քո ընտանեկան բազմապատիկ աղետները ես ինքնին տեսա. և այդ աղետներուն մեջ առավել աղետավոր էին ամուսնական խնդիրները, որք թե ո՞րչափ և քանիպատիկ ծանրալուր են, ես կը ծածկեմ այդ թվանշանը և խնդրո պատմությունը չեմ հայտներ քեզ: Եթե կը դժվարիս հավատալ ինձ, վկա և ապացույց կը կոչեմ աստ պատրիարքարանի Դատաստանական Խորհրդո արձանագիրը: Սակայն մեր ընտանեկան զեղծմունքներու բովանդակ ցանկը պետք չէ, որ միայն այդ արձանագրեն կշռենք, վասնզի մեր այս ավուր յուրաքանչյուրին ընտանեկան կյանքը կենդանի արձանագրություն է. մարդ, որ աչք ունի, կարող է զայն կարդալ առտնին և հրապարակաց մեջ, ուր ցուցամոլ շռայլություն կը շրջի՝ նազելով իբրև անգլիացի լորտ և թագուհի, կարծելով թե յուր հարստություն Անգղիո անապատ ոսկին է:

Ո՛չ, ո՛չ: Այսպես մի՛ կարծեք, ո՛վ հայոց ընտանիք: Ճանչեցե՛ք ձեր չափն ու վիճակը. դուք շատ աղքատ եք, տնտեսապետն ընտանիքն է. եթե յուր զավակները առույգ, ազնվածնունդ չեն, ուրեմն՝ ընտանեկան սերունդն հյուծելով ստրկացած է. եթե յուր օրիորդք և երիտասարդք վարակած են մաշողական ախտով, ա՜հ, դոցա մահ և գերեզման փորող ընտանիքն է» *(«Դ. Ը.»)*:

Նույն գաղափարներու շարքին կը հիշենք նաև բախտախաղի մոլությունը, զոր մատնանիշ կ՚ընե Խրիմյան, որպես քաղաքի կյանքի չարիքներեն մին, որ գաղութներու մեջ կը զարգանա:

Ստորև կու տանք այդ տողերը, մանավանդ որ անոնք այսօր ևս այժմեականությենե զուրկ չեն մեր գաղութահայ կյանքին համար:

«Իսկ առտնին խաղամոլությունն, որ շատ ընտանյաց համար իբրև միակ զբոսանք դարձած է, զբաղելով միայն չնչին և աննշան գումարներով, սակայն ոմանց ևս, իբրև բախտի խաղ, որ մեծամեծ գումարներով կը մրցին, անբաժանելի մոլություն դարձած է. երկուքն ևս իրենց խիստ վնասակար հետևանքներ և վատթար կողմեր ունին. և դարձյալ՝

թե՛ բարոյապես և թե՛ նյութապես շատ աղետաբեր են ընտանեկան կյանքին: Վասնզի ոմանք կը կորուսանեն, ուրիշներ կը գտնեն. նոքա, որ կը կորուսանեն, հայտնի է, թե ո՛ր աստիճան մեղապարտ են աշխարհի առաջ. նույնիսկ ընտանեկան կենաց մեջ, մոր ու զավակաց առաջ, սեղանին հաց, ինչ ու ստացվածք բառնալ և ինքնին ձեռոք կողոպուտ տալ ուրիշին. որքան զայս, ավելի ընտանեկան ավարառություն չկա: Քաղաքակրթության մեջ այլևս ո՞վ կարող է մեղադրել ամայի լեռներու ավազակաց գործը, որ միայն դիպված է ճամբորդին համար, և շատ անգամ գոհ կը լինին և գտած միայն կ՚առնեն՝ առանց ամբողջ տունը և ընտանիքն կողոպտելու:

Իսկ այն, որ լի ուրախությամբ կը խայտա յուր բախտի խաղով, միթե նա և յուր ընտանիքը կը վայելե՞ն այդ անարդար և անքիրտն վաստակը. ո՛չ, նոքա ինչպես կը գտնեն, նույնպես վաղ և դյուրավ կը կորուսանեն դարձյալ թե՛ խաղին մեջ և թե՛ այլ և այլ անհաշիվ զեղխությանց մեջ, վասնզի շատ դժվարին է հավատալ, թե աշխարհիս խաղամոլները տնտեսություն գիտեն կամ թե կարող են հաշվով և խնայությամբ ապրիլ. այդ շատ անբնական է, զի ով որ դյուրությամբ շահի, դյուրությամբ կը մսխե, և ով որ դառնաքիրտ աշխատությամբ հաց և հարստություն ձեռք բերե, նա միայն կը հոգա տնտեսությամբ ապրիլ, տնտեսությամբ կառավարել յուր ընտանիքը:

Հիշենք այժմ նաև բարոյական կողմի մեծ անպատվությունն, զոր կը կրե խաղամոլն: Չեմ գիտեր, նա ամոթ կը զգա՞, երբ նորա անունը վատահամբավ կը հնչե, կը տարածի, թե այսինչ պարոնը յուր խաղին մեջ այսքան գումար կորուսեր է. ի՞նչ կը լինի հայնժամ պարոնին վիճակը. պատիվ և վարկը կը կորուսանե պարկեշտ ժողովուրդին առաջ, որով յուր առևտրական գործերը և շահավաճառություն անհաջողության մեջ կը դադրին, և երբեմն իսպառ ի սնանկություն կ՚երթա:

Բարոյական ուրիշ մի մեծ վնաս ևս ասեմ քեզ, որ է ընտանեկան կյանքի մեջ այդ չար օրինակով՝ ընտանյաց կյանքը եղծանել, զի ո՞վ կը հավատա՝ երբ ծնողք և ընտանյաց մեծերը թղթախաղով մոլին, խեղճ զավակները չի հետևին նոցա և իրենց մատաղ հասակեն սկսյալ չվարժին այդ անմեղ կարծեցյալ մոլությանց մեջ: Թողունք այս, մայրեր և կիներն ևս այդ ախտով կ՚ախտանան, և շատեր ախտացած են իսկ թողլով առտնին տնտեսություն, թողլով զավակաց խնամք և կրթություն, թողլով ընթերցմունք և ուրիշ ծնողական պարտիքները: Խաղամոլ

մարդոց կյանքին մեջ ավելի մեծ խանգարմունք ևս կա, զոր նոքա թեթև և փոքր կը համարին, այսինքն՝ թե ժամանակի բարվոք տնտեսությունը նոցա համար չէ. նոքա ցերեկվան աշխատության զբաղմունք բավական չեն համարիր, զողջույն գիշերն ևս այդ հաճոյական խաղով կը զբաղին. նոքա չեն շնչեր և չեն տեսնար ո՛չ առավոտյան կենդանարար շունչ և ո՛չ արևուն ծագումը, նոքա չարաչար քնահատությամբ, գիշերահանգիստ պահուն մեջ արթուն կենալով կը տանջվին՝ կորուսանելով մարմնո առողջությունը, հոգվո մտավորական ուժը, որով կը ջլատի և կը թմրի ողջ մարդույն գործունյա ճարտարությունը: Դու քաջ գիտես և կը տեսնաս, որ այդ քնահատ պարոնները ցերեկվան մեջ իբրև քնաշրջիկ և ապուշ կը դեգերին: Քաղցր քուն և դժվարագլուտ ոսկին կորուսանելեն հետո ցերեկվան շահն և վաստակն ևս կը կորուսանեն, որոց միայն կ'ակնկալեն խեղճ ընտանիքը, զի այդ օրական շահերեն կը կազմվի իրենց ներկա և ապագա կյանքին պարենը» *(«Դ. Ը.»):*

Սակայն Խրիմյան գիտե նաև, թե Հայը հաճախ, պատմության ընթացքին, ստիպված է ձգել իր հայրենիքը ու հեռո՛ւ, օտար երկիրներու մեջ ապաստան գտնել:

Այս կացության առաջ Խրիմյանի սիրտը կը տառապի, բայց կը խորհի, թե քանի որ ուրիշ ճար չկա առայժմ, գոնե այդ հայ գաղութները մեկ–մեկ իսկական «հայրենական համայնք» կազմեին ու երբեք չդադարեին օր մը իրենց բույնը վերադառնալու տենչեն:

Երբ 1893–ին Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված էր ու Եվրոպայի ճամբով դեպի Էջմիածին կ'ուղղվեր, քանի մը օր կը մնա Վիեննա:

Վիեննայի մեջ կ'ընդունի Թրանսիլվանիո Արմենոբոլ քաղաքի պատվիրակները (կաթոլիկ), որոնք հետևյալ ուղերձով կը դիմավորեն Հայոց Հայրիկը:

«Թեև հեռու և տարագիր Հայրենիքեն, թեև վաղուց պանդխտության մեջ, բայց չենք մոռացել, որ մեր պապը Լուսավորիչն է եղել, Ս. Գրիգորը, որի արժանավոր հաջորդն եք այսօր. չենք մոռացել Էջմիածինը, չենք մոռացել մեր լեզուն և ազգությունը, չենք մոռացել, որ Ձեր հետ միասին մեկ արյունից ենք սերած, և եկեր ենք այսօր Ամենայն Հայոց Հայրիկի աջը համբուրելու և նորա օրհնությունը խնդրելու»:

Ամենայն Հայոց Հայրիկը կը պատասխանե.

«Թե որ դուք ձեր հոտի անունեն ինձ Ամենայն Հայոց Հայրիկ կ'անվանեք, ես ձեզ գրկաբաց կոչում եմ իմ զավակներս և լիաբերան օրհնություն եմ տալիս: Ճիշտ է, ցանկալի է, որ բոլոր Հայ ազգը Լուսավորչի փարախին հարած լիներ, բայց եթե իրարմե տարբեր դավանություններու կը պատկանին, այստեղ ևս Աստծու մատը կը տեսնեմ, վասնզի, գուցե Աստված այդ միջոցն է գտել Հայ ազգին մեջ լուսավորություն տարածելու համար: Կրոնը խղճմտանքի գործն է, և Հայրիկի առաջ տարբերություն չունի լուսավորչական, կաթոլիկ, բողոքական հայը: Բավական է, որ հայ է իր ծագումով, ցեղով և լեզվով: Մեծ է համերաշխության գաղափարը: Ինչպես որ սերմնացանը կը սփռե յուր սերմ, նույնպես սփռած է Աստված Հայ ազգին ամեն կողմ: Դուք՝ օտար հողի, բայց ազատ երկրի վրա ապրող հայ գաղթականություններ, թե՛ լուսավորչական, թե՛ կաթոլիկ, կորսված չեք Հայաստանի համար, այլ ազատությամբ ուռճանալով՝ կարող եք և պետք է լինիք նեցուկ Մայր Հայրենիքին, վասնզի դուք կ'ապրիք այստեղ, ուր գիտության և իմաստության հնոցն է: Եբրայեցիք Բաբելոն գերվելով՝ սովորեցան Աստված սիրել. դուք հայրենիքեն պանդխտելով և վտարանդելով՝ պիտի սորվիք սիրել, ինչ կորուսած եք»:

Կարելի չէ առանց հուզումի կարդալ այս վերջին տողերը:

Գաղութահայը հայրենիքեն պանդխտելով՝ պիտի սորվի սիրել այն, ինչ որ կորսնցուցած է:

Բայց չի բավեր կրավորական սիրով մը միայն տոգորվիլ: Գաղութային կյանքը պետք չէ կորսված ժամանակ մը ըլլա: Այստեղ, Եվրոպայի գիտության ու իմաստության հնոցին մեջ դարբնվելով, զորանալով ու զինվելով, գաղութահայը պետք է պատրաստվի, օր մը, իր բնավայրին մեջ, իր հողին վրա արժեքավորելու համար իր ուժերն ու զենքերը՝ գիտության և իմաստության զենքերը:

Այսօր ալ Խրիմյանի կանչը մեզի՝ այսօրվաններուս համար, հրավեր մը պետք է ըլլա. կապվիլ այդ հայրենի լուսեղեն հողին, զինվիլ այստեղ գիտությամբ և հմտությամբ, և պատրաստ ըլլալ հոն աշխատելու ու արժեքավորելու մեր կարողությունները:

Ահա այս հավատքի ու հաստատ կյանքի հոգեբանությունը կ՚ուզե ներշնչել Խրիմյան մեզ՝ գաղութահայերուս, որպես դատիարակչական գերագույն պատգամ:

Ու այստեղ ալ կրնանք իր օրինակը հիշել: Որովհետև ինքը՝ Խրիմյան, հակառակ այն շատ ու շատ հուսախաբությունների ու աղետների, որոնց ականատես եղավ ու իր զգայուն սրտի վրա զգաց անոնց այրող ցավը իր երկար կյանքի տևողության, ան մինչև վերջ չկորսնցուց ո՛չ իր հավատքը դեպի ժողովուրդն ու Հայ հայրենիքն, ո՛չ ալ իր անուղղա լավատեսությունը և եռանդը:

Իր հայրենիքի՝ Վանի աղետեն հետո, ան արյուն-արցունքով գրեց իր հռչակավոր «Վանգույժը», որ ողբ մըն է ու բողոք մը միաժամանակ: Սակայն նույն այդ գրվածքին մեջ իսկ ան չի կորսնցներ իր պայծառատեսությունը և ողբալե հետո ավերն ու մահը, ան կը դիմե կյանքին, կյանքի մշտանորոգ ուժերուն ու այսպես կը խոսի հուսաբեկ ժողովուրդին.

«Թե հիրավի՛ ձեր արիական նախնյաց նմանող, հարազատ որդիքն եք, այս հրո և սրո ժամանակին մեջ ցուցեք ձեր առաքինության հանդեսը, զորացեք ու զորացուցեք վհատած որդիները, նկուն մի՛ լինիք փորձության առաջ, զի մարդուն կենաց ճանապարհ այս աշխարհի վերա լի է դժնդակ փուշերով: Առաքինիք միայն զայն կոխելով կ՚անցնին, իսկ վատասիրտներ կը լքանին:

Կոխեցե՛ք և անցե՛ք, ո՛վ աշխատավոր եզինք. մի՛ թափառիք ու հեռանաք ձեր ավերակ ագարակեն, եղեք դարձյալ զույգ-զույգ, լծվեցեք, ձեր սամոտիք պինդ կապեցեք ընկերական սիրով, հեծելով, փնջալով վարեցեք ու պատռեցեք այդ տառապանաց ակոսն. ժիր մշակներ, գոգնոց կապեցեք, լի հույսով ցանեցեք ձեր վաստակասեր քրտանց սերմն, պահ մի ևս սպասեցեք, զի ձմեռ է, ձյուն և սառնամանիք ծածկեր են մեր աշխարհ:

Գարուն մոտ է, Հայոց աշխարհ, և պիտի գա ծիծեռնակ, քեզ ավետիս տա. Թուրքիո աշխարհեն երկունք կանցնի, և յուր վերածննդյան օրը հասած է. և դու տես հայնժամ, թե ինչպե՛ս այս մոխրակույտ ագարակն անդրեն բողբոջելով կը կանաչի և քո վերջին բարգավաճ կը լինի, քան զառաջին: Դու լույս և արև կը սիրես, լույս և արև զքեզ պիտի վերածնին, քո հրայրյաց երկիր մարգագետին կը դառնա. լուսին ի վերուստ վերայեդ անցնելով՝ պիտի զարմացմամբ նայի, երբ տեսնա, որ Արծրունյան աշխարհի որդիքներ, համակ արծվապես, նորափետուր զարդարված են, զոր բռնություն փետտեց, որ լերկամարմին, անպատանք մեռնին»:

Թ.
Քննական ակնարկ

Մեր ներկա աշխատությամբ փորձեցինք Խրիմյան Հայրիկի դաստիարակչական ու ընկերային բարենորոգչական մտքերը ներկայացնել այնպես, ինչպես անոնք ի հայտ կու գան հեղինակին գործերու ընթերցումեն: Ապագային կը մնա այդ մտքերը գիտական դասավորության մը ենթարկել ու զանոնք, որպես տարր, գործածել ամբողջական դաստիարակչական դրության մը հասնելու նպատակով:

Մեր կարծիքով՝ հնարավոր է և անհրաժեշտ, այդ մտքերու հիման վրա ինքնուրույն հայկական դաստիարակչական դրություն մը կառուցանել՝ ամբողջացնելով Խրիմյանը այն անհրաժեշտ տարրերով, որոնք կը բացակային անոր մտածողության մեջ, և տեղ-տեղ ալ որոշ բարեփոխումներ ներմուծելով անոր ըմբռնումներուն մեջ՝ համաձայնեցնելու համար զանոնք մեր օրերու պայմաններուն և պահանջքներուն: Այդ բարեփոխումը շատ համաձայն պիտի ըլլա Խրիմյանի ոգիին, որովհետև ան հառաջդիմասեր մը ըլլալով՝ կյանքը կը դիտե որպես հարատև զարգացման ու հեղաշրջման մեջ գտնվող երևույթ մը, և ինքն է, որ մեզի կը սորվեցնե, թե «մարդ պետք է ժամանակին հետ քալե»:

Ուրեմն՝ երկու հարց:

Նախ՝ ի՞նչ տարրեր կը բացակային Խրիմյանի դաստիարակչական գործին մեջ, և երկրորդ՝ ի՞նչ փոփոխություններ պետք է կրեն անոր մտքերեն ոմանք: Ահա՛ հարցում-

ներ, որոնց կ՚ուզենք շատ հակիրճ կերպով պատասխանել, մեր աշխատությունը վերջացնելե առաջ:

Այն լրացուցիչ տարրերը, որոնցմով պետք է ամբողջացնել Խրիմյանի դաստիարակչական մտքերը, մեր կարծիքով՝ հետևյալներն են.

Ա. Նախ պետք է առարկայական, գիտական ուսումնասիրության ենթարկվի հայուն հոգեբանությունը, որպես անհատ և որպես հավաքականություն: Հոգեբանությունը այն գիտությունն է, որմե չի կրնար բաժնվիլ որևէ դաստիարակություն: Այն, ինչ որ տարրաբանությունն է (chimie) բժշկության համար, հոգեբանությունն է մանկավարժության համար:

Հոգեբանությունը անհրաժեշտ է դաստիարակչական դրության մը՝ այդ դրության տեսական հիմնավորում մը տալու համար:

Երկրորդ՝ ճշգրիտ կերպով ճանչնալու համար այն հոգեկան իրականությունը, որ պետք է դաստիարակվի, այսինքն՝ անհատն ու ընկերությունը:

Երրորդ՝ հոգեբանությունը անհրաժեշտ է նաև կրթական և ուսումնական, գործնական աշխատանքներուն մեջ, մանավանդ ինչ կը վերաբերի զանազան մեթոտներու կիրառման:

Հայ անհատին ու հավաքականության հոգեբանության ուսումնասիրությունը պետք է դրվի գիտական, գործնական գետնի մը վրա՝ օգտվելով ժամանակակից մեթոտներեն, ինչպես են անքեթները, թեսթերը, մոնոկրաֆիները, սթաթիսթիքները, ինչպես նաև բսիհոթեքնիք-ի մեթոտները:

Բ. Խրիմյան նվազ կաևորություն կու տա ֆոլքլորին, թեև որոշ տարրեր կան: Մեր ժամանակները ֆոլքլորը բերած են հավաքական կյանքի դաստիարակության առաջին գծին վրան, մանավանդ գյուղական ժողովուրդի դաստիարակման գործին մեջ:

Ֆոլքլորը այլևս լոկ «հետաքրքրական», «գեղջկական» արտադրություններու հավաքածո մը չէ, ոչ ալ «հինեն մնացած գանձ մը» միայն, այլ ապրող, տևականորեն ապրող երևույթ մը, կենդանի արտահայտությունը ժողովուրդին գեղարվեստական ապրումներուն, մտքի պայծառության, բարոյական հասկացողություններուն և, նույնիսկ, ընկերային-տնտեսական փոխհարաբերությանց ու պայմաններուն:

Ֆոլքլորը, ուրեմն, համայնքային, ժողովուրդին հարազատ և ամենամտերիմ ապրումներուն և ձգտումներուն ամենաճշմարիտ դրսևորումն է, երբեմն, նույնիսկ, պատմութենեն ալ ավելի ճշմարիտ: Ֆոլքլորը ժողովուրդին մտքին և զգայնության ստեղծագործություններու առարկայացած ամբողջությունն է: Ահա թե ինչո՛ւ ֆոլքլորը դաստիարակչական խոշոր նշանակություն ունեցող տվյալ մը կը դառնա: Ժողովրդական երաժշտություն և բանաստեղծություն, պարեր ու խաղեր, առասպելներ ու հեքիաթներ, ձեռագործի ժողովրդական մոթիվներ, ձեռական զանազան աշխատանքներ և այլն, և այլն. ահա այս բոլորը ազգային դաստիարակչական շատ ավելի զորավոր ու գործնական արժեք ունին, քան թե «խոսքի» և «ճառի» կրթությունը:

Գ. Ուրիշ խնդիր մը, որուն Խրիմյան չ՚անրադառնար, առողջապահության հարցն է և անոր հետ կապված մարմնակրթանքը, որոնք, անտարակույս, չեն կրնար բացակայիլ որևէ արդիական կրթական դրութենե մը:

Դ. Քաղաքացիական դաստիարակության տեսակետեն և Խրիմյանի մտքերը անբավարար են և պակասավոր: Եվ ասիկա բնական պետք է համարել, քանի որ իր ժամանակի հայուն ամբողջ քաղաքացիական դաստիարակությունը կը կայանար հպատակելու մեջ: Մինչդեռ, իրական դաստիարակություն մը պետք է իր նպատակներեն մին ընե՝ հասցնել այնպիսի քաղաքացիներ, որոնք ազատ մարդիկ ըլլան, ինքզինքնին ազատորեն ղեկավարել գիտնան, որպեսզի իրավունք ալ ունենան ղեկավար դառնալու ազատ մարդոց ընկերության մը մեջ:

Ու Խրիմյանի ոգին ամբողջովին համաձայն է այսպիսի քաղաքացիական դաստիարակության մը հետ:

Այս հիմնական հարցերեն դուրս կը մնան դեռ, բնականաբար, զուտ մանկավարժական թեքնիք տվյալներ, որոնցմով կարելի կ՚ըլլա ամբողջացնել Խրիմյանի դաստիարակության դրությունը, որոնց վրա մենք հարկ չենք նկատեր այստեղ ծանրանալ:

Ինչ որ փոփոխության պիտի ենթարկվի Խրիմյանի ըմբռնումներուն մեջ, առաջ կու գա, մանավանդ, այն տնտեսական պայմաններեն, որոնք ստեղծված են մեր ժողովուրդին ծոցին մեջ ու հետզհետե կը զարգանան:

Խրիմյան գյուղացի մըն է և կ՚ուզե գյուղացի մնալ՝ իր հետ գյուղ տանելով բովանդակ հայ ժողովուրդը: Խրիմյան ինչքան ալ պաշտպանե գյուղական կյանքի առողջությունը, գեղեցկությունը և բարոյականը, մենք համաձայն ըլլալով հանդերձ անոր հետ, պետք է նկատենք, սակայն, թե արդիական կյանքի տնտեսական պայմանները՝ արդյունաբերության զարգացումը, ճարտարարվեստի հեղաշրջումը, թեքնիքի կատարելագործումը կյանքի կերպարանքը տակավ կը փոխեն, աշխատանքի բաժանումը ավելի ու ավելի կը շեշտվի և կը խորանա՝ ժողովուրդը բաժնելով հատվածներու, ըստ բազմաթիվ մասնագիտություններու: Ոչ միայն քաղաքներու մեջ, մեծ ճարտարարվեստին մեջ, այլ նույնիսկ գյուղական կյանքի, հողագործության մեջ, աշխատանքը մասնագիտություններու կը բաժնվի:

Ահա այս բոլոր երևույթները կու գան մարդոց կյանքին բնույթը փոխելու, և, ուրեմն, դաստիարակն ալ պետք չէ ժամանակ կորսնցնե կյանքի հին ձևերը ոգեկոչելով, այլ իրատես ոգիով մը պետք է իր գործը և առաքելությունը - համաձայնեցնե ներկայի պայմաններուն՝ զոհելով ձևերը, սակայն պահելով այն, ինչ մշտական ու տևական է, այսինքն՝ այն, ինչ որ իրական արժեք է ժողովուրդին պատմական, բարոյական ու մշակութային կյանքին համար:

Ու այսպես ընելով՝ հայ դաստիարակը, խորքին մեջ, Խրիմյանին ոգիին հետևած պիտի ըլլա, քանի որ ան պահպանողական հեղափոխական մըն է:

Այս բոլոր ներմուծումներն ու ուղղումները, այո՛, անհրաժեշտ են, սակայն անոնք ոչինչով պիտի նվազեցնեն Խրիմյանի արժեքը: Այլ ընդհակառակը, եթե Խրիմյանի մտքերն ու ըմբռնումները կարենան տեղ տալ նոր տարրերու ու պատշաճիլ կյանքի նոր պայմաններուն, ատիկա լավագույն ապացույցը կ՚ըլլա անոր մեծության, անոր մտածումին առողջության ու կենդանության:

Խրիմյան իր դաստիարակի մեծ գաղափարներով ու ոգիով, տևական, մնայուն արժեք մըն է, որ միշտ կրնա իբր ուղեցույց ծառայել որևէ ժողովրդական դաստիարակության՝ պատշաճելով ընկերային-տնտեսական նորագույն պայմաններուն:

Հայ ժողովուրդը ինքզինքը երջանիկ պետք է համարե, որ ուրիշ մեծերու կողքին ունի նաև իր Խրիմյան Հայրիկը, իր մշտապես կենդանի, մեծ դաստիարակը, որ այսօր ալ տակավին հոնկե, ուր որ է, տխուր աչքերով կը նայի իր սիրելի ժողովրդին ու կը հետևի անոր քայլերուն՝ մերթ տրտմելով, մերթ զայրանալով, մերթ ուրախանալով:

... Գարնանային բարի անձրև մը, որ առատորեն կյանք, սեր և ավելի լավի հավատքը ամեն կողմ և ամենուն կբաշխե,- ահա՛ Խրիմյանի գոյության իմաստը մեր ժողովրդի կյանքին մեջ՝ անցյալին ու ապագային...

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՅՐԻԿԻ ԿՅԱՆՔԵՆ*

1821 Ապրիլ 4, ծնունդ՝ Վան:
1847 Ուսուցիչ ի Կ. Պոլիս:
1849 Նամակ առ Բագրատունի:
1850 «Հրավիրակ Արարատյանը» կը հրատարակվի:

* Քաղված Թորգոմ եպ. Գուշակյանի «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ» գրքեն:

1850 Ուխտավոր յերուսաղեմ:
1851 «Հրավիրակ երկրին Ավետյացը» կը հրատարակվի:
1852 Կ'այցելէ Կիլիկիա:
1853 Կը վերադառնա Վան:
1854 Վարդապետ կը ձեռնադրվի Աղթամարի մեջ:
1855 Դարձյալ Կ. Պոլիս կ'անցնի:
1855 Կը հրատարակե Կ. Պոլսո մեջ «Արծվի Վասպուրականը»:
1856 Վան կը դառնա, իբր վանահայր Վարագա:
1858 Վարագա մեջ կը հրատարակե «Արծվի Վասպուրականը»:
1860 Կ'այցելէ Կովկաս:
1862 Առաջնորդ կ'ընտրվի Տարոնո:
1863 Մշո մեջ կը հրատարակե «Արծվիկ Տարոնո»:
1866 Կը ճամբորդե Կ. Պոլիս և նույն տարին կը դառնա Մուշ:
1867 Կը հրատարակվի «Մարգարիտ Արքայության Երկնիցը»:
1868 Գեորգ Դ.-ե կը ձեռնադրվի եպիսկոպոս:
1869 Կ'ընտրվի պատրիարք Կ. Պոլսո:
1873 Պատրիարքութենե կը հրաժարի:
1874 Քարոզիչ Գուզկունճուքի:
1875 Բ. տպագրություն «Հրավիրակ Արարատյանի»:
1876 Գրի կ'առնե Բարենորոգմանց ծրագիրը, կը հրատարակե «Խաչի Ճառը» ու «Ժամանակ և Խորհուրդ յուրը»:
1877 Կը հրատարակե «Վանգույժը» և «Հայգույժը»:
1878 Կը հրատարակե «Դրախտի Ընտանիքը». նոյն տարին Պեռլի-նի Վեհաժողովին կ'երթա:
1879 Կը հրատարակե «Սիրաք եւ Սամվելը»:
1879 Կ'ընտրվի առաջնորդ Վանի, ուր կ'երթա:
1885 Կը վերադառնա Կ. Պոլիս:
1886-88 Ատենապետ Կրոնական ժողովո:
1890 Երուսաղեմ կ'աքսորվի:
1892 Մայիս 5, Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրվի:
1893 Սեպտ. 26-ին կ'օծվի:
1894 Կը հրատարակե «Պապիկ և թոռնիկը»:
1895 Բեթրսպուրկ կ'երթա:
1898 Կ'այցելէ Պաքու:
1900 Կը հրատարակե «Թագավորաց ժողովը»:

1901 Կը հրատարակվի «Վերջալույսի Ձայները»:
1903 Կը հրամայե չգործադրել եկեղեցական կալվածներուն գրավման մասին ցարական հրավարտակը և կը մերժե հանձնել էջմիածնի վանքին գանձարանն ու դրամարկղը:
1904 Պատվիրակության մը պաշտոն կը հանձնե դիմել Եվրոպայի և Միացյալ նահանգներու արքունիքներուն:
1907 Պատվիրակություն մը կը ղրկե Լա Հեի Խաղաղության ժողովին և նամակ մը կ'ուղղե Անգլիո թագավորին:
1907 Նոյեմբեր 11 (Հոկտ. 29), կը վախճանի:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ*

Սուրբ և մեծն Պողոս Առաքյալ մեզ խորհուրդ է տալիս. «Կացէ՛ք զաղաւթս միշտ»: Եվ հայ ժողովուրդն իր ամենաբարի և արժանավորագույն որդիների միջոցով դարեր ի վեր իր ջերմ աղոթքներն է առաքում դեպի «Հայր մեր, որ յերկինս»: Այդ որդիներից մեկը՝ Գրիգոր Նարեկացին, որը բոլորից շատ էր ոգեշնչված Սուրբ Հոգով, այսպես էր աղոթում (Բան ԾԵ, Բ).

Եւ արդ, զի՞նչ քեզ աղերս հաճոյական ի յայսմ և ի սոյն
Եւ ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից,
Գովեալ թագաւոր երկնաւոր Քրիստոս,
Եթէ ոչ զառ ի յինէն անիծեալսն աւրհնել աղաւթեմ,
Զկապեալսն արձակել, ազատել զդատապարտեալսն,
Բարեգործել զնզովեալսն, պսակել զթշնամեալսն,
Սփոփել զտրտմեցեալսն, դարմանել զխորտակեալսն,

---

* Նախապես, իբրև զեկուցում, կարդացվել է Պուքրեշի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցում ռումեն լեզվով 1950 թ. դեկտեմբերի 10-ին՝ Ս. Գրիգոր Նարեկացու ծննդյան հազարամյակին նվիրված հոբելյանական հանդեսի ժամանակ: Ավելի ուշ պատրաստվել է զեկուցման ընդարձակ տարբերակը, որը տպագրվել է ռումեն կրոնական-գրական-հասարակական «Ortodoxia» հանդեսում (1955, էջ 166-177): Վերջինիս մեջ հոդվածին հաջորդում են Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի Գ (գ), ԺԲ (դ), ԽԱ (ա), ՇԵ (գ), ՀԱ (բ) և ՁԱ (ա) գլուխներից առնված վեց հատված, որոնց թարգմանիչը նույնպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն է՝ այն տարիներին ռումանահայոց թեմական առաջնորդը:

Երկրորդ անգամ վերահրատարակվել է Սուրբ էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուում՝ էջ 191-209, որից և արված է սույն հրատարակությունը:

Խնամել զարտուցեալսն, պատսպարել զենգեալսն,
Զվիրաւորեալսն ի մարմին՝ յոգի բժշկել:
Եթէ աւրհնութեան բանիւ առ ոք մատուցայ՝ լուիցե՛ս,
Իսկ եթէ անիծիւք՝ մի՛ հայեսցիս ընդունել, գթած:

Ճշմարիտ հավատավոր, ուղղափառ հայ ժողովուրդը դարերի հոլովույթի մեջ Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթքներում գտնում է հոգեկան սփոփանք և դաշնություն Աստուծո հետ, բալասան և սպեղանի՝ իր վերքերի և տառապանքների համար, պահապան-պաշտպան՝ ընդդեմ թշնամու պիղծ զորության, նրանից հոգեկան նոր ուժեր, հույսի նոր աղբյուրներ ստանում:

Սուրբ Գրքի և, հատկապես, Դավթի Սաղմոսների կողքին այս Աղոթամատյանը, որը ժողովրդական լեզվով կոչվում է Նարեկ, ամենակարդացվածն է եղել, ամենամեծարվածը և հռչակվել է որպես հրաշագործ գիրք: Մինչև օրս էլ մեր հավատացյալ ժողովուրդը Նարեկին վերագրում է հրաշագործ ուժ՝ բուժիչ, օգնական, պահապան և փրկարար: Նարեկը, միաժամանակ, մինչև ներկա դարի սկիզբը ամենից շատ տարածված և հաճախակի տպագրվող գիրքն էր մեզանում: Դեռ միջնադարում արտագրված և մեզ հասած բազում ընտիր ձեռագիր օրինակների կողքին գոյություն ունեն տասնյակ հրատարակություններ, որոնք, սկսած տասնվեցերորդ դարից, տպագրվել են Մարսելի, Վենետիկի, Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Փարիզի, Երուսաղեմի, Թիֆլիսի հայկական տպարաններում:

Այսօր, երբ լրանում է Սուրբ Գրիգոր Նարեկացու ծննդյան հազարամյակը, Հայոց Եկեղեցին, աշխարհի չորս ծագերում սփռված մեր ամբողջ ժողովուրդը նշում է Եկեղեցու այս մեծ որդու հիշատակը, որդու, որն, իրավամբ, ընտիր սափոր էր և մեծ քերթող, և որը հարստացրել է հայ ժողովրդի հոգևոր գանձարանը իր անմահ ստեղծագործությամբ: Սուրբ Գրիգոր Վանականի ծննդյան տոնի առթիվ մենք այսօր մեծարում ենք այդ եռամեծ սրբին, հավատքի և նախնյաց Եկեղեցվո նվիրյալին, հայ գրականության և ընդհանրապես հայ բանաստեղծության համար նոր ուղիներ բացող քերթողին և, վերջապես, հայ գրական լեզվի մեծագույն վարպետներից մեկին:

* * *

Պատկերացնելու համար այն ժամանակաշրջանը, երբ ապրել է Սուրբ Գրիգոր Նարեկացին և հորինել իր բանաստեղծական հրաշակերտը, անհրաժեշտ ենք գտնում նախ՝ մի համառոտ հայացք նետել հայ ժողովրդի պատմության այն շրջանի վրա, որի մեջ հասակ առավ և, որպես մշտավառ աստղ, փայլատակեց այս հրաշալի մարդը:

Հայագետ-պատմաբանների կարծիքով՝ այժմյան հայ ժողովուրդը կազմավորվել է Քրիստոսից առաջ 8-ից 7-րդ դարերում պատմական Հայաստանի ազգային տարածքի վրա Թրակիայից (թե՞ Փռյուգիայից) սերած հայկական ցեղերի փոխձուլման հետևանքով, որոնք հանդիսանում էին Իլլիրո-Թրակիական ցեղերի մի ճյուղը: Սրանք էլ, իրենց հերթին, աստիճանաբար ձուլվեցին, խառնվեցին նախկին Ուրարտուի թագավորության բնիկ ցեղերի ու ցեղախմբերի հետ, և այսպիսով կազմավորվեց հայկական ազգային բնիկ էթնոսը: Ձևավորման այդ պրոցեսի ավարտումն ընդունված է համարել Քրիստոսից առաջ 7-րդ դարը: Հայ ժողովրդի գոյությունն իր պատմական հայրենիքում՝ Արարատյան բարձրավանդակում, որպես անկախ պետություն, արդեն ստույգ կերպով արձանագրված է Պարսկաստանի Դարեհ թագավորի սեպագիր արձանագրություններում 5-րդ դարում: Այդ վաղնջական պատմաշրջանը, մինչ հայ ժողովուրդն ապրում էր Աքեմենյան Պարսկաստանի կրոնական, մշակութային և քաղաքական, ինչպես նաև ասորա-բաբելոնյան մշակույթի ազդեցության ոլորտներում, ավարտվեց մի հարյուրամյակ անց, Մեծն Ալեքսանդր Մակեդոնացու ռազմա-քաղաքական գործունեության բուռն ծավալման շրջանում, հիշյալ տերությունների տապալու-

մով: Այսպիսով՝ սկսվում է պատմական մի նոր ժամանակաշրջան, երբ հայ ժողովրդի առջև բացվում են նոր և լուսավոր հորիզոններ: Դա հելլենական քաղաքակրթության բարերար ազդեցությունն էր: Հին Հելլադայի հետ շփումները հայերի համար եղան հույժ արդասավոր ու արդյունավետ:

Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկիոսի կայսրությունների կոտորակումից հետո Հայաստանը դուրս եկավ միջազգային ասպարեզ, որպես ինքնուրույն քաղաքական միավոր, Մեծ Հայքի առաջին թագավոր Արտաշես Առաջինի հիմնադրած ազգային հարստության գերիշխանության ներքո: Սա քաղաքական անկախության և ազգային ինքնիշխանության ամենավաղնջական ժամանակշրջանն է, երբ Հայաստանն աստիճանաբար կարողանում է հասնել պետական հզորության և ռազմական միահեծան փառքի գագթնակետին, Տիգրան Մեծ աշխարհակալ թագավորի տիրապետության ժամանակ (նա իշխել է 94–54 թթ., Քրիստոսից առաջ): Տիգրան Մեծը մեկից ավելի անգամներ իր զենքի ուժը չափել է Հռովմեական կայսրության փառաբանված զորաբանակների հետ, և ամենևին էլ եզակի չեն դեպքերը, երբ վեճերը լուծվել են Հռոմի ամոթալի պարտությամբ:

Արտաշեսյան հարստության շրջանը, որը նույնպես ենթարկվել է հելլենական մշակույթի բարերար ազդեցությանը, հարատևել է մինչև քրիստոնեության դարաշրջանի այգաբացը:

Ազգային անկախության երկրորդ ժամանակահատվածը ընդգրկում է մեր թվագրության 1–ից մինչև 5–րդ դարերը, այսինքն՝ այն շրջանը, երբ Հայաստան աշխարհը գտնվում էր Արշակունիների հարստության ներքո: Այս հարստության առաջին թագավորները պաշտպանական բնույթի ծանր մարտեր էին մղում ընդդեմ Հռովմեական լեգեոնների. ի վերջո, պայքարող կողմերն երկուստեք համաձայնության եկան, որ Հայաստանը վերստին մնա Հռովմեական կայսրության քաղաքական ազդեցության ոլորտում՝ պահպանելով, սակայն, իր ազգային անկախությունը: Եվ

պատմական այսպիսի պայմաններում անգամ, այս ժամանակահատվածում ևս, հայ ժողովուրդը շարունակեց սերտ կապեր պահպանել հունա–հռովմեական, իսկ հետագայում նաև բյուզանդական գրական–մշակութային կյանքի և քաղաքակրթության հետ:

Դրանով է բացատրվում նաև քրիստոնեության տարածման իրողությունը Հայաստանում, դեռ առաքելական ժամանակներից սկսած՝ քրիստոնեություն, որն իսկական հավատքի, հետևաբար և պետական կրոնի աստիճանի բարձրացավ 4–րդ դարի սկզբներին՝ 301–303 թվականների միջև ընկած տարիներին, Սուրբ Գրիգոր Լուսավորչի հրաշագործության շնորհիվ, Տրդատ Երրորդ «Աստվածասեր» թագավորի իշխանության օրոք: Նոր կրոնն, անկասկած, հիմնիվեր փոխեց մեր ժողովրդի մտածելակերպը և աշխարհայացքը, մանավանդ Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի կողմից հայոց գրերը ստեղծելուց և 5–րդ դարի առաջին քառորդում Աստվածաշունչը ազգային լեզվով թարգմանվելուց հետո: Կարող ենք աներկբայորեն ասել, որ հինգերորդ դարը, որն, իրավամբ, մեր ազգային պատմության Ոսկեդար են կոչում, մեր հոգևոր աշխարհի վերջնական կազմավորման, գաղափարական հասունության, ինչպես նաև հայոց դասական լեզվի և գրականության սկզբնավորման ու ըստ ամենայնի զարգացման դարաշրջանն է: Ընդհանրապես, հայ ժողովուրդը այսօր էլ ինքնատիպ ու ինքնուրույն է, ինչպես իր հազարամյա պատմության այդ հրաշալի Ոսկեդարում:

Արշակունյաց թագավորական հարստության անկմանը հաջորդեց մոտ չորս դար տևող քաղաքական ենթակայության մի երկարատև ժամանակաշրջան: Հայաստանն սկզբում բաժանվեց Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև, իսկ ավելի ուշ, այսինքն՝ 639 թվականից համարյա թե մինչև 9–րդ դարի վերջերն, ընկավ արաբների տիրապետության տակ: Այս ժամանակաշրջանը միանգամայն նոր բնույթի տեղաշարժեր առաջ բերեց հայկական կյանքի և մշակույթի ասպարեզում. հայ-

կական հոգու վրա տիրապետող դարձավ տեսլապաշտ Արևելքը: Շնորհիվ իր պատմա-աշխարհագրական և ռազմաքաղաքական դիրքի, ընկած լինելով դեպի Արևելք ու Արևմուտք տանող ճանապարհների քառուղիներում, իր տեսած ու ապրած պատմական պայմաններից բխող արդյունքների հետևանքով՝ հայ ժողովրդի հայրենիքը բազմիցս դարձավ տարբեր ու անգամ տրամագծորեն հակադիր քաղաքակրթությունների հանդիպավայր, ինչպիսիք էին ասորա-բաբելոնական, պարսկական, հելլենական, հռոմեական, բյուզանդական և արաբական մշակույթները: Սակայն այսօր ամենայն որոշակիությամբ պետք է հավաստենք այն ճշմարտությունը, որ հայերը, կրելով հանդերձ մեծ ազդեցություն հիշյալ բոլոր քաղաքակրթություններից, կարողացան յուրացնել նրանց բոլորի հոգևոր արժեքները և միաժամանակ իրենց կրոնի, ազգային սովորությունների, ապրելակերպի, արվեստի ու գրականության մեջ պահպանել սեփական հոգեկան-մշակութային կյանքի ինքնուրույնությունը և անհատականությունը:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Բաղդադի արաբական խալիֆայության թուլացմանը զուգահեռ սկսեց էլ ավելի աշխուժորեն դրսևորվել հայկական ներքին-ազգային գիտակցությունը և ազգային ուժերի քաղաքական կազմավորմանը նպաստող նախնական ձևերի ստեղծումը: Նախ՝ խալիֆայության ենթակայության ներքո պատմական Հայաստանի տարբեր շրջաններում հիմնվեցին բազմաթիվ փոքր իշխանապետություններ, որոնք ժամանակի ընթացքում կարողացան բոլորովին անկախ դառնալ օտար ուժերից: Իսկ փոքր-ինչ ուշ՝ 9-րդ դարի վերջերից սկսած, այս իշխանապետություններից ո-

մանք միավորվելով ստեղծեցին ավատական կացութաձևի երեք աչքի ընկնող հայկական պետություններ, որոնք արդեն 10-րդ դարում հռչակվեցին որպես անկախ թագավորություններ: Դրանցից առաջինը և առավել աչքի ընկնողը Բագրատունիների իշխանության ներքո գտնվող թագավորությունն էր՝ իր հանրահռչակ Անի մայրաքաղաքով. երկրորդը Հարավի թագավորությունն էր, որի մայրաքաղաքն էր Վանը, և գտնվում էր Արծրունյաց տան իշխանության ներքո, և, վերջապես, երրորդը Սյունյաց թագավորությունն էր երկրի արևելքում:

Հայ ժողովուրդը, որը հեթանոս տիրապետողների դաժան լծի ներքո,շուրջ չորս դար ճաշակել էր ստորացուցիչ կյանքի ամբողջ դառնությունները, ապրելով հալածանքներով, հետապնդումներով և տառապանքներով լի մի կյանք, իրեն տեսավ վերջնականապես փրկված և իր սեփական ճակատագրի տերը: Ամբողջ ժողովուրդն զգաց ազատաբեր կյանքի փրկարար շունչը: Բազմապատկված ուժերով, անհաղթահարելի կամքով, պատմության մեջ հազվադեպ պատահող խանդավառությամբ, ազգի լուսավորյալ միապետների և մեր հնամենի Եկեղեցու ջանադիր ղեկավարության ներքո, Եկեղեցու, որը դարեր ի վեր, ամենասահմանափակ պայմաններում անգամ, եղել է ազգային բոլոր սովորությունների ու բարեմասնությունների պահապանը, հայ ժողովուրդը լծվեց իր նոր կյանքի կառուցման ստեղծագործ աշխատանքին, ինչպես քաղաքական, տնտեսական և ռազմական, այնպես էլ հոգևոր ու մշակութային այլևայլ ասպարեզներում: Վերածննդի այդ ժամանակաշրջանի ամենանշանավոր դեմքերից էին Բագրատունիների հարստության գահակալներից՝ Աշոտ Ողորմածը, Սմբատ Երկրորդը և Գագիկ Առաջինը, իսկ Արծրունյաց հարստությունից՝ Աշոտ, Գուրգեն և Սենեքերիմ թագավորները:

Մեր պատմության մեջ 10-րդ դարը 5-րդ դարից հետո հանրային ու հոգևոր կյանքի ծաղկման և զարգացման հաջորդ բարձրակետն է, ծաղկում, որն առաջին հերթին վերա-

բերում էր վանական կյանքին: Հիմնադրվեցին վանքեր ու դպրոցներ, և նրանց կից՝ համալսարաններ, լավագույն ձևով կազմակերպելով ժողովրդի մշակութային կյանքն ու լուսավորության գործը: Այս դարաշրջանը հայոց պատմության մեջ, իրավամբ, հռչակվեց որպես Վանքերի ոսկեդար: Վերաշինվեցին և վերակազմավորվեցին հին վանքերը, կառուցվեցին նորերը: Տասներորդ դարի նորակառույց վանքերից ամենանշանավորներն էին Կամրջաձորի, Հոռոմոսի, Սանահնի, Հաղբատի, Շիրակի դպրավանքի, Վարագա, Մարմաշենի, Աղթամարի, Տաթևի, Սևանի, Ցախաց քարի, Արգինայի, Խլաձորի, Նարեկի և նմանաբնույթ ուրիշ եկեղեցական կենտրոնները: Բոլոր այս վանական հաստատությունները, որոնք կազմակերպվել էին, ըստ սուրբ կանոնների և Սուրբ Մեծն Բարսեղ Կեսարացու կողմից հաստատված միաբանական օրենքների, աստիճանաբար լցվեցին հարյուրավոր վանականներով, իսկ որոշ մենաստաններում, ինչպես օրինակ՝ Սանահինում, Տաթևում և Հաղբատում, հոգևոր եղբայրների թիվը հասավ չորսից հինգ հարյուրի: Եկեղեցական առավել աչքի ընկնող դեմքերից, վարդապետներից, մատենագիրներից ու աստվածաբաններից, զանազան դպրոցների հիմնադիրներից կամ նշանավոր մանկավարժներից հիշատակության արժանի են՝ Անանիա Նարեկացին, Խոսրով Անձևացին, Հովհաննես Հոռոմոսցին, Սիմեոն Հաղբատեցին, Դավիթ Մոկացին, Ստեփաննոս վարդապետ Ասողիկը, Հովհաննես Սևանցին, Պողոս Տարոնացին, Ստեփաննոս Տայեցին, Ուխտանես պատմիչը և ուրիշներ:

Սակայն այդ դարաշրջանի կեդրոնական դեմքը, որն անմահացավ ու սրբացավ, անկասկած, եղել և մնում է Նարեկա վանքի դպրոցի աշակերտ, բարեպաշտ ու համեստ Գրիգորը, որը Խոսրով Անձևացի եպիսկոպոսի որդին էր:

Վարդապետների և մանկավարժների այս համաստեղությունը թարմացրեց արևելյան քրիստոնեության ամենամաքուր ավանդույթները: Նրանք սնունդ էին առել Սուրբ Գրքի և Եկեղեցու Սուրբ Հայրերի գիտության լուսավոր աղբյուրներից՝ սկսած առաջին իսկ չորս դարերից, օգտագործելով միաժամանակ անտիկ փիլիսոփայության, հատկապես նոր Պլատոնական մետաֆիզիկայի գաղափարը՝ ամրացնելու և հիմնավորելու համար քրիստոնեական Եկեղեցու վարդապետությունը: Այդ ժամանակաշրջանում հայերեն թարգմանվեցին հայրախոսական գրականության շատ գլուխգործոցներ, ինչպես օրինակ՝ Հովհաննես Ոսկեբերանի, Գրիգոր Աստվածաբանի կամ Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Սեբերիանոսի, Եվսեբիոս Կեսարացու, Էպիփան Կիպրացու, Դիոնիսիոս Թրակացու, Հիպոլիտոսի և այլոց ստեղծագործությունները:

Հոգևոր այս վերածննդին, անշուշտ, օժանդակեց տվյալ ժամանակներում խիստ տարածված նաև այն մտայնությունը, ըստ որի հազար թվականին վրա էր հասնելու աշխարհի վերջը, և ողջերն ու մեռածները պիտի կանգնեին աստվածային ահեղ դատաստանի առջև: Եվ վերջապես՝ ուղղափառ Եկեղեցու հետևողական պայքարն ընդդեմ հերձվածողների ու աղանդավորական շարժումների, ի վերջո, հանգեցրեց այն բանին, որ Հայ Եկեղեցին դարձավ էլ ավելի հզոր ու կազմակերպված: Տասներորդ դարի վանքերն իրավացիորեն հավատքի, հանրային կրթության, մտավոր գործունեության ու արվեստների կեդրոններ էին: Նրանց կից գործում էին կրթական հաստատություններ ու տնայնագործական արհեստանոցներ, նրանց հովանու տակ ստեղծագործում էին աստվածաբաններ ու փիլիսոփաներ, բանաստեղծներ ու պատմագիրներ, գրիչներ ու գեղագիրներ, նկարիչներ ու ծաղկողներ, քանդակագործներ:

Ահա՛ այսպիսի վանքերից, այն էլ ո՛չ այնքան նշանավորներից մեկում՝ Նարեկա վանքում, ապրել և 1003 թվականին մահացել է անմահ բանաստեղծությունների հեղինակ, վանական Գրիգորը: Այս վանքը գտնվում է Վանա լճից ոչ հեռու ընկած Ռշտունյաց գավառում՝ Արծրունիների թագավորության տարածքում: Վանքը վերաշինվել ու վերստին գործել է 953 թվականից ժամանակի եկեղեցական նշանավոր դեմքերից մեկի՝ վանահայր և հոգևոր դպրոցի հիմնադիր, անխոնջ մատենագիր ու հոգևոր գործիչ Անա-

նիա վարդապետի կողմից: Ժամանակակիցներից մեկը՝ Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկը, խոսելով Նարեկա վանքի միաբանության մասին, վկայում է, որ այն աչքի էր ընկնում «բազմամարդ պաշտօնապայծառ երգեցողովք եւ գրական գիտողօք»: «Յայսմավուրքն» էլ Գրիգորի մասին ասում է, որ «Սնեալ և վարժեալ սրբութեամբ և իմաստութեամբ առ ոտս Անանիա վարդապետի, առաջնորդի Նարեկայ վանից ի Ռշտունիս»:

Իսկ Գրիգորն իր մասին խոսելիս հետևյալն է ասում. «Ես Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրտսեր բանահիւսաց, որդի դստեր եղբօր հօր Անանիայի հոգեզարդ եւ մտավարժ փիլիսոփայի, և ըստ վարուց մաքրութեան կրօնից գովելոյ և հռչակելոյ»: Խոսրով Անձևացին, մատենագիր և լուսավորյալ մի մարդ, կնոջ մահից հետո իր երկու որդիներին՝ Գրիգորին և Հովհաննեսին, հանձնեց Նարեկա վանքի վանահայր Անանիա վարդապետին, որը, ինչպես արդեն տեսանք, նրա ազգականն էր, իսկ ինքը հոգևոր սքեմ հագնելով՝ շուտով ձեռնադրվեց Անձևաց գավառի եպիսկոպոս:

Խոսրով Անձևացի եպիսկոպոսից մեզ է հասել երկու արժեքավոր աշխատություն. դրանք են՝ «Մեկնութիւն Խորհրդոյ Սրբոյ պատարագին» և «Մեկնութիւն ժամակարգութեան»: Այս վերջին գործում մեկնաբանված են հայոց եկեղեցական աղոթքները, մաղթանքներն ու քարոզները և դրանց արարողակարգը:

Այսպիսով՝ Հովհաննեսն ու Գրիգորը դեռ երիտասարդ տարիներից ընկնում են վանական կյանքի հորձանուտ՝ երկուսն էլ աստիճանաբար դառնալով Անանիայի ամենաարժանավոր աշակերտները: Հովհաննեսին, որը պայծառ միտք և կազմակերպչական ակնառու կարողություններ ուներ, հաջողվեց շուտով աչքի ընկնող դիրք գրավել Նարեկա վանքի վանականների շարքում, և Անանիայի մահվանից հետո՝ մոտ 978 թվականին, դարձավ հիշյալ վանքի վանահայրը և վանական դպրոցի վերակացուն: Իսկ բացառիկ ընդունակությունների տեր Գրիգորը հանդարտաբարո ոգևորությամբ ապրեց իր հայեցողական ու մեկուսացված, ներքուստ լարված կյանքով: Նրա ամենօրյա հոգևոր

սնունդը Սուրբ Գիրքն էր, մտածումների առարկան՝ իր ներքին հոգեկան աշխարհը և շրջապատող բնությունը: Երկնային հոր հավերժական պատկերի արտացոլանքը նա գտնում էր իրեն շրջապատող հենց այդ բնության մեջ:

Արտաքինից Գրիգորի կյանքը, թվում է, աչքի չէր ընկնում նշանակալից դեպքերով, շեշտակի վերելքներով ու վայրէջքներով: Նա իր խցում ապրեց գրեթե մեն-մենակ, իսկական ճգնավորական կյանքով՝ օրն անցկացնելով պահքի ու ջերմեռանդ աղոթքների մեջ: Աղոթեց, խորհրդածեց, ընթերցեց, գրեց և ուրիշներին էլ սովորեցրեց Աստվածային Բանը: Իր եղբոր հետ միաժամանակ Գրիգորը Նարեկի դպրոցի միանգամայն արժանավոր վարդապետներից էր: Այսօր ապացուցված է, որ Գրիգորը մանկուց սովորել էր հունարեն և վանական աշխարհում այդ լեզվով գրված հանրաճանաչ ստեղծագործությունների եռանդուն ուսումնասիրող էր:

Միակ դեպքը, որը մի կարճ ժամանակ պղտորեց Աստուծո սպասավորությանը նվիրված Գրիգոր Նարեկացու կյանքը, նրա նկատմամբ հարուցված անհիմն մեղադրանք էր, թե, իբր, նա թոնդրակեցիների աղանդի համակիրներից է: Ինչպես հայտնի է, 9-10-րդ դարերում Սմբատ Զարեհավանցու առաջնորդությամբ Հայաստանում ծայր առավ մի նշանավոր շարժում, որն սկզբներում, ինչպես կարելի է առկա վկայություններից մակաբերել, հերետիկոսական բովանդակություն չուներ: Այն, ավելի շուտ, բողոքի և ընդվզման նպատակներ էր հետապնդում և գերազանցապես ուղղված էր աշխարհիկ ու հոգևոր վերնախավի դեմ՝ ընդդեմ բռնապետական իշխանությունների ու իշխանապետությունների, ընդդեմ ֆեոդալական շահագործման ու եպիսկոպոսների, որոնցից շատերը շռայլ, երկրային իշխանավորների կյանքով էին ապրում: Իրականում համաժողովրդական բնույթի աննախադեպ մի շարժում էր այդ, որի առաջացման համար խթան էին հանդիսացել սոցիալական անհավասարության խնդիրները, շարժում, որի նպատակն էր թոթափել իրենց վրայից կամ, գոնե, թեթևացնել

ազնվականության՝ անտանելի դարձած շահագործումը, որը ջանում էին սրբացնել Եկեղեցու որոշ սպասավորներ: Հնազանդ քահանաներն ու վանականները ընթանում էին գյուղացիական այդ շարժման առաջին շարքերում՝ փայփայելով այն ունայն հույսը, թե դա ընդամենը կրոնական–եկեղեցական շարժում էր: Թոնդրակեցիները պահանջում էին վերադառնալ վաղնջական դարերի պարզ ու բարեպաշտական քրիստոնեությանը: Սակայն ավելի ուշ, բնականաբար, հանդիպելով Եկեղեցու ղեկավարության և, մանավանդ, հայազգի իշխանների կազմակերպած հետևողական դիմադրությանը և հալածանքներին, Թոնդրակեցիների շարժումը աստիճանաբար սահեց դեպի դոգմատիզմ, դեպի անճիշտ ուսմունքներ՝ հեռանալով, այսպիսով, Հայոց Առաքելական Եկեղեցու ավանդական շավղից ու դավանաբանական ճիշտ ուղուց:

Այս շարժման նկատմամբ Հայ Եկեղեցու ներկայացուցիչները տարբեր տեսակետներ ունեին: Այն ժամանակ, երբ մեր Եկեղեցու պաշտոնական ղեկավարությունը, հովանավորված լինելով երկրի թագավորի և ազնվականության կողմից, անցավ բացարձակ պայքարի, հետապնդումների ու հալածանքների, ուրիշները կարծում էին, որ խիստ միջոցները շատ էլ ճիշտ չեն, և քարոզում էին մի այլ՝ հաշտվողական, իրար հետ փոխհամաձայնության գալու խելացի քաղաքականություն՝ անգամ համաձայն լինելով բավարարել շարժման մասնակիցների սոցիալ–տնտեսական բնույթի որոշ պահանջներ: Այսպես՝ Խոսրով Անձևացին՝ Գրիգոր Նարեկացու հայրը, Նարեկա վանքի վանահայր Անանիայի նման պաշտպանում էր այս վերջին տեսակետը: Եվ միանգամայն հնարավոր է, որ Գրիգորը ևս այս հաշտվողական դիրքը գրավողներից լիներ, քանի որ նա իր գրվածքներում բազում անգամ կարեկցում է մեղկ զվարճությունների և ցոփ կյանքի սիրահարներին ու մեղադրում բոլոր նրանց, ովքեր ձգտում են երկրային բարիքների կամ հարստությունների կուտակման: Եվ նրա այս դիրքորոշումը ամբողջապես հասկանալի կը դառնա, եթե չմոռանանք, որ իբրև ջերմեռանդ քրիստոնյա՝ նա արդեն հանգամանորեն ուսումնասիրել էր Սուրբ Գիրքը և շարադրել իր այն աշխատությունները, որոնցում դրվատվում էին Եկեղեցու Սուրբ Հայրերի մեծահոգության մասին աստվածային պատգամները:

Մյուս կողմից, սակայն, իրենց երկասիրություններով և գործունեությամբ, ինչպես ինքը՝ Գրիգորը, այնպես էլ նրա հայրը և ուսուցիչը, ոչ մի քայլ չչեղվեցին Հայաստանյայց Եկեղեցու ուղղափառ հավատից: Դեռ ավելին, երբ Եկեղեցու բարձրագույն ղեկավարությունը կասկածի տակ առավ նրանց ուղղափառությունն ու օրինապահությունը, ապա վերջիններս պատասխան նամակներով կարողացան փայլուն ձևով հերքել իրենց վրա բարդված այս անհիմն մեղադրանքները և ապացուցել ճշմարիտ հավատին պատկանելը: Այդ գրությունները այսօր էլ պահպանում են իրենց վավերական արժեքը՝ թարմացնելով սերունդների հիշողությունը:

Վիպական զրույցները հավաստում են, որ, մեղադրված լինելով Սարգիս Սևանցի կաթողիկոսի օրոք, Գրիգորը կանչվել է Բագրատունիների թագավորության մայրաքաղաք Անի՝ եկեղեցական բարձրագույն ատյանում արդարանալու համար, ատյան, որի խնդիրն էր, հարցաքննել կասկածելիներին և կամ Եկեղեցու սրբազան կանոններից շեղումներ թույլ տվողներին: Ոչ մի վավերագիր, սակայն, չի պահպանվել, որն հաստատեր, թե Գրիգորը ներկայացել է այդ ատյանին: Հետևաբար՝ մեղադրե՞լ են նրան, թե ոչ, և ինչո՞ւմն է կայացել այդ մեղադրանքը, որոշակիորեն ոչինչ հայտնի չէ: Փաստ է, սակայն, որ նա շարունակել է մնալ Նարեկա հռչակավոր վանքում, ապրել է իր համեստ խցում՝ կրոնական անդորրի ու խաղաղության մեջ անցկացնելով իր օրերը, և այդ հանգիստը երբեք չի խանգարվել որևէ մեկի կամ որևէ երևույթի կողմից: Ավելին, շուտով Գրիգորին սկսում են էլ ավելի պատվել և գնահատել ոչ միայն Նարեկա վանքի միաբանները, այլ նաև մեր եկեղեցու պաշտոնական ղեկավարներն ու հայ թագավորները,

որոնք հաճախակի դիմում էին նրան՝ խնդրելով գրել կրոնական ներբողներ, հոգևոր տաղեր և զանազան սուրբ գրվածքների մեկնություններ: Այսպես օրինակ՝ 977 թվականին իշխան Գուրգեն Արծրունին խնդրել է Գրիգորին, որ նա գրի Երգ Երգոցի մեկնությունը: Եվ քսանվեցամյա երիտասարդ վանականը փայլուն կերպով կատարում է այդ դժվարին հանձնարարությունը՝ գրելով մեկնողական բնույթի մի աշխատություն, որն այսօր էլ իր տեսակի մեջ լավագույններից է: Սա առաջին, կարևոր ստեղծագործությունն է, որից երևում է, որ Գրիգորը հիմնավորապես ծանոթ էր Սուրբ Գրքին և օժտված էր լավ գրողի ու բանաստեղծի անուրանալի կարողություններով:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Գրիգոր Նարեկացու՝ առ այսօր հայտնի ստեղծագործությունները, ըստ ժամանակագրական կարգի, հետևյալներն են.

1. Գանձեր.
2. Տաղեր ու մեղեդիներ (թվով ավելի քան 20 անուն).
3. Թուղթ ընդդեմ թոնդրակեցիների.
4. Մեկնություն Երգոց Երգոյն.
5. Պատմություն Ապարանից Խաչի.
6. Ներբող Սուրբ Խաչի և ներբող Սուրբ Աստվածածնի՝ գրված 989 թվականին, Մոկաց Ստեփաննոս եպիսկոպոսի խնդրանքով:
7. Ներբող Առաքելոց.
8. Ներբող Սուրբ Յակոբա Մծբնա հայրապետի:
9. Եվ, վերջապես, Նարեկացու կարևորագույն ստեղծագործությունը՝ հռչակավոր «Մատեան Ողբերգութեան» պոեմը, որը գրվել է հեղինակի կյանքի վերջին տարիներին:

Շնորհիվ այս վերջին ստեղծագործության Գրիգոր Նարեկացին հռչակվեց որպես հայ ժողովրդի ամենամեծ բանաստեղծը:

«Մատեան Ողբերգութեան» պոեմը հեղինակն սկսել է գրել, ամենայն հավանականությամբ, Փրկչական 1001 թվականից և ավարտել 1003 թվականին: Ավարտման այս տարեթիվը, ի տարբերություն պոեմն սկսելու թվականի, միանգամայն ստույգ է, քանի որ այդ հաստատում է հենց ինքը՝ Գրիգոր Նարեկացին: Մատյանին կցված հիշատակարում նա տեղեկացնում է, որ իր գլուխգործոցն ավարտել է «... յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալստեան ... մեծ կայսերն Հոռոմոց Բասլի»: Արդ՝ ստույգ հայտնի է, որ «Հոռոմոց Բասիլ» կամ բյուզանդական Վասիլ Երկրորդ կայսրը պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերը, ավելի ճիշտ՝ Տայք է ժամանել 1000 թվականին՝ այդ աշխարհը Բյուզանդական կայսրությանը միացնելու համար. ի դեպ, այդտեղ էլ՝ Վաղարշակերտում, նրան մեծ շուքով դիմավորել են հայոց թագավորն ու իշխանները՝ Գագիկ Բագրատունին, Գուրգեն ու Սենեքերիմ Արծրունիները, Տիրոջ պայծառակերպության օրը: Եվ քանի որ Նարեկացին իր պոեմն ավարտել է Վասիլ Երկրորդի՝ Հայաստան գալուց երեք տարի հետո, ապա նման եզրակացությունը որոշակի է:

Այս ստեղծագործությունը մի Աղոթամատյան է՝ բաղկացած իննսունհինգ գլուխներից, իսկ յուրաքանչյուր գլուխ կամ Բան իր մեջ ընդգրկում է երեքից չորս, երբեմն էլ հինգից վեց մաս: Այն գրված է ազատ ոտանավորով, զգացվում է արաբական բանաստեղծության և հայրենների տաղաչափության ազդեցությունը: Եվ, իհարկե, ժամանակի հռետորական ոճն էլ չի բացակայում: Նարեկի բանաստեղծական կառույցն, անկասկած, ունի իր ինքնատիպ, նախորդներից և ոչ մեկին չկրկնող ձևը, որով այն միջին

դիրք է գրավում հանգավոր արձակի և կշռույթավոր բանաստեղծության միջև տաղաչափական տարբեր ձևերի համաչափ օգտագործումով: Հեղինակի վարպետությունը, սակայն, երբեմն հասնում է արվեստի և երևակայության բարձրակետին, և դա՝ շնորհիվ լեզվի ներքին ռիթմի, որն ամբողջ ստեղծագործությանը տալիս է միանգամայն ուրույն և առանձնահատուկ երաժշտական երանգավորում՝ ստեղծելով հանդիսավոր մթնոլորտ և ծանր, երբեմն խորհրդապաշտության հասնող հանդիսավորություն: Ընթերցողը գերվում է այդ ռիթմով, շեշտերի տպավորիչ հաջորդականությամբ, որոնք հրաշագործ ձևին, երբեմն, ինչ-որ հուզական երանգ են հաղորդում:

«Մատեան Ողբերգութեան» պոեմից ռումիներեն լեզվով ստորև ներկայացվող հատվածներն*, անկասկած, միայն փոքր չափով կարող են պատկերացում տալ հասարակական այն մթնոլորտի, գրական կոլորիտի, բանաստեղծական ռիթմի և ներքին այն բացառիկ ուժգնության մասին, որն այս ստեղծագործությունը դարձնում է մի անգերազանցելի գլուխգործոց: Բայց մինչ այդ մի քանի խոսք պոեմի բովանդակության մասին:

Ինչպիսին էլ լինի ժամանակակից մարդու կարծիքը միստիկ կրոնի՝ որպես զգացմունքի ձևերից մեկի գոյության մասին, մենք անվիճելիորեն պետք է ընդունենք, որ այն եղել ու մնում է մարդկային հոգու իսկական դրսևորումներից մեկը: Իսկ կրոնական զգացմունքի գոյության արտահայտման ձևերից ամենաբնորոշն, անկասկած, աղոթքն է: Աղոթքը մարդուս ներքին, անձնական անհրաժեշտ պահանջմունքն է: Նա սկիզբ է առնում արցունքներից կամ հոգեկան հրճվանքից, մեղքի կամ որևէ սպասելիքի նկատմամբ հույս ունենալու գիտակցությունից, տառապանքից կամ սիրուց: Նման դեպքերում, երբ աղոթքի պահանջն հատկապես առաջ է գալիս մարդկային սրտի իսկական և անկեղծ ապրումներից, այն սավառնում է դեպի անծայրածիր անսահմանություն և այնտեղ՝ հեռուներում, տիեզերական անդրաշխարհի անհունության մեջ հանդիպում է մի Սրտի, որը սիրում է մեզ, և ապա ետ վերադառնում ու նորից իջնում մեր հոգու մեջ՝ մխիթարական օրհնություն բերելով մեզ համար: Ո՛չ մի մոլեգին քամի չի կարող ցրել և ո՛չ մի ահեղ ալիք չի կարող խեղդել անկեղծ աղոթքի անմահ ոգին:

Գրիգոր Նարեկացին մարդ էր, որն աղոթում էր: Եվ նա աղոթեց այնպես, ինչպես իր ազգակիցներից և ո՛չ մեկը: Նա աղոթեց իր մեղքերի թողության և հոգու փրկության համար: Գրիգոր Նարեկացու աղոթքը նախ և առաջ վշտահար, զղջացող մարդու ներքին տրտունջն է, իր բոլոր թերությունների, մեծ ու փոքր մեղքերի անկեղծ խոստովանությունը, ապա նաև ցավագին ճիչը օգնություն աղերսող հուսահատ մարդու, որն այսուհանդերձ դեռ հույս ունի թողություն ստանալու, վերջապես՝ գովեստի, շնորհակալության խոսք և Աստուծո անպարփակելի մեծության փառաբանություն:

Գրիգորի հոգին հաշտ է երկնքի հետ. և նա ողջ ուժով ու եռանդով, իրեն ներքնապես այրող բուռն կրքով, որոնում է Աստծուն: Բայց ինչպե՞ս պետք է նա բարձրանար մինչև համայն երկնքի և երկրի Արարիչը, մերձենար նրան, որը հավերժ ճշմարիտն է և բարին, մերձենալ նրան, որը մեծազոր, ամենաիմաստուն Տերն է և միակ արդար դատավորը: Նա՝ մեղքերից կազմված մի մարդ, կերտված նուրբ, փխրուն նյութից, ընդամենը լոկ մի ոչնչություն, որ ենթակա է հողեղեն մարդու գործած բոլոր սխալներին և որն իր մեջ զգում է իր նման բյուրավորների գործած մեղքերը և խորապես տառապում դրա համար, ինչպե՞ս պիտի հանդգներ նայել Աստուծո երեսին:

* Այդ հատվածները, որոնց թարգմանիչը նույնպես Վեհափառ Հայրապետն է, քաղված են «Մատյան ողբերգության» պոեմի վեց գլուխներից: Դրանց հայերեն բնագրերը տե՛ս Բան Գգ, ԺԲդ, ԽԱա, ՇԵգ, ՀԱբ և ՁԱա: Նարեկացու պոեմից Վեհափառ Հայրապետի՝ ռումիներեն թարգմանած մեծ ու փոքր հատվածների թիվն այսպիսով հասնում է տասներկուսի՝ վեցը մեջ բերված սույն աշխատության բնագրում, իսկ մյուս վեցը՝ վերջում, որպես հավելված: **Խմբ.**:

Գրիգոր Նարեկացու աղոթքներից, գուցե, ամենաթեւավորները, մարդկային և քրիստոնեական առումով ամենախորիմաստները նրանք են, որոնց մեջ նա նկարագրում է իր երկրային թերությունները և ողբում իր մեղքերը: Դրանք հուզիչ են ու դրամատիկ, վերարտադրում են հոգեկան գալարումից առաջացած ճիչերն այն մարդու, որին հարվածել է «մեղքի թուրը»: Դաժան և անողոք անկեղծությամբ նա մերկացնում է իր մարմինն ու հոգին համայն մարդկության առջև և անգթորեն ու անընդմեջ դանակոծում իրեն զղջումի կրակե խարազանով, այն հույսով, որ վերջ ի վերջո Աստուծո գութը կ'իջնի նաև իր վրա, կ'անէանան մեղքերը, և ինքն, այսպիսով մաքրված, թողություն ստացած, կը կարողանա անսայթաք դիմել դեպի անմեղություն՝ արժանի լինելու Աստուծո սիրույն և միանալու նրա հետ:

Ահա՛ մի հատված ԿԶ գլխից:

Տէր գթութեանց, աղբիւր ողորմութեանց, պարգեւք բարութեանց,
Որդի բարձրելոյ, տէր Յիսուս Քրիստոս.
Ողորմեա՛, խնայեա՛, մարդասիրեա՛,
Նայեա՛ ի վտանգս, ակնարկեա՛ ի բեկութիւնս,
Խոնարհեա՛ց ի թշուառութիւնս,
Տե՛ս ի տարակոյս անձեռնհաս տագնապիս,
Հասի՛ր հաղորդել կորստականս կարեաց:
Շաւշափեա՛ բժշկապէս զամենաթշուառ ախտաւորութիւնս,
Ո՛ւնկն մատուցեա քաղցրութեամբ ողորմագին հեծութեանս,
Լո՛ւր ի խորոցն անդնդոց մահուն գերեզմանի՝ անմոնչելի հառաչմանս,
Մտցէ՛ յականջս ամենալուր լսելեացդ
Զայն պաղատանաց վատնեալ անդամոցս:

Հիրավի, Գրիգոր Նարեկացու ստեղծագործության գերակշիռ մասը ամենուրեք և բոլոր ժամանակներում եղած մարդկային թերությունների և անկատարելությունների մի վիթխարի համապատկեր է: Ինքնադիտողական ներըմբռնման հուժկու ուժով, որը կը զարմացներ նույնիսկ մեր ժամանակների հոգեբանին, նա բացում–քանդում է մարդկային մտքի և զգացմունքների բոլոր ծալքերը, հոգու բոլոր աստիճաններով իջնում է նրանց խորքերը, թափանցում մինչև նրա՝ ամենաթաքնված ու ամենախոր շերտերը, մերկացնում մարդկային բոլոր կրքերի, պոռթկումների, ցանկությունների և հույսերի համախումբը՝ նույնիսկ ամենախորհրդավորները: Նա համարձակորեն իջնում է մինչև մարդկային կույր զգացմունքների դժոխքի հատակը և թեւավորված վեր է բարձրանում մինչև անբիծ սրբության պարզ և մաքուր վիճակը: Երբեմն նրան համակում է անուղղելի վհատությունը, որը մռայլ հուսահատության հուժկու պոռթկումների պատճառ է դառնում, ինչպես օրինակ՝ հետևյալ հատվածում.

Եւ արդ, ո՞չ ապաքէն ըղձալի էր,
Ըստ Գրոյն կանխութեան նախաձայնելոյ,
Ո՛չ ստեղծանիլն երբէք յարգանդի.
Եւ ո՛չ նկարիլն յորովայնի,
Ո՛չ ի ծնունդ յառաջագայիլ
Եւ ո՛չ ի լոյս կենաց հասանիլ,
Ո՛չ ի թիւս մարդկան գրիլ
Եւ ո՛չ ի հասակ աճման ամբառնալ,
Ո՛չ ի պատկեր գեղոյ զարդարիլ
Եւ ո՛չ բանիւ հանդերձաւորիլ,
Քան ընդ այսպիսեաց սաստկագունից
Եւ սարսափելեաց ըմբռնիլ պարտուց,
Զոր եւ ոչ վիմաց կարծրութիւն բերէ,
Թո՛ղ թէ մարմնոց լուծականութիւն: (Դ, Բ):

Աստվածավախ Գրիգորի համար երկրային կյանքը ցավագին, սակայն հերոսական անցում է մի ափից մյուսը: Այս անցման ժամանակ մարդն ենթարկվում է երկրային ամեն կարգի փորձությունների, ցավերի ու մեղքերի և նման է փոթորկի կողմից բաց ծով քշված նավակի, որին, ի վերջո, սպառնում է փշուր–փշուր լինելու վտանգը: Եվ ինչպես նավաբեկվածը, այնպես էլ մարդն այդ պայքարում պարտվում է աստիճանաբար և կուլ գնում կյանքի ալիքների

հորձանուտում, որոնք կամաց-կամաց նրան խորասուզում են դեպի անհատակ անդունդ, պարուրում խավարով, որտեղից փրկվելու ոչ մի հույս այլևս չկա: Դա «Հոգու կործանման» հանրահայտ հատվածն է (Բան Իե), որտեղ հեղինակն իրապաշտ գույներով նկարագրում է նավաբեկությունը՝ առանց մոռանալու ամենաաննշան մանրամասները: Դա մի վիթխարի կտավ է, որն, ասես, երփնագրված լինի հատուկ պլաստիկ ոճով:

Հեղինակն ափսոսանք է հայտնում մարդկային կյանքի անագորույն պայմանների համար, ափսոսանք՝ այս աշխարհի դատարկության և ունայնության համար, ափսոսանք՝ մարդկային էությանը բնորոշ վատասրտության, բարեկամի եսասիրության և ուխտադրժության համար, խստաշունչ խոսքերով դատապարտում երեխաների անշնորհակալությունը, ճանապարհի ընկերոջ դավաճանությունը, իր ափսոսանքը հայտնում մարդկային հոգու հարափոխության և նեղսրտության համար: ԾԶ. գլխի Բ. հատվածում այս կապակցությամբ կարդում ենք.

Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախաւս,
Ակնս յայրատատես, ականջս վրիպալուր,
Ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ,
Ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ,
Հետք խոտորնակ, շունչ ծխախառն,
Գնացք խաւարային, գոյութիւն լերդի վիմական,
Խորհուրդք ծորեալ, կամք անկայուն,
Զար անփոփոխ, բարեմասնութիւն սասանեալ,
Անձն տարագիր, աւանդ վաճառեալ:

Սակայն փրկության հույսը կորած չէ, քանի որ մարդը, այդ թույլ արարածը, որ ծեծվել ու տառապել է այդքան փորձություններից և մեղքերից, այնուամենայնիվ իր ներքին էության մեջ կրում է նաև մի հատուկ խառնվածք, մի զգացմունք, մի գիտակցություն, որը նրան տրված է ի վերուստ: Մարդկային էակի համար խավարում, այնուամենայնիվ բոցկլտում է փրկության մի լույս: Այս առիթով Գրիգոր Նարեկացին ասում է:

Հեզութիւն՝ ի խստութեան, կատարելութիւն՝ ի թերութեան,
Խոնարհութիւն՝ յամբարհաւաճութեան, ճշմարտութիւն՝
ի ստութեան,
Միջամտութիւն՝ ի մանկութեան, անբծութիւն՝ յայլամտութեան,
Բարաւորութիւն՝ ի չարութեան, պարկեշտութիւն՝ ի լկտութեան,
Ողորմութիւն՝ յանգթութեան, ապաշաւանք՝ յանյուսութեան,
Քաղցրութիւն՝ ի բարկութեան, հաշտութիւն՝ ի թշնամութեան,
Անոխութիւն՝ ի խածանողութեան, քաջալերութիւն՝ ի լկութեան,
Աւրհնութիւն՝ ի նետաձգութեան: (ԼԱ, Գ):

Եթե կույր մտքերը և զգացմունքները մարդուն քարշ են տալիս երկրի վրա, նրա էության մեջ գոյություն ունի նաև մյուս ուժը, որը նրան խորհուրդ է տալիս մշտապես դեպի երկինք նայել. մի ուժ, որը հոգու մեջ հաշտության, փրկության և անմահության հույսն է սերմանում:

Մարդկային հոգու այս երկու ծայրահեղությունները Գրիգոր Նարեկացին ապրեց սրտահույզ, խոր և կլանող անմիջականությամբ: Մի կողմից նա քաջ գիտակցում էր իր գոյությունը՝ որպես մեղապարտ մարդու, իսկ մյուս կողմից՝ հասկանում, որ իր հոգին պատկանում է մի այլ անիմանալի ու աննկարագրելի այնր աշխարհի, որը հանդիսանում է վերջնական նպատակ և որտեղ նա հույս ուներ գտնելու հավերժական կյանքի լուսավոր ափը: Կործանվածի վհատությունը և հոգեկան կսկիծը քնարական երգի բոլոր լարերով վարպետորեն նվագելուց հետոս Գրիգոր Նարեկացին իր աղոթքն ուղղում է դեպի ներող և սիրող Աստված կամ դեպի Որդին, որը զոհաբերվեց մարդկանց համար, կամ էլ ծունկի է գալիս բոլոր մայրերից ամենավշտալի՝ Սուրբ Կույս Մարիամի առջև, այն Մարիամի, որը հավերժ ողորմած է և պատրաստ բարեխոսելու իր Որդու առաջ մեզ գթալու և մեր հոգիների փրկության համար:

Որքան էլ մեծ ու ահեղ լինի մեր մեղքերի ալիքը, այնուամենայնիվ, Աստուծո սերը մարդկանց հանդեպ պիտի հաղթանակի, որովհետև մեղքերի բոլոր ճանապարհներին կարելի է գտնել թողություն: Նրա աղոթքի խոսքերն արդյոք կբարձրանա՞ն մինչև երկնային Հոր Գահը: Սակայն Նարեկացու միտքն ու սիրտը հոգևոր թևեր ունեին: Նրա աղոթքն անցավ բոլոր սահմանները, և իր հոգու տաճարում մեծ Աղոթողն զգաց Աստուծո ներկայությունը. ներքին մի հայտնատեսություն էր դա, որի աղոտ լուսաբացի առջև հալվեցին նրա բոլոր զգացմունքները:

Մանաւանդ, զի դու լոյս ես եւ յոյս,
Եւ ես՝ խաւար եւ յիմար.
Դու՝ իսկութեամբ բարի, գովելի,
Եւ ես՝ համայնիւն չար, ապիկար.
Դու՝ տէր ստորիցս եւ երկնից,
Եւ ես՝ անիշխան շնչոյս եւ հոգւոյս.
Դու՝ բարձրեալ, ի կարեաց զատեալ,
Եւ ես՝ տաժանաւոր եւ վտանգաւոր.
Դու՝ ի վեր քան զկիրս երկրիս,
Եւ ես՝ կաւ անարգութեան, գարշութեան: (ՁԳ, Բ):

Արյունաթոր ու խոցոտված սրտով, սակայն թևավոր մտքով և լուսավոր զգացմունքներով՝ Գրիգոր Նարեկացին իր «Ողբերգութեան Մատեան»-ով հասավ բանաստեղծական արվեստի անհաղթահարելի բարձունքների: Իր ողջ էությամբ նա դարձավ մի կենարար ջահ, որը հավերժ բոցավառվեց և դեպի երկինք ուղղեց ջերմ աղոթքների խնկահոտը:

* * *

Սուրբ Գրիգոր Նարեկացու բանաստեղծական ստեղծագործությունը ներթափանցված է մարդկային խոր ու հզոր ապրումներով և սուրբ ու նուրբ զգացմունքներով: Նա մի

կենդանի միտք է, ոսկյա մի երազ, մի մաքուր ու ջերմ աղբյուր, որն առատորեն բխում է Բարձրյալին որոնող մի անկեղծ սրտից: Ինչպես յուրաքանչյուր իսկական բանաստեղծ, Գրիգոր Նարեկացին ևս ունի արվեստի նկատմամբ զգացմունքների արտակարգ շնորհ: Նա նկարիչ բանաստեղծ է. բառերով կարողանում է նկարել բազմերանգ պատկերներ՝ պլաստիկ ձևերով և, ասես, շարժման ընթացքում, որոնք խոր տպավորություն են թողնում մեզ վրա, կատարյալ ձևով և վարպետորեն ի կատար ածում գեղեցիկ զգացմունքի ճաշակումը: Հնարամտության և բանաստեղծական երևակայության նրա կարողությունը գրեթե սահման չունի: Գեղարվեստական պատկերները, փոխհարաբերությունները, համեմատությունները, հարկադրությունները, ոճերն ու ինքնատիպ դարձվածքները, բառակապակցությունները՝ հատկապես բնաձայնական բառերը, հոսում են հորդառատ և անընդմեջ, ինչպես գետի արծաթափայլ ջրերը, որոնք փրփրադեզ՝ գահավիժում են գարնանը, լեռների ամպածրար բարձունքներից:

Գրիգոր Նարեկացին մեծ լեզվաշինարար է: Հայոց դասական լեզուն՝ գրաբարը, թեպետև վերջնականապես ձևավորվել էր նրանից հինգ դար առաջ, սակայն Նարեկա վանքի վանականի կախարդական գրչի ներքո ստանում է նոր երանգ, նոր կյանք և ուժ՝ բազում նոր բառերով ու արտահայտություններով հարստացնելով մայրենին: Նարեկացու լեզվի ազդեցությունը կարելի է նշմարել ոչ միայն մեր Միջնադարի, այլ, նույնիսկ, ժամանակակից հայազգի բանաստեղծների ու արձակագիրների երկերում: Եվ վերջապես՝ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին հայ միջնադարի պայմաններում մեծ զարկ տվեց աշխարհիկ քնարերգության զարգացմանը, դրանով իսկ ինքն էլ դառնալով այդ նոր ուղղության նախակարապետը: Այսինքն՝ նա նախակարապետը հանդիսացավ գուսանների ու տաղերգուների այն անզուգական աստղաբույլի, որոնցով նշանավորվեց միջնադարյան հայ քնարերգության վերածնունդը: Մի շարք տաղերի ու ներբողյանների մեջ, որոնք հատկապես

ստեղծված են Սուրբ Կույսի և Վարդավառի (Պայծառակերպության) տոների պատվին, Նարեկացին ըստ էության գերազանցում է կրոնական բանաստեղծության համար նախորոշված բովանդակությունն ու ձևը և երգում–գովերգում բնությունը, ծաղիկները, մարմնական գեղեցկությունը՝ ի հայտ բերելով բանաստեղծական իր ազատ ներշնչումները, ներքին զգացմունքների բոլոր ելևէջները:

Բոլորովին անսպասելի է այդ մեծ, միստիկ բանաստեղծի, և ո՛չ սակավ դեպքում՝ մռայլամած Գրիգոր Նարեկացու մոտ հանդիպել այդպիսի անգերազանցելի զգացմունքների՝ լի արևով ու բարի ցանկություններով բնության նկատմամբ, և ուրախ տրամադրությամբ կյանքի նկատմամբ: Այստեղ է, որ որոշակիորեն զգացվում է հոգու վերածնունդը, հայոց բանաստեղծության իսկական կվադրիչենտոն, որը կարողացավ ստեղծել հայ գրականության, անգամ համաշխարհային չափանիշով՝ ամենագեղեցիկ և լուսավոր ստեղծագործություններից մեկը:

Հայ միջնադարյան բանաստեղծության լավագույն գիտակ Վալերի Բրյուսովը այս առիթով նշում է. «Հայկական ժողովրդական երգերի մեջ չկա սառն ծովից ու կապարանման երկնքից սնված սկանդինավյան երգերի խստաշնչությունը. նրանցից հառնում է հարավի շոգը և Արևելքի ճոխությունը: Հայկական երգերի մեջ չկա ռուսական երգերին այնքա՜ն հատկանշական թախիծն ու միամտությունը, որոնք հյուսվել են ռուս ժողովրդի մանկական տարիներին: Նրանց մեջ զգացվում է անառարկելի հասունացումը մի ժողովրդի, որը հենց օրորոցից նետվել է աշխարհի ամենաքաղաքակիրթ ազգերի միջավայր: Հայկական երգերի մեջ չկա և գռեհկությունը գերմանական երգերի, որոնք հաճախ վանում են իրենց ցինիկ անկեղծությամբ. նա մտքի նրբությունը և զգացողությունների նրբագեղությունը առել է իր արևելյան հարևաններից: Միաժամանակ և հայ երգին խորթ է արևելյան ժողովրդական երգերին հատկանշական չափազանցված զգայնությունը. արիական արյունը և հելլենական դպրոցը փրկարար սանձ են դրել արևելյան շվայտության վրա: Իր ամբողջ կրքոտությամբ հանդերձ՝ հայ երգը ողջախոհ է, ամբողջ կրակոտությամբ հանդերձ՝ արտահայտությունների մեջ զուսպ է: Սա մի պոեզիա է՝ արևելյան ձևով գունագեղ, արևմտյան ձևով իմաստուն»:

Գրիգոր Նարեկացին վախճանվեց 1003 թվականից ո՛չ ուշ և թաղվեց Նարեկա վանքում: 1021 թվականին քաղաքական դժբախտ հանգամանքների բերումով Ռշտունյաց գավառի հայերի մեծ մասը Սենեքերիմ Արծրունի թագավորի գլխավորությամբ գաղթեց դեպի Արևմտյան Հայաստան: Բայց ո՛չ ժողովուրդը և ո՛չ էլ Եկեղեցին չէին կարող բաժանվել իրենց Սրբի գերեզմանից: Եվ այն ժամանակ, Նարեկացու մասունքների մի մասը նրանք տարան իրենց հետ և Ակն կամ Էգին քաղաքի մոտերքում հիմնեցին երկրորդ Նարեկա վանքը՝ հար և նման նախորդին, որն ավելի ուշ ստացավ Արագ անունը: Այդ երկու կացարանները՝ թե՛ Նարեկացու գերեզմանը Ռշտունյաց գավառի Նարեկա վանքում և թե՛ նրա մասունքները Ակնի նորակառույց «Սուրբ Նարեկացի» վանքում, դարեր ի վեր ուխտագնացության վայրեր էին հավատացյալների համար:

Այսօր այլևս չկան ո՛չ այդ երկու վանքերը և ո՛չ էլ սուրբ գերեզմանները: Հարյուրավոր վանքերի և եկեղեցիների հետ միասին Արևմտյան Հայաստանի ամբողջ հայ ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ոչնչացվեց օսմանյան բարբարոսների կողմից: Սակայն Սուրբ Գրիգոր Նարեկացու հիշատակը և նրա պաշտամունքը ոչ միայն չկորան, այլև մեր ժողովրդի սրտի և հավատքի մեջ կենդանի մնացին: Իսկ նրա լուսաճառագ «Մատեան Ողբերգութեան»–ը, որպես կենդանի զոհ, հավերժ պիտի ապրի և սավառնի դեպի երկինք՝ մեր հոգիների զոհասեղանի վրայով:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ*

Հայտնի է, թե Անիի անկումեն հետո ԺԱ. և հաջորդ դարերու ընթացքին, հայերը գաղթեցին նաև դեպի Ղրիմ և անկե ալ դեպի Լեհաստան, ուր զորավոր գաղութներ հիմնեցին՝ կրոնական, մշակութային կեդրոն ունենալով Լվով (Լեմպերկ) քաղաքը:

ԺԳ. և ԺԴ. դարերուն մեծ թվով հայեր Լեհաստանեն դեպի հարավ, դեպի Թրանսիլվանիա և Մոլտավիա իջան ու այդ հյուրընկալ հողերուն վրա հաստատվեցան որպես առևտրականներ և արհեստավորներ:

Հայերու՝ Մոլտավիա և Պուքովինա[†] գալու թվականը ճշգրիտ հայտնի չէ, սակայն ռումեն երկու մեծ պատմաբաններ՝ Բ. Պ. Հաժդեու և Ն. Եորկա, կը հաստատեն, թե, համենայն դեպս, ԺԴ. դարու կեսին, այսինքն՝ ռումեն իշխանության հիմնադրության շրջանին, հայերու ներկայությունը Մոլտավիո մեջ ստույգ է[‡]: Ստույգ է նաև, թե ԺԵ. դարու սկզբին երեք հազար հայ ընտանիքներ ևս գաղթած

---

* Սույն պատմական տեսությունը գրված է 1948 թ. հունվարի սկզբներին: Տպագրվել է՝ «Էջմիածին», 1948, № 7-9, էջ 66-70: Ստորագրված է՝ **Վազգեն Ծ. վարդապետ Պալճյան**: Երկրորդ անգամ վերահրատարակվել է Սուրբ Էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 267-274, որից և արված է սույն հրատարակությունը:

† Պուքովինա կը կոչվի Մոլտավիո հյուսիսային շրջանը, որուն կեդրոնը գտնվող Սուչավա քաղաքը մինչև ԺԵ. դարու կեսը Մոլտավիո մայրաքաղաքը եղած է:

‡ **B. P. Hajdeu,** "Istoria talerantei religioase"; 1868, p. 62-64, **N. Iorga,** "Patru conforinte", p. 99. "Choses d'art arméniennes en Roumanie", 1935, p. 7.

են Մոլտավիա, և օրվան ռումեն իշխան Ալեքսանդրու չել Պուն 1401–ին հատուկ հրովարտակով հայ եպիսկոպոսութիւն հիմնած է Սուչավա քաղաքին մէջ: Մինչև 1401 թվականը Մոլտավիո հայ եկեղեցիները մաս կազմած են Լեհաստանի (Լվով) հայոց թեմին:

Հիշյալ հրովարտակը 1935–ին ռումեն գիտնական մը գտավ և հրատարակեց Պուքրեշի մէջ նույն տարին:

Ժե. դարուն հայ համայնքներ եղած են Մոլտավիո հետևյալ քաղաքներուն մէջ՝ Սուչավա, Հոտին, Պոթոշան, Տորոհոյ, Յաշ, Ռոման, Պաքրու, Ֆոքշան և Զեթաթյա–Ալպը:

Հարավային Ռումանիո հայ գաղութները, այսինքն՝ Վալաքիո և Տոպրուճայի մէջ, հաստատված են Ժէ. դարեն սկսյալ և, մանավանդ, ԺԹ. և Ի. դարերուն, երբ թրքահայ գաղթականներու մեծ խումբեր դեպի ռումեն երկիրը եկան:

Թրանսիլվանիո հայութիւնը, որ Մոլտավիո հայության հնութիւնը ունի և անցյալին մէջ ազգային–եկեղեցական բացառիկ առանձնաշնորհումներ վայելած է, դժբախտաբար, Մայր Եկեղեցիեն բաժնվելով Ժէ. դարու վերջերը ու միանալով Հռոմի Եկեղեցվույն՝ տակավ կորսնցուցած է իր ազգային նկարագիրը և ձուլված է տեղացիներու մէջ: Այսօր Թրանսիլվանիո մէջ հազիվ երեք–չորս հազար հայութիւն մը կա՝ բոլորովին հունգարացած և հեռու ամեն հայկական ապրումե:

Թրանսիլվանիո հայության կեդրոնները եղած են Կեռլա (Armenierstadt), Տումպրըվեն (Elisabetopol), Կեորկեն, Ֆռումուասա և այլն: Այս շրջաններու կաթոլիկ հայերը այսօր ալ թեմական կազմակերպութիւն մը ունին՝ առաջնորդանիստ քաղաքը Կեռլան ըլլալով:

Մոլտավիո մէջ, ուրեմն, հայ թեմը կազմակերպված է 1401–ին, առաջին առաջնորդը ըլլալով Հովհաննես անունը կրող Էջմիածնական հայ եպիսկոպոս մը: Առաջնորդական Աթոռը ժամանակ մը Սուչավայի մէջ մնալե վերջը փոխադրված է Յաշ, ուր հայր Ալիշան 1500 թվականին ուրիշ Հովհաննես եպիսկոպոս մը կը հիշե որպես առաջնորդ Մոլտավիո թեմին: Ժէ. դարուն առաջնորդական Աթոռը կրկին

Սուչավա կը փոխադրվի և կը հաստատվի Ս. Աքսենթ (Զամքա) հայոց վանքին մէջ: Այստեղ կը հիշվին Ղազարոս (1624) և Անդրեաս (1641) եպիսկոպոսները որպես առաջնորդ: Ավելի ուշ, առաջնորդական պաշտոն կը վարեն Անտոն Սերքոյենց (1651), Հովհաննես Քարիմարենց (Քերիմովիչ) և Սահակ (1669) եպիսկոպոսները: Ժէ. դարուն, Եղիա եպիսկոպոսի (1691) առաջնորդութենեն հետո, Մոլտավիո հայության թեմական կազմակերպության անկման շրջանը կը սկսի քաղաքական դեպքերու հետևանքով:

Հայտնի է միայն, թե 1790–ին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանց այցելու առաջնորդ եղած է Մոլտավիո հայ եկեղեցիներուն:

Թեև ԺԸ. և ԺԹ. դարերու ընթացքին թեմական կեդրոնական իշխանութիւնը դադրած է գոյութիւն ունենալե, սակայն Մոլտավիո, Վալախիո և Տոպրուճայի բոլոր հայ եկեղեցիները շեն ու պայծառ վիճակի մէջ եղած են, ու ամեն համայնք ունեցած է իր քահանան: Ավելին, այս շրջանին է, որ բազմաթիվ հայ եկեղեցիներ կը կառուցվին կամ կը վերաշինվին: Ամեն եկեղեցական համայնք վարչական ինքնավարությամբ կը կազմակերպե իր ներքին կրոնա–ազգային կյանքը՝ եկեղեցիներու և դպրոցներու պահպանությամբ: Պետք չէ մոռնալ, թե ԺԹ. դարուն Մոլտավիո մէջ գրեթե ամեն հայկական համայնք ուներ նաև հայկական վարժարան: Հայտնի եղած են այսպես Յաշի «Գարագաշ» վարժարանը, Ռոմանի «Սողոմոնյան» վարժարանը, Ֆոքշանի, Սուչավայի, Պոթոշանի, Թրկու–Օքնայի, Պուքրեշի և այլ դպրոցները, որոնց շենքերը այսօր ալ տակավին կը մնան:

1850–1860 թվականներու շրջանը ռումանահայոց տեսակ մը վերածնունդի շրջանը եղած է մշակութային ու ազգային իմաստով:

1812–ին Պեսարապիան բաժնվելով Մոլտավիայեն՝ կը միանա Ռուսիո. 1813–ին ռուսական կառավարութիւնը հայոց առաջնորդութիւն կը հաստատե Քիշինևի մէջ: Գրիգոր եպիսկոպոս Զաքարյանց՝ Պեսարապիո նոր թեմի առաջին առաջնորդը, կը հաջողի իր իշխանության ենթարկել

նաև Մոլտավիո հայ եկեղեցիները: Սակայն, այդ կապը կը խզվի Զաքարյանց եպիսկոպոսի վախճանումեն հետո, և ռումեն երկիրներու հայ եկեղեցիները կը շարունակեն մնալ առանց մնայուն առաջնորդի մինչև 1921 թվականը:

Ռումանահայ թեմը վերակազմելու փորձեր եղած են թե՛ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և թե՛, մանավանդ, Պոլսո պատրիարքարանի կողմե, սակայն բոլոր այդ փորձերը դրական հետևանք չեն ունեցած:

Այսպես, Պոլսո պատրիարքարանը 1839-ին Մոլտավիա և Վալախիա կը հղե Խաչատուր վարդապետը, 1843-ին՝ Գևորգ արքեպիսկոպոսը, 1880-ին՝ Խորեն արքեպիսկոպոս Նար-Պեյը, 1912-ին՝ Գնել եպիսկոպոս Գալեմքյարյանը, բայց առանց իր նպատակին հասնելու: Ոչ ոք կրցած է տեղական հայության հետ լեզու գտնել ու թեմը կազմակերպել: Ռումանահայերը այդ շրջանին սիստեմատիկ կերպով մերժած են որևէ առաջնորդ ունենալու, սակայն միշտ ու անկեղծորեն հավատարիմ մնացած են Հայաստանյայց Եկեղեցվո բարձրագույն իշխանության՝ կրոնա-դավանական և ազգային տեսակետե:

1918-ին՝ մեծ պատերազմեն հետո, Պեսարապիան Ռումեն երկրին կցվելով՝ Քիշինևի առաջնորդությունը փոխադրվեցավ մայրաքաղաք, այսինքն՝ Պուքրեշ, ու այսպեսով է, որ ռումանահայ թեմը կազմակերպվիլ սկսավ՝ իբր առաջնորդ ունենալով Էջմիածնա միաբան Հուսիկ ծայրագույն վարդապետ Զոհրապյանը (1921-են սկսյալ): Սկզբնական շրջանին, բավական լուրջ դժվարության բախվելե վերջ, որովհետև Մոլտավիո որոշ համայնքները, Ցաշը մասնավորաբար, չէին ուզեր առաջնորդի հեղինակության ենթարկվիլ. ռումանահայ թեմը կազմակերպվեցավ շնորհիվ թրքահայ գաղթականության ներկայության, որ իր թվով մեծամասնություն կը կազմեր թեմին մեջ: 1928-ին հրատարակված դավանության օրենքով Հայ Եկեղեցին («Հայ-Գրիգորյան Եկեղեցի» անունով) ռումեն պետության կողմե ճանչցվեցավ որպես ռումեն հողի վա ապրած ու զարգացած պատմական Եկեղեցիներեն մին, իսկ

1931 հուլիս 31-ին, փրոֆ. Եորկայի վարչապետության շրջանին, ռումեն խորհրդարանը հատուկ օրենք քվեարկեց Հայ Եկեղեցվո թեմի ճանաչման և կազմակերպության, որ հրատարակվեցավ թագավորական հրովարտակով, 30 օգոստոս 1931-ին:

Այս օրենքին հիման վրա թեմին առաջնորդը՝ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյան, ռումանահայ թեմի առաջնորդ անվանվեցավ 27 հոկտեմբեր 1931 թվակիր հրովարտակով:

Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրապյանի վախճանումեն ետքը (23 հոկտեմբեր 1942) առաջնորդական աթոռը թափուր մնաց մինչև 28 նոյեմբեր 1943, երբ առաջնորդական տեղապահ ընտրվեցավ Տ. Վազգեն վարդապետ Պալճյան և որպես այդպիսին վավերացվեցավ նույն տարվո դեկտեմբեր 21-ին, պետական որոշումով:

Ռումեն հասարակության կյանքին մեջ հայերը կարևոր դեր խաղացած են թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛, մանավանդ, մշակութային տեսակետե: Անոնց տնտեսական դերը մեծ եղած է ԺԴ.-ԺԵ. դարերու ընթացքին, երբ հայ վաճառականներու ընդարձակ գործունեությենեն մեծապես օգտված է նորաստեղծ մոլտավական իշխանությունը տնտեսապես ու քաղաքականապես: Իրոք, երբ Մոլտավիան ԺԴ. դարու կեսին հիմնվեցավ որպես ինքնուրույն իշխանապետություն, ան փոքրիկ երկիր մըն էր հյուսիսային լեռնային շրջանին մեջ: Ան տակավ մեծցավ ու տարածվեցավ դեպի հարավ ու դեպի արևելք, վաճառականական ճանապարհներու ուղղությամբ, ճանապարհներ, որոնք հայերը բացին:

Այսպես է, որ ԺԶ. դարու սկզբին մոլտավական տիրապետությունը հասավ մինչև Տնեսթր, մինչև Դանուբ և Սև ծով:

Հայերը իրենց ծոցեն տված են նաև բազմաթիվ քաղաքական գործիչներ:

Ռումեն պատմությունը հայ ծագումով նշանավոր իշխան մը կարձանագրե Իոն վոտը Արմյանուլ կամ Իոն վոտը չել Գումբլիթ (1572-1574) անունով, որ կը նշանակե Հով-

հաննես իշխան Ահարկու: Ան ռումեն պատմության մեջ հայրենասեր և ժողովրդանվեր մեծ իշխաններու կարգին դասված է, վասնզի թուրքերու դեմ կատաղի կռիվներ մղած է հանուն ռումեն ժողովրդի ազատության և հերոսի մահով մեռած է պատերազմի դաշտին վրա:

Մոլտավիո մեջ շատ հայեր ազնվական տիտղոսներ ստացած են ու նախարարական պաշտոններու հասած և ռումեն ազատագրական շարժումներու մեջ որոշ դեր կատարած, մանավանդ ԺԹ. դարուն:

Մշակութային գետնի վրա հայերը մեծ դեմքեր տված են ռումեն ժողովուրդին, մանավանդ ԺԹ. դարուն, որոնց մեջ նշանավոր են՝ Մանուկ պեյ Միրզայան, որպես հայտնի դիվանագետ, Վասիլե Գոնդա՝ ռումեն հայտնի փիլիսոփա և կրթական նախարար, Սբիրու Հարեթ՝ ռումեն դպրոցներու մեծագույն բարենորոգիչը և հիմնադիրը համագործակցության շարժման, Կարապետ Իպրայիլյանու՝ հռչակավոր գրական քննադատ և գրական շարժման հիմնադիր, Գրիգորե Պուիքլիու՝ 1856–1858-ի Մոլտավիո հայ վերածնունդի շարժման պարագլուխ:

Ի. դարուն ռումեն կյանքի մեջ հայտնի դեմքեր են. Գրիգոր Թրանքու-Ցաշ՝ նախարար և հիմնադիր աշխատանքի նախարարության, բանակի զորավարներ՝ Զատիկ, Շահիմ, Ալթընովիչ, հմուտ երաժշտագետ Էմանուել Զոմաք, մեծ դերասան պետական թատրոնի՝ Ցանքու Բեթրեսքու, գիտուններ՝ բժիշկ Պակտասար և բժիշկ Ցագուպովիչ, նկարիչ Պալթազար և այլն:

Կը կարծվի նաև, թե ռումեն մեծագույն բանաստեղծը՝ Միհաիլ Էմինեսքու, հայ ծագում ունի: Ան ծնած է Լեհաստանեն Պոթոշան գաղթած Էմինովիչ անունը կրող ծնողներե:

Հին ռումանահայ հայտնի ընտանիքներու անուններն են՝ Փրունքուլ, Գաբրի, Կոյլավ, Կայինա, Պուիքլիու, Գարագաշ, Թրանքու, Քրիստյա, Պոկտան, Ջերքեզ, Սողոմոնյան, Զոմաք, Զատիկ, Շահիմ, Գոժոքար, Փոփովիչ, Ցագուպովիչ, Մալխասովիչ, Մանուկևիչ, Հուտիկ, Ալաչ, Մելիք, Միսիր, Պուրտիա, Ֆերհատ, Պակտասար, Պալդազար, Իպրայիլյանու, Հաջիու, Մելիտոն, Ալթընովիչ, Սամսոնովիչ, Նավասարդ, Թոնգևիչ և այլն:

Այսօր, սակայն, այս և ասոնց նման հարյուրավոր հին հայ ընտանիքներու հետքերը միայն կան հոս ու հոն: Այս հին հայության վերջին երկու–երեք սերունդներու մեծագույն մասը բոլորովին ռումանացած է և մեզ համար կորսված: Անոնց թիվը, հավանաբար, տասնյակ հազարներու կը հասնի:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ

Մինչև 1940 թիվը ռումանահայ թեմը ուներ 23 եկեղեցական համայնք: Պեսարապիո՝ Սովետական Միության կցումով թեմեն բաժնվեցան Քիշինևի, Աքքերմանի (Զեթաթյա–Ալպը), Օրհեի, Պրլցի, Հընչեշտի և Իսմայիլի եկեղեցիները: Իսկ հարավային Տոպրուճայի՝ Բուլղարիո կցումով ռումանահայ թեմեն բաժնվեցան Սիլիստրեի և Պազարճըգի եկեղեցիները:

Այսօր Ռումանիո հայ թեմին մաս կը կազմեն հետևյալ 15 եկեղեցական համայնքները.

1. Պուքրեշի մեջ (Պուքարեստ) կը բնակին շուրջ 8000 հայեր: Հայ եկեղեցին՝ «Ս. Հրեշտակապետք Գաբրիել և Միքայել», վերակառուցված է 1910–1913-ին: Նույն տեղին վրա հին եկեղեցին կար, որ 1781-ին կառուցված էր:

Համայնքը ունի սեփական գերեզմանատուն, ուր կը գտնվի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» մատուռը՝ շինված և համայնքին նվիրված տիկին Մալվինե Մելիքի կողմե:

Պուքրեշի մեջ եկեղեցական համայնքն ունի նաև հետևյալ մշակութային–բարեսիրական հաստատությունները.

ա) Երկսեռ յոթնամյա վարժարան մը, ուր կ՚աշակերտեն 142 տղաներ և աղջիկներ:

բ) «Տուտյանի» անվան Հայ մշակույթի տունը՝ իր մատենադարանի և թանգարանի բաժիններով: Այստեղ, մեծ սրահին մեջ, տեղի կ'ունենան դասախոսություններ և հանդիսություններ: Մատենադարանը ունի մոտ 10000 հատոր հայերեն և օտար լեզուներով գրքեր, ձեռագրեր:

գ) Ծերանոց՝ «Աննա-Մելիքի» անվան հաստատության մեջ, հայ ծեր ու անպաշտպան կիներու համար:

դ) Բուժարան՝ «Գր. Տեշլիուի» անվան:

ե) Խնամատար մարմին մը, որ հայ աղքատներուն նպաստ կը բաժնե ամեն ամիս:

Այս բոլոր հաստատությունները իրենց հատուկ վարչությունները ունին՝ նշանակված Պուքրեշի եկեղեցվո Թաղական խորհուրդի կողմե և հաշվետու են անոր:

Պուքրեշի եկեղեցին ունի վեց կալվածք (շենքեր), որոնք վարձու տրված են:

Քահանաներ՝ Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյան, Տ. Մանուկ քահանա Յաղճյան, Տ. Մամբրե քահանա Պիպերյան: Գավառներ այցելող՝ Տ. Հարություն քահանա Հովսեփյան:

2. Գոնսթանցա. 1880-ին կառուցված «Ս. Աստվածածին» փայտաշեն եկեղեցին 1942-ին այրեցավ, և վարժարանի մեծ սրահը վերածվեցավ եկեղեցվո, ուր կանոնավոր կերպով տեղի կունենան բոլոր պաշտամունքները:

Հայոց թիվն է 1600:

Տեղվույն երկսեռ քառամյա վարժարանը 70 աշակերտ ունի:

Հայոց գերեզմանատունը կը գտնվի ընդհանուր գերեզմանատան մեջ՝ առանձին հողամասի վրա:

Կալվածքներու թիվն է 3 շենք:

Քահանաներ՝ Տ. Համազասպ ավագ քահանա Պետիկյան, Տ. Բաբկեն քահանա Քերովբեյան:

3. Կալացը շուրջ 200 հայ բնակչություն ունի, մեկ եկեղեցի՝ «Ս. Աստվածածին», 1858-ին կառուցված, և մեկ գերեզմանատուն: Կալվածներ՝ 7 շենք:

Կը հովվե Տ. Հովհաննես քահանա Գարիպյան:

4. Պրայիլա. 150 հայ բնակչությամբ: Եկեղեցին՝ «Ս. Աստվածածին», 1837-ին կառուցված է: Ունի նաև գերեզմանատուն: Կալվածներ՝ 3 շենք:

Կը հովվե Տ. Հովհաննես քահանա Գարիպյան:

5. Բիթեշթ. 48 հայ բնակչությամբ. եկեղեցի մը ունի՝ «Ս. Կարապետ», 1852-ին շինված, և 2 շենքեր՝ որպես կալված:

Պուքրեշեն կ'այցելե Տ. Հովսեփյան քահանան:

6. Պապատաղ. 31 հայեր կ'ապրին: Եկեղեցին՝ «Ս. Աստվածածին», կառուցված է 1897-ին: Կալվածներ՝ 2 շենք և 8 հեկտար վարելահող:

Գոնստանցայեն կ'այցելե Բաբկեն քահանա Քերովբեյան:

7. Թուլչայի մեջ կ'ապրին 80 հայեր: «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցին կառուցված է 1885-ին: Ունի երկու շենք որպես կալված:

Այցելու քահանա կ'երթա Պրայիլայեն:

8. Սուլինայի մեջ այժմ կը բնակին 1-2 հայ ընտանիք: «Ս. Աստվածածին» եկեղեցին 1857-ին շինված է:

9. Ֆոքշան. մոտ 180 հայ բնակչությամբ, երկու եկեղեցիներ ունի, մեկը՝ «Ս. Աստվածածին», 1870-ին կառուցված, երկրորդը՝ «Ս. Գևորգ», ԺԷ. դարուն կառուցված, որ այժմ կես-ավերակ վիճակի մեջ է: Սեփական գերեզմանատուն ունի մեկ մատուռով: Կալվածներ՝ 9 շենք:

Քահանա՝ Տ. Արսեն Վարժապետյան:

10. Թրկու-Օքնա. մոտ 80 հայ բնակչությամբ: Եկեղեցին՝ «Ս. Աստվածածին», 1852-ին շինված է: Գերեզմանատունը եկեղեցվո բակին մեջ է: Կալված չունի:

Տեղվույն հովիվն է Տ. Արտավազդ քահանա Սահակյան:

11. Ռոման. 72 հայ բնակչությամբ: Եկեղեցին՝ «Ս. Աստվածածին», 1609-ին կառուցված է: Հայոց գերեզմանատունը քաղաքի ընդհանուր գերեզմանատան մեջ կը գտնվի: Կալվածներ՝ 2 շենք և 8 խանութ՝ բնակարաններով: Շենքերեն մին եկեղեցվո բակին մեջ գտնվող նախկին հայ վարժարանի երկհարկանի մեծ շենքն է, որ այժմ զբաղեցված է ռումեն երկրորդական վարժարանի մը կողմե:

Տեղվույն հովիվն է Տ. Տաճատ քահանա Մելքոնյան:

12. Պաքրուի մեջ կը բնակին 90 հայեր: Եկեղեցին՝ «Ս. Հրեշտակապետք», 1848–ին կառուցված է: Ունի մասնավոր գերեզմանատուն: Կալվածներու թիվն է 5 շենք:

Այցելու հովիվ՝ Տ. Տաճատ քահանա Մելքոնյան:

13. Ցաշը այսօր ունի 52 հայ բնակիչ: «Ս. Աստվածածին» եկեղեցին 1395–ին կառուցված է. վերանորոգված է 1782–ին և 1929–ին: Ունի սեփական գերեզմանատուն՝ մեկ մատուռով: Կալվածներ՝ 16 շենք:

Այցելու հովիվ՝ Տ. Տաճատ քահանա Մելքոնյան:

14. Սուչավան այսօր հազիվ 100 հայ բնակիչ ունի իր շրջակայքի հետ միասին: Այստեղ կը գտնվին երկու եկեղեցիներ և երկու վանքեր: «Ս. Խաչ» եկեղեցին կառուցված է 1521–ին և վերանորոգված վերջին անգամ 1937–ին: Այժմ լավ վիճակի մեջ է: «Ս. Սիմեոն» եկեղեցին կառուցված է 1513–ին: Այժմ կիսավեր վիճակի մեջ է. «Ս. Աքսենթ» (Զամքա) վանքը 1551–ին կառուցված է Սուչավա քաղաքին ծայրը, շատ գեղեցիկ դիրքով: Այսօր գրեթե ավերակ վիճակի մեջ է: Ռումեն պետությունը պատմական հուշարձան հռչակած է զայն: «Ս. Աստվածածին» (Հաճկատար) վանքը կառուցված է 1512–ին, Տոնավագ անուն հայ վաճառականի մը կողմե, և մինչև այսօր մեծ համբավ ունի որպես ուխտատեղի: Բազմաթիվ անգամներ նորոգված է և այսօր բավական լավ վիճակի մեջ կը գտնվի:

Սուչավան ունի նաև հատուկ գերեզմանատուն մեկ մատուռով՝ Բրունքուլ ընտանիքի կողմե շինված: Կալվածներ՝ 51 հեկտար հող և 7 շենք:

Հովիվ՝ Տ. Գնել քահանա Մանտալյան:

15. Պոթոշան. 110 հայ բնակչությամբ՝ շրջակայքով միատեղ: Եկեղեցիներ՝ «Ս. Երրորդություն», կառուցված ԺԵ. դարուն և վերանորոգված 1795–ին, «Ս. Աստվածածին», կառուցված ԺԴ. դարուն:

Գերեզմանատան մեջ կա մեկ մատուռ՝ «Ավետման», 1884–ին կառուցված: Կալվածներ՝ երեք շենք:

Հովիվ՝ Տ. Մեսրոպ քահանա Պարոնյան:

Բացի այս 15 եկեղեցական համայնքներեն, հայեր կ՚ապրին նաև Բլոեշտ (120 հոգի), Գրայովա (50 հոգի), Ճուրճուվա (40 հոգի) և շուրջ 500 հոգի ալ զանազան քաղաքներու կամ գյուղերու մեջ ցրված:

Ռումանիո մեջ մեր Եկեղեցվո պատկանող ընդհանուր հայության թիվն է շուրջ 12000: Այս 12000 հայերու 90%–ը նոր հայերն են, այսինքն՝ 1896–են ասդին Թուրքիո կամ Թրքահայաստանի շրջաններեն եկածները: Կան նաև շատ քիչ թվով կովկասահայեր:

Ըստ իրենց թվի մեծության, կարելի է զանոնք դասավորել հետևյալ կերպով. ռոտոսթոցիներ, քեմախցիներ, պոլսեցիներ, երզնկացիներ, Պրուսայի շրջանեն, կեսարացիներ, պուլկարահայեր, վանեցիներ, մշեցիներ և այլն:

10 հունվար 1948 թ.
Պուքրեշ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՅՍՕՐ*

Բուլղար Ժողովրդական Հանրապետությունը Բալկանյան այն երկիրներեն մին է, որ 1944–ի սեպտեմբերին ազատագրված ըլլալով՝ շնորհիվ սովետական պատմական հաղթանակին, տասը տարիներե ի վեր ահա կը կառուցանե իր նոր կյանքը՝ ազգային անկախության, շինարարության ու խաղաղության պայմաններու մեջ, բուլղար աշխատասեր ժողովուրդի բոլոր հայրենասեր ուժերու եռանդուն, ստեղծագործ ու կարգապահ գործակցությամբ:

Նոր Բուլղարիո մեջ նոր կյանքի կոչված է նաև երկրին հայ ազգաբնակչությունը՝ շուրջ 21 000 հոգի, որ շնորհիվ 9 սեպտեմբերեն վերջ ստեղծված պայմաններուն, կարողացած է կազմակերպել իր հասարակական կյանքը թե՛ կրոնական, թե՛ ուսումնական, թե՛ մշակութային ու հայրենասիրական տեսակետե, ինչ որ մենք մեծ գոհունակությամբ և բուլղար ժողովրդական իշխանության հանդեպ խոր երախտագիտական զգացումներով հաստատեցինք բուլղարահայ թեմը այցելելու առթիվ, տարվույս սեպտեմբեր ամսուն:

---

* Հոդվածն արտացոլում է բուլղարահայ գաղութի վիճակը 1950-ական թթ. սկզբներին: Գրված և ուղարկված է Պուքրեշից, 1954-ին: Տպագրվել է՝ «Էջմիածին», 1954, № 12, էջ 50-55:

Երկրորդ անգամ վերահրատարակվել է Սուրբ Էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 275-285, որից և արված է սույն հրատարակությունը:

Այս պատվական հայ գաղութին կյանքի ներկա պատկերը տալե առաջ կ՝արժե ակնարկ մը նետել անոր պատմական անցյալին վրա, որ անգամ մը ևս ցույց կու տա մեր ժողովուրդի փոթորկահույզ ճակատագիրը անցնող դարերու ընթացքին: Թեև ցարդ ամբողջական և գիտական ուսումնասիրություն մը չէ հրատարակված ի մասին բուլղարահայության պատմության, սակայն մենք կարողացանք որոշ ստույգ տեղեկություններ ստանալ պլովդիվաբնակ հայ մտավորականե մը՝ պարոն Ներսես Գասպարյանե, որ ավելի քան քսան տարիներե ի վեր անխոնջ պրպտումներ կը կատարե այդ ուղղությամբ՝ օգտվելով հայ, բուլղար և օտար նոր ու հնագույն հեղինակներու գործերեն: Փափագելի է, որ պարոն Գասպարյան իր սկսած աշխատանքը իր լրումին հասցնե և, ըստ կարելվույն, ամբողջական ուսումնասիրության մը ձևին տակ հրատարակե իր հավաքած նյութերը, որով թանկագին ծառայություն մը մատուցած պիտի ըլլա հայ գաղութներու պատմագիտության կարևոր գործին:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Առաջին հայերը, որ ոտք դրած են Թրակիա և, հետևաբար, այժմյան Բուլղարիո հարավային կողմերը, եղած են զինվորական գունդեր, որոնք 5–րդ դարուն՝ Վարդանանց հերոսամարտեն հետո, 460–ական թվականներուն, հեռացած են իրենց հայրենիքեն՝ խույս տալու համար պարսկական հալածանքներեն:

Երկրորդ հոսանքը եկած է հաջորդ դարուն՝ Հուստինիանոս (527-565) և Մորիկ (582-602) կայսրերու օրով, որոնք հայ գաղթականություն բերած ու բնակեցուցած են բյուզանդական կայսրության հյուսիսային սահմաններուն մոտ երկու նպատակով. նախ՝ որպեսզի ցրվեն ու տկարացնեն հայոց հավաքական ուժը Արևմտյան Հայաստանի մեջ, որ այդ ժամանակաշրջանին բյուզանդական տիրապետության ներքև ինկած էր, և երկրորդ՝ որպեսզի ապահովեն իրենց կայսրության՝ Թրակիո շրջանի հյուսիսային սահմանները բարբարոս ցեղերու արշավանքներու դեմ: 601–ին, նույն Մորիկի հրամանով, 30.000 հայ զինվորներե կազմված բանակ մը Հայաստանեն Թրակիա կը բերվի՝ զինվորական պաշտպանողական գաղութներ հաստատելու նպատակով Դանուբի հարավային կողմերը:

Հայկական ուրիշ գաղթեր դեպի Թրակիա և Մակեդոնիա, գլխավոր կեդրոն ըլլալով Ֆիլիպե քաղաքը (այժմու Պլովդիվ), կը հիշատակվին 8–րդ դարուն՝ Կոնստանտին Ե. Կոպրոնիմոսի օրով՝ 760–ին, Լևոն Դ–ի օրով՝ 778–ին, ինչպես և Նիկեփոր Ա–ի (802–811) և Հովհաննես Զմշկիկի (969–976) իշխանության ժամանակ:

Հայ գաղթականության կարևոր հոսանք մը դեպի բուլղարաց երկիր կ՝ուղղվի 9–րդ դարուն, Բորիս իշխանի՝ քրիստոնեությունը ընդունելու շրջանին (864 թվականին): Հայաստանեն փախչող հայ պավլիկյաններն են անոնք, որ ապաստան կը գտնեն նոր կազմակերպվող բուլղար պետության սահմաններեն ներս և այնտեղ կը հաստատեն իրենց բնակությունը:

Ժամանակակից օտար պատմիչներ ու ճամբորդներ բազմաթիվ վկայություններ կը բերեն ի մասին հայոց ներկայության Բուլղարիո մեջ, վերև հիշված ժամանակաշրջաններուն: Կը հիշվին նաև հայ եկեղեցիներ ու վանքեր, հայ քահանաներ, վարդապետներ ու եպիսկոպոսներ, ինչ որ ցույց կու տա, թե հայերը այդ հնագույն ժամանակները ունեցած են կրոնական ազգային կազմակերպված կյանք՝ իբր կեդրոն ունենալով Ֆիլիպեն: Շուրջ 1000 թվականին այս հինավուրց քաղաքին որպես կուսակալ կը հիշատակվի հայազգի պատրիկ Թեոդորոփոնը, որուն ազդեցությունը կը տարածվեր նաև Ադրիանուպոլսո վրա: Իսկ իր օգնականը՝ նույնպես հայազգի Հովհաննես Պրոքսիմոս, հայերեն ավետարան մը գրել կու տա 1007–ին, որ այժմ կը գտնվի Վենետիկ, Մխիթարյան հայրերու ձեռագրատան մեջ:

Նույն դարուն պետք է հիշել Վրաստանեն եկած Գրիգոր Բակուրյան անվամբ հունադավան հայազգի իշխանավորը և իր եղբայրը՝ Աբբաս, որոնցմե առաջինը վանք մը կառուցած է 1084 թվականին Ֆիլիպեի մոտ (30 քիլոմետր հեռավորության վրա), այժմու համբավավոր Պաչկովոյի Պոկռոտիցա վանքը:

Հայ գաղթականության նոր հոսանք մը կը սկսի 14-15-րդ դարերուն՝ Ղրիմեն և Հյուսիս-դանուբյան երկիրներեն, ուր հոծ թիվով հայություն մը ապաստան գտեր էր Բագրատունյաց հարստության քայքայումեն վերջ, որ պատմության մեջ ծանոթ է Անիի գաղթականություն անունով: Առավելապես վաճառականներ են անոնք, որ իրենց առևտուրի իբր կեդրոն կ'ընտրեն Վառնան և Ռուսջուկը: Անիի այս գաղթականությունը հետզհետե իր առևտրի ցանցը տարածելով Ղրիմեն դեպի Պոլոնիա, դեպի Մոլտավիա, Թրանսիլվանիա և ապա՝ դեպի դանուբյան և հարավ-դանուբյան երկիրները, պատմական մեծ դեր մը ունեցավ հիշյալ բոլոր երկիրներու տնտեսական կյանքի զարգացման ու ծավալման մեջ, այսպեսով մեծապես սատարելով այդ երկիրներու կազմակերպման ու հզորացման: Հայտնի է, օրինակ, թե 13-րդ դարուն կազմված Մոլտավական փոքրիկ իշխանապետությունը հաջորդ երկու դարերուն հետզհետե զորացավ ու իր քաղաքական գերիշխանությունը տարածեց դեպի հարավ, մինչև Դանուբի բերանները, և դեպի արևելք՝ հայ վաճառականներու առևտուրի ճանապարհներու գծով:

15-19-րդ դարերու ընթացքին, Բալկանյան գրեթե ամբողջ թերակղզին օսմանյան տիրապետության տակ մնալով, Արևմտյան Հայաստանեն և Կոստանդնուպոլսեն հայ առևտրականներ ու արհեստավորներ եկած ու բնակություն հաստատած են Բուլղարիո զանազան քաղաքներուն մեջ, իբրև նույն կայսրության քաղաքացիներ:

Շնորհիվ ռուսական բանակներու 1877-ի հաղթանակին, Բուլղարիո անկախության հռչակումեն հետո, Թուրքիո 1896-ի կոտորածներեն փախչող բազմահազար հայեր եկած ու ապահով ապաստան գտած են Բուլղարիա և Ռումանիա: Այս նոր գաղթականությունը եկած է թարմացնելու հին բուլղարահայ գաղութը, որ դարերու ընթացքին ցրված և ձուլված էր բնիկ տարրին հետ:

Վերջապես, առաջին համաշխարհային պատերազմեն հետո, թրքահայ մեծ գաղթականությունը Բուլղարիա մուտք գործելով՝ նոր կյանքի կոչեց երկրին հայ ազգաբնակչությունը: Հետևյալ քանի մը վիճակագրական թիվերը հստակ կերպով ցույց կու տան հայերու վերոհիշյալ գաղթերը ի Բուլղարիա. 1982-ին կատարված պետական վիճակագրությունը Բուլղարիո մեջ կը նշե 6.643 հոգի, 1900-ին՝ 13.809 հոգի, 1926-ին՝ 27.322 հոգի, իսկ այժմ՝ շուրջ 21.000 հոգի, 1946-ին Բուլղարիայեն Խորհրդային Հայաստան ներգաղթած ըլլալով՝ 6.000 հոգի:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Բուլղարիո այժմյան հայությունը կ'ապրի հետևյալ 14 քաղաքներուն մեջ. Պլովդիվ (Ֆիլիպե)՝ 6.500 հոգի, Սոֆիա՝ 4.500 հոգի, Վառնա՝ 3.800 հոգի, Ռուսե (Ռուսջուկ)՝ 1.700 հոգի, Բուրկազ՝ 1.300 հոգի, Խասկովո՝ 900 հոգի, Կոլարովգրադ (Շումեն)՝ 750 հոգի, Սլիվեն՝ 530 հոգի, Թաթար-Բազարջըգ՝ 450 հոգի, Տոլպուխին (Տոպրիչ)՝ 320 հոգի, Սիլիստրե՝ 260 հոգի, Ստարա Զագորա՝ 250 հոգի, Այտոս՝ 105 հոգի, Ցասպոլ՝ 38 հոգի, և մեկ-երկու հարյուր հայեր ևս՝ ցրված քանի մը այլ փոքր քաղաքներու մեջ:

Վերոհիշյալ բոլոր քաղաքները ունին հայկական քարաշեն եկեղեցիներ և եկեղեցական կազմակերպված կյանք, որոնց գլուխը կը գտնվին հոգևոր հովիվները և հավատացյալ ժողովուրդի կողմե ընտրված եկեղեցական վարչությունները:

Արձանագրենք այդ եկեղեցիները իրենց հովիվներով.

1. Պլովդիվ՝ Ս. Գեորգ եկեղեցին, վերանորոգված 1828–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Գեորգ քահանա Սարյան:

2. Սոֆիա՝ Ս. Աստվածածին եկեղեցին, նոր կառուցված 1934–ին, ազգային շենքին մեջ (հին եկեղեցին փլցված ըլլալով). հոգևոր հովիվ՝ Տ. Վահան քահանա Փափազյան:

3. Վառնա՝ Ս. Սարգիս եկեղեցին, կառուցված 17–րդ դարուն և վերանորոգված 1844–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Տրդատ քահանա Տուվարճյան:

4. Ռուսե՝ Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցված 17–րդ դարուն, վերանորոգված 1805 թվականին. հոգևոր հովիվ՝ Տ. Ներսես քահանա Մելքոնյան:

5. Բուրկազ՝ Ս. Խաչ եկեղեցին, վերանորոգված 1858–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Աթանաս քահանա Խաչատուրյան:

6. Խասկովո՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, կառուցված 1924–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Նահապետ քահանա Գարայան:

7. Կոլարովգրադ՝ Ս. Աստվածածին եկեղեցին, վերանորոգված 1834–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Գարեգին քահանա Տյուրկերյան:

8. Սիլվեն՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, կառուցված 1830–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Կարապետ քահանա Ծերոնյան:

9. Թաթար-Բազարջըգ՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, վերանորոգված 1820–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Զաքարիա քահանա Շիրինյան:

10. Տոլպուխին՝ Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին, կառուցված 1830–ին. հոգևոր հովիվ՝ Տ. Հմայակ քահանա Զարդարյան:

11. Սիլիստրե՝ Ս. Աստվածածին եկեղեցին, հիմնված 17–րդ դարուն, վերաշինված 19–րդ դարուն. հոգևոր հովիվ՝ Տ. Միքայել քահանա Պեզիրճյան:

12. Ստարա Զագորա՝ Ս. Խաչ եկեղեցին, կառուցված 1923–ին. քահանա մը կը հովվե այցելաբար:

13. Այտոս՝ Ս. Աստվածածին եկեղեցին, կառուցված 1933–ին. քահանա մը կը հովվե այցելաբար:

14. Ցասպոլ՝ Ս. Աստվածածին մատուռ–եկեղեցին, կառուցված 1924–ին. քահանա մը կ՚այցելե երբեմն:

ԹԵՄԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մինչև Համաշխարհային առաջին պատերազմը բուլղարահայ թեմը ունեցած չէ թեմական կազմակերպություն և ոչ ալ հոգևոր առաջնորդ: Պարբերաբար այցելած են Բուլղարիո հայ եկեղեցիները եպիսկոպոս կամ վարդապետ հայրեր Կոստանդնուպոլսո պատրիարքարանի կողմե: Երբեմն այցելող հոգևորականները փորձած են եկեղեցիները կազմակերպել ու առաջնորդական աթոռ հաստատել, ինչպես օրինակ՝ 1902–ին Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հակոբյան, սակայն չեն հաջողած: Բուլղարահայոց՝ մեր ժամանակներու առաջին առաջնորդը եղած է Տ. Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյան՝ 1924–ին, որուն հաջորդած է Տ. Երվանդ արքեպիսկոպոս Փերտահճյան: Իսկ 1936–են մինչև 1950–ի աշնան Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանն է պաշտոնավարած իբրև թեմի առաջնորդ, որ չորս տարի առաջ հրաժարելով իր թեմեն՝ մեկնած է Թուրքիա: 1950–ին Թեմական Խորհուրդը, իբր առաջնորդական տեղապահ, ժամանակավոր կերպով նշանակած է Տ. Աթանաս քահանա Այվազյանը, որ իր հառաջացած տարիքին հետևանքով, վախճանած է 1952–ին: Վերջին չորս տարիներու ընթացքին թեմին բոլոր գործերը ղեկավարած է Թեմական Խորհուրդը՝ առանց հոգևոր առաջնորդի: 1949–ին Բուլղարիո մեջ, առաջին անգամ ըլլալով, Հայաստանյայց Եկեղեցվո Թեմական Կազմակերպությունը ունեցած է իր կանոնադրությունը՝ վավերացված բուլղարական պետական իշխանության կողմե, խղճի ազատության և կրոնական դավանությանց անկաշկանդ կազմակերպման Դիմիտրովյան սահմանադրության սկզբունքներու հիման վրա:

Այդ նոր կանոնադրության տրամադրություններու համաձայն՝ 1949-ին ընտրված է Թեմական Խորհուրդ Սոֆիայի մեջ, իսկ 1954-ի օգոստոս 29-30-ին տեղի ունեցավ բուլղարահայ թեմի պատգամավորական ժողովը Սոֆիայի մեջ, որուն ներկա եղանք իբրև ներկայացուցիչ Մայր Աթոռոյ:

Բուլղարահայ թեմը, թեև չորս տարիներ շարունակ հոգևոր առաջնորդ չէ ունեցած, սակայն շնորհիվ բուլղար ժողովրդական իշխանության ստեղծած օրինական և գործնական բարենպաստ պայմաններուն, շնորհիվ Թեմական Խորհուրդի և եկեղեցական վարչություններու և քահանայից դասու անձնվեր գործունեության, երկրին հայ եկեղեցիները չեն ու պայծառ կացության մեջ կը գտնվին թե՛ հոգևոր, թե՛ վարչական և թե՛ նյութական տեսակետներե: Թեմական պատգամավորական ժողովը, որուն աշխատանքներուն ներկա եղանք, կը պատկերացներ իրական վիճակը այն չեն ու պայծառ եկեղեցական կյանքին և այն ազատության ու բարենպաստ պայմաններուն, որ ստեղծած են երկրին օրենքները կրոնքի և եկեղեցական կազմակերպությանց նկատմամբ: Ահա թե ինչո՛ւ, ի նշան սիրո ու երախտագիտության՝ հանդեպ բարեխնամ պետական իշխանության և հանդեպ բուլղար ժողովուրդի մեծ զավակ և առաջնորդ Գեորգի Դիմիտրովի, որ հիմնադիրն է դեմոկրատական նոր Բուլղարիո, թեմական պատգամավորական ժողովը իր ամբողջ կազմով՝ 32 հոգևորական և աշխարհական պատգամավորներ, Թեմական Խորհուրդը և Սոֆիայի եկեղեցական վարչության անդամները, եկեղեցվո պաշտոնյաները և ուրիշ ազգայիններ, հանդիսավոր մեծ թափոր մը կազմած Մեր գլխավորությամբ, շքեղ ծաղկեպսակ մը զետեղեցին հանգուցյալի դամբարանի առաջ, 30 օգոստոսին:

Մեկ ամիս Բուլղարիա մնալով և այցելելով յոթը հայաշատ համայնքներ՝ հաստատեցինք, թե այս հյուրընկալ երկրին մեջ կենդանի է Հայ Եկեղեցին և թե անոր շուրջ համախմբված է մեր ամբողջ ժողովուրդը անխտիր՝ ուղիղ ու վառ հավատքով ոգեշնչված: Հաջորդաբար այցելեցինք Սոֆիայի, Պլովդիվի, Բուրկազի, Սլիվենի, Վառնայի, Կոլարովգրադի և Ռուսեի հայոց եկեղեցական համայնքները՝ ամեն տեղ Սուրբ Պատարագ մատուցանելով և քարոզելով հավատացյալ ժողովուրդին, որ թե՛ երեկոյան ժամերգության և թե՛, մանավանդ, Սուրբ Պատարագի արարողություններուն, հոծ թիվով ներկա կըլլար՝ հոգևոր մխիթարություն ստանալու աստվածահաճո եռանդեն մղված: Եկեղեցիներու սրահները անբավարար գալով՝ Պլովդիվի, Վառնայի և Բուրկազի մեջ հարկ էր եղած եկեղեցվո բակին մեջ բարձրախոսներ զետեղել, որպեսզի մնացած մեծ թիվով ժողովուրդը կարենար հետևիլ սրբազան արարողություններուն:

Սուրբ Պատարագի ընթացքին իմ քարոզի գլխավոր նյութը եղավ խոսիլ երջանկահիշատակ մեր Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Գեորգ Զ. հանգուցյալ Կաթողիկոսի եկեղեցանվեր և հայրենանվեր գործի մասին, նկարագրելով մեծագործ մեր Հովվապետի թաղման մեծաշուք արարողությունը, որ ամենախոր տպավորություն թողուց ժողովուրդին վրա: Սեպտեմբերի 12-ին, Ս. Խաչի վերացման տոնին, Բուրկազ գտնվելով՝ Սուրբ Պատարագեն վերջ նախագահեցի մատաղօրհնության արարողության: Ինձ համար մխիթարական եղավ հաստատել, թե Բուլղարիո գրեթե բոլոր եկեղեցիները կը պահեն մատաղօրհնության հայկական հին ավանդությունը:

Եկեղեցական վարչությանց կողքին արժանի են գնահատանքով հիշվելու հոգևոր հովիվները, սարկավագներն ու դպիրները, որոնք ընդհանուր առմամբ լավ պատրաստված, եռանդուն ու անձնվեր սպասավորներ են Ս. Սեղանին և հավատացյալ ժողովուրդին: Մասնավոր գնահատանքի արժանի են դպրաց դասերը և երգեցիկ խումբերը: Մեր վրա բացառիկ տպավորություն թողուցին Պլովդիվի, Սոֆիայի, Կոլարովգրադի, Վառնայի և Ռուսեի երգեցիկ խումբերը և, առհասարակ, սրբազան արարողություններու ընթացքին ոգեշունչ երգերն ու ընթերցումները, որոնք կատարվեցան հարազատ հայկական ոճով ու ընտիր ճաշակով: Այս տեսակետեն արժանի է նշվելու Պլովդիվի հմուտ

դպրապետ և խմբավար Սարգիս Պալթայանը, որուն ավելի քան քառասուն հոգիներե կազմված եկեղեցական երգչախումբը հավասար հաջողությամբ երգեց թե՛ Եկմալյանի, թե՛ Կոմիտասի պատարագները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտվելով Բուլղարիա իմ այս առաջին ճանապարհորդութենեն՝ այցելեցի Բուլղար Օրթոդոքս քույր Եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչներու և շարք մը պատմական վանքեր ու եկեղեցիներ՝ միշտ և ամեն տեղ գտնելով ամենաջերմ, եղբայրական ընդունելություն: Այսպես՝ 1 սեպտեմբերին այցելեցի Սոֆիայի «Ալեքսանդր Նևսկի» հոյակապ Մայր Տաճարը, 4 սեպտեմբերին՝ Պլովդիվի մոտ գտնվող Պաչկովոյի հռչակավոր Պոկոռոտիցա վանքը, և հաջորդ օրը՝ նույն քաղաքի Կոնստանտին և Հելենա հինավուրց եկեղեցին, ինչպես նաև քաղաքի Մայր եկեղեցին, 8 սեպտեմբերին՝ Սոֆիայեն 120 կիլոմետր հեռու գտնվող Ս. Հովհաննես Ռիլացիի հիշատակին նվիրված բուլղարական մեծագույն վանքը, Սոֆիայի ռումանական եկեղեցին, Սլիվենի Մայր Եկեղեցին, Վառնա քաղաքի մեծակառույց Մայր Տաճարը և այլ սրբավայրեր: Այցելեցի նաև Սոֆիայի հրեից սինակոկը, ինչպես նաև պատմական մզկիթները Պլովդիվի (Ուլու ջամի) և Կոլարովգրադի (Տումբուլ ջամի):

Բացառիկ երջանկություն մը եղավ ինծի համար ծանոթանալ Բուլղար Եկեղեցվո նորընտիր Հովվապետ Նորին Սրբություն Տ. Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքի հետ, որ ազնվաշուք և հեղինակավոր հոգևորական մըն է և, միաժամանակ, գիտնական մը պատմության գծով: Ծանոթացա նաև Ս. Սինոդի ընդհանուր քարտուղար Տ. Իոնա սրբազան եպիսկոպոսին, Սլիվենի միտրոպոլիտ Տ. Նիկոդիմով սրբազան արքեպիսկոպոսին, Վառնայի միտրոպոլիտ Տ. Իոսիֆ սրբազան արքեպիսկոպոսին, ինչպես և հրեից և մահմեդականաց կրոնապետներուն հետ:

Իբրև ներկայացուցիչ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդի, պատշաճ հարգանքով ու մեծարանքով ընդունվեցա պետական իշխանության կողմե: Իմ ունկնդրությունը Բուլղար դավանության նախարար Միխայիլ Քյուչյուկովի մոտ շատ ջերմ մթնոլորտի մը մեջ տեղի ունեցավ, և ես այդ առթիվ անգամ մը ևս տեսա Բուլղար ժողովրդական Հանրապետության ուշադիր և բարյացակամ վերաբերումը հանդեպ մեր Եկեղեցիին ու մեր ժողովուրդին: Հարգելի պարոն նախարարը իր խոսքը վերջացուց՝ փափագ հայտնելով, որ մոտ ապագային բուլղարահայ թեմը իր արժանավոր առաջնորդը ունենա, խնդրելով միաժամանակ, որ Բուլղարիո կառավարության և իր ամենահարգելի զգացումներուն թարգմանը հանդիսանա Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհուրդի մոտ: Իմ այցելությունը զուգադիպելով բուլղար ժողովուրդի ազատագրական տասնամյակի հանդիսության, սեպտեմբեր 9-ին պաշտոնապես հրավիրվեցա հանդիսատես ըլլալու զինվորական տողանցքին և երեկոյան՝ նախարարաց խուհուրդի պալատին մեջ տեղի ունեցող մեծ ընդունելության:

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Շահեկան կը համարենք ակնարկ մը նետել նաև բուլղարահայ վարժարաններու կացության վրա, որ նույնքան մխիթարական պատկեր մը կը ներկայացնե, ինչքան եկեղեցիներու վիճակը: Բուլղարիո հայոց վարժարաններու թիվն է տասնևմեկ՝ մոտ հազար յոթը հարյուր երկսեռ աշակերտներով, հետևյալ կերպով բաշխված հայաշատ քաղաքներու վրա:

1. Պլովդիվ՝ յոթնամյա երկսեռ նախակրթարան և մանկապարտեզ՝ 587 աշակերտ
2. Սոֆիա՝ 310
3. Վառնա՝ 320
4. Ռուսե՝ քառամյա 70
5. Բուրկազ՝ յոթնամյա 126
6. Խասկովո՝ քառամյա 60
7. Կոլարովգրադ՝ յոթնամյա երկսեռ նախակրթարան, 36 աշակերտ
8. Սլիվեն՝ և մանկապարտեզ 50
9. Թաթար-Բազարջըգ 20
10. Տոլպուխին՝ 17
11. Ստարա Զագորա՝ 14

Հայոց բոլոր վարժարաններու նյութական ամբողջ մատակարարությունը ստանձնած է բուլղար պետությունը: Ինչպես Ռումեն Ժողովրդական Հանրապետության, նույնպես և բուլղար Ժողովրդական Հանրապետության մեջ մեր ազգային վարժարանները հայերենի դասավանդումով պետական դպրոցներ են:

Հայերեն լեզուն կ՚ավանդվի բոլոր դասարաններուն մեջ. շաբաթական 8 պահ՝ Ա-Գ դասարանները, շաբաթական 6 պահ՝ Դ-Ե դասարանները, և շաբաթական 5 պահ՝ Զ-Է դասարանները: Վերի դասարաններուն մեջ կ՚ավանդվի նաև հայոց պատմություն և Խորհրդային Հայաստանի աշխարհագրություն: Հայերեն լեզվի բոլոր դասագրքերը կը ստացվին, կանոնավորապես, Խորհրդային Հայաստանեն:

Թեև այժմ հայոց լեզվի ուսուցիչները թիվով և որակով բավարար են, սակայն, հառաջացած ըլլալով անոնցմե շատերուն տարիքը, գալիք տարեշրջաններուն սուր կարիքը պիտի զգացվի որակյալ, թարմ ուժերու՝ ձեռնհաս կերպով ավանդելու համար մեր մայրենի լեզուն:

Որպեսզի բուլղարահայ վարժարաններու ներքին վարչական ու մանկավարժական կյանքին մեջ նույնանման դրություն մը տիրե, վերջին տասը տարիներու ընթացքին

տեղի ունեցած են երեք ուսուցչական համագումարներ, որոնք իրենց բարերար ազդեցությունը թողած են հայ վարժարաններու կյանքին վրա:

Հայ դպրոցներու շրջանավարտները, առանց որևէ դժվարության հանդիպելու, իրենց ուսումը կը շարունակեն բուլղարական պետական երկրորդական (միջնակարգ) և բարձրագույն ուսումնական հաստատությանց մեջ: Այժմ Սոֆիայի, Պլովդիվի և Վառնայի համալսարաններուն մեջ կ՚ուսանին 250 հայ ուսանողներ և ուսանողուհիներ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

Բուլղարահայոց նոր կյանքի պատկերը լրիվ կերպով տալու համար կարելի չէ կանգ չառնել «Երևան» միության գործունեության վրա, որ հիմնված ըլլալով 9 սեպտեմբեր 1944-են անմիջապես հետո՝ դարձած է հայ ազգաբնակչության մշակութային-հայրենասիրական հեղինակավոր ու սիրված կազմակերպությունը, որ իր մեջ կ՚ամփոփե հայ գաղութի բոլոր անդամները և իր գործուն կյանքին շուրջ կը համախմբե բոլոր կենդանի ուժերն ու իրական արժեքները:

«Երևան» միության վերին մարմինը Սոֆիայի կեդրոնական կոմիտեն է, որ կը ղեկավարե երկրին տասնևչորս հայաշատ քաղաքներու մասնաճյուղերու կազմակերպությունները: Մասնաճյուղերը ունին վարչական մարմիններ՝ օժտված, ուր որ անհրաժեշտ է, օժանդակ ենթամարմիններով, ինչպիսիք են՝ գրասիրաց բաժնի, երիտասարդաց բաժնի, կանանց բաժնի մարմինները կամ հանձնախումբերը: Բոլոր մասնաճյուղերը կազմակերպած են երգչախումբեր, պարախումբեր, թատերական բաժիններ, ոմանք նաև՝ նվագախումբեր, որոնք փայլուն գործունեություն մը ունին ո՛չ միայն հայ գաղութին ծոցին մեջ, այլ նաև կը մասնակցին բուլղարական երաժշտական կյանքին՝ հանդիսա-

վոր առիթներով մեծ հաջողություններ արձանագրելով և պաշտոնական մարմիններու ու հրատարակություններու կողմե մեծապես գնահատվելով: Երգչախումբերը կազմված են 60-120 երգիչներե: Պլովդիվի մասնաճյուղը ունի նաև օփերայի 65 հոգինոց անձնակազմով բաժին մը, որ վերջերս շատ հաջող կերպով բեմադրած է «Անուշ» օփերան: «Երևան»-ի մասնաճյուղերը, բոլորն անխտիր, ունին իրենց սեփական ակումբները և դահլիճները, գրադարաններն ու բացօթյա հավաքատեղիները, ընդհանրապես ազգային սեփականություն եղող շենքերու մեջ:

Միության պաշտոնական օրկանն է «Երևան» շաբաթաթերթը, որ լույս կը տեսնե մայրաքաղաքին մեջ՝ 1.600 օրինակ տպաքանակով: Կարդացված ու գնահատված թերթ մըն է:

Բուլղարահայ գաղութը ունի նաև ազգային ծերանոց մը Ռուսեի մեջ, Անաստաս Միկոյանի անվան, որուն նյութական մատակարարությունը ստանձնած է բուլղար պետական իշխանությունը:

Նոր Բուլղարիան այցելող մը չի կրնար չտեսնել ու չգնահատել այն գործոն դերը, զոր եռանդով ու շինարար ոգիով ստանձնած են մեր ժողովուրդի զավակները՝ իրենց Բուլղար Հայրենիքի նոր, երջանիկ կյանքին կառուցման ի խնդիր, աշխատանքի ու նվիրումի այս ազնիվ ճամբուն վրա արձանագրելով այնպիսի փայլուն արդյունքներ ու նվաճումներ, որոնցմով հայ ժողովուրդը կրնա, իրավամբ, հպարտ ըլլալ: Հիրավի, բազմաթիվ հայեր արժանացած են «աշխատանքի հերոսի», «ստախանովականի», «նորարարի» և «վաստակավորի» պատվաբեր տիտղոսներուն՝ կյանքի բոլոր ասպարեզներուն մեջ:

Բուլղարահայ ժողովուրդը իր հարազատ քաղաքացիի պարտքը կատարելով Բուլղար նոր ու բարգավաճ Հայրենիքի հանդեպ՝ չի մոռնար միաժամանակ իր հայրենաբաղձ հայացքը ուղղել դեպի իր վերածնած Մայր Հայրենիքը, դեպի իր պաշտելի Խորհրդային Հայաստանը, որուն կյանքեն կյանք կ'առնե ան, որուն վերելքով կը հպարտանա ու

կը ներշնչվի, որուն ոսկի ապագայի հեռանկարով կ'ոգևորվի ու կը հրճվի, և կ'երազե իր հոգիի բոլոր ուժերով՝ լուսավետ օր մը ողջունել այդ ոսկի ապագան Մայր Հայրենիքի նվիրական հողին վրա:

Սուրբ է այդ երազը, և մենք կը խոնարհինք անոր առջև...

12 հոկտեմբեր 1954
Պուքրեշ

ՀԱՅՐԵՆԻ ԱՐԵՎԻՆ ՏԱԿ*

Ա
ԿԱՐՈՏ ՀԱՅՐԵՆԻ

Կանչում է կրկին, կանչում անդադար,
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու թևերն ահա փռած տիրաբար,
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հսկա մեքենայի մը թևերով թռիչք առած՝ հորիզոններ ճեղքելով իջանք Երևանի օդակայանը, ոտք դրինք հայ հողին վրա:

---

* Ուղեգրությունն ամբողջությամբ, առանձին գրքով, լույս է տեսել 1954 թվականին, հայերեն և ռումաներեն անվանաթերթերով. *Վազգեն եպիսկոպոս Պալճյան* (Առաջնորդ ռումանահայ թեմի), Հայրենի արևին տակ, «Նոր կյանք», Պուքրեշ, 1954, էջ 5-109, որից և արված է սույն հրատարակությունը:

Այդ գրքում ամփոփված են հեղինակի 1945, 1948, 1951 և 1953 թթ. այցելությունների ժամանակ Խորհրդային Հայաստանից ստացած տպավորությունները՝ բաժանված տասնչորս գլուխների:

Հատվածներ վերահրատարակվել են Սուրբ Էջմիածնում՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 191-209:

Երևան... Արարատյան դաշտ... Հայաստան... Կանգնած եմ ահա՛ մեր նախնիքներու հողին վրա ու կարոտակեզ կը սեղմեմ ջերմ ձեռքերը իմ հայաստանցի եղբայրներուն, իմ հարազատ եղբայրներուն: Դարերով կուտակված կարոտներ, հույզեր, տենչեր, այժմ հանկարծ իմ մեջ կ՚արթննան, մարմին կ՚առնեն գիտակցությանս լույսին տակ և կ՚ալեկոծեն բովանդակ էությունս: Անանուն, անուշ հուզումներ ալիք-ալիք, ուժգին կը զարնվին սրտիս արևոտ ափերուն և հորդառատ ու քաղցրահոս կ՚ողողեն հոգիս. կը տարածվին շուրջս ամեն կողմ, բոլոր սահմաններեն անդին. կը հպին ամեն ինչի, մինչև հորիզոնները հեռավոր... Ի՜նչ սրբազան ապրումներ... կյանքիս առավելագույն երջանկության պահն է, զոր կ՚ապրիմ: Ես ալ կ՚ուզեմ գոչել.

«Կա՛նգ առ, վայրկյան, դուն այնքա՛ն գեղեցիկ ես»:

Երևա՛ն, իրականացած երազ:

Երևա՛ն, անթառամ ծաղիկ հայ ժողովուրդի հազարամյա անշեջ հույսին, համառ պայքարներուն, չինարար ոգիին՝ բացված Արարատյան դաշտի սրտին վրա, սեզ Մասիսներու և քառագագաթ Արագածի հավերժական նայվածքին ներքև:

Մեր մեքենան կը սուրա մայրաքաղաքի պողոտաներուն վրայեն, օդակայանեն դեպի կեդրոն, դեպի «Ինտուրիստ» հյուրանոց: Լայն, մաքուր, ասֆալտապատ պողոտաներ՝ գեղատեսիլ աքասիաներու խիտ կանաչով եզերված, ընդարձակ հրապարակներ, գողտրիկ պուրակներ, հանրային պարտեզներ, շքեղ ցուցափեղկերով անհամար վաճառատուներ և շենքեր, շենքեր անթիվ, անհատնում:

Ամեն կողմ եռուզեռ, արտասովոր կենդանություն, շեն ու շենշող մթնոլորտ՝ բյուրեղյա լույսի մեջ ողողուն, թաքսիներ, օթոպուսներ, հանրակառքեր, թրոլեյպյուսներ կը սուրան մին մյուսին ետևեն՝ հսկայածավալ, անվերջանալի շքերթի մը պատկերը ներկայացնելով մեր առջև: Քիչ հետո Աբովյանի վրա եմ: Կը քալեմ մինակ, Երևանի փողոցներեն: Շուրջս անհամար անցորդներ, խինդ ու ծիծաղ, առատ լույս և ջերմություն: Հետաքրքիր, ժպտալի հայացքներ

զիս կ՚ողջունեն անձայն: Կը նայիմ անոնց աչքերուն մեջ՝ խորհուրդներով զեղուն, հայկական խորունկ աչքեր, կենդանի, վառ աչքեր, հյուրընկալ աչքեր...

Այնքա՜ն ըսելիքներ ունինք իրարու...

Կը քալեմ կարծես երազի մեջ՝ դյութական աշխարհի մը դռները բանալով: Կը կոխեմ փողոցի քարերուն վրա. որքա՜ն ջերմ են այդ քարերը: Ամեն մեկ քար սրտիս կը հպի: Ամեն մեկ քարեն սիրտս հուզում մը կը քաղե: Այստեղ քարերը և ամեն ինչ կենդանի են, ամեն ինչ կը շնչե, կը շարժի...Շենքերը, ծառերը, մարդոց աչքերը, երկինքի կապույտը հոգիին կը խոսին անծանոթ և խռովիչ, սակայն քաղցր ու մտերիմ բարբառով մը, որ ջերմ հոսանքի մը նման կ՚անցնի զգայարանքներուս մեջեն՝ ծաղիկ ու երգ սփռելով: Սիրտս ուժգին կը տրոփե, և կուրծքս նեղ կու գա: Աշխարհն ամբողջ շուրջս պար է բռնած:

Պատրա՞նք, թե՞ իրականություն: Անուշ երկյուղ մը կ՚ապրիմ. չըլլա, թե երազ ըլլա...

Եվ որպես գերագույն ստուգություն՝ հայացքս Մասիսը կը փնտռե...

***

«Դուք եկել եք հայրենի երկիր ձեր կարոտը առնելու: Բայց լավ իմացեք, երբ վերադառնաք արտասահման՝ ձեր պաշտոնավայրերը, այն ժամանակ պիտի սկսի ձեր մեջ խոսիլ ճշմարիտ կարոտը, բուռն, կենդանի, իրական կարոտը, տեսած ու վայելած մայր հայրենիքի կարոտը»:

Ազգիս Վեհափառ Հայրապետը օր մը, երբ Էջմիածին՝ իր սեղանին շուրջ կգտնվեինք, այս խոսքերը ուղղեց մեզ՝ արտասահմանեն Սովետական Հայաստան ժամանած վարդապետներուս:

Արդ, կը զգամ ես ահա այդ խոսքերուն խոր ճշմարտությունը:

Եվ պահ մը կարոտ առնելու պատրանքով մխիթարված՝ կը ցանկամ խոսիլ, պատմել մեր աննման երկրի, մեր հարազատ Սովետական Հայրենիքի մասին, կը ցանկամ խոսիլ և պատմել այն, ինչ որ տեսա, այն, ինչ որ զգացի մեր վերածնած երկրի հողին վրա:

ԴՈՒ ՆՈՐԱՀԱՐՍ ԵՍ ԴԱՌԵԼ ԵՐԵՒԱՆ

1951–ին երրորդ անգամ ըլլալով կայցելեմ մեր հայրենիքը:

1945–ին իմ տեսած Երևա՞նն է այս: Պահ մը ինձ կը թվի ուրիշ քաղաք մը ըլլալ: Սովետական Հայաստանի մայրաքաղաքը արդեն մեծ կեդրոն մըն է դարձեր: Եւ դժվար է զայն համեմատել սովետական կամ եվրոպական այլ քաղաքներու հետ: Անշուշտ շուրջ 350. 000 բնակչություն ունեցող բազմաթիվ գեղեցիկ քաղաքներ կան աշխարհիս վրա, բայց մեր Երևանը կարելի չէ նմանեցնել անոնցմե ոչ մեկուն:

Մեր հայրենիքի առաջին քաղաքը անճանաչելի դառնալու աստիճան կերպարանափոխված է: Աճած է ան իր տարածությամբ, նոր բացված պողոտաներով ու փողոցներով, նորաստեղծ թաղամասերով ու կառուցված հազար–հազարավոր նոր շենքերով, մանավանդ վերջին երեք տարիներու ընթացքին: Անտարակույս որ հայրենադարձին հաջորդող 1949, 1950 և 1951 տարիները ոսկի տառերով պիտի արձանագրվին Երևանի վերաշինության պատմության մեջ:

Գլխավոր պողոտաները՝ Ստալինյան Պրոսպեկտը, Աբովյանը, Նալբանդյանը՝ հյուսիսեն հարավ, ապա Միկոյանը, Լենինյանը, Օրջոնեկիձեն՝ արևմուտքեն արևելք, ու նաև Բաղրամյանը, Ամիրյանն ու Տերյանը և ուրիշ բազմաթիվ մեծ ու փոքր փողոցներ իրարու հետ կարծեք կը մրցին իրենց շքեղությամբ, իրենց գեղեցիկ շենքերով ու հրապարակներով, իրենց վաճառատուններով կամ հանրային մեծ

հաստատություններով, իրենց ծառազարդումով կամ լուսավառությամբ:

1945-ին, երբ առաջին անգամ Երևանը տեսա և հեռուեն դիտեցի քաղաքը շրջապատող լերկ լեռներն ու բլուրները, կը խոստովանիմ, թե կարծեք սրտիս մեջ ցուրտ բան մը զգացի և տխրեցա՝ ի տես այդ գորշ ու անկենդան տարածություններուն: Այսօր արևմուտքեն, հյուսիսեն ու հարավեն Երևանը շրջապատող բարձունքները գրեթե ամբողջությամբ ծածված են կանաչառատ ծառաստաններով կամ պտղատու ծառերու պարտեզներով: Շրջակա այս բարձունքներուն անտառապատումով, քաղաքի մեջ «սարքված» բազմաթիվ «այգիներով» (պարտեզներ), պուրակներով և փողոցներու ծառազարդումով Երևանը դարձած է քաղաք մը, որ լայնորեն կը շնչե կանաչներուն մեջ: Կանաչը առատ է մանավանդ արվարձաններուն և ավաններուն մեջ, ուր կառուցված են ու կը կառուցվին հայրենադարձներու բնակարանները: Յուրաքանչյուր տուն թաղված է փունջ-փունջ կանաչներու մեջ. կանաչը՝ տնամերձ բանջարանոցին, այգիին կամ մրգաստանին, ուր անպակաս են համբավավոր դեղձն ու ծիրանը:

Քանաքեռի բարձունքեն դեպի հյուսիս-արևելք կը տարածվին Նոր Զեյթունը, Կերգան, Նորքը, Այգեստանը, Սատեթաղը. արևելյան կողմը՝ մինչև դեպի հարավ, Արարատյան դաշտին վրա՝ Նոր Բյուրթանիան, Նոր Արեշը և Գառուչակ Գ. Մասը, իսկ դեպի արևմուտք՝ Նոր Արաբկիրն ու Նոր Մալաթիան: Զանգուի մյուս ափին՝ դեպի հարավ, կը տարածվին Նոր Կիլիկիան ու Շահումյանը: Բոլոր այս ավանները այլևս քաղաքեն բաժնված արվարձաններ կամ թաղամասեր չեն, այլ Երևանի լայնատարած թևերը, որ կ'երկարին, կը տարածվին դեպի բլուրներն ու լեռները ի վեր և դեպի Արարատյան դաշտ՝ բոլորն ալ քաղաքի կեդրոնին հետ կապված կանոնավոր հաղորդակցության միջոցներով: Բնակչությունը ամեն տեղ տևականորեն իր տրամադրության տակ ունի հանրակառք, օթոպուս, թրոլեյպուս և մասնավոր թաքսիներ՝ Զիս, Բալետա, Մոսկվիչ՝ շատ մատչելի գիներով:

Երևանը անճանաչելի դարձած է ոչ միայն իր մեծությամբ, այլ նաև իր արտաքին կերպարով, իր շենքերու յուրահատուկ գեղեցկությամբ, իր կենսալի ուրախությամբ:

Ճշմարիտ է բանաստեղծին զգացումը՝ «Դու նորահարս ես դառել Երևան»:

Ստալինյանի, Բաղրամյանի և կամ Աբովյանի վրա, աչքերս չեն հագենար՝ դիտելով սքանչելի կառուցումները՝ ամեն մեկը իր ճարտարապետական ձևերով, իր գիծերով, իր զարդաքանդակներով և իր գույներով, միևնույն ոճի սահմաններուն մեջ: Երևանը աշխարհի այն հազվագյուտ քաղաքներեն մին է, որ իր յուրահատուկ ոճը ունի ու կը պահե զայն ամենայն հետևողականությամբ: Զնմանիր այն քաղաքներուն, ուր ամեն նոր քաղաքապետ իր ճաշակով, ամեն ճարտարապետ իր նախասիրությամբ ու ամեն սեփականատեր իր քմահաճույքով շենքեր կառուցանելով, ստեղծած են ճարտարապետական ոճերու իսկական Բաբելոն մը, տգեղ խառնիճաղանջություն մը:

Երևանը ոճ ունի, իր սեփական ոճը: Ունի յուրահատուկ համաչափություն և ներդաշնակություն, ունի գույն և ուրույն մթնոլորտ: Երևանին բացառիկ գեղեցկություն և հմայք տվողը, կը խորհիմ, թե առավելապես շինանյութն է, այսինքն՝ գունավոր տուֆ քարը: Տիրող գույներն են՝ մոխրագույնը, վարդագույնը, դեղինն ու կարմիրը, մանիշակագույնը և պեժը: Թեև ամեն մեկ շինություն միևնույն գույնի քարով կառուցված է, օրինակ՝ վարդագույն տուֆով, սակայն, այնուամենայնիվ, շենքը իր ամբողջությամբ միապաղաղ այդ մեկ գույնով չի ներկայանար, որովհետև ամեն մեկ շարված քար, մեկը մյուսեն թեթև կերպով կը տարբերի իր երանգներով: Նույնիսկ միևնույն քարը հաճախ իր ներքին երանգներով այլազան խառնուրդ մըն է տիրող գույնի մը սահմանի մեջ: Յուրաքանչյուր շենք, որ կը բարձրանա Երևանի հրապարակներուն և պողոտաներուն վրա, հիմնական գույնի մը աներևակայելիորեն այլա-

զան ու բազմազան երանգներու մեկ համադրությունն է: Գույներու և երանգներու այդ բազմազանութենեն և անկանոն ու պատահական մեկտեղումներեն ծնունդ կ՚առնեն գույներու անսահմանորեն հարուստ ներդաշնակումներ, և կարծեք գույներու կենդանի շարժ մը ալիք–ալիք կը ծավալի անցորդի տեսադաշտին վրա:

Այս բոլորին վրա պետք է ավելցնել նաև այն, թե Երևանի շենքերը իրենց գույներն ու երանգները կը փոխեն՝ համաձայն արևի լույսին և խոնավության աստիճանին: Այսպես, տարբեր գույներ կը հագնի քաղաքը կեսօրվան արևի պայծառ ճառագայթներուն տակ, տարբեր գույներ՝ իրիկնամուտին, և տարբեր գույներ՝ անձրևե մը հետո: Երևանը գույներու քաղաք է: Գույներու կենսուրախ, հանդիսավոր համանվագ մը՝ հարափոփոխ «ազդոր»-ներով ներդաշնակված: Գույներու ալիքներ՝ կենդանի, լուսավոր, զուսպ ու ներդաշնակ կը շարժին, կը խոսին, կը հուզեն ու դիտողին հոգին կը պարուրեն գեղեցիկի զգացումին ապրումովը: Ներդաշնակություն այլազանության մեջ, շարժում և կենդանություն անկենդան քարին վրա, անսահմանի զգացումի իրականացում սահմանյալ տարածության մը մեջ, ահա՛ «նորահարս» Երևանը:

Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի շինություններու գլուխգործոցը, անտարակույս, Կենտկոմի հոյակապ, շքեղ պալատն է, որ կը հանդչի Բաղրամյան պողոտայի բարձունքին վրա՝ ընդարձակ, զմայլելի պարտեզի մը կանաչներուն վերև: Իր ճարտարապետական հորինվածքով, իր պարզ ու հանդարտ գծերով, իր զուսպ գույնով համակ գեղեցկություն է, խրոխտ ու անդորր, հավասարակշիռ լիություն ուժի, ազնիվ հպարտություն, խաղաղ ներդաշնակություն: Ան Երևանի Պարթենոնն է այսօր, վերակենդանացած Գառնին՝ հելլենական և հայկական ճարտարապետական ոճերու մեկ նոր համադրությունը: Առհասարակ, Երևանյան ճարտարապետության արդի ոճը զորավոր կերպով կը կրե դրոշմը հայ հին ճարտարապետական ոճին: Բոլոր կառուցումները երջանիկ կերպով կը ներկայացնեն

համադրությունը հայկական հին ոճին և նորագույն հղացումներուն: Բազմաթիվ նորակառույց շենքեր իրենց ճարտարապետությամբ, իրենց խոյակավոր սյուներով, կամարներով, իրենց որմնաքանդակներով և, մանավանդ, իրենց մթնոլորտով ուժգնորեն կը հիշեցնեն Գառնին կամ Զվարթնոցը, Հռիփսիմեն կամ Մարմաշենը, Աղթամարը կամ Սանահինը, և այլն: Թեև ուղղակի նմանություններ հաստատելը դժվար է, սակայն կը զգաս, թե այդ հայ ճարտարապետության հնադարյան կոթողներն են, որ նոր կյանք առած՝ կ՚ապրին այլափոխված կերպարանքով: Կը խորհիմ, թե այս զգացումին ամենահաջող բնորոշումը տված է Մարիեթա Շահինյանը, որ իր վեպերեն մեկուն մեջ կը գրե. «Երևանի շենքերու քարերը հյուսված են անցյալի շաղախով»: Ահա թե ինչո՛ւ ճիշտ պիտի ըլլա ըսել, թե այսօր խորհրդային հայ ճարտարապետությունը իր երկրորդ յոթներորդ դարը կ՚ապրի: Եվ, ապահովաբար, այդ ճարտարապետությունը իր վերջին խոսքը ըսած չէ տակավին: Ինչպես երաժշտության, նույնպես և ճարտարապետության մեջ հայ ժողովուրդը կը բարձրանա միջակեն վեր, շատ վեր՝ դեպի ստեղծագործության անհաս կատարներ, դեպի նոր ու ինքնատիպ ներդաշնակություններ:

* * *

Այսպես ահա կ՚աճի, կ՚ուռճանա ու կը ծաղկի Երևանը, ինչպես ամբողջ երկիրը: Կը բարձրանա, անդադար կը բարձրանա ամենայն հայոց բոլոր ժամանակներու հայրենիքի կենսուրախ շենքը, որ այսօր սովետական դարաշրջանի արևին տակ կոչված է նոր կյանքի, արդար աշխատանքի, ստեղծագործ աշխատանքի խաղաղասեր ու առաջդիմասեր ժողովուրդներու եղբայրության Մեծ Միության մեջ:

Հայաստանի մեջ զգացի ես մեր ժողովրդի վերածնունդի գիտակցությունը, նոր կյանք մը կառուցելու հսկայածավալ ճիգը՝ ի խնդիր սովետական լուսավոր աշխարհի կերտման

ու կատարելագործման, որուն հայ ժողովուրդը կը մասնակցի իր բոլոր ուժերովը և իր սրտի բովանդակ ջերմությամբ: Այսօր հայ ժողովրդի ամենաճշմարիտ, ամենախոր զգացումը հայրենի երկրի վերածնունդի ուրախության զգացումն է: Ամբողջ ժողովրդի մը կենդանության ուժերու զարթոնքն է, որ բուռն ու հաղթականորեն կը ծավալի՝ նոր թափ ու թռիչք տալով իր զավակներուն մտքին ու բազուկին:

Մեր հայրենիքի դյութիչ հողը կոչված է այսօր նոր կյանքի: Երևանը՝ մեր երկրի սիրուն մայրաքաղաքը, կեդրոնը Սովետական Հայաստանի ճարտարարվեստին և մշակույթին, նախշուն կերպով զուգված գույներու անդյուտ համանվագի մը մեջ, Երևանը՝ երկրին սիրտը, տարածված Արարատյան բարձրավանդակին վրա՝ մոտ հազար մեթր բարձրության, քառագագաթն Արագածի և վեհափառ Մասիսներու լուսաշող նայվածքին ներքև, Երևանը այսօր խորհրդանիշն է հավերժական Հայաստանին:

Եվ ոչ միայն Երևանը, այլ ամբողջ երկիրը, քաղաքներն ու գյուղերը վերաշինված են նույն համեմատություններով: Չկա գյուղ՝ առանց էլեկտրական լույսի, չկա գյուղ՝ առանց դպրոցի, չկա գյուղ՝ առանց գրադարանի, չկա գյուղ՝ առանց բժշկի, չկա գյուղ՝ առանց հողագործական կատարելագործված մեքենաներու: Ամբողջ հողագործությունը և գյուղական արդյունաբերությունը մեքենայացված է:

Ցարդ ջուրով ոռոգված են ավելի քան երկու հարյուր հազար հեկտար մշակելի հողեր (ընդամենը 450.000 հեկտար մշակելի հողին), որոնք անցյալի մեջ մեռած ըլլալ կը թվեին: Իսկ նոր հիտրոկայաններու և ջրանցքներու ստեղծումով, որոնք կառուցման ընթացքի մեջ են, երկիրը պիտի շահի նույնքան մշակելի հող: Մինչդեռ 1918–ին ցարական ժամանակաշրջանի Հայաստանը կարտադրեր հինգ միլիոն քիլովաթ–ժամ էլեկտրական ուժ, այժմ՝ 1951–ին, ան կարտադրե ավելի քան 1000 միլիոն, այսինքն՝ մեկ միլիառտ քիլովաթ–ժամ: Շնորհիվ նոր կառուցումներուն Սևանը

դարձած է արդեն Սովետական Հայաստանի էլեկտրական սիրտը:

Հայաստանը, որ երեսուն տարիներ առաջ հետամնաց ու թշվառ երկիր մըն էր, այսօր զարգացած է ոչ միայն արդիական իմաստով հարուստ ու բարգավաճ գյուղատնտեսությամբ, այլ դարձած է միաժամանակ ճարտարարվեստական առաջավոր երկիր: Անհավատալի կը թվի, սակայն իրականություն է, թե Սովետական Հայաստանը իր գյուղատնտեսությամբ ու ճարտարարվեստով գրեթե ինքնավար երկիր մը դարձած է:

Ահա այս բոլորի համար է, որ Երևանի հայը, խոր երախտագիտությամբ և պաշտամունքի զգացումով զեղուն, իր հայացքը կ՚ուղղե դեպի Մոսկվա, դեպի Քրեմլինի մշտաշող աստղը, որ կը հսկե ու կը պահպանե նաև հայ ժողովրդի վերածնած հայրենիքը, հայ ժողովրդի այս կենաց ծառը:

Երբեմնի Երևանը՝ թշվառության, խավարի, փոշիի ու ցեխի մեջ թաղված այդ գյուղաքաղաքը, այդ մալարիայի բույնը, պարսիկ խաներու և ցարական չինովնիկներու Երևանը այսօր կը տեսնենք Ստալինյան Պրոսպեկտի վրա գտնվող «Հին Երևան»–ը թանգարանին մեջ: Եվ երբ դուրս կու գաս այդ թանգարանեն, անհնար է, որ հայ ըլլաս և խոր երախտագիտությամբ չհիշես պատմական խոսքերը՝ արտասանված 1920–ին. «Պետք է փրկել Հայաստանը, որքան կարելի է շուտ, ամեն գնով պետք է փրկել Հայաստանը»:

Երևանյան գեղեցիկ առավոտ մը՝ 1951 հուլիս 6–ին, կ՚այցելենք Երևանի Պետական Մատենադարանը և Ձեռագրատունը: Հաստատության ղեկավարները մեզ սիրալիր կ՚ընդունին: Կ՚այցելենք բոլոր բաժինները, բոլոր սրահները: Ահա նշանավոր Ձեռագրատունը, ուր պետական խնամքի տակ ավելի քան տասը հազար հայ ձեռագիրներ, սկսյալ Թ. դարեն, կը պահպանվին աչքի լույսի պես՝ գիտական արդիական մեթոդներով: Մեր փոթորկահույզ պատմության նշխարներն ու վկաներն են անոնք: Երկյուղածությամբ կը մոտենանք անոնց: Ձեռագրատան տնօրենը մեր ուշադրությունը կը հրավիրե մեծածավալ ձե-

ռագրի մը վրա: Ձեռագրատան ամենամեծ հատորն է. 607 մեծադիր էջերե կը բաղկանա ու կը կշռե 34 քիլոկրամ: Հեռուեն դիտված՝ սնտուկի մը կը նմանի:

Ահա՛ այս ձեռագրի ինքնությունն ու հրաշալի պատմությունը.

Ճառընտիր մըն է ան՝ գրված 1205–ին Մշո Ս. Կարապետ վանքին մեջ՝ ութ հարյուր ոչխարներու մորթին վրա: Դարերը շարունակ երկյուղածությամբ պահված է՝ որպես սուրբ և հրաշագործ գիրք: ԺԴ. դարուն Մոնկոլ սադրաբները զայն կ՚առևանգեն ու կը տանին իրենց երկիրը՝ ահաբեկման ենթարկելու համար Մշո դաշտի հայ ժողովուրդը: Շուտով, սակայն, կը ստիպվին զայն վերադարձնել Ս. Կարապետ վանքին՝ տեղի տալով ամբողջ ժողովուրդի ցասումի և ըմբոստության սպառնալիքին առջև:

Դարերու ընթացքին Ճառընտիրը, ուրիշ փորձություններե ալ անցնելով, վանքին մեջ կը պահվի մինչև 1915–ի տեղահանությունը: Այդ չարաշուք թվականին, երբ Մշո դաշտի մեր ժողովուրդը, վանքի միաբանությունն ալ միասին, դեպի Արաբիո մահվան ճանապարհները կը քշվի, քանի մը հոգևորականներ, գյուղացիներու օգնությամբ, աքսոր երթալե առաջ՝ գիշերանց, ապահով տեղ մը՝ հողին տակ, կը թաղեն զայն:

Ճառընտիրը այդտեղ թաղված կը մնա մինչև զինադադարը, երբ գաղտնիքը գիտցող գյուղացիներեն մեկը, հրաշքով ազատելով թրքական սպանդեն, Մուշ կը վերադառնա և թաղված տեղեն դուրս կը հանե սուրբ գիրքը: Ամբողջ ժողովուրդը բնաջնջված ըլլալով, Մշո դաշտը՝ ամայի, և վանքը՝ քանդված, հայ գյուղացին կ՚որոշե փախչիլ դեպի Հայաստանի ռուսական ապահով կողմը: Կը փորձե ձեռագիրը հետը առնել, սակայն շատ մեծ ու ծանր ըլլալով՝ միայն կեսը կը վերցնե հետը և կը բերե Երևան: Քանի մը տարի վերջ երկրորդ կեսն ալ Երևան կ՚ելլե, սակայն, Թիֆլիսի մեջ, զոր իր հետ բերեր էր ռուս սպա մը, որ զինադադարի շրջանին Մշո դաշտեն անցնելով՝ պատահմամբ գտած էր զայն: Այսօր այդ Ճառընտիրը ամբողջությամբ կը գտնվի

Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի Ձեռագրատան մեջ՝ հարազատներու հոգածության տակ ապահով*:

Սույն ձեռագրի ոդիսականը անգամ մը ևս պատկերացուց մեր աչքերուն առջև մեր ժողովուրդի տխուր անցյալը: Իրոք որ այս Ճառընտիրի և հայ ժողովուրդի ճակատագիրներուն միջև խորհրդավոր նմանություն մը կա: Վասն զի հայ ժողովուրդն ալ այս ձեռագրի նման հալածվեցավ, մահվան դուռները տարվեցավ քանի–քանի անգամներ, թաղվեցավ իսկ, և սակայն, առասպելական փյունիկին նման իր խսկ մոխիրներեն վերածնավ և, ինչպես Գ. Էմին կ՚ըսե՝ «Մի բուռ հայ ժողովուրդ հասավ փրկարար այս կարմիր երթին»՝ ստեղծելով իր նոր կյանքը, իր նոր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը, շնորհիվ հայ գյուղացի ժողովուրդի տոկունության ու կենդանության ուժերուն և շնորհիվ ռուս ժողովուրդի փրկարար օգնության Խորհրդային դրոշին ներքև:

Եթե չըլլար ռուս ժողովուրդը, եթե չըլլար Կարմիր Բանակը, եթե տակավին օգնության ձեռք մը սպասենք Արևմուտքեն...

«Աչքերս դարձուցի դեպի Եվրոպա: Անիկա գլխուն վրա կը կրեր քաղաքակրթության լուսապսակը, ձեռքին ուներ ջահ մը ու բերանը կը հեղեղեր Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն բառերը: Կարծեցի, թե իմ և իմ եղբայրներուս փրկության հրեշտակը պիտի ըլլա ան. բայց ի՜նչ հուսախաբություն: Անիկա դահիճներուն հետ եղբայրացավ, անոնք բավական հարուստ էին իր թաթը յուղոտելու համար, և անգոսնեց զոհերը, որոնք շատ աղքատ էին՝ հագեցնելու համար իր ընչաքաղցությունը»:

Անցյալ դարու վերջին՝ ութսունական թվականներուն, այս տողերը գրած է պոլսահայ գործիչ Մինաս Ջերազը, որ ժամանակին հայկական դատին համար աշխատած է՝ ի զո՛ւր օգնություն հայցելով «քաղաքակիրթ» ու «քրիստոնյա» Եվրոպայեն:

---

* Ըստ այլ ավանդության՝ Մշո **Ճառընտիրը** փրկել են հայ երկու կին (**Խմբ.**):

Լավ ծանոթ է մեզի, թե մեր պատմությունը լեցուն է դառն փորձություններով ու անվերջ նահատակություններով: Հայ ժողովուրդը՝ միամիտ ու անփորձ, պահ մը սխալ տեսողությունը ունեցավ հուսալու, թե ապրանք վաճառող կամ նախանյութ փնտռող դրամատիրական մեծ պետությունները պիտի իրականացնեն հայ ժողովուրդի կյանքի և ինչքի ապահովությունը և նույնիսկ պիտի վերականգնեն Հայաստանի ազատությունն ու անկախությունը: Սակայն այդ բոլոր «բարեկամությունները», բոլոր խոստումները նորանոր աղետներու ազդակներ դարձան: Մեկ կողմեն՝ հայ ժողովուրդի վրա տիրող հետադիմական, բռնապետական, սուլթանական և ցարական դաժան կարգերը, մյուս կողմեն՝ դրամատիրական մեծ պետություններու մրցակցություններն ու դիվանագիտական դավերը մեր ժողովուրդը հասցուցին անդունդի եզերքը: Մետասաներորդ ժամուն էր, որ հայ ժողովուրդը փրկվեցավ վերջնական բնաջնջումե, փրկվեցավ շնորհիվ իր ապրելու հավատքին, իր տոկալու ուժին և իր զավակներու զոհաբերության ոգիին, բայց, մանավանդ, շնորհիվ ռուս ժողովուրդի անշահախնդիր, եղբայրական օգնության և Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության պատմության բեմին վրա բերած նոր սկզբունքներուն, նոր գաղափարներուն: Մեծ Հեղափոխությունն էր, որ առաջին անգամ ըլլալով պատմության մեջ, հռչակեց ու իրագործեց համայն մարդկության դարավոր իղձը, թե մարդը մարդուն հավասար է, ու ժողովուրդը ժողովրդին՝ եղբայր, և ընկերային ազատագրման հետ միասին հայ ժողովուրդին ևս բերավ ազգային–քաղաքական ազատագրում:

***

Մեր տխուր անցյալը այլևս պատմության կը պատկանի վերջնականապես, անդառնալիորեն: Այսօր հայ ժողովուրդը ո՛չ աղքատ է, ո՛չ տկար է և ո՛չ ալ մինակ: Այս մխիթարիչ իրողությունը հայ ազգը կը զգա մանավանդ հայ հողին վրա՝ Սովետական Հայաստանի մեջ: Արտասահմանի հայերը միանգամ ընդ միշտ պետք է լավ գիտնան, թե միայն Սովետական Իշխանությունն ու միայն ռուս ժողովուրդն են գերագույն գրավականները մեր ազգի կենդանության, մեր հայրենիքի վերաշինության ու խաղաղ առաջդիմության, հայ ժողովրդի ոսկի ապագային իրականացման:

Հայրենի կենդանությունն ու խաղաղությունն մեզ համար վեր է, քան ամեն ճշմարտություն: Հայրենի խաղաղությունն ու կենդանությունն համագումարն են բոլոր ճշմարտություններու:

Ոչ մեկ ճշմարիտ հայ, ուր ալ գտնվի ան՝ հայրենիքեն ներս թե դուրս, տարբեր չկրնար մտածել ու զգալ: Ոչ մեկ սխալ տեսողության հնարավորություն գոյություն չունի այլևս: Բոլորված Սովետական Հայաստանի շուրջ, լուսավորված հայրենասիրական զգացումներով՝ ամբողջ մեր ժողովուրդը, ամբողջ հայ գաղթաշխարհի հայրենասեր զանգվածները, ի մի ձուլված, առաջնորդված պետք է ըլլան մեր ազգային բարձր շահերու գիտակցությամբ:

Կա մե՛կ հայ ժողովուրդ, կա մե՛կ հայ հայրենիք, կա մե՛կ կամեցողություն և պայքարի մե՛կ դրոշ: Մեր բոլոր ճանապարհները դեպի Երևան կը տանին՝ դեպի մեր Սովետական Մայր Հայաստանի ծաղիկ մայրաքաղաքը:

***

Երեկո մը՝ էջմիածնեն վերադարձին, մեր օթոները առաջացան Աբովյան պողոտայեն դեպի վեր: Բարձրացան Սևանա լիճ տանող ասֆալթապատ, օձապտույտ ճամբով և հասանք Ստալինի հսկայակերտ Մոնումենտ քանդակին մոտ, որուն ստորոտը կը տարածվի ամբողջ Երևանը: Գիշեր էր: Բարձունքեն կդիտեինք Երևանը: Կախարդված էինք բոլորս՝ ի տես այն հոգեզմայլ, հոյակապ տեսարանին, որ կը պարզվեր մեր աչքերուն առաջ: Երևանը լույսերու մեջ, ծով լույսերու մեջ կը շողար անծայրածիր տարածության

մը վրա՝ մինչև հորիզոնները հեռավոր: Լույսերու ալիքները կը բարձրանային մինչև երկինք: Երկնակամարի աստղերն ալ անհունի մեջ կարծես ցոլացումը ըլլային Արարատյան դաշտի վառ լույսերուն:

Քաղցր, անանուն հուզումներ հորձանահոս կ՚ողողեին մեր հայու հոգիները, մեր պանդուխտ հայու հոգիները: Սրտատրոփ ու լուռ, երկար մնացինք հոն ու հափշտակված դիտեցինք՝ առանց հագենալու: Ժամանակը կանգ էր առած այդ գիշեր...

Հոգվույս մեջ ձայն մը ծիլ արձակած մեր շարակնոցեն կերգեր. «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

ԱԼ ՏԵՂԵՍ ՉԵՄ ՇԱՐԺԻՐ

Հայրենադարձ հայը կը պատմե...

1948–ին եկանք Հայրենիք: Հայրենաբաղձության ու երջանկության մեր բուռն զգացումներուն շուտով սկսան խառնվիլ բազմաթիվ հարցեր: Նոր խնդիրներ, նոր հարցեր, զոր մեր սկզբնական ոգևորության մեջ չէինք կրցեր տեսնել, նախատեսել, բայց այժմ մեր առաջ կդրվեին անխուսափելիորեն և լուծման կը կարոտեին:

– Ո՞ւր հաստատվինք՝ Երևա՞ն, թե՞ մեկ ուրիշ կեդրոն:

– Ի՞նչ գործի ձեռնարկենք, ի՞նչ աշխատանք ընտրենք:

– Առանձին բնակարան վարձե՞նք քաղաքին մեջ, թե՞ մեր սեփական տունը «սարքենք» պետության տված վարկով:

– Ո՞ւր, ո՞ր թաղամասը կառուցանենք մեր տունը:

–Ո՞ր դպրոցը արձանագրենք մեր աղջիկը: Ի՞նչ մասնագիտություն ընտրենք մեր տղուն, և տակավին այնպիսի անհամար հարցեր, որոնք հաճախ ընտանեկան ներքին վեճերու և նույնիսկ անհամաձայնություններու պատճառ կը դառնային:

Վերջապես որոշեցի ամեն գնով մեր սեփական տունը ունենալ: Ամբողջ կյանք մը՝ թափառական, ասդանդական կյանք մը ապրեր էի սփյուռքի մեջ: Իմ տունս չէի ունեցեր երբեք օտար երկինքներու տակ, չքավորության պայմաններու մեջ միշտ անապահով և հաճախ հալածական:

Սովետական Հայրենի Պետությունը ինձ տվավ հողամաս Նոր Արեշի մեջ՝ բնակարանիս կառուցման համար անհրաժեշտ գումարն ալ տրամադրելով որպես վարկ, երեսուն տարվա ընթացքին մաս առ մաս վճարելու պայմանով:

Այր ու կին ոգևորված, հպարտ և ուրախ, առտու մը կանուխ գացինք տեսնելու մեր «կալված»–ը Նոր Արեշի մեջ: Թիվ 4 հանրակառքի վերջին կայարանեն անդեն բավական մը քալելե հետո հասանք... Մեզի ըսին՝ ահա այստեղ է «Նոր Արեշ»–ը:

Բայց ո՞ւր է Նոր Արեշը, եղբայր: Ո՞ւր են շենքերը: Ո՞ւր են փողոցները: Ո՞ւր են բնակիչները...

Ոչինչ չէր երևար: Մեր աչքերուն առաջ կը տարածվեր պարզապես ամայի դաշտ մը: Վհատության զգացում մը կապարի պես նստավ սրտիս վրա: Կինս սկսավ լալ. «Ես այս լեռան գլուխը չեմ գար... Ես քեզ ըսի, բայց դուն քու խելքիդ հավնած ես, իմ ըսածիս կարևորություն չես տար... Ես վաղը կ՚երթամ ընկեր Բաբգեն Աստվածատուրյանին, թող մեզի շենք շնորհք տուն մը տան քաղաքին կեդրոնը...»

Բայց կնոջս արցունքները շատ շուտով չքացան, և իմ սրտիս կապարն ալ հալեցավ, վասնզի մենք մինակ չէինք: Մեզ հետ էին մեզ նման հարյուրավոր հայրենադարձներ: Մեզ հետ էր մանավանդ մեր հայրենի հարազատ պետությունը իր բոլոր նյութական, թեխնիքական միջոցներով: Մեզ հետ էր և մեր կողքին մեծահոգի Մոսկվան և ամբողջ Միությունը:

Եվ սկսանք գործի: Ապագա Նոր Արեշի պատկերը մեր աչքերուն, համաձայն նախատեսված ծրագրին, բոլոր հայ-

բենադարձներս տենդագին սկսանք շինել մեր տունները: Ամեն մեկս ստացանք շուրջ 400 քառ. մեթր հողամաս՝ 100–150 քառ. մ. շենքի, իսկ մնացյալը պարտեզի համար: Պետությունը մեզ տրամադրեց շինանյութ պետական ժամանակով, ձրի ատաղձ, աշխատող ձեռքեր և փոխադրական միջոցներ, իսկ Երևանի քաղաքային վարչությունը, շինարարական չտեսնված թափով մը սկսավ փողոցներ բանալ, ճանապարհները հարթել ու սալահատակել, խմելու ջուր և լույս բերել ու նաև պարտեզները ոռոգելու համար ջրաբաշխման հատուկ դրություն ստեղծել:

Քանի մը ամիս վերջ իմ տունս արդեն պատրաստ էր: Ճիշտ է, խոհանոցի և հարակից մասերու ներքին ծեփը լրացած չէր տակավին, սակայն կարելի էր փոխադրվիլ՝ մնացած աշխատանքները հետաձգելով գարնան: Առաջին անգամ ըլլալով իմ տունիս դուռը կղպեցի և շտապեցի Երևան՝ մեր առժամյա բնակարանը: Աշնան երեկո մըն էր անձրևոտ: Կինս ու երեխաներս մեկ սենյակի մը մեջ սեղմված կսպասեին ինծի՝ «արդյոք, վաղը պիտի կարենայի՞նք փոխադրվիլ» մտածելով: Հասա տուն, ներս մտա հաղթական և գոչեցի. «Վերջապես պատրաստ է, վաղը պիտի փոքադրվինք մեր տունը, Նոր Արեշ, փողոց 22–րդ, համար 16»: Եվ բնազդաբար, կարծես ես իմ ըսածին չհավատալով, ձեռքս տարի գրպանս: Հոն էր, այո՛, ստույգ էր: Հոգիիս բովանդակ ջերմությամբ ամուր սեղմեցի ափիս մեջ այդ երկաթյա փոքրիկ առարկան: Մեր նոր տունին բանալին էր...

Այսպես ահա հիմնվեցավ «Նոր Արեշ»–ը մեկ-երկու տարվան ընթացքին, մեր այս շեն ու ծաղկու «Նոր Արեշ»–ը, որ դուք այժմ կը տեսնեք: Իսկ սա իմ տունն է:

Այսպես պատմեց հայրենադարձ հայը... Եվ նույն է պատմությունը Նոր Կիլիկիայի, Նոր Զեյթունի, Նոր Արաբկիրի ու մյուս բոլոր նորակառույց ավաններուն և թաղամասերուն: Հուզիչ և ոգևորիչ է հերոսական պատմությունը հայրենիք վերադարձած շինարար հայուն:

Այդ պատմությունը կը սպասե իր վիպասանին:

***

Հաճախ առիթը ունեցա այցելելու Նոր Արեշը, ուր բազմաթիվ ռումանահայեր կընակին հունահայ, ֆրանսահայ, սուրիահայ հայրենադարձներու հետ միասին: Նոր Արեշը մեծ թաղամաս մըն է, թերևս մեծագույնը: Փոքրիկ քաղաք մը ըլլալ կը թվի՝ 45 կանոնավոր ուղիղ և լայն փողոցներով, ամեն մեկը շուրջ մեկ քիլոմեթր երկարությամբ: Հարյուրավոր, հազարավոր միհարկանի ու երկհարկանի բնակելի շենքեր՝ բոլորն ալ կառուցված գունավոր տուֆ քարերով, բոլորն ալ շրջապատված ընդարձակ պարտեզներով և բանջարանոցներով:

Այսօր՝ Հուլիս 1, 1951, հրավիրված եմ Մելքոն Յաղուպյանի տունը՝ Նոր Արեշ, 8-րդ փողոց, համար 55: Երևանի կեդրոնեն Նոր Արեշ գալու համար պետք է առնել երկու հանրակառք և ապա օթոպուս, որ մինչև այդ թաղամասը կ'երթա: Մելքոնը, սակայն, հակառակ իմ պնդումներուն «Բոպետա» մը վարձած է. չէ որ իր հյուրն եմ այսօր: Երեկոյան ժամը 6–ն է:

Նոր Արեշի փողոցներուն վրա եռուզեռ կա. աշխատավոր մարդիկ տուն վերադարձած են ու իրենց տնամերձ պարտեզին մեջ կը ճաշեն կամ կը խոսակցին: Շատ տուներու առջև խումբ–խումբ կիներ, հարևան կիներ, կը խոսակցին և հետաքրքրությամբ կը նային մեր «Բոպետա»-ին, որ հյուր է եկած իրենց թաղը: Եվ երեխաներ անհամար կը թռին ամեն կողմե, ամեն տունե, փողոցի ամեն անկյունե: Տոնական ջերմ ու մտերիմ մթնոլորտ մը կը տիրե ամենուրեք:

Մելքոնի կինն ու երկու երեխաները իրենց ազգականներով ու դրացիներով փառավոր ընդունելություն մը ըրին ինձ:

Մտա տունեն ներս: Մեծ ու բարձր, լուսավոր սենյակներ: Մեկ, երկու, երեք սենյակներ մաքուր, շատ մաքուր և կոկիկ կահավորված, նաև խոհանոց և հարակից մասեր. իսկ տունին ետև՝ դեպի պարտեզ, հանդստավետ «չարտախ»

մը, ուր և սարքված է ճոխ սեղանը: Մելքոնին ու Հայկուհին տան մեջ ամեն ինչ կարգին է, և չի պակսիր, ինչ որ անհրաժեշտ է: Մելքոնը կոշկակար է և արտելի մեջ կաշխատի. մեծ երեխան՝ Պողոսը, արդեն հասակ նետած հուժկու պատանի մը, էլեկտրոմոնթաժի տեխնիկումը կսորվի և երկու տարիեն պետք է ավարտե, աղջիկը՝ Արաքսին, տասնամյակը կը լրացնե առաջիկա տարի. ան մտադիր է սանիտարական ինստիտուտը արձանագրվելու: Իսկ Հայկուհին տան գործերով զբաղված է օրն ի բուն: Մելքոնը-հպարտությամբ ինձ ցույց կու տա իր սենյակներեն մեկուն մեջ սարքած «ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆ»-ը, որ գնահատումի առարկա եղած է բոլոր իր տունը այցելողներուն կողմե: Պատուհանին մոտ պատվավոր տեղ մը գրաված է նաև նոր գնած «Ուրալ» ռադիո գործիքը՝ սովետական թեխնիքի հրաշալիքներեն մին, որով Ցաղուպյանները կրնան ամբողջ աշխարհը ունկնդրել: Ճաշի ժամանակ մենք կը բանանք «Ռադիո-Պուքրեշ»-ը և կ'ունկնդրենք մեզի այնքան ծանոթ ու սիրելի ռումեն ժողովրդական երգեր:

Փոքրիկ պտույտ մը Մելքոնին պարտեզին մեջ: Այստեղ ան կը մշակե քանի մը տեսակ բանջարեղեններ՝ լուբիա, լոլիկ, բողկ, վարունգ, կաղամբ, դդում, սմբուկ, սոխ և այլն: Տնկած է նաև 8-10 պտղատու ծառեր՝ կեռասի, ծիրանի և դեղձի ծառեր, որոնք հաջորդ տարիեն սկսյալ պտուղ պիտի տան:

Կը նստինք «չարտախ»-ին տակ՝ սեղանին շուրջ: Բացառիկ ախորժակով կը ճաշակեմ պարտեզեն նոր փրցված թարմ բողկը, վարունգն ու լոլիկը: Կը խմենք «Ոսկեվազ»՝ խառնված «Գրեմ սոտա»-ով: Ճշմարիտ շամբանիա:

Ու մեր հայացքները սևեռած ալեփառ Արարատին՝ հոտնկայս բաժակ կը պարպենք Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի կյանքին ու երջանկության համար: Մելքոնը ներշնչված է, պահ մը լուռ մնալե հետո կը բացագանչե. «Ես բույնս չինեցի այստեղ՝ հայրենի կտուրի տակ, մեր Սովետական կառավարության հոգածության ներքև, ալ տեղես չեմ շարժիր»:

***

Այս նույն ոգիով, այս նույն հայրենասիրական գիտակցությամբ համակված են բոլոր հայրենադարձները:

Հյուր եղա բազմաթիվ ռումինահայերու մոտ: Ամեն մեկ նոր այցելություն իմ մեջ կ'աճեցներ ոգևորությունս և կ'ամրացներ հավատքս, թե մեր հայրենադարձ եղբայրներն ու քույրերը իրենց մայր երկրին մեջ գտած են ապահով, արդյունավետ ու երջանկ կյանք մը:

Ահա քարթոնաժի գործարանի վարիչ-վարպետ Կարպիս Գումրույանը, որ զմայլելի տուն մը շինած է Նոր Արեշ՝ գետակի ափին: Սիրված, գնահատված ու պարգևատրված, առաջավոր, նորարար վարպետ մըն է ան, որուն ռոճիկը կը բարձրանա մինչև ամսական երկու հազար ռուբլիի, գումար մը, որուն կիսով միայն Գումրույան ընտանիքը պիտի կարենար լավ ապրիլ: Վարպետ է նաև Տիկին Գումրույան՝ որպես տանտիկին, վասնզի իր պատրաստած իշխան ճուկի խորոված ը վեր էր ամեն գնահատանքե:

Հյուր եղա նաև Անդրանիկ և Վարդանուշ Յություճյանին, որ «Ունեվերմակ»-ի կերպարներու բաժնի վարիչն է. կը բնակի նույնպես Նոր Արեշ՝ սիրուն և ճաշակավոր կառուցված տունի մը մեջ՝ կողք կողքի ատաղձագործ Մինաս Հանըմյանի հետ, որ նույնպես լավ եկամուտ ունի՝ իբր վարպետ կարասիներու շինության արտելին մեջ: Տիկին Վարդանուշի պատրաստած սեղանը ևս կատարյալ էր իր ճոխությամբ ու որակով, և, մանավանդ, իր Պուքրեշյան շոքոլայե «թորթով»:

Չեմ կրնար մոռնալ այն ջերմ հյուրասիրությունը, զոր վայելեցի մի քանի անգամներ ուսուցիչ Արտաշես Տիրացյանի բնակարանին մեջ, ուր ան կը բնակի իր եղբոր՝ Գևորգ Տիրացյանի հետ միատեղ: Երկու եղբայր միասին երկհարկանի շենք մը կառուցած են Բաղրամյան պողոտայի վրա. ներքևը կ'ապրի Գևորգը, իսկ վերևը՝ Արտաշեսը:

Արտաշես Տիրացյան՝ Պուքրեշի Հայոց Վարժարանի սիրված ու հարգված նախկին տնօրենը, այսօր իր իտեալին

հասած հայ մտավորական մըն է: Ան ուսուցիչ է Երևանի օտար լեզուներու ինստիտուտի մեջ, իսկ իր երկու զավակները՝ Գևորգը, ուսանող պատմության ֆակուլտետին, և Գրիգորը՝ ուսանող ֆիզկուլտուրայի ինստիտուտը:

Այցելեցի նույն պողոտայի, այսինքն՝ Բաղրամյանի վրա կառուցված երկու մեծ շենքերը, ռումանահայոց երեք հարկանի պլոքները՝ ամեն մեկը 10–12 հարկաբաժիններով, զորս խումբ մը ռումանահայ հայրենադարձներ շինած են հավաքաբար:

Կոշիկի արդյունաբերության մեջ առաջավոր դիրքեր գրաված են ռումանահայերեն շատ շատերը՝ իբր որակյալ բանվորներ ու վարպետներ: Այս շարքին կը պատկանին ստախանովական Փանոս Մընտիկյանը, Աբրահամ Հայրապետյանը, Ավետիս Բոլատյանը, Թադեոսյանը և ուրիշներ: Հայտնի ստախանովական է խառատ Հակոբ Հակոբյանը, դեպուտատ Երևան քաղաքի, ինչպես և իր եղբայրը՝ Կ. Հակոբյանը:

Ռումանահայ հայրենադարձներեն գնահատված արհեստավորներ, առաջավոր աշխատավորներ են նաև ոսկերիչ Վարդան Պետրոսյանը, էլեքտրոմոնթյոռ Քեչեճյանը, գրաշար Կարապետ Բոլատյանը, գլխարկագործ Գալայճյանը և տակավին շատ–շատեր: Բոլորին հետ տեսնվեցա, գրեթե բոլորին բնակարանները այցելեցի և այնքան քաղցր, անմոռանալի ժամեր անցուցի անոնց հետ:

Ամեն մեկը իր պատմությունը ունի, և ամեն մեկին պատմությունը նման է մյուսին. պատմություն մը՝ սկզբնական դժվարություններու և խարխափումներու, պատմություն մը՝ աշխատանքի և հաջողության:

Ցնցող տպավորություն թողուց իմ վրա նախկին որբի մը կյանքի պատմությունը: Ճանչցած էի զինքը հարևանցիորեն մոտ քսան տարի առաջ Պալչիքի մեջ: Անունը Վարդան Գունտուրաճյան, բնիկ Ատաբազարցի, իր ծնողքը և իր բոլոր հարազատները կորսնցուցած աքսորի մեջ և բերված որպես որբ Ռումանիա 1922–ին: Որբանոցը փակվելեն վերջ՝ պատանի հասակին, բախտը զինքը նետեր էր

Պալչիք, ուր կաշխատեր գորգաշինության աշխատանոցի մը մեջ՝ օրական իր հացը ճարելու ի խնդիր: 1946–ի կարավանով ներգաղթեր էր հայրենիք: Առավոտ մը ինձ այցելեց «Ինտուրիստ» հյուրանոց ու պատմեց իր կյանքը, իր հին կյանքը և իր նոր կյանքը: Պատմեց ինձ, թե ինչպես Տեր–Զորի մեջ թուրք դահիճները իր ծնողքը, իր բոլոր սիրելիները մեծ խումբ մը տարագիր հայերու հետ միատեղ հրացանազարկ մեռցուցած են, և ինք՝ փոքր երեխա, հրաշքով չէ մեռած: Մի քանի դիակներու տակ մնալեն հետո դուրս եկած է այդ դժոխային վայրեն ու թաղնված. 17 օր շարունակ թափառած է՝ փախուստի ճամբաներ որոնելով, 17 օր շարունակ չոր խոտով սնանելով: Ի վերջո հաջողած է կյանքը փրկել ու ապրիլ մինչև զինադադար: Ապա՝ որպես որբ, բերված է Պոլիս ու անկե ալ Ռումանիա: Վարդանը քարի պես տոկուն, առողջ ու կենսուրախ երիտասարդ մըն է այժմ: Երևանի մեջ նոր մասնագիտություն մը ձեռք բերած է կաշեգործության գծով և արդեն վարպետի աստիճանի է հասած: Ամսական 1500–2000 ռուբլի կը շահի: Ամուսնացած է և ունի երկու երեխա: Վարդանը ավելցուց. «Լավ ըրի, որ եկա. լավ ըրի, որ ոմանց «բարեկամական» խորհուրդին մտիկ չտալով՝ եկա Սովետական Հայաստան: Իմ ամբողջ գերդաստանես միայն ես էի վերապրող, և շատոնց ի վեր ուխտս էր իմ ընտանիքը ստեղծել մայր երկրի հողի վրա՝ իմ նահատակ ծնողացս հիշատակին: Ես չէի ուզեր կորսվիլ: Երջանիկ եմ, որ ուխտս կարողացա կատարել»:

***

1945–ին հուզիչ և ոգևորիչ էր տեսնել սփյուռքեն եկած հայերուս համար, թե ինչպե՜ս ափ մը չարքաշ ժողովուրդ՝ հայրենանվեր ու անձնուրաց վարիչներու առաջնորդությամբ, հերոսական ճիգերով, բազում դժվարություններ հաղթահարելով հաջողեր էր ստեղծել նոր երկիր մը, նոր հայրենիք մը ամենայն հայոց համար: Բայց նույնքան հու-

զիչ և ոգևորիչ եղավ ինձ համար հաստատել, թե ինչպես երեկի թափառական, ուղեկորույս և հաճախ հալածական գաղթահայը, այսօր իր հարազատ երկրի մեջ, իր մայր ժողովրդի ծոցին մեջ գտած է վերջապես իր կյանքի նպատակը, կը սնանի նույն հայրենասեր ու շինարար ոգիով, զբաղված է նույն «քարեն հաց հանելու» կամքով, և, երախտապարտ Սովետական Հայրենական Իշխանության, իր բոլոր ուժերը ի սպաս կը դնե ու կը մասնակցի Սովետական նոր աշխարհի կերտման՝ ինչպես բնիկ Հայաստանցին:

Տարակույս չկա, թե սփյուռքն ալ կրնա հպարտ ըլլալ իր հայրենադարձ զավակներով: Մեր Հայրենիքին մեջ այսօր բնիկն ու հայրենադարձը գրեթե չեն զանազանվիր: Այլևս չկան տեղացիներ և եկվորներ, չկան կուսակցություններ, չկան հակամարտ դասակարգեր, չկան ազգամիջյան խտրություններ:

Կա մեկ սիրտ, կա մեկ հոգի, մեկ ժողովուրդ, մեկ աշխատանքի ճակատ, պայքարի մեկ դրոշ՝ հանուն հայ հայրենիքի վերաշինության, հանուն Սովետական մեծ Հայրենիքի կառուցման ու զորացման, հանուն համայն աշխարհի վերջնական խաղաղության ու ժողովուրդներու եղբայրության:

ԱՅՍՏԵՂ ԿԸ ԿԵՐՏՎԻՆ ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Առաջին առավոտը Երևանի մեջ. օրն է չորեքշաբթի, 28 մայիս, 1951:

Առաջին այցելուները կը բարձրանան Ինտուրիստի 103 համարը: Ահա ծանոթ դեմքեր՝ երիտասարդ, զվարթ, կայտառ դեմքեր իմ նախկին աշակերտներեն՝ Վահե Դանիելյանը, Սիրակ Սարյանը, Գևորգ Տիրացյանը, Անահիտ և Կայծակ Աթանասյանները, Մասիսն ու Տիգրանը, Քեչյան Արամը, Հակոբ Առաքելյանը, Գոլանճյան Սուրենը, Բրաբիկ Գալայճյանը և ուրիշներ հաջորդաբար կու գան ինձ բարի գալուստ մաղթելու և պատմելու իրենց ուսանողական կյանքեն, իրենց հաջողություններու և ապագա ծրագիրներու մասին: Բոլորն ալ կ՚ուսանին Երևանի Համալսարանի զանազան ֆակուլտետներու մեջ. բոլորը լավ սորվող դերազանցիկ ուսանողներ են, և որպես այդպիսիներ պետական թոշակ կստանան ամսական 250–են 400 ռուբլի: Հպարտ եմ այս մեր ծաղիկ երիտասարդությամբ: Կը խորհիմ՝ ահա թանկագին պարգև մը հայրենիքին՝ Ռումանահայ գաղութին կողմե:

Հայրենադարձ ուսանողները կը պատմեն ոգևորությամբ, իրենց համալսարանական կյանքեն, սկզբնական մեծ դժվարություններու մասին, մանավանդ, լեզվի տեսակետեն և իրենց համառ աշխատանքի մասին՝ տիրապետելու համար մայրենի լեզվին և յուրացնելու համար ռուսական լեզուն, որ այնքան օգտակար է գիտության և գրականության մեջ: Կը պատմեն իրենց ուսուցիչներուն բարյացակամ վերաբերմունքի և իրենց տեղացի ընկերներու սիրալիության մասին և վերջապես կը խոսին իրենց առաջիմության ու ապագային իրենց առջև փայլուն հեռանկարներու մասին:

Ամեն մեկի պատմածը վերին աստիճանի հետաքրքրական է ու խանդավառող, և ցույց կու տա, թե ինչպես սովետական կյանքի մեջ երիտասարդ ուժերը, ընդունակները առաջ կը քաշվին և կը գնահատվին. ամեն հնարավորություն ունին առաջդիմելու, կատարելագործվելու և աստիճան առ աստիճան բարձրանալու ուսման ասպարեզի մեջ մինչև բարձրագույն ուսում, և ապա համապատասխան աշխատանքի տեղ մը գրավելու կյանքի մեջ:

Մեր հայրենադարձ ուսանող երիտասարդությունը այնքա՜ն կերպարանափոխված է իր Սովետական Հայրենիքին մեջ: Իրոք որ, այստեղ նոր մարդիկ դարձած են անոնք: Ահավասիկ Սիրաք Սարյանը: Կը հիշեմ զինքը 18 տարի առաջ՝ որպես աշակերտ Պուքրեշի հայոց վարժարանին՝ տժգույն, նիհար, երկչոտ երեխա մը՝ խոշոր, սև, ուշիմ աչ-

քերով: Հորմե որբ էր. մայրը՝ չքավոր կին մը, իր չարքաշ ձեռքերով հազիվ կրնար չոր հաց մը ճարել իր անպաշտպան զավկին համար: Սիրաք հայոց նախակրթարանը սորվեցավ հազիվ չորս–հինգ տարի և ապա ստիպվեցավ հոս ու հոն աշկերտ երթալ դրամ շահելու և նեցուկ դառնալու համար իր մոր: Ոչ ոք չօգնեց իրեն: Այդ օրերուն կյանքի դաժան պայմանները խեղդեցին իր մեջ ուսման տենչը:

Բայց այս տենչը բոլորովին չիջած չէր իր հոգիին մեջ: 1946–ին առաջին կարավանով հայրենիք եկավ, որպեսզի նոր կյանք մը սկսի այս նոր աշխարհին մեջ՝ իր հարազատ հայրենի հողին վրա, որուն մասին շատոնց ի վեր այնքան հրաշալի բաներ լսեր էր: Նախ հաստատվեցավ Կիրովական և որպես պարզ բանվոր մտավ քիմիական կոմբինատի մեջ: Նոր կյանք, նոր աշխատանք, նոր մարդիկ, նոր հեռանկարներ: Այստեղ Սիրաք շուտով նկատեց, թե աշխատելով հանդերձ ֆաբրիկային մեջ՝ միաժամանակ պիտի կարենա իր սորվելու ծարավը հագեցներ: Ան մշակեց իր ծրագիրը ու որոշեց գիշերային դասընթացներու հետևիլ՝ լրացնելու համար նախ իր տասնամյա ուսումը: Համառորեն կարդաց, սորվեցավ և երեք տարի վերջ կրցավ ներկայանալ Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի քննություններուն: Սիրաքին ծրագիրը հաջողությամբ պսակվեցավ, և ան դարձավ համալսարանական ուսանող: Այս ծրագիրը իրագործված էր շնորհիվ իր անդուլ աշխատասիրության, շնորհիվ իր աշխատանոցի վարիչներուն քաջալերանքին ու օժանդակության, շնորհիվ Հայրենի պետության ընձեռած բազում դյուրություններուն: Երկու տարի վերջ Սիրաք Սարյան պիտի դառնա մեքենագետ ինժիներ իր ռումանահայ ընկերներու՝ Վահե Դանիելյանի և Արամ Շլուկյանի հետ միասին:

Սիրաք ամուսնացած ալ է և ունի սիրունիկ երեխա մը:

Ռումանահայ երիտասարդները փայլուն տեղ կը գրավեն նաև Օտար Լեզուներու Ինստիտուտի մեջ: Տիգրան և Մասիս Մանուկյան եղբայրները, Կայծակ Աթանասյանը, Հակոբ Առաքելյանը, Թորամանյանը ծանոթ դեմքեր են արդեն և կը պատրաստվին առաջիկա տարի պաշտոններ

ստանձնել Սովետական Հայաստանի զանազան տասնամյա դպրոցներուն մեջ՝ որպես ֆրանսերեն լեզվի ուսուցիչներ: Պատմագիտության ճյուղին կը հետևին գերազանցիկ ուսանողներ. Սուրեն Գոլանճյան արդեն իսկ քանի մը լուրջ աշխատություններ ներկայացուցած է, որոնք գնահատված են, և ինքը՝ հեղինակը, նյութապես պարգևատրված: Վերև հիշված ուսանողներեն ոմանք մտադիր են ներկայանալու նաև ասպիրանտուրայի քննության՝ ապագա համալսարանի փրոֆեսորության թեկնածուներ դառնալու նպատակով: Այդ պարագային պետական հոգածությամբ կ՚ուղարկվին անոնք Մոսկվա կամ Լենինկրատ՝ իրենց մասնագիտության մեջ կատարելագործվելու համար աշխարհահռչակ սովետական մեծ ուսուցչապետներու խնամքին ներքև: Գեղարվեստի ինստիտուտներու մեջ ևս ներկա են ռումանահա երիտասարդ հայրենադարձները: Անահիտ Աթանասյան խոստումնալի ուժ մը նկատված է արդեն Երևանի Կոնսերվատորիայի մեջ, և հավանաբար մեկ քանի տարի հետո Սունդուկյան թատրոնի բեմին վրա զինք պիտի ծափահարեն Երևանցիները: Երաժշտության բաժնին կը հետևին տաղանդավոր Բրաբիկ Գալայճյանը, Ղարիպյան քույրերը, Սարգիս Ժամկոչյանը և ուրիշներ:

Մեր երիտասարդներեն ինձ այցելեցին նաև մարմնակրթանքի, սպորտի հետևող ուսանողներ Գրիգոր Տիրացյանը, Մինաս Գաբրիելյանը, Գարեգին Գաղանճյանը և արդեն հռչակավոր դարձած սեղանի թենիսի չեմպիոն՝ Հարություն Հակոբյանը: Ծանոթ է արդեն, թե Հակոբյան շահեցավ նաև ամբողջ Սովետական Միության չեմպիոնի փառավոր տիտղոսը:

Ռումանահայ երիտասարդ սպորտսմենները հպարտությամբ հիշեցին իրենց փայլուն հաջողությունները ոչ միայն ռեսպուբլիկական, այլ նաև համամիութենական մրցումներուն, ինչպես՝ Թալինի, Թբիլիսիի, Պաքուի, Ռոստովի և այլ կեդրոններու մեջ:

Հակոբյան արդեն մարզիչի տիտղոս ստացած է և 1951–ի այդ օրերուն որպես մասնագետ մարզիչ Թբիլիսի հրավիր-

ված էր երկու հազար ռուբլի ռոճիկով՝ չհաշված բնակութ-
յան և ապրուստի բոլոր ծախքերը, որոնք պիտի հոգացվին
Վրաստանի քույր կազմակերպությանց կողմե:

Խիստ հետաքրքրաշարժ էր Գազանճյանի պատմածները,
թե ինչպես մասնակցած է Արագածի վրա կատարված ար-
շավին 1950-ի ամրան, և ուր գետեղած են Սովետական
Միության սիրված Մեծ Առաջնորդի պրոնզյա կիսանդրին,
հոն՝ վերը՝ Արագածի երկնամերձ կատարին վրա: Գազանճ-
յան ավելցուց. «Կկարծեմ, թե աշխարհի վրա չտեսնված հո-
յակապ տեսարան մըն է Արագածի կատարեն դիտել մյուս
հսկան՝ Արարատը»:

Արևմտյան երկիրներու պայմաններուն մեջ, անտարա-
կույս, այս երիտասարդությունը հեռու պիտի ըլլար բարձ-
րագույն ուսում ստանալու հնարավորութենեն:

Մեր Սովետական Հայրենիքի մեջ սորվելու, ուսանելու,
կարդալու տենչը անհամեմատ չափերու հասած է: Երկրին
մեջ տիրող ընդհանուր մթնոլորտն է, որ մեր երիտասարդ-
ները վարակած է և ոգևորած:

Խոսակցության մը ընթացքին, օր մը, երևանցի ուսանո-
ղուհի մը ինձ կ'ըսեր. «Մեզանում, աղջիկ թե տղա, որ
բարձրագույն ուսում չունենան իրանց անհարմար են
զգում»:

Ուրեմն բոլորի իտեալն է սորվիլ, սորվիլ, շատ սորվիլ և
լավ սորվիլ: Ուսման այս ազնիվ մարմաջը կարդացի ես
մանավանդ երկու ռումանահայ երիտասարդներու դիտակ-
ցության մեջ, որոնք, հակառակ որ տարիքով երեսունի մո-
տեցած են և նախքան հայրենադարձը ուսանելու չէին
մտածեր, այժմ Երևանի մեջ վճռած են իրենց «ճակատագի-
րը փոխել»՝ բարձրագույն կրթություն ստանալով, մասնա-
գետի տիտղոս մը ձեռք բերելով:

Առաջինը, որուն մասին կ'ուզեմ խոսիլ, Հակոբ Պարտիզ-
պանյանն է՝ ներգաղթած 1946-ին, այժմ պաշտոնյա Երևա-
նի երկաթուղային մեծ կայարանը: Կը հետևի դիշերային
կուրսերու: Ուշիմ ու կամքի տեր այս երիտասարդը արդեն
երկու տարիեն պիտի դառնա մեքենագետ ինժիներ: Զիս

հրավիրեց իր տունը՝ Նոր Արեշ, ցույց տվավ իր մեքենաշի-
նագիտական աշխատությունները, իր «փրոյեքտ»-ները,
իր թեխնիք գծագրությունները, որոնցմե ես քիչ բան կը
հասկնայի և սակայն լավ կը զգայի, թե ՆՈՐ ՄԱՐԴՈՒ մը
առջև կը գտնվիմ: Պարտիզպանյան, համեմատելով իր անց-
յալի կյանքը իր այսօրին հետ, կ'ըսե. «Տեսեք մենք այնտեղ
կը կորսնցնեինք «դրամ շահելով» և թեթև զվարճություն-
ներով: Այնտեղ՝ դրամատիրական կարգերու տակ, մեր
կյանքը բանավոր նպատակե զուրկ էր և հորիզոն չուներ:
Այստեղ աշխատանքի և ուսումի աշխարհ է: Այստեղ աշ-
խատելու և ուսանելու նոր իտեալ մը հրդեհեց էությունս:
Վճռեցի օգտվիլ այս պայմաններեն և բանի մը հասնիլ, ա-
ռաջավոր մասնագետ մը դառնալ և ծառայել հայրենիքիս,
ծառայել մեր Սովետական մեծ հայրենքին, իմ բոլոր ուժե-
րովը: Ճիշտ է, թե ինձ համար դժվար է ամբողջ օրը աշխա-
տիլ կայարանը և դիշերներն ալ սորվիլ: Տեսեք՝ ինչքան
նիհարցած եմ, սակայն ոչինչ, երիտասարդ եմ, մեկ-երկու
տարի ևս կը տևե այս դժվար շրջանը, ու ես կը հասնիմ իմ
նպատակին, իմ կյանքի մեծ նպատակին: Ըսեք Պուքրեշ
ինձ հարցնողներուն, թե ես նոր մարդ մը դարձած եմ»:

Ահա և Մուրատ՝ Քոնսթանցացի սափրիչ Մուրատը: Ե-
րիտասարդ մը, որ նույն ապրումներով տոգորված է: Թեև
կին ու երկու երեխաներ ունի, և որպես սափրիչ բավարար
դրամ կը շահի իր տունը պահելու համար և սակայն ինք
ևս վարակված է ուսման ծարավեն և վճռած է դուրս գալ
«անհարմար» վիճակեն, վճռած է հետևիլ ուրիշներու օրի-
նակին, հետևիլ գիշերային կուրսերու, ապա բարձրագույն
ուսում ստանալ և դառնալ ինժիներ: Ինձ կը հայտնե, թե
առաջիկա աշնան պիտի արձանագրվի գիշերային դպրոցի
դասընթացներուն:

Սովետական Հայրենիքը, սովետական ընկերային կյան-
քը շատ բան փոխած է հայրենադարձ մեր երիտասարդութ-
յան հոգեբանության մեջ: Հայրենի երկրի ոգեշունչ մթնո-
լորտը, սովետական կյանքի առաջդիմասեր ընթացքը, գի-
տության ու մշակույթի պաշտամունքը, չինելու, կառուցա-

նելու բուռն թափը, քաղաքացիական նոր գիտակցությունը, այս բոլորը ահա միատեղ, այլափոխած, պայծառակերպած են մեր երիտասարդությունը:

Մեր Նոր Հայրենիքն է, որ կը կերտե նոր մարդիկ, նոր հայեր:

ՀԱՄԱՐ 103-Ի ՊԱՏՇԳԱՄԻՆ

«Ինտուրիստ» հյուրանոցի համար 103–ը իմ բնակարանն է Երևան: Մաքուր ու վայելուչ կահավորված երկու սենյակներ, առանձին լոգարանով և այլ ամեն հարմարություններով: Տաք ջուրի սպասարկություն ամեն երեկո: Սեղանիս վրա հեռաձայն և ռատիո: Սպասարկողներն ու ճաշարանի մատուցողները վերին աստիճանի ուշադիր, մաքուր և բարեկիրթ: Գրեթե ամեն օր առաջին հարկաբաժնի վերակացու «խազայքա» Եվփիմեն ինձ կդիմե՝ հարցնելով «Սրբազան ո՞նց էք. որևէ դժգոհություն չունե՞ք. ամեն բան կարգի՞ն է, մի որևէ բանի, որ կարիք ունենաք, խնդրում եմ հայտնեք մեզ»:

Ընտանեկան մտերիմ հոգածության մթնոլորտ մը կը տիրե հյուրանոցին մեջ: «Ինտուրիստ» ունի իր ճաշարանը, իր վարսավիրանոցը, իր բուժարանը, իր դերձակատունը, իր գրադարանը և իր կոշիկ ներկողը՝ դուրսի դրան մոտ:

Անտարակույս, համար 103–ի ամենահաճելի տեղը՝ պատշգամն է, որ դեպի Աբովյան պողոտա և Կինո Մոսկվայի հրապարակը կը նայի: Ճիշտ է, Արարատը չտեսնվիր իմ պատշգամեն, սակայն փոխարենը դեպի ձախ՝ հորիզոնին վրա, փառավոր կերպով կը տարածվի խորհրդավոր Արագածը իր չորս ձյունապատ կատարներով: Իսկ դիմացս՝ Աբովյանի ուղղությամբ, Քանաքեռի բարձունքին վրա՝ Ստալինի հսկա Մոնումենտ քանդակը:

Ամեն առավոտ՝ լուսաբացեն առաջ, Աբովյանն ու հրապարակը կը մաքրվին, կը լվացվին ու կը զուգվին անաղմուկ կերպով: Առավոտ կանուխ փողոցներու վրա կարծեք փոշի անգամ չկա: Եվ կը սկսի եռուզեռը: Աշխատավոր մարդիկ կու գան ու կանցնին արագ քայլերով: Ինքնաշարժներ՝ մեծ ու փոքր, իրարու ետևէ կսուրան, հաճախ՝ բեռնավորված ապրանքատար մեքենաներ: Ահա նաև Երհացը, Երկաթը, Երմիսը, մեծ ինքնաշարժներ, որոնք առավոտ կանուխ հաց, կաթ և միս կբաշխեն Երևանի խանութներուն: Աբովյանի վրայեն հանդարտ կը սահի թրոլեյպուսը՝ զարդարված հարսի մը նման, ու կ՚երթա մինչև բլանի գլուխը, այսինքն՝ մինչև Աբովյանի վերջավորությունը, ուր սիրուն հրապարակի մը վրա զետեղված է մեծ հայրենասեր, անմահ ռահվիրա Խաչատուր Աբովյանի նորակերտ գեղատեսիլ մեծ արձանը:

Աբովյանի պողոտային ճշմարիտ փառքը, հետևաբար նաև իմ պատշգամի վայելքը, կը սկսի երեկոյան ժամը 6–են հետո և կը տևե մինչև գիշերվան 10–11–ը: Աբովյանը այսօր թեև մայրաքաղաքի գեղեցիկ ու լավ հարդարված պողոտաներեն մեկն է, սակայն կարելի չէ ըսել, թե ամենագեղեցիկն է և ոչ ալ ամենալայնը: Ընդհակառակը, նոր բացված մեծ պողոտաները շատ ավելի լայն ու փառաշուք են, սակայն Աբովյանը Երևանի շփացած զավակը կը շարունակե մնալ: Այստեղ է քաղաքի բնակչության պտույտի ամենասիրելի կեդրոնը, ամենահարազատ հանդիպավայրը: Եթե որ և է մեկ բարեկամդ փնտռել կ՚ուզես, ամենայն հավանությամբ երեկոյան զայն կը գտնես Աբովյանի վրա:

Աշխատանքի մարդիկ՝ բանվորներ, ծառայողներ, մտավորականներ, արվեստագետներ և մանավանդ երիտասարդ ուսանողներ ու պատանիներ՝ խումբ–խումբ կամ առանձին «ման են գալիս՝ խոսակցելով, զրուցելով կամ կատակելով»: Ամբողջ հրապարակը և փողոցը միշտ լեցուն են շարժող, հոսող բազմությամբ մը: Ամառ է և «շոգ» է: Բոլորը հագած են բարակ, բաց գույն՝ առհասարակ սպիտակա-

դույն հագուստներ, շապիկներ, ճերմակ դույնը կը տիրապետե մանավանդ տղամարդկանց վրա:

– Տեսեք սրբազան, ի՜նչ սպիտակ զանգված է. ի՜նչ հրաշալի տեսարան, տո ո՞րտեղ կարող էինք տեսնել էսքան հայ ի մի հավաքված, էսքան երիտասարդություն՝ ուրախ, զվարթ, կենսալի... ահա, սա է մեր ժողովուրդը, սա է մեր հայրենիքը, տեսնում էք:

Մեր հին բարեկամ, հայրենադարձ Գևորգ Եսիգարյանն է իմ պատշգամի անբաժան ընկերը, որ գրեթե երկու օրն անգամ մը զիս կ'այցելե, երբեմն միանակ, երբեմն Արտաշես Տիրացյանի հետ (այժմ Երևանի մեջ աշխատակիցներ են Օտար Լեզուների Ինստիտուտի մեջ, Տիրացյանը՝ որպես ուսուցիչ, Եսիգարյանը՝ որպես գրադարանապետ):

Պատշգամեն կը դիտեմ մեր ժողովուրդը: Գրեթե բոլորն ալ միջահասակ, բարեձև մարմիններով, նույնիսկ տարիք առած տղամարդիկ ու կիները՝ ուղիղ ու թեթև քայլվածքով, աշխույժ և արագ շարժումներով: Հարավի տաք մթնոլորտ, երբեմն նույնիսկ ջղայնոտ, սակայն համեմատաբար հանդարտ և ոչ աղմկալի: Փողոցին մեջ բարձրաձայն խոսակցություններ, բացականչություններ ի մի կը խմորվին և ներդաշնակ աղմուկ մը կը ստեղծեն: Այդ ներդաշնակությունը կը խանգարվի երբեմն շոֆեռներու ձայնով՝ «վռազ արա տո», «արի ստեղ», «տո դու լավ իմացիր, ես քեզանից վախեցողը չեմ» (իմ պատշգամեն ոչ հեռու՝ հրապարակին մեկ կողմը, ինքնաշարժներու կայան էր):

Պետք է վկայեմ, թե մոտ երեք ամսվա տևողության իմ պատշգամեն դիտելով ցերեկ և երեկո՝ երբեք ականատես չեղա որ և է անախորժ դեպքի, որևէ անպատշաճ երևույթի: Երևանի հայը շատ ավելի կարգապահ է և շատ ավելի զուսպ, քան գաղութներու մեջ, թեև չհավասարիր այս տեսակետեն Մոսկվայի ժողովուրդին, որ իր կեցվածքով ու վարքով հիացում կը պատճառե որևէ օտարական մարդու: Ուշադրավ էր ինձ համար երիտասարդներու և երիտասարդուհիներու ընկերական փոխհարաբերությունները: Ըստ-սա անոնց մեջ ոչ արևելյան ամչկոտությունը, բայց ոչ ալ սանձարձակ, սխալ կերպով «ազատ» կոչված արևմտյան

բարքերը: Այստեղ զգալի է, թե տղա ու աղջիկ հավասար ընկերներ են՝ իրար հարգող, ամեն մեկը իր ինքնասիրությամբ, իր անհատականությամբ: Անոնց առավել կամ նվազ մտերմությունը միշտ անպատշաճորեն չդրսևորվիր հանրության առջև:

Հաճախ առիթներ ստեղծեցի ոչ միայն հեռուեն դիտելու, այլ նաև անձամբ ճանչնալու և խոսակցելու Երևանի երիտասարդության հետ: Ամեն անգամ խոր մխիթարության զգացումով հաստատեցի հայ ուսանողի, հայ աշակերտի լրջությունը, գիտության նախանձելի աստիճանը, սորվելու անհագ ծարավը և, մանավանդ, մտածումի հասունությունն ու լայն հորիզոնը: Սովետահայ երիտասարդին համար կյանքը լուրջ բան մըն է և նպատակ մը ունի աշխարհի մեջ: Անոր համար կարծեք ուրիշ հաճույք գոյություն չունի, քան սովորիլը, նորանոր ու ընդարձակ ծանոթություն ամբարելը, տիեզերքը, ընկերային կյանքն ու մարդը հասկնալը. բաց աչքերով ան կը դիտե ամեն բան իրապաշտ ու համարձակ:

Գրեթե բոլորին վրա հանդարտ լրջություն մը կա՝ պարզ, բնական, ճշմարիտ, առանց հովեր առնելու, առանց երևակայական, առանց հիվանդագին հոգեկան բարդություններու:

Երևանցի հայուն մեջ պարզորոշ կը տեսնեմ հպարտության և շեշտված ինքնասիրության զգացումը, որոնք եթե չափավորության սահմաններուն մեջ մնան, հաստատակամ ընտիր նկարագրի մը հատկանիշները կը դառնան:

Երևանցին զգայուն է և սիրտը բաց, դյուրահաղորդ և շուտ մերձեցող, միշտ պատրաստ է օգնելու, սիրահոժար կերպով ծառայություն մը մատուցանելու: Երկու ջերմ խոսքով ու մաքուր ժպիտով մը կրնաս զինքը դրավել. անմիջապես կը սկսի հետդ խոսիլ «հա ջան»–ով, կարծես հին բարեկամներ ըլլայիք: Երևանցին դյուրազգաց ալ է, սակայն և հաճախ՝ դյուրաբորբոք, փոքրիկ անուշադրությամբ կամ անխոհեմ ակնարկով մը կրնաս զինքը վիրավորել, սիրտը կոտրել: Եվ վիրավորելե վերջ դժվար է անոր

վստահությունն ու համակրանքը վերստին սիրաշահիլ: Հայուն սիրտը դյուրաբեկ անոթի մը նման է:

Հայրենի վերածնության ու վերաշինության զգացումը Երևանցիի խարիսխ–զգացումն է՝ ամուր կերպով դրոշմված անոր գիտակցության մեջ: Ան հպարտ է իր այսօրվան նորակառույց մայրաքաղաքով: Ան կը խոսի Արարատի մասին, կառավարական պալատի մասին, պողոտաներու մասին, թատրոնի, օփերայի մասին, կարծեք թե իր անհատական սեփականությունն ու իր ձեռակերտ գործերը ըլլային: «Մենք ենք շինել», «Մենք ենք կառուցել», «Սա մեր քաուչուկի ֆապրիքան է»,– կ'ըսե Երևանցին, «մերն» է անշուշտ նաև Արարատը: Աներևակայելի է հայուն պաշտամունքը դեպի այս վեհատեսիլ լեռը: Հայաստանցի փոքրիկ մանուկին եթե ըսես լեռ մը գծե, ան կը գծագրե երկու լեռներ՝ մին մեծ ու մին փոքր, կողք կողքի:

Ամեն ինչ ժողովուրդի միահամուռ ճիգերով է, որ կը ստեղծվի, բոլորի գործակցությամբ, և ամեն ինչ ժողովրդի համար, ամեն ինչ բոլորի սեփականությունը: Սեփականացված են նաև առաջավոր մեծ մարդիկ: Հայաստանցին չըսեր միայն մեր «Մասիսը», մեր խաղողը, մեր քաուչուկը, մեր համալսարանը, այլ կ'ըսե նաև մեր Առաջնորդը, մեր վարպետը, մեր Սարյանը, մեր Հայկանուշ Դանիելյանը, մեր Ալիխանյանները և այլն:

Գերագնահատական գիտակցություն մը կ'իշխե բոլորի հոգիներուն վրա: Մարդիկ կ'ապրին հավաքականության զգացումին մեջ, հավաքականության շահերու գիտակցությամբ, իրենց մեծ հայրենիքի հպարտությամբ: Երևանի մեջ մարդիկ առանձին չեն. ամեն մեկի կյանքը իր կյանքով չսկսիր և ոչ ալ անով կը վերջանա: Անհատի կյանքը կը շաղախվի հավաքական կյանքին հետ և այնտեղ ժողովրդի կյանքին մեջ կ'ապրի հավիտյան:

Հայը իմ հայրենիքին մեջ չի կորսվիր:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հանդիպումներ Երևանի մեջ:

Հանդիպումներ՝ փողոցը, շուկան, հրապարակներու վրա կամ հանրային պարտեզներու մեջ:

Հանդիպումներ՝ կրթական, գեղարվեստական հաստատություններու մեջ, թատրոնը, օփերան, ֆիլհարմոնիան: Հանդիպումներ աշխատանոցներու, ֆապրիքաներու, բնակարաններու մեջ...

Հանդիպումներ՝ պաշտոնական առիթներով, ծանոթ և սիրելի դեմքերու հետ, պատահական հանդիպումներ պարզ ու անծանոթ դեմքերու հետ:

Երևանի ամեն մեկ շենքը, ամեն մեկ անկյունը, ամեն մեկ անցորդի նայվածքը նոր և հետաքրքրաշարժ հանդիպում մըն է, նոր ապրում մը, նոր ուրախություն մը:

Երևանյան հանդիպումներ... այնքա՜ն քաղցր հույզեր, իրականացած երազներ, հագեցած իղձեր, ծաղիկ կապած սերեր...

Հանդիպումներու վայր մըն էր ինձ համար նաև Կոլխոզշուկան, Երևանի նշանավոր Կոլխոզշուկան: Պետական հոգածությամբ կոլխոզնիկ գյուղացիներուն տրամադրված ընդարձակ հրապարակ մը՝ ոչ շատ հեռու Երևան քաղաքի կեդրոնեն՝ քարաշեն շենքերով և փայտաշեն սարքվածքներով օժտված, ուր մայրաքաղաքի մոտակա գյուղացիությունը իր բերքի արտադրության սեփական բաժինը կու գա վաճառելու ազատ գնով: Հսկա շուկա մըն է, ուր հազարավոր վաճառողներ և գնորդներ, բոլորը կենսալի տենդով համակված, կը ծախեն կամ կգնեն: Բազմություն, խճողում, իրարանցում, աղմուկ: Այդ բազմության հսկա ավազանին մեջ իմ պանդուխտ հայու հոգին հայրենական լոգանք կ'ընդունի:

Հայ գյուղացիներ և գեղջկուհիներ՝ հուժկու բազուկներով, առողջ, կայտառ դիմագծերով, խորաթափանց ու երբեմն չարաճճի նայվածքներով, ամեն մեկը իր գյուղի բար-

բառով ու շեշտով բարձրաձայն իր ապրանքը կը ներկայացնե՝ բանջարեղեններ, պտուղներ՝ պես-պես, գույնզգույն և առատ, անսահմանորեն առատ, բոլորը թարմ, մաքուր և գեղատեսիլ: Ամբողջ շուկան խնամված ու մաքուր է, կը վաճառվի գրեթե ամեն ինչ՝ բացի բանջարեղեններեն ու պտուղներեն, շուկայի ծածկված մասերուն մեջ՝ շենքերուն մեջ, կը վաճառվին միս, պանիր, կաթ, յուղ, ձու, հավ, մեղր, մածուն, սեր և այլն:

Այստեղ՝ գունագեղ, խայտաբղետ բազմության մեջ, այս աղմկալի խառնարանին մեջ, թերևս ավելի քան այլուր, կը լսեի ես հայ հողին ձայնը, կը շնչեի Արարատյան դաշտի բույրը...

Քանի մը անգամներ այցելեցի Կոլխոզշուկան և անոնպատակ, երկար թափառեցա բազմության մեջ: Օր մը կանգ առի ծաղկավաճառ պատանիի մը կողովին առջև՝ դիտելու համար վարդերն ու մեխակները: Երիտասարդ ծաղկավաճառը անմիջապես սկսավ իր ապրանքի գովքը հյուսել՝ ավելցնելով. «Համեցեք, հայրիկ ջան, ձեզ համար էժան կը տամ»: Ժպտալով թեթև մը գլուխս շարժեցի՝ ըսելով, թե ես տեղացի չեմ և գնելու չեմ եկած: Լսելով իմ խոսքերը՝ Երևանցի պատանին ձեռքի փունջը ինձ երկարեց և ըսավ. «Համեցեք, վերցրեք առանց փողի»: Ես պահ մը շփոթեցա ու ձեռքս գրպանս տարի վճարելու համար, սակայն անհնար եղավ: Ծաղկավաճառը չէր ուզեր դրամ առնել. չէ՞ որ հյուր էի: Իր ձայնը քիչ մը բարձրացնելով՝ ջերմաղերս ու ժպտադեմ բացականչեց. «Վերցրեք էլի, ախր մենք էլ հայ քրիստոնյա ենք»:

Փունջը առի և բերի հյուրանոց՝ սեղանիս վրա:

Երևանի անծանոթ ծաղկավաճառին վարդերը երբեք պիտի չթառամին հոգվույս մեջ...

***

31 հուլիս, 1951. Հանդիպում հայ գրողներու հետ: Երեկոյան ժամը 6-ին կ՚ուղղվինք դեպի գրողներու նորակառույց ակումբ-պալատը՝ Բաղրամյան պողոտայի վրա:

Ինչպես մեր մյուս այցելություններու առթիվ, այս անգամ ալ մեր խումբը կը բաղկանա արտասահմանեն ժամանած հոգևորականներե՝ Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Եղիշե Արքեպ. Տերտերյան, Գեր. Տ. Սուրեն Քեմանճյան, Գեր. Տ. Նորայր Եպիսկոպոս Պողարյան և այս տողերը գրողը՝ ընկերակցությամբ Սովետական Հայաստանի դավանությանց Խորհրդի նախագահ Հրաչյա Գրիգորյանի, Մայր Աթոռի ընդհանուր քարտուղար Հ. Ագուլյանի և Հոգևոր ճեմարանի տեսուչ փրոֆ. Մինասյանի: Գրողներու պալատը կարմիր տուֆե շինված է՝ բազմահարկ, գեղեցիկ, մեծ շինություն մը՝ սյունազարդ շքեղ մուտքով: Շենքը նոր է կառուցված և ներքին կահավորումը տակավին ավարտված չէ: Աշնան տեղի պիտի ունենա պաշտոնական բացումը: Մեզ կը դիմավորեն խումբ մը երիտասարդ գրագետ-գրագիտուհիներ ու մեզ կ՚առաջնորդեն նախագահի գրասենյակը: Գրողներու Միության նախագահ Ավետիք Իսահակյան բացակա է: Երկու օր առաջ մեկնած է օդափոխության՝ հյուսիսային Կովկաս: Կը հաշտվինք վարպետի բացակայության գաղափարով, վասնզի քանի մը օր առաջ զինքը փառավորապես վայելեր էինք «Արարատ» ճաշարանը՝ մտերմական սեղանի մը շուրջը, ու միասին ճաշակեր էինք Երևանյան համբավավոր Լուլե քեպապը: Գրասենյակի մեջ մեզ կ՚ընդունի մեր գրական մեծ դեմքերեն վաստակավոր վիպասան Դերենիկ Դեմիրճյանը: Ներկա են գրական քննադատներ՝ Ե. Թոփճյանը, Հրաչյա Գրիգորյանը, դրամատուրգ Տեր Գրիգորյանը և ուրիշներ:

Գրասենյակին մեջ ընդհանուր բնույթ կրող ջերմ խոսակցություն: Ապա կ՚այցելենք պալատի զանազան հարկաբաժինները և սրահները, մեծ ամֆիթատրոնը՝ բեմի և

ֆիլմի ցուցադրության հարմարություններով, առանձին պարապմունքներու համար աշխատանքի սենյակները, դրասենյակները և այլն: Տպավորիչ է մուտքի մարմարապատ սրահը և ամֆիթատրոնը: Ամեն կողմ առատ լույս, շատ առատ լույս, իսկական լույսի պալատ մը թե՛ բարոյական, թե նյութական իմաստով: Դերենիկ Դեմիրճյանի նախագահությամբ տեղ կ՚առնենք երևանյան բարիքներով լեցուն սեղանի շուրջ: Կը սկսվի բարեկամական, մտերմական զրույց: Հափշտակված կ՚ունկնդրինք մեր գրչի վարպետներու խոսքը զանազան գրական–գեղարվեստական ու ազգային–ընկերային հարցերու շուրջ:

Ինչքան տարբերություն մեզ ծանոթ հին տիպի գրականության և սովետական գրական նոր ըմբռնումներուն միջև: Ինչքան տարբերություն գաղութահայ գրողի խղճալի կյանքի և սովետահայ գրագետի նախանձելի կյանքի պայմաններուն միջև: Ծանոթ է բոլորին, թե Սովետական Հայաստանի գրականությունը, ինչպես առհասարակ սովետական գրականությունն ու գեղարվեստը, կը մշակվի ու կը զարգանա «սոցիալիստական ռեալիզմի» և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական հիմքերու վրա:

Հիմունքներ, սկզբունքներ, որոնց մասին այնքան թյուր հասկացողություններ տարածված են որոշ մարդկանց կողմե՝ ըլլա տգիտության հետևանքով, ըլլա դիտումնավոր չարակամությամբ: Ահա, մենք կը գտնվինք այս պահուս այդպիսի գրական մշակներու առաջ, որոնք իրենց բարձր կոչումը կ՚ըմբռնեն այդ ոգիով: Սովետահայ գրագետի ու արվեստագետի նպատակն է նաև կյանքը դիտել, հասկնալ ու զայն ներկայացնել այնպես, ինչպես ան կա արտաքին առարկայական աշխարհի մեջ՝ առանց շինծու, անիրական կերպարներ հորինելու, առանց ռոմանթիք թափառումներու, առանց մտացածին, կեղծ բաղդատություններ կամ հոգեկան հիվանդագին վիճակներ ներկայացնելու, ինչպես հաճախ այդ կը կատարեն արևմտյան որոշ գրագետներ՝ շահագործելով մարդկային տկարությունները: Ի հարկե, այլ բան է դուրսի աշխարհը, կյանքի երևույթները մարդ-

կայնացնել ու զգայականացնել (sensibilizare)՝ արվեստագետի զգայնության բովեն անցնելով, և այլ բան է իրականության զգացումը կորսնցնել, կյանքի ընթացքը չհասկնալ ու անկե հեռանալ, և իյնալ կեղծ հույզերու, աննպատակ թափառումներու և նույնիսկ հիվանդագին հոգեկան քոմփլեքսներու մեջ:

Պետք է ավելցնել սակայն, թե գրագետը, որ սոցիալիստական ռեալիզմի շունչով կը ստեղծագործե, ամբողջապես չեզոք դիրք մը չընդգրկեր կյանքի և մարդկային ընկերային երևույթներու, ժամանակակից կյանքը հուզող մեծ խնդիրներու նկատմամբ: Կյանքը հասկնալով ու ներկայացնելով ռեալիստորեն՝ գրագետը միաժամանակ պետք է նպաստե առաջդիմության, մարդկային կյանքի պայմաններու բարեշրջման և մարդու դաստիարակման: Ուրիշ խոսքով սովետահայ արվեստագետը ինք ևս իր արվեստով կը մասնակցի նոր ընկերության կառուցման, նոր մարդու կերտումին: Այս իմաստով է, որ սովետական արվեստագետը կը միջամտե, կ՚ազդե կյանքի վրա, և դեմ է «արվեստը արվեստին համար» կարգախոսին: Այս է իմաստը նաև Ստալինյան բնորոշումին, թե «գրագետը հոգիներու ճարտարապետ է»:

Ահա քանի մը խոսքով սոցիալիստական ռեալիզմի ըմբռնումը: Շատ պարզ ու բնորոշ է նաև մյուս սկզբունքը, որով գրական ստեղծագործութենեն կը պահանջվի հորինված ըլլալ ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական: Ոմանք ուզած են տեսնել անոր մեջ ապազգային և նույնիսկ հակազգային ոգի, ինչ որ բնավ համապատասխան չէ իրականության: Սովետական ըմբռնումը ոչ միայն հակառակ չէ ազգային նկարագրի արտահայտություններուն, այլ կը քաջալերե իսկ ու կը պահանջե, որ ամեն գրագետ, ամեն երաժիշտ, ամեն նկարիչ ներշնչվի իր ժողովրդի ստեղծագործության աղբյուրներեն, իր ժողովրդի ֆոլքլորեն, իր ժողովրդի ներկա կյանքի իրական պայմաններուն: Ահա վերին աստիճանի պերճախոս են հեղինակավոր խոսքերը Ստալինի. «Ամեն ժողովուրդ անխտիր՝ մեծ թե փոքր, իր մասնահատկությունները ունի, իր սպե-

ցիֆիքը, որ կը պատկանի միմիայն իրեն, և որ չի գտնվիր ուրիշ ազգերու մոտ: Այդ մասնահատկությունները կը հանդիսանան այն նպաստը, զոր ամեն մեկ ազգություն կը բերե համամարդկային մշակույթի գանձին՝ զայն ամբողջացնելով և ճոխացնելով: Այս իմաստով բոլոր ազգերը՝ փոքր թե մեծ, կը գտնվին իրարահավասար վիճակի մեջ և ամեն ազգ հավասար է որևէ ուրիշ ազգի»:

Արդյոք որևէ ժամանակ, որևէ մտածող բանաձևա՞ծ է այսքան ճշմարիտ, այսքան մխիթարիչ ու պատմության մեջ նոր լուսավոր ճանապարհ բացող մտածում: Մխիթարիչ ու սրտապնդիչ՝ մանավանդ մեզ նման փոքր ժողովուրդներու համար:

Մնաց, որ առհասարակ բոլոր գրական–գեղարվեստական մեծ գործերը, բոլոր ժողովուրդներու մեջ եղած են ձևով միայն ազգային, իսկ բովանդակությամբ՝ համամարդկային, միջազգային. ի հարկե, նոր կյանքը՝ սովետական ընկերային կյանքը, ստեղծած է նոր խնդիրներ և հետևապես նաև գրական նոր թեմաներ, նոր տենչեր ու նպատակներ, որոնք նոր բովանդակություն, արդիական կենդանի բովանդակություն կու տան սովետական գրական–գեղարվեստական ստեղծագործություններուն:

Մեր օրերու սովետահայ գրագետներու գլխավոր թեմաներն են.

ա. Սովետական նոր ընկերության մեջ ստեղծված կյանքի նոր երևույթները, միջմարդկային նոր փոխհարաբերությունները աշխատանքի մեջ, արդյունաբերության մեջ, կենցաղի և մարդկանց հոգեբանության մեջ:

բ. Նոր հայ մարդը՝ կառուցող, պայքարող, նորարար մարդը և երկրի վերաշինությունը:

գ. Նոր հայ գյուղը և գյուղացին հավաքական տնտեսության (կոլխոզի) պայմաններուն մեջ:

դ. Հայրենասիրությունը, խաղաղասիրությունը և միջազգային եղբայրության խտեալը:

Մեր գրագետներու ամենասիրելի թեմաները այսօր հայրենիքի վերաշինության, հայրենասիրության, աշխարհի խաղաղության և ժողովուրդներու եղբայրության վեհ գաղափարներն են: Հայ գրագետի կոչումն է աշխատանքի նոր մարդու կերպարը ներկայացնել գեղարվեստորեն՝ այսպիսով բարձրացնելու համար հայ աշխատավորության ընկերային–գաղափարական գիտակցության մակարդակը:

Հայ գրագետի կոչումն է նաև պողպատել հայ մարդու ազգային գիտակցությունը, հայրենասիրությունը՝ հին և նորագույն պատմության էջերեն կյանքի կոչելով հայրենանվեր հերոսներն ու սխրագործությունները, որոնցմով լեցուն է մեր անցյալը և վերջին Հայրենական պատերազմի էպոպեան:

Մեր գրագետները խոսեցան մեզի նաև իրենց հրատարակություններուն մասին, իրենց ապագայի ծրագիրներուն և իրենց կյանքի բարոյական ու նյութական պայմաններուն մասին: Ակամա մտածումս ուղղեցի դեպի մեր սփյուռքի հայ գրողները, որոնք հեռու հայրենի վերածնության այս ոգեպարար մթնոլորտեն, կտրված են բուն մայր ժողովրդի ներշնչման աղբյուրներեն և զուրկ են հայրենի պետության քաջալերանքեն ու հոգածութենեն:

Այս իմ խոհերուս մարմին տվավ Դերենիկ Դեմիրճյան իր խոսքերով. «Ես վշտով մտածում եմ սփյուռքի հայ գրողի մասին: Նա զրկված է հայ ժողովրդի մայր զանգվածից, նրա իրական կյանքից, նրա ապրումներից ու իղձերից: Նա զրկված է մեր սովետական հայրենիքի վերաշինության և կուլտուրական զմայլելի վերելքի պատկերից, հերոսական պատմություններից: Սփյուռքի հայ գրողը էլ ի՞նչի մասին է գրելու, ի՞նչից է ներշնչվելու, և ո՞վ է նրա գործը գնահատելու, վարձատրելու, ո՞վ է ապահովելու նրա նյութական ու բարոյական անկախ կյանքը»:

Խոր տպավորություն թողուց իմ վրա Դերենիկ Դեմիրճյանը: Յոթանասունհինգամյա հայ գրչի վարպետը երջանիկ կերպով կը մարմնավորե հին հայ գրողի և նոր սովետահայ գրողի համադրությունը: Տարիքով և իր որոշ գործերով թեև կը պատկանի հին սերունդին, սակայն իր նոր գրականությամբ և մանավանդ իր ոգիով ու կոչումով ան

ամբողջապես արդիական է: Կը խոսի մեզի երիտասարդի ավյունով, երիտասարդի լավատեսությամբ և զարմանալիորեն ալ առաջադեմ, համարձակ մարգարեական շունչով: Պահ մը այն տպավորությունը ունեցա, թե սեղանին շուրջ գտնվողներուն մեջ ամենեն երիտասարդն է: Վաստակավոր Դերենիկ Դեմիրճյան, հակառակ իր առաջացած տարիքին և իր ֆիզիքական տկարության, համակ աշխատանքի կորով է և բեղուն գրիչ: «Վարդանանք»-ի հեղինակը հայտարարեց մեզի, թե բացի իր ընթացիկ գրական աշխատություններեն, ձեռնարկած է և արդեն ավարտելու վրա է իր մեկ նոր մեծ պատմական վեպը, որուն կեդրոնական դեմքը Մեսրոպ Մաշտոցն է:

Այլ կարգի մտահոգություններե զերծ ըլլալով՝ սովետահայ գրագետը՝ հոգեպես անդորը և տնտեսապես ապահով, իր բոլոր ուժերով կը նվիրվի իր ազնիվ առաքելության, ժողովրդի դաստիարակչի, հոգիներու «ճարտարապետ»-ի իր կոչումին:

Սեղանի շուրջ մեր կողքին է նաև Մայակովսկիի տաղանդավոր թարգմանիչ Հրաչյա Գրիգորյանը, որ ոգևորված է հեղափոխության մեծանուն երգչի կյանքովն ու գործովը, որուն նվիրված պիտի ըլլա իր հրատարակելիք նոր հատորը: Մեր բանաստեղծ սեղանակիցներեն Սարմեն, Հրաչյա Հովհաննիսյան և ուրիշներ կ՚արտասանեն իրենց նոր գործերեն: Սարմեն կը կարդա լույսով ու գույնով լեցուն «Հայոց Աղջիկներ»-ը և «Երևան»-ը՝ այս վերջինը նվիրված Սովետական Հայաստանի մարաքաղաքի վերաշինության, իսկ Հրաչյան՝ «Մայրը» գեղեցիկ բանաստեղծությունը, որ անտարակույս հեղինակի լավագույն գործերեն մին պետք է համարել: Իր գործերեն կը կարդա նաև մեզի սեղանակից երիտասարդ գրագիտուհին՝ զգայուն և ներշնչված:

Ափսոս որ ներկա չեն այս սեղանին Զարյանն ու Սարյանը, Հովհաննես Շիրազն ու Կապուտիկյանը, Գ. Էմինն ու Ա. Գրաչին և մյուսները: Անոնք շատոնց փախուստ տված են արդեն Երևանի հուլիսյան «շոգեն»:

Ինչքան պիտի ուզեինք լսել շնորհալի Սիլվա Կապուտիկյանի իսկ բերնեն.

Թող մանկանա քո շրթներին
Մեր ալեհեր հայոց լեզուն
.....
Ուր էլ գնաս, թե մորդ անգամ մտքից հանես
Քո մայր լեզուն չմոռանաս...

Տաղանդով գեղուն Շիրազը պիտի կարդար անշուշտ իր «Կարոտ»-ի խոսքերը.

Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հազարաթեվ
Ախ թեկուզ լուռ, դեռ ավերակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ...
Որպես սիրտս ազատատենչ, որպես սիրտս բացված վրան՝
Գլխին կարմիր մի դրոշակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ
.....

Իսկ հայրենաշունչն Գևորգ Էմին Հայաստանը խոսեցներ բարձրաղաղակ.

Խաղաղությունը բառ չէ ինձ համար եվ ոչ ալ կոչեր
Նա Սովետական իմ հայրենիքն է խաղաղ ու արդար:

***

1951 հուլիս 9-ին հանդիպում փրոֆ. Փիոթրովսքիի հետ: Մեքենաներով կ՚ուղղվինք քաղաքեն դուրս՝ դեպի Կարմիր Բլուր՝ դեպի հնադարյան պեղումներու վայրը, ուր Երևան հանված է Ուրարտական շրջանի Դենշեպային կոչված քաղաքի արքունական պալատը՝ Զանգու գետեն ոչ շատ հեռու: Անապատային տարածություն մը՝ քարքարոտ, դեղին-կարմիր փոշիի վերածված հող, ոչ մեկ կանաչություն, ոչ մեկ բնակություն, այրող արև: Քալելով կառաջանանք դեպի բլուրը, որ մեկ-երկու հարյուր մեթր հեռու է մեզմե: Հեռուեն կը նշմարենք խումբ մը մարդիկ, որ կ՚ուգան մեզ դիմավորելու: Բոլորն ալ երիտասարդ են, հա-

գած են կտավե պարզ ու միաձև շալոփետներ և գլուխնին ծածկած քասքեթներով. փոշոտ են բոլորն ալ, ոտքեն մինչև գլուխ՝ այրած, չիկացած դեմքերով: Երբ կը մոտենանք, մեզ ձեռք կ'երկարե նախ խումբին գլուխը գտնվող բարձրահասակ, նիհար, չեկ, դեմքի ազնիվ գծերով տղամարդը՝ շուրջ 40–45 տարեկան: Հայերեն կ'ողջունեն մեզ. «Բարով եկաք մեզ մոտ»:

Փրոֆ. Փիոթրովսքին է, մեծանուն ռուս հնագետը, ուսուցչապետ Լենինկրատի համալսարանի և փոխտնօրեն աշխարհահռչակ «Էրմիթաժ» թանգարանի: Շատ համեստ, հեզահամբույր, համակրելի անձնավորություն մը: Շրջապատված է քսանի չափ երիտասարդ հայ ուսանող–ուսանողուհիներով, բոլորն ալ Երևանի Պետական համալսարանի պատմագիտական ֆակուլտետեն, որոնք աշակերտություն կ'ընեն անվանի փրոֆեսորին մոտ:

Պեղումներու վարիչ փրոֆեսորը մեզ կ'առաջնորդե՝ լայնորեն բացատրություններ տալով: Ահա երևան հանված պալատի մառանները, գինիի հսկա կարասները, պազալթե տաշված մեծ քարեր, աղյուսե հյուսված պատեր, կռվի ժամանակ հրդեհի հետքեր, այրած փայտի մասեր, զենքեր, պղնձյա դասեր և այլն, իսկ ավելի հեռուն՝ իշխաններու բնակարաններուն ավերակները: Զանգուի ափին կերևա նաև Ուրարտական շրջանեն մնացած ջրանցքը, որ այսօր ալ կ'օգտագործվի:

Ապա տեղ կ'առնենք քարերուն վրա, մեծ հովանոցի մը տակ, ուր փրոֆ. Փիոթրովսքին մեզ կը ներկայացնե ճոխ ալպոմ մը՝ մեծադիր նկարներով Կարմիր Բլուրի պեղումներուն արդյունքները պատկերացնող: Ալպոմը թերթ առ թերթ կը բացվի մեր առաջ և փրոֆեսորը մեզ հիացնող հեղինակությամբ կը պատմե հին Ուրարտուի քաղաքակրթական ուրույն արժեքի մասին:

Զափազանց հետաքրքրական համեմատություններ կ'ընե արդյունաբերության, կուլտուրական, առևտրական, ռազմա–քաղաքական տեսակետներե Ուրարտուի և այդ պատմաշրջանին պատկանող այլ քաղաքակրթություններուն միջև, ինչպես էին Ասորեստանը, Բաբելոնը, Եգիպտոսն ու նախահելլենական շրջանը՝ վեր հանելով Ուրարտուի հարաբերությունները այդ կեդրոններուն հետ և փոխադարձ ազդեցությունները: Ռուս փրոֆեսորը արդեն հաստատած է, թե ԴԵՆՇԵՊԱԻՆԻ եղած է Ուրարտուի փոխարքաներուն կեդրոնը, իսկ բուն մայրաքաղաքը՝ թագավորանիստ կեդրոնը, եղած է Վանա շրջանի մեջ: Այժմ մեծ եռանդով առաջ կը տանի պեղումները պալատի դիվանատունը գտնելու նպատակով: Եթե իրոք դիվանատունը հայտնաբերվի, այդ պիտի հանդիսանա մեր դարերու մեծագույն հնագիտական գյուտերեն մին: Մեր խոսակցության ամբողջ տևողության թարգմանի պաշտոնը փայլուն կերպով կը կատարեր գերազանցիկ ուսանող Գևորգ Տիրացյանը՝ խոստումնալից որդին ռումանահայ հայրենադարձ ուսուցիչ Արտաշես Տիրացյանի:

Շուրջ երեք ժամեր անցուցինք Կարմիր Բլուրի վրա՝ պտույտ մը կատարելով մեր ազգային պատմության հնագույն շրջանի, կարծեք, կախարդական աշխարհին մեջ:

Երիտասարդ ուսանողները մեջ ընդ մեջ մեզ կը հյուրասիրեին ամենաթանկագին ըմպելիքով, որ կարելի էր երևակայել այդ կիզիչ արևին տակ երևանյան սառն ջուրով, որ առավոտուն բերված է հատուկ հողե սափորներու մեջ և թաց լաթերով փաթաթված:

Կխորհիմ, ի՞նչ զոհաբերության ոգի, գիտական մարդու ի՞նչ անձնուրաց գիտակցություն, որով ռուս մեծանուն գիտնականը՝ փրոֆ. Փիոթրովսկին, ամբողջ տարին Լենինկրատ աշխատելե վերջ՝ իր ամառվան արձակուրդի ամիսներուն, ամեն տարի այս հարավի հնոցը կ'իջնե իբր վարիչ Կարմիր Բլուրի պեղումներուն՝ ոգևորված հայ ժողովրդի հին քաղաքակրթության արժեքներով:

Հաջորդ օրը Էջմիածին կը պատմենք մեր այս այցելության և փրոֆ. Փիոթրովսքիի հետ մեր ունեցած հանդիպումին մասին:

Վեհափառը, զոհ մեր տպավորություններեն, կ'եզրափակե. «Իմացեք, որ հայ ժողովուրդը հարազատ ու մեծ բա-

ռեկամներ շատ ունի թե՛ Մոսկվա և թե՛ Լենինկրատ: Նրանց շարքին է պատկանում փրոֆ. Փիոթրովսկին, ինչպես և Ալեքսանդր Ֆատեեվն ու Մարիեթա Շահինյանը, ուրիշների կողքին: Նրանք հասկանում և գնահատում են մեր հին արժեքները հաճախ ավելի լավ, քան մենք՝ հայաստանցիներս»:

***

Անմոռանալի քաղցր հիշատակներ կը պահեմ նաև Երևանի գեղարվեստական հաստատություններու մեր այցելություններեն:

Ահա, Երևանի Սպենդիարյանի անվան օփերայի մեծ դահլիճին մեջ եմ: Սրահը՝ գրեթե լեցուն: Շշուկային ջերմ աղմուկ և նվագախմբի գործիքներու խուլ ձայներ: Բայց ահա լույսերը մարիլ կը սկսին հանդարտ ու մեղմիկ: Մութին հետ կ'իջնե նաև խոր լարված լռություն: Եվ հանկարծ, երաժշտությունը կը սկսի հոսիլ Երևանի օփերայի բեմեն... կը ցնծա հոգիս ու վերացած կ'օրորվի երգի ալիքներուն վրա: Անցյալի մեջ, քանի-քանի անգամներ նման ներկայացումներու առթիվ ցանկացեր էի ապրիլ այս պահը Երևանի մեջ: Ահավասիկ, այդ ցանկությունը իրականացած է: Եվ ի՜նչ փառավոր իրականություն: Առանց վարանումի կարելի է ըսել, թե Երևանի օփերան, թատրոնն ու ֆիլհարմոնիան իրենց արվեստի մակարդակով առաջնակարգ տեղ պիտի կարենային գրավել ու պատիվ բերել որևէ քաղաքակիրթ երկրի:

Սովետական Հայաստան երեք անգամ այցելելով՝ անփոխարինելի հաճույքը ունեցա լայնորեն վայելելու Երևանի գեղարվեստական կյանքը՝ օփերան, թատրոնը, ֆիլհարմոնիան, Երգի-պարի անսամպլը, Օփերեթը, Հայ Կինոն և այլն: Ունկնդրեցի «Անուշ», «Դավիթ Բեկ», «Եվկենի Օնեկին» և «Ֆաուստն» օփերաները և «Խանդութ» պալեթը: Լսեցի մեր մեծ երգիչներեն Հայկանուշ Դանիելյանը, Մուսիա Զմշկյանը, Շարա Տալյանը, Դավիթ Պողոսյանը և Գոհարիկ Գասպարյանը: Վերոհիշյալ օփերաները և ֆիլհարմոնիայի համերգները ղեկավարեցին տաղանդավոր տիրիժյորներ Մալունցյանը, Ղարաճանյանը և Պուտաղյանը՝ մեծ հմտությամբ և ճշմարիտ արվեստագետի տեմպերամենտով:

Արվեստի նույն կատարելիության կը հասնի նաև Սունդուկյանի անվան Պետական Թատրոնը իր առաջնակարգ դերակատարներով: Այստեղ տեսա Սունդուկյանի «Պեպո»-ն, «Խաթաբալա»-ն, «Էլի մեկ զոհ»-ը, Նար-Դոսի «Սպանված Աղավնին», Գուրգեն Բորյանի «Բարձրունքներում»-ը, Լերմոնտովի «Դիմակահանդես»-ը, ինչպես նաև «Համլետ»-ն ու «Օթելլո»-ն: Մեր Պետական Թատրոնը օժտված է իրոք լավագույն ուժերով. դերասաններ, ինչպես են՝ Հրաչյա Ներսիսյանը, Օլգա Գյուլազյանը, Ավետ Ավետյանը, Վաղարշ Վաղարշյանը, Մալյանն ու Արազյանը, Պարոնիկյանն ու Խաժակյանը և ուրիշ շատեր անփոխարինելի ուժեր են և պարծանքը այսօրվա հայ բեմին:

Իմ վրա խոր տպավորություն թողուցին Հրաչյայի Պեպոն, Վաղարշյանի Համլետը և Ավետ Ավետյանի Զամպախովը և մանավանդ Յակոն:

1951-ի ամրան բախտն ունեցա Երևանի բեմին վրա տեսնելու հյուրաբար Հայաստան եկած, հայ ժողովրդի պաշտամունքին առարկա դարձած Վահրամ Փափազյանը, «Օթելլո»-ի և Արփենինի դերերուն մեջ: Մեծ հաճույքն ունեցա լսելու «Հայաստանի սոխակ»-ը՝ Գոհար Գասպարյանը, որ իր արվեստի կատարելիության հասած է ու հայ արվեստի աստղերեն մին դարձած շնորհիվ փրկարար հայրենադարձին:

Միայն հարազատ մայր երկրի մեջ, միայն հայրենական պետության հովանին ներքև է, որ հայ արվեստագետը լիակատար պայմաններ կը գտնե՝ մշակվելու, կատարելագործվելու և ստեղծագործելու:

Ի՜նչ տխուր եղած է, ի՜նչ տխուր է և այսօր արևմտահայ աշխարհի մեջ ցիր ու ցան հայ արվեստագետներու ճակա-

տագիրը, որոնք իրենց տաղանդը ի զուր կը մաշեցնեն, օրե օր կը ժժգունին, կ՚այլասերին ու կը հյուծին:

«Դիմակահանդես»-ի ներկայացումեն անմիջապես վերջ թատրոնի տնօրենության գրասենյակին մեջ հանդիպում մը ունեցանք Վահրամ Փափազյանի և Հրաչյա Ներսիսյանի հետ՝ երկուքն ալ սփյուռքեն հայրենիք եկած առաջին համաշխարհային պատերազմեն հետո՝ Սովետական իշխանության լուսաբացին:

Ուրախ, ջերմ զրույցի մթնոլորտին մեջ Հրաչյա Ներսիսյան, անդրադառնալով իր արտասահմանյան կյանքի պայմաններուն, ի միջի այլոց ըսավ. «Մենք երկուքս՝ Վահրամն ու ես, այն բախտավորներից ենք, որ Սովետական կարգերի հաստատման, այսինքն՝ հայ ժողովրդի վերածնունդի առաջին իսկ օրերին, Պոլսից եկանք մայր հայրենիք ու մնացինք այստեղ մեր ժողովրդի երիտասարդ պետության կողքին՝ գնահատված և ապահովված ամեն կերպով: Մենք փրկվեցինք այն տխուր պայմաններից, որոնց ենթակա է հայ արվեստագետը սփյուռքի դրամատիրական աշխարհին մեջ, ուր ան շատ հաճախ ստիպված է «իր տոմսերը» վաճառելու տունետուն, խանութեխանութ՝ կերպով մը վարելու համար իր միշտ անապահով և արհամարված կյանքը: Ինչքան տաղանդներ կորսված են ու կը կորսվին այդ պայմանների մեջ»:

Սովետահայ արվեստագետի գիտակցության մեջ ամրակուռ է այն համոզումը, թե գեղարվեստական գործը միայն արվեստագետներու և փոքրաթիվ «նրբաճաշակներու» վայելքի կամ ժամանցի առարկան չէ, ինչպես շատ անգամ կը հասկնան արևելյան աշխարհայացքով մարդիկ:

Երաժշտություն, թատրոն, գրականություն և նկարչություն այստեղ՝ սովետական ընկերության մեջ, ի սպաս կը դրվին ժողովրդի լայն զանգվածներուն, քաղաքի և գյուղի բոլոր աշխատավոր մարդոց՝ բարձրացնելու համար զանոնք, անոնց ճաշակն ու զգայնությունը մինչև արվեստի բարձրագույն կատարները: Այս ազնիվ նպատակին հասնելու համար տեսա ես, թե ինչպես Սովետական Հայաստանի մեջ ձեռք ձեռքի կ՚աշխատին արվեստագետն ու արվեստի հաստատությունները, պետական մարմիններն ու կրթական-դաստիարակչական-գիտական հաստատությունները՝ կազմակերպված, պլանավորված ձևով: Դպրոցն ու համալսարանը, ակումբներն ու գրադարանները, ռատիոն ու մամուլը, ցուցահանդեսն ու հրապարակային դասախոսությունները թանկագին գործակիցներն են սովետահայ արվեստագետներուն:

ՄԱՐԴԸ ԹԱՆԿԱԳԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

«Եթե կ՚ուզենք մեր թերություններուն վերջ տալ, և եթե կ՚ուզենք որ մեր երկիրը բավարար չափով կարող մարդիկ ունենա, տեխնիկան առաջ տանին ու զայն ի գործ ածեն, պետք է նախ և առաջ սորվինք մարդը գնահատել: Վերջապես պետք է հասկնանք, որ աշխարհի բոլոր դրամագլուխներեն ամենեն թանկարժեք ու ամենեն վճռական դեր ունեցող դրամագլուխը մարդն է»:

Ստալինյան այս լուսավոր խոսքերը կենդանի իրականություն և ծրագիր դարձած են նաև մեր հայրենիքին մեջ:

Եթե մարդը ամենաթանկարժեք դրամագլուխն է, ապա ուրեմն հարկ է ամենաուշադիր խնամք և ամենահարատև հոգածություն տածել մարդուն հանդեպ: Խնամքն և հոգածություն երեխաներուն և մայրերուն, խնամք և հոգածություն դպրոցական հասակի աշակերտության և ուսանողության, խնամք և հոգածություն աշխատանքի մարդկանց, խնամք և հոգածություն ծերության սեմին հասած աշխատավորներուն: Խնամք և հոգածություն բոլորին՝ առողջապահական, կրթական, փրոֆեսիոնալ դաստիարակության, աշխատանքի ու կյանքի նյութական պայմաններու բարելավման և մշակութային կարիքներու բավարարման տեսակետներեն:

Սովետական Հայաստան այցելող մը դյուրավ կրնա հաստատել այս բոլոր պայմաններուն իրականությունը: Պետության և հասարակության ամենաջերմ ուշադրությունը կ՚ուղղվի նախ երեխաներուն և պատանիներուն: Ամեն մեծ հաստատություն ունի իր մանկամսուրը, ուր գորովալի խնամք և լավ սնունդ կստանան աշխատավորներու երեխաները մինչև 5–6 տարեկան հասակին: Անձամբ տեսա այդպիսի մեկ քանի մանկամսուրներ: Օրինակ՝ ծխախոտի ֆապրիքայի մանկամսուրը, զոր այցելեցինք հուլիս 12-ին, ուր կաշխատին 800 բանվոր–բանվորուհիներ երկու հերթով (ամենով) ութական ժամ: Մանկամսուրը բաղկացած էր լուսավոր մեծ երեք սրահներե՝ շատ զվարթ կահավորված և առատ կանաչ բույսերով ու ծաղիկներով զուգված: Լեցուն էին պես–պես, գույնզգույն խաղալիքներ, տիկնիկներ, պատկերներ, ժապավեններ, ալպոմներ և այլն: Երեխաները, ըստ տարիքի, նստած էին գետինը՝ մաքուր գորգերու վրա, կամ ցած աթոռներու վրա՝ սեղաններու շուրջ, իսկ ուրիշներ՝ շատ փոքրիկները, պառկած կը քնային հատուկ անկողիններու մեջ: Բոլորը մաքուր և առողջ էին: Ամեն մեկ սրահին մեջ կային երկու–երեք խնամող–հսկող քույրեր՝ սպիտակ զգեստավորված: Մանկամսուրեն ելնելով՝ մտանք ֆապրիքայի բուժարանը: Գլխավոր բժիշկը մեզ լայն բացատրություններ տվավ, թե ինչպես կը հետևին ամեն մեկ աշխատավորի առողջական վիճակին: Ամեն մեկը ունի իր ֆիշան, և շաբաթը անգամ մը քննության ենթարկվելով՝ այնտեղ կ՚արձանագրվի քննության արդյունքը: Բուժարանը մաքուր է և օժտված ամեն տեսակի գործիքներով ու մեքենաներով, հատկապես թոքերու քննության համար: Բոլոր աշխատավորները կը ստանան օրական մեկական քիլոկրամ կաթ:

Նկատելի է առհասարակ մաքուր, օդասուն և կարգապահ մթնոլորտը թե՛ աշխատանոցներուն, թե՛ միջանցքներուն մեջ: Հանդիպեցա այստեղ բազմաթիվ հայրենադարձ աշխատավորներու, որոնց շարքին նաև քանի մը ծանոթ ռումանահայ երիտասարդներու, որոնք ուրախ և հպարտ

եկան ձեռք սեղմելու: Բոլորի դեմքին վրա կարդացի գոհունակություն և բավարարություն:

Նույն օրը այցելեցինք համբավավոր «Արարատ» տրեստի գինիի և քոնյակի գործարանի զանազան բաժինները՝ մինչև հինգերորդ հարկ գետնին տակ գտնվող պահեստի մառանները: Քանի մը օր վերջ այցելեցինք պոմպոնի և կոնֆետի մեծ գործարանը և օգոստոս 2-ին Սովետական Հայաստանի արդյունաբերության հսկաներեն մին՝ տրանսֆորմատորներու և գեներատորներու, կոմպրեսորներու և էլեկտրական տրակտորներու էլեկտրամեքենաշինական ուզինան, որ կգտնվի քաքաղեն դուրս՝ 180 հա. տարածության մը վրա: Ճարտարարվեստականացած մեծ երկիրներու հատուկ հսկա հաստատություն մըն է այս: Այժմ օրական 8–10 վագոն ապրանք կարտադրե Սովետական Միության մեծ կառուցումներուն համար: Այստեղ կ՚աշխատին շուրջ 5000 բանվորներ և 260 ինժիներներ ու մասնագետ վարպետներ: Առաջիկա 3–4 տարիներու ընթացքին, մինչև հնգամյա պլանի վախճանին, նոր բաժիններ ևս պիտի կառուցվին ու այսպիսով բանվորներու թիվը պիտի հասնի 15.000–ի:

Այստեղ ևս կը տիրե վերին աստիճանի կատարյալ, արդիականորեն կազմակերպված աշխատանք և աշխատանքի առողջապահական և ապահովության պայմաններ: Արկածներ գրեթե չեն պատահիր շնորհիվ այս միջոցառումներուն: Բանվորները լավ հագված են և ունին առողջ ու կայտառ երևույթ: Այստեղ ալ այցելեցինք մանկամսուրը, բուժարանը, որ հիվանդանոցի կը նմանի, բանվորական հրաշալի ճաշարանը, բոլորովին արդիական խոհանոցը ամեն տեսակ սարքավորումներով, ապա գրադարանի հսկա լուսավոր ընթերցասրահները, ակումբ–սրահը, ուր կա ռատիո և կինոյի սարքավորում: Այցելեցինք այս ուզինայի լայնատարած հանգստի պարտեզը և մարմնակրթանքի դաշտը՝ մարզական բոլոր տեսակի խաղերու հարմարություններով: Ընդարձակ լողարանը, ջրցանի (տուշ) կազմածները և այլն: Իսկ քանի մը հարյուր մեթր հեռուն կը տեսնենք երեք հարկանի մեծ շեն-

քեր (պլոքներ) մոխրագույն տուֆե կառուցված, որոնք բանվորական բնակարաններն են: Ամառ առավոտ է. պատուհանները բաց են, տանտիկինները տան մաքրություն կ՚ընեն: Բազմաթիվ պատուհաններ և պատշգամներ զուգված են ծաղիկի թաղարներով: Շրջակա տարածություններու վրա աջին ու ձախին կը տեսնենք ուրիշ քանի մը մեծ շենքեր, որոնք կառուցման ընթացքի մեջ են, և ուրիշներ ալ պիտի կառուցվին հետզհետե: Այս կառուցումներեն ոմանք նոր աշխատասրահներ պիտի ըլլան, իսկ ոմանք՝ բնակարաններ բանվորներու և ծառայողներու համար:

Կ՚այցելենք էլեկտրամեքենաշինական այս հսկա հաստատության բոլոր աշխատասրահները: Վիթխարի մեքենաներու շուրջ կ՚աշխատին անհամար չարքաշ հայ բանվորներ: Մեզ տեսնելով՝ պահ մը կանգ կ՚առնեն և ապա կրկին կը շարունակեն իրենց աշխատանքը ակներև հպարտությամբ, և կամ եթե շատ մոտն ենք, կու գան ձեռք տալու իրենց բանվորի ամուր ու բարի ձեռքերը: Կը դիտեմ այս մարդիկը ու կը խորհիմ՝ ահա ճշմարիտ մարդիկ, ահա ճշմարիտ հայրենասերներ, շինարար, ստեղծագործող հայորդիներ, ահա մեր հայրենիքը վերաշինող անանուն հերոսները: Այստեղ բոլորի դեմքին վրա տեսա դրոշմը աշխատանքի ուրախության, դրոշմը՝ պարտականությունը կատարած ըլլալու ուրախության:

Եվ ինչու հայ բանվորը ուրախությամբ պիտի չկատարե իր աշխատանքի բաժինը, քանի որ ան չաշխատիր այս կամ այն շահագործողին հաշվույն, այլ իր ժողովրդի, իր հայրենիքի վերաշինության օգտին, քանի որ ինքն այս հաստատության տերը ըլլալու զգացումն ունի, քանի որ արդար կերպով գնահատված և վարձատրված է իր տքնությունը, քանի որ հոգատար պետությունը նեցուկ է իրեն, իր ընտանիքին, իր զավակներուն:

Աշխատավոր մարդոց երեխաները անխտիր ուսում կը ստանան: Գերազանցիկ աշակերտներն ու ուսանողները նյութապես վարձատրված են մինչև ամսական 350 ռուբլիով, իսկ ամառվան ընթացքին բոլոր երեխաները օդափոխության կը ղրկվին 40 օր լրիվ՝ պետության ամբողջական ծախսերով: Հիվանդության պարագային ձրի է դարմանը թե՛ բանվորի և թե՛ ընտանիքի անդամներուն համար:

Բժշկական հսկա ցանց մը տարածված է ամբողջ երկրին մեջ՝ քաղաքներուն, գյուղերուն և ավաններուն մեջ:

Չկա անկյուն մը Սովետական Հայաստանի մեջ, ուր չհասնի պետության կողմե նշանակված բժշկի խնամքը: Միջին հաշվով ամեն 483 բնակչի համար կա մեկ բժիշկ, չհաշված օդնական բժիշկներն ու սանիտարական անձնակազմը: Մինչդեռ Ֆրանսայի պես երկրի մը մեջ, օրինակ, կա միայն մեկ բժիշկ՝ հազար հոգիի համար: Այսպես է, որ հայ ժողովուրդը ազատած է մալարիայի և այլ հիվանդություններու ճիրաններեն, այսպես է, որ կը կերտվի նոր հայրենիքի մեջ նոր ժողովուրդ մը՝ առողջ մարմնով և առողջ հոգվով:

Մեր ռումանահայ հայրենադարձ մայրերը ինձ խոստովանեցան, թե ինչպես առաջին տարին դժվարավ հանձնած են իրենց փոքր երեխաները «օտար» ձեռքերու՝ օդափոխության տարվելու համար Ծաղկաձոր: Եվ սակայն շուտով համոզված են, իրենց սեփական փորձով, թե այդ ձեռքերը ոչ թե օտար, այլ հարազատ ձեռքեր են, որոնք 40 օր հետո երեխաները կը վերադարձնեն առնվազն 3–4 քիլոկրամով «չաղացած», ավելի առողջ ու կայտառ, ավելի կիրթ ու ընկերական:

Էլեկտրամեքենաշինական ուզինայի սրահներեն մեկուն՝ գեներատորներու սարքավորման բաժնին մեջ, խոսքի կեցա բաժնի վարիչ ինժիներին հետ: Հարց տվի, թե ինչ կերպով կ՚ապահովեք ձեր աշխատանոցի որակյալ նոր ուժերը, նոր բանվորական քատրերը: Վարիչ ինժիները՝ շուրջ հիսուն տարեկան, լուրջ, խստադեմ, բայց համակրելի անձ մը, զիս լուսաբանեց այսպես. «Մենք մեր հաստատության մեջ կ՚ընդունենք, ի հարկե, արհեստից վարժարաններ, տեխնիկումներ ավարտողներ, բայց նաև առանց նման տեխնիկական ուսում ստացած պատանիներ: Մեր հաստատությունը ինքը սրանց համար, թե աշխատանոց է և թե դպրոց միա-

ժամանակ: Ունենք մասնավոր կուրսեր կատարելագործման համար: Մենք մեր բոլոր միջոցներով քաջալերում ենք նոր ուժերը, որպեսզի նրանք հնարավորություն ունենան աստիճան առ աստիճան բարձրանալու և ձեռք բերելու իրենց աշխատանքին մեջ լավագույն արդյունքներ՝ արտադրության որակի և քանակի տեսակետից: Ի հարկե, սա կախում ունի նաև իրանից՝ պատանի բանվորից, նրա ուշիմությունից, նրա ուսման և առաջդիմելու փափաքից: Եթե կա այդ փափաքն ու համառ աշխատանքի կորովը, նա մեր օգնությամբ և միջնորդությամբ կրնա նույն իսկ բարձրագույն ուսում ստանալ Երևանի Պոլիտեխնիկ Ինստիտուտում և չորս–հինգ տարի հետո վերադառնալ մեզ մոտ՝ արդեն իբրև մասնագետ ինժիներ: Իր ուսանողական շրջանին նա կը ստանա գրեթե նույնքան փող, ինչքան որ պիտի ստանար աշխատանքի մեջ մնալով»:

Ինչքան ոգեշնդիչ ու հուզիչ էին մեզ համար այս պարզ ու արտաքնապես չոր խոսքերը, որ վարիչ ինժիները կ'արտասաներ հանդարտ ձայնով, սովորական ու հանրածանոթ հարցերու մասին խոսելու զգացումով: Սակայն գաղութահայ մարդուն, միջին արևելքի կամ արևմտյան դրամատիրական աշխարհին մեջ ապրող ու տքնող հայ աշխատավոր մարդուն համար ինչքան արտասովոր, ինչքան ըղձալի կյանքի ու աշխատանքի պայմաններ են ասոնք:

Հիշեցի Մարիեթա Շահինյանի «Հիդրոկայանը» վեպեն դրվագ մը: Նորաստեղծ Սովետական Հայաստանի մեջ կը կառուցվի առաջին հիդրոկայանը: Երկիրը տակավին ավերակ է, տնտեսությունը ամբողջապես քայքայված, ժողովուրդը, հայ ժողովուրդը մահվան ճիրաններեն նոր ազատած, շշմած է, կը խարխափե, կ'որոնե ու կը սկսի հուսալ...: Վեպին գլխավոր հերոսը՝ Արնո Արևյան, կը դիտե շուկային մեջ հավաքված հայ գյուղացիները՝ նիհար, տժգույն, հոռետես, նստած են գետնին վրա անշարժ՝ իրենց ձեռքերը կախ ինկած: Արևյան սակայն նոր մարդն է և, հայացքը ուղղած դեպի հեռուն, դեպի գալիքը՝ կը խորհի. «Եթե այս ձեռքերուն աշխատանք հայթայթվի, եթե այս ձեռքերը արթնանան...»:

Այդ արթնցած ձեռքերը հազար հազարներու ձեռքերն են ահա, որ մենք կը տեսնենք այսօր՝ կենդանի, աշխույժ, ջլապինդ, շինարար, ստեղծագործ...

***

Երջանիկ առիթն ունեցա անձամբ այցելելու Սովետական Հայաստանի օդափոխության կարգ մը վայրերը, որոնք բոլորն ալ աշխատավոր ժողովրդի տրամադրության տակ դրված են: Մեր Հայրենիքի մեջ աշխատավորին հանգստի իրավունքը անխախտ կերպով ապահովված է: Հանգստի վայրեր, սանատորիաներ, հանքային ջրերու կեդրոններ, ինչպես՝ Սևան, Դիլիջան, Արզնի, Իստիսու (Ջերմուկ), Ստեփանավան, Կիրովական, երկրի սահմաններեն ներս, ինչպես նաև հարյուրավոր նման օդափոխության վայրեր Սովետական Միության մեջ լայնորեն բացած են իրենց հյուրընկալ դռները Հայաստանի աշխատավորության և մտավորականության համար: Եղա Դիլիջան, Արզնի, Սևան և Ծաղկաձոր: Դիլիջանը ճշմարիտ դրախտավայր մըն է իր բնական դիրքով, իր անտառապատ բարձր լեռներով: Այստեղ կառուցված է սանատորիում մը՝ բժշկական դարմանման նորագույն սարքավորումներով օժտված, ինչպես նաև բազմաթիվ շենքեր, հանգստի տուներ և պարտեզներ:

Արզնին տեսած էի 1948–ին ալ: Ի՜նչ տարբերություն սակայն հին Արզնիին և նոր Արզնիին միջև: Իր նոր սանատորիումով, հանքային ջրերու լողարաններով, բուժական անհամար սարքավորումներով, նոր բազմաթիվ շենքերով Արզնին չհիշեցներ անգամ հինը: Այժմ 200 հիվանդներ միաժամանակ կրնան հանքային ջրերու լոգանք և այլևայլ հիդրոէլեկտրաբուժիչ խնամք ստանալ առանձին սենյակներու (քապիններ) մեջ: Սրահները, միջանցքները, քապինները, լոգարանները կը փայլին սպիտակ մաքրության մեջ: Ամեն ինչ մարմար է, մոզաիք է կամ հախճապակի է և նիքել: Քա-

նի մը հարյուրի հասնող անձնակազմ մը կա այստեղ՝ մասնագետ հայ բժիշկներու ղեկավարության ներքև: Սովետական Հայաստան հիվանդներ կու գան նաև Միության քույր հանրապետություններեն՝ լսած ըլլալով համբավը Արզնիի, Դիլիջանի կամ Ջերմուկի հանքային ջուրերուն:

Մեր հայրենիքի մեջ ուղիղ կերպով հասկցված են մեծ Առաջնորդին խոսքերը, թե աշխարհի բոլոր դրամագլուխներեն ամենեն թանկարժեքը մարդն է, ու քայլ առ քայլ և ավելի ու ավելի լիակատար կերպով կը կիրարկվի հոն՝ գործնական կյանքի մեջ, մարդուն մասին այս վեհ ըմբռնումը:

ԷՋՄԻԱԾԻՆԸ ԱՅՍՕՐ

«Դարեր եկան, դարեր անցան Էջմիածին
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին»

Երրորդ անգամն է, որ կ՚ուղղվիմ դեպի Մայր Աթոռ: Այգիներով, հպարտ բարտիներով, գողտրիկ ագասիաներով կամ բուրումնավետ փշատի ծառերով եզերված ասֆալտապատ ճանապարհը մեզ կը տանի դեպի Էջմիածին: Ահա, հորիզոնին վրա կ՚ուրվագծվին արդեն Ս. Հռիփսիմեի, Շողակաթի և Ս. Էջմիածնի գմբեթներուն ազնվաշուք կերպարները: Երջանկությունը ունիմ վերստին տեսնելու այս հնադարյան սրբավայրերը: Քիչ հետո արդեն Մայր Տաճարի մեջ եմ: Կ՚աղոթեմ: Ապա դուրսը, շուրջս հին ծանոթներ, սիրելի դեմքեր, կարոտալի խոսքեր, ուրախություն և ծիծաղ:

Կը բարձրանամ վեհարան: Զիս կ՚ընդունի Վեհափառ Հայրապետը՝ Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ–ը: Ի՜նչ մխիթարիչ ապրում՝ տեսնել 83–ամյա մեր ալեփառ Հայրապետը իր աշխատանքի սեղանին՝ առողջ, աշխույժ և կորովի: Վեհափառը համակ իմաստություն է, անչափ սեր դեպի մեր եկեղեցին ու հայ ժողովուրդը, ջերմ նվիրում դեպի մեր վերածնած ու հայ հայրենիքը, այլ նաև համակ լավատեսություն, շինարար ոգի և համակ ծրագիր:

«Վեհափառը զարհուրելի հայրենասեր մըն է»,– կըսե Տ. Եղիշե արքեպիսկոպոս:

Անտարակույս Գևորգ Զ հայրենասեր Հայրապետին կը պարտինք Ս. Էջմիածնի Մայր Աթոռի մեր օրերու վերածնունդը և կազմակերպյալ վիճակը:

Այն պատմական օրեն՝ 1945–ի մայիսեն, երբ Նորին Սրբությունը ներկայացավ Քրեմլին՝ Սովետական ժողովուրդներու մեծ առաջնորդ Ի. Վ. Ստալինին, նոր շրջան մը բացվեցավ հազարամյա Հայաստանյայց Եկեղեցվո պատմության մեջ: Շրջան մը՝ վերածաղկման և բարեկարգությունների: Իրոք հասած էր ժամանակը, որ վերածնած և վերաշինվող նոր հայրենիքի կողքին հայ հավատացյալ ժողովուրդը ունենար հայրենանվեր, ժողովրդին հետ քայլող, կենդանի եկեղեցի մը: «Հայրենիքի Պաշտպանության» շքանաշնակիր մեծագործ մեր Հայրապետը 1945–ի Ազգային Եկեղեցական Ժողովին հաջորդող տարիներուն՝ որպես ազգընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց, աննախընթաց հեղինակությամբ սկսավ բեղուն և արդյունաշատ իր գործունեության նորագույն շրջանը:

Եկեղեցականներ ու հայրենասեր նոր ուժեր եկան, համախմբվեցան Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հովվապետի շուրջ: Վեհափառի ջանքերով վերաբացվեցավ Հոգևոր ճեմարանը՝ վեց դասարաններով, լույս տեսնել սկսավ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը, նոր հիմերու վրա դրվեցավ Կաթողիկոսարանի տնտեսությունը, կարգ–կանոն և միօրինակություն հաստատվեցավ եկեղեցական պաշտամունքներուն մեջ, նորոգվեցան ու վերաբացվեցան շարք մը եկեղեցիներ թե՛ Հայաստանի և թե՛ դրացի հանրապետություններու հայաշատ կեդրոններուն մեջ, վերակազմակերպվեցան Թբիլիսիի, Պաքուի և Ռոս-

տով–Նախիջևանի թեմերը և վերջապես ուղղակի սերտ կապեր վերահաստատվեցան Մայր Աթոռի և արտասահմանի մեր նվիրապետական Աթոռներու և Թեմերու միջև:

Սովետական Հայաստանի մեջ այսօր բոլոր օրինական և գործնական պայմանները կան, որպեսզի հավատացյալները իրենց աստվածակառույց սուրբ հաստատությունը՝ Հայաստանյայց Եկեղեցին, պահեն–պահպանեն, կազմակերպեն ու ծաղկեցնեն:

Հայաստանի հավատացյալ ժողովուրդը իր լայն զանգվածներով ամուր կանգնած է իր նախնյաց սուրբ հավատքի վեմին վրա և նախանձախնդիր է իր ազգային ավանդություններուն պահպանման, իսկ սովետական իշխանությունը ոչ միայն որևէ կերպով արգելք չի հանդիսանար կրոնական կյանքի արտահայտություններուն, այլ օրենքի ուժով կ՚ապահովե բոլոր եկեղեցիներու ազատ ու անկաշկանդ գործունեությունը և հաճախ կ՚օժանդակե Մայր Աթոռի և Վեհափառ Հայրապետի ծրագիրներուն անթերի ու անհապաղ կենսագործման:

1951–ին, ավելի քան երկու ամիսներ Սովետական Հայաստան մնալով, առիթն ունեցա բազմաթիվ անգամներ մասնակցելու եկեղեցական արարողություններու և ուխտագնացություններու: Սուրբ Պատարագ մատուցանեցի թե՛ Էջմիածին Մայր Տաճարին մեջ, թե՛ Երևան՝ Ս. Սարգիս, Ս. Վարդան Զորավար և Ս. Հովհաննես եկեղեցիներուն մեջ և թե՛ Օշական՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի տոնին առթիվ: Ամեն անգամ եկեղեցիները լեցուն էին բերնեբերան: Լեցուն կ՚ըլլային նաև շրջափակերը մանավանդ Էջմիածին տաղավարներուն, երբ գյուղացի հավատացյալները ուխտի կու գան նույնիսկ հեռուներեն, մատաղ կը բերեն և ապա ժողովրդական խրախճանք կը սարքեն տավուլ–զուռնայով, կերուխումով, պարերով ու երգերով:

Իմ հիշողությանս մեջ անջինջ պիտի մնա այն, ինչ որ տեսա Օշական՝ Ս. Մեսրոպի գերեզմանի մոտ, 14 հունիսին՝ հինգշաբթի օր մը, երբ հոգեկան մխիթարությունն ալ ունեցա Ս. Պատարագ մատուցանելու տեղվույն եկեղեցիին

մեջ, որուն Ս. Սեղանին տակ՝ գետնահարկը, կը գտնվի մեր մեծ սուրբին գերեզմանը: Հակառակ որ ամառ ժամանակ և գործի օր էր, Օշական գյուղի և շրջակա գյուղերու հավատացյալ գյուղացիությունը, ինչպես նաև Երևանի ու Աշտարակի շրջանեն եկած բազմաթիվ հավատացյալներ լեցուցեր էին եկեղեցին, շրջափակը և գրեթե ամբողջ գյուղը: Հայ տառերու հնարիչ ու հայ դպրության հանճարեղ հիմնադիր սուրբին գերեզմանին մոտ անվերջանալի էր ուխտագնացությունը: Գյուղացիներ, հայ շինականներ ու քաղաքեն եկած մարդիկ՝ ծեր թե երիտասարդ, տղամարդիկ թե կիներ, պատանիներ ու երեխաներ շարան–շարան գետնահարկը կ՚իջնեին, ծունկի կու գային՝ շատեր մոմ ալ վառելով, և Սուրբ Մեսրոպին նվիրական շիրիմը կը համբուրեին երկյուղածությամբ:

Անշուշտ Հայաստանյայց Եկեղեցիին և Մայր Աթոռին առաջ տակավին կան որոշ հարցեր, որոշ ծրագիրներ, որոնք լուծման և կենսագործման կը կարոտին, սակայն այդ կախում ունի նաև հավատացյալներու նյութական օժանդակության աստիճանեն, կախում ունի հոգևորականության հաստատակամ ու անձնուրաց աշխատանքեն և, մանավանդ, սփյուռքի հայության Մայր Աթոռին օգնելու, նվիրաբերելու պատրաստակամութենեն, արտասահմանի թեմերու կողմե ստանձնված հանձնառություններու ճշդիվ գործադրութենեն: Կրոնական ապրումը կենդանի է Սովետական Հայաստանի հավատացյալ ժողովրդի հոգիին մեջ: Մայր Աթոռը կազմակերպված հաստատություն է՝ իմաստուն և հեղինակավոր հայրապետի մը ղեկավարության ներքև, իսկ հայրենի պետական իշխանությունը նեցուկ և հովանի՝ մեր հազարամյա սուրբ հաստատության: Կը մնա, որ ինքը՝ հավատացյալ ժողովուրդը, ինքը՝ հայ եկեղեցին, լարե իր կենդանի ուժերը, իր իմացական և հոգևոր ուժերը և գիտնա օգտվիլ ստեղծված բարենպաստ պայմաններեն:

Մայր Աթոռը և ներքին թեմերը, ըստ կարելվույն, լավ կազմակերպված են: Առավել կամ նվազ կանոնավորությամբ կը գանձվին 10–20% տուրքերը Մայր Աթոռի կողմե:

Գեղարդա վանքին մեջ հիմնված են որոշ հասութաբեր տնտեսություններ՝ ոչխարապահություն, կաթնագործություն և մեղվաբուծություն, որոնք Մայր Աթոռին կը հայթայթեն առատ միս, յուղ, պանիր և մանավանդ զմայլելի մեղը: Այս բարիքները կը բավարարեն Էջմիածնի վանքին և ճեմարանին կարիքները և մաս մըն ալ կը վաճառվին ազատ շուկային վրա:

Կան սակայն մեծ ծրագիրներ, ինչպես են Մայր Տաճարի հիմնական վերանորոգման այլևս անհետաձգելի դարձած խնդիրը, սեփական տպարանի մը ստեղծումը, նոր Վեհարանի նորոգությունն ու կահավորումը, Երևանի մեջ կաթողիկոսարանի մը շինությունը և տակավին ուրիշ այլ հարցեր, որոնք միայն համազգային միասնական ուժերով կարելի կ՚ըլլա իրագործել: Զմոռանանք միաժամանակ, որ Հոգևոր ճեմարանը և պաշտոնաթերթը լուրջ գումարներու կը կարոտին՝ վերջնականապես ապահով վիճակի մեջ դրվելու համար:

Ինչպես 1945-ին ու 1948-ին, 1951-ին ևս ականատես վկան եղա հայրենի աշխարհի մեջ մեր ազգային եկեղեցվո վերազարթնումի և վերակազմակերպման ձեռնարկներուն ու ճիգերուն: Ս. Էջմիածինը կենդանի իրականություն մըն է այսօր, անսասան վեմը մեր լույս հավատքին, անշեջ փարոսը մեր հոգևոր լուսավորության, աստվածապարգև ճանապարհը մեր հոգիներու փրկության, ու միաժամանակ հարազատ օճախ մը ջերմ հայրենասիրության: Ով որ տեսած է մեր մայր երկիրն ու իր սրբավայրերը, ով որ ճանչցած ու հասկցած է մեր բնաշխարհի ժողովրդի հոգին, անոր ականջին ինչքա՜ն դատարկ, ինչքա՜ն անհարազատ կը հնչեն պապական «Հրավեր»-ն ու աղաճանյանական «թուղթեր»-ը: Հայաստանցի մարդուն համար չարժեր նույնիսկ պատասխան տալ անոնց: Ո՞վ են այդ մարդիկ: Ի՞նչ կապ ունին հայ ժողովրդին, հայ հայրենիքին հետ: Ի՞նչ աղերս կա Հռոմի և հայ ժողովրդին դարերու պատմության, հայ ժողովրդին արդի վերածնունդին ու հայ հայրենիքին վերաշինության միջև: Ո՞ւր էին Վատիկանն ու Աղաճանյանները հայ ժողովրդի նահատակության շրջաններուն,

ո՞ւր էին Վատիկանն ու Աղաճանյանները հայ ժողովրդի մահու և կենաց պայքարներու օրերուն, ո՞ւր էին Վատիկանն ու Աղաճանյանները Հայրենիքի ազատագրման ու վերաշինության հերոսական ճիգերու օրերուն, ո՞ւր էին Վատիկանն ու Աղաճանյանները վերջին Հայրենական պատերազմի ծանր օրերուն և ո՞ւր էին վերջապես անոնք հաղթանակի փառավոր օրերուն ու գաղթահայ ժողովրդի հայրենադարձի ոգևորության և ցնծության օրերուն: Հայ ժողովուրդը չի ճանչնար Վատիկանն ու Աղաճանյանները այսօր, անոնց «Հրավեր»-ներուն մե՛կ պատասխան ունի տալիք՝ «Ոչ գիտեմ զձեզ»:

Բայց պարզ կ՚երևա այլևս, թե Վատիկանը և արևմտյան իմպերիալզմին ծառայող հայանուն կարտինալը կ՚ուզեն օգտվիլ՝ միջազգային քաղաքական այսօրվան իրադրութենեն բաժնելու համար գաղութահայ ժողովուրդը իր հարազատ մայր հայրենիքեն և իր հարազատ մայր եկեղեցիեն: Գաղութահայ ժողովրդի կյանքին դեմ ուղղված մահափորձ մըն է ասիկա, իսկ կարտինալ Աղաճանյան երկրորդ Նիկոլ Թորոսովիչ մը:

Հայ ժողովուրդը, սակայն, իր լայն զանգվածներով արթուն է և անդրդվելի իր հայրենասիրությամբ: Եվ կարծվածեն շատ ավելի շուտ պապական գործակալներու շարժումը մոռացության պիտի տրվի՝ ամբողջ հայ ազգի արհամարհանքին ու նզովքին տակ թաղված, իսկ հայանուն դավադիրներու անունները պիտի սրբվին մեր ժողովրդի կենաց մատյանեն:

Հայ ժողովուրդը թե՛ փորձառություն ունի, թե՛ հասունություն՝ զանազանելու հափշտակող գայլերը իր հարազատ քաջ հովվապետեն, որ «զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:

Հայ ժողովուրդը կը ճանչնա, կը հասկնա, կը սիրե իր ազգային եկեղեցին, Հայաստանյայց Եկեղեցին՝ կազմակերպված ու հովանավորված Ամենայն Հայոց Կաթողիկոսեն:

Սուրբ Էջմիածինը, ինչպես միշտ, այսօր ալ գրավականն ու խորհրդանիշն է հայ եկեղեցվո միասնականության, թե՛ կրոնա-եկեղեցական, թե՛ հայրենասիրական իմաստով: Դարերու ավանդն է այս: Ոչ ոք թող չփորձե խռովել այս միասնականությունը, ոչ ոք թող չփորձե դավեր լարել Էջմիածնի դեմ՝ դիտումնավոր նենգ հերհյուրանքներ տարածելով սփյուռքի հայության և օտար երկիրներու հանրային կարծիքին մեջ:

Ժողովուրդներու կյանքին մեջ կան սրբություններ, ժողովուրդներու հոգիին մեջ կան խարիսխ զգացումներ, որոնք կ՚ապրին, ինչքան որ այդ ժողովուրդները ապրին: Մեր ժողովրդի այդ սրբությունը Սուրբ Էջմիածինն է: Մեր ժողովրդի այդ խարիսխ զգացումը անշեջ սերն է դեպի Մայր Հայրենիք:

Եվ ինչպե՞ս հայ ժողովուրդը չճանչնա իր հարազատ քաջ հովվապետը, երբ Նորին Սրբությունը կանգնած է այսօր մեր ազգի ամենաթանկագին իդեալներու կենսագործման ճանապարհին վրա: Այդ՝ ճանապարհն է հայ հայրենիքի վերաշինության, հայ եկեղեցվո միասնականության, հայոց ազգային արդար իղձերու իրականացման, հայրենադարձի, ինչպես և համայն աշխարհի խաղաղության: Մեր հայրենանվեր վեհափառ Հայրապետը աննկուն կերպով կանգնած է հայ ժողովրդի կողքին՝ հայրենի պետության կողքին՝ հանուն խաղաղության մղվող պայքարի ճանապարհին վրա: Ահա Ամենայն Հայոց Կաթողիկոսի իղձն ու ծրագիրները: Ո՞ր հայ մարդը սարսուռով չկարդաց մեր ծերունազարդ Հայրապետի խոսքերը 1950–ի ապրիլին՝ աշխարհի խաղաղության և միջազգային համերաշխ գործակցության մասին:

«Անցյալում անհամար վիշտ ու դառնություն տեսած բազմաչարչար հայ ժողովրդի համար չի եղել նվիրական ավելի բարձր երազանք, քան տևական խաղաղությունը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես աղոթել է աշխարհի խաղաղության և մարդկանց բարորության համար: Քաղաքական ներկա խառնակ իրադ-

ության մեջ, երբ մարդկությունը կանգնած է միլիոնավոր նոր զոհեր կլանող համաշխարհային նոր պատերազմի սպառնալիքի մղձավանջի առաջ, հայոց եկեղեցին, հավատարիմ իր ավանդական սկզբունքին, իր ձայնն է բարձրացնում խաղաղության օգտին և անվերապահ միանում խաղաղության կողմնակիցների Համաշխարհային Կոմիտեի Սդոքհոլմի նստաշրջանի բանաձևին»: (12 ապրիլ, 1950):

Վեհափառը իր այս կեցվածքով ու գործունեությամբ, անկասկած, թե ստուգապես և ամենահարազատորեն կը մարմնավորե ամբողջ Հայաստանյայց Եկեղեցիին գիտակցությունն ու անոր գերագույն շահերը:

Հայ ժողովուրդը խաղաղասեր է: Անոր ջերմ աղոթքն է, որ Սովետական եղբայր ժողովուրդներու կողքին խաղաղ ու անկաշկանդորեն ապրի և կյանքի վեհափառ երգը հյուսե իրեն հատուկ կերպով: Հայ ժողովրդի անսասան հավատքն է, որ մարդասպան զենքերու դժոխային փոթորիկը, զոր կ՚ուզեն շղթայազերծել ոսկիի դեզերու վրա նստած արևմուտքի որոշ մարդիկ, ուշ կամ կանուխ պիտի փշրվի խաղաղասեր, բազմամիլիոն պարզ մարդկանց արդար կամքին առաջ:

Սովետական Հայաստանի մեջ՝ Երևան, Էջմիածին, Օշական, Դիլիջան, Սևան, Արզնի, բազմաթիվ անգամներ առիթն ունեցա մոտենալու ժողովրդին: Խոսքի նստա շատ շատերու հետ՝ բնիկներու թե հայրենադարձներու, մտավորականներու թե պարզ մարդոց հետ, քաղաքացիներու և թե գյուղացիներու հետ, հարց ու փորձ ըրի և ճանչցա ու հասկցա Հայաստանի հայ մարդու հոգին: Հոն՝ այդ հոգիին մեջ, գտա պայծառ գիտակցություն մը մեր ներկա ազգային վերածնունդի նկատմամբ, գտա աշխատելու, կառուցանելու աննկուն կորով ու վճռական կամեցողություն, խոր հայրենասիրություն, ինչպես և խոր երախտագիտություն և պաշտամունքի հասնող սրտաբուխ անկեղծ սեր ու համակրանք հանդեպ ռուս եղբայր ժողովրդին ու հանդեպ Սովետական իշխանության:

Հայ ժողովրդի երջանկությունը և կյանքի ապահովությունը անբաժանորեն կապված են ռուս ժողովրդի և Սովետական Միության գոյության ու զարգացման հետ:

Դեպի Սովետական Հայաստանի իմ վերջին ճանապարհորդությենեն հետո անգամ մը ևս ամրացավ ու բյուրեղացավ իմ մեջ հավատքը, թե ի վերջո պիտի ապահովվի խաղաղությունը ամբողջ աշխարհի մեջ, և մեր Սովետական Հայրենիքը պիտի կարողանա ամբողջական կերպով ի կատար ածել իր շինարար, ժողովրդանվեր ծրագիրները:

ՄՈՍԿՎԱ–ԵՐԵՎԱՆ

Մոսկվա-Երևան, այս մոտ երեք հազար քիլոմեթր ճանապարհը որոշեցի այս անգամ շոգեկառքով անցնել:

19 մայիս 1953՝ երեկոյան ժամը 7-ին, Մոսկվայի Քուրսք կայարանն եմ:

Մոսկվա-Երևան հատուկ կառախումբը, իր ավելի քան երեսուն վակոններով, կը փայլի: Հեռուեն իսկ ուշադրությունս կը գրավե ան՝ իր հաճելի գույներով և ներդաշնակ, հանդարտ գծերով: Վակոնները՝ բոլորը նոր, օժտված են ամեն տեսակի հարմարություններով: Ներսը՝ ճաշակավոր կահավորում և կատարյալ մաքրություն: Ամեն ճանապարհորդ անխտիր թե առաջին, թե երկրորդ կարգի մեջ (երրորդ կարգ գոյություն չունի Խ. Միության մեջ) ունի իր անկողինը, սեղանը, էլեկտրական լամբը, լվացքի հարմարություններ, ռադիո և այլն: Ամեն վակոն երկու «բրավատնիք» ունի (ծառայող պաշտոնյաներ), որոնք տևական կերպով հոգ կը տանին մաքրության, կարգապահության, թեյի սպասարկության, երբ որ կամենաս և այլն: Կառախումբը ունի բնականաբար նաև իր փառավոր ճաշարան-վակոնը, ուր տաքուկ մթնոլորտի մը մեջ կարելի է գտնել ամեն ճաշակի հարմար կերակուրներ և ըմպելիքներ:

Հազիվ տեղավորված քապինիս մեջ՝ կը նկատեմ, թե շուրջս ամեն կողմ հայ ճամբորդներ են, մեծ մասամբ Երևանցի հայրենակիցներ, որոնք տուն կերթան: Քանի մը վայրկյանի մեջ, արդեն ծանոթություն հաստատած եմ շատերուն հետ: Բոլորը համակրելի ժպտադեմ մարդիկ, որոնց մեջ կ'եռա հարավի ջերմությունը և հայկական հարազատությունը:

Զափազանց ուրախ եմ, որ իմ նոր բարեկամներուն հետ, երեք-չորս օրվան դրացնություն մը պիտի ընեմ ընտանեկան մթնոլորտի մը մեջ: Եվ իրոք, հույժ հաճելի անցան այդ օրերը, վասն զի ուղեկիցներս ու ես բացինք մեր հայրենական զգացումներու ծրարը: Բացինք իրարու մեր կարոտալի սրտերը և սովրեցանք զիրար ճանչնալ, զիրար հասկնալ ու սիրել:

Բոլորիս ճանապարհը նույնն էր՝ դեպի երկիր, դեպի Երևան...

Կառախումբը կը սլանար ռուսական անծայրածիր տափաստաններեն և ժամերը կը սահեին աննկատելի կերպով: Ահա քանի մը գլխավոր կայարաններ, ուր մեր վայրաշարժը կանգ կառնե տասը-քսան վայրկյան: Օգտվելով այս առիթներեն և հետևելով իմ ճամբու ընկերներու օրինակին՝ վար կ'իջնեմ վակոնեն՝ ոտքս հողին դնելու և «մի քիչ ման գալու» այս հսկա կայարաններուն մեջ՝ օժտված նորագույն ամեն սարքավորումներով և հարմարություններով: Բացի մեծ ճաշարաններեն, որոնք կը գտնվին կայարանի շենքին մեջ, կանգ առած կառախումբերուն մոտ կան նաև շարժուն ճաշարաններ, ուր ամենահամեստ ճանապարհորդն իսկ քանի մը կոպեկներով կը գտնե տաք կերակուր մը, սովորաբար ռուսական նշանավոր պորշը և առատ հաց, նաև զանազան խմորեղեններ-բիրոժքի, պլինի-պտուղներ, պաղպաղակ, լիմոնատ և այլն:

Կայարաններուն մեջ կը տիրեր մաքրություն և կարգուկանոն: Շատ վայելուչ համազգեստով, տղամարդ կամ կին պաշտոնյաներ, պատրաստ էին որևէ կերպով իրենց ծառայությունը մատուցանելու ճամբորդներուն՝ քա-

ղաքավարությամբ ու ամենայն հոգածությամբ: Արժանի է հիշել նաև այն, թե ամեն կայարան անկյուն մը ուներ, ուր պաղ ջուրի աղբյուրին մոտ կը գտնվեր նաև եռացած ջուրի աղբյուր մը, ուրկե առանց վճարումի, ամեն մարդ կրնար գալ իր ամանը լեցնելու՝ թեյ պատրաստելու համար:

Մեծակառույց, հոյակապ կայարաններ կը հաջորդեն մեկը մյուսին: Ահա Օրելը, Քուրսքը, Պիելկորոտը, Խարքովը և Ռոստովը, անուններ, որոնք կը հիշեցնեն վերջին պատերազմի կատաղի կռիվներուն վայրերը: Հերոսական քաղաքներ, որոնք հավետ փառքով պսակվեցան: Թշնամիին հրկիզված ու քարուքանդ ըրած կայարաններուն տեղ այսօր կը բարձրանան նորակառույց զմայլելի շենքեր, որոնք իսկական հաղթական կոթողներ են՝ արժանի այս հերոսական վայրերուն:

Ռոստովեն գրեթե ուղիղ գծով կ'իջնենք դեպի Կովկաս, մինչև Արմավիր, ապա կ'ուղղվինք դեպի արևմուտք՝ հասնելով Թուապսե՝ ծովի ափին: Հորիզոնի վրա կը տարածվի «Սև» կոչված ծովին ջինջ կապույտը անսահման՝ խորհրդավոր ու լուռ կենդանությամբ զեղուն:

Զմայլելի է ճանապարհը ծովի ափին: Գեղատեսիլ վայրերը իրարու կը հաջորդեն՝ Սոչի, Ատլեր, Գագրի, Սուխումի, Օչամչիրի և ուրիշ ավելի փոքր կայարաններ, բոլորը օդափոխության ու հանգստյան հրաշալի վայրեր, ուր կը բարձրանան տասնյակ–հարյուրավոր սանատորիաներ, հանգստյան պալատներ, զբոսանքի պարտեզներ, մարզադաշտեր, բացօդյա թատրոններ, սինեմաներ և այլն: Դեպի այս դրախտատեսիլ ափերը կու գան աշխատանքի մարդիկ, միության բոլոր հանրապետություններեն: (Իմ վակոնին մեջ կը ճամբորդին երկու կիներ Ուրալի շրջանեն՝ մին բանվորուհի և մյուսը ուսուցչուհի, որոնք Սոչի իջան): Այս ծովափին վրա Սովետական Հայաստանի կառավարությունը ևս կառուցած է ու կը շարունակե կառուցանել հատու շենքեր Հայաստանի աշխատավորության համար:

Ավելի քան կես օր մը ծովափեն ճամբորդելե հետո մեր գնացքը ուղղվեցավ դեպի արևելք ու մտավ Անդրկովկաս՝

Վրաստան՝ Սամդրեդի, Խաշուրի, Գորի, Թբիլիսի գծով: Վրաստանի սիրուն մայրաքաղաքը կանգ առինք մոտ մեկ ժամ և ապա ուղղվեցանք դեպի հարավ: Երեկո էր արդեն, երբ սրտատրոփ կը սպասեմ մեր մուտքը Հայաստան: Եվ ահա գիշերը ժամը 10–ին, աննկատելի կերպով սահմանը կ'անցնինք ու քիչ վերջ կանգ կ'առնենք «Այրում» կայարանը՝ Սովետական Հայաստանի առաջին կայարանը:

Վիթխարի լեռներ ճամփա կը բանան Դեբեդի փրփրալի ջուրերուն, որուն ափին հաղթական սուլուցով կը սուրա մեր գնացքը:

Հայաստանի լեռներու խոնավը, գիշերվան զով օդին խառնված, կը գինովցնեն յիս, ու երկար կը մնամ արթուն՝ մութին մեջ պատուհանես դիտելու համար մեր հայրենիքի խռովիչ բնաշխարհը: Կես գիշերին կը հասնինք Սանահին: Քանի մը ուղեկիցներու հետ կ'իջնենք ու կը նստինք նորակառույց կայարանի նստարաններեն մեկուն վրա: Զորավոր էլեկտրական լույսերու տակ մեր առջև կը բարձրանա կարմիր տուֆե, հայկական ոճով կառուցված կայարանի գեղեցիկ շենքը: Զեմ հագենար՝ շուրջս դիտելով և պաղ ու առողջ օդը ծծելով: Պիտի ուզեի երկար, երկար մնալ այս կայարանը, որ գողտրիկ ու խորհրդավոր քաղցրությամբ մը լեցուն է, ինչպես իր նազելի անունը՝ Սանահին:

Լուսաբացին արդեն Լենինական ենք: Շատոնց բաժնված ենք Դեբեդ գետեն, և այժմ գնացքը ուղիղ գծով կ'իջնե դեպի հարավ՝ Ախուրյանի հոսանքն ի վեր, դեպի Արաքս: Երկաթուղագիծը ինչքա՜ն մոտ է սահմանին, տեղ–տեղ հազիվ երկու–երեք տասնյակ մեթր: Ճամբու ընկերներս մին ցույց կու տա ինձ հոն հեռուն՝ դեպի արևմուտք, սահմանեն անդին որոշակի կերպով նշմարվող պարիսպներու ուրվագիծը. Անիի ավերակներն են...

Բայց շուտով Ախուրյանեն ալ կը բաժնվինք և կ'առաջանանք դեպի արևելք: Ահա համբավավոր Հոկտեմբերյան շրջանը՝ թաղված լայնատարած բերքառատ կանաչներու մեջ:

Երբ մեր շոգեկառքը Արաքսի ջուրերուն հասավ, արդեն բոլորս շարժման մեջ էինք: Մոտ չորս օրեր տևող մեր ճա-

նապարհորդությունը իր վախճանին կը մոտենար: Բոլորս, շենշող ուրախությամբ համակված, կը դիմենք դեպի պատուհանները ու տպավորություններ կը փոխանակենք: Հորիզոնին վրա կը բարձրանա Արարատի վիթխարի զանգվածը՝ փառահեղ ու տիրական: Անհամբեր պատուհանես դուրս կը դիտեմ՝ տեսնելու համար մեր մայրաքաղաքի առաջին շենքերը: Եվ մինչ աչքերս հորիզոնին վրա Երևան կը փնտռեին, սպասումի ու եռուզեռի այս մթնոլորտին մեջ մեր ձայնասփյուռը սկսավ երգել տոնական ցնծությամբ.

«Գարուն Երևան, սիրուն Երևան...»
Պանդուխտ հայու հոգվույս մեջ, մարմին առին ու ծաղկեցան Հովհաննես Շիրազի՝ կարոտի և սիրո հույզերը՝
«Սիրտս առա ու ման եկա հազար երկիր, հազար մի տեղ,
Բայց չգտա հայրենիքից անուշ մի հող, անուշ մի տեղ,
Ուր բացվում է ձմեռ գարուն ազատ սիրո վարդը շքեղ,
Արի ծաղկենք, իմ սիրական, սիրո ազատ հողն ենք ընկել...»
Եվ այսպես, երգելով մտանք Երևան...

***

Քանի մը խոսք իմ դրացիներու մասին:

Առաջին անձը, որուն ծանոթացա, տարեց հայ տիկին մըն էր՝ համեստ ու վայելուչ արտաքինով, լուրջ ու ժպտադեմ հայացքով: Ավելի ուշ իմացա, թե տիկինը մեր հայրենիքի լավագույն գիտական աշխատողներեն մին է՝ հայտնի քիմիկոս փրոֆ. Արաքսյա Պապայանը, որ այնքան օգտաշատ աշխատանք կը տանի, հատկապես նոր սերունդներու գիտական դաստիարակման ազնիվ ասպարեզին մեջ:

Մտերիմ դրացնություն ըրի փրոֆ. Գևորգյանի հետ՝ Լենինականի մանկավարժական ինստիտուտի տնօրենը: Մասնագիտությամբ պատմագիր փրոֆ. Գևորգյանի հետ իմ հանդիպումը եղավ ինձ համար շատ շահեկան, վասն զի երկար խոսեցանք մեր փոթորկալի պատմության զանազան

հարցերուն շուրջ: Հարգելի ուսուցչապետին մեջ ես գտա նաև խանդավառ հայրենասեր մը՝ ամբողջապես նվիրված երկրի նոր սերունդներու մշակութային մակարդակի բարձրացման, նոր ու չինարար ոգիով, հարազատ ու գիտակցական խոր սիրով համակված ռուս մեծ ժողովրդի նկատմամբ: Փրոֆ. Գևորգյանը իր ինստիտուտի մեջ ունի քանի մը ռումանահայ ուսանողներ, որոնց շարքեն մասնավոր գոհունակությամբ կը հիշե Սանդուրճյան քույրերը, որոնք փայլուն կերպով կ՚ուսանին՝ արժանանալով իրենց ուսուցիչներու ամենաբարձր գնահատանքին:

Մեզ հետ կը ճամբորդեն նաև խումբ մը ճարտարագետներ՝ գլխավորությամբ ինժ. Լևոն Երզնկյանին, որոնք կը դասվին մեր օրերու հայրենի վերաշինության տաղանդավոր ու անձնվեր մասնագետներու շարքին՝ շենքերու կառուցման գծով: Լևոն Երզնկյան ու իր ընկերները խանդավառված են իրենց գործով և լավատեսությամբ ու ինքնավստահությամբ կը պատմեն իրենց կառուցումներուն և հայրենի պետության ապագա շինարարական նորանոր ծրագիրներու մասին:

Տեր Աստված, տուր աշխարհիս խաղաղություն, որպես զի սա մեր ափ մը ժողովուրդը ավելի ու ավելի վերաշինե, շենցնե ու ծաղկեցնե իր մայր երկիրը, և ցույց տա աշխարհին, թե ի՛նչ կարող է իրագործել փոքր ժողովուրդ մը խաղաղ ու արդար աշխատանքի պայմաններու մեջ հայրենանվեր վարիչներու առաջնորդությամբ:

Արմավիրեն մինչև Երևան նոր երկու ուղեկիցներ ևս ունեցա: Երկու կոլխոզի աշխատողներ (հայ գյուղացիներ Արմավիրի շրջանեն), որոնք բարիքներով բեռնավորված, այցի կ՚երթային Երևան իրենց հարազատներուն: Մին տարեց էր, ընտանիքի հայր, որ կը պատմեր իրենց հարուստ կոլխոզի կյանքին և արդիականացած աշխատանքի պայմաններուն մասին: «Մեքենաներն ու էլեկտրականությունը հրաշքներ են գործում մեզ մոտ», կ՚ըսեր այս բարի ձեռքերով գյուղացին: Իր ընկերը երիտասարդ մըն էր, որ հազիվ մեկ տարի առաջ արձակվեր էր զինվորական ծառայութե-

նեն՝ որպես նավաստի Պալթյան նավատորմին մեջ, և տուն վերադառնալով՝ ամուսնացեր էր ու իր պատվավոր տեղը գրավեր իրենց գյուղի կոլխոզին մեջ՝ որպես մեքենավար: Հպարտ էր ան՝ որպես Պալթյան նավատորմի սովետական նավաստի, և երջանիկ՝ որպես մեքենավար կոլխոզնիկ:

Իմ ուղեկիցները առհասարակ բոլորն ալ չափազանց ուշադիր էին ինձ հանդեպ: Ոմանք գիս ճաշի հրավիրեցին վակոն–ճաշարանը, իսկ կոլխոզնիկ բարեկամներս ճաշի ատեն, երբ իրենց ծրարները կբանային, դժվար կ'ըլլար ինձ իրենց ձեռքեն ազատիլ:

– «Համեցեք, սրբազան ջան, մեր աղքատիկ սեղանից անուշ արեք»: Ու իրենց աղքատիկ սեղան կոչվածը լեցուն էր պատվական բարիքներով՝ հայկական համեղ երշիկ, քուֆդա, տունեն պատրաստված համեղ հաց, պանիր, հավկիթ, խորոված հավ, քաղցրեղեն և անշուշտ... մի քիչ էլ գինի:

ՍԵՎԱՆԻ ԱՓԻՆ

Զորս հունիսին հինգշաբթի օր մըն էր, երբ երկու օթոմեքենաներով ուղևորվեցանք դեպի Սևան:

Ասֆալտապատ շոսեն եզերող նորատունկ ծառերը արդեն աճած են ու առատ ճյուղեր արձակած: Մեր մեքենաները կը սուրան անոնց վառ կանաչին ընդմեջեն՝ մեր ճանապարհորդությունը կրկնապես հաճելի դարձնելով:

Ճամբուն կը տեսնեմ նոր ավաններ, նորակառույց երկաթուղային կայան մը՝ կարմիր տուֆե շինված, շիկացած տաք կարմիր մը, ինչպես նաև մեծ տարածության մը վրա՝ «Արարատ» տրեստի մեկ նոր կեդրոնը, շենքերու խումբ մը՝ հայկական ոճով, կամարակապ պարիսպով շրջապատված:

Ամեն կողմ կը շինեն, անդադար կը շինեն:

Ճանապարհի կեսին ահա և նոր Ախտան, որ չի նմանիլ 1945–ի մեր տեսած Ախտային: Այժմ գրեթե ամբողջովին նոր ու սիրուն գյուղաքաղաք մըն էր՝ բազմահարկ հարյուրավոր շենքերով, լավ պարենավորված վաճառատուներով, աշխատանոցներով, ճարտարարվեստական հաստատություններով, դպրոցական և այլ մշակութային հիմնարկներով և այլն:

Քանի մը վայրկյան կանգ առինք այստեղ և «սառը ջուր» խմեցինք գլխավոր ճանապարհին եզերքը գտնվող ծանոթ հուշարձան–աղբյուրեն:

Մոտ երկու ժամեն հասանք Սևանա լճի ափին: Երջանիկ եմ: Ահա ջինջ կապույտը անծայրածիր կը տարածվի մինչև հորիզոնները հեռավոր ու կը կորսվի երկնակամարի նույնքան ջինջ կապույտին մեջ:

Այստեղ է թագավորությունը լույսկապույտին և խաղաղության: Այստեղ՝ բնության ծոցին մեջ, այս երկրի ու երկնի սահմաններուն վրա, կը բարձրանան Սևանա երկու հինավուրց վանքերու խորհրդավոր սիլուեթները, որ իրենց երկնասլաց քարե թևերով կ'աղոթեն անձայն...

Կ'իջնեմ մինչև ջուրին եզերքը և, քարի մը վրա նստած, հանդարտ, խոր լռության մեջ, երկար կ'ունկնդրեմ գողտրիկ երաժշտությունը մեղմիկ ալյակներուն:

Կ'խորիմ մեր փառքի դարերուն և կամ մեր սև օրերուն. քանի՜–քանի՜ սերունդներ եկած են այստեղ՝ երկնքին հետ խոսելու...

***

Սևանա լճի ափին՝ կանաչազարդ բլուրի մը լանջին, օթոներու ճանապարհին վրա կառուցված է փայտաշեն մեծ հանգստարան–ճաշարան մը՝ մինութքան, ուր օրվան ամեն ժամուն կարելի է գտնել ամեն տեսակի խմիչքներ, համբավավոր իշխան ձուկը ու այլևայլ ընդեղեններ՝ մաքուր սպասարկությամբ:

Ճաշի կը նստինք առատ սեղանի մը շուրջ, որուն կը նախագահե Ազգիս Վեհափառ Հայրապետը, որ հոգնածության որևէ նշան ցույց չի տար: Ընդհակառակը, այս բավա-

կանի երկար ճանապարհորդությունը Վեհափառին վրա բարերար ազդեցություն մը գործած է: Ավելի թարմացած է, ավելի տրամադրված է և իրեն հատուկ հայրական գրավիչ ժպիտով կը շարժի, կը խոսի, կը կատակե զվարթ ու աշխույժ:

Սեղանակից են նաև կրոնից նախարար պր. Հրաչյա Գրիգորյանը իր տիկնոջ հետ, Գեր. Վահան Սրբազանը, ճեմարանի վերատեսուչ Պր. Մինաս Մինասյանը և Մայր Աթոռի գործակատարներեն Պր. Սամունճյանը:

Ընդհանուր ուրախ մթնոլորտի մեջ, չեմ գիտեր ինչպես, խոսքը եղավ Նոյյան Տապանին:

Վեհափառ Հայրապետը այս առիթը օգտագործեց՝ հայկական սիրուն ավանդություն մը պատմելով, որով մեր նախնիք պատասխան մը գրեր էին այն հարցին, թե ինչպե՞ս է, որ ջրհեղեղեն հետո Նոյ Նահապետին Տապանը մեր Արարատին վրա էր նստեր:

Ահա թե ինչպես: Վերևը երկինքն էր ու աշխարհը ամբողջ ծով: Արարիչն Աստված, հուսախաբ իր ստեղծած արարածներեն, ջուրերու հեղեղին մեջ կորստյան մատներ էր Ադամի և Եվայի ամբողջ սերունդը: Սակայն, համաձայն արարչական իր խոստման, փրկեր էր Նոյ Նահապետը իր գերդաստանով՝ ապահովելու համար ապագա տիպար մարդկության մը գոյությունը:

Եվ այդ Տապանին մեջ փրկված Աստծո այս ընտրյալ գերդաստանը մեր Նախահայր Նոյի ղեկավարությամբ ցամաքամաս մը կը փնտռեր հոն հանգչելու համար, մինչև ջուրերուն քաշվիլը:

Այսպես, երկա՜ր օրեր թափառելե վերջ օվկիանոս–աշխարհին վրա Տապանը կը մոտենա ահա Սիս լերան, որուն գագաթը նշմարելի էր դարձեր հողը փնտռող անհամբեր մեր նախահայրերուն:

Նոյ ոգևորված կը դիմե այս լերան նահապետական իր խրոխտ ձայնով.

«Ո՛վ Սիս, ա՛ռ զիս»:

Կիլիկիո լեռներուն արքան անակնկալի կու գա և, պահ մը իր հպարտության զգացումին անսալով, կը խորհի ապաստան շնորհել մարդկային ընտրյալ սերունդի ներկայացուցիչներուն՝ անոնց փրկարարը ըլլալու փառքով հավերժանալու համար, գալիք բոլոր ժամանակներուն առաջ: Սակայն ուղղամտությունը ավելի զորավոր հանդիսանալով, քան գոռոզության զգացումը (այդ ատենները կ՚երևի, թե ամեն ոք իր հասակին չափը կը ճանչնար) արդարադատն արքա Սիս վճռաբար կ՚արձակե սա պատասխանը երանելի Նահապետին.

«Երթ առ Մասիս,

Զի բարձր է քան զիս»:

Ճաշի ընթացքին Թբիլիսիեն դեպի Երևան եկող մեծ օթոմեքենան մը կանգ առավ մինութքային առջև:

Դռները բացվելով՝ մեքենայեն վար իջան քսան–քսանհինգ երիտասարդներ՝ ուրախ տրամադրություններով: Եկան ճաշարան ու տեղ գրավեցին մեր սեղանեն բավական հեռու: Վեհափառ Հայրապետը, իմանալով որ վրացի երաժշտագետ երիտասարդներ են, որոնք հյուրաբար Երևան կ՚երթան, կարգադրեց, որ մի քանի շիշ հայկական շամբանիայով հյուրասիրվին:

Հայրապետական այս նվերը մեծ ոգևորություն պատճառեց եղբայր ժողովրդի այս երիտասարդ ներկայացուցիչներուն: Նվեր մըն էր, որ շնորհված ըլլալով Հայաստանյայց Եկեղեցվո հովվապետի կողմե, բացառիկ իմաստ մը կը ստանար ազգամիջյան եղբայրական գիտակցության լույսին տակ: Իրոք, մեծապես հուզիչ եղավ տեսարանը, երբ իրենց մեկնումեն առաջ բոլոր այս արվեստագետ երիտասարդները հարգալի եկան Վեհափառի մոտ՝ Նորին Ս. Օծության աջը համբուրելու, շնորհակալության ու երախտագիտական զգայուն խոսքեր ուղղելով Վեհափառին ու հայ ժողովրդին:

Հուզված էր նաև Վեհափառը, որ իր պատասխան խոսքով հոգեբուխ բարեմաղթություններ ըրավ վրացի դրացի ժողովուրդին և հատկապես անոր հայրենանվեր երիտա-

սարդությունն ու բոլորին տվավ իր հայրապետական օրհնությունը:

ՎԻՇԱՊՆԵՐԸ

Նույն օրը Սևանի ափին ճաշեն հետո մինչ Վեհափառը կը հանգստանար, երկու ընկերակիցներով այցելեցինք «Սևանգեսը»՝ լճի ափին կառուցված ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը, որ ինչպես հայտնի է, իր տեսակին մեջ միակն է ամբողջ աշխարհի մեջ:

Դուրսեն դիտված շատ բան չնկատվիր: Բարձր բլուր մը՝ լանջերուն քանի մը խումբ շենքերով: Այս քարաշեն շենքերեն մին գլխավոր մուտքն է, ուրկե ներս կը մտնենք՝ արտոնություն ստանալու ձևակերպությունները կատարելե վերջ: Երկար անցքե մը կը հառաջանանք դեպի խորը, մինչև որ կը հասնինք էլեկտրական լիֆթին: Կ'իջնենք հարյուր մեթր գետնին տակ և դուրս կու գանք ընդարձակ, գեղեցիկ, շատ լուսավոր ու օդասուն սրահ մը, ուր զետեղված են հազար ու մեկ տեսակ ժամացույցի նման գործիքներ, մեքենաներ, խողովակներ և զանազան գույներով լուսավոր ցուցասլաքներ: Սա մեծ սրահն է. բարձրությունը՝ 17 մ., երկարությունը՝ 45 մ., լայնքը՝ 15 մ.: «Սևանգեսը» գետնափոր իսկական պալատ մըն է՝ բազմահարկ, ամբողջությամբ առատ լույսի մեջ ողողված: Թեև հարյուր մեթրով ցած է վերևի մթնոլորտեն, սակայն օդը թարմ է և հաճելի: Ավելի ներքև զետեղված՝ աշխատող թուրպիններու աղմուկն է միայն, որ կը հիշեցնե մեզ, թե ուր կը գտնվինք:

Հիդրոկայանի ամենահետաքրքրական մասը այդ է՝ թուրպիններու հարկաբաժինը:

Երկաթյա սանդուխ մը մեզ կը տանի ևս 12 մ. խորը, ուր կը գործեն թուրպին կոչված հսկայական այդ երկու էլեկտրածին մեքենաները, որոնց ամեն մեկը լճի կողեն 32 խ. մեթր ջուր կ'ընդունի մեկ երկվայրկյանի մեջ:

Լճեն եկած ջուրը թուրպինները շարժման մեջ դնելե վերջ մեծ ջրվեժի մը աղմուկով փոթորկահույզ կը նետվի դեպի թունելը, որ բերանը լայն բացած՝ կառնե կը տանի ջուրի այդ զանգվածը, լեռան տակեն դուրս՝ լույս աշխարհ: Թունելին երկարությունն է 5.500 մ., իսկ լայնքը՝ 6 մ. տրամագիծ: Ջուրը, թունելեն դուրս գալով, կը միանա Զանգու գետի հունին ու իր վազքը կը շարունակե դեպի Արարատյան դաշտ:

Երկաթյա ամրակուռ կամուրջի մը վրա կանգնած՝ սահմրկած կը դիտենք այս ահարկու տեսարանը և կը հիանանք Սովետական տեխնիկի այս գլուխ գործոցին վրա, որով օգտագործված են շղթայազերծ ուժերը բնության՝ առատ ջուր և լույս բաշխելու համար Հայաստան աշխարհին:

Գլխավոր ինժիները, որ մեզ բացատրություններ կուտա, կ'ավելցնե՝ «Սևանգեսը» նման է առասպելական վիշապի մը, որ իր դունչը խրած լճի կողին՝ անհագորեն կը խմե անհատնում ջուրերը Սևանին:

***

Երկու շաբաթ հետո տեսա նաև երկրորդ վիշապը՝ նորակառույց Կյումյուշգեսը՝ մեր հայրենիքի ամենազորեղ հիդրոէլեկտրակայանը:

Ան կառուցված է Արքել գյուղի մոտ՝ Զանգուի ափին: Որոշ աշխատանքներ, արտաքին հարդարում, տակավին վերջացած չեն: Տենդագին աշխատանք կը տարվի ամեն կողմ՝ ճշտված ժամկետին ամեն ինչ վերջացնելու համար, որովհետև պաշտոնական բացումը պետք է կատարվի մեկ-երկու շաբաթ վերջ:

Կյումյուշգեսի կայանը ստեղծված է՝ բոլորովին յուրահատուկ լուծում մը տալով առաջադրված հարցին: Զանգուի բնական հոսանքը ինքնին արդեն բավական արագընթաց

թաց է, քանի որ անոր ջուրերը Սևանա լճեն մինչև Երևան ոչ պակաս, քան հազար մեթրի վայրէջք մը կ՚ունենան, իսկական ջրվեժ մը, սակայն մեր հայրենիքի հնարամիտ ճարտարագետները, բավարարվելով այդքանով, դիմած են համարձակ ծրագրի մը, զոր իրագործած են հրաշալի կերպով:

Կյումյուշգեսեն բավական հեռու գտնվող Ախտայի մոտերեն փոխած են Զանգու գետի հունը և ջուրերը բերած են կետի մը վրա, որուն ստորոտը՝ 300 մ. ցած, կը գտնվի նույն Զանգու գետի բնական հունի շարունակությունը: Երեք մեթր տրամագիծ ունեցող չորս հսկա պողպատյա խողովակներու մեջեն Զանգուի խռոված այդ ջուրերը գրեթե ուղիղ գծով երեք հարյուր մեթր բարձրութենեն դեպի ձոր կը նետվին, ուր նորակառույց «վիշապը» պատրաստ կը սպասե՝ խմելու զանոնք անհագ պապակով:

Ջուրի այս հսկայական զանգվածը, ուրեմն, երեք հարյուր մեթր բարձրութենեն վար թափելով, իր ահարկու ուժով շարժման մեջ կը դնե Կյումյուշգեսի հիդրոէլեկտրակայանին չորս հսկա թուրպինները և ապա փրփրահույզ կերթա իր վազքը շարունակելու Զանգուի մայր հունի ճամբով դեպի Երևան:

Կյումյուշգեսը ի վիճակի պիտի ըլլա երկրին տալու 300.000 ձիու ուժ էլեկտրական էներգիա:

Զմայլանքի արժանի է այս հիդրոկայանի գլխավոր սրահը, որուն պատերը և առաստաղը զարդարված են հայկական մանրանկարչական ոճով հորինված գեղեցիկ քանդակներով:

Պետք է ավելցնեմ հետաքրքրական մանրամասնություն մը ևս, թե՝ ըլլա Կյումյուշգեսը, ըլլա մանավանդ Սևանգեսը, ինքնագործ (առտոմատ) կայաններ են, այսինքն կը գործեն առանց մարդոց ուղղակի միջամտության: Իրոք, երբ Սևանգեսի կայանը իջանք, 112 մ. հողին տակ՝ այնտեղ՝ այդ հսկա սրահներուն և անցքերուն մեջ, տեսանք միայն երկու մարդ, որոնց պաշտոնն էր միայն և միայն հետևիլ գետեղված զանազան ժամացույցաձև գործիքներու սլաքներուն՝ արձանագրելու համար ջուրի ճնշման չափը, էլեկտրական

հոսանքի աստիճանը և այլն: Կայանի ինժիները կը բացատրե, թե նույն իսկ այդ երկու պաշտոնյաները կրնան դուրս ելնել և դուռը փակել իրենց ետևեն: Հիդրոկայանը իր աշխատանքը կը շարունակե՝ ղեկավարվելով... Երևանեն:

Կյումյուշգեսի կառուցումով Զանգուի վրա ստեղծված կըլլան արդեն չորս մեծ հիդրոէլեկտրակայաններ: Ինչպես հայտնի է, մեր հայրենի կառավարության ծրագիրն է չորս նման հիդրոէլեկտրակայաններ ևս կառուցանել նույն գետի հոսանքին՝ ընդամենը ութ կայաններ ունենալու համար Զանգուի երկայնքին՝ Սևանեն մինչև Երևան:

***

Հիդրոէլեկտրակայանին մոտ՝ Արքել հին գյուղին կողքին, հիմնված է նոր ավան մը՝ Կյումյուշգես անունով, որ փոքրիկ քաղաքի մը սկսած է նմանիլ արդեն: Ան օժտված է քաղաքային–վարչական հաստատություններով, երեք հարկանի հիվանդանոցով մը, երկու վարժարաններով, հանրային ճաշարանով, վաճառատուներով և այլն: Փողոցները լայն ու կանոնավոր են, բոլորը՝ սալահատակված և մաքուր: Ամեն մեկ բնակելի շենք շրջապատված է ծաղկազարդ սիրուն պարտեզներով, իսկ կեդրոնը՝ հրապարակին մոտ, կը տարածվի շատ ընդարձակ պարտեզ մը՝ առնվազն մեկ հեկտար տարածությամբ, ուր կը մշակվին վարդեր, միայն վարդեր, գույնզգույն յոթանասուն ընտիր տեսակի վարդեր:

Այս անհամար վարդերու գույնեն ու բույրեն գինովցած՝ երկար մնացի ու ըմբոշխնեցի՝ մոտ հազար հինգ հարյուր մեթր բարձրության վրա՝ քարքարոտ ժայռերու կատարին, այս ծաղկած վարդաստանը, որ խորհրդանիշը կը հանդիսանար մեր վերածնած մայր հայրենիքի ներկա ծաղկյալ կենդանության:

Եվ ակամա խորհեցա, թե մեր շնորհալի բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, թերևս այստեղ է ներշնչված գրելու համար.

«Որքա՜ն ներկեր ու նրբերանգ
Ծիլ ու ծաղիկ ոսկեբերան,
Գույներ շքեղ ու հուրհուրան
Սև թվացող այս հողի մեջ»:

«Որքան շշուկ խորհրդավոր,
Որքան մրմունջ՝ անուշ, անդորր
Որքան աղմուկ անդնդախոր,
Լուռ թվացող այս հողի մեջ»:

Կյումյուշգեսեն Երևան վերադարձանք փունջ-փունջ վարդերով:

ԵՐԳՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԸ

Հայ ժողովուրդը երգի ու գույնի ժողովուրդ է:

Մեր հայրենի երկրի լուսավոր ու գունագեղ բնությունն է, անշուշտ, որ իր զորավոր դրոշմը դրած է հայուն զգայնության վրա: Հայաստանի երկնակամարի ջինջ կապույտը, պայծառ լույսը, կարկաչահոս, զուլալ ջուրերը, ալ ու ալվան հագած ձորերու վառ գույները, անդնդախոր լեռները, լերկ ժայռերու ժանգ կապած գույները, ձմեռվան «երկինքը մուգ» ու «վիշապաձայն բուքը վսեմ» Հայոց Աշխարհին կու տան ինքնատիպ բնույթ մը՝ գունագեղ, կենդանի, խռովիչ, խորհրդավոր... Մթնոլորտին մեջ, ամենուրեք, կը զգաս աներևույթ շողակաթում մը, թրթռացում մը լույսի, որ կը տարածվի մոտ ու հեռուն, ամեն ինչի վրա՝ շունչ ու շարժում տալով բնության, շենքերուն, մարդոց և քեզ շրջապատող բոլոր առարկաներուն, անոնց գույներուն ու կերպարներուն, ինչպես Թիցիանի նկարներուն մեջ:

Նկարչի մը աչքով դիտված՝ Հայաստանը ֆանտաստիկ աշխարհ մըն է գույներու, լույսերու և ստվերներու:

Այս աշխարհն է, որ հայ մարդու հոգվույն մեջ ծնունդ կու տա գույնի ու երգի զգացումին:

Եթե արվեստագետը՝ նկարիչ, երաժիշտ կամ բանաստեղծ, անխառն բնազդով և իրավ ապրումով ականջ տա այս կախարդիչ բնության ձայներուն ու առաջնորդվի անոր թելադրանքներով, կրնա հասնիլ արվեստի մեծ գործերու հորինման:

Երգի ու գույնի զգացումները զուգակցեցի ես, վասնզի կը խորհիմ, թե երաժշտության և նկարչության միջև մասնավորապես, ինչպես, առհասարակ, բոլոր արվեստներու միջև, ներքին աղերս մը կա: Երկուքն ալ նույն բնության ու նույն ժողովուրդի հոգվույն հարազատ արտացոլումներն են՝ արվեստագետի ստեղծարար զգայնության բովեն անցած:

Սխալ պիտի չըլլար ըսել, գոնե որոշ ստեղծագործություններու նկատմամբ, թե նկարչությունը գույներու երաժշտությունն մըն է, իսկ երաժշտությունը՝ գունավոր պատկերներու ներդաշնավորում մը: Հայաստանի լերկ լեռները ժանգահար, արտերը ոսկեգույն, գունագեղ ծաղիկներն ու մրգերը հյութեղ այնքան նման են Մարտիրոս Սարյանի վառ գույներուն, Առաքելյանի ու Թադեոսյանի հորինած բնապատկերներուն և կամ Իսաբեկյանի ստեղծած փոթորկահույզ կերպարներուն: Եվ այս բոլորը, ինչ որ կը գտնենք հայ նկարչության մեջ, նույն հարազատությամբ և նույն վառ գույներով կենդանություն կը ստանան մայր Հայրենիքի նորագույն երաժշտության մեջ, անոր արևահամ ջերմության, անուշ նազանքին ու գունավոր աշխույժ ռիթմին ու պատկերներուն մեջ:

Ունկնդրեցե՛ք Արամ Խաչատուրյանի Երկրորդ սիմֆոնիան և կամ «Գայանեն», ունկնդրեցե՛ք Սաթյանի, Բաբաջանյանի, Ստեփանյանի, Տիգրանյանի և կամ Ալեքսանդր Հարությունյանի գործերը, և պիտի տեսնեք, թե ինչպես նկարչության մեջ, նույնպես և երաժշտության մեջ Հայաստան աշխարհն է ու հայ ժողովուրդն է, որ կ՚ապրին հորդառատ կենսունակությամբ:

Հայրենի բնաշխարհը և հայ ժողովուրդի նոր կյանքը, ահա՛ այն ներշնչումի կենդանի աղբյուրները, ուրկե կու գան իրենց սափորները լեցնել հայ երաժիշտն ու նկարիչը, բանաստեղծն ու ճարտարապետը՝ ամեն մեկը ստեղծագործելով իր արվեստին հատուկ արտահայտության միջոցներով, ամեն մեկը իր զգայնությամբ, ամեն մեկը իր անհատականության դրոշմով:

Այսպես է, որ Երևանը կ՚երգե...

Երգը, Հայաստանի մեջ, ժողովուրդի կյանքի ամենաբնորոշ երևույթներեն մին է: Կ՚երգեն բոլորը՝ ծեր ու ջահել: Կ՚երգեն աշխատանքի պահուն, կ՚երգեն ազատ երկնքին տակ, կ՚երգեն տունը, կ՚երգեն փողոցը:

Օր մը՝ երեկոյան դեմ, Երևանի ծայրամասերու մեկ փողոցեն անցած ժամանակ, երգի ձայն լսեցի բաց պատուհանե մը, որ դեպի փողոց կը նայեր: Կանգ առի քովնտի և դիտեցի տեսարանը՝ պատուհանեն ներս: Հոն՝ սեղանի մը շուրջ, ոմանք ալ ընկողմանած, հավաքված էին ընտանիքի անդամները, հավանաբար, բոլորը վեց–յոթը հոգի: Երիտասարդ տղամարդ մը տհոլը գրկած՝ կը զարներ, հա կը զարներ՝ գրեթե նույն եղանակը նվագելով: Ռիթմը շատ կենդանի էր ու աշխույժ՝ նազանքոտ երանգավորումներով զեղուն:

Բոլորը հափշտակված կ՚ունկնդրեին՝ ծեր մամիկեն սկսած մինչև փոքր երեխաները, առանց ձանձրույթի և ժամեր շարունակ: Վերադարձիս, նույն պատուհանին առջևեն անցնելով, նույն պատկերը տեսա, նույն տհոլի ձայնով:

Երևանցին իր ազգային երաժշտությունը ոչ թե պարզապես «կ՚ունկնդրե», ինչպես պիտի ունկնդրեր վիեննական վալս մը կամ Պոլոնական մազուրքա մը, այլ ան կ՚ապրի զայն իր բովանդակ էությամբ: Այդ երգն ու իր հոգին մեկ ամբողջություն կը կազմեն: Եթե երգը ընդհատվի, անոր հոգիեն թել մը կը պոկվի կարծես:

***

Երաժշտական ելույթներու առթիվ Երևանի բոլոր սրահները բերնեբերան լեցուն են, մանավանդ, երբ հայկական ժողովրդական երաժշտության մասին է խոսքը:

Պետական օփերան, նորակառույց հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճը, երաժշտական թատրոնը (օփերեթը), Հայկական երգի–պարի անսամպլը, Հայ գուսաններու նվագախումբը մեր մայրաքաղաքի երաժշտական կյանքի գլխավոր օճախներն են, որոնք պատիվ կը բերեն մեր վերածնված հայրենիքին ու հայ ժողովուրդին:

Վերոհիշյալ պետական երաժշտական մեծ հիմնարկություններուն վրա պետք է ավելցնել նաև այն բազմաթիվ նվագախումբերը և երգչախումբերը, որոնք կազմակերպված են զանազան մեծ հաստատություններու և կազմակերպություններու կողքին: Իրենց կատարելությամբ աչքի կը զարնեն, մանավանդ, պատանեկան, պիոներական միություններու երաժշտական բազմատեսակ անսամպլները:

***

1953–ի հունիսին ներկա գտնվեցա բազմաթիվ գեղարվեստական ներկայացումներու, որոնց շարքին պետք է հիշեմ «Գայանեն», «Կարմիր Կակաչը» և «Արշակ Երկրորդը»: Երեքն ալ Սպենդիարյանի անվան օփերայի և պալեթի սրահին մեջ:

Զմայլելի է Արամ Խաչատուրյանի «Գայանե» պալեթի երաժշտությունը: Հոն կը գտնես մեր երկրի արևն ու երկինքը, արագավազ զուլալ ջուրերն ու շիկացած արտերը՝ բոլորը վառ գույներով վրձինված: Հոն կը գտնես նոր գյուղն ու շինականը՝ ոգեշնչված իր աշխատանքով, իր նոր կյանքով, կենդանի, աշխույժ, երջանիկ:

Նորակառույց հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճի բացումը կատարվեր էր մայիսի սկիզբը, իմ՝ Երևան հասնելես երկու շաբաթ առաջ: Բնականաբար անհամբեր էի տեսնելու մեր մայրաքաղաքի այս նոր հրաշալիքը: Եվ շուտով այդ առիթը ստեղծվեցավ ինձ համար Երևան ժամանելես քանի մը օր հետո:

Հինգշաբթի՝ 28 մայիսին էր այդ անմոռանալի օրը, երբ տեսա ու վայելեցի սույն զմայլելի դահլիճը:

Փարթերը մեծ ամֆիթատրոն մըն է՝ կիսաշրջանակաձև: Ունի երկու կարգ օթյակներ, մեջտեղը՝ ամֆիթատրոն պալքոն մը և ավելի վերը՝ լայնատարած պալքոն մը ևս, նույնպես ամֆիթատրոնի ձևով: Սրահը ամբողջ հազար չորս հարյուր աթոռներ ունի: Պատերը և, մանավանդ, առաստաղը զարդարված են գեղեցիկ, հայկական ոճով քանդակներով ու որմնանկարներով: Ամեն ինչ ճաշակավոր է, նեղաշնակ, հաճելի, ճոխ և միաժամանակ պարզ, առանց ավելորդ խճողումներու: Բեմը հսկայական տարածություն ունի և օժտված է մեծ օրկով մը: Կահավորումը ամբողջապես նոր է, մաքուր և դահլիճի ամբողջության հետ ներդաշնակ: Օթյակները ծածկված են կարմիր թավիշով: Դահլիճը ողողված է առատ, արտակարգորեն առատ լույսով, իսկական լույսի հեղեղ: Առաստաղեն կախված չորս պրոնզյա հոյակապ ջահերը՝ շատ գեղեցիկ հորինված, և բազմաթիվ աներևույթ լուսարձակներ ծնունդ կու տան այս լույսի հեղեղին: Գեղեցիկ են ու շքեղ նաև մարմարապատ մուտքը, միջանցքներն ու աստիճանները: Երրորդ հարկի վրա բացօթյա, լայնատարած պատշգամբ մը հաճելի հնարավորությունը կ՚ընծայե ներկաներուն՝ միջնարարներու ընթացքին թարմ օդ շնչելու և ըմբոշխնելու դյուրթիչ տեսարան մը, Երևանը ծով լույսի մեջ ողողված գիշեր ժամանակ:

Ֆիլհարմոնիայի նոր դահլիճը, անտարակույս, պատիվ կը բերե մեր հայրենի շինարար կառավարության և զայն կառուցող ճարտարապետներուն ու վարպետներուն: Որևէ եվրոպական մայրաքաղաք հպարտ պիտի զգա ինքզինքը նման դահլիճով մը:

Համերգը, որուն ներկա եղա հինգշաբթի երեկո, անմոռանալի օր մը պիտի մնա ինձ համար: Դահլիճը լեփլեցուն էր մինչև վերջին տեղը: Մեր երաժշտասեր, խանդավառ ժողովուրդը եկած էր վայելելու իր մայրաքաղաքի այս նոր ու աննման գոհարը: Եկած էր վայելելու նաև ֆիլհարմոնիայի նվագախումբը՝ ղեկավարությամբ հայտնի տիրիժոր

Մալունցյանի, և հայ ժողովուրդի տաղանդավոր երգչուհի, մեցոսոփրանո Զարուհի Դոլուխանյանը, որ քանի մը համերգներ տալու համար Մոսկվայեն հյուրաբար եկած էր մայր երկիր: Այդ երեկո ծրագիրը կազմված էր արևմտյան հեղինակներու գործերեն՝ Հենտել, Մոցարդ, Սեն–Սանս, Լալո և Մայերպեր: Գեղարվեստական մեծ վայելք մըն է լսել Դոլուխանյանը: Լեցուն, անուշ, վճիտ ձայն մը. կատարյալ թեքնիք, գույն ու նրբին երանգներ արտահայտերու զգայնություն, զուսպ ջերմություն, ձայներու մեկ ռեժիստրեն մյուսը ազատ ու թեթևորեն անցնելու բացառիկ կարողություն, գեղարվեստական խոր հասկացողություն, և այս բոլորը՝ հայակական քաղցր թեմպրով մը համակված: Գլուխգործոց մըն էր Մոցարդի «Մոդեդի» կատարումը:

Դժվարությամբ բաժնվեցա համերգեն ու սրահեն: Համերգին ներկա էին բազմաթիվ հայրենադարձներ, որոնց շարքին նաև մի քանի ծանոթ ռումանահայեր:

Միջնարարներուն հաճույք մը ևս եղավ ինձ համար շրջիլ մարմարապատ միջանցքներու մեջ՝ ներկաներու խուռներամ բազմության խառնված: Բոլորը, բոլորը երևանցի հայրենակիցներ են՝ ուրախ, զվարթ, վառվռուն դեմքերով, բոլորը վայելուչ հագնված և զարդարուն: Բոլորի աչքերուն մեջ կը կարդաս տոնական ուրախություն մը և հպարտության զգացում մը՝ ի տես այս արվեստի փառահեղ տաճարին:

Անակնկալ հանդիպումներ՝ նկարիչ Մարտիրոս Սարյան, փրոֆ. Արաքսիա Պապայան և ինժ. Լևոն Երզնկյան: Ջերմությամբ կը սեղմենք իրարու ձեռք, իբրև հին բարեկամներ:

Հայրենի հողի վրա բարեկամությունները սրտերը կը կապեն ու կը մնան անջնջելի:

***

Հայ ֆիլհարմոնիայի մեծ դահլիճը վայելող մը անհնար է, որ վերստին չփափաքի զայն տեսնել ու ըմբոշխնել: Շուտով այս երկրորդ առիթն ալ ստեղծվեցավ ինձ համար: Եւ այն ալ բացառիկ առիթ մը, որուն համար ինքզինքս մեծապես բախտավոր զգացի:

Հունիս 8–ը երևանցիներուն համար տոնական օր մը եղավ, երբ նորակերտ այս դահլիճին մեջ կազմակերպվեցավ համերգային մեծ երեկո մը՝ նվիրված Խորհրդային Միության անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատուրյանի հիսնամյա հոբելյանին:

Մայրաքաղաքի մտավորականությունն ու աշխատավորությունը, ինչպես նաև ներկայացուցիչներ դրացի քույր հանրապետություններեն եկած էին մեծարելու հայ ժողովուրդի աշխարհահռչակ այս զավակը:

Անմոռանալի երեկո մը ևս ինձ համար: Հանդիսությունը բացավ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Տիգրանյանը, որ մոտ կես ժամ տևող իր խոսքով վեր հանեց Արամ Խաչատուրյանի երաժշտական–ստեղծագործական մեծ անձնավորությունը:

Արամ Խաչատուրյան, իրոք որ, մեր ժամանակներու մեծագույն կոմպոզիտորներեն մին կը համարվի: Ան հորինած է ինքնուրույն երաժշտություն մը՝ ստեղծագործական բուռն ու հորդառատ զգայնությամբ, երաժշտական խոր մտածումով և վառ երևակայությամբ, գույնի և երանգներու զգացումով զեղուն, և երաժշտական կերպարները՝ հստակ ու կենսավառ ձևով արտահայտելու մեծ արվեստով: Խաչատուրյան, բարձրանալով հանդերձ դեպի ստեղծագործության ամենաբարձր կատարները, իր երաժշտությամբ մնացած է միաժամանակ հարազատ զավակը իր ժողովուրդին, վասնզի իր գործերը սերտորեն աղերս ունին հայ ժողովուրդի կյանքին ու զգայնության ակերուն հետ: Մայր երկիրն ու մայր ժողովուրդը եղած են իր ներշնչման գլխավոր աղբյուրները:

Այս տեսակետեն՝ ինքը Խաչատուրյան և հայ ժողովուրդը պետք է երախտապարտ ըլլան իրենց ռուս մեծ ուսուցիչներուն, որոնց խնամքին տակ մշակված և հասունացած է իր ստեղծագործական տաղանդը՝ Մոսկվայի պետական երաժշտանոցի մեջ:

Հայ մեծահամբավ կոմպոզիտորը հատկապես երախտապարտ է իր ուսուցչապետ փրոֆ. Միասքովսքիին, որուն մասին Խաչատուրյան կը գրե. «Ն. Ե. Միասքովսքին՝ իմ անմոռանալի ուսուցիչը, արտակարգ զգայնությամբ և խոր ըմբռնումով էր ուղղում իմ երաժշտական միտքը ռուսական և արևմտյան դասական երաժշտության ամբողջ հարստությունը ճանաչելու, պրոֆեսիոնալ կոմպոզիտորական վարպետությանը տիրապետելու ճանապարհով՝ ընդ որում ձգտելով չխախտել կամ չփոխել ազգային երաժշտական խառնվածքի այն կենդանի զգայնությունը, որ ներծծվել էր իմ մեջ մայրական կաթի հետ»:

Համերգի առաջին բաժնին մասնակցեցավ շնորհալի դաշնակահարուհի Աննա Ամբակումյան, որ մեծ վարպետությամբ նվագեց «Թոքաթան» և ուրիշ քանի մը ավելի փոքրիկ գոհարներ, որմե հետո պետական օփերայի երկու երգչուհիներ հաջող կերպով երգեցին հոբելյարի գործերեն:

Առաջին մասը վերջացավ թավջուլթակի համար գրված համերգին Առաջին մասի կատարումով, որուն մենանվագի բաժինը տաղանդով կատարեց Երևանի պետական երաժշտանոցի վերջին դասարանի ուսանողուհի Մետեա Աբրահամյան:

Փառավոր եղավ, սակայն, համերգին երկրորդ մասը, երբ հանդես եկան հայֆիլհարմոնիայի նվագախումբը, երգչախումբը և երիտասարդ ջութակահար Հակոբ Վարդանյան, վարպետ տիրիժոր Մալունցյանի հմուտ ու ջերմ զգայնությամբ: Ընդհանուր ոգևորության մեջ կատարվեցան Արամ Խաչատուրյանի սիմֆոնիք ստեղծագործություններեն՝ «Պոեմ Հայրենիքի մասին», «Ջութակի և նվագախումբի կոնցերտը» ամբողջությամբ, որուն ջութակի մենանվագը ճշմարտությամբ ու ճաշակով կատարեց Հակոբ Վարդանյան, ապա «Դիմակահանդեսի» նշանավոր վալսը և նույնքան նշանավոր «Սուրերու պարը» «Գայանե» պալե-

թեն, որոնք ցնծագին ծափահարվեցան ունկնդիր խանդավառ ժողովուրդին կողմե:

Հայ ժողովուրդը հպարտ էր իր մեծատաղանդ, հարազատ զավակով:

Համերգը վերջացած էր, և ես մենակ կը քալեի Երևանի փողոցներեն՝ երգը սրտիս: Կ'անցնեի կանաչ հագած աքասիաներու տակեն, որոնք, իրենց վարսերը կախած, կ'ուզեին, կարծես, ճակատս շոյել: Ակամա, երբեմն ձեռքս կ'երկարեի դեպի այդ կանաչազարդ ճյուղերը՝ պատասխանելու համար անոնց սիրո հրավերին: Եվ աղոթքի նման, հոգվույս մեջ կ'իջներ Գեղամ Սարյանի երգը օրհնության:

Դու կանաչ, կանաչ մնաս,
Հայրենի իմ ծառ.
Արմատներդ՝ անվնաս,
Ճյուղերիդ ծիծառ.
Թո՛ղ ամեն գարուն ծաղկես
Ու լինիս փարթամ,
Ծուքիդ տակ գամ, հանգչիմ ես
Ու գովքդ կարդամ...

ԵՐԵՎԱՆԸ 1953-ԻՆ

Ահա Սովետական Հայաստանի մայրաքաղաքը 1953-ի գարնան: Նորանոր բազմաթիվ կառուցումներ, նույնքան գեղեցիկ, ինչքան նախորդ տարիներուն շինվածները, նույնքան առինքնող:

Կը տեսնեմ ասֆալտապատ նոր ճանապարհ մը Զանգուի մյուս ափին, որ սկիզբ առնելով հաղթանակի կամուրջեն՝ կերթա մինչև Արզնի: Կ'այցելեմ նշանավոր ծածկած շուկան՝ Ստալինյան պողոտային վրա, ապա «Արարատ» տրեստի հոյակապ նոր շենքերը՝ մին լենինյան հրապարակը, մյուսը հաղթանակի կամուրջին ճիշդ դիմացը, բլրան կատարին: Կը տեսնեմ ամեն կողմ թե քաղաքին կեդրոնը, թե ծայրամասերը՝ բազմաթիվ բնակելի մեծ շենքեր, երեք, չորս և հինգ հարկանի, բոլորը նոր կառուցված և կամ կառուցման ընթացքի մեջ:

Հրաշալիք մըն է մասնավորապես Բաղրամյան պողոտան, որ կը տանի դեպի Արաբկիր: Հանրակառքը կ'աշխատի այժմ այս լայն պողոտային ամբողջ երկայնքին՝ բարձրանալով մինչև Արաբկիր՝ փողոց Կոմիտաս: Բաղրամյանի վրա բնակելի շենքերու կողքին, կան բազմաթիվ գիտական, մշակութային ու պետական հաստատություններու նվիրված շենքեր: Բոլորը անխտիր կառուցված են գունավոր տուֆով, մեկը մյուսեն տարբեր գույներով և ճարտարապետական տարբեր ինքնատիպ հորինվածքով, բայց բոլորը հայկական ոճի դրոշմով:

Կան քանի մը նոր շինություններ, որոնք կառուցման մեջ են տակավին, ինչպես օրինակ, նոր հյուրանոցին շենքը, որ հոյակապ պալատի մը տպավորությունը կը թողու:

Անտարակույս Բաղրամյան պողոտան նոր Երևանի ամենահատկանշական թաղամասն է: Անկե անցնելով՝ կը խորհիս, թե ճարտարապետական ցուցահանդես մըն է, որ կայցելես: Յուրաքանչյուր նոր շենք ճարտարապետական գյուտ մըն է: Ամեն մեկը նոր ու հաջող համադրություն մը, հայկական հին ճարտարապետական ոճի և սովետական նորագույն կառուցողական ըմբռնումներու: Ի պատիվ իրենց՝ մեր հայրենիքի ճարտարապետները, լավագույն կերպով կրցած են լուծել՝ ազգային հին ոճը նորագույն գաղափարներուն և պահանջներուն հետ ներդաշնակելու հարցերը: Ինչպես մեր պատմական անցյալ շրջաններուն, այսօր ալ հայ ճարտարապետության ու քանդակագործության արվեստին մեջ գեղեցիկը մարմին կ'առնե հանդարտ ու ծանր քարերու զանգվածներուն վրա՝ պարզ, սակայն, զորավոր ձևեր հորինելով, դեպի վեր ուժգին շարժում մը ուրվագծելով և այլազանության (անկրկնելիության) մեջ ներդաշնակություններ իրականացնելով:

Նոր Երևանի գեղակերտ կառուցումներեն մին պիտի դառնա Մատենադարան–Ձեռագրատան հոյակապ շենքը, որ կիսով չափ արդեն կը բարձրանա Ստալինյան պողոտայի վերջավորության ճիշդ ճակատը՝ Քանաքեռի բարձունքին ստորոտը: Ան կը կառուցվի ոչ թե տուֆ քարով, այլ գորշ գույնի պազալթով: Հայտնի է, թե պազալթը կռանիթի նման ամենաամուր ու ամենադիմացկուն շինանյութն է: Պազալթով կառուցանելը մեծ դժվարություններու կապված է այս ազնիվ քարի ծանրության և կարծրության պատճառով, սակայն անգամ մը, որ այս դժվարությունները հաղթահարվին, պազալթե կառուցված շենքը դարեր ու դարեր կանգուն կը մնա անսասան:

Եվ արդարև, երկաթագիր հազարամյա մեր ձեռագրերն ու մատյանները պետք էին ամփոփվիլ այսպիսի շինության մը մեջ, ուր քար ու մատյան միասին ապրին հավիտյան:

Իջնելով Բաղրամյան պողոտայի զառիվայրը՝ կու գամ դեպի կեդրոն, դեպի Ստալինյան և Ամիրյան, դեպի Աբովյան և ապա Միկոյան պողոտաները:

Այստեղ կը գտնվին մայրաքաղաքի առևտրական ամենաշքեղ հաստատությունները՝ բոլորը զարդարուն, մաքուր ցուցափեղկերով, իսկ ներսը՝ լեցուն պես-պես ապրանքներով: Այս տարի՝ 1953-ին, ակնբախ է արտասովոր առատությունը ամեն տեսակ ապրանքներու՝ սննդամթերքի, հագուստեղենի և տնային տնտեսության անհրաժեշտ իրեղեններու նկատմամբ: Մեծ առատությամբ ամեն կողմ կը տեսնվին ալյումինե և բլաստմասայե հազարումեկ տեսակ առարկաներ, ինչպես նաև էլեկտրական այլևայլ մեքենաներ և կազմածներ՝ տնային տնտեսության անհրաժեշտ, ինչպիսին են էլեկտրական ջերմոցներ, էլեկտրական սառցարաններ, խոհանոցի էլեկտրական վառարաններ, էլեկտրական բարձեր, ռադիոյի գործիքներ, պիսիքլետներ, մոթոսիքլետներ և այլն, և այլն, որոնք համեմատաբար աժան գներով կը վաճառվին: Որակյալ բանվոր մը, օրինակի համար, իր ամսական ռոճիկին կեսովը կրնա էլեկտրական սառցարանով օժտել իր խոհանոցը: Հայտնապես նկատելի

է, թե վերջին տարիներուն ծավալ ստացած է զարդեղեններու առևտուրը: Այս խանութները թիվով ավելի շատ են այժմ, քան նախորդ տարիներուն և ավելի, շատ ավելի ճոխ՝ ոսկեղեն ու արծաթեղեն իրենց ապրանքներով: Բացառիկ հաճույք մըն է այցելել ու գնումներ ընել «Արարատ» տրեստի վաճառատուներեն: Բոլորն ալ «մոտել» խանութներ են. կը փայլին արտակարգ մաքրությամբ, ներքին կարգուկանոնով, ճաշակավոր գունագեղ կահավորումով, զարդարուն ցուցափեղկերով ու ապրանքներուն հրապուրիչ արտաքինով: Այստեղ կը վաճառվեն Հայաստանի համբավավոր գինիներն ու կոնյակները, շամպանյան ու լիքեորները, հաճախ նաև չոր միրգ, չամիչ, շարոց, նուշ և այլն:

Երևանի վաճառատուներուն մեջ ուշադրությունս գրավեց վաճառողներու մաքրությունը, մանավանդ սննդամթերքի կեդրոններուն մեջ, ուր բոլորը սպիտակ վերարկուներ հագած են՝ կին թե տղամարդ: Որոշ թարմ ապրանքներ, ինչպես են՝ կարագ յուղ, խոզի հալած յուղ, «հոլանտական» հայկական պանիրները և կամ մսեղեն մթերքներ, պահված են էլեկտրական հսկայական սառցարաններու մեջ, որոնք զետեղված են անմիջապես վաճառողի ետևը՝ պատին մեջ: Մյուս մթերքները, ինչպես՝ շաքար, բրինձ, ալյուր, մակարոն և այլն, պարկերու և կամ հատուկ սնտուկներու մեջ կը գտնվին՝ բարակ, թափանցիկ շղարշով ծածկված:

Խանութներու թիվը այնքան աճած է արդեն, որ օրվան որևէ ժամուն մեծ խճողումի չես հանդիպիլ: Ամենաշատը երբեմն հինգեն տասը հոգինոց հերթ մը կրնաս տեսնել, ուր անցուդարձը մեծ է օրվան որոշ ժամերուն: Այդպիսի վաճառատուներեն մին է, օրինակ՝ Աբովյանի վրա գտնվող «Ունիվերմակ»–ը և իր կողքի մթերային մեծ խանութը, ուր ես հաճախ կ՚այցելեի ոչ թե գնումի, այլ այնպես՝ մեր երկրի բարիքներուն առատ մթնոլորտը և Երևանցի գնորդներուն եռուզեռը ըմբոշխնելու համար:

Չեմ կրնար այստեղ չհիշել Երևանի զարդերեն մին հանդիսացող ձկնեղեն ապրանքներու ընդարձակ վաճառատունը՝ Աբովյանի վրա, ուր կը ծառայեն նաև երկու հունահայ հայրենադարձ երիտասարդներ՝ մաքուր, սպիտակ վերարկուներ հագած, հաճոյակատար ու ժպտադեմ: Այստեղ կը տեսնես ախորժակ գրգռող ամեն տեսակի բարիքներ՝ աղի ձուկերու տեսակներ, պահածո ձուկեր, սարտելներ, նաև թարմ ձուկեր՝ Հայաստանի լիճերեն ու գետերեն և կամ հեռավոր Կասպից ծովեն: Սակայն բոլորի վրա կ'իշխե բնականաբար Սևանա «իշխանը»՝ թարմ կամ պահածո:

Մեծապես հաճելի եղավ ինձ Երևանի խանութներուն մեջ տեսնել պես-պես ապրանքներ՝ ոչ միայն սովետական արտադրության կեդրոններեն ստացված, այլ նաև եղբայրական դեմոկրատական երկիրներեն և նույնիսկ ավելի հեռուներեն: Այսպես է, որ մթերային խանութներու մեջ տեսա չինական թեյ, լեմոն, քաքաո, սուրճ (հում կամ խարկված), հաճախ՝ նարինջ, պանան, անանաս (պահածո), պարսկական չամիչ և բրինձ (որոնք կը մրցին տեղական չամիչին և բրինձին հետ): Մանուֆակտուրայի վաճառատուներու մեջ տեսա լենինկրատյան շատ նրբաճաշակ կերպասներու և «քաբրոն»-ներու (տեսակ մը նայլոն) կողքին նաև հունգարական և չեխոսլովակյան կերպասներ և մանավանդ չինական հիանալի մետաքսեղեններ:

Շատ կը ծախվի սպիտակ կամ քրեմ մետաքսը, որովհետև ոչ միայն կիները, այլ և տղամարդիկ իրենց համար շապիկ ու ամառվան զգեստ կը պատրաստեն այդ ապրանքներեն, հաճելի է դիտել ամեն երեկո Երևանցիները՝ մեծ մասամբ սպիտակ հագված, կին ու տղամարդ «ման գալիս» Աբովյանի վրա՝ օրորուն քայլվածքով:

Երևանի գեղեցիկ խանութներու կողքին պետք չէ մոռնան գրավաճառատունները, որոնք աչքի կը զարնեն թե՛ իրենց թիվով, թե՛ իրենց վայելուչ շքեղությամբ: Գիրքը այստեղ տաք հացի նման բան մըն է: Որոշ գիրքեր, հազարավոր օրինակներով կը սպառին քանի մը ժամվան մեջ: Այսպես կը վաճառվին, օրինակ, Ավետիք Իսահակյանի և

Դերենիկ Դեմիրճյանի գիրքերը: Բայց ոչ միայն զուտ գրական, այլև պատմական, գիտական որոշ գիրքեր նույն արագությամբ կսպառին: Այսպես, իմ Երևան ժամանելեն քանի մը օր առաջ լույս տեսեր էր Ա. Աբրահամյանի «Գրաբար» լեզվի նոր ու արժեքավոր ձեռնարկը, որ արդեն սպառած էր: Մասնավոր միջամտությամբ միայն կարողացա օրինակ մը ձեռք ձգել Պետհրատի պահեստեն:

Գրավաճառատունները այցելելով, հպարտության զգացումով համակված՝ կը դիտեի գունազարդ, գեղեցիկ կազմով հատորները՝ Տոլստոյի, Մաքսիմ Գորկիի, Սերվանտեսի, Շեքսպիրի, Տանթեի, Կյոթեյի, Պալզաքի, Մոլիեռի, Տիգենսի և այլ դասական գրողներու՝ բոլորը հայերեն թարգմանությամբ:

Շնորհիվ Հայպետհրատի ծավալուն և բեղուն գործունեության ռուսական և համաշխարհային գրականությունը մատչելի բաց գիրք մը դարձած է մեր երկրի ընթերցասեր ժողովրդին համար:

ՄՈՍԿՎԱ

Հարգելի ընթերցողը թող չխորհի, թե պիտի փորձեմ այստեղ ներկայացնել Մեծ Մայրաքաղաքը:

Ավելի ձեռնհաս ու զայն մոտեն ճանչցող հեղինակներ, հատորներ նվիրած են անոր փառահեղ անցյալին և ծաղկյալ, բարգավաճ ներկային: Ինձ համար իրոք անհնար պիտի ըլլար քանի մը էջերու մեջ ներկայացնել ռուս ժողովրդի այս մայր քաղաքը, ուր կը զգաս անոր հերոսական պատմության ավելի քան ութ հարյուր տարիներու ծանրությունը: Քաղաք մը ինքնատիպ, որ լեցուն է պատմական-գեղարվեստական անհամար կոթողներով ու հուշարձաններով: Քաղաք մը կենսահորդ, որ այսօր կեդրոնն է աշխարհի մեկ վեցերորդը կազմող՝ ավելի քան երկու հար-

յուր միլիոննոց բազմազգյա դաշնակցային հզոր պետութեան մը: Հսկա քաղաք մը արդիական, որ կը փառավորվի նորակերտ հրաշալի կառուցումներով, հազարավոր ուզինաներով և ֆապրիկաներով, քաղաք–վաճառատուներով, մեծահամբավ թանգարաններով, զմայլելի անհամար պարտեզներով, հրապարակներով և զբոսանքի վայրերով, և տեխնիկի ու արվեստի գլուխ գործոց մետրոպոլիտենով: Քաղաք մը, վերջապես, հարազատորեն ռուսական, բազմամիլիոն բնակչութեամբ, ուր միայն Իվանով անունը կրող քաղաքացիներու թիվը հարյուր հազարի կը հասնի, ուր յոթ հազար Իվան Իվանովիչ Իվանովներ կ'ապրին, և որու մեկ փողոցը միայն, ինչպես է Գորկի պողոտան, ավելի բնակչութիւն ունի, քան մեր Երևանը ամբողջ:

Ես պիտի խոսիմ միայն «Հայկական Մոսկվա»–ի մասին, այն ալ այն չափով, ինչ չափով որ պատահական անցորդ մը կրնա տեսնել ու ծանոթանալ քանի մը օրերու ընթացքին, երկու ճանապարհորդութիւններու միջև:

Առաջին հերթին ուշադրութիւնս գրավեց կեդրոնի Կարմիր հրապարակին շատ մոտ՝ մեծ թատրոնեն քիչ մը անդին՝ դեպի ձախ բացվող փողոցին վրա, գունավոր ու լուսաշող նեոնե ռեքլամը «Արարատ» հայկական ճաշարանին, ուր միշտ կարելի է գտնել Հայաստանի լավագույն գինիները, «շաշլիք»–ն ու «լուլա քեպապ»–ը, տոլման և թանապուրը: Ճաշարանին մեջ հայկական մթնոլորտ կը տիրե շնորհիվ ներքին պատերու վրա տեսնվող հայկական ոճով քանդակներուն ու նկարներուն և շնորհիվ սեղաններու շուրջ տեղ գրված հաճախորդներուն, որոնք մեծ մասամբ հայեր են, շատերը՝ երևանցիներ, որոնք Մոսկվա եկած են իրենց գործերով:

«Հայկական» է նաև Սովետական Հայաստանի մթերային վաճառատունը, որ նոր է բացված Գորկի պողոտայի մեկ անկյունը՝ երկու փողոցներու վրա քանի մը տասնյակ մեթր տարածված Պուշկինի հրապարակին ճիշտ դեմը: Այստեղ ավելի ճոխ ու շեշտված կերպով կը դրսևորվի որմնանկարներու և քանդակներու հայկական ոճը: Խանութին մեջ

կարելի է ազատորեն հայերենով հասկցվիլ բոլոր վաճառողներուն հետ, պաշտոնյաներու մեծամասնութիւնը հայերե են: Կը վաճառվին մեր արևոտ հայրենի հողին բարիքները՝ գինի, կոնյակ, շամպայն, հանքային ջուրեր (Արզնի, Ջերմուկ և Դիլիջան), պահածոներ՝ ծիրանի և դեղձի, վարդի և ընկույզի անուշ, խաղողի և խնձորի հյութ (սոք), հայկական սիկառներ՝ Մասիս, Անի, Սևան և այլն: Վաճառատան մեջ մասնավոր բաժին մը կա, ուր գավաթով կամ ամբողջ շիշով, կը սպասարկեն սառնորակ հանքային ջուրեր կամ պտուղներու հյութեր: Երբ երկրորդ անգամ ըլլալով՝ մտա այս Հայաստանյան խանութը բաժակ մը պաղ Ջերմուկ խմելու, գանձիչ երիտասարդ տիկինը, ժպիտը դեմքին, ինձ ըսավ. «Ներողութիւն տեր Հայր, կարելի՞ է ձեզ խնդրել, որ այս կիրակի իմ երեխան մկրտեք, ես նոր եմ հաստատվել Մոսկվա ու չգիտեմ ում դիմել և ուր»: Ցավ ի սիրտ դրական պատասխան մը չկրցի տալ այս հավատացյալ տիկնոջը, սակայն հարցը լուծվեցավ՝ իրեն տալով տեր Խաչատուրի հեռախոսի համար:

***

Մեծապես շահեկան է այցելել Մոսկվայի Հայոց գերեզմանատունը, որ ըստ երևույթին, մոտ 200 տարվան հնութիւն ունի: Կը գտնվի քաղաքի ծայրամասերեն մեկուն մեջ՝ ռուսական շատ ընդարձակ գերեզմանատան մը դիմացը: Հայոց Գերեզմանատունը կամ «Հանգստարան»–ը, ինչպես սովորութիւն է ըսել Կովկասի մեջ, («Հանգստարան» բառը ճիշտ թարգմանութիւն է «քիմեթերիոն» հունական բառին, ուրկե կը սերի նաև ռումաներեն cimitir–ը), կարմիր աղյուսե շինված բարձր պարիսպով շրջապատված՝ բավական մեծ տարածութիւն մը կը գրավե: Մուտքին անմիջապես մոտը՝ ձախ կողմը, կը գտնվի նույն կարմիր աղյուսով կառուցված շենք մը, ուր կը բնակի գերեզմանապահը իր

ընտանիքով: Շենքը օժտված է նաև ընդարձակ սրահով մը՝ ի հարկին այնտեղ պատսպարելու համար այցելուները ձմեռը և կամ անձրևի ժամանակ: Այս սրահին մեջ է, որ երբեմն հոգեճաշեր կը տրվին: Մուտքեն ոչ շատ հեռու՝ դեպի աջ կողմը գերեզմանին, կը բարձրանա մատուռը, որ, հաստատակառույց շինություն մը ըլլալով, կրնա նաև իբր եկեղեցի ծառայել: Մոսկվայի ծերունի բարեջան հովիվ Տեր Խաչատուրը, որ կ՚ընկերակցի ինծի, կը հայտնե, թե ներքին հանգանակությամբ մը և քաղաքային իշխանությանց օժանդակությամբ ծրագրված է նորոգության ձեռնարկել ու բարեզարդել այս մատուռ–եկեղեցին:

Առհասարակ գերեզմանատան մեջ կը տիրե մաքրություն և կարգուկանոն: Շատ գերեզմաններ լավ խնամված վիճակի մեջ են և ծաղիկներով հարդարված: Հայտնապես կը տեսնվի, թե ննջեցելոց հիշատակը կենդանի զգացում մըն է Մոսկվայի հայոց մեջ: Այս տեսակետեն կը խորհիմ, թե մերոնք կրած են նաև բարերար ազդեցությունը ռուս ժողովրդին, որ երկյուղածությամբ ու հոգեկան ջերմությամբ սրտին մեջ վառ կը պահե իր մեռելներուն հիշատակը: Ռուս մարդը տևականորեն կը խնամե ու կը հարդարե իր սիրելիներուն շիրիմները և շատ հաճախ այցի կ՚երթա ընտանյոք:

Երկար պտույտ մը ընելով նաև ռուսական գերեզմանատան մեջ՝ ես տեսա, թե ինչքան զորավոր և կենդանի զգացում մըն է մեռելներու պաշտամունքը ռուս ժողովրդի գիտակցության մեջ:

Մոսկվայի հայոց գերեզմանատան մեջ՝ համեստ խաչ մը կրող գերեզմաններու կողքին, կան նաև բազմաթիվ մարմարակերտ գեղեցիկ տապանաքարեր, խաչքարեր և դամբարաններ: Ոմանք գեղեցիկ հուշարձաններ են՝ պատմական կամ գեղարվեստական արժեք ներկայացնող:

Այստեղ գտա նաև մեր ազգին համար նվիրական շիրիմներ, ուր կը հանգչին մարմինները երբեմնի բոցաշունչ հայրենասերներու և մեծատաղանդ գիտնականներու, որոնք

հայ ժողովրդի հույսն ու պարծանքն եղած են անցյալ դարուն:

Ահա գերեզմանաքարերը Մկրտիչ Էմինի, Ստեփաննոս Նազարյանցի, Սմբատ Շահազիզի, Ղազարոս Լազարյանցի, ուսուցչապետ Խալաթյանցի, Կարապետ Կոստանյանի, Մսեր Մսերյանցի և այլոց: Սույն տապանաքարերեն ոմանք կը կրեն հետևյալ քանդակված խոսքերը՝ «Երախտապարտ սրտով հայոց հասարակությունը»: Գերեզմանատան ձախ կողմը՝ պարիսպին մոտ, կան երեք մատուռ–դամբարաններ՝ մեկը մյուսեն 5–6 մեթր հեռավորության վրա: Առաջինը կը պատկանի Մսրյան ընտանիքին, երկրորդը՝ Անանյանց, իսկ երրորդը՝ Գևորգ Քանանյանց ընտանիքներուն: Այս երեք հուշարձաններն ալ, թեև ճարտարապետական տարբեր ձևերով հորինված, բայց հավասարապես հայկական ոճը մարմնավորող քարե ու մարմարե քանդակված շատ գեղեցիկ կոթողներ են, որոնք, իմ կարծիքով, կարելի է արվեստի գործեր նկատել:

Իմ վրա առավելագույն խոր տպավորություն թողուց, սակայն, անսովոր մեծությամբ, սև կրանիթյա հուշարձան մը (կը խորհիմ, թե ավելի քան վեց մեթր բարձրություն ունի), որուն վրա կատարյալ արվեստով քանդակված է հայկական ոճով մեծ խաչ մը՝ հնադարյան մեր համբավավոր խաչքարերու օրինակով:

Հայկական քանդակագործական արվեստի ճշմարիտ կոթող մըն է այս հուշարձանը, որուն վերևը փորագրված է գեղեցիկ երկաթագիր տառերով.

«Ամեն, ամեն ասեմ Ձեզ, եթե ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի. ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ», իսկ ներքևը քանդակված է հետևյալը.

«Աստ հանգչի շառաւիղ Հայ Մելիքների՝ Դավիթ Սերկեյեան Մելիք Բեգլեարեանց (1875-1913)»:

Դիտելով այս հայկական գեղեցիկ հուշարձաններն ու խաչքարերը՝ կը մտածեի, թե ի՜նչ լավ կ՚ըլլար, եթե սփյուռքի մեջ ևս մեր ժողովուրդը հետևեր այս օրինակին, փոխանակ այլազան, պայմանագրական ու մեր սրտին ոչն-

չով խոսող ոճերով հուշարձաններ և դամբանաքարեր կանգնեցնելու, որոնք շատ հաճախ գեղեցիկ ալ չեն: Միայն այդ կերպով է, որ մեր գերեզմանատունները կը դառնան ճշմարիտ հայկական հանգստարաններ թե՛ մեր ազգային զգայնության հարազատորեն մտերիմ, թե՛ օտարներուն համար հետաքրքրաշարժ ու գնահատելի:

***

Մոսկվան ինձ համար չափով մը հայկական եղավ նաև այն պատճառով, որ իմ պտույտի պահերուն, ըլլան փողոցը, թե պարտեզներու կամ վաճառատուներու մեջ, հաճախ, շատ հաճախ կը հանդիպեի հայերու, ըլլան անոնք մոսկվաբնակ հայեր, ըլլան Հայաստանեն կամ Թբիլիսիեն եկած այցելուներ՝ ամեն մեկը իր աշխատանքի գծով:

Առանց անձնապես ծանոթներ ըլլալու՝ բնազդաբար կը մոտենայինք իրարու ու ջերմությամբ իրարու ձեռք կսեղմեինք, իբրև հին բարեկամներ: Հաճելի անակնկալ մը եղավ ինձ համար այս հսկա քաղաքին մեջ հանդիպիլ նաև հայրենադարձ հայրենակիցներու: Այսպես, ծանոթացա հունահայ երիտասարդի մը, որ, մեքենագետ որակյալ բանվոր ըլլալով, պետության ծախսով ուղարկված էր Մոսկվա՝ իր մասնագիտության մեջ ավելի մեծ հմտություն ձեռք բերելու նպատակով: Հանդիպեցա և ճանչցա բազմաթիվ հայ ուսանողներ և ուրիշ մի քանի ինժիներներ: Հայ ուսանողները Գորկի փողոցի վրա աչքի կը զարնեին իրենց հայկական դիմագծերով ու... բարձրախոսությամբ, մանավանդ որ սովորություն ունեին չորս-հինգ հոգի կամ ավելի, խմբովին զբոսնելու:

Օր մը, երբ ժտանով փողոցը մտա՝ ուղղվելու համար դեպի Սավոյ հյուրանոցը, ուր կբնակեի ամենակատարյալ քոնֆորթով, նկատեցի, թե հասուն տարիքի, փափախը գլխուն մարդ մը զիս կը հետապնդե, բայց չհամարձակիր խոսք ուղղել ինձ: Կանգ առի՝ դեպի իր կողմը դառնալով:

Խրախուսված իմ այս վերաբերումեն՝ ինձ մոտեցավ և ըսավ. «Անշուշտ դուք հայ հոգևորական էք և հավանաբար վարդապետ»: Բագվեցի հայ մարդ մըն էր: Հպարտությամբ պատմեց ինձ իր և իր որդվույն մասին: Թեև համեստ պայմաններու մեջ ապրած քաղաքացի, սակայն իր որդին կարողացել էր բարձրագույն կրթություն ստանալ, բժիշկ դառնալ և այժմ՝ մի քանի տարիներե ի վեր, Մոսկվա կապրեր՝ որպես մասնագետ բժիշկ՝ կոչված ըլլալով բժշկական կարևոր հաստատության մը տնօրենի պաշտոնին: Եվ ավելցուց. «Որդիս արդեն երեսուն տարեկանը լրացած է, մտածում եմ մի լավ հայ աղջիկ գտնել նրան համար»:

Հաջողության մաղթանքով բաժնվեցա այս համակրելի հայրենակիցեն:

Անձրևոտ օր մըն էր, երբ փողոցը խումբ մը հայերեն խոսող երիտասարդներ ճամբաս կտրեցին և ինձ մոտեցան ժպտադեմ ու հարգալից: Երևանցի մարզիկներ էին՝ Մոսկվա եկած՝ մասնակցելու համար համամիութենական մրցումներու:

Երկուքը ռումանահայ հայրենադարձ երիտասարդներ էին, իմ նախկին աշակերտներեն, որոնցմե մին Սովետական Հայաստանի սպորտային քայլի (marş forttat) ախոյան՝ Արամ Հովակիմյանն էր, որ հույս ուներ հաղթական դուրս գալու նաև Մոսկվայի մրցումներու ընթացքին: Հայաստանի ախոյանությունը շահած էր 10 քլմ. ճանապարհ քալելով 48,50 վայրկյանի մեջ:

Մոսկվայի մեջ քանի մը անգամներ ինձ այցելեցին մեր Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի շրջանավարտ երեք շնորհունակ սարկավագները՝ Քաջիկը, Անդրանիկը և Հենրիկը, որոնք երեքն ալ վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ երկու տարի հետևեր էին Զակորսկի ռուսական աստվածաբանական ճեմարանի մասնագիտական կրոնագիտական դասընթացքներուն՝ միաժամանակ աշխատություններ կատարելով հայ պատմագիտության կալվածին մեջ՝ ղեկավարությամբ հայտնի փրոֆ. Հովսեփ Կուսիկյանի, որ, իբր հայագետ և բյուզանդագետ, աշխատա-

կից է Մոսկվայի պատմագիտական պետական ակադեմիային:

Ինձ մեծ գոհունակություն ու մխիթարություն պատճառեց այն, որ մեր երեք խոստումնալից սարկավագները ամենայն լրջությամբ նվիրված են իրենց աշխատանքներին, և հոգվով-սրտով կը հավատան իրենց կոչումին: Լուռ ու մունջ կը պատրաստվին անոնք մոտ օրեն իրենց աշխատանքի և սիրո պտուղները ընծա բերելու՝ մեր աստվածակառույց Սուրբ Եկեղեցվույն ու մեր վերածնած մայր հայրենիքին:

***

Մեր սարկավագներեն Անդրանիկի միջոցով պատահմամբ ճանչցա ուրիշ հայրենադարձ երիտասարդ մը՝ Պեյրութեն ներգաղթած ու Երևան հաստատված իր ծնողաց հետ, 1947-ին: Ան այժմ Գ. կուրսի ուսանող է Մոսկվայի պետական երաժշտանոցի մեջ՝ հետևելով երգի (գանթո) բաժնին: Անունն է Լևոն Կեողլանյան, հազիվ 24-25 տարեկան միջահասակ աշխույժ երիտասարդ մը՝ թուխ մազերով, հայկական փայլուն աչքերով, ջերմ ու գրավիչ ժպիտով: Լևոն Կեողլանյան անուն մըն է, որուն մասին ապահովաբար շուտով պիտի խոսվի և գրվի, և անով պայծառ աստղ մը ևս պիտի փայլի սովետահայ արժեքներու լուսաշող երկնակամարին վրա: Լևոնը, թեև տակավին ուսանող, մասնավոր հրավերով սկսած է իր մասնակցությունը բերել զանազան համերգներու, որոնց երկուքին ես ալ ներկա գտնվեցա: Այս հայրենադարձ երիտասարդի փայլուն հաջողությունը առանձնապես հուզում և ուրախություն պատճառեց ինձ:

Մոսկվայի հռչակավոր «Գոլոննի զալի»-ի մեջ՝ անվանի ռուս արվեստագետներու շարքին, երգեց նաև Պեյրութեն ներգաղթած ուսանող Լևոնը: Համերգին ծանուցողը անհրաժեշտ նկատեց երկու խոսքով ներկայացնել տաղանդավոր հայ երգիչը ներկա գտնվող ռուս մտավորական ունկնդիրներուն (սույն համերգը կազմակերպված էր կրթական մինիստրության կողմե, հատկապես՝ Սովետական Միության բոլոր կարևոր կեդրոններեն արձակուրդով Մոսկվա եկած ուսուցիչներու համար):

Ծանուցողը խոսք առնելով նախ հիշեց, թե Լևոնը Թուրքիո մեջ հալածված ժողովրդի մը զավակն է, որուն հայրը, առաջին համաշխարհային պատերազմին Թուրքերու կազմակերպած ջարդերեն հրաշքով ազատվելով, ապաստան էր գտած Լիբանանի մեջ: Այստեղ ծնած ու մեծցած էր Լևոնը թշվառության մեջ՝ հազիվ կարողանալով իր ապրուստը ճարել բանվորությամբ: Սակայն 1947-ին մայր երկիր՝ Սովետական Հայաստան գաղթելով, գտած էր լավագույն պայմանները՝ ուսանելու և իր բնատուր տաղանդը մշակելու: Ավարտելով Երևանի երաժշտական վարժարանը՝ Լևոն եկեր էր Մոսկվա՝ այստեղ կատարելագործելու համար իր արվեստը պետական երաժշտանոցի մեծանուն մասնագետներու խնամքին ներքև:

Ապա բեմ ելավ Լևոն Կեողլանյան քիչ մը երկչոտ ու գունատ: Երգեց Սպենդիարյանի «Այ վարդ»-ը, Զայկովսքիեն կտոր մը և ապա իտալական ժողովրդական երգ մը: Հնչեղ, զորավոր, արտակարգ քաղցր, բյուրեղյա զգայուն ձայն մը, որ կախարդեց ամբողջ սրահը՝ արժանանալով խելահեղ ու անվերջանալի ծափահարություններու:

Պահ մը այնպես թվեցավ ինձ, թե բեմի վրա գնահատվողն ու ծափահարվողը ոչ միայն հայ արվեստագետն է, այլ ինքը մեր ամբողջ հայ ժողովուրդը: Եվ հիրավի, Լևոն Կեողլանյանի կյանքի պատմությունը և իր այսօրվան փառքը կը խորհրդանշեին հայ ժողովրդի վերածնունդն ու առաջընթաց, բարգավաճ կյանքը շնորհիվ ռուս մարդասեր ու ՀԱՅԱՍԵՐ մեծահոգի ժողովրդի եղբայրական անվերապահ աջակցության և Սովետական Իշխանության ստեղծած օգտաշատ բազում պայմաններուն:

ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐ*

Մասիս սարը ինչքան դիտես, Հայաստանի
ճամբաներեն ինչքան քալես, Երևանի
պաղ ջուրերու աղբյուրներեն ինչքան
խմես, չես հագենար: Քաղցր է սերը
Հայրենիքի:

ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Թեև վեցերորդ անգամ ըլլալով՝ Խորհրդային Հայաստան ճամբորդեցի, սակայն, գրեթե նույն ուժգնությամբ, ինչպես նախորդ անգամներուն, զգացի կարոտն ու ծարավը Հայրենի հողին ու ջուրին, Երևանի շենքերուն ու Հայաստանցի իմ եղբայրներուն:

---

* Այս ուղեգրությունն ամփոփում է Վեհափառ Հայրապետի 1954 թ. դեկտեմբեր և 1955-ի առաջին ամիսներին Խորհրդային Հայաստան և հարևան հանրապետությունների հայաբնակ շրջաններ կատարած այցելություններից ստացած տպավորությունները:

Նախապես տպագրվել է թերթոնների ձևով Պուքրեշի «Նոր կյանք» շաբաթաթերթում՝ 1955թ. ապրիլի 8-ին, № 15, ապրիլի 15, № 16, ապրիլի 22, № 17, ապրիլի 29, № 18, մայիսի 13, № 20, մայիսի 20, № 21, մայիսի 27, № 22 և հունիսի 3, № 23, ընդամենը 8 հատված: Առաջին 4 թերթոնները խորագրվել են՝ «Սովետական Հայաստանը 1955-ին», վերջին 4-ը՝ «Ճամբորդական նոթեր»: Ստորագրված է՝ Վազգեն եպս. Պալճյան:

Երկրորդ անգամ վերահրատարակվել է Սուրբ էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 301-322, որից և արված է սույն հրատարակությունը:

Հայրենաբաղձ ընթերցողը կ՚սպասե, անշուշտ, որ նորություններ պատմեմ մեր հարազատ մայր երկրեն, պատմեմ նոր շինություններու, նոր հաջողություններու, նոր նվաճումներու մասին, վասնզի ան գիտե, թե խորհրդային աշխարհի մեջ ամիս մը չ՚անցնիր, օր չ՚անցնիր, որ իր հետ չբերե նորություն մը, ըլլա իբրև ծրագիր կամ կառուցողական ձեռնարկ՝ տնտեսա–արդյունաբերական կյանքի մեջ, ըլլա իբրև նոր նվաճում և ստեղծագործություն՝ գիտության ու արվեստներու կալվածին մեջ:

Եվ այսպես մտածելով՝ ընթերցողը ամենևին չի սխալիր:

Երբ անցնող տարվույն դեկտեմբեր 18–ին՝ ցերեկվան ժամը 1.30–ին, Խորհրդային Հայաստանի սահմանը անցանք, առաջին իսկ կայարանի՝ Այրումի շուրջ տեսա նոր մի քանի մեծ շինություններ, որոնք անցյալ տարի չկային: Ապա շոգեկառքը հառաջանալով Դեբեդ գետի փրփրալի ափերով՝ նշմարեցի աշխատանքները, որոնք նոր սկսած են՝ Նոյեմբերյանի շրջանի քարքարուտ այդ լեռնալանջերուն վրա պտղատու ծառաստաններ մշակելու համար, մինչև այժմ անմշակ մնացած ընդարձակ խոպան տարածություններու վրա: Տեղ–տեղ հստակ կերպով տեսանելի էին ծառապատված հողամասերը: Մի քանի տարի հետո դեղձ ու ծիրան, սալոր ու խնձոր պիտի թափվի Նոյեմբերյանի մրգաստաններու հազար–հազարավոր ծառերեն:

Բայց Սանահին կայարանն է, որտեղ մեզ վերապահված է անակնկալը: Այստեղ է, որ Մոսկվա–Երևան մեր կառախումբին շոգեշարժ մեքենան կը փոխարինվի էլեքտրաշարժ մեքենայով մը: Էլեքտրական հսկա լոքոմոթիվ մը՝ նոր ու գունագեղ, մեր կառախումբը շարժման մեջ կը դնե ու կը տանի մեզ մինչև Լենինական: Լենինականեն մինչև Երևան վերստին կը ճամբորդենք շոգեշարժ մեքենայով: Փաստ է ուրեմն, թե Խորհրդային Հայաստանի երկաթուղագծերը սկսած են արդեն էլեքտրականացվիլ: Ու աշխատանքները կը շարունակվին մինչև բոլոր գծերու ամբողջական էլեքտրականացումը:

Ամբողջ ճանապարհի երկարության հաճախ կը տեսնեմ նորանոր կառուցումներ շենքերու, կամուրջներու կամ գործարաններու: Ալավերդիի կայարանեն ոչ շատ հեռու բարձրացած է հոյակապ նոր շենք մը՝ վարդագույն տուֆե կառուցված, որ բնակելի մեծ շինություն մը ըլլալ կը թվեր:

Թեև դեկտեմբերի վերջերն ենք, սակայն բավականին առատ միրգ կը վաճառվի կայարաններու շուրջ: Գյուղացի կիներ ու պատանիներ են ծախողները, իրենց տնամերձ տնտեսության պտուղներեն: Մեր վագոնին մոտերը կը տեսնեմ ինը–տասը տարեկան սևաչյա մանչուկ մը, որ իր ձեռքերուն մեջ բռնած է հինգ կարմիր, խոշոր խնձորներ: Կը կանչեմ մոտս, կ՚առնեմ խնձորները և կը հարցնեմ. «Ինչքա՞ն արժեն էս խնձորները»: Երեխան իմ հարցումին չպատասխանեց, երկչոտ գետնին նայեցավ ժպտելով, ու այտերը կարմրեցան ձեռքի խնձորներուն նման: Երկարեցի հինգ ռուբլիանոց թուղթ մը, բայց սևաչյա հայորդին ավելի ևս կարմրելով՝ ըսավ. «Ո՞նց առնեմ էս փողը, ամաչում եմ»: Հարցուցի, թե ո՞վ է, և անունը ի՞նչ է: Աչքերը փայլեցան և համարձակ ու խելացի ինձ նայելով՝ պատասխանեց. «Հովիկ է իմ անունը», – ու փախավ գնաց առանց դրամը առնելու:

Ճամբու ընկերներս են երեք հայ ինժեներներ, տնտեսագետ մը և Երևանի պետական օփերայի անվան տիրիժոր, փրոֆեսոր Գևորգ Բուդաղյանը:

Ինժեներները՝ երկուքը գյուղատնտես և մեկը երկրաբան, լայն տեղեկություններ կու տան ինձ նոր շինարարական ձեռնարկներու մասին, որոնց շարքին կարևոր կը համարեմ հիշել Խորհրդային Հայաստանի կառավարության որոշումը, առաջին հերթին՝ երկու նոր հիտրոէլեքտրակայաններ կառուցելու մասին, մին՝ Դեբեդ գետի, և երկրորդը՝ Որոտան գետի հոսանքին վրա: Պիտի կառուցվին ևս երեք ավելի փոքր հիտրոէլեքտրակայաններ մինչև 1961 թվականը: Այսպեսով՝ էլեքտրական ուժի նոր, մեծ աղբյուրներ պիտի ստեղծվին Հայաստանի մեջ՝ Զանգուի ափին կառուցված մյուս մեծ էլեքտրակայաններու կողքին,

ու Սևանա լճի ջուրերն ավելի խնայողաբար պիտի գործածվին, որպեսզի այս զմայլելի լիճը, որ իր մեծությամբ ու բարձրությամբ աշխարհի մեջ մեկ հատիկ է, իր գոյությունը պահե տևականորեն:

Իմ երաժշտագետ ճամբու ընկերոջմես ալ նույնքան հրաշալի բաներ կը լսեմ Երևանի երաժշտական կյանքին վերաբերյալ: Պետական երաժշտանոցի փրոֆեսոր և օփերայի տիրիժոր Բուդաղյան մեծ գովեստով կը խոսի Ալեքսանդր Հարությունյանի և Արնո Բաբաջանյանի մասին: Գովքը կը հյուսե Բաբաջանյանի մեկ նոր ստեղծագործության՝ «Հայկական ռապսոդիային», որ «երաժշտական մեծ գործերու շարքին պիտի դասվի», – կը հայտարարե երաժշտագետ խոսակիցս:

Փրոֆ. Բուդաղյան կը նշե նոր ու ճշմարիտ տաղանդ, տիրիժոր Արամ Հովհաննիսյանը, որուն վրա մեծ հույսեր դրած է հայ երաժշտական աշխարհը, ինչպես նաև երկու երիտասարդ տաղանդներ՝ թավջութակահարներ Մետեա Աբրահամյան և Յուրի Եղիգարյան: Որպես կարևոր նպաստ հայ երաժշտական գիտության, փրոֆեսորը կը հիշե Երևանի երաժշտանոցի դասախոսներեն Ռոբերտ Աթայանի՝ խաղերու մասին արժեքավոր ուսումնասիրությունը և այլն:

Կը տեղեկանամ նաև, թե Հայպետհրատը ծրագրած է հրատարակել, 1955-1956–ի ընթացքին, գործերը արևմտահայ գրագետներ Մեծարենցի, Վարուժանի, Սիամանթոյի և Սևակի: Ինչպես հայտնի է, Հ. Պարոնյանի գործերուն առաջին հատորը լույս տեսած է արդեն, իսկ Բ. հատորը լույս պիտի տեսնե ապրիլի մեջ:

«Շատ լավ ժամանակին եք գալիս Երևան, սրբազան, – ավելցուց փրոֆ. Բուդաղյան: – Առաջին երկու–երեք ամիսների ընթացքում Դուք Երևանի մեջ պիտի կարողանաք լսել Կոմիտասի անվան քառյակը, հայազգի հայտնի դաշնակահար Վիկտոր Մերժանովը, Գոհար Գասպարյանի՝ նոր հայտագրով համերգները, ինչպես նաև երաժշտական ելույթները մեծ տիրիժոր Կ. Զանդեռլինգի, հռչակավոր

թավջութակահար Դանիել Շաֆրանի և մոլտովական «Տոյնա» երգչախումբի»:

Սիրտս կը խայտար՝ լսելով այս բոլորը, ու այս հույզերով խանդավառ, առաջին անգամ մեր մայր երկիրը այցելողի մը ջերմ անհամբերությամբը զեղուն՝ հասա Երևան դեկտեմբերի 18-ին՝ գիշերվան ժամը 11-ին:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐ ԹԱՓ

Երևանը անընդհատ աճող ու շենցող քաղաք մըն է: Թե՛ կեդրոնը և թե՛ թաղամասերուն մեջ տասնյակ ու հարյուրավոր նոր, բազմահարկ շենքեր կը բարձրանան՝ բոլորը գունավոր տուֆ քարե կառուցված, մեծ մասամբ բնակելի շենքեր: Բոլոր թաղերուն մեջ կարելի է տեսնել քաղաքային վարչության կարգադրությամբ փլցվող հին տուներ՝ տվյալ հողամասի վրա երեք-չորս հարկանի նոր շենքեր կառուցելու նպատակով, բավարարելու համար մայրաքաղաքի՝ հետզհետե աճող բնակչության պահանջները:

Այս տարի և հաջորդ մի քանի տարիներու ընթացքին, սակայն, Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի շինարարական աշխատանքներու ծանրության կեդրոնը պիտի հանդիսանան Շահումյան և Միկոյան շրջանները:

Բաղրամյան գեղատեսիլ փողոցը Երևանի կեդրոնեն կը բարձրանա մինչև Արաբկիրի թաղը (Միկոյան շրջան), որուն առաջին փողոցը՝ Կոմիտասի անվան, կը տարածվի դեպի աջ, իսկ դեպի ձախ կը սկսի նոր բացված Քիևյան լայն պողոտան, որ կը տանի մինչև Զանգու գետի ափը բարձունքներու վրայեն: Այստեղ՝ Զանգու գետի վրա, հոյակապ կամուրջ մը կը կառուցվի, որ պիտի միացնե Քիևյան փողոցը գետի մյուս ափին հետ, ուր կը սկսի Շահումյանի անվան շրջանը: Ստեփան Շահումյան շրջանին մաս կը կազմեն Նոր Մալաթիա և Նոր Կիլիկիա մեծ թաղամասերը, ուր քանի մը տասնյակ հազար հայրենադարձներ իրենց բնակարանները կառուցած են՝ շրջապատված տնամերձ պարտեզներով: Նորակառույց կամուրջը թեքնիքի հրաշալիք մըն է. բարձրությունը՝ վաթսունհինգ մեթր, երկարությունը՝ երեք հարյուր մեթր, և այնքա՜ն լայն, որ վրայեն պիտի անցնին հանրակառք և մեքենաներու համար հատուկ ճանապարհ՝ բացի եզերքի մայթերեն, որոնք հատկացված պիտի ըլլան անցորդներու:

Այցելեցի շինվող կամուրջը, որ գրեթե ավարտած է ու այս տարի՝ նոյեմբեր 7-ին, շահագործման պիտի հանձնվի: Կառուցող գլխավոր ինժեներներն են Սիմոն Հովնանյան և Գրիգոր Աղապապյան: Սիմոն Հովնանյան գլխավոր կառուցողն է եղած նաև Հաղթանակի կամուրջին, և հայաստանցիները զինքը կ՚անվանեն «կամուրջներու արքա»:

Զանգու գետի ափին՝ Շահումյան շրջանի բլուրներու և բարձրավանդակին վրա, կը տարածվին շատ ընդարձակ հողամասեր, ուր ծրագրված է հիմնել հանգստյան և կուլտուրայի մեծ պարտեզ մը՝ Ստեփան Շահումյանի անվան, ինչպես և շատ ընդարձակ մարզադաշտ մը: Պարտեզը պիտի երկարի մինչև Ծիծեռնակաբերդի բարձունքները:

Շինարարական սույն ծրագիրը այստեղ կանգ չ՚առներ սակայն: Ուրիշ մեծ կամուրջ մը ևս ծրագրված է կառուցել, որ պիտի միացնե Միկոյան շրջանի մյուս ծայրը նոր Կիրզայի և Նորքի բարձունքին: Այսպեսով՝ ասֆալտապատ լայն ճանապարհ մը պիտի միացնե (Երևանի շուրջ, հսկա գոտիի մը նման) Շահումյան շրջանը Միկոյան շրջանին, և այս վերջինը՝ Նոր Կիրզային և Նորքին վերոհիշյալ երկու մեծ կամուրջներով, որոնցմե մին արդեն գրեթե պատրաստ է: Այդ ճանապարհը, Նորքի բարձունքին լայն աղեղ մը կազմելով, պիտի իջնե մինչև Նոր Արեշ, այսինքն՝ Արարատյան դաշտը: Ու այս ճանապարհը եթե միացվի Երևան-Էջմիածին ճանապարհին, այն ատեն մեր մայրաքաղաքը շրջապատող ճանապարհի գոտին արդեն կատարյալ կ՚ըլլա: Հոյակապ ծրագիր մըն է, որ կարճ ժամանակի մեջ ամբողջովին պիտի կերպարանափոխե մեր Հայրենիքի մայր քաղաքը: Երևանցիները, բոլորը անխտիր, մեծ ոգևորությամբ կը

խոսին այս սքանչելի ծրագրին մասին, և ոմանք այն կարծիքն ունին, թե քաղաքին ամենեն գեղեցիկ մասը պիտի դառնա մեծն Շահումյանի անունը կրող շրջանը:

Երանի՜ անոնց, որ Երևանը պիտի տեսնեն ու վայելեն տասը տարի հետո:

Երանի՜, մանավանդ, բոլոր անոնց, որ մեր վերածնած երկրի գալիքը կը ստեղծեն իրենց բազուկներու և հոգիի շինարար ուժերով:

Ջերմ երախտագիտությամբ գեղուն՝ մեր հայրենաբաղձ սրտերը բանաստեղծին հետ կ՚երգեն.

«Իմ Հայաստան աշխարհի դեմ սիրտս բաց,
Վար իջնեի սանդուղներով եթերի.
.....
Գուրգուրեի, համբուրեի ես սիրով
Վեր խոյացող ճակատները շենքերի.
.....
Համբուրեի ժողովրդիս ձեռները՝
Հանճարագործ աշխատանքի բովի մեջ»:

(Վ. Ալազան)

Մայրաքաղաքի և ամբողջ երկրի շինարարության թափին համընթաց կը զարգանա նաև Հայաստանի ճարտարարվեստը՝ ըլլա ընդլայնումովը արդեն իսկ գոյություն ունեցող ճարտարարվեստներու, ըլլա ստեղծումովը նորերու, մանավանդ, քիմիական և էլեքտրամեքենաշինական ճարտարարվեստներու գծով:

Հունվար 2-ին ինձ այցելողներուն մեջ կը գտնվեր Պուքրեշեն հայրենադարձ Խաչիկ Գայսերյանը, որը պատմեց Երևանի ժամացույցներու գործարանին հետզհետե ընդարձակման և արտադրության մեծ աճի մասին: Գայսերյանը այդ գործարանի մեջ որակյալ աշխատավորներեն է հինգ-վեց տարիե ի վեր: Այս գործարանին մեջ կ՚աշխատին նաև հայրենադարձ հարյուրավոր նոր վարպետներ ու որակյալ բանվորներ: Այժմ գործարանը ընդարձակվեցավ, և արտադրությունը բարձրացավ թե՛ քանակով, թե՛ որակով:

Գայսերյան շեշտեց նաև այն, թե արտադրված ժամացույցներու բոլոր մասերը անխտիր կը պատրաստվին իրենց գործարանին մեջ:

Երևանի գործարանի ժամացույցները գնահատված են ամբողջ Միության մեջ, և պահանջը այնքան շատ է, որ խնդիր կը դրվի ավելի ևս մեծցնելու արտադրությունը:

Այս տարի գործարանը պիտի սկսի արտադրել նաև նոր ձևի ժամացույցներ՝ ավելի շքեղ արտաքինով, իսկ մոտ ատենեն նոր բաժին մը պիտի սկսի գործել՝ թևի ժամացույցներ արտադրելու համար:

Մեր մայրաքաղաքի մեջ զարգացող այս ճարտարարվեստը մեծ ապագա ունի և պատիվ կը բերե մեր շինարար ժողովուրդին:

Շինարարության և ճարտարարվեստի աճին հետ միասին օրեօր կը բարելավվին նաև աշխատող մարդկանց կյանքի պայմանները: Գայսերյան այս տեսակետեն ալ ուրախալի տեղեկություններ տվավ՝ հայտնելով, թե իրենց վարպետներու և բանվորներու եկամուտները հետզհետե բարձրացած են, և ամեն մեկը՝ համաձայն իր աշխատանքի արտադրողականության աստիճանին, կը շահի 1000-են մինչև 2000 ռ. և նույնիսկ, երբեմն, ավելի: Իսկ նորարարները և ստախանովականները կը ստանան բացառիկ գումարներ որպես պարգև:

Գայսերյան ինձ մոտ եկած էր իր կնոջ՝ Անահիտին և իր սիրունիկ երեխային հետ: Կը դիտեի զիրենք, կը նայեի իրենց հագուստին, իրենց դեմքին, կը լսեի իրենց խանդավառ, շենշող խոսքը և հոգեպես մխիթարված կը խորհեի՝ ահա՛ երջանիկ ընտանիք մը:

ԼԵՆԻՆԱԿԱՆ

Հունվար 4-ին՝ երեկոյան, մեծ ուրախությամբ ճամբա ելա դեպի Լենինական՝ Ս. Ծննդյան տոներու առթիվ պա-

տարագ մատուցանելու և ջրօրհնյաց հանդեսին նախագահելու համար:

Առաջին անգամ էր, որ պիտի տեսնեի մեր Հայրենիքի երկրորդ քաղաքը՝ նախկին Ալեքսանդրապոլը կամ Կյումրին, որ կը գտնվի Ախուրյանի ափին՝ ծովի մակերեսեն 1500 մ. բարձրություն ունեցող բարձրավանդակի մը վրա: Քաղաքին օդն ու ջուրը հիանալի են և շատ առողջարար:

Երևան-Մոսկվա գնացքը Լենինական հասավ նույն օրը՝ գիշերը ժամը 11-ի մոտ: Առաջին իսկ տպավորությունս անսպասելիորեն հրաշալի էր: Մեզ ընդունեց շքեղ կայարան մը՝ ընդարձակ ու գեղեցիկ սրահներով: Ամեն տեղ կարգուկանոն և մաքրություն: Մեծ կեդրոնի մը կայարան ըլլալու տպավորությունը կը թողու:

Մեր եկեղեցական իշխանության ներկայացուցիչներու կողմե առաջնորդվեցանք դեպի «Ինտուրիստ» հյուրանոցը, որ կը գտնվի քաղաքին կեդրոնը՝ մեծ հրապարակին վրա: Եվ ինչպես Երևանի մեջ, այստեղ ևս հյուրանոցը բազմահարկ, մեծ շենք մըն է՝ օժտված բոլոր հարմարություններով:

Առավոտյան, երբ սենյակիս պատշգամբը ելա՝ քաղաքը դիտելու, խոր գոհունակությամբ տեսա, թե Լենինականը իսկապես իր անունին արժանի քաղաք մըն է՝ բառին բովանդակ իմաստովը:

Հրապարակը շատ ընդարձակ է և ամեն կողմերեն շրջապատված բազմահարկ, սիրուն շենքերով՝ քարաշեն, գունագեղ: Զորս-հինգ փողոցներ՝ լայն ու կանոնավոր, իրենց սկիզբը կ'առնեն սույն հրապարակեն ու կը տանին դեպի քաղաքի զանազան մասերը՝ տարբեր ուղղություններով:

Հրապարակի վրա և հրապարակի շուրջ գտնվող շենքերու այս համախումբին մեջ հաճույքով տեսա երկու մեծ եկեղեցիներու երկնասլաց գմբեթները, որոնցմե մեկը մանավանդ՝ Ս. Ամենափրկիչ եկեղեցին, կ'իշխեր բոլորին վրա իր բարձրությամբ (60 մեթր) և իր ճարտարապետական բացառիկ գեղեցկությամբ: Այս տաճարը կառուցած է 1859-1873-ի շրջանին, Թադեոս Անդիկյան անունով նշանավոր

վարպետը, Անիի Մայր եկեղեցվո նմանությամբ՝ մոխրագույն և կարմիր տուֆե: Զայն կարելի է համարել հայկական ճարտարապետության կոթողներեն մին:

Իհարկե, պատշգամբեն ավելին չէի կարող տեսնել: Ահա թե ինչո՛ւ իմ առաջին ցանկությունը եղավ Լենինականի եկեղեցիները այցելելե վերջ քալելով «ման գալ քաղաքում»: Եվ իրոք, քանի մը ժամվան պտույտը ինձ մոտեն ծանոթացուց քաղաքին:

Լենինական մնացի չորս օր և գրեթե ամեն օր նման պտույտներ կատարեցի դեպի քաղաքի զանազան մասերը: Այցելեցի հանրային մեծ և գեղեցիկ հանգստյան և կուլտուրայի պարտեզը, որ կը տարածվի բարձունքներու վրա, այցելեցի շուկան, բազմաթիվ վաճառատուներ, որոնք նույնպես ներկայանալի և լավ պարենավորված են, ինչպես Երևանի խանութները, այցելեցի պետական թատրոնի շենքը և այլն:

Այցելեցի նաև ռումանահայ մի քանի հայրենադարձներու բնակարանները: Դժբախտաբար, ժամանակ չունեցա՝ բոլորին հրավերները ընդունելու: Այս տեսակետեն, ամենեն արագ շարժվողը Հայկ Քիլիմյանը եղավ, որ եկեղեցական արարողութենեն հետո գիս ուղղակի իր բնակարանը տարավ, ուր այնքան ջերմ ընդունելություն գտա իր ընտանեկան հարկին տակ:

Հայկն ու իր կինը՝ Ռեբեկան, երիտասարդ ու աշխատունակ ուժեր են, որոնք, ինչպես առհասարակ բոլոր մեր հայրենադարձ եղաբայրներն ու քույրերը, տոգորված են հայրենաշինության գիտակցությամբ և հպարտ են իրենց աշխատանքով ու Հայրենիքի շինարարության ու արդյունաբերության առաջընթաց թափով:

Հայկն ու գրեթե բոլոր հայրենադարձները կը բնակին Լենինականի նորակառույց մասին մեջ, որ տարածված է քաղաքի նշանավոր թեքսթիլի մեծ կոմբինատի շուրջ: Այդ նոր քաղաքամասը ինքնին ամբողջ քաղաք մըն է՝ իր յուրահատուկ ոճով: Այստեղ չկան քաղաքի հին թաղերու խառն ոճով կառուցված շենքերը, ոմանք պարսկական,

թրքական կամ այլ ոճով, այլ բոլորը 3–4 հարկանի քարաշեն, մեծ, բնակելի շենքեր են, գրեթե միանման, ինչպես նորագույն մեծ քաղաքներու բանվորական թաղամասերը: Բոլոր փողոցները՝ լայն, մաքուր, կանոնավոր, սալահատակված քարով կամ ասֆալտով, կը տարածվին մի քանի քիլոմեթր երկարությամբ՝ գիշերները առատ էլեքտրական լույսով լուսավորված:

Վերջին տասը տարիներու ընթացքին Լենինականը գրեթե կրկին անգամ մեծցած է՝ բնակչության թիվը մոտենալով երկու հարյուր հազարի:

Այս նոր թաղին մեջ կը բնակի նաև Հայկ Քիլիմյանը, ուրիշ ռումանահայ և սուրիահայ հայրենադարձներու հետ միասին:

Հազիվ ճաշը ավարտած էինք, երբ ահա՛ սկսան գալ, մեկը մյուսին ետևեն, ռումանահայ հայրենադարձներ՝ զիս տեսնելու: Շուտով Հայկին բնակարանը արդեն լեփ–լեցուն էր: Քսան–քսանհինգ ռումանահայեր եկեր էին զիս ողջունելու և պատմելու իրենց նոր կյանքի մասին: Անոնք մեծ մասամբ կ՚աշխատին թեքսթիլ–թրիքոթաժի գործարանին մեջ:

Իմ վրա անջնջելի տպավորություն թողուցին, մանավանդ, մի քանի երիտասարդներ, ոմանք իմ նախկին աշակերտներեն Պուքրեշի ազգային վարժարանի, որոնք այսօր փայլուն և պատվավոր կերպով կը կատարեն իրենց հայրենանվեր ու շինարար քաղաքացիի պարտականությունը, մեր վերաշինվող ու ծաղկող սովետական հայրենիքին մեջ:

Ահա՛ Տիգրան Խորանյանը՝ 23 տարեկան, որ մասնագետ աշխատավոր մը դարձած է վերոհիշյալ գործարանին ներկարարության բաժնին մեջ որպես մեքենավար և աշխատելով 1959–ի հաշվույն՝ հռչակված է աշխատանքի առաջավոր: Ամսական 1800 ռ. ռոճիկ կը ստանա և իր արձակուրդներուն այցելած է Լենինկրատ, Մոսկվա և ուրիշ կեդրոններ:

Աշխատանքի առաջավոր է նաև Ալիս Հալարյանը թրիքոթաժի բաժնին մեջ՝ որպես քափրոն (նայլոն) գուլպաներ

կազմող մեքենայի մը հայտնի վարիչ: Նույնքան հայտնի են իրենց որակյալ աշխատանքով էլեքտրամեքենագիտական գծով՝ Արամ Քեչեճյանը և Սարգիս Հովհաննիսյանը: Բոլորին ձեռքերը կը սեղմեմ անհուն ուրախությամբ՝ շնորհավորելով և օրհնելով զիրենք: Խանդավառ երիտասարդներ են և հպարտությամբ կը պատմեն իրենց նոր կյանքի մասին և անսասանելի հավատքը ունին ավելի պայծառ ու երջանիկ գալիքին: Այդ հավատքը կարդացի հատկապես Արամ Քեչեճյանի և Տիգրան Խորանյանի խոսքերուն մեջ: Անոնք Հայկի սեղանի շուրջ ջերմ հայրենասիրության բաժակաճառեր արտասանեցին՝ պարզ ու խորապես անկեղծ խոսքերով:

Նույն օրը՝ երեկոյան, այցելություն տվի Վերոն Պոյաճյանի բնակարանը, որ կը գտնվի միևնույն թաղամասին մեջ: Այստեղ ևս, նույնքան ճոխ սեղանին շուրջ, հավաքվեցան ուրիշ տասնյակ մը ռումանահայ հայրենադարձներ՝ բոլորը ուրախ տրամադրություններով: Շատ շուտով ջերմագին մթնոլորտ մը ստեղծվեցավ, և չզգացինք, թե ինչպես սահեցան ժամերը: Եվ ի՜նչ հաճելի անցան այդ ժամերը:

Հայրենի հողին վրա, երբեմնի պանդուխտ հայու հոգիին մեջ, նոր զգայություն մը կը բորբոքի՝ անկեղծ ու հարազատ ապրումներով զեղուն, զգայություն մը, որ կը փոխանցվեր ինծի և կը համակեր իմ ամբողջ էությունը: Ու իմ սրտի բոլոր լարերով ես սիրեցի մեր հայրենադարձ եղբայրներն ու քույրերը:

Երբ բաժնվեցա զիս հյուրասիրողներեն, արդեն ուշ գիշեր էր: Հայկն ու Տիգրանը զիս կ՚առաջնորդեին դեպի հյուրանոց: Առաջարկեցին զիս մեքենա նստիլ՝ տրված ըլլալով, որ ավելի քան կես ժամվա քալելու ճամբա կար, սակայն նախընտրեցի քալելով երթալ:

Հրաշալի գիշեր մըն էր՝ պայծառ ու աստղազարդ երկնքով: Ցմեռվան առողջ օդը ծծելով՝ կը քալեինք նոր Լենինականի փողոցներեն: Ինձ ուղեկցողները անսպառ ոգևորությամբ կը պատմեին իրենց քաղաքի մասին, թե ինչպես վերջին ութ տարիներու ընթացքին, իրենց իսկ աչքերուն

տակ, նոր Լենինականը ծնավ: Անոնք գիտեին ամեն մեկ փողոցի, ամեն մեկ շենքի պատմությունը: Երբեմն կանգ կ՚առնեինք սովորականեն ավելի մեծ ու շքեղ շենքի մը առջև՝ սյունազարդ, քանդակազարդ և երբեմն ալ որոշ մասերով մարմարապատ: Պետական կամ կրթական–մշակութային հաստատություններն են անոնք՝ Երևանի գունավոր շենքերու ոճով կառուցված:

Մինչ այսպես խոսակցելով՝ դանդաղ կը հառաջանային, սկսանք մոտենալ հսկա շինություններու շարքի մը՝ ողողված առատ լույսով: Այս շենքերու շարքը կը տարածվեր երեք–չորս փողոցներու վրա, քանի մը հարյուր մեթր երկարությամբ և խորությամբ: Համբավավոր թեքսթիլ–թրիքոթաժի կոմբինատն է, համամիութենական նշանակություն ունեցող արտադրության կեդրոններեն մին: Այստեղ այժմ կ՚աշխատին հազարավոր բանվորներ: Վերջերս հաստատված են նոր բաժիններ, ինչպես օրինակ՝ նոր մանարանը, որ ինք միայն ամբողջ հսկա շենք մը կը գրավե, և որտեղ կ՚աշխատին երկու հազար մարդիկ: Վերջին երկու–երեք տարիներու ընթացքին գործարանի գրեթե բոլոր բաժիններու մեջ զետեղված են ավելի կատարելագործված, թեքնիքի նորագույն պահանջներուն համապատասխան մեքենաներ:

Գիտական ու թեքնիք աշխատանքի փորձի փոխանակման գծով անցյալ աշնան Լենինական են եկեր Գերմանական Դեմոկրատական Հանրապետութենեն խումբ մը մասնագետ ինժեներներ՝ ուսումնասիրելու համար Հայաստանի թեքսթիլ արդյունաբերության մեջ կիրառված մեթոտները և, իրենց հերթին, հայ մասնագետներուն հաղորդելու համար Դեմոկրատական նոր Գերմանիո մեջ զարգացող ճարտարարվեստի նորագույն նվաճումները:

Տիգրան Խորանյան հպարտությամբ կը պատմեր, թե ինք ևս եղած է այն խումբ մը երիտասարդ առաջավորներուն մեջ, որոնք աշխատած են գերմանացի ինժեներներուն հետ՝ հարստացնելով իրենց աշխատանքի փորձը:

– Ահա այն պատուհանը, ուր ես կ՚աշխատիմ, – ցույց տվավ Տիգրանը՝ հուզումի շերտ մը դնելով իր խոսքին մեջ: Զգալի էր հոգվո ջերմությունը բանվոր այս երիտասարդին՝ հանդեպ իր աշխատանքի վայրին, հանդեպ իր մեքենաներուն:

Եթե կյանքի տարբեր պայմաններու մեջ բանվորը կը դառնա մեքենաներու գերին, խորհրդային հասարակարգի մեջ աշխատավորը կը սիրե իր մեքենան, կը սիրե իր ձեռքի գործիքը այնպես, ինչպես նկարիչը՝ իր վրձինը, կամ երաժիշտը՝ իր նվագարանը: Եվ գործիքն ու մեքենան ա՛յդ սիրով շունչ կ՚առնեն, կը դառնան շարունակությունը աշխատողի ձեռքին:

Բանվորի ձեռքն է ու անոր հոգին, որ կենդանություն կու տան մեքենային:

Տիգրան Խորանյանի մեջ ես տեսա ներշնչված հայ բանվորի կերպարը:

Ու աչքերս հառած մայր Հայրենիքի արդյունաբերության այն հսկա գործարանին՝ կը քալեի դանդաղ, ավելի երկար ըմբոշխնել կարենալու համար տենդադին աշխատող մեքենաներու հաղթական երգն ու գիշերվան մեջ շողացող լույսերը, որ առատորեն կը հոսեին հարյուրավոր պատուհաններե:

Այստեղ գիշեր–ցերեկ աշխատանքը չի դադրիր:

Լենինականի թեքսթիլ–թրիքոթաժի կոմբինատը աննախընթաց թափով կ՚աճի, կը զարգանա՝ հետզհետե մեծցնելով արտադրության քանակը, հետզհետե բարելավելով ապրանքներու որակը, ի պատիվ մեր աշխատավոր ժողովուրդին և խորհրդային թեքնիքին:

Եվ ի տես այս բոլորին՝ մեկ անգամ մը ևս հիշեցի անցյալը, տխուր ու անհորիզոն անցյալը հայ ժողովուրդին: Հիշեցի մանավանդ ճակատագիրը հին Ալեքսանդրապոլին, որուն անվան հետ կապված է այնքա՜ն հուսաբեկում և ցասում:

Մեր խուլ խրճիթը պալատ է դարձել,
Աշխարհը՝ մեր դեմ մի լայն պողոտա.

Մեր աստղն այնպես է մեզ ոսկեզօծել,
Որ մեզ տեսնողը չի էլ հավատա,
Թե մենք էլ մի օր հաց ենք մուրացել,
Թե որբ ենք եղել աշխարհի վրա...

*(Հ. Շիրազ)**

ԹԲԻԼԻՍԻ

Շեն է Թբիլիսին, հարուստ է Թբիլիսին, գեղեցիկ է Թբիլիսին՝ մայրաքաղաքը եղբայրական Խորհրդային Վրաստանի:

Լայն տարածված արագավազ Կուր գետի երկու ափերուն վրա, շրջապատված գեղատեսիլ բլուրներով, պճնված առատ բուսականությամբ, պայծառ երկնքի տակ հասակ նետող, որպես չինարի ծառ բազում դարերու կյանք ապրած, բայց միշտ երիտասարդ ու արևոտ Թբիլիսին նույնքան սիրված ու երգված է ռուս և հայ ժողովուրդներու զավակներու կողմե, ինչքան վրացիներուն, որոնք, իրավամբ, հպարտ են իրենց մայրաքաղաքով:

Եվ իրոք, Սայաթ–Նովայի, Սունդուկյանի և Թումանյանի Թիֆլիսը այնքա՜ն հարազատորեն կը խոսի հայուն հոգիին թե՛ իր անցյալով, թե՛ իր ներկայով: Մեր երկու ժողովուրդները գրեթե միասին ծնան և միատեղ ապրեցան, որպես զիրար հասկցող հարևաններ, և միշտ գործակցեցան իրենց մշակութային, կրոնական և քաղաքական կյանքի ճամբուն վրա: Գործակցություն, որ իր գագաթնակետին հասավ խորհրդային այս դարաշրջանին՝ օգտաշատ, շինարար արդյունքներով երկու դրացի ժողովուրդներուն համար ալ, որոնք անցյալի մեջ դարեր շարունակ նույն տառապանքներուն, նույն դաժան լուծերուն և հարստահարությանց ենթարկվեցան և որոնք, շատ հաճախ, միասին բարձրացուցած են ազատության սրբազան դրոշը և միասին հերոսացած:

Ու այսօր անոնք կ՚ապրին կողք–կողքի, խորհրդային մեծ եղբայրության արևին տակ, զիրար կը գնահատեն և իրարու կ՚օգնեն աշխատանքի և ստեղծագործության բոլոր մարզերուն մեջ: Եվ այլ կերպ չէր ալ կրնար ըլլալ, վասնզի այդ իսկ կը պահանջեն ճշմարիտ կերպով ըմբռնված, փոխադարձ շահերը վրացի և հայ ժողովուրդներուն:

Տիրահռչակ ցարական փոխարքաներու աթոռանիստ քաղաքը այսօր կոչված է նոր կյանքի՝ իր նորակերտ, ծաղկյալ ճարտարարվեստով և շինարարական հզոր թափով: Կը բավե պտույտ մը կատարել Շոթա Ռուսթավելիի անվան մեծ պողոտային վրա և ապա բարձրանալ «ֆունիկուլորով» մինչև կատարը Մթածմինդա լերան ու այդ բարձունքեն դիտել քաղաքը ամբողջ՝ համոզվելու համար, որ Թբիլիսին ճշմարտապես պատկառելի քաղաք մըն է և մեծ կեդրոն մը արդյունաբերական և մշակութային, որուն բնակչության թիվը կը հասնի այսօր մեկ միլիոնի:

Դրախտային անկյուն մըն է Մթածմինդա լերան կատարը՝ իր շատ ընդարձակ հանգստյան և կուլտուրայի պարտեզով և սյունազարդ, շքեղ ճաշարանով, ուր առատ կը հոսի Կախեթի անմահական գինին: Այստեղ նշանավոր են նաև Կովկասյան շաշլիկը և վրացական «Խաչապուրին» (տեսակ մը պանիրե բաթե):

Քաղաքի հայ ազգաբնակչությունը, որուն համրանքը կը մոտենա երեք հարյուր հազարի, եղբայրացած վրացի ժողովրդին հետ, իր աշխատանքի, իր մտքի ու հոգիի ուժերու նպաստը կը բերե ավելի ևս ծաղկմանը համար մշտադալար Թբիլիսիին:

Վիրահայ ժողովուրդը ճանչցա ես, մանավանդ, եկեղեցական կյանքի մեջ և մխիթարվեցա՝ անոր հոգիին մեջ կարդալով խոր հայրենասիրություն և ջերմ հավատք հանդեպ մեր դարավոր Ս. Էջմիածնի: Երբ 19 հունվարին Սուրբ Պատարագ մատուցի քաղաքի Ս. Գևորգ հայ եկեղեցիին մեջ, ներկա էր ծովածավալ բազմություն մը հայ հավա-

* Հաջորդ թերթոնը խմբագրողից անկախ պատճառներով դուրս է մնում սույն հատորից:

տացյալներու: Աննկարագրելի էր խանդավառությունը այդ ժողովուրդին: Սուրբ Պատարագը ավարտելեն վերջ, տակավին երկար ժամանակ, ժողովուրդին մեծ մասը չէր ուզեր հեռանալ եկեղեցիեն և անոր ընդարձակ շրջափակեն, ու երբ դուրս ելա՝ մեկնելու համար հյուրանոց, մինչև փողոց ինձ հետևեցան հարյուրավոր տղամարդիկ ու կիներ, ոգևորության և խնդության բացականչություններով: Շատեր կը ձայնեին. «Ապրա՛ծ կենա հայոց ազգը», «Կեցցե՛ Ս. Էջմիածինը», «Բարի ճանապա՛րհ», «Կրկին համեցե՛ք»...

Հայոց հանդիպեցա նաև փողոցը, վաճառատուներու և կոլխոզ շուկային մեջ, ուր Ախալցխայի հայ գյուղացի կոլխոզնիկներ զմայլելի մեղր, կարագ և պանիր կը վաճառեին:

Շատ հաճախ հայեր էին մեր օթոներու մեքենավարները՝ համակրելի, տաքարյուն երիտասարդներ, արտակարգորեն ճարպիկ ու արագաշարժ իրենց աշխատանքին մեջ: Անոնցմե շատերը մերժեցին ինձմե դրամ առնել՝ «տե՛ր հայր, ախր դուք մեր հյուրն եք» ըսելով:

Զորս օր տևեց իմ այցելությունը Թբիլիսի: Իմ ժամանակը օգտագործեցի՝ այցելելով պատմության և արվեստի պետական թանգարանները, ինչպես և ցուցահանդեսը արդի Վրաստանի գյուղատնտեսության: Այստեղ կարելի էր տեսնել այն հսկայաքայլ հառաջդիմությունը, զոր ունեցած է Վրաստանի տնտեսական կյանքը վերջին 20-30 տարիներու ընթացքին: Անհավատալիորեն մեծ ու զմայլանքի արժանի են եղբայրական Խորհրդային Վրաստանի նվաճումները երկրի ընդհանուր վերաշինության, թեթև ու ծանր ճարտարարվեստի զարգացման, հողագործության, մեքենայացման, ամբողջ երկրի էլեքտրականացման ու ճանապարհաշինության տեսակետներեն: Այնքան առատ է այստեղ էլեքտրական հոսանքը, որ էլեքտրականացված են բոլոր երկաթուղագծերը:

Հետաքրքրաշարժ ու գրավիչ է նաև վրացական արվեստը:

Ներկա եղա երկու վրացական ազգային օփերաներու ներկայացման՝ «Տայիսի» և «Աբեսալոմ և Էթերի», որոնք ժողովրդական երաժշտության գլուխգործոցներն են վրացական գեղարվեստին, ստեղծագործությունները հայտնի կոմպոզիտոր Բալիաշվիլիին, որ վրացիներու մեծագույն երաժշտագետը կը համարվի:

Վրացիները առաջնակարգ ուժեր ունին այսօր գրականության, երաժշտության, թատերգության, նկարչության, ինչպես նաև գիտության մեջ, որոնց կողքին պատվաբեր տեղ մը կը գրավեն նաև վիրահայ արվեստի և գիտության մարդիկ: Հայ արվեստի կեդրոն մըն է Թբիլիսիի հայ տրամաթիքական թատրոնը՝ Հավլաբար թաղամասի մեջ, իր նորակառույց շենքով, որ այսօրվան իր գործունեությամբ վառ կը պահե հայ թատերական արվեստի հին ու փառավոր ավանդությունները Վրաստանի մայրաքաղաքին մեջ: Հայկական կյանքի արտահայտություններեն մին կը հանդիսանա «Սովետական Վրաստան» հայերեն լեզվով օրաթերթը: Պարբերաբար լույս կը տեսնեն նաև հայերեն գրքեր: Հայկական ճոխ գրականություն կը ստացվի, անշուշտ, Խորհրդային Հայաստանեն՝ ի մեծ բավարարություն հայ ազգաբնակչության: Մեծ է ցանցը Վրաստանի հայ դպրոցներուն: Տասնյակ նախակրթարաններ ու քսանևհինգ երկրորդական վարժարաններ իրենց դռները բաց կը պահեն հայ աշակերտության առջև, և մի քանի բարձրագույն մանկավարժական ինստիտուտներ ուսուցիչներ կը պատրաստեն Վրաստանի հայ վարժարաններուն համար: Բացի Թբիլիսիեն, Խորհրդային Վրաստանի մեջ հայաշատ կեդրոններ են՝ Ախալքալաքը, Ախալցխան, Պաթումը, Սուխում–Կակրա ծովեզրյա շրջանը, Թելավին և այլ վայրեր:

Աճող ու ծաղկող երջանիկ Վրաստանի մայր հողին վրա բարգավաճ կյանք մը կ՚ապրի նաև հայ ազգաբնակչությունը՝ համերաշխ ու խաղաղ պայմաններու մեջ:

ՊԱՔՈՒ

Արևելքի քաղաքները մասնահատուկ հրապույր մը ունին, որ մեր երևակայության մեջ ծնունդ առած է դեռևս դպրոցական գրասեղաններու վրա: Անոնց շարքին Պաքուն իր ուրույն տեղը կը գրավե, մանավանդ որ ան հռչակավոր է նաև որպես աշխարհի ամենահարուստ նավթարդյունաբերական կեդրոններեն մին: Ահա թե ինչո՛ւ մեծ հետաքրքրությամբ ճամբա ելա դեպի եղբայրական Ադրբեջանի մայրաքաղաքը:

Երևանի կայարանեն գնացքը շարժվեցավ փետրվար 4-ի առավոտյան ժամը 9-ին՝ գրեթե ամբողջ ճամբու ընթացքին անցնելով Արաքս գետի ափերով:

Քանի մը ժամեն մտանք Նախիջևանի ինքնավար շրջանը և ժամը 3-ին հասանք Նախիջևան քաղաքը: Այստեղ 20 վայրկյան մնալե հետո գնացքը շարունակեց իր ճանապարհը հետզհետե բարձրացող լեռներու մեջեն:

Կարմրագույն, վիթխարի, լերկ ապառաժներ, երբեմն սարսափազդու ձևեր առած, երկաթուղագիծը կ՚եզերեն: Թե դեպի խորհրդային կողմը, բայց, մանավանդ, դեպի Պարսկաստան, հեռուն, հզոր ու փառահեղ խոյանքով, անվերջանալի ծանր շղթաները լեռներուն պար բռնած իրենց ձյունապատ կատարները դեպի վեր կը կարկառեն՝ երկնքի դռները բախելով:

Ճանապարհին բազմաթիվ կամուրջներն ու փակուղիները իրարու կը հաջորդեն:

Պարսկական ափին լեռնաշղթաները երբեմն ցած կ՚իջնեն և տեղ կու տան կիրճերու և լեռնանցքներու, ուրկե փոքրիկ գետակներ կու գան իրենց ջուրերը միացնելու մայր Արաքսին: Նախիջևան քաղաքեն բավական հեռացեր էինք, երբ տեսանելի դարձավ Պարսկաստանի կողմեն Արաքսի մեջ թափվող՝ դանդաղահոս գետակ մը պղտոր, որ հազիվ թե մեր ուշադրությունը պիտի գրավեր, եթե չըսեին, թե Տղմուտն է: Տղմո՛ւտ... որ հազար և հինգ հարյուր տարիներ առաջ վկան եղավ Վարդանանց քաջերու հերոսամարտին... Եվ այս երկնակարկառ լեռներու ողիմպյան աշխարհին մեջ պահ մը վերացած՝ իմ մտածումը Տղմուտի ափով գնաց հեռուն, դեպի դաշտն Ավարայրի, դեպի հայոց պատմության Թերմոպիլեն.

Հայրենի հողին վրա ինչքա՛ն կենդանի է պատմությունը, ինչքա՛ն ներկա է անցյալը...

Երեկոյան ժամը 6-ին հասանք Ջուլֆա, ապա մտանք Հայաստան, անցանք Մեղրիեն և քիչ հետո վերստին Ադրբեջան մտնելով՝ ուղղվեցանք դեպի հյուսիս-արևելք՝ միշտ Արաքսի ափով: Արդեն գիշեր էր, և դուրսը խավարն էր պատեր: Ոչինչ չէր երևար: Շոգեկառքը, լեռներեն ազատած, այժմ կը սուրար Մուղանի տափաստաններեն ուղիղ գծով դեպի Պաքու:

Պաքու կամ Պաքը հարս քաղաքն է Կասպից ծովի արևմտյան ափին, որ Աբշերոն թերակղզիի վրա լայնորեն փռած է իր փեշերը: Ունի ավելի քան մեկ ու կես միլիոն բնակչություն:

Իմ երևակայած արևելյան քաղաքը չէ սակայն արդի Պաքուն: Ան չի նմաներ Մերձավոր և Միջին Արևելքի այն կեդրոններուն, ուր եվրոպացի զբոսաշրջիկներ զվարճանալու կու գան՝ լուսանկարելով հնություններու և ավերակներու կողքին արևելքցիներու խրճիթներն ու կյանքի վհատեցուցիչ թշվառությունը:

Ծովափին՝ քաղաքի կեդրոնին մոտ, կը տարածվի հին Պաքուն՝ շրջապատված հնադարյան պարիսպներով: Այստեղ կը տեսնենք հին մզկիթներ և միջնադարյան բնակելի շենքեր, նեղ ու օձապտույտ փողոցներ, պատմական հուշարձաններ, ինչպիսիք են՝ Շահ Աբբասի դարպասը, Գըզգալեսին և այլն: Եթե չհաշվենք այս հուշարձան թաղամասը և՛ մի քանի այլ ծայրամասեր, Պաքուն այսօր նորակառույց, շքեղ քաղաք մըն է՝ եվրոպական իմաստով, կանոնավոր, ասֆալտապատ պողոտաներով, գեղեցիկ, քարաշեն շենքերով, սիրուն հրապարակներով և պարտեզներով, մեծ վաճառատուներով, բազմաթիվ կրթական, գիտական, մշակութային-գեղարվեստական հաստատություններով և այլն:

Հատկապես զմայլանքի արժանի են շարք մը հոյակապ կառուցումներ՝ ութ-տասը հարկանի, արևելյան-արաբական ոճով, որոնք արդար հպարտություն են արդի Պաքուին: Քաղաքի գլխավոր պողոտաներու և փողոցներու շարքին աչքի կը զարնեն Շահումյանի անվան մեծ պողոտան և Կամոյի, Ամիրյանի ու Հովսեփյանի անվան փողոցները:

Գեղեցիկ է ծովեզերքը իր նավահանգիստով և առափնյա զբոսավայրերով, որ դեպի քաղաքի կողմը եզերված են ձիթենիներով:

Կեդրոնական հրապարակներեն մեկուն վրա խրոխտ ու հպարտ կը բարձրանա պրոնզյա գեղատեսիլ արձանը ադրբեջան ժողովուրդի մեծագույն բանաստեղծ փիլիսոփա Նիզամի Կենճևիի (վախճ. 1203-ին), որ Արևելքի պարծանքներեն մին կը հանդիսանա բոլոր ժամանակներու համար: Նույն հրապարակին վրա կը գտնվի այս մեծ բանաստեղծին նվիրված թանգարանը, ուր այնքան շահեկան և գեղեցիկ բաներ կրցինք տեսնել, մանավանդ մանրանկարները և գորգերը գեղարվեստական գլուխգործոցներ էին:

Նիզամիի անվան հրապարակին կից փողոցին անկյունը կը բարձրանա հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցին՝ կառուցված հայկական ոճով, 1865-ին: Քարաշեն մեծ եկեղեցի մըն է՝ ճաշակով ու հմտությամբ հորինված: Եկեղեցին ունի չորս քահանաներ: Այստեղ է նաև Ադրբեջանի և Թուրքեստանի թեմական առաջնորդին աթոռը: Թեմական-եկեղեցական գործերը կը ղեկավարե առաջնորդ Տեր Գարեգին ծայրագույն վարդապետը՝ գործակցությամբ Թեմական Խորհուրդին, որ կազմված է աշխարհական անձերե:

Պաքուի հայ եկեղեցին իր առաջնորդով և Թեմական Խորհուրդով, իր քահանայից դասով, դպիրներով ու երգչախումբով կոչված է բավարարելու հոգևոր կարիքները հավատացյալ ժողովուրդին: Եվ ուրախությամբ հաստատեցի, թե այդ հավատացյալ ժողովուրդը նախանձախնդիր է՝ ավելի ու ավելի շեն ու պայծառ տեսնելու մեր հավատքի վեմ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին:

Սուրբ պատարագ մատուցի կիրակի՝ 6 փետրվարին, ի ներկայության հավատացյալներու խուռներամ բազմության մը: Հոգևոր ուրախության և ցնծության ալիք մը սիրտեսիրտ կ'անցներ ու կը համակեր բոլորին: Սուրբ պատարագեն վերջ ժողովուրդը երկար ատեն մնաց եկեղեցվո մեջ՝ մոտեն տեսնելու, հարցուփորձ ընելու և զրուցելու համար արտասահմանեն եկած հոգևորականի մը հետ: Եվ հուզիչ էր տեսարանը: Բոլորը կը փափաքեին, որ առաջիկա կիրակի ալ պատարագեմ. և իրոք, չկրցի դուրս ելլել եկեղեցիեն, մինչև որ չխոստացա մնալ Պաքու ութ օր ևս: Կիրակի՝ 13 փետրվարին, իմ երկրորդ պատարագին, եկեղեցին բերնեբերան լեցուն էր, և շատերը, ներսը տեղ չունենալով, դուրսեն հետևեր էին սրբազան արարողության:

Նույն մեր հավատացյալ ժողովուրդը և կրոնական պաշտամունքի նույն ազատության պայմանները այստեղ՝ ինչպես մայր հայրենիքի մեջ:

Տասը օր Պաքու մնալով՝ առիթն ունեցա մոտեն ծանոթանալու քաղաքին և այցելելու շարք մը տեսարժան վայրեր, թանգարաններ և մշակութային-գեղարվեստական հաստատություններ: Ներկա եղա մի քանի հետաքրքրաշարժ ներկայացումներու օփերայի և պալեթի թատրոնը, ուր տեսա «Կյուլչեն» պալեթն ու «Լեյլի և Մեճնուն» և «Շահ Իսմայիլ» օփերաները՝ զուտ արևելյան-արաբական երաժշտական ոճով: Քաղաքը օժտված է նաև բազմաթիվ սինեմաներով: Այստեղ տեսա ֆրանսական «Ֆանֆան լա Թյուլիփ» ֆիլմը, որ ջերմ ընդունելություն գտած է սովետական երկիրներու մեջ:

Պաշտոնական այցելություններ տվի մայրաքաղաքի ռուս օրթոտոքս Մայր Եկեղեցին, ուր զիս մեծ սիրով ընդունեց Հայր Գազանցև, և ապա՝ Ադրբեջանի մահմետական դավանության Շեյխ ուլ Իսլամին, որ նույն ջերմությամբ դիմավորեց զիս:

Շեյխ ուլ Իսլամը՝ իմաստուն և հեղինակավոր ծերունի մը, իմ ողջույնի խոսքերուն պատասխանեց անկեղծ հուզումով և շեշտեց, թե այսօր ադրբեջանցի և հայ ժողո-

վուրդները կողք-կողքի կ՚ապրին՝ իբրև հարազատ եղբայրներ, իբրև «յոլտաշներ», և միասին կը կերտեն իրենց խաղաղ ու երջանիկ ապագան:

Շեյխ ուլ Իսլամի փոխանորդներեն միուն ընկերակցությամբ այցելեցի քանի մի կարևոր մզկիթներ: Հուզիչ եղավ իմ այցը «Հաճի Էժտեհեր բեկ» մզկիթը, ուր երբ հասանք, աղոթքի պահն էր, և մի քանի տասնյակ հավատացյալներ, իրենց կրոնապետին շուրջ հավաքված, հին, գեղեցիկ գորգերու վրա ծնկաչոք, լուռ կ՚աղոթեին: Սակայն, երբ մեզ տեսան դրան մեջ, ընդհատեցին իրենց աղոթքը և հավաքվեցան մեր շուրջ հարգալիր հետաքրքրությամբ մը: Շատ համակրելի ու տաքարյուն անձնավորություն մըն էր մոլլան՝ Նեճիֆ Կուլի Պապաև, որ զիս գիկաբաց ընդունեց և ողջույնի ու խաղաղասիրական իմ խոսքերուն պատասխանելով՝ ավելցուց արևելքցիի հատուկ ջերմությամբ. «Ձեր այցելությամբ ու Ձեր խոսքերով, կարծեք, Պաքուն անգամ մը ևս մեզի տրվեցավ»:

Հայ-ադրբեջան եղբայրությո՛ւն... ահա՛ հրաշալի նվաճումներեն մին ազգություններու նկատմամբ խորհրդային ողջամիտ ու շինարար քաղաքականության:

Նույն օրը այցելեցի հայոց շատ ընդարձակ գերեզմանատունը, որ կը գտնվի «Էրմենքենդ» թաղամասի ուղղությամբ, քաղաքեն դուրս: «Էրմենքենդ» ամբողջապես հայաբնակ թաղամաս մըն է՝ շուրջ 90.000 բնակչությամբ: Մնացած մոտ երկու հարյուր հազար հայերը ցրված են քաղաքի մյուս բոլոր թաղամասերուն մեջ կամ արվարձանները: Պաքուցի հայոց մեջ մեծ թիվ կը կազմեն ղարաբաղցիները և շամախեցիները, որոնք պահած են իրենց բարբառը: Հայերը այստեղ առհասարակ հայախոս են: Կան, սակայն, նաև շատ ռուսախոսներ:

Բազմաթիվ պետական հայկական նախակրթարաններ ու երկրորդական վարժարաններ կան՝ բավարարելու համար հայ ազգաբնակչության կրթական կարիքները: Հայ աշակերտներու մեծ մասն մըն ալ պետական ռուսական վարժարանները կը հաճախե: Լույս կը տեսնե հայերեն լեզվով

օրաթերթ մը՝ «Կոմունիստ» անունով, և, անշուշտ, Խորհրդային Հայաստանեն կը ստացվին հայերեն թերթեր, ամսագրեր ու գրքեր ընթերցասեր հայ հասարակության համար: Կը վաճառվի նաև «Էջմիածին» պաշտոնաթերթը:

Առիթն ունեցա այցելելու նաև չորս-հինգ հայ ընտանիքներու բնակարանները, ուր հյուրասիրվեցա հայկական ավանդական ջերմությամբ: Ամեն տեղ սրտերը զեղուն էին սիրով և ուրախությամբ, իսկ սեղանները լեցուն՝ պես-պես բարիքներովը արևոտ Ադրբեջանին: Ըստ տեղական սովորության՝ ճաշի վերջավորությանը կը մատուցվեր համբավավոր Ղարաբաղի կամ Շամախիի փիլավը (պնակին տակը՝ հավկիթի մեջ տապակված լավաշ, վրան՝ բրնձե փիլավը, և այս բոլորին վրա առատորեն թափված՝ կարագ յուղի մեջ լավ մը տաքցված չամիչ կամ չամիչ և շագանակ, իսկ պնակին շուրջը տարածված, հասուն նուռի կարմիր հատիկներ): Փիլավը պետք է ուտել Պաքու կամ Ղարաբաղ:

Խորհրդային Հայաստանի կամ Խորհրդային Ադրբեջանի միջև կենդանի են կապերը նաև գիտության և արվեստներու գծով: Գրեթե ամիս չ՚անցնիր, որ փոխադարձ այցելություններ չը կատարվին այս երկու դրացի երկիրներու միջև՝ ավելի ու ավելի խորացնելու համար գործակցությունը և աշխատանքի ու ստեղծագործության փորձի փոխանակումը տնտեսական, գիտական ու գեղարվեստական գետնին վրա:

Իմ՝ Պաքու գտնված ատեն այստեղ կը գտնվեր Թաթուլ Ալթունյանի երգի-պարի վաստակավոր խումբը, որուն համերգները աննկարագրելի խանդավառություն էին ստեղծած ժողովուրդին մեջ: Բազմաթիվ համերգներ մայրաքաղաքի մեջ կազմակերպելե վերջ հայկական խումբը այցելեց նաև Ստեփանակերտ (Ղարաբաղի ինքնավար մարզի մայրաքաղաքը) և Կիրովաբադ (Գանձակ):

Երևան վերադարձիս այստեղ գտա Ադրբեջանի երգի-պարի խումբը, որուն մեկ ներկայացման ներկա եղա Հայ-ֆիլհարմոնիայի մեծ դահլիճին մեջ:

Երևանցիները հոծ բազմությամբ փութացեր էին մինչև վերջին տեղը գրավել դահլիճին 1400 աթոռները և ոգևորությամբ կը ծափահարեին եղբայրական Ադրբեջանի ժողովրդական արվեստի վարպետները:

Ներկա եղող ժողովուրդի ոգևորությունը ցնծության փոխվեցավ և վերածվեցավ հայ–ադրբեջանական եղբայրության ցույցի, երբ երգիչներեն մին իր գեղեցիկ երգը վերջացուց սա խոսքերով. «Կեցցե՛ Հայաստան վե կյունեշլի Ադրբեջան»:

Խորհրդային ժողովուրդներու եղբայրական համերաշխ համակեցությունը և շինարար գործակցությունը, խորհրդային իրավակարգի ստեղծած խաղաղության, հավասարության և ազատ զարգացման պայմաններու մեջ, կենդանի իրականություն մըն է այսօր, որուն առավել ևս ամրապնդման մենք՝ հայերս, պետք է սրտանց բաղձանք ու աշխատինք՝ մեր ժողովուրդի գերագույն շահերուն ծառայած ըլլալու գիտակցությամբ:

ՎԵՐԱԴԱՐՁ

Պաքուեն վերադարձիս մեկ օրով այցելեցի Խորհրդային Ադրբեջանի երկրորդ քաղաք Կիրովաբադը՝ պատմական հին անունով Կենճե կամ Գանձակ, այժմ ավելի քան հարյուր հիսուն հազար բնակչությամբ: Քաղաքը բաժնված է երկու մասերու, գրեթե չորցած գետի մը հունով: Հայ ազգաբնակչությունը՝ շուրջ վաթսուն հազար, կը բնակի քաղաքին երկրորդ մասին մեջ, որ, համեմատաբար, Կիրովաբադի ավելի հին թաղամասն է: Այս թաղամասի կեդրոնը կը գտնվի հայոց հոյակապ «Ս. Լուսավորիչ» եկեղեցին՝ կառուցված հայկական ճարտարապետական ոճով, 1853–ին, իր ժամանակին հայոց հայտնի հոգևոր հովիվ և վարդապետ Տ. Կարապետ Ավագ քահանա Մատինյանցի ջանքերով: Նույն այդ արժանավոր քահանան է, որ եկեղեցիի կողքին կառուցած է երեք հարկանի պատկառելի դպրոցական շենք մը, որ այսօր ալ կը ծառայե իր նպատակին, իբրև Կիրովաբադի հայոց երկրորդական վարժարաններեն մին: Եկեղեցվո մուտքին մոտ՝ հանգուցյալ Տ. Կարապետ Վարժապետ քահանային տապանաքարին վրա, հուզումով կարդացի հետևյալ արձանագրությունը.

«Դու մեծ եռանդով ու բարի վարքով՝
Սեր, խաղաղություն Գանձակ սփռեցիր,
Եվ գաղափարի կենսատու սերմեր
Մատաղ սրտերում դու սերմանեցիր:
Մահիցդ երեսունչորս տարի անցած
Սաներիդ խումբը եռանդով լցված՝
Քո մեծ ուսուցչիդ անմոռաց անվան
Լիառատ սիրով կանգնեց այս արձան»:

Կիրովաբադը ունի նաև երկու ուխտատեղիներ՝ «Ս. Սարգիս» և «Ս. Աստվածածին» (Զոլաք), ուր հավատացյալ ժողովուրդը մեծ տաղավարներուն ուխտի կ՚երթա հոծ թիվով:

Կիրովաբադեն հեռացա՝ երանի տալով լուսաբնակ Տ. Կարապետ Վարժապետ քահանային հոգվույն և մաղթելով, որ Տերը նման նվիրված ու շինարար հոգևորականներ շնորհե մեզի, որոնց այնքա՛ն կարիք ունի այսօր մեր Եկեղեցին:

* * *

Երևանեն բաժնվելով՝ դեպի Մոսկվա ճանապարհիս երկու օր ալ կանգ առի Ռոստով–Նախիջևան հայաշատ քաղաքը, ուր Սուրբ Պատարագ մատուցի տեղվույն «Ս. Լուսավորիչ» փառավոր եկեղեցիին մեջ: Հակառակ եղանակի խստության՝ ձյունախառն փոթորիկ մը շաբաթ գիշեր սկսավ և տևեց մոտ քսանչորս ժամ, այնուամենայնիվ, քանի մը հարյուր հավատացյալներ փութացեր էին ներկա գտնվելու արարողություններուն: Ռոստով-Նախիջևան թեմի առաջնորդն է Գերապատիվ Տ. Վարդան ծայրագույն վարդապետը, ութսունամյա բարեջան հոգևորական մը՝ սիրված իր

շուրջիններեն և ժողովուրդեն: Եկեղեցին ունի երեք գործող քահանաներ, երկու սարկավագներ և սիրահոժար կերպով երգող դպիրներ ու բավականին լավ երգչախումբ մը՝ բաղկացած տասը–տասներկու օրիորդներե և տիկիններե:

Եղանակի աննպաստ ըլլալու պատճառով չկրցի այցելել ո՛չ Սուրբ Խաչ պատմական վանքը, որ կը գտնվի քաղաքեն ութ քիլոմեթր հեռու, և ո՛չ ալ Ս. Հովհաննես Կարապետ գերեզմանատան եկեղեցին:

Նախիջևանը՝ շուրջ 20-25 հազար հայ ազգաբնակչությամբ, այժմ ամբողջապես միացած է Ռոստովին և կը կազմե քաղաքին մեծ թաղամասերեն մին՝ Պրոլետարսկայա շրջանը: Հայերը այստեղ բարօր կյանք ունին և կը վայելեն համակրանքը տեղացի ռուս ժողովուրդին և պետական իշխանության: Մեծ մասամբ հայախոս են և կը խոսին արևմտահայերենի մոտ բարբառ մը: Կան նաև շատ ռուսախոս ընտանիքներ: Ինչպես ամեն կողմ Խորհրդային Միության մեջ, նաև Ռոստովի մեր ժողովուրդը հայրենասեր է և կը հրճվի մայր Հայրենիքի վերաշինությամբ ու վերելքով: Շինարար ոգիով ու եռանդով նվիրված է ան Խորհրդային մեծ Հայրենիքի լուսավոր ու երջանիկ ապագայի կառուցման, այն պայծառ գիտակցությամբ, թե Խորհրդային Հայրենիքի հզորությունը, բարօրությունն ու խաղաղությունը կը նշանակեն նաև հայ ժողովուրդի ու Հայրենիքի կյանքի ապահովությունը և բարգավաճումը խաղաղ առաջընթացով:

* * *

Դեպի Մոսկուա ճանապարհին՝ գնացքի մեջ, ուղեկից ունեցա Հայաստանի գիտնականներեն մին՝ փրոֆ.-տոքթոր Արտաշես Ալեքսանյան, մասնագետ վարակիչ հիվանդություններու, որ Մոսկուա կ՚երթար մասնակցելու համար Խորհրդային Միության բժշկական համագումարին, ուր, իբրև առաջին զեկուցող, հանդես պիտի գար հայտնի կենսաբան, փրոֆ.–տոքթոր Լևոն Օրբելին՝ անդամ Խորհրդային Միության և Հայաստանի ակադեմիաներուն: Փրոֆ.

Ալեքսանյան հպարտությամբ կը հիշե անունը գիտնական Օրբելիին, որ մի քանի անգամ արժանացած է պետական մրցանակի դափնեկրի տիտղոսին և հռչակված է «Սոցիալիստական աշխատանքի հերոս»:

Մեծ ռուս գիտնական Փավլովի աշակերտ Օրբելին իր հերթին հասցուցած է աշակերտներ, որոնք ամբողջ Միության մեջ ծանոթ են իրենց գիտական աշխատություններով և արդեն հեղինակություններ դարձած են գիտական աշխարհին մեջ: Անոնց շարքին առաջին հերթին պետք է հիշել փրոֆ. Էզրաս Հասրաթյանը և Խաչատուր Կոշտոյանցը:

Փրոֆ. Ալեքսանյան կը պատմե, թե ինչպես այսօրվան գիտնական փրոֆ. Հասրաթյան թրքական ջարդերեն ազատված պիթլիսցի որբերեն մին է, որ անտեր–անտիրական փողոցները թափառելով՝ հասած է Խորհրդային Հայաստանի փրկության ափին: Փողոցեն գտնված այդ թափառաշրջիկ երեխան է, որ շնորհիվ հայրենի պետության հոգածության և փրոֆ. Օրբելիի գիտական–դաստիարակչական աշխատանքին հաջողած է իր տաղանդը արժեքավորել և դառնալ խորհրդային գիտության աստղերեն մին:

Եվ ինչպե՞ս, կրկին ու կրկին անգամ, չհիշենք ու չընդգծենք, թե միայն ու միայն մեր Հայրենիքի փրկության ու վերածննդի շնորհիվ է, որ մեր ժողովուրդի հանճարը սկսավ վերստին փայլիլ ու ստեղծագործել գիտության, գրականության և արվեստներու մեջ՝ պատվաբեր տեղ մը գրավելով այսօր համաշխարհային արժեքներու գանձարանին մեջ:

Այս հույզերով ու ապրումներով հասա Մոսկուա: Վերստին հանդիպեցա ռուս մեծ մարդասեր ժողովուրդին, իր հրաշալի մայր քաղաքին մեջ, վերստին դիտեցի փառահեղ Քրեմլինի հնադարյան պարիսպները, վերստին հայացքս սևեռեցի դեպի լուսարձակ աստղը Սպասքի աշտարակին, որ խորհրդանիշն է Խորհրդային Միության ժողովուրդներու եղբայրության, միասնականության ու հզորության:

Խաղաղությո՛ւն Մոսկուային...

Խաղաղությո՛ւն մեր մայր Հայրենիքին...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ 7

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՅԵՐԸ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ ՎԵՊԻՆ ՄԵՋ 29

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ 73

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ 205

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ 231

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՅՍՕՐ 243

ՀԱՅՐԵՆԻ ԱՐԵՎԻՆ ՏԱԿ 258

ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐ 356

Կազմումը և շարվածքը՝ Հրատարակչական բաժնի
Էջադրումը՝ Աննա Օհանջանյանի
Սրբագրումը՝ Գասպար Պետրոսյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ